

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Վերլուծական նյութեր
Թողարկում 3

32/47.923/

2-46

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Վերլուծական նյութեր

Թողարկում 3

Երևան

«Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
2009



հմբազրական կոլեգիա՝ Գ. Ավետիսյան, Ս. Աղաջանյան,
Լ. Անդրիասյան, Ա. Արշակյան, Գ. Ասրյան, Գ. Բոյախչյան,
Գ. Իսազուլյան, Ա. Անլընյան, Ս. Մինասյան, Ե. Փանոսյան, Վ. Սարգսյան,
Ռ. Սաֆրաստյան

Տեխնիկական խմբագիր՝ Ա. Բաղդասարյան

ՀՏԴ 341
ԳՄԴ 67.91
Դ 461

Դ 461 Ղարաբաղյան Հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները: Վերլուծական նյութեր, - բող. 3. - Երևան, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2009. - 295 էջ:

Ժողովածուն ներկայացնում է Ղարաբաղյան Հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները շոշափող վերլուծական աշխատանքները: Հրատարակվում ընդգրկում է տարածաշրջանային, միջազգային, աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ազդեցության համատեքստում Ղարաբաղյան Հակամարտության արդի փուլի, դրա քաղաքական, իրավական, տնտեսական ու ռազմական հարցերի լայն շրջանակ: Ներկայացված են նաև հակամարտության կարգավորման գործընթացը և տեղեկատվական-քարոզչական հարցերը լուսաբանող հետազոտություններ:

Ժողովածուի նյութերը նախատեսված են կոնֆլիկտոլոգիայի մասնագետների, Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության հարցերով զբաղվող վերլուծաբանների, Ղարաբաղյան Հակամարտության փորձագետների, ինչպես նաև հակամարտության ու դրա կարգավորման հարցերով հետաքրքրվող ամենալայն ընթերցողի համար:

ԳՄԴ 67.91

ISBN 978-99941-865-5-6

© Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2009 թ.

Էթնոքաղաքական նույնականացումը և Ղարաբաղյան հակամարտության պատճառները:

Քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական ասպեկտները

Սիխախլի Աղաջանյան

Ներածություն

Ղարաբաղյան Հակամարտությանը ժամանակակից բավական շատ հետազոտություններ են նվիրված: 20-րդ դարի այս ավանդական էթնոքաղաքական հակամարտությանը՝ 1980-ական թվականների երկրորդ կեսին կողմերի միջև առճակատման կետերի այժմեականացման պահից սկսած, տարբեր հեղինակներ են անդրադարձել:

Ղարաբաղյան Հակամարտության էթնոքաղաքական նույնականացման հարցը սերտորեն կապված է Հակամարտության քաղաքական, սահմանադրա-իրավական և սոցիալ-տնտեսական պատճառների բացահայտման հետ: Ղարաբաղյան Հակամարտության ամբողջական սահմանումը և պատճառների վերլուծությունը, դրանց դիտարկումը մարդու քաղաքական, իրավական, սոցիալական և տնտեսական բնույթի իրավունքների խախտման համատեքստում, մեր տեսակետից, նպաստում են Հակամարտության աղբյուրների ու դրանց բացառման հանրավոր ուղիների առավել իրատեսական ընկալմանը:

Գլուխ 1. Ղարաբաղյան Հակամարտությունը էթնոքաղաքական հակամարտություն է

ԽՍՀՄ փլուզումը լայնամասշտաբ կառուցվածքային տեղաշարժերի հանգեցրեց էթնոազգային հարաբերությունների ոլորտում: 1980-ական թվականների վերջերի համակարգային ճգնաժամը և կենտրոնախույս գործընթացների սկիզբը, որոնք ծնունդ էին ազգային հանրապետությունների ու միութենական կենտրոնի միջև հակադրման, վերակենդանացրին էթնոազգային բնույթի մոռացության մատնված հակասությունները: Միութենական կենտրոնի դեմ ուղղված որոշ հանրապետությունների պայքարը, մի շարք դեպքերում, վերածվեց ինքնավարությունների պայքարի իրենց հանրապետական «մետրոպոլիտաններին» դեմ: Բարդ համգոյցի մեջ շարժվեցին պետիրավական, տարածքային, սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և այլ շահերը:

1980-ական թվականների երկրորդ կեսին, այն ժամանակ դեռ գոյություն ունեցող ԽՍՀՄ տարածքում, էթնոքաղաքական հակամարտություն դարձավ Ղարաբաղյան Հակամարտությունը: Իր էթնոքաղաքական յուրահատկության ծավալման սկզբնական շրջանում, Ղարաբաղյան Հակամարտությունն ձևավորվեց որպես Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի /ԼՂԻՄ/ հայ ժողովրդի ազգային շարժում Ադրբեյխանի կազմից դուրս գալու և Հայկական Հանրապետության մեջ ընդգրկվելու նպատակով: Ղարաբաղյան Հակամարտության հստակ ազգային արտահայտվածությունն առկա էր արդեն կողմերի միջև դիմակայման սկզբնական փուլից: Վերջիններս սկսեցին իրենց շահերի հակադրվածությունը ներկայացնել հակամարտության հակառակ կողմի նկատմամբ հատկապես իրենց էթնիկ հակադրման տերմիններով: Այդպիսով, Ղարաբաղյան Հակամարտության մեջ անմիջապես ծագեց կողմերի միջև էթնիկ դիմակայության գիծը, որոնք

Երնիկ հատկանիշին հաղորդեցին նույնականացման բնույթի հատկություն. «Իայեքը և արդեբեանցիները հակամարտող կողմեր են»: «Մենք – Որանք» բնական ընդդիմությունը, որը բնորոշ է միմյանց հարևան երնիկ խմբերի մտածելակերպին, սրվեց երնիկ բախումնային դիմակայության հիման վրա: Սուաբացավ մի իրավիճակ, որի մասին հետագաուղղները խոսում են «քաղաքականությունը իմաստ է հաղորդում ազգությանը, և, մասնավորապես, անվանման քաղաքականությունը»:

Որպես գլխավոր գործող անմիբը հանդես էին գալիս երնիկ հանրությունները: Հակամարտության կողմերը սկսեցին ընկալվել որպես երևույթներ, որոնք ունեն իրենց շահերը և գործում են որպես մեկ ամբողջություն: Բացի ամենը, դրան էր նպաստում արդեն այն ժամանակ ստեղծված Ղարաբաղյան Հակամարտության որոշակի տեղեկատվական դաշտը, որն այն ժամանակ ձևավորվում էր խորհրդային կենտրոնական ղեկավարության քանքերով, որը միանշանակ շահագրգռեց չէր հակամարտությանը քաղաքական երանգ տալու մեջ: Հակամարտության տեղեկատվական դաշտում որոշիչ դարձավ կողմերի շահերի հակադրման երնիկ բաղադրուցիչը. ընդ որում ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները նպատակաուղղված կերպով ձևավորում էին Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ազգային շարժման անջատողական կերպարը, դրա օգնությամբ պետք է ընդգծվեր շարժման «ժայռահեղանակ» բնույթը, որը չէ հենվում ազգային շարժման նախածնունդ-երնուսի ամբողջության վրա: Այդպիսով, կենտրոնական իշխանությունները ձգտում էին ամեն կերպ հեռացնել հակամարտությունը իր քաղաքական քաղաքական և այն ներկայացնել «բնակչության որոշակի խմբերի ազգային-ժայռահեղական պայքարի» տերմիններով: Այս համատեքստում պետք է դիտարկել 1980-ական թվականների Ղարաբաղյան Հակամարտության մեջ երկու սկզբունքային մոտեցումների հակադրումը. «քաղաքական կայունության ապահովումը», որը կենտրոնական ԽՍՀՄ/ և հանրապետական /Ադրես/Մ/ ղեկավարությունների դիրքորոշումներ և «պետականատեղծ ազգի ու նրա կոնկրետ ներկայացուցիչների իրավունքների ու ազատությունների ապահովումն ու պաշտպանությունը» /Լեռնային Ղարաբաղի և ընդհանուր առմամբ, ամբողջ Ադրես/Մ-ի հայ ժողովուրդինը/:

Անհրաժեշտ է նշել, որպես հակամարտության սկզբնական կողմեր հանդես եկան այլ ազգային միութենական հանրապետության կազմից դուրս գալու նախածնունդ-երնուսը /Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը/ և այլ ազգային միութենական հանրապետության քաղաքական ղեկավարությունը, որը խոչընդոտում էր նման իրավունքի իրականացմանը: Դրանից ելնելով, Ղարաբաղյան Հակամարտության հենց սկզբում այն դարձավ ոչ միայն երնիկ հակամարտություն, այլ նաև քաղաքական, որը հակամարտության դաշտի մեջ ներառեց դիմակայման քաղաքական սուբյեկտներին⁵:

Մեր կարծիքով, Ղարաբաղյան Հակամարտությունը՝ 1980-ական թվականների կրիսիս իր ակտիվ դիմակայության վերանվերնացման հենց սկզբից՝ դարձավ, առաջին հերթին քաղաքական հակամարտություն, որի էությունն այն էր, որ միութենական հանրապետության /Ադրես/Մ/ պետականատեղծ ազգերից մեկը, որը տվյալ հանրապետության շրջանակներում օտարված էր ազգային-վարչական ինքնավարությամբ, ցանկացավ դուրս գալ հանրապետության կազմից և հարել մեկ այլ միութենական հանրապետությանը /Հայկես/Մ/: Վերջինս տվյալ իրավիճակում չէր կարող

չեզոքություն պահպանել, և հաշվի առնելով այն, որ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ազգային շարժումը դիմել էր Հայկես/Մ ղեկավարությանը հանրապետության կազմի մեջ ԼԴԻՄ-ն ընդգրկելու խնդրանքով, Խորհրդային Հայաստանը ի դեմս իր քաղաքական ղեկավարության, դարձավ Ղարաբաղյան Հակամարտության ևս մեկ քաղաքական սուբյեկտ:

Երբ մենք խոսում ենք Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ազգային շարժման մասին, ապա պետք է առանձնացնել էքոնոքաղաքական հակամարտության նույնականացման հատկանիշների այսպես կոչված քաղաքագիտական մոտեցումը: Քաղաքագիտական մոտեցումն ուղղված է ազգերիկորման ու արդիականացման ինստիտուցիոնալ հիմքերի ու մորիլիզացումը միջոցների բացահայտմանը, քաղաքական պահանջներ առաջ քաշող երնուսի ազգային ձգտումների օրյեկտիվության հաղորդմանը: Ղարաբաղյան Հակամարտության հենց սկզբից, նախածնունդ էրնուսի պահանջները Ադրես/Մ-ի կազմում իրենց քաղաքական ներկայության վերանայման մասին, սկսեցին օրյեկտիվացվել ազգային շարժման ներկայացուցիչների օգնությամբ, որոնք ցուցաբերում էին ազգայնական տրամադրություններ ապագա վերնախավային խմբերի հեռանկարային ներկայացուցիչները: Հայոց ազգային շարժման կողմից դրանք էին, առաջին հերթին, մտավորականության ներկայացուցիչները, որոնք հետազայում քաղաքական իշխանության ելան հենց դրաբաղյան հայերի ազգային շարժման «այիթի վրա»: Երբ իրենց դերը կատարեցին որպես Լեռնային Ղարաբաղի հայկական ազգային շարժման և ընդհանրապես անկախության ու սեփական ինքնիշխան ազգային պետականության համար մղվող պայքարի երնիկ զգացմունքների քաղաքական մորիլիզատորներ⁶: Տեղի ունեցավ հակամարտող հանրությունների անդամների որոշակի գաղափարական միավորում այն ժամանակ, երբ սկսեցին շուրջ, որոնք երնիկ ու քաղաքական տերմիններով միմյանց նկատմամբ դրվել էին հակադրության մեջ:

Ղարաբաղյան Հակամարտության էքոնոքաղաքական էությունը դրսևորվում է նաև դիմակայող էքոնոքների տարբեր քաղաքական իդեոլոգիաների զգալի ներկայացվածությամբ: Այս տեսանկյունից Ղարաբաղյան էքոնոքաքական հակամարտությունը կարելի է բնութագրել որպես «զարգափարների հակամարտություն»: Նման հակամարտությունների /կամ դրանց փոփոխ/ բնորոշ գծերն են հանդիսանում այս կամ այն հավակնությունների առաջնաշումը: Գրականության մեջ, զանգվածային լրատվամիջոցներում հիմնավորվում է պետականության, տարածքի նկատմամբ «պատմական իրավունքը»: Ազգային շարժումների ընթացքում մշակվում են հիմնական իդեոլոգիաները, որոնց շուրջ քաղաքական մորիլիզացիան արդեն իսկ հանդիսանում է հակամարտության դրսևորում⁵:

Ըստ Ա. Սմիթի, այն տարածաշրջաններում, որտեղ բախվում են երնիկ հայրենիքի հակադիր մեկնաբանությունները, շահերի հակասությունները վեր են անվում զաղափարականացված հակամարտության, օրինակ, Ղաղեստիում, Քաշմիրում, Լեռնային Ղարաբաղում⁶:

Մեր կարծիքով, էքոնոքաղաքական հակամարտությունների հիմնական հատկանիշների նույնականացման վերոնշյալ քաղաքագիտական մոտեցումը, որը ժամանակին դիտարկվել էր որս հետազոտող Ա.Գ. Ջորավու-միսուլի կողմից⁷, վերաբերում է նաև Ղարաբաղյան Հակամարտության իրողությանը կողմերի էքոնոքաղաքական դիմակայության սկզբնական շրջանում: Լեռնային Ղարաբաղյան Հակամարտության մեջ գերիշխող դեր

եր կատարումն քաղաքականությունը, սակայն, 1980-ական թվականների երկրորդ կեսին, հակամարտության ներուժի ծավալման առաջին փուլերում նկատելի էր նրա էթնիկական բաղկացուցիչը: Ղարաբաղյան Հակամարտության հիմնախնդրի կենտրոնում միշտ առկա էր և շարունակում է լինել իշխանության հարցը: Եթե հակամարտության սկզբնական փուլում նշված հարցը ընդունեց իրն և նոր վերնախավերի միջև պայքարի ձև, ընդ որում, վերջիններիս առանձնահատկությունն այն էր, որ նրանք ավելի հավանաբար անհատական կարգախոսների արձանատվանցմանը, ապա հակամարտության հետագա փուլերում լճորհույս մինչ օրս/ փոխարինման եկած նոր ազգային վերնախավերը մտահոգված են իրենց քաղաքական իշխանության պահպանմանը և չլուծված հակամարտության ազդեցությունից հեռացմանը:

Գիշեցնենք, որ 1988 թ. փետրվարին ԼՂԻՄ-ի հայության քաղաքական պահանջների ազդեցության տակ Ղայաստանում ստեղծվեց վերամիավորման «Ղարաբաղ» կազմկոմիտեն, որում ընդգրկվեցին ստեղծագործական և զիտական մտավորականության հայտնի ներկայացուցիչները: Կոմիտեի գործունեությունն ուղղված էր ԼՂԻՄ-ը ՀայկեՄԳ-ի կազմի մեջ ընդգրկելու դարաբաղյան հայերի պահանջի արդիականացմանը հասարակության մեջ: Ղարաբաղյան շարժմանը աջակցելու նպատակով, «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարությամբ, Երևանում կազմակերպվեցին զանազան ժայիմ հանրահավաքներ, ընդ որում ցուցարարների թվաքանակը հասնում էր մեկ միլիոն մարդու: 1988 թ. ամռանը բախումներ տեղի ունեցան ցուցարարների և խորհրդային Բանակի զորամասերի միջև, որոնք Ղայաստանի տարածք էին մտցվել քաղաքական ճգնաժամի չեզոքացման նպատակով: Հետագայում «Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական կառույցի որոշակի հատվածը Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ձևափոխվեց Հայոց Համազգային Շարժման ԲՀԿ/: 1990 թ. աշնանը, Լեռնային Ղարաբաղի հայության պաշտպանության կարգախոսով հաղթեց նախագահական հանրընդհանուր ընտրություններում, ինչը նպաստեց իշխանական կառույցներում ԲՀԿ ներկայացուցիչների ներգրավմանը: Ղարաբաղյան շարժման մեջ ոչ պակաս կարևոր դեր է կատարել նաև «Դաշնակցություն» վերանվանված քաղաքական կուսակցությունը /«Հայ Հեղափոխական Դաշնակցություն»/, որը տնտեսական և քաղաքական աջակցություն էր ցուցաբերում դարաբաղյան հայերին՝ օգտագործելով հայկական Մփյուռքի ռեսուրսները:

Ղարաբաղյան Հակամարտության քաղաքական էությունը կապված էր այն բանի հետ, որ հենց ինքը հակամարտությունը դարձավ ոչ միայն հանրապետական սահմանադրա-իրավական կարգի և վարչատարածքային բաժանման վերանայման «ղեկունստորը», այլ հանդիսացավ նաև որպես օրինակ ԽՍՀՄ տարածքում նրան հաջորդող այլ եթնոքաղաքական հակամարտությունների համար: ԱրդիՄԳ-ի պետականաստեղծ էմբլոզ էր դեմս Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի, դարձավ բազմազգ հանրապետության կազմում իր գոյության քաղաքական կարգավիճակի վերանայման նախաձեռնողը: Մյո ամենը հանգեցրեց հասարակական-քաղաքական խախտությունների հետագա «բաղադրական» ինստիտուտների հակամարտություններով, որոնց տակ հասկացվում են այն հակամարտությունները, որոնց կողմերը միմյանց դեմ դիմակայության ընթացքում միավորվում են որոշակի տարածքում իշխանության գործունեության համակարգում իրենց ներգրավվածության հիման վրա⁸:

Ղարաբաղյան Հակամարտության տարածքային հիմնախնդրի զգալի շերտը շատ հետազոտողների հիմք է տալիս տվյալ հակամարտությունը դիտարկել գերազանցապես էթնոտարածքային բննադրման տեսանկյունից: Այսպես օրինակ, Ա. Ներսիսյանը գրում է, որ Ղարաբաղյան Հակամարտությունը կարելի է դասել տարածքային հակամարտությունների տեսակին, որոնք կապված են նախկինում փերեքված էթնոսների վերամիավորման հետ: Ղրանց աղբյուրը Ներքարաքական, հաճախ նաև զինված բախումն է կետավարության և այս կամ այն իռնեդնտիստական ու անջատողական խնջավորման միջև, որը օգտվում է հարևան պետության քաղաքական և ռազմական աջակցությունից⁹:

Ղարաբաղյան Հակամարտության տարածքային հիմնախնդիրը չի կարող դիտարկվել որպես հակամարտության առաջնային նույնականացնող հատկանիշ: Տարածքների հարցը Լեռնային Ղարաբաղի հակամարտային հիմնախնդրի որոշիչ հարցը չէ, այն արտահայտում է հակամարտող կողմերի պահանջների քաղաքական-իրավական կողմերից մեկը և պետք է դիտարկվի որպես հակամարտության երկրորդական որոշիչ, որը իր առանձնահատուկ արդիականացումը ստացել է հակամարտության կարգավորմանն ուղղված կողմերի ներկայիս ջանքերում: 1980-ական թվականների երկրորդ կեսին, իր կազմակցման առաջին իսկ փուլում Ղարաբաղյան Հակամարտությունը սեկ կապված էր Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի պահանջների տարածքային ասպեկտի հետ /անջատումը ԱրդիՄԳ-ից և միացումը ՀայկեՄԳ-ին/, սակայն այն կրում էր ավելի հայեցակարգային քաղաքական-իրավական բնույթ որպես միութենական հանրապետության տարածքում հայկական էթնոսի իրավունքների խախտման ընդհանուր հարցի անանցյալ: Ներկա փուլում տարածքների հարցը պետք է դիտարկվել սերտ կապի մեջ հակամարտության հետևանքների հետ, այլ ոչ թե նրա պատճառների, ինչը մեկ անգամ ևս վկայում է այդ հարցի անանցյալ լինելու մասին, այլ ոչ թե որոշիչ էության: Ինքը Ա. Ներսիսյանը նշում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը էթնիկ, տարածքային, քաղաքական, տնտեսական և, որոշ առումով կրոնական հակասությունների մի ամբողջ համալիր արդյունք է:

Արդեջնական հեղինակները նշում են, որ «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը նվազ չափով պետք է բնորոշել որպես տարածքային, դա գտափարական, աշխարհաքաղաքական, եթե կուզենանք աշխարհայայցային հակամարտություն է: Նա ծառ է հիշեցնում, որը հակառակ ուղղությամբ է աճում, վերևից ներքև, որի արձատները գտնվում են մեր մեջ, այստեղիս իրականության մեջ, և միայն ճյուղերն են գնում դեպի անցյալ, դեպի պատմությունը: Խմստություն դրանք քաղաքական շահերի են, պայքար իշխանության համար, պետաիրավական համակարգերի նկատմամբ հին մտածողության և նոր մտեցումների միջև դաժան պայքարը¹⁰:

Պետք է նշել, որ հակամարտության կարգավորման ներկայիս փուլում տարածքային հարցի բարձրացման /մինչև կարևորագույն հարցերից մեկի մակարդակ/ պատճառային հիմքերը պետք է փնտրել հակամարտության սկզբնական փուլում, որի հիմնական հակամարտածին գործոնները ձևավորվել են դեռ 20-րդ դարի առաջին քառորդում: Քաղաքական և էթնիկ տարածքների անհամաչափ առատարման գործոնի հակամարտածին կարևորությունը ի սկզբանե հատուկ էր Ղարաբաղյան Հիմնախնդրին:

Ղարաբաղյան Հիմնախնդիրը իրենից չի ներկայացնում «գտարյուն» էքոնոմադաբական հակամարտություն: Ինչպես և այլ ցանկացած արդի շրջանի էքոնոմադաբական հակամարտության մեջ, տվյալ հակամարտությունում շահալավված են մրցակցության էթնիկ, քաղաքական, սոցիալական, տնտեսական և շատ այլ կողմերը:

Միևնույն ժամանակ, Ղարաբաղյան էքոնոմադաբական հակամարտության տարրերությունը նման բնույթի այլ հակամարտություններինց կայանում է նրանում, որ իր հիմքում լինելով հակամարտություն փլուզված միութենական հանրապետության երկու պետականաստեղծ ազգերի միջև /ԱդրբեյՃան/՝¹², 1980-ական թվականների երկրորդ կեսի քաղաքական իրականության մեջ ծավալման առաջին իսկ փուլերից Ղարաբաղյան Հակամարտությունը ձեռք բերեց հստակ արտահայտված էթնիկ բնույթ: Որպես կանոն, ժամանակակից էքոնոմադաբական հակամարտությունները ծագելով տնտեսական, սոցիալ-քաղաքական կամ արտաէթնիկ հիմքի վրա, միայն հետագայում են ձեռք բերում արտահայտված էթնիկ բնույթ: Ղարաբաղյան Հակամարտության մեջ, հակամարտային դիմակայմանը հանգեցնող հանրապետության պետականաստեղծ ազգերի միջև նախնական էթնիկ հակադրումը օգտագործվեց որպես ազգային շարժման հզոր մոբիլիզացնող խորհրդանիշ: Նման մոբիլիզացիոն խորհրդանիշի սուբյեկտ հանդիսացավ Լեռնային Ղարաբաղի հայ մոլոդուրը, որն այնուհետև վերածվեց էքոնոմադաբական հակամարտության դիմամիկան և էությունը որոշող ինքնուրույն գործոնի:

Ղարաբաղյան Հակամարտությունը, որպես էքոնոմադաբական հակամարտություն, ուներ բովանդակային իր նախնական, յուրահատուկ սոցիալ-պատմական կերպը: 1980-ական թվականների երկրորդ կեսին, նման յուրահատկության տարրերակիչ բնութագրող դարձավ հակամարտության դիմակայող էթնոսների աստիճանաբար աճող ագրեսիվացումը, որը որոշակի փուլում հանգեցրեց աճող ագրեսիվացման դրսևորման կիզակետին՝ 1990-ական թվականների առաջին կեսին կողմերի միջև ակտիվ ռազմական գործողություններին: Էքոնոմադաբական հակամարտությունների տիպականացման տեսակներից մեկի համաձայն, հետխորհրդային տարածքում առանձնացնում են էթնիկ խմբերի միջև /օրինակ, հայերի և ադրբեջանցիների/ տևական անտագոնիստական հարաբերությունների հետ կապված հակամարտություններ: Այս դեպքում առկա են «արյան ժառանգումը», փոխադարձ դատախազությունը, որը վաղ թե ուշ պետք է հանգեցնի բռնությունների պոռթմանը¹³:

Ղարաբաղյան Հակամարտության էքոնոմադաբական էությունը 1980-ական թվականների երկրորդ կեսին նրա համակարգային կայացման առաջին փուլերում, ձեռք բերեց հետխորհրդային տարածքի էքոնոմադաբական հակամարտություններին բնորոշ «ասիմետրիկ» բնույթը: Այս պարագայում, «ասիմետրիկության» տակ մենք հասկանում ենք հակամարտող էթնոսների հստակ հակադրումն ըստ «էթնիկության» և «քաղաքականության», որոնք առկա են հետխորհրդային տարածքում «ազգային պետականության կառուցման» ընդհանուր համատեքստում: ԱդրբեյՃան երկու պետականաստեղծ ազգերի պետական բաժանումը տեղի էր ունենում էթնիկ հակադրման և քաղաքական առանձնացման օգնությամբ, որոնք միավորված էին ազգերի «տիտուլյարության» և «ոչ տիտուլյարության» հակադրման ընդհանուր համատեքստում: Հետխորհրդային տարածքի արդի շրջանի բոլոր էքոնոմադաբական հակամարտությունները

ասիմետրիկ տիպի հակամարտություններ էին, որոնք զաղափարապես և քաղաքականապես ձևավորվում էին «ազգային պետականության» պրակտիկայով: Այս զաղափարախոսությունն ու պրակտիկան հիմնվում էին և շարունակվում են հիմնվել երկու գլխավոր պատուկատմերի վրա. 1. որպես ազգ են հռչակվում այն էթնիկ ընդհանրությունները, ավելի ճիշտ էթնիկ խմբերի այն հատվածը, որը բնակվում է այդ խմբի անվանումը կրող հանրապետության սահմաններում /դրանք կոչվում են «տիտուլյար» ազգություններ/: 2. այս էթնոազգային պաշտոնապես որակվում են որպես սեփական պետականությունը կրողներ /«թնիկ ազգեր», այն դեպքում երբ մնացած բնակչությունը դասվում է «փոքրամասնությունների» շարքին, որը բնակվում է պետականության «ոչ իր» տարածքում¹⁴:

Նախկին ԱդրբեյՃանի տարածքի հարրեջանցիները իրենց դրսևորում էին որպես պետականաստեղծ իրավունքներով օժտված միակ «տիտուլյար» ազգ: Իսկ Լեռնային Ղարաբաղի հայերը մտամադուխ կերպով իրենց կարգավիճակը ներկայացնում էին նախկին ԼՂԻՄ-ի տարածքում Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի վերաբերյալ իրենց բացառիկ իրավունքի մասին բխող եզրակացություններով:

Ընդհանուր առմամբ Ղարաբաղյան Հակամարտության մեջ կողմերի դիմակայման էքոնոմադաբական բախումնադասությունը կարելի է հստակացնել մի հայեցակարգի շրջանակներում, որը կոնկրետ պետական գոյացության պետականաստեղծ էթնոսների փոխհարաբերությունները դիտարկում է որպես հակամարտածին էքոնոմադաբական հիմնախնդիր: Տվյալ հայեցակարգի շրջանակներում ընդգծվում է էթնոազգայնականության դերը էթնիկ զագեցումների մոբիլիզացիայի, միջէթնիկ լարվածության և դրա ընդհուպ միջև բաց քաղաքական հակամարտությունը, սրման մեջ: Նման հայեցակարգի զաղափարական բուն էությունը կլինի էթնոազգայնականությունը, որն ուղղված է քաղաքական նպատակների ձեռքբերմանը: Զաղաքագիտական տեսանկյունից /որը կիրառելի է նաև դարաբաղյան էքոնոմադաբական հակամարտության նկատմամբ/ էթնոազգայնականությունը կարելի է բնութագրել որպես զաղափարական ուղղություն, որն ուղղված է ինքնավարության, այն սոցիալական խմբի միասնության ու ինքնության ձեռքբերմանն ու պահպանմանը, որն ինքնագիտակցում է որպես էթնիկ հանրություն: Էթնոազգայնականությունը էթնիկ հանրության համար հանդիսանում է ինչպես զաղափարախոսություն, այնպես էլ քաղաքական շարժում: Բացի երեք նպատակները, որոնք այժմևակասանում են իրականության քաղաքական կոնյուկտուրայի հետ սերտորեն փոխկապված, ուստի և կրում են միջանկյալ բնույթ՝ ինքնավարության և ինքնակառավարման պահիվումը, իրավունքը տարածելու նկատմամբ և ընդհանուր պետական կարգավիճակին հավասարազոր իրենց մշակույթի ճանաչումը¹⁵, էթնոազգայնականության զաղափարախոսությունն ուղղված է արտահայտված քաղաքական բովանդակությանը «մաքսիմում-ծրագրի» ձեռքբերմանը սեփական պետականության ստեղծմանը:

Ղարաբաղյան Հակամարտության որպես էքոնոմադաբական հակամարտության բնութագրման և մեկ քննարկման դաշտ է հանդիսանում այն հատկանիշների բացահայտումը, որոնք հնարավորություն են տալիս տվյալ հակամարտությունը մեկնաբանել որպես «արժեքների հակամարտություն»:

Ինչպես հայտնի է, էքոնոմադաբական գործընթացն առանձնանում է ոչ միայն սուբյեկտներով, այլ նաև քաղաքական գործողությունների իմաս-

տով¹⁶: Երևոքադաբական գործընթացի սուբյեկտները հաճախ պաշտպանում են շահանցնող արժեքներ /այլ ոչ թե շահեր/ և չեն «աշխատում են» քաղաքական տարածության միասնության օգտին: Ինչպես նշում է Ա. Պանարինը, «քաղաքականության մեջ էլ ապիսի իր մասին խոսում է հետազոտողական անհատների ոչ միայն «բանական էզոիզմը», որը հետապնդում է իր անհատական շահերը, այլ նաև զգացվում է «կոլեկտիվ էության» ռեվանշը, որպիսիք են ազգային շահը, ազգային նպատակները և գերակայությունները, քաղաքակրթական. սոցիո-մշակութային, կոնֆեսիոնալ նույնականությունը»¹⁷:

Պարաբայան Հակամարտության հիմնում ընկած էին Ադրբեյջանի քաղաքական ղեկավարության կողմից անտեսված Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի զարգացման պահանջները: Տվյալ պահանջները դրսևորվում էին Լեռնային Ղարաբաղի հայերի ազգային զարգացման այնպիսի տարրերում, ինչպիսիք են ազգային իքնության և մշակույթի պահպանումն ու զարգացումը, վարչական, սոցիալական, տնտեսական և մշակութային հարցերի ինքնուրույն լուծման հնարավորությունը, որոնք բխում էին միութենական հանրապետության սահմաններում ինքնավարությամբ օժտված ազգերի իրավունքներից, և ընդհանուր առմամբ միութենական հանրապետության տարածքում հայկական էթնոսի ներկայացուցիչների անհատական իրավունքներից և հայկական էթնոսի կոլեկտիվ իրավունքներից որպես Ադրբեյջան պետականատեղծ երկու ազգերից մեկը:

Յենց Լեռնային Ղարաբաղի հայերի ազգային զարգացման նշված կարիքների անտեսումն ու խախտումը հանդիսացած դիմակայող էթնոսների հակամարտության մեջ լայն ընդգրկման պատճառային տարրերը, որի հիմնարար բախումնային հակասություններից մեկը դարձավ պայքարը արժեքների համար, որոնք կողմերի յուրաքանչյուրի կողմից մեկնաբանվում էին հակադրման տեղերում: Գլխավոր արժեքը, որի շուրջ ծավալվեցին կողմերի /նախապես, Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը և Ադրբեյջանի հանրապետական քաղաքական ղեկավարությունը, իսկ հետագայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որպես նախկին Ադրբեյջանի հայկական էթնոսի պետա-իրավական ներկայացուցիչ և Ադրբեյջանի Հանրապետությունը, որպես նախկին Ադրբեյջանի արդեթանական էթնոսի պետա-իրավական ներկայացուցիչ/ միջև քաղաքական դիմակայման առավել դաժան տարրերը հանդիսացան հակամարտության կողմերից յուրաքանչյուրի զարգացման հեռանկարը: Ինչպես հայտնի է, «արժեքների հակամարտությունները» ձևավորվում են հակամարտող կողմերից յուրաքանչյուրի համար իր զարգացման հեռանկարների գիտակցման տարրերության /հաճախ հակասական/ շուրջ: Լեռնային Ղարաբաղի հայերը իրանց ազգային զարգացման հեռանկարը տեսնում էին Ադրբեյջանի, իսկ հետագայում արդեն Ադրբեյջանի Հանրապետության սահմաններից դուրս, իսկ Ադրբեյջանի քաղաքական ղեկավարությունը, այնուհետև նաև ԱՀ-ի քաղաքական ղեկավարությունը՝ իրենց ազգային պետականության շրջանակներում արդեթանական էթնոսի հեռանկարային զարգացման հարցում, հանրապետության «տարածքային ամբողջականության» պահպանման սկզբունքին տվեցին գլխավոր արժեքի նշանակությունը:

Պարաբայան Հակամարտության դիմակայող կողմերի շահերի անհատաեղելիության, դիմակայող սուբյեկտների միջև մինչ օրս պահպանվող դաժանության ու անզիջողականության նույնականացնող աղբյուրները

պետք է ընկալել տվյալ հակամարտության «արժեքների էքոնոմաքական հակամարտության» մեկնաբանման համատեքստում, որում ընդդիմախոսի շահերն ու գործողությունները ընկալվում ու զննատվում են սեփական արժեքային համակարգի տեսանկյունից, որի արդյունքում նույնիսկ ընդդիմախոսի համարժեք քայլերը կոնկրետ իրավիճակում դիմակայող կողմից կարող են թշնամաբար ու բացասաբար ընկալվել, քանի որ չեն համապատասխանում իր արժեքային կառուցվածքին:

Նախապես լինելով «արժեքների էքոնոմաքական հակամարտություն», Ղարաբայան Հակամարտությունը դիմակայման իր ուղեծիր ներառեց պետական ու հասարակական բնույթի և էթնոսների և քաղաքական գոյացությունների: Վերացարկվելով հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերի և նրանց շահերի հատակ բնորոշումից, ընդհանրական իմաստով, Ղարաբայան Հակամարտության աղբյուրը հանդիսանում է էթնոազգային և քաղաքական դիմակայությունը «ճնշվող փոքրամասնություն», «գերակշռող մեծամասնության» միջև: Հակամարտության տվյալ առավել վերացարկված կողմերի նույնականացումը կատարվում է հակամարտությանը նախորդող և անմիջապես հակամարտության ծագման շրջանների շրջանակներում նրանց «գործառնական դերերի որոշմամբ, որոնք այնուամենայնիվ կողմերը տարբեր կերպ են մեկնաբանել. Լեռնային Ղարաբաղի հայերը իրենց դիտարկել են որպես «ճնշվող փոքրամասնություն» և, համապատասխանաբար, մատնանշել են «գերակշռող մեծամասնությունը» ի դեմս Ադրբեյջանական բնակչությունը, իսկ արդեթանցիները հակառակ, իրենց են համարել և Ղարաբայան են համարել «ճնշված փոքրամասնություն» /Լեռնային Ղարաբաղի սահմաններում/, իսկ Լեռնային Ղարաբաղի հայերին որպես «գերակշռող մեծամասնություն»:

Նման իրավիճակը ներկայացված է որոշ էթնոկոնֆլիկտաբանների հետազոտություններում, սակայն, վերլուծության բավական մակերեսային «քանակական» մակարդակի վրա առանց խորանալու հիմնախնդրի «որակական» էության մեջ: Այսպես, օրինակ, նշվում է, որ էքոնոմաքական հակամարտություն ծագում է ամենաբիշը երկու կողմերի միջև: Ավելի հաճախ որպես հակամարտություն իրարից և սրացնող ակտիվ ուժ հաճախ հանդիսանում է էթնիկ փոքրամասնությունը, կամ մեծամասնությունը: Հանդիսանում է արդյոք մեծամասնությունը՝ մեծամասնությունը, իսկ փոքրամասնությունը՝ փոքրամասնություն, կարելի է վերլուծել ամբողջ երկրի մակարդակով, նրա առանձին հատվածով, շրջանով կամ տեղական միավորով: Բնակչության մեծամասնությունը կազմող ժողովուրդը հազվադեպ է մեծամասնություն կազմում տեղական մակարդակում: Այդպես ծագում է բավական նրբանկատ իրավիճակ, երբ փոքրամասնության բնական վայրում ազգային մեծամասնությունը ինքն է դառնում փոքրամասնություն: Իսկ էքոնոմաքական հակամարտությունն առկա է երբ որևէ ազգի ներկայացուցիչները դժգոհություն ունեն և թշնամաբար են վարվում փոքրամասնության նկատմամբ¹⁸:

Այս առթիվ նշենք, որ ցանկացած դեպքում «ճնշվող փոքրամասնության» և «գերակշռող մեծամասնության» նույնականացումը պետք է հիմնվի լրացուցիչ հատկանիշների բացահայտման վրա, որոնք, ըստ մեզ, կարելի է բնորոշել որպես «որակի» հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են դիմակայող կողմերի ընդհանուր «գործառնական դերերի» հստակացման համար: Որպեսզի մեծամասնությունը զննատվի «գերակշռող» տերմին-

նով, այն, բացի անհրաժեշտությունը, պետք է իրապես ունենա պետության քաղաքական իշխանության և ռեսուրսների տնօրինման հնարավորություն: Իսկ փորձամասնությունը, որպեսզի այն դիտարկվի «ճնշվող» տանիքում, չպետք է օժտված լինի նման իրական հնարավորություններով և, որ իր նույնականացման համար ամենակարևորն է, պետք է հանդիսանա կոնկրետ պետական գոյացության մեծամասնության գերակշռման ու գերիշխող դիրքերից քաղաքական իշխանության ու ռեսուրսների շարունակական վերահսկողության իրավունքի քննադատական գերազանցատման նախաձեռնող: Այս համատեքստում Դարաբաղյան Դավանարտությունը ժամանակակից այլ էթնոքաղաքական հավանարտությունների հիմնապատկերի վրա, ուներ իրեն հատուկ «որակի» նույնականացման հատկանիշները: Լեռնային Դարաբաղի հայերը Ադրբեյժանի շրջանակներում պետք է դիտարկվեն որպես «ճնշվող փոքրամասնություն» և որպես «գերակշռող մեծամասնություն» Լեռնային Դարաբաղի շրջանակներում, քանի որ որպես «ճնշվող փոքրամասնություն» նրանք հարցականի տակ դրեցին Ադրբեյժանի մեկ այլ պետականատեղծ ազգի աղբյուրներից բաղաբաղական իշխանական հնարավորությունների տարածման քաղաքական իրավունքը Լեռնային Դարաբաղի հայ ժողովրդի վրա: Սակայն, մինևույն ժամանակ հաշվի առնելով 1980-ական թվականների երկրորդ կեսին, հավանարտության վերակենդանացման պահին, Լեռնային Դարաբաղում աղբյուրական բնակչության առկայությունը, վերջինիս նկատմամբ նրանք դարձան «գերակշռող մեծամասնություն», որն իր պետականատեղծ ներուժը Ադրբեյժանի շրջանակներում իրականացրել է նախկին ԼԴԻՄ և հարակից պատմական հայկական Արցախի տարածքներում¹⁵:

Պետականատեղծ աղբյուրական էթնոսի քաղաքական գերակշռման վերաբերյալ հարցի շուրջ Լեռնային Դարաբաղի հայերի կողմից առաջ քաշված պահանջի գլխավոր պատճառներից մեկը Ադրբեյժանի երկրորդ պետականատեղծ ազգի հայերի իրավունքների խախտման փաստը է՝ անհատական ու կոլեկտիվ մակարդակով:

Գլուխ 2. Դարաբաղյան Դավանարտության պատճառները

Էթնոքաղաքական հավանարտությունների պատճառների հարցը հետազոտությանը հաղորդում է հավանարտության դինամիկայի ուսումնասիրման բնույթ, որում որպես հավանարտության առաջին «պատճառա-յին»/ բևեռ, գտնվում են որոշակի էթնոքաղաքական հավանարտության ծագմանը հատուկ հիմքեր, որոնք դարձել են կողմերի դիմակայման հավանարտային զարգացման կատարյալագետոներ, իսկ որպես երկրորդ բևեռ դիտարկվում է հավանարտության վերջնական կամ միջանկյալ կետը, որում հավանարտությունը համապատասխանաբար կամ հանգում է իր լուծմանը, կամ ենթարկվում է նախյալ փոփոխության կապված նոր հատկություններով օժտված տարրերի ներմուծման հետ, որոնք ընդունակ են նոր որակ հաղորդել հավանարտությանը:

Էթնոքաղաքական հավանարտությունների դինամիկան, որպես նման բնույթի բոլոր հավանարտությունների ընդհանուր հատկություն առանց դրանք որակական ու իրադարձային յուրահատկության, վկայում է, որ նման հավանարտություններն ունեն քաղաքական հարցերի շուրջ միջէթնոսիկ հավատությունների կուտակման ու ծավալման թաքնված շրջան: Ամեն մի հավանարտության դեպքում տվյալ ժամանակահատվածն ունի տար-

բեր տևողություն: Դեռց այդ շրջանում է տեղի ունենում հավանարտության էթնոքաղաքական ներուժի ձևավորման և բացահայտվում է հավանարտող կրճատների քաղաքական դինամիկան դինամիկայի ընդհանուր ուղղու-թյունը:

Ուստի առաջնայան հետազոտողներն առաջարկում են դիմակայման արտահայտված քաղաքական բաղկացուցիչով տեղային բնույթի միջէթնոսիկ հավանարտությունների դինամիկայի գնահատման հետևյալ եղանակը: Տվյալ եղանակի հիմքում ընկած է հավանարտության որպես մի շարք փուլեր անցնող գործընթացի գիտակցումը: Վերջիններս արձանագրվում են հետազոտության քանակական /սոցիոլոգիական/ և որակական /քաղաքաճիտական/ եղանակներով. 1. ֆոնային լարվածության մոլ, 2. կենցաղային ազգայնականության փուլ, 3. հավանարտության քաղաքականացման փուլ, 4. բողոքի գործողությունների փուլ, 5. բաց հավանարտության փուլ, 6. հետհավանարտային կարգավորման փուլ, 7. հավանարտության մակարդակի հետագա անկման փուլ, 8. հավանարտության լուծման փուլ, որի մասին կարելի է խոսել միայն հավանարտության ապաքաղաքա-կանացումից և լարվածության մակարդակի հետագա նվազումից հետո¹⁶:

Գիտական գրականության մեջ գոյություն ունեն էթնոքաղաքական հավանարտությունների պատճառների, դրանց էվոլյուցիայի ելույթան վեր-նուծության երկու մոտեցումներ. 1. սոցիոլոգիական, որի շրջանակներում հավանարտության պատճառները բացատրվում են հիմնական սոցիալա-կան խմբերի ու շերտերի էթնիկ պարամետրերի վերլուծության մեջ, ինչպես նաև հասարակության սոցիալական շերտավորման փոխադարձ կապի ու փոխազդեցության և էթնոքաղաքական լարվածության մեջ գտնվող տար-րածքի աշխատանքի բաժանման էթնիկ բնութագրերի հետազոտման հի-ման վրա, 2. քաղաքագիտական, որի շրջանակներում ուշադրությունը կենտրոնացվում է միջէթնոսիկ լարվածության գործընթացում զգացմունք-ների մոբիլիզացիայի մեջ և բաց հավանարտության վերածման մեջ ազգա-յին վերնախավերի դերի մեկնաբանության վրա: Որպես առանցքային հարց հետազոտվում է իշխանության և ռեսուրսների տնօրինման հարցը:

Էթնոքաղաքական հավանարտությունների պատճառների դիտարկման ժամանակ որոշ հետազոտողներ փորձում են տվյալ հարցին մոտենալ վերոնշյալ երկու մոտեցումները միավորող դիրքերից և, համապատաս-խանաբար կողմերի էթնոքաղաքական դիմակայման պատճառների հետազոտման մեջ որոշակի ընդհանուր հաստատուն ներմուծել: Որպես նման մեթոդաբանական հաստատուն է ծառայում, օրինակ, համընդհա-նուր քաղաքակրթական բնույթի պատճառների բացահայտումը, որոնք մարդկության օրյեկտիվ զարգացման ծնունդ են հանդիսանում: Այսպես օրինակ, Դ. Բլեյլը ենթադրում է, որ էթնոքաղաքական տարածքներում արդիա-կանացման /սոցիալական կառուցվածքի, տնտեսության, ազգային պետա-կան կառույցի և այլն/ անհամաչափ ընթացքը, մի կողմից, բախում է ծնուն- էթնիկ խմբերի հավակնություններին, և մյուս կողմից պետության իր քաղա-քացիների իրավունքների ապահովման երաշխավորման իրական հնարա-վորությունների միջև¹⁷:

Ըստ ելույթան, հետազոտության տվյալ քննարկումը գիտական շրջա-նառության մեջ է մտցնում «էթնոքաղաքական հավանարտությունների մակրոպատճառ» հասկացությունը: Էթնոքաղաքական հավանարտություն-ների մակրոպատճառները մեկնաբանվում են որպես «քաղաքակրթական ճեղքվածքներ»: Մշակույթների և քաղաքակրթությունների հավանարտու-

թրան համառոտաբար էր նորադարձակ հակամարտությունների գիտակցումն էլ հենց հնարավորություն է տալիս բացահայտել էր նորադարձակ լարվածության օջախները, մշտական էր հակամարտային «պատրաստակամություն» գոտիները և տարածքները»²²:

Այսպես կոչված «ներքին գաղութատիրության» հայեցակարգի շրջանակներում էր նույն քաղաքական մասնակցությունը բացատրվում է բազմազգ պետության մեջ ինդուստրիալիզացիայի անհամաչափ տեմպերով, որը ծնում է էրոնիստների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերություններ: Եթե հիվանդանոց գերակշռող խումբը ձգտում է կայուն ապրելու ու մենաշնորհել իր դիրքն ու առավելությունները: «Ենթերին գաղութատիրության» հայեցակարգը առանձնացնում է էրոնիստ քաղաքականացման պատճառները. 1. արդիականացման ընթացքում էրոնիստների միջև օբյեկտիվորեն ձևավորված սոցիալ-տնտեսական անհավասարությունը, 2. էրոնիստի անդամների կողմից այդ անհավասարության գիտակցումը որպես պատմական անարդարություն, 3. էրոնիստականության ձևավորումը /քաղաքական կարգավիճակի փոփոխման ծգտում/ որպես կենտրոնի քաղաքականության ուղղված արծազանց: Չարագանելով այս տեսակետը, հեղինակները հանգում են այն եզրակացության, որ չփվող էրոնիստների սոցիալ-տնտեսական բնութագրերի արդիականացման ու մերժեցման հետ մեկտեղ էրոնիստ գործուն աստիճանաբար կորցնում է իր ազդեցությունը»²³:

Երոնիստական հակամարտություններ ծնող պատճառների շարքում հետազոտողները նշում են «Երոնիստականության քաղաքականացումը»²⁴, որն իր զարգացումը ստացել է, մասնավորապես, վերակառուցման ժամանակաշրջանի խՍՀՄ-ի քաղաքական համակարգի ազատականացման պայմաններում»²⁵:

Բացի էրոնիստական հակամարտության խորքային պատճառները, որոնք որոշում են բախումային հատկության հիմնական տարրերը և զարգացման դինամիկայի հետագա վեկտորը, կարելի է առանձնացնել նաև էրոնիստական հակամարտությունների իրավիճակային պատճառները. արտաքին միջավայրի զսպող գործոնների հանկարծակի անհետացումը, ինչը կարող է տեղի ունենալ բարձրագույն քաղաքական իշխանության արագ թուլացումից կամ արտաքին սպառնալիքի անսպասելի անհետացումից, առաջնորդության համար ներքին պայքարը էրոնիստների շրջանակներում, տնտեսական իրավիճակը և այլն:

Անենալոգիստիկ իմաստով էրոնիստական հակամարտության պատճառները պետք է փնտրել մի հարթության վրա, որտեղ տեղի է ունենում այն սոցիալական խմբերի միջև հարաբերություններում քաղաքական ու դրա հետ կապված այլ հակասությունների չկարգավորվածության խորացում, որոնք իրենց առաջին հերթին ու գերազանցապես դիտարկում են էրոնիստական չափանիշներով: Սա էրոնիստական հակամարտությունների պատճառայնության ներքին շերտն է:

Երոնիստական հակամարտությունների պատճառները բացահայտելու մյուս կարևոր ասպեկտը հակամարտության նկատմամբ արտաքին գործոնների պարտադիր բացահայտումն է, որոնք ազդում են էրոնիստների միջև հակասությունների էվոլյուցիայի վրա»²⁶:

Երոնիստական հակամարտության դինամիկան որոշվում է կողմերի միջև էրոնիստական դինամիկայի ընդհանուր դիալեկտիկայով: Երոնիստական հակամարտության առարկան անմիջականորեն կապված է

քաղաքականացնելով դինամիկայի էրոնիստների միջև հարաբերություններում սակա հակասությունների հետ: Տվյալ հակասությունները կարող են ունենալ հիմնական և կողմնակի բնույթներ, սակայն կարևորն այն է, որ էրոնիստական հակամարտության էվոլյուցիայի տարբեր փուլերում այս հակասությունները կարող են մեկը մյուսով ձևափոխվել հիմնականից կողմնակին և հակառակը: Ավելին, էրոնիստական հակամարտության առարկան ինքնին իրենից ներկայացնում է կոնկրետ պատմական պայմաններում այս հակասությունների հայտնաբերումը, երևակումը և դրսևորումը, ուստի և էրոնիստական հակամարտությունների առարկաները միևնույն հակամարտության տարբեր փուլերում կարող են տարբեր լինել: Հակասությունների շրջանակի և էրոնիստական հակամարտության առարկայի «կայունությունը», էրոնիստների հակամարտային դինամիկայի քաղաքական պրակտիկայում դրանց հստակ օբյեկտիվականությունը կախված են բազմաթիվ գործոններից, որոնց շարքում առանձնացնենք Լեոնային-դարաբադյան Հակամարտության իրողությանը վերաբերվողները. հայկական և թուրքական էրոնիստների հակամարտային դինամիկայի րավական տևական պատմական փորձը, դրա հետ կապված նրկա էրոնիստների անհամատեղելի քաղաքական հավակնությունների բյուրեղացումը, ազդեցության արտաքին գործոնները, որոնք շերտադարձվում են էրոնիստական «խճանկարի» ու տարածաշրջանի քաղաքական ասպակոմունորոշման «բարենպաստ» հողի վրա, որը նպաստում է տարածաշրջանի էրոնիստների միջև քաղաքական հակասությունների արմատավորմանը և դրանց «օբյեկտիվ» տեսք հարդողելուն:

Երոնիստական հակամարտությունների պատճառների հարցը սերտորեն կապված է կոնկրետ պատմական հակամարտության շրջանակներում էրոնիստների քաղաքական դինամիկայի հիմնական հարցի հետ: Կոնկրետ էրոնիստական հակամարտության էվոլյուցիոն զարգացման յուրահատկության հետազոտությանը էլ հենց կարելի է բացահայտել դրա ինքնուրույն գտնվող /որպես հակամարտության առաջին «բևեռ»/ հակամարտող սուբյեկտների միջև էրոնիստական դինամիկայի պատճառները՝ ծագումով տարբեր, սակայն հակամարտային արդիականացված ներուժով միավորված:

Երոնիստական հակամարտության գաղտնի վիճակից արդիականի անցումը սովորաբար սկսվում է իր վիճակի և այն փոփոխելու մտադրության մասին կողմերից մեկի անբարեբախտության արտահայտումից, որը հանդիսանում է այդ գործընթացի առաջին փուլը»²⁷: Անբարեբախտության արտահայտումը գրեթե միանշանակ վկայում է գաղտնի փուլի ավարտի և հակամարտության «արդիականացման» փուլ անցման մասին:

Որպես կանոն, չբավարարված կողմն այդ պահին դեռ օժտված չէ իր դրությունը փոփոխելու համար անհրաժեշտ ուժով, և մյուս կողմի կամ կողմերի գործողությունները կարող են ունենալ երկակի բնույթ. չբավարարված կողմի մտադրությունների ճնշում և հակամարտության ժամանակավոր վերադարձ գաղտնի վիճակի կամ հակամարտության առարկայի ինքնին գոյության փաստի ընդունումից հրաժարում»²⁸:

Առաջին դեպքում, չբավարարված կողմի մտադրությունների ճնշումը նախադրյալ է հանդիսանում հակամարտության բռնի «պայքունի» համար», երբ չբավարարված կողմը բաց գործողությունների համար կարող է միավորվել կամ հակառակ կողմը կարող է կորցնել չբավարարված կողմի մտադրությունների հետագա ճնշման հնարավորությունը: Դեռ նման

իրավիճակն էր /ըստ առաջին «սցենարի»/ առավել տարածվածը նախկին ԽՍՀՄ-ում 1980-ական թվականների երկրորդ կեսին, երբ մեկը մյուսի հետևից արդիականացվում էին բազմաթիվ էքոնոմիկական հակամարտությունները: Դեռևս այդպիսին էր տվյալ ժամանակաշրջանում արդիականացած Դարաբաղյան Հակամարտության դիմակայող կողմերի էքոնոմիկական դաշտի նախնական «դրվածքը»:

Դարաբաղյան Հակամարտության հարցերի ճանաչված փորձագետները հետխորհրդային տարածքի էքոնոմիկական հակամարտությունների յուրահատկության մասին նշում են, որ «յուրաքանչյուր հակամարտության մեջ խիստ կարևոր են պատճառա-հետևանքային կապերը, պատճառների և հետևանքների հստակ տարբերատունը, դրա նախապատմությունը և իրավաբանական առանձնահատկությունները»²⁹:

Ունենալով մասշտաբների, սոցիալական նշանակության, ծագման, «տարիքի», լարվածության տարբերություններ, էքոնոմիկական հակամարտություններն ունեն մեկ «վերջնական տույժ», որը նպաստում է էքոնոմիկական մոբիլիզացիային: Դրանց խորքային արմատներն են այս կամ այն էքոնոմիկական կամ ազգի իրավունքների, ազգամիջյան արդարության ու հավասարության խախտումները³⁰:

ԽՍՀՄ-ի տարածքի ազգային հակամարտությունները հիմնականում հանդիսացել են մարդու իրավունքների և հիմնական ազատությունների խախտման արդյունք, ինչն իր հերթին ծնել է նոր հակամարտություններ: Լեռնային Դարաբաղը ԱրդիխՍՀ-ի կազմի մեջ ընդգրկման պահից և իտարական քաղաքականության հետևանքով, այնտեղ տեղի էր ունենում մշակութային, քաղաքական ու տնտեսական իրավունքների ոտնահարում³¹:

Ելնելով վերոհիշյալից, մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից Դարաբաղյան Հակամարտության պատճառների ուսումնասիրումը, մեր կարծիքով, հնարավորություն է տալիս նոր կողմեր բացահայտել հակամարտության դիմակայող կողմերի էքոնոմիկական դիմանկալի պատճառա-հետևանքային կապերի վերլուծության մեջ:

§ 1. Դարաբաղյան Հակամարտության պատճառների քաղաքական ասպեկտները մարդու իրավունքների պաշտպանության լույսի ներքո

Լեռնային Դարաբաղի հայ ժողովրդի իրավունքների խախտման քաղաքական ասպեկտները ուսումնասիրելիս պետք է նշել մարդու իրավունքների ընդհանուր տեսության քաղաքական ու ինստիտուցիոնալ ճանաչման այն հայեցակարգային դրույթները, որոնք ամփոփակմանը են վերաբերվում են Դարաբաղյան Հակամարտությունը մարդու իրավունքների պաշտպանության լույսի ներքո դիտարկմանը:

ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների պաշտպանության քաղաքական հիմքերը ինստիտուցիոնալ ձևավորվածության ու արդյունավետության առումով չէին գործում ժամանակակից ժողովրդավարական ստանդարտների համապատասխան, և ընդհանուր առմամբ կրում էին դեկլարատիվ բնույթ: Կա հատկապես իր վառ դոկտրինան ունեցող միոնոթեանական հանրապետություններում ազգամիջյան հարաբերությունների քաղաքական հավասարակշռման դուրսում, որոնց պետական քաղաքական-իրավական դաշտում որոշակի անհամասնություն էր ստեղծվել «գերակշռող էրնոս - ենթակա էրնոս» համակարգում:

Կ 844

Ազգամիջյան հարաբերությունները առավել լարվածություն էին ձեռք բերում հատկապես այն դեպքում, երբ «ենթակա էրնոսը» կոնկրետ միոնոթեանական հանրապետության ստեղծման ժամանակ նախապես օժտված էր պետականաստեղծ ազգի իրավունքներով: Ենթադրյալում մարդու իրավունքների պաշտպանության քաղաքական-իրավական ինստիտուտները պետք է պահպանեին կոնկրետ էքոնոմիկական կոլեկտիվ իրավունքների ապահովման սկզբունքը, որն ունի պետականաստեղծ իրավունքներ, սակայն «խորհրդային ազգի» ստեղծման ընդհանուր քաղաքական գաղափարատեսությունը կտրականապես թույլ չէր տալիս կոնկրետ ազգի հատուկ իրավունքների որևէ ընդգծում, եթե նույնիսկ նման ընդգծումը կրում էր օրգանապես տեղակայված հանրապետական բնույթ:

Սուրհորդային քաղաքական համակարգը հռչակում էր պետության ինստիտուտի առանձնահատուկ և բացառիկ դերը՝ համամիոնոթեանական և հանրապետական սահմանադրական մակարդակներով մարդու հռչակված իրավունքների պաշտպանության գործում: Սակայն, մարդու իրավունքների հռչակման իրական օրյելտիվացումը ներպետական համակարգի մեկնահիմքներում չուներ այն տեսքը, որն անհրաժեշտ էր բազմազգ միոնոթեանական հանրապետության շրջանակներում պետականաստեղծ էքոնոմիկական կոլեկտիվ իրավունքների ապահովման համար: Այսպես օրինակ, այս պատասխի համար սահմանադրական հսկողության /սահմանադրական արդարադատություն/ առավել հարմար ներպետական ինստիտուտը Սահմանադրական դատարանն ընդհանրապես բացակայում էր սուրհորդային Միության քաղաքական իշխանության մարմինների համակարգում, իսկ ինչպես պետական մարմինների համակարգի մեջ դրա նմանակի կողակտացիայի փորձերը 1980-ական թվականների վերջերին չհանգեցրին շուտապես արդյունքների /ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն³²: Այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ տարածքում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական առաքելությունն իրենց վրա վերցրին փոքրաթիվ հասարակական կազմակերպությունները, որոնք, մասնավորապես, Դարաբաղյան Հակամարտության մեջ հանդես էին գալիս որպես հասարակական իրավապաշտպաններ, որոնք հակամարտող կողմերի զինված դիմակայման ընթացքում ընդգրկված էին մարդու իրավունքների զանգվածային և կոպիտ խախտումների դեպքերի բացահայտման գործընթացի մեջ /օրինակ, «Սենորիալ» իրավապաշտպան կենտրոնը/:

Մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ քաղաքական ինստիտուտների ստեղծմանը խոչընդոտում էր միջազգային ասպարեզում ԽՍՀՄ «գաղափարական մեկուսացվածությունը», որը հնարավորություն չէր տալիս սուրհորդային պետությունը ներգրավել մարդու իրավունքների կոնցեպտի ինտերնացիոնալիզացման միջազգային-իրավական գործընթացի, իսկ դրա միջոցով նաև աշխարհի ժողովրդավարական երկրների միջազգայնորեն ճանաչված ստանդարտների համապատասխան մարդու իրավունքների պաշտպանության գործընթացի մեջ:

Սուրհորդային Միության բազմազգ քաղաքական տարածքի էքոնոմիկական հակամարտայնության նախաշեմին պետական իշխանության կենտրոնական և հանրապետական մարմինները բախվեցին հասարակության մեջ իրավակարգի պաշտպանության արդյունավետ մեխանիզմների պակասից /իսկ ավելի ստույգ՝ դրա քաղաքականացում/: Մարդու իրավունքները, որպես սոցիոնի հասարակական-քաղաքական կազմակերպման

համակարգի քաղաքական-իրավական ինստիտուտ, որն իր մեջ ներառում է ստանդարտների ու արժեքների որոշակի համալիր, կոնկրետ հասարակության սոցիալական կարգի ընդհանուր ապահովման մեջ հանդիսանում է ինստիտուցիոնալ բնույթի կայունացնող գործոններից մեկը: Հասարակության մեջ, մասնավորապես, կողմերի էքոնորաքարական դիմակայման բացակայության պայմաններում, մարդու իրավունքների պաշտպանության կայունացնող դերը անգնահատելի է այն անմիջական գործառույթների ու գործողությունների, մեխանիզմների ու միջոցների կանխատեսելիության, որոշակիության ու փոխհամաձայնեցվածության տեսակետից, որոնք ինքնին ապահովում են մարդու իրավունքների պաշտպանությունը: «Հավանաբարություններից զուրկ» հասարակության մեջ նպաստում են սոցիալական կարգի տարածության ստեղծմանը: Չունենալով, մասնավորապես ազգամիջյան քաղաքական հակամարտությունների նման կայունացնող ու կանխարգելող բազա, Խորհրդային Միության վեժտորմական և հանրապետական կուսակցական ղեկավարությունը ի վիճակի չէր արդյունավետ կառավարել երկրի ազգամիջյան հարաբերությունների ոլորտը:

ԽՍՀՄ տարածքում էքոնորաքարական հակամարտությունները «զսպելու» արդյունավետ մեխանիզմների բացակայությունը զուգակցվում էր Միության պետական իշխանության քանդակարանային մարմինների համառոտացմամբ ազգամիջյան հակամարտությունների կարգավորման իրավական լծակներից, որոնք այնուհետև վերանեցին զինված բնույթի խոշոր էքոնորաքարական հակամարտությունների: Այս առումով շատ բնորոշ օրինակ է Ղարաբաղյան հակամարտությունը: «Ժամանակին հակամարտության իրավական լուծման մեջ շահագրգռված չէր նաև Նախկին ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությունը: Կամ ստանալիսություն ունեին իրավունքի հիման վրա հակասությունների հորձանուտում գտնվող երկրում հակամարտությունների լուծման դարաքայան նախադեպի առումով, կամ էլ Կենտրոնում քաղաքական գործիչներ գտնվեցին, որոնք հակամարտության մեջ տեսան երկրի քայքայման որոնելի դետոնատորը»³²:

ԽՍՀՄ տարածքի ազգամիջյան հակամարտություններն արագ ձևափոխվեցին էքոնորաքարական հակամարտությունների, որոնց պատճառային էությունը գործնականում բոլոր հակամարտությունների պարագայում, որպես կանոն, «գերակշռող էքոնոս - ծնրակա էքոնոս» համակարգում կրում էր երկու էքոնոսների քաղաքական դիմակայման բնույթ:

1980-ական թվականների երկրորդ կեսին Ղարաբաղյան Հակամարտության վերակենդանացման ակտիվ փուլում հստակորեն ներկայացված էին քաղաքական բնույթի հետևյալ բաղկացուցիչները. 1. ի սկզբանե լինելով Ադրբեյժանի պետականաստեղծ ազգ միութենական հանրապետության հայ ժողովուրդը ի դեմս Լեռնային Ղարաբաղի հայության, որպես ԼԳԻՄ գործառույթային համակարգում պետականաստեղծ ազգի ինքնավար իրավունքների կրող, հանդես եկավ որպես Ադրբեյժանի կազմում իր գոյության վերանայման կոլեկտիվ նախաձեռնող³⁴, 2. որպես նման նախաձեռնության հիմնական պատճառներից մեկը, Լեռնային Ղարաբաղի հայերն առաջ քաշեցին Ադրբեյժան պետականաստեղծ ազգի իրենց իրավունքների ոտնահարման փաստերը:

Ղարաբաղյան Հակամարտության մինչքախոսման շրջանում ստեղծվել էր մի իրավիճակ, որ սոցիալական մակարդակով առավել զարգացած Ադրբեյժանի հայկական պետականաստեղծ էքոնոսի քաղա-

քական իրավունքները գտնվում էին խորականության մեջ, ինչն առաջին հերթին դրսևորվում էր իշխանության հանրապետական քաղաքական ինստիտուտներում ազգությանը հայ անձանց ներգրավելու անթույլատրելիությամբ:

Միութենական հանրապետության հայ ժողովրդի իրավունքների ոտնահարումները դրսևորվում էին քաղաքական տեսանկյունից Ադրբեյժանում հիմնականում վարչա-կուսակցական պաշտոններում նշանակելիս ձևավորված «էթնիկ ֆիլտրի» համակարգի կիրառմամբ: Նման համակարգը հանգեցնում էր խորականության ենթարկված հայ էքոնոսի կերպարի ձևավորմանը, որի իրավունքները ոտնահարված էին էքոնոսի կոնկրետ ներկայացուցիչների իրավունքների քաղաքական սահմանափակումների միջոցով: Ադրբեյժանի հայերի անհատական քաղաքական իրավունքների ոտնահարումները հանգեցրեց Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի կոլեկտիվ իրավունքի արտասխալմանը այդ հանրապետության կազմից դուրս գալու վերաբերյալ, որի շրջանակներում տեղի էր ունենում էքոնոսի անհատական ու կոլեկտիվ խորականությունը:

Ադրբեյժանում հետևողականորեն ու համատրոն տարվում էր հանրապետության կուսակցական ու պետական ապարատի, վարչական մարմինների ադրեքսանացման գիծը: Եթե 1933-1953 թթ. Ադրբեյժանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Մ.Գ. Բաղդիլարի օրոք կուսակցության Կենտկոմի քարտուղարներից մեկը, կուսակցության Բաբլի կոմիտեի քարտուղարն էր Հանրապետության Միմիստրների Խորհրդի նախագահի տեղակալներից մեկը հայեր էին /չխոսելով բազմաթիվ միմիստրների, Կենտկոմի ապարատի պատասխանատու աշխատակիցների, Բաբլու ք. շրջկոմների քարտուղարների մասին/, ապա Հ. Ալիևի և Կ.Մ. Բաղդիլարի Կենտկոմում քարտուղարության տարիներին նման պաշտոններում հայեր ընդհանրապես չկային: Ադրբեյժանում կադրերն առաջ էին քաշվում հայրենակցության ու ազգակնության սկզբունքների հիման վրա³⁵:

1968 թ.-1988 թ. ընկած ժամանակահատվածում հանրապետական մարմինների կողմից ինքնավար մարդ ղեկավար աշխատանքի էր ուղարկվել 25 հոգի: Պրանց թվում կուսակցության մարզկոմի առաջին քարտուղարը, կուսակցության մարզկոմի երեք երկրորդ քարտուղարները, մարզի գործկոմի երկու նախագահները և նախագահի երկու առաջին տեղակալները, ՊԿԿ-ի հինգ պետերը և բաժնի պետի մեկ տեղակալը, մարզի երկու դատախազները, ԵԳԿ-ի երկու պետերը և պետի երեք տեղակալները, երեք զինկոմները: Նրանցից ոչ մեկը ծնունդով Լեռնային Ղարաբաղից չէր և չէր տիրապետում հայերեն լեզվին: Նրանցից 9-ը ղեկավար աշխատողները /կուսակցության մարզկոմի առաջին և պետի երեք տեղակալները, մարզային գործկոմի նախագահն ու նրա տեղակալը, ՊԿԿ-ի երկու բաժնի պետերը, մարզի դատախազը, ԵԳԿ-ի պետը/ մարզում աշխատելով 5-14 տարիներ, այդպես էլ գրանցված մնացին Բաբլու քաղաքում:

Նույն ժամանակահատվածում Բաբլու տեղափոխվեցին մարզի ղեկավար աշխատողներից 14-ը: Նրանցից 7-ը ադրբեյժանցիներ էին և բոլորն էլ առաջխաղացմամբ: Բաբլու տեղափոխված, ծագումով Լեռնային Ղարաբաղի 7 հայերից երեքը նշանակվեցին Ադրբեյժանի Կոմկուսի Կենտկոմի տեսուչներ, իսկ չորսի պաշտոններն իրենցվեցին կուսակցության մարզկոմի առաջին քարտուղարի և քարտուղարի, մարզային գործկոմի նախագահի և ԵԳԿ-ի պետի/:

հնչպես տեսնում ենք, նշված 20 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղից ազդուքյամբ հայ որևէ անձ ղեկավար պաշտոնում չի նշանակվել հանրապետական մարմիններում:

1980-1990 թթ. մարզի ոչ մի աշխատող չի ուղարկվել ԽՍՀՄ Կենտրոնին առընթեր Դասարակական գիտությունների ակադեմիայում սովորելու: Դանրապետական մարմինները կադրային քաղաքականության մեջ հասան այն աստիճանի միտումնավորության, որ ամեն տարի արտոնյալ պայմաններով ավելի քան 800 անձանց երկրի տարբեր քաղաքները ուսման ուղարկելու պարագայում, ոչ մի տեղ չէր հատկացվում մարզին: Իսկ Դայվական ԽՍՀ բուհերում ինքնուրույն ընդունված և ավարտած անձանց մարզում քիչ քե շատ նկատելի պաշտոնում նշանակելիս հանրապետությունում հարցը մեծ դժվարությամբ էր հաստատվում³⁶:

Ինչպես նշում են հետազոտողները, ԽՍՀՄ տարածքի էթնոքաղաքական հակամարտություններին Մանրողող տասնամյակների ընթացքում, խորհրդային քաղաքական համակարգը կասեցնում էր ազգային /էթնիկ/ շահերի գիտակցման ու քաղաքականության ոլորտում դրանց հետամուտ լինելու հնարավորությունները: Խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքում էթնիկ դիրքորոշումներն առկա էին, սակայն՝ զաղտնի: Որևէ էթնիկ հարաբերությունների դրսևորումներ թույլատրված էին միայն ուղղահայաց ուղղությամբ կենտրոնի նկատմամբ, սակայն ոչ հորիզոնական, որպես միմյանց միջև էթնոսների փոխհարաբերություններ: Ուստի և էթնիկ հիերարխիան գոյություն ուներ միայն կենտրոնական իշխանության հետ հարաբերություններում և դրևտրվում էր ժողովուրդների քաղաքական-իրավաբանական կարգավիճակի տեսքով /էթնոսի քաղաքական դիրքորոշման իրականացում որպես միութենական հանրապետության, ինքնավար մարզի և այլնի տիտուլյանություն/: Սակայն, դա անվիճելիորեն, թեև *գաղտնի*, պրոյեկցվում էր ազգամիջյան հորիզոնական հարաբերությունների բնույթի վրա³⁷:

Բազմազգ պետության տարածքում էթնոսների միջև հարաբերությունների քաղաքական կոնտեքստը կառուցվում էր հստակ հիերարխավորված համակարգով, և նման համակարգի գլխավոր կառուցողական հիմքը ինտերնացիոնալիզմի զարգափարախտությունն էր: Ըստ պետական կառուցվածքի տեսակի լինելով դաշնություն՝ ԽՍՀՄ-ը, որպես պատմական ազգի նոր տիպի ձևավորման միտված հստակ քաղաքական ուղղվածության ուղղչային քաղաքական համակարգ, իրենից ներկայացնում էր բարդ պետական-իրավական գոյացություն, որը իշխանության ուղղահայաց քաղաքական կառուցման կոչտ պայմանավորվածությունը համատեղում էր խորհրդային ազգակառուցման դոկտրինի հռչակման հետ: Ըստ բնորոշման տվյալ դոկտրինն իր մեջ պարունակում էր ԽՍՀՄ շրջանակներում էթնիկության ցանկացած հարցի այնպիսի մակարդակի «վերացման» ձեռքբերման վերջնական նպատակ, որը տարբեր էթնոսզգային նույնականացման տարրալուծման ճանապարհով հենարավորություն կտար հանգել ԽՍՀՄ բոլոր ազգերի ու ժողովուրդների կողմից իրենց, որպես մոնոլիտ ու միասնական ինտերնացիոնալիզացված «խորհրդային ազգի» ընկալման իրեալական իրավիճակին: ԽՍՀՄ տարածքում նոր ազգակառուցման դոկտրինը շերտադրվում էր վարչա-կուսակցական ուղղահայացի կառուցման բարդ համակարգի վրա, որն իր հերթին ձևավորվում էր նույնականացման չափանիշներից մեկի՝ «խորհրդային դաշնության էթնոսզգային

հատկանիշ» վրա /միութենական հանրապետություն, ինքնավար հանրապետություն, ինքնավար մարզ և այլն/:

Բազմազգ երկրի պետական իշխանության ուղղահայացը բավական արդուհամալետությամբ էր աշխատում, և դրանում էր իշխանության կատուցման խորհրդային կուսակցական զարգափարախտություն րորչակի արժանիքը, սակայն արհեստականորեն ստեղծված պետական գոյացությունների շրջանակներում /միութենական հանրապետություններում/ հայտնված էթնոսների զարգացման սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և ընդհանուր առմամբ քաղաքակրթական հորիզոնական անհամամասնությունները գտնվում էին «խորհրդային ազգակառուցման» գաղափարախտության կոչտ շրջանակներից «դուրս գալու» մշտական սպառնալիքի տակ³⁸:

Ինչպես ԽՍՀՄ փլուզման, այնպես էլ հետխորհրդային տարածքում անկախ պետությունների գոյության պայմաններում հակամարտությունների էթնիկ բնույթը զգալիորեն կանխորոշված էր ազգային հարաբերությունների ոլորտի այն քաղաքականությամբ, որն ի սկզբանե տարվում էր բուլշևիկների կողմից: Դոչակելի ազգերի ինքնորոշման իրավունքի մասին կարգավտար, բուլշևիկները գնացին ոչ միայն ազգային սկզբունքով երկրի վարչա-տարածքային բաժանման ուղիով, այլև շատ ղեպներում հենց իրենք էին նպաստում բազմազգի առաջանցումը: Բնական է, որ «ուսակական» տարածքներում գերկենտրոնացման դեմ ուղղված համընդհանուր բողոքը գործնականում վերածվեց տարածաշրջանային անջատողական տրամադրության, իսկ ազգային գոյացություններում այն ընդունեց էթնոքաղաքական հակամարտության ձև, որը կենտրոնի թելադրանքը մեկնաբանում էր որպես կայսրության վերածման և հանրապետությունները զարդանքների վերածման ձգտում: Նույնականացման ճգնաժամը խորացավ նրանով, որ խորհրդային մարդկանց դասակարգային ինքնագիտակցության գերիշխման ձգտումը գործնականում ձախողվեց: Խորհրդային հասարակության զարգացման հետ դասակարգային միասնությունը որպես արժեքային կողմնորոշիչ, էլ ավելի էր կորցնում իր նշանակությունը: Դրա տեղը զգալիորեն զբաղեցրեց անհատի էթնիկ նույնականացումը, հետևաբար նաև՝ դասակարգի լոյալությանը փոխարինման եկավ իր ազգի լոյալությունը³⁹:

ԽՍՀՄ սահմաններում, այդ պետության գոյության ամբողջ պատմության ընթացքում ակտիվորեն ու նպատակաուղղված ձևով որպես քաղաքացիական նույնականացում ձևավորվում էր «խորհրդայնության» պատկերացումը /«խորհրդային մարզը», սակայն, ըստ որում, անտեսվում էր, իսկ պարբերաբար նաև արգելվում էր էթնիկ նույնականացման պաշտանությունը: «խորհրդային» հասակացությունը որպես ԽՍՀՄ-ում ձևավորված քաղաքացիական նույնականացում, իր մեջ ներառում էր որ միայն պետականացվածություն, այլև՝ զարափարախտականության առաջնությունը, քանի որ ԽՍՀՄ քաղաքական համակարգը կառուցվում էր կոմունիստական գաղափարախտության հիման վրա⁴⁰:

Խորհրդային ազգագրությունը շրջանառության մեջ էր դրել նոր կատեգորիա-հասակացության պարարտ, որը պետք է կարողանար արտահայտել խորհրդային պետության շրջանակներում ազգաշինարարության ընդհանուր քաղաքական-զարգափարական ուղղվածությունը և առավելազույն հեռացված լինել երկրի տարածքում կոմունիստ էթնոսների կուլեկտիվ ինքնագիտակցության իրավական բաղկացուցիչից: Միութենական հան-

րապետության որևէ ազգի բնորոշման ժամանակ գիտական շրջանառության մեջ ամրագրվել էր «սոցիալիստական» հասկացությունը /օրինակ, «հայկական սոցիալիստական ազգությունը», ինչը էքոնոմերը «կապում էր» կենտրոնական կուսակցական իշխանության քաղաքական-գաղափարական ցուցմանը⁴¹:

1980-ական թվականների վերջին, ԽՄՄ բազմազգ տարածքում հաստատվել է որոշակի էթնոկարգավիճակային հիերարխիա, որն իր հերթին ձևավորվել էր ԽՄՄ ազգային քաղաքականության ազդեցության տակ /մի կողմից, կենտրոնը հենվում էր քանակապես գերակշռող ազգերի քաղաքականության վրա, իսկ մյուս կողմից ակտիվ միջոցներ էր ձեռնարկում, որոնք ուղղված էին ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու մշակութային անհավասարության վերացմանը: Այդ ժամանակահատվածում, կենտրոնի հրաժարումը տարածաշրջանների մակարդակում վերնախավերի ձևավորման նոմենկլատուրային սկզբունքից, հանրապետության շրջանակներում էրնիկ խմբերի մոբիլիզացիայի համար նրա գործունեության խթան հանդիսացավ ուղղված իշխանության կառույցներում իր դիրքերի ամրապնդմանը: Այդուհետ էքոնոմի քաղաքական կարգավիճակը էթնովերնակալների կողմից սկսեց գիտակցվել որպես սեփական իշխանական ռեսուրս, ուստի և 1980-ական թվականների երկրորդ կեսին առանձին միութենական հանրապետությունների մասշտաբով սկսվեց էթնիկ խմբերի պայքարը կարգավիճակային դիրքերի փոփոխման համար:

Ազգայնականության հետազոտող է. Գելլենը նշում է, որ 1980-ական թվականների երկրորդ կեսին ազգայնականությունը սկսեց լրացել խորհրդային տարածքի վակուումը, որը գոյացել էր խորհրդային կոմունիստական գաղափարախոսության քննադատական գիտակցումից և Միության միասնական պետա-իրավական մեխանիզմների կոռոզիայից հետո. «էթնիկ ազգայնականությունը բնականորեն ծագել էր յոթ տասնամյակների ընթացքում ձևավորված յակոբինականության պայմանների հետևանքով: Դրան սնում է երկակի վակուումը լրջորեն հակադրվող գաղափարախոսության քաղաքականությունը և լրջորեն հակադրվող ինստիտուտների քաղաքականությունը»⁴²:

1980-ական թվականների երկրորդ կեսի Դարաբաղյան Հակամարտության ակտիվացման շրջանում, երկրի կենտրոնական ղեկավարության ընդհանուր գնահատականները կատարվում էին «դարաբաղյան հայերի էթնոգոմի դատապարտման» շուրջ⁴³: «էթնոգոմ» հասկացության մեջ դրվում էր Լեռնային Դարաբաղի հայ ժողովրդի «քաղաքական-գաղափարական անհետաձուլման» իմաստը, որը որպես իր պահանջների հիմնավորում, առաջին հերթին ներկայացնում էր միութենական հանրապետության տարածքում /ԱղբրևՄՅ/ իր իրավունքների ոտնահարման փաստարկունը⁴⁴, որտեղ նա օժտված էր պետականաստեղծ էքոնոմի իրավունքներով:

Այս հետազոտության մեջ մենք համախոս ենք դիմում ԱղբրևՄՅ հայ ժողովրդի բնորոշմանը որպես ի սկզբանե ԽՄՄ կազմում այդ միութենական հանրապետության պետականաստեղծ էքոնոմի: Դրա հաստատման համար անհրաժեշտ է բերել հետևյալ փաստարկունները:

ԱղբրևՄՅ-ն ստեղծվել էր որպես մահմեդականների /կովկասյան քաթարների/ և հայերի խորհրդային սոցիալիստական հանրապետություն, որի հիմնավորումն էր հանդիսանում 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿԿ/բ/ Կովկասյան բյուրոյի հայտնի որոշմամբ Լեռնային Դարաբաղը ԱղբրևՄՅ-ի վարչական սահմաններում ընդգրկելու քաղաքական մոտիվացիան. «Մահմեդական-

ների ու հայերի միջև խաղաղության հաստատման անհրաժեշտությունից կլնելով...»: ՌԿԿ/բ/ Կովկասյան բյուրոն 1921 թ. փաստացի հայերին ու մահմեդականներին ճանաչել է Աղբրեջանի ազգային-պետական կառուցվածքի շուրջ մղվող հակամարտության կողմեր, հետևաբար պետականության այդ խորհրդային ձևի աղբյուրներ և կրողներ: «Լեռնային Դարաբաղի Ինքնավար Սարգի ձևավորման մասին» 1923 թ. հուլիսի 7-ի ԱղբրևՄՅ ԿԿԿ Դեկրետում ԱղբրևՄՅ-ի ազգային-պետական կառուցվածքը բնորոշված է որպես մահմեդականների ու հայերի «միասնական պետական միություն»: Դեկրետում խորհրդային իշխանության հիմնական խնդրի էր հռչակված «միասնական պետական միության մեջ» հայերի ու մահմեդականների եղբայրական համագործակցության հաստատումը, որպիսին պետք է դասնար ԱղբրևՄՅ-ն:

ԱղբրևՄՅ ԿԿԿ-ի Դեկրետի հիման վրա ստեղծված Լեռնային Դարաբաղի Ինքնավար Սարգը ստացավ խորհրդային պետականության տեսք, ինչը հանդիսանում է ԱղբրևՄՅ հայության պետականաստեղծ լինելու մասին ի սկզբանե հռչակված թեզի հաստատումը, որը տվյալ կարգավիճակ արտահայտում էր ի դեմս Լեռնային Դարաբաղում սեփական ազգային-պետական ինքնավարության ստեղծմամբ: Այս համատեքստում Լեռնային Դարաբաղի ինքնավարությունը կարելի է համարել ԱղբրևՄՅ հայության պետականաստեղծ կարգավիճակի քաղաքական-իրավական պաշտպանվածությունը գլխավոր ձևը:

ԱղբրևՄՅ-ի արտաազգային բնույթը պայմանավորված էր ոչ միայն Արևելյան Անդրկովկասի ազգային բազմազանությամբ, ոչ միայն նրանով, որ կովկասյան քաթարները վճռորոշ դեր չէին կատարում մարզի տնտեսության մեջ հատկապես արդյունաբերության, որտեղ առանցքային դիրքերը հիմնականում զտնվում էին ռուսների և հայերի ձեռքերում, մի խոսքով ոչ միայն սոցիալ-պատմական հանգամանքներով, այլ նաև էթնոարածքային կառուցվածքի առանձնահատկություններով: ԱղբրևՄՅ-ն ընդգրկում էր տարածքներ, որոնք թե պատմականորեն և թե էթնիկ առումով հայկական էին⁴⁵:

խորհրդային Միության կենտրոնական և հանրապետական ղեկավարության կողմից Դարաբաղյան Հակամարտության էքոնոմա-քաղաքական ընդհանուր ուղղված արագ «կուսակցական» արձագանքման քաղաքական մեթոդների կիրառման արդյունքում ծագած մարդու իրավունքների խախտումները հանգեցրին այս հարցում իրավիճակի վատթարացմանը: Դրա զայտուկն օրինակն է «Աղբրեջանական ԽՄՅ-ի ԼԴԻՄ-ում կատարածքային հատուկ ձևի մտցման մասին» Հրամանագրի ընդունման հետ կապված «պատմությունը»: 1989 թ. հունվարի 12-ին խորհրդային Միության Գերագույն խորհրդի Նախագահությանը «տվյալ հարցը քննարկելով Աղբրեջանական ԽՄՅ Գերագույն խորհրդի Նախագահության հետ» /ինչպես նշված է Հրամանագրի Նախարանում, Հրամանագրի է ընդունել «Աղբրեջանական ԽՄՅ ԼԴԻՄ-ում կատարված հատուկ ձև մտցնելու մասին»: Քանի որ զոյություն չունեին օրենսդրական ակտեր կառավարման նման ձևի վերաբերյալ, ապա Հրամանագրի հանդիսացավ առաջին և միակ փաստաթուղթը, որը կանոնակարգում էր դրա իրավական ռեժիմը: Առանց որևէ նախնական քննարկման ու փորձաքննության ընդունած այս ակտը պարունակում էր ներքին հակասություններ, ինչպես նաև հակասում էր ԽՄՄ Սահմանադրության մի շարք դրույթներին: Այսպես, ընդունված Հրամանագիրն ինքնին հանդիսանում էր մարդու իրավունքների կոպիտ ոտնահար-

ման օրինակ: Մասնավորապես, կոպտորեն խախտվում էր 1966 թ. Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին Միջազգային Համաձայնագրի 25-րդ հոդվածը, որը քաղաքացիներին «տառանց որևէ խտրականություն... և առանց իրավունքների ու հնարավորությունների չհիմնավորված սահմանափակման տրամադրում էր իրավունք. ա/ պետական գործերում մասնակցություն ունենալու ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, բ/ ընդհանուր հավասարության պայմաններով մասնակցել պետական ծառայությանը իր ներկրում»: Այսպիսով, ուսման հարվում էին քաղաքացիների քաղաքական իրավունքների հանրագումարի անենսկարևոր իրավունքները:

Ավելի ուշ, 1991 թ. սկզբին Հայաստանի Գերագույն խորհուրդը խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության Կոմիտեն դիտարկել Հրամանագրի 3-րդ մասի 1-ին հոդվածի համապատասխանությունը /մարզխորհրդի իրավասությունների կասեցման մասին/ ԽՍՀՄ Սահմանադրությանը: Սահմանադրության խախտումներն ակնհայտ էին, սակայն համաձայն գործող օրենսդրությանը, Կոմիտեի կողմից նման երևույթի ամրագրման պարագայում պետք է կասեցվեր Հրամանագրի համաձայնասխման կետի գործածությունը, և պետք է վերականգնվեին ԼԴԻՄ մարզխորհրդի իրավասությունները: Բնական է, որ դա կհանգցներ բավական լուրջ քաղաքական հետևանքների, ուստի և Կոմիտեն ամեն կերպ ձգձգում էր հարցի լուծումը և դրա վերջնական ընթացումը վերադարձավ միայն այն ժամանակ, երբ արդեն պարզ էր, որ ԽՍՀՄ-ն, ուստի նաև ինքը Կոմիտեն իր վերջին օրերն են ապրում, և Կոմիտեի իրավաբանական որոշումը չի կարող որևէ ազդեցություն ունենալ իրավիճակի վրա⁴⁵:

Ինչպես նշված էր Սահմանադրության վերահսկողության Կոմիտեի 1991 թ. նոյեմբերի 28-ի որոշման մեջ. «քանի որ ԼԴԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու և դրա հետ կապված ԼԴԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի իրավասությունները կասեցնելու մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի խախտվածության 1989 թ. հունվարի 12-ի Հրամանագրի դրույթները կորցրել են ուժը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշման հետևանքով⁴⁷, ապա այլևս անհրաժեշտություն չկա տալ դրանց իրավաբանական գնահատականը ԽՍՀՄ Սահմանադրությանը և Կոմիտեի համաձայնասխմության մասին: Մինևույն ժամանակ ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության Կոմիտեն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ այն ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության իրավասությունների մեջ չէր մտնում որևէ ժողովրդական դեպուտատների խորհրդի գործունեության կասեցման իրավունքը»:

§ 2. Դարաբայան Հավամարտության պատճառների սահմանադրավիճակային ասպեկտները մարդու իրավունքների պաշտպանության լուսի ներքո

Դարաբայան Հավամարտության պատճառների բացահայտման սահմանադրավիճակային ասպեկտները բխում են մարդու իրավունքների որպես քաղաքական-իրավական ինստիտուտի ընդհանուր նորմատիվային հատկանիշներից: Իր նորմատիվ որակումով, մարդու իրավունքները հանդես են գալիս ցանկացած քաղաքական համակարգի նկատմամբ ունիվերսալ պահանջների տեսքով, որոնք կարող են կիրառվել որպես ներկայումս և ունիվերսալ հարաբերությունների գնահատման չափա-

նիշեր: Այս տեսանկյունից, մարդու իրավունքները գոյություն ունեն որպես ունիվերսալ քաղաքական նորմերի ու ստանդարտների համակարգ, որոնք գործում են անկախ կոնկրետ երկրի սահմանադրական կարգի և իշխող օտեմի ընդոսից: Դա պահանջների որոշակի շեն է, որին պետք է հարմարվի իշխանության ցանկացած համակարգ:

Խույնիսկ ԽՍՀՄ տարածքում առկա տոտալիտար ռեժիմի պայմաններում, Միության քաղաքական իշխանությունները հռչակում էին մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների որոշակի լրակազմ, դրանով իսկ իրենց համար որոշելով մարդու իրավունքների ոլորտի սեկտորալ «պահանջների շենը»:

ԽՍՀՄ պետա-իրավական տարածքում առաջացած էքոնոմիկական հավամարտությունները իրենց սահմանադրավիճակային պատճառայնությամբ, խորը փեղեքման մարմնավորում հանդիսացան ԽՍՀՄ սահմանադրական ու օրենսդրական ակտերում հռչակված մարդու իրավունքների ու ազատությունների և դրանց իրական ապահովման և երկրի հասարակական-քաղաքական կյանքի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային պրակտիկայում դրանց իրականացման մեջ: ԽՍՀՄ-ում էքոնոմիկական-քաղաքական կյանքի քաղաքական պատճառների համառոտացում, տվյալ խզումը առանձնապես շոշափելի էր բազմազգ պետության էքոնոմիկայի կոլեկտիվ իրավունքների առաջացման պատճառների համառոտացում, տվյալ խզումը առանձնապես շոշափելի էր բազմազգ պետության էքոնոմիկայի կոլեկտիվ իրավունքների պաշտպանության տեսակետից: ԽՍՀՄ որոշ էքոնոմիկայի իրենց պարփակ ու բնաբանական գերակշռող բնակեցման վայրերում ունենալով ինքնավարության կարգավիճակ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ պետականատեղծ կարգավիճակ կոնկրետ միութենական հանրապետության կազմում, ենթարկվում էին գաղափարային խտրականության, ինչը գլխավոր պատճառներից մեկը դարձավ խտրականության ենթարկվող էքոնոմիկայի որպես կոլեկտիվ սուբյեկտների կողմից, մարդու իրավունքների պաշտպանության հարցերի արդիականացման համար:

էքոնոմիկական հավամարտության մեջ դիմակայող կողմերի մասնակցության տեսքով կրում է կոլեկտիվ բնույթ: Դրանից բխող օձանցյալ հետևանք էր հանդիսանում է այն փաստը, որ էքոնոմիկայի դիմակայության մեջ են մտնում որոշակի խմբին պատկանելության զգացողության հիման վրա, որն իրեն նույնականացնում է որպես ինքնուրույն և այլ էթնիկ խմբի կազմում: Իրեն հակարող էր քննադատել իրեն: Սեփական շահերը «գերակշռող էքոնոմի» շահերին հակարող խտրականության ենթարկվող էքոնոմի իրավունքների ուղեկցումը տարբեր կուտակում և արտահայտում է կոլեկտիվության տերմիններով: Այլ կերպ ասած, էքոնոմիկական հավամարտության մեջ դիմակայող էքոնոմիկայի կողմից արտահայտվում /հատկապես խտրականության ենթարկվող/ և կոլեկտիվ պահանջների համար մորթիկազմից հիմք են հանդիսանում հենց տվյալ էքոնոմի կոլեկտիվ իրավունքները: Վերջինս հանդես է գալիս որպես կոլեկտիվ իրավունքների կրող, այլ ոչ թե տվյալ էքոնոմի պատկանող անձանց անհատական իրավունքների հանրագումարի կրող:

Միութենական հանրապետության շրջանակներում կոնկրետ էքոնոմի պետականատեղծության իրավունքի հատկանիշը մատնանշում է այն, որ էքոնոմի ներկայացուցիչների անհատական իրավունքների և ընդհանուր առմամբ էքոնոմի կոլեկտիվ իրավունքների խտրականության ժամանակ ի հայտ է գալիս պետականատեղծ էքոնոմի կողմից իր սեփական քաղաքական ապագան ինքնուրույն որոշելու օբյեկտիվ իրավունքի կոլեկտիվ պա-

հանքի իրավիճակ, առավել ևս այն պարագայում, երբ փոփոխվում է հենց այդ բազմազգ պետական գոյացության քաղաքական կարգավիճակը:

Մարդու իրավունքների խտրականությունն ու ոտնահարումն իրենց անմիջական արտահայտությունը կարող են ունենալ անհատական մակարդակում կոնկրետ մարդու վերաբերյալ: Ընդ որում, իհարկե ոտնահարված իրավունքների պաշտպանությունը պետք է ապահովվի հենց անհատական մակարդակում: Սակայն, երբ ոտնահարվում է պետական-մասնեղծ էթնոսի կողմից սեփական քաղաքական կարգավիճակը ինքնուրույն որոշելու հիմնարար իրավունքը, ապա էթնոսի իրավունքները պետք է ստանան կոլեկտիվ պաշտպանություն:

Սեր տեսակետից Դարաբաղյան Հակամարտության սահմանադրաիրավական պատճառների առավել լիարժեք ներկայացման համար անհրաժեշտ է մեջբերել հԱՅՄ սահմանադրական ու օրենսդրական ակտերի որոշակի ցանկ: Դարաբաղյան Հակամարտության ակտիվացման պահին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող խորհրդային օրենսդրության նորմերի ստորև շարադրված խախտումներն արդեն առկա էին 1988-1989 թթ. ժամանակաշրջանում, այսինքն Լեոնային Դարաբաղի ժողովրդի կողմից Աղբրեսի կազմից դուրս գալու և ՀայկիՄՀ կազմում ինքնավար մարզը ընդգրկելու մասին առաջ քաշված պահանջի սկզբնական շրջանում: Սա մեզ հիմք է տալիս այդ խախտումների մասին ինտելլեկտուալ դրանք պատճառականության դիրքերից Լեոնային Դարաբաղի հայության պահանջների և միութենական հանրապետության /Աղբրեսի/ պետականաատեղծ էթնոսի կոլեկտիվ իրավունքների արդիականացման առումով:

Անհատի իրավական կարգավիճակի սոցիալիստական հայեցակարգը հերքում էր մարդու իրավունքների հայեցակարգը: խորհրդային Միության պաշտոնական դոկտրինում և պրակտիկայում «մարդու իրավունքներ» հասկացությունը կիրառելի չէր, անարվում էր ոչ դասակարգային, հետաքրքիր սոցիալիստական պետության հիմնական հայեցակարգի հակառակ: Խոսք էր գնում միայն քաղաքացու իրավունքների մասին: Քաղաքացու իրավունքների հայեցակարգը կառուցվում էր իրավունքների ու պարտականությունների միախուսման վրա: Դա արտացոլված էր 1977 թ. հԱՅՄ Սահմանադրության նախաբանում, որը սահմանում էր, որ հԱՅՄ քաղաքական համակարգը «երաշխավորում է...իրական քաղաքացիական իրավունքների ու ազատությունների և հասարակության առջև պարտավորությունների ու պատասխանատվության համակցումը»: Սահմանադրության 59-րդ հոդվածում նշված է. «Իրավունքների ու ազատությունների իրականացումն անբակտելի է քաղաքացիների կողմից իրենց պարտավորությունների կատարումից»: Սոցիալիստական տեսության մեջ իրավունքների իրականացումը դիտարկվում էր ոչ թե որպես ինքնուրույն արժեք, այլ սոցիալիստական շինարարության համատեքստում⁴⁹:

1977 թ. հԱՅՄ Սահմանադրության մեջ ամրագրված էր անկախ ազգային պատկանելության հԱՅՄ բոլոր քաղաքացիների իրավահավասարության դրույթը, ավելին սահմանադրական մակարդակով գոյություն ունեւր հետևյալ նորմը. «Իրավունքների որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակում, քաղաքացիների առավելության ուղղակի կամ անուղղակի սահմանում ըստ...ազգային հատկանիշների, ինչպես նաև ազգային բացառիկության, թշնամության կամ արհամարհանքի ցանկացած քարոզ...օրենքով ենթակա են պատժի» /հոդված 36/: խորհրդային օրենս-

դրության համաձայն ազգային և ռասայական իրավահավասարության խախտումները հանցագործություն են, որը նախատեսված է 1958 թ. հԱՅՄ «Պետական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին» Օրենքի 11-րդ հոդվածով /ըստ հԱՅՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1989 թ. ապրիլի 8-ի Հրամանագրի/⁵⁰:

1977 թ. հԱՅՄ Սահմանադրությանը հԱՄՄ քաղաքացիների անձնական սեփականության տակ կարող են գտնվել «կենցաղի, անձնական օգտագործման, տնային տնտեսության իրերն ու հարմարությունները, բնակելի տունը և աշխատանքային խնայողությունները» /հոդված 13/: Երբ հոդվածն ամրագրում էր, որ «Քաղաքացիների անձնական սեփականությունը և դրա ժառանգման իրավունքը պաշտպանվում են պետության կողմից»: Հաշվի առնելով այն, որ ըստ 1977 թ. հԱՅՄ Սահմանադրության հոդված 11, 13-րդ հոդվածը նախատեսում էր. «Քաղաքացիների օգտագործման տակ կարող են գտնվել հողատարածքներ, որոնք օրենքով սահմանված կարգով տրամադրվում են տնտեսություն և րոստանային տնտեսության համար, ինչպես նաև անհատական բնակարանային շինարարության համար: Քաղաքացիները պարտավոր են ռազմաճակատ օգտագործել իրենց տրամադրված հողատնակացումները: Պետությունը և կոլտնտեսությունները քաղաքացիներին աջակցություն են ցուցաբերում տնային տնտեսության վարման գործում»:

ԻԱՅՄ քաղաքացիները անձնական սեփականության իրավունքով պետական ու հասարակական բնակֆոնդերի տնօրնում կարող էին ունենալ բնակարաններ /«Որպես անձնական սեփականություն քաղաքացիներին բնակարանների վաճառքի և դրանց պահպանման ու վերանորոգման վճարումների մասին դրույթը» հաստատվել է ՌԽՖՍՀ Սիճիստորների խորհրդի կողմից 1989 թ. ապրիլի 21-ին: Չեղք բերված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքն առաջանում է առթ ու վաճառքի պայմանագրի գրանցման պահից /ՌԽՖՍՀ Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդված/:

ԻԱՅՄ Սահմանադրությունն ամրագրում էր հԱՅՄ քաղաքացիների բնակարանային իրավունքը. «Սյա իրավունքն ապահովվում է պետական ու հասարակական բնակֆոնդի զարգացմանը ու պահպանմանը, կոտպետության ու անհատական բնակարանային շինարարությանը աջակցությանը, հասարակական վերահսկողությանը բնակավայրերի արդարացի քաշվման նկատմամբ, որը տրամադրվում է բարեկարգ բնակարանների շինարարության ծրագրի իրականացմանը զուգընթաց...» /հոդված 44/: ԻԱՅՄ Սահմանադրության 55-րդ հոդվածը հԱՅՄ քաղաքացիներին երաշխավորում էր բնակարանի անձեռնմխելիությունը. «Առանց օրինական հիմքի ոչ ոք իրավունք չունի բնակելի կամքին հակառակ մտնել նրա բնակարանը»: Բնակարանի տակ հասկացվում էր ոչ միայն քաղաքացիների կողմից պարծակավոր կամ անձնական սեփականության իրավունքով նրանց պատկանող տարածքը, այլ նաև հավելյալ տարածքները, որոնք կապված են քաղաքացու անձնական կյանքի ոլորտի հետ: խորհրդային օրենսդրությանը տալիս էր այն անձանց սպառիչ ցանկը, որոնք իրավունք ունեւր բնակարան մտնելու, որից նրանք կարող էին օգտվել օրենքով նախատեսված սահմաններում և նպատակներով: Քաղաքացիների բնա-

կարանների անձեռնմխելիության իրավունքի խախտման համար սահմանված էր քրեական պատասխանատվություն /ՌուՖԱՅ ԶՕ 136-րդ հոդված/:

Խորհրդային օրենսդրությանը հայտնի էր «վտարում» հասկացությունը, այսինքն բնակարանից օգտվելու իրավունքից զրկում օրենքով սահմանված հիմքերով և կարգով: Որևէ մեկը չէր կարող վտարվել իր կողմից զբաղեցված բնակման կետից բացի օրենքով նախատեսված հիմքերով և կարգով /ՌուՖԱՅ Բնակարանային օրենսգրքի 10-րդ հոդված/: Եթե նույնիսկ ամբողջ օրինական հիմքերով հարկադիր վտարվում էր, ապա Բնակարանային օրենսգրքը սահմանում էր այն պայմանները, որոնց հիման վրա հնարավոր էր վտարումը և պաշտպանում էր վտարվողների իրավունքները: Վտարումից հետո տրամադրվող բնակման կետերը պետք է բարեկարգության մակարդակը համապատասխաներ տվյալ բնակավայրի պետական ու հասարակական բնակֆոնդի բնակարաններին, այսինքն եթե վարձակալը առանձին բնակարան էր զբաղեցնում, ապա նրան պետք է տրամադրվեր նմանատիպ առանձին բնակարան, իսկ տարածքով բնակարանը չպետք է ավելի փոքր լիներ, քան զբաղեցնում էր վարձակալը: Այսպես, լրացուցիչ մակերեսը, եթե դրա իրավունքը ուներ վարձակալը, ինչպես նաև պետք է հաշվի առնվեին ընտանիքի ուշադրությանը արժանի շահերը /ՌուՖԱՅ Բնակարանային օրենսգրքի 41-րդ հոդված/:

Խորհրդային օրենսդրությունը նախատեսում էր նաև «բնակման կետի» ինքնակամ զբաղեցման» հնարավոր իրավիճակը, որի տակ ենթադրվում էր պետական և հասարակական բնակֆոնդի բնակարանի բնակեցում առանց դրա տրամադրման սահմանված կարգի և վարձակալության պայմանագրի: Բնակարանի ինքնակամ զբաղեցման պարտադիր իրավաբանական հատկանիշ էր համարվում բնակարանի զբաղեցումը միաժամանակ առանց օրդերի ու վարձակալության պայմանագրի: Եթե բնակարանը զբաղեցվել էր առանց օրդերի, սակայն պաշտոնատար անձի թույլտվությամբ, ապա համարվում էր, որ այն զբաղեցվել է այդ պաշտոնատար անձի և քաղաքացու միջև կնքված վարձակալության ոչ իսկական պայմանագրով: Բնակման կետի վարձակալության ոչ իսկական պայմանագրով զբաղեցման պարագայում իրականացվում էր վտարում դատական կարգով առանց այլ բնակարանի տրամադրման /ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 1987 թ. ապրիլի 3-ի Պլենումի Գրամանագիրը «Ղատարանների կողմից բնակարանային օրենսդրության իրականացման պրակտիկայի մասին»/: Իսկ եթե տեղի էր ունենում բնակման կետի բացահայտ ինքնակամ զբաղեցում /նույնիսկ առանց վարձակալության ոչ իսկական պայմանագրի/, ապա վտարումը կատարվում էր վարչական կարգով դատախազի սանցիցիարով:

ԽՍՀՄ քաղաքացիների գույքային և բնակարանային իրավունքների պաշտպանության խորհրդային Նորմերը մեր կողմից մեջբերվել են այն նկատառումներից ելնելով, որ 1988-1989 թթ. ընթացքում տեղի են ունեցել Ադրբեյխի հայերի գույքային և բնակարանային իրավունքների ոտնահարման բազմաթիվ դեպքեր Խորհրդային Ադրբեջանի հանրապետական իշխանությունների և հանրապետությունում ծագած ազգայնական շարժման տարրեր ակտիվիստների կողմից:

Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ էթնոքաղաքական հակամարտության արդեն իսկ հաջորդ փուլում, հակամարտության սրման սահմանադրա-իրավական պատճառները կայանում էին առաջին հերթին Ադրբեյխի հանրապետական իշխանությունների կողմից խոչընդոտների ստեղծման մեջ, Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի կողմից իրենց

պետական աստեղծ էրմոս լինելու կոլեկտիվ իրավունքների իրականացման համար: Այս առումով ցայտուն է դեռ այն ժամանակ գործող խորհրդային օրենսդրության Նորմերի իրականացման վիճակը, որը կանոնակարգում էր քաղաքական-իրավական ինքնորոշման շուրջ ԽՍՀՄ էթնոսների կոլեկտիվ իրավունքների իրականացման իրավական հիմքերը:

ԽՍՀՄ-ը միասնական միութենական-դաշնային պետություն էր: Խորհրդային դաշնության բոլոր սուբյեկտների պետա-իրավական կարգավիճակը, այդ թվում նաև ինքնավար գոյացությունների, սահմանվում էր ԽՍՀՄ Սահմանադրությամբ: ԽՍՀՄ միութենական-դաշնային կառուցվածքի բարձրագույն պետա-իրավական սկզբունքն էր ԽՍՀՄ Սահմանադրության և օրենսդրության գերակայությունը դաշնության սուբյեկտների Սահմանադրությունների ու օրենսդրությունների նկատմամբ:

Ազգային մարզից մինչև միութենական հանրապետություն բոլոր մակարդակների ազգային-պետական գոյացությունների իրավախակալությունը ԽՍՀՄ կամ կոնկրետ միութենական հանրապետության շրջանակներում, հավանական պետա-իրավական «բաժանման» հարցի շուրջ, ընդհանուր առմամբ, օրենսդրորեն 1990 թ. ամրագրված էր ԽՍՀՄ Օրենքի տեսքով «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» /ԽՍՀՄ ԳԽ-ի կողմից ընդունվել է 1990 թ. ապրիլի 3-ին/: Այս Օրենքը, որի ընդունման ժամանակ «կողմ» են քվեարկել և Ադրբեյխի և ԼՂԻՄ-ի ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները, կոնկրետացնում էր ոչ միայն միութենական հանրապետությունների, այլև ինքնավար գոյացությունների ԽՍՀՄ կազմից դուրս գալու իրավական պայմանները: Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար շրջաններ ունեցող միութենական հանրապետությունում հանրաքվեի անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարությունում: Ինքնավար հանրապետությունների և ինքնավար գոյացությունների ժողովրդը պահպանում է ԽՍՀՄ-ի կամ դուրս եկող միութենական հանրապետության կազմում մնալու մասին ինքնուրույն որոշում կայացնելու իրավունքը, ինչպես նաև իր պետական կարգավիճակի մասին հարցադրման իրավունքը: Միութենական հանրապետությունում, որի տարածքում սակայն են ազգային խմբերի պարփակ բնակության վայրեր, որոնք կազմում են տվյալ տարածքների բնակչության մեծամասնությունը, հանրաքվեի արդյունքների ամփոփման ժամանակ այդ տարածքների քվեարկության արդյունքները առանձին են հաշվառվում»:

Այնպես է, որ 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ Օրենքի Նորմերի դիտարկումը Ղարաբաղյան Հակամարտության սահմանադրա-իրավական պատճառների վրա դրանց ազդեցության դիրքերը սխալ է հանդիսանում: Օրենքի ընդունման պահին, Ղարաբաղյան Հակամարտությունն արդեն անցել էր հակամարտության սուբյեկտների միջև էթնոքաղաքական դիմա-կայության հիմնական տարրերի պատճառային հիմքի ընդհանուր ձևավորման փուլը: Միևնույն ժամանակ, մեր տեսանկյունից Օրենքը նպաստեց Ադրբեյխի պետական աստեղծ էթնոսներից մեկի ինքնորոշման կոլեկտիվ պահպանմանը: Ինչպես նաև օրենսդրական մակարդակով այդ իրավունքի պետա-իրավական «բյուրեղացմանը»: Օրենքի ընդունմամբ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի իր պետա-իրավական կարգավիճակը որոշելու կոլեկտիվ իրավունքը, ԽՍՀՄ գործող օրենսդրության շրջանակներում ստացավ սահմանադրա-իրավական ճանաչում:

ԽՍՀՄ Օրենքի 3-րդ հոդվածի դրույթները բխում էին միութենական պետության խորքային բնութագրերից: Ելելով նրանից, որ ԽՍՀՄ-ը ժողովուրդների միություն է, իսկ ինքնավարությունը ինքնորոշման ձև է /տեսարանները դա դիտարկում են որպես ներքին ինքնորոշման տեսակ/, ակնհայտ է, որ մի ժողովրդի ինքնորոշման իրավունքը չի կարող նման իրավունքից զրկել մեկ այլ թվաքանակով ավելի փոքր ժողովրդի: Ուստի պետության կոնստիտուցիոնալ միջև համաձայնությունները, որոնք արդիական էին նրա հիմնարկման ժամանակ, ավելի խոշոր ազգային-պետական միավորի անջատման պարագայում պետք է վերանայվեին, ընդ որում հենց իրենց ժողովուրդների կողմից: Օրենքի 3-րդ հոդվածի նորմը արտացոլում էր նաև այն հիմնարար մոտեցումը, որի համաձայն, սուվերենության կրողը չի կարող հանդիսանալ պետության որևէ արտոնյալ հատվածը, թեև լուրջ բնակչության մեծամասնությունը կազմող, այլ սուվերենության ու սուվերեն իրավունքների կրող են հանդիսանում պետության բոլոր կոնստիտուցիոնալ միջև, այդ թվում նաև ինքնավարությունները և ազգային փոքրամասնությունները⁵¹:

§ 3. Ղարաբաղյան հակամարտության պատճառների սոցիալ-տնտեսական ասպեկտները մարդու իրավունքների պաշտպանության լույսի ներքո

Ժամանակակից ցանկացած եթնոքաղաքական հակամարտության պատճառների հարցում, հետազոտողները ավելի շատ բնորոշիչ են համարում «պոփքային» տերմինները, քան «շահեր» հասկացությունը: Իսկ սոցիալ-տնտեսական դետերմինիզմի խորհրդային տեսությունները որոշիչ էին նաև ԽՍՀՄ տարածքում ազգամիջյան հարաբերությունների կառավարման ոլորտում: 1980-ական թվականների երկրորդ կեսին ԽՍՀՄ տարածքում ազգային դիմակայությունների էթնոքաղաքականացման առաջին նշանները երկրի կենտրոնական ղեկավարությունը քաջատրուժ էր հարևան տարածքների միջև սոցիալ-տնտեսական զարգացման փորձում մասնաբաժնիներով և հետևաբար այդ հակամարտությունները անդունում էր «մարել» հակամարտող վայրերի «սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման համար լրացուցիչ միջոցների տրամադրման» քաղաքականությունը: ԽՍՀՄ կուսակցական-պետական ղեկավարությունը փորձում էր երկրի տարածքում դրսևորվող հակամարտությունների պատճառները փնտրել ինքնավար գոյացությունների սոցիալ-տնտեսական հետազոտացության մեջ՝ դրանով իսկ քաջատրուժ իրականում գոյություն ունեցող այլ կարգի արդյունքները: Նման մոտեցումն առկա էր նաև Ղարաբաղյան Հակամարտության խնդրում: Առանձնացնելով տնտեսական պատճառը որպես Լեռնային Ղարաբաղում հակամարտության առաջնային հիմք, միութենական կառավարությունը փորձում էր չեզոքացնել ճգնաժամը ԼՂԻՄ-ին նպաստակալին միջոցների տրամադրմամբ⁵² ու սպառնան ապրանքների մատակարարման ավելացմամբ⁵³:

Այն ենթադրությունը, որ նման ելանակով գործնականում հնարավոր չէ լուծել էթնոքաղաքական հակամարտությունները, չէր տեղավորվում ԽՍՀՄ-ի համար սովորական տնտեսական ռեզուկցիոնիզմի շրջանակներում:

Ինտագրիչի է նշել, որ արդի փուլում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի միջազգային ինստիտուցիոնալ նախկին սոցիալիստա-

կան համակարգի երկրներում ավելի մեծ ուշադրություն են հատկացնում սոցիալ-տնտեսական իրավունքներին, քան շուկայական տնտեսությամբ երկրներում: «...այն ժամանակ, երբ կենտրոնացված պլանավորման վրա հիմնված տնտեսությամբ երկրները պաշտպանում էին տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները, շուկայական տնտեսությամբ երկրները հանդես էին գալիս քաղաքացիական ու քաղաքական իրավունքների պաշտպանության դիրքերից, ընդ որում որոշ պետություններ տարակուսում էին, թե կարելի է կամ պետք է արդյոք այնպես անել, որպեսզի տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները իրավական տեսանկյունից իրականացվեն հարկադիր կարգով»⁵⁴:

Նշվում է նաև, որ «տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները, ինչպիսիք են արդարացի աշխատավարձի ու համարժեք աշխատանքի համար հավասար վարձատրման իրավունքը, ուսումնական հաստատություններ ստեղծելու իրավունքը, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը... պետությունները քաջահայտ կերպով պահանջում են զեքո մնալ գործողություններից և հետևել նվազագույն ստանդարտներին, որոնք առաջին հերթին շարժապուկում է քաղաքացիական ու քաղաքական իրավունքների հետ»⁵⁵:

Ստրատեգիայում սոցիալ-տնտեսական իրավունքներից օգտվելու հարցում խիստ եական է, իսկ արդի շրջանի որոշ էթնոքաղաքական հակամարտությունների իրողությունների առումով այն որոշիչ գործոն է էթնոսների միջև հակամարտային դիմակայության պատճառայնության հարցում:

Անհրաժեշտ է նշել, Ղարաբաղյան Հակամարտության պարագայում Ադրբեյջանի հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական իրավունքների խախտումները, պատճառայնության տեսանկյունից, որոշիչ չէին նույնիսկ էթնոքաղաքական հակամարտության 1980-ական թվականների երկրորդ կեսի ակտիվացման շրջանում:

Սիվնույն ժամանակ, իրենց իրավունքների պաշտպանության հարցում Ադրբեյջանի հայ ժողովրդի պահանջների պատճառային շարքում սոցիալ-տնտեսական գործոնը եական կշիռ ուներ Ադրբեյջանի տարածքում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր փաստարկման մեջ: Չափկական կողմը մարդու իրավունքների պաշտպանության հարցում իր սոցիալ-տնտեսական փաստարկման հիմնավորման համար բերում էր հետևյալ տվյալները:

Եթե 1970 թ. Ադրբեյջանում մեկ բնակչին ընկնող կապիտալ ներդրումները կազմել են 243 ռուբլի, Նախիջևանի ԻԽՄ-ում 267 ռուբլի, ապա ԼՂԻՄ-ում ընդամենը 153 ռուբլի: Այս նույն ցուցանիշը 1986 թ. համապատասխանաբար կազմել է 473, 334, 178 ռուբլի կամ 1970 թ. սակարդակի 194, 125 և 116 տոկոսը: Ընդ որում, 1970 թ. դրությամբ հանրապետությունում մեկ բնակչին ընկնող կապիտալ ներդրումները 90 ռուբլով, իսկ Նախիջևանի ԻԽՄ-ում 114 ռուբլով ավելին էր, քան ԼՂԻՄ-ում: Չնայած կապիտալ ներդրումների աննշանությանը դա տարեցտարի չէր յիարացվում շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի անբավարարության պատճառով: Այդ տարիների ընթացքում մարդի շրջկենտրոնները, շրջանները ի տարբերություն հանրապետության հարևան շրջանների, շատ ավելի դանդաղ էին բարեկարգվում ու աճում: Նման անհամամասնության ցայտուն օրինակ էր միմյանց հարևան

հանրապետության Զարբայիլի ու Ֆիզուլու շրջանները և ինքնավար մարզի Դաղուբի շրջանը⁵⁶:

Մարզի շրջաններն ու շրջկենտրոնները վատ էին ապահովված խմելու ջրով, դանդաղ էին լուծվում բնակավայրերի գազաֆիկացման ու շատ այլ կենսական հարցերը: 77 կոլտնտեսություններից և սովխոզներից միայն 5 տնտեսություն էր գազաֆիկացված, այն դեպքում երբ համաձայն հանրապետության կառավարության որոշման դրանք բոլորը 1988 թ. պետք է գազաֆիկացված լինեին: Եվ դա այն դեպքում, երբ գործնականում ամբողջովին գազաֆիկացված Նախիջևանի ԻԽՄԳ-ի գազամուղն անցնում էր ԼՂԻՄ տարածքով⁵⁷:

Սոցիալ-տնտեսական ոլորտում Բաքվի քաղաքակառուցությունը ինքնավար մարզի նկատմամբ խտրական բնույթ ուներ: Ամենապարզը Ղարաբաղի տնտեսության մեջ կապիտալ ներդրումներ չկատարել էր, ենթակառուցվածքների շինարարության բացակայությունը և հաշվի առնելով սարքավորումների ու հողի բնական մաշվածությունը, Լեռնային Ղարաբաղը թողնված էր ավելի վատ վիճակի մեջ, քան 1920-1930-ական թվականներին: Այսպես, 1950 թ. ԼՂԻՄ-ում բնակչության մեկ մարդու հաշվարկով կատարված կապիտալ ներդրումների ծավալը մոտ 10 անգամ ավելի քիչ էր, քան միջին հաշվով ամբողջ Ադրբեջանում: Ճիշտ է, Գ. Ալիևի իշխանության տարիներին սոցիալ-տնտեսական քաղաքականությունը փոքր-ինչ այլ ձև ընդունեց. եթե մինչև Գ. Ալիևը Ղարաբաղում պարզապես կապիտալ ներդրումներ էին կատարվում, ապա նրա օրոք սկսեց խրախուսվել արդրեջանական բնակավայրերի արագ զարգացումը: Բաքվի ղեկավարության կողմից իրականացվում էր հարակից արդրեջանական շրջանների մեջ ԼՂԻՄ-ի տնտեսական տարադրածման կուրսը: Այսպես, հիմնական ավտոճանապարհները այնպես էին նախագծվում, որ ցանկացած շրջկենտրոնից հնարավոր էր Ստեփանակերտ հասնել միայն հարևան արդրեջանական շրջանների միջոցով /դեպի Երևան տանող ճանապարհը անցնում էր Աղդամով և Կիրավաբաղով/: Ընդ որում ԼՂԻՄ տարածքում գործնականում բացակայում էին ասֆալտապատ ճանապարհները: Ստեփանակերտի օդանավակայանի նավիզացիոն ծառայությունները տեղափոխված էին Աղդամում, իսկ ինքը՝ օդանավակայանը համարվում էր Եվախի օդակայանի մասնաճյուղը: Հեռուստատեսային և ռադիոհեռարձակումները տեղակայված էին Շուշիում, իսկ հեռախոսակապի գծերի ֆիզիկական մաշվածությունը, հեռուստահաղորդումների ընդունման տիրույթի ծայրահեղ ցածր աստիճանը Լեռնային Ղարաբաղը ենթարկում էին հեռահաղորդակցական մեկուսացման: Շուշիի և մոտակա արդրեջանական շրջանների միջոցով էին կարգավորվում ու վերահսկվում նաև գազի, էլեկտրականության և ջրամատակարարման համակարգերը: Երկուսի ամբողջությամբ Մարդակերտի շրջանում տեղակայված Մարսանգի ջրամբարը և Դել-ը կառավարվում էին Միր-Քաշիդիից, որտեղ և որոշվում էր մտատակարարման ուղղությունը /գրեթե ամեն ինչ դուրս էր բերվում մարզից/: Այս ամենն ի չիք էր դարձնում որևէ ինքնուրույն տնտեսական քաղաքականության հնարավորություն: ԼՂԻՄ-ը հետևողականորեն վերածվում էր հումքային կցորդի ծայրահեղ հետամնաց ենթակառուցվածքներով: Երկուսի ամբողջական վիճակում գոյություն ունեցող արդյունաբերությունը /հիմնականում վերամշակող/ կողմնորոշված էր բացառապես կիսաֆաբրիկատների արտադրությանը: Մատակարարելով մամբերիի զգալի բաժաններ, ԼՂԻՄ-ը չուներ սեփական միսկոմբինատ և ստեմա-

րանային գործարան: Հիմնական ոլորտը գինեգործությունն էր, սակայն հենց Ղարաբաղում արտադրվում էր միայն կոնյակի սպիրտ, իսկ ինքը կոնյակն արտադրվում էր Աղդամում և Խանլանում: Երկուսի վերաբերում է նաև գինու քանակաբաժնի տեսակներին. նրանց լցվվորումն իրականացվում էր ԼՂԻՄ սահմաններից դուրս: Ղարաբաղի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկության մետաքսի կոմբինատի արտադրանքը նույն ձևով դուրս էր բերվում մարզից, որտեղ դրանից պատրաստվում էր կոտրեղեն և այլ արտադրանք: Անտառով և շինանյութերով հարուստ մարզում [իսկին քաղցկայուն էր միայնամյա և շինանյութերով հարուստ մարզում] իսկ շինանյութերի մշակումը գտնվում էր սաղմնային վիճակում: Ամբողջ ԼՂԻՄ-ում, ինչպես նաև նրան հարակից հայաբնակ շրջաններում չկար որևէ արտադրություն, որտեղ արտադրվում էր պատրաստի արտադրանք: Հատկապես ցավալի և ավանդական տնտեսական գոյության հիմքերը [խորխոր գործընթաց էր Բաքվի կողմից տարվող այս բացասապես ազդարարի մարզի գյուղատնտեսության կառուցվածքային փոփոխման կուրսը]:

Արդրեջանական տնտեսության մեջ ԼՂԻՄ-ը բացառապես ներկայացվում էր որպես հումքային կցորդ: Ինքնավարության որևէ ինքնուրույն տնտեսական կապերը գրեթե ամբողջությամբ դրվում էին շրջափակման մեջ և, ինչպես նշվում էր արդրեջանական տնտեսագետների կողմից՝ որպես փաստարկ Ադրբեջանի կազմից դուրս ԼՂԻՄ-ի գոյության անհնարելիությանը, հարևան Հայաստանի և Վրաստանի հետ ընդհանուր տնտեսական կապերում ԼՂԻՄ մասնաբաժինը կազմում էր ընդամենը երկու տոկոս⁵⁸:

Բնակչության ծայրահեղ ցածր կենսամակարդակը պայմանավորված էր ոչ միայն արդյունաբերության ու գյուղատնտեսության թերզարգացմամբ, այլ նաև այն ժամանակ ԼՂԻՄ-ի օրինակաբանացված թալանի քաղաքականությամբ: Խորհրդային տնտեսական համակարգում գոյություն ունեին այսպես կոչված «պետական գնումներ», երբ հանրապետական մարմինները խիստ ցածր գներով վերցնում էին գյուղատնտեսական արտադրանքը /նաև էության դա արտադրանքի բռնագրավման տեսակ էր: ԼՂԻՄ-ի պարտապաշտ, պետության ու գյուղմթերքներ արտադրողի միջև հարաբերությունների խորհրդային համակարգին բնորոշ այս այլանդաշտությունը առանձնահատուկ կոշտ ձևեր էր ընդունում: Այսպես, 1986 թ. անասունի և թռչնի «պետական գնումները», ԼՂԻՄ-ի մեկ շնչի հաշվարկով, մոտ 4,6 անգամ ավելին էր, քան ագարային Նախիջևանում, կաթինը 2,7 անգամ, հացահատիկինը 1,4 անգամ, իսկ խաղողինը 1,5 անգամ: Այս ամենը դուրս էր բերվում ինքնավարության սահմաններից զրկելով նրա բնակչությանը սեփական աշխատանքի արդյունքների նկատմամբ ինքնուրույն տնտեսման հնարավորությունից⁵⁹:

Աշխատատեղերի բացակայությունը և խիստ ցածր աշխատավարձը հանգեցնում էին ոչ միայն հայկական մտավորականության, այլ նաև աշխատանակ բնակչության մեծամասնության, առաջին հերթին երիտասարդության միգրացիային: Այս միգրացիան խրախուսվում էր նաև այսպես կոչված «պրոֆիտաբլի» կողմից. սկսած դպրոցական 8-րդ դասարանի տարիքից երիտասարդությանը ուղարկում էին ԼՂԻՄ սահմաններից դուրս պրոֆտեխնիկական ու գործարանային ուսումնարաններում ուսանելու, որից հետո նրանք բաշխում էին Ադրբեջանի նորակառույց արդյունաբերական օբյեկտներով /Մուսգայիթ, Մինգեչաուր և այլն/: Ըստ որում, երիտասարդ կարգերն ապահովվում էին մշտական աշխատանքով և նույնիսկ

բնակարարով, այսինքն այն ամենով, որի հույսը նրանք չունեին Լեռնային Ղարաբաղում: Եվ հակառակը, եթե նույնիսկ ԼՂԻՄ-ում բացվում էին ուսումնական հաստատություններ, ապա զերազանցապես արդրեջանական լեզվով ուսուցմանը, ինչը լրացուցիչ գործոն հանդիսացավ հարակից արդրեջանական շրջաններից երիտասարդության ներգրավման համար:

Այսպես 1930-ական րվականներից, Լեռնային Ղարաբաղում չկար ոչ մի գործող եկեղեցի /մինչև 1914 թ. Հայ Առաքելական եկեղեցու Արցախյան բնակ ուներ 222 գործող եկեղեցի և տաճար/, այն դեպքում, երբ Շուշիում բնակվող ընդամենը մի քանի հազար արդրեջանցիների կրոնական կարիքների բավարարման համար ազատորեն գործում էին մզկիթներ: Ղարաբաղի տասնյակ հայկական հնագույն եկեղեցիներ ոչ միայն չէին գործում, այլև չէին վերանորոգվում և աստիճանաբար քանդվում էին⁶⁰:

Մարզի նկատմամբ տարվող հանրապետական իշխանությունների սոցիալ-տնտեսական խտրական քաղաքականությունը հանգեցնում էր ինքնավարության հայկական նույնականության պահպանման համար բացասական ժողովրդագրական միտումների:

Հայերն ու արդրեջանցիները տրամազծորեն տարբեր պատկերացումներ ունեին Լեռնային Ղարաբաղի մշակութային ու քաղաքական նույնականության վերաբերյալ: Այս առումով բավական ցայտուն է Խորհրդային ժողովրդագրական վիճակագրությունը: Համաձայն այդ տվյալների, Խորհրդային ամբողջ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում ընդհանուր միտումը հայկական բնակչության օգտին չէր. այն ղեպարմ, երբ Ղարաբաղի արդրեջանական բնակչության բվաքանակը կտրուկ աճում էր, հայերի բվաքանակը մնում էր մտապելական նույն մակարդակին: 1926 թ. Լեռնային Ղարաբաղում բնակվում էին 117 հազար հայեր և 13 հազար արդրեջանցիներ: 1979 թ. համապատասխանաբար՝ 123 հազար և 37 հազար: Մարզի հայկական բնակչության շրջանում ակնհայտ էր բացասական միգրացիոն գործընթացը: 1970-1979 թթ. ընթացքում մարզի արդրեջանական բնակչությունը ավելացել էր 37 տոկոսով, իսկ հայկական բնակչությունը միայն 1,7 տոկոսով⁶¹:

Համեմատելով ԽՍՀՄ բոլոր ութ ինքնավար մարզերի զարգացումները կարելի է համոզվել, որ նրանցից յոթում, ստեղծման պահից մինչև 1986 թ., բնակչության աճը կազմել է 60-ից մինչև 400 տոկոս, և միայն Լեռնային Ղարաբաղում այն հավասար էր 12 տոկոսի, այսինքն 19 հազար մարդու, կամ էլ տարեկան միջին հաշվով 300 մարդու, ինչը բնակչության բնական աճից շուրջ 10 անգամ ավելի քիչ էր⁶²:

Չնզոց հետազոտողները նշում են, որ Արդրեջանի կազմում գտնվելու Լեռնային Ղարաբաղի բնակչության դժգոհության համար հիմք են հանդիսացել Ինքնավար մարզի տնտեսության զարգացման համար կապիտալ ներդրումների անբավարարությունը: Արդյունքում տեղի էր ունենում ԼՂԻՄ բնակչության մշտական արտահոսք: Կրթություն ստանալու նպատակով մեկնող երիտասարդները չէին կարողանում հայրենիքում մասնագիտական աշխատանք գտնել: Դժգոհություն առաջանում էր նաև ինքնավար մարզում ազգային մշակույթի զարգացմանը և Հայաստանի հետ մշակութային կապերի ընդլայնունը խոչնդոտելու պատճառով: չէին բավականացնում հայալեզու դասագրքերը, չէին հեռաբանվում երևանի հեռուստատեսադրողամները, ղժվարացվում էր հայկական դերասանների ու մշակույթի գործիչների ուղևորությունը Լեռնային Ղարաբաղ⁶³:

ԼՂԻՄ տարածքից դուրս ԱրդրեխՄՀ շրջաններում պարփակ բնակվող հայերը կենտրոնական հանրապետական իշխանության կողմից սոցիալ-տնտեսական ոլորտում նույնպես ենթարկվում էին խտրական վերաբերմունքի: Այսպես, միայն Քուռ գետի ձախախնյակի Շենախի-Չաքաթալա գծի նկայմրով տեղակայված էին շուրջ 90 գյուղեր: Հայրիրամյակներ չարունակ ԱրդրեխՄՀ-ում զինեզործությանը գաղվում էր այս տարածքի հայկական բնակչությունը: Հայերի ձեռքը զինեզործության մեծաշնորհ չարունակ ԱրդրեխՄՀ-ում զինեզործությանը գաղվում էր այս տարածքի հայկական բնակչությունը, արագ տեմպերով սկսեցին ներդնել խաղողագործությունը, և այդ գործընթացում թույլ տրվեցին աչքակապողծությունը, և այդ գործընթացում թույլ տրվեցին Միսսամանակ հայկական գյուղերի բնակիչներին ստիպում էին խաղողի բերքը վերամշակման համծծել 10-15 կմ հեռավորության վրա գտնվող արդրեջանական գյուղերին: Հասկանալի է, թե ինչպիսի բացասական հետևանքներ դա կարող էր ունենալ հայկական գյուղերի տնտեսության վրա: Անհրաժեշտ է նաև հիշել, որ Հ. Ալիևի ղեկավարման տարիներին կառուցվեց Շենախի-Չաքաթալա առաջնակարգ ավտոմայրուղին, սակայն մայրուղին անցկացրեցին այնպես, որպեսզի հայկական գյուղերը դրանից կտրված մնային⁶⁴:

Ղարաբաղյան երճոքաղաքական հակամարտության ծագման պատճառային բազայի սոցիալ-տնտեսական փաստարկմանը պետք է շատ զգուշորեն վերաբերվել, քանի որ այդ ժամանակաշրջանի ԱրդրեխՄՀ և ԼՂԻՄ-ի զարգացման սոցիալ-տնտեսական ցուցանիշները հակամարտության կողմերից համախ տրամազծորեն 1926-ից 1986-ի մեկնաբանությունների ու փաստերի դիրքերից են բերվում:

Այսպես, միջազգային կազմակերպություններում արված իրենց պաշտոնական զեկույցներում արդրեջանական կողմը նշում է⁶⁵, որ 1975-1985 թթ. ընթացքում ԼՂԻՄ զարգացման համար տրամադրվել է 486 մլն. ռուբլու կապիտալ ներդրումներ, ինչը 2,8 անգամ զերազանցել է նախորդ 15 տարիների կապիտալ ներդրումների գումարը: 20 տարիների ընթացքում ԼՂԻՄ-ում շուրջ 4 անգամ աճել է կապիտալ ներդրումների մեկ շնչին ընկնող միջին ծավալը /1961-1965 թթ. 59 ռուբլու փոխարեն, 1981-1985 թթ. 226 ռուբլի/: Հակամարտությանը նախորդող 15 տարիների ընթացքում ԱրդրեխՄՀ-ում մեկ մարդուն ընկնող բնակարանամուտի ցուցանիշը ընդհանուր առմամբ կազմել է 3,64 ք.մ., իսկ ԼՂԻՄ-ում 4,76 ք.մ.⁶⁶:

Մարզի սոցիալ-մշակութային զարգացման բնորոշ առանճնահատկությունը բնակարանների, ապրանքների ու ծառայությունների ապահովման մակարդակով նրա զերազանցությունը էր ընդհանուր հանրապետական մակարդակի նկատմամբ: Մարզի յուրաքանչյուր բնակիչ /1/3-ով ավելի բնակամակերես ուներ, քան հանրապետական միջին բնակիչը, իսկ մարզի գյուղացին իր տրամարդության տակ 1,5 անգամ ավելի մակերես ուներ, քան հանրապետության գյուղացին: Մարզի բնակչությունը ավելի լավ էր ապահովված միջին բուժանճնակազմով /1,3 անգամ ավելի/, հիվանճանոցային մահճակալներով /3 տոկոսով ավելի/: Ավելի լայն էր մշակութալուսավորչական հաստատությունների ցանցը /3 անգամ ավելի էին կինոսարքավորվումները և ակունքային հաստատությունները, 2 անգամ գրասարքավորվումները, 100 ընթերցողի հաշվարկով գրքերի և անագրերի քանակը ավելի էր 1,6 անգամ: Դպրոցներում երկրորդ և երրորդ հերթափոխով սովորում էին մարզի երեխաների 7,7 տոկոսը, այն դեպքում երբ ամբողջ

հանրապետությունում յուրաքանչյուր չորրորդը, իսկ մշտական նախադպրոցական հաստատություններում ընդգրկված էր երեխաների 37 տոկոսը /հանրապետության տարածքում 20 տոկոսը/:

ԼՂԻՄ-ը ավելի բարձր տեմպերով էր զարգանում, քան ընդհանուր ասածը Ադրբեյխանի: Այսպես, եթե 1970-1986 թթ. ամբողջ հանրապետության արդյունաբերական արտադրությունը աճել է 3 անգամ, ապա ԼՂԻՄ-ում՝ 3,3 անգամ /աճի տեմպերն այստեղ 8,3 տոկոսով ավելի էին/: 1986 թ. ԼՂԻՄ-ում հիմնական ֆոնդերի օգտագործումը 1970 թ. համեմատությամբ աճել էր 3,1 անգամ, այն դեպքում երբ հանրապետությունում՝ 2,5 անգամ: Սոցիալական զարգացման հիմնական ցուցանիշներով ԼՂԻՄ-ը գերազանցում էր Ադրբեյխանի կենսամակարդակի միջին հանրապետական ցուցանիշները:

Ինչպես տեսնում ենք, ՉայկևՄԻ-ին ինքնավար մարզի վերամիավորման մասին Լեռնային Ղարաբաղի հայերի կողմից առաջ քաշած պահանջներին նախորդող ժամանակահատվածի ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական վիճակի գնահատականները խիստ տարբերվում են:

1980-ական թվականների երկրորդ կեսին Ղարաբաղյան Հակամարտության ակտիվացման պատճառադրության սոցիալ-տնտեսական շերտը ոչ թե այն էր, որ Լեռնային Ղարաբաղի հայերի կենսամակարդակն ավելի ցածր էր տարածաշրջանի արդյեցանական բնակչության մակարդակից: Հակառակը, մի շարք սոցիալ-տնտեսական չափանիշներով հայերը գերազանցում էին իրենց հարևաններին: Հակամարտության սոցիալ-տնտեսական պատճառները կայանում էին նրանում, որ Լեռնային Ղարաբաղի հայերը ձգտում էին, որպեսզի իրենց կենսամակարդակը որոշվեր միայն իրենց աշխատանքի արդյունքով: ԼՂԻՄ-ի հայերը գիտեին, որ հարևան Հայաստանում բնակչության կենսամակարդակն ավելի բարձր է և համոզված էին, որ իրենց ավելի ցածր կենսամակարդակը Ադրբեյջանի իշխանությունների տնտեսական քաղաքականության դիտավորության արդյունք է: Իրականում առանձին ցուցանիշներով ԼՂԻՄ կենսամակարդակը նույնիսկ ավելի բարձր էր, քան միջին հանրապետականը, սակայն ընդհանուր ասածը տնտեսական իրավիճակը մարզում իսկապես տպավորիչ չէր, հատկապես Հայաստանի կենսամակարդակի հետ համեմատած: Չնայած նրան, որ ծագած հակամարտության մեջ տնտեսական գործունե իր նշանակություն ուներ, սակայն հայերի հիմնարար պահանջները գտնվում էին այլ հարթության վրա, որը չէր համընկնում ԽՍՀՄ կուսակցական-պետական ղեկավարության տեսակետի հետ⁶⁷:

Իրենց սոցիալ-տնտեսական դրությանը պայմանավորված, Ինքնավար մարզի հայերի դժգոհության որոշիչ ուղղվածությունը ոչ թե այն էր, որ իրենց սոցիալ-տնտեսական իրավունքները ենթարկվում էին կոշտ խտրականության, որի պատճառով իրենք ավելի վատ էին ապրում, քան Ադրբեյխանի այլ շրջանների բնակչությունը, այլ այն, որ նրանք իրենց սոցիալ-տնտեսական առաջընթաց զարգացումը տեսնում էին այլ միութենական հանրապետության շրջանակներում /ՉայկևՄԻ/ և հետևաբար, նրանց տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի հայության սոցիալ-տնտեսական իրավունքների առավել պաշտպանվածությունը, ապահովության և երաշխավորվածությունը հնարավոր էր միայն ինքնավար մարզը ՉայկևՄԻ կազմում ընդգրկելու պարագայում:

1. «Երբ դա տեղի է ունենում, մենք արդեն ի վիճակի չենք խոսք տալ մի հավանական իրավիճակի, երբ հայությունը ինքը կարող է «բռնոր իրավունքներ» գրկված պատճառ դառնալ, երբ այդ առանձին ազգության քաղաքացիական իրավունքները հանելուկային ձևով դադարեցնում են իրենց գործողությունը: Օրինակ, այն պահին, երբ Լեռնային Ղարաբաղում բախում է առաջանում հայն Ադրբեյջանում անմիջապես հայտնվում է «մյուս կողմում», այսինքն քշնամու ճամբարում, և նրա քաղաքացիական իրավունքները ակնթարթորեն կրում են արմատական փոփոխություններ: Նույնը կարելի է ասել նաև Հայաստանի արդյեցանցու վերաբերյալ: (Язык и этнический конфликт (под ред. М. Брита Оганян, Н. Семепова), М., «Генезис», 2001, с. 21-22).

2. Հակամարտությունը գուտ էրնիկական չէր, այլ նախկին Ադրբեյխանից այդ հակամարտության մեջ էին հանդիսանում ազգային փոքրամասնություն, քանի որ 1988 թ. հակամարտության վերակսման պահին նրանք արդյեցանցիների հետ հավասար հանդես էին գալիս որպես Ադրբեյխանի պետականության կողմնոր: 1988 թ. հակամարտությունը ծագեց որպես պետա-իրավական վիճարանություն ԽՍՀՄ ազգային-պետական կառույցի երկու սուբյեկտների միջև, այն է վիճարանություն ազգային ինքնավար մարզի ԼՂԻՄ և միութենական հանրապետության միջև /Ադրբեյխան/:

3. Երկրային հակամարտությունը դա 1918-1920 թթ. վեճի շարունակություն է և Արևելյան Անդրկովկասի հայերի և րուբրերի /արդյեցանցիների/ մարզի երկու հիմնական էթնոգործոնների միջև: Արևելյան Անդրկովկասի ազգային պետական կառուցվածքի շուրջ: - (А. С. Манасян, Карабахский конфликт: ключевые понятия и хронология, Ер., «НОФ Нораванк», 2005, с. 27).

4. Ինքնավարությունների ազգային շարժումներում առանցքային դերակատարում ունեցան տարածաշրջանային հայերի քաղաքական կազմակերպությունները, որոնք ստորերայնորեն առաջացել էին 20-րդ դարի 80-ական թվականների վերջին ԽՍՀՄ քաղաքական ազատականացման արդյունքում: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում 1988 թ. ստեղծվեց «Կուուն» կոմիտեն: Գիմնվելով 1987 թ. անցկացված յուրատեսակ հանրաքվեի արդյունքների վրա, որի ընթացքում Հայաստանի վերամիավորվելու օգտին հավաքվել էր 80 հազ ստորագրություն, «Կուուն» կոմիտեն և իշխանության մարզային մարմինները նախաձեռնեցին Ադրբեյջանի կազմից դուրս գալու և Հայաստանի կազմում ընդգրկվելու հարցը: (К. Б. Барбарян, Истоки возникновения этнополитических конфликтов в Закавказье: диссертация канд. полит. наук // Московский гуманитарный университет, Москва, 2007г.).

5. Э. А. Паин, А. А. Попов, Межнациональные конфликты в СССР // «Советская этнография», М., 1990, № 1.

6. Smith, Anthony D. Myths and memories of the Nation. Oxford.: Oxford University Press. 1999, p. 9.

7. А. Г. Здравомыслов, Социология конфликта, М., «Аспект Пресс», 1996, с. 196-203.

8. Բազմազգ պետությունը կարելի է տեսավորել որպես ներքին էթնոստարածքային կառուցվածքով պետություն այն բնակեցնող ժողովուրդների ազգային պետականության տարբերով: Իսկ երբ խոսք է գնում առանց նման կառուցվածքի պետության մասին, ապա կիրառվում է «պոլիէթնիկ պետություն» տերմինը:» (См. С.А. Романенко, Типология процессов национального самоопределения // «Общественные науки и современность», М., 1999, № 2).

9. Э. А. Паин, А. А. Попов, Межнациональные конфликты в СССР // «Советская этнография», М., 1990, № 1, с. 12.

10. А. Х. Нерсисян, Типология этнополитических конфликтов // «Ломоносовские чтения. Аспиранты», Том № 1, 2003, (электронная библиотека социологического факультета МГУ).

11. Ариф Алиев, Старая песня о главном // Карабахский конфликт: понятие друг друга (А. Алиев, С. Григорян, Р. Мусабегов, Б. Навасаровян), Ер., «Волас Принт», 2006, с. 97.

12. «Իրականում Ղարաբաղում տեղի է ունենում ժողովուրդների սովորական էթնոքաղաքական հակամարտություն, որոնք 20-րդ դարում սկսեցին ստեղծվել

իրենց ազգային պետությունները»: (А. Юнусов, Карабахская проблема расшатывает Азербайджан, <http://www.novorol.ru/article5543.html>, 16.01.2006).

13. Г. Мирский, Ещё раз о распаде СССР и этнических конфликтах // «Мировая экономика и международные отношения», М., 1997, № 2, с. 17.

14. Общая и прикладная политология: Учебное пособие (под общей ред. В. И. Жукова, Б. И. Краснова), М., «Союз», 1997, с. 395.

15. Ibid. с. 398.

16. Երեւոյադարաւան գործընթացը հանդես է գալիս որպէս բաղաբազան գործընթաց մասնավոր դեպք. որի յուրահատկութիւնը որոշվում է տարբերակների աանձնատկութեանը նրանք ձևավորվում են երկի նույնականութայն հիման վրա և բաղաբազան գործունեության իմաստներով:

17. А. С. Панарин, Политология, М., «Прспект», 1997, с. 37.

18. *Offe Claus. Political Liberalism, Group Rights and the Politics of Fear and Trust // Studies in East European Thought.* 2001. Vol. 53. p. 167-182.

19. Համաձայն Լեւոնայի Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի 2-րդ մասի «Լեւոնայի Ղարաբաղի Հանրապետություն և Արցախ անկախությունը համարվեց են»:

20. Л. Л. Хоперская, В. А. Харченко, Управление локальными межэтническими конфликтами: теория и практика // «Журнал социологии и социальной антропологии», С-Пб., 2004, Том VII, № 3, с. 174-176.

21. Black D. Social Control as Dependent Variable // *Toward a General Theory of Social Control.* (Ed. by Black D.). L.: Academic Press. 1984. Vol. 2.

22. А. В. Дмитриев, Этнический конфликт: теория и практика, М., «МНУЦ», 1998.

23. Г. С. Денисова, М. Р. Радовель, Этносоциология: Учеб. Пособие, Ростов-н/Д., «ЦВБР», 2000, с. 249.

24. Foster, Charles R. Political Culture and Regional Ethnic Minorities // «The Journal of Politics» (Southern Political Science Association, Georgia Southern University, US). May 1982. Vol. 44. No. 2. p. 560-568; Foster, Charles R. Nations without a State: Ethnic Minorities in Western Europe // «International Migration Review» (Center for Migration Studies of New York). Autumn 1982. Vol. 16. No. 3. p. 678-680.

25. Г. И. Грибанова, Роль этнических конфликтов в трансформации политических режимов на постсоветском пространстве // Актуальные проблемы современного политического процесса: Материалы международной научной конференции (отв. ред. Б.А. Исаев), Ч. 1, С-Пб., «БГТУ», 2007, с. 11.

26. Этнический конфликт: теория, экспертиза, пути решения // Сборник «Школа мировоззренческих инициатив» (сост. М. А. Юндина, В. А. Анкстремье, С. А. Рубашкина, А. В. Зотова), Старополю, «Северо-Кавказский Ресурсный Центр», 2001, с. 12.

27. Ranganajan L. N. The Limitation of Conflict: A Theory of Bargaining and Negotiation. New York: St. Martin's Press. 1985.

28. Վերջին դեպքում առավել հաճախ երեւոյադարաւան հավամարտութայն անկայութեան փաստը չճանաչող կողմը պետութունն է, իսկ իր անբավարարվածությունն արտահայտող կողմը տվորարար տվյալ տարածքում բնակվող «ոչ տիրույթային» երկնի խումբը հաճախ երկնի փոքրամասնությունը: Երբ այնուամենայնիվ անբողոքյանք չի հայտնվում ֆորմալ առումով անտեսել հավամարտությունը, այսպ տվորարար «հրաժարվող» կողմը փորձեր է ձեռնարկում այն «քայքայել» մինչև ոչ երկնի մակարդակը /օրինակաւութեան ու կարգի վերականգնում, պայքար ուղձակաւ միավորումների ու միջազգային անաբեկության դեմ և այլն: Տայտում օրինակը Չեչենական հավամարտությունն է Ռուսաստանի Ղաշնութայն տարածքում:

29. В. Казимиров, «Политический атлас» конфликтов и два Хельсинкских принципа // Информационное агентство «REGNUM», 2 февраля 2007г.

30. Общая и прикладная политология: Учебное пособие (под общей ред. В. И. Жукова, Б. И. Краснова), М., «Союз», 1997, с. 396.

31. *Грайр Батман.* Нагорный Карабах и национальные конфликты в Союзе в свете прав человека, Ер., «Микаэл Варданян», 1991, с. 6, 10.

32. Իր գործունեության ընթացքում /1990-թ. մայիսից 1991-թ. դեկտեմբերը/ իՄՄՍ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն ընդունել է ավելի քան 40 ակտեր: Բացի եզրակացությունները դրանք նաև որոշումներ էին /քննարկումներ հարցերի ընդունման մասին/, հրամանագրեր /որոնք կրում էին խորհրդատվական բնույթ/ և հայտարարություններ: «ԻՄՄՍ Գերագույն խորհրդի Տեղեկագրում» 1990-թ. և 1991-թ. իրավաբանական են ամփոփիչ ակտեր Կոմիտեի կողմից քննարկված 23 հարցերի շուրջ:

33. А. С. Манасян, Конфликт между Азербайджаном и НКР в правовом контексте распада СССР // О некоторых политико-правовых аспектах проблемы Нагорного Карабаха (сборник статей), Ер., «Айк», январь 1994, с. 18.

34. «Լսողիդային շրջանում ԱրթըմՍՀ-ում որոշակի պետա-իրավական կարգավիճակով օժտված էր նաև մարզի ասիաններից դուրս բնակվող հանրապետության հայկական բնակչությունը: Լեւոնայի Ղարաբաղի հնրնավար մարզ ունենալու իրավունքն ինքնին որպես խորհրդային ազգային պետականություն, հանրիասունում էր ԱրթըմՍՀ հայ ժողովրդի պետական ազգ լինելու փաստը: Ոստիկ և մարզի ասիաններից դուրս գտնվող ազգային հաստատությունները /հանրապետական հայալեզու մամուլը, օտարիոն և հետուսաստեությունը, ուսումնական հաստատությունները և այլն/ դարձան ԱրթըմՍՀ-ում բվով երկրորդ պետական ազգի ազգային հաստատությունները: Հանրապետության պետական պաշտոնների հիերարխիայում երկրորդ պաշտոնը ԱրթըմՍՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալի, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նախագահի առաջին տեղակալի պաշտոնները օրենսդրորեն անրագրված էր հայերին: Այսպիսով, հատկապես ԼՂԻՄ-ի միջոցով որպես ԱրթըմՍՀ կազմում իրենց ազգային պետական գոյացություն, այդ հանրապետության հայ ժողովրդը ներկայացված էր պետական իշխանության բարձրագույն մարմիններում» (А. С. Манасян, Карабахский конфликт: ключевые понятия и хроника, Ер., «НОФ Нораванк», 2005, с. 172-173).

35. Կուսակցական-տնտեսական իշխող քրուրկուստիայի ձևավորումը վերջին քանակային ընթացքում ընթանում էր Զեյնալը Ալիևի հակողության տակ, որը հանդիսանում էր իՄՄՍ այդ անկումում գտնվող պետության կուսակցության բացառական լիշխան «տերը»: Կուսակցական կոմիտեների քարտուղարների ու գործկոմների նախագահների, նախարարների, իրենախարարների, գերատեսչությունների պետների և ավելի ցածր գտնվող պաշտոնները որպես կանոն վաճառվում էին կաշառքի դիմաց, թեև կային նաև բացառություններ: Բացի կաշառքը նշանակություն ուներ նաև այնպիսի գործոնը, ինչպես ազգակցականությունն ու տեղային ծագումնաբանությունը: Ուրղակի ղեկավարման 13 տարիների ընթացքում Գ. Ալիևը իր բազմաթիվ բարեկամներին ու «զեծյակներին» կարողացավ կարևոր պաշտոնների տեղավորել ինչպես պետկառավարման մարմիններում, այնպես էլ տնտեսության, մշակույթի ու կրթության ոլորտներում: Ենդ որում, գաղափարական գործոնը ողև նշանակություն չունեի, ավելի ճիշտ նշանակություն ուներ ոչ թե ձևական կոմունիստական գաղափարախոսությունը, այլ իրական գաղափարախոսության գործունեությունը Գ. Ալիևին հավատարմության ու գոյություն ունեցող կարգերի հետ համաձայնության գաղափարախոսությունը: Այդպես էր ձևավորվում կուսակցական-տնտեսական վերնախավի հիմնական կրիիքը: Բավական է ասել, որ 1997-թ. Արթըմեանի Կոմկուսի մեջ շրջանային, քաղաքային ու հանրապետական մակարդակի 252 կուսակցական քարտուղարներից միայն երկու նախկին քարտուղարներն էին ընդգրկված եվկալի շրջկոմի և Բարվի քաղկոմի քարտուղարները: Մնացած բոլորը այս կամ այն հաջողությամբ ներգրավվել էին նոր ղուկայական կարգի մեջ: (Зардушт Али-заде, Азербайджанская элита и массы в период распада СССР, http://www.sakharov-center.ru/publications/azrus/az_0055.htm).

36. В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе: Хроника (отв. ред. К. С. Худояердов), Ч. 1, Ер., «АН АрмССР», 1990, с. 26-27.

37. *Г. С. Денисова, М. Р. Радовель*, Этносоциология: Учеб. Пособие, Ростов-н/Д, «ДВВР», 2000, с. 319.
38. Յոյն է այն, որ «սոցիալիստական ազգակառուցման» հենց սկզբում խորհրդային կուսակցական ղեկավարությունը իրեն հաշիվ էր տալիս բազմազգ պետական գոյացության տարածքում բազմաթիվ էթնոսների մակարդակի «սոցիալ-տնտեսական ու մշակութային հավասարության» անհրաժեշտության մեջ: Այսպես, ԽՍՀՄ մեակորման նախաշնչին «Պրավդա» թերթը գրում էր, որ «չի կարելի սահմանափակվել միայն ազգային իրավահավասարության... անհրաժեշտ է «ազգային իրավահավասարությունից» անցնել ազգերի հավասարեցման փաստացի միջոցներին, հետևյալ գործնական միջոցառումների մշակմանն ու կյանքի կոչմանը. 1. հետամնաց ազգերի ու ժողովուրդների տնտեսական վիճակի, կենցաղի, մշակույթի ուսումնասիրմանը, 2. նրանց մշակույթի զարգացմանը, 3. քաղաքական լուսավորմանը, 4. տնտեսության բարձրագույն մեծերի նրանց աստիճանական ու անկախ մասնակից դարձնելուն, 5. հետամնաց և առաջավոր ազգերի աշխատավորների միջև տնտեսական համագործակցության հաստատմանը: Այդպիսին են ազգային խոլորի նոր հարցադրումները բնորոշող կողմերը» («Правда», № 98, 8 мая 1921г.).
39. *Г. И. Грибанова*, Роль этнических конфликтов в трансформации политических режимов на постсоветском пространстве // Актуальные проблемы современного политического процесса: Материалы международной научной конференции (отв. ред. *Е. А. Исаев*), Ч. 1, С-Пб., «БГТУ», 2007, с. 10-11.
40. *Г. С. Денисова, М. Р. Радовель*, Этносоциология: Учеб. Пособие, Ростов-н/Д, «ДВВР», 2000, с. 365.
41. *ՏԵՄ* Современные этнические процессы в СССР (отв. ред. *Ю. В. Бромлей*), М., «Наука», 1975.
42. *Gellner E.* Nationalism in Vacuum // Thinking Theoretically About Soviet Nationalities: History and Comparison in the Study of the USSR (Ed. *A.J. Motyl*). New York: Columbia University Press, 1992. p. 250.
43. «Այս ամենը հանգեցրեց նրան, որ, ըստ հայտնի գրողի պատկերավոր արտահայտության, մեր քաղաքացիների մեծամասնության համապետական, համաժողովրդական երկկան դատապարտեց «դարաբաղցիների տեղական եաստիրությունը, որը ցավալի հարված հասցրեց վերակառուցմանը, մեր գլխավոր արժեքին, որի վրա մենք կատարել ենք մեր մեծագույն հաշվարկը» (*Ю. В. Бромлей*, Национальные процессы в СССР: в поисках новых подходов, М., «Наука», 1988, с. 35 со ссылкой на *А. Проханова*, Я был в Степанакерте // «Литературная газета», 10 августа 1988г.).
44. «Լեռնային Լարաբաղի ու Հայաստանի ժողովուրդը օգտագործելով խոսքի ազատության, համրահավաքների ազատության ու խաղաղ բողոքների ազատության իրավունքը, դուրս եկավ փողոց իր կամքն արտահայտելու համար: Բողոքների տևական բնույթը և զգալի չափերը հիմք են տալիս մտածելու, որ դրանք իրադրված չէին մի խումբ «ծայրահեղականների» կամ ծայրահեղ համոզմունքներով այլ տարրերի կողմից: Դա շարժում էր, որը ծնված էր ժողովրդի մոտ խորը արմատապարկած դժգոհությանը, որի իրավունքներն ու ազատությունները մշտապես ու կոպիտ ոտնահարվել են Ադրբեջանի կողմից» (*Грайр Багьян*, Нагорный Карабах и национальные конфликты в Союзе в свете прав человека, Ер., «Микаэл Варандеан», 1991, с. 66).
45. *А. С. Манаст*, Карабахский конфликт: ключевые понятия и хроника, Ер., «НОФ Нораванк», 2005, с. 25.
46. *С. Золин*, Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., «Лингва», 2001, с. 65.
47. Ի Ուլախի ունեցող ԽՍՀՄ զեբրազուկ խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը «ԼՂԻՍ-ում իրավիճակի նորմալացման միջոցառումների մասին»: Որոշումը նորմալեց Հատուկ կառավարման կոմիտեն և նրա փոխարեն ադրբեջանական ինքավարչարան տեղեօնց «Կազկոմիտե»:
48. Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1991, № 28, с. 2-5.
49. *Г. И. Андреева*, Конституционное право зарубежных стран: Учебник, М., «Эксмо», 2005, с. 184-185.
50. Օրենքի դրույթները վերարտադրվեցին, մասնավորապես, ՌուՖԱԴ Քրեական օրենսդրի 74-րդ հոդվածում: Խորհրդային օրենսդիրը ազգային ու ռասայական իրավահավասարության խախտումների համար պատասխանատվությունը տարբերակում էր կախված նախատեսված դատավարող հատկանիշներից: Ավելի բարձր պատասխանատվություն սահմանված էր, եթե նշված գործողությունները զուգակցվում էին բռնությունների կամ սպառնալիցների հետ, ինչպես նաև կատարվում էին պաշտոնատար անձի կողմից /74-րդ հոդվածի մաս 2/, ինչպես նաև այն դեպքերում, եթե դրանց կատարվում էին անմաց խնդիր կողմից կամ հանցեցում էին մարդկանց մահվանը կամ այլ ծանր հետևանքների ՌուՖԱԴ ԲՕ 74-րդ հ. մ. 3/: Այստեղ և հենազայում բերվում են ՌուՖԱԴ օրենսդրության կողմից կացված նորմերը: ԽՍՀՄ-ում յուրաքանչյուր միութենական հանրապետություն ուներ իր հանրապետական օրենսդրությունը, սակայն այն հիմնվում էր ընդհանուր միութենական օրենսդրության միասնական նորմերի վրա, որոնք, մասնավորապես, քաղաքացիա-իրավական և քրեա-իրավական հարաբերությունների ոլորտում արտահայտվում էին անմեխաշուր հանրապետության օրենսդրական նորմերի տեսքով ՌուՖԱԴ Օրենսգրքերով:
51. *С. Золин*, Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., «Лингва», 2001, с. 295-296.
52. *В. Г. Смолжский*, Национальные конфликты в СССР и СНГ (1985-1992гг.), Улан-Удэ, «БНЦ СО РАН», 1996, с. 85.
53. *А. Н. Ясько*, Межнациональные конфликты Закавказья: предпосылки возникновения и тенденции развития // «Полис», 1991, № 2, с. 80.
54. Социальные вопросы и вопросы прав человека: права человека (доклад Верховного комиссара ООН по правам человека, Основная сессия Экономического и Социального Совета ООН 2006 года, E/2006/86, 21 июня 2006г.).
55. *Ibid.*
56. Հարութի շրջանի բնակչությունը 1913 թ. կազմել է 33 հազ. հայ, 1926 թ. 25 հազ., 1959 թ. 17 հազ., 1970 թ. 16 հազար: Այստեղ, ինչպես և ամբողջ շրջանում 60 տարիների ընթացքում չի կատարվել ոչ մի բնակելի տուն, ոչ մի հաս-տատություն: Գյուղերում չկան դպրոցներ, հիվանդանոցներ, ակումբներ: Այստեղ ոչինչ չի կառուցվում, փոխարենը ամեն ինչ ավելվում է: Երջանում զրանցված են ավելի քան 5 հազար անտեր տներ: Հարությունը հիշեցնում է Աստու կողմից մոտացված մի անկյուն, որին չի հասել քաղաքակրթությունը: (*Տմ. Լ. Գրյուն*, Воедине с собой, или как докричаться до вас, потомки! Дневниковые записи 1975-1982гг., (сост. и ред. *Л. Писакян*), Ер., «Зангак-97», 2002).
57. *В. Б. Арутюнян*, События в Нагорном Карабахе: Хроника (отв. ред. *К. С. Худавердян*), Ч. 1, Ер., «АН АрмССР», 1990, с. 21-22.
58. Газета «Коммунист» (Баку), 11 марта 1988г.
59. *С. Золин*, Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., «Лингва», 2001, с. 40.
60. Нагорно-Карабахская Республика: история и современность (под ред. *В. Атаджаняна*), Степанакерт, «ФОНИ», 1998, с. 5, 11.
61. *В. Б. Арутюнян*, События в Нагорном Карабахе: Хроника (отв. ред. *К. С. Худавердян*), Ч. 1, Ер., «АН АрмССР», 1990, с. 24.
62. Справочник «Годы труда и победы», М., «Политиздат», 1987.
63. *В. Г. Митяев*, Карабахский конфликт в контексте международных отношений // Армения: проблемы независимого развития (под общ. ред. *Е. М. Кожкошана*), М., «РИСИ», 1998, с. 487.
64. *Г. Авакян*, Нагорный Карабах: ответ фальсификаторам, Ер., «Айастан», 1991, с. 15.
65. ՏԵՄ Доклад Азербайджанской Республики в ООН по выполнению ею принятых международно-правовых обязательств в соответствии с *Международной конвенцией о ликвидации всех форм расовой дискриминации 1965г.* (Доклады, предоставляемые государствами-участниками в соответствии со статьей 9 Конвенции, CERD/C/440/Add.1, 19 August 2004, с. 3-5): Доклад Азербайджанской Республики в Совет Европы по

выполнению ею принятых международно-правовых обязательств в соответствии с **Рамочной конвенцией о защите национальных меньшинств 1995г.** (Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities (Russian version), ACFC/SR (2002) I, 4 June 2002, p. 13-14).

66. Հայկական հեղինակները դեռ 1988 թ. նշում էին, որ «ԼՂԻՄ բնակչության մեկ շնչին ընկնող համեմատաբար մեծ բնակեցվածքը հանդիսանում է ոչ թե նրա բնակչության բարեկեցության նկատմամբ հատուկ հոգատարության արդյունք, այլ հակառակը դա անբարենպաստ սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների հետևանք է, որը հանգեցրել է մարզից հայկական բնակչության արագ արտահոսքին: Ավելին, 1970-1983 թթ. ընթացքում ԼՂԻՄ-ում նոր բնակարանների գործարկման հիմնական ծանրությունը դրված էր տեղի բնակչության ուսերին քանկորների, ծառայողների, կոլտնտեսականների ու գյուղական մտավորականության /61,5 տոկոս/, այն դեպքում երբ ԱրդեսՄԳ-ում այդ մասնաբաժինը կազմում էր 42,8 տոկոս: Պետք է հաշվի առնել նաև այն, որ պետական ու կուրպերատիվ ձեռնարկությունների կողմից կառուցված բնակավայրերի հիմնական մասը գործարկվել էր Շուշիում, որտեղ բնակչության գերակշռող հատվածը ադրբեջանցիներն էին» (Краткая социально-экономическая справка о НКАО (10 июня 1988г.) // Г. Авакян, Нагорный Карабах: отчёт фальсификаторам, Ер., «Авастан», 1991, с. 23-24).

67. *К. Б. Барбарян, Источники возникновения этнополитических конфликтов в Закавказье: диссертация канд. полит. наук // Московский гуманитарный университет, Москва, 2007.*

Պարաբայան Հակամարտության մեջ Ադրբեջանի և Ադրբեջանի Հանրապետության ներքին և արտաքին ազդեցիկի քաղաքական-իրավական ասպեկտները

Միխայիլ Աղաջանյան

Ներածություն

1988-1991թթ. հայկական բնակչության տոտալ էթնիկական զտումները և սորիդոլոգիայի Ադրբեջանի տարածքում և Ադրբեջանի Հանրապետության հաջորդող ջազմական ազդեցիկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ 1991-1994թթ. դարձավ Ադրբեջանի ուժային «պատասխանը» Արցախի¹ բնակչության սեփական պետականություն ստեղծելու ձգտումների դեմ:

Սորիդոլոգիայի Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող էթնիկական զտումների փոխաձևումը այդ ժամանակ նոր կազմավորված Ադրբեջանի Հանրապետության ռազմական ազդեցիկի, ընդդեմ այն ժամանակ գործող սորիդոլոգիայի օրենսդրության, ինչպես նաև ազգերի ինքնորոշման միջազգային իրավական նորմերին համապատասխան կազմավորված ԼՂՀ-ի դեմ, դարձավ Հարավային Կովկասում ադրբեջանական պետականությանը ներհատուկ հակահայկական ցեղասպանության քաղաքականության հենքի «բնական» մասնիկը:

Լինելով ժամանակակից միջազգային իրավունքով արգելված գործողություններ էթնիկական զտումները, ցեղասպանությունը, ազդեցիկ իրենց մեջ ներառում են քաղաքական կամխորոշման զգալի բաղադրիչ էլեմենտներով, էթնոազգային «բարդություններով» ազգերի և պետությունների «արդյունավետ» պայքարի զինանոցում, քանակապես ավելի քիչ ներկայացված այլ ազգերի և ազգությունների նկատմամբ, նոր կազմավորվող ազգային պետականության տարածքում առանց ազգային պետականության կառուցման փորձ ունենալու և առանց զարգացող ժողովրդավարական հասարակական-քաղաքական համակարգի ստեղծման հավակնությունների, որի շրջանակներում կապառուցված և կերտախավորվեն մարդու իրավունքների և ազատությունների զոհն էլենենտար կանոնները:

Գլուխ 1. Միջազգային իրավունքի կիրառելի նորմերը նախկին Ադրբեջանի հայ ժողովրդի նկատմամբ կիրառված ազդեցիկի ու ցեղասպանության հարցում

Պատերազմական գործողությունների անցնելու իրավունքը սահմանափակված էր 1919թ. Ազգերի Լիգայի կանոնադրությամբ, իսկ հետո նաև պատերազմը՝ «որպես ազգային քաղաքականության զենք», արգելվեց 1928թ. Փարիզի պայմանագրով՝ «Բրիտան Կելոգի պակտ», որը ստորագրվել էր այն ժամանակվա առաջատար պետությունների կողմից, և 1945թ. ՄԱԿ-ի կանոնադրությամբ Փարիզի պայմանագիրը ստորագրած պետությունները հատարաբեցին, որ դատապարտում են պատերազմը, որպես միջազգային վեճերի կարգավորման միջոց և հրաժարվում են նրանից, որպես ազգային քաղաքականության գործիք: ՄԱԿ-ի կանոնադրությունը արգելում է ուժի դիմել միջազգային հարաբերություններում, բացառությամբ

բյանք ստիպողական կոլեկտիվ գործողությունների և անհատական ու կոլեկտիվ օրինական ինքնապաշտպանության իրավունքի դեպքերի: Ուժի դիմելու և ուժով ահաբեկելու արգելքը միջազգային հարաբերություններում անիրագործելի կլինեն, եթե չտարբերակվեն ագրեսորը և զոհը: Ժամանակակից միջազգային իրավունքը այդպիսի տարբերակում անցկացնում է, և այն արտահայտվում է այնպիսի կատեգորիաներում, ինչպիսիք են «անհատական և կոլեկտիվ ինքնապաշտպանության օրինական իրավունքը», «ստիպողական բնույթի կոլեկտիվ միջոցառումների կիրառումը, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխի», «երրորդ պետությունների հետ հարաբերությունները», «ռազմական գործողություններից հետո տուգանքները»: Բացի դրանից, նախատեսվում է այն ամենաց երեսական հետապնդումը, ովքեր մասնակցել են ագրեսիվ պատերազմի նախապատրաստմանը, սանձազերծմանը և նրա ղեկավարմանը:

Միջազգային իրավունքի տեսկետից որպես անօրինական ակտ, ագրեսիան իր ետևից բերում է իրավական հետևանքներ, որոնց մեջ, բացի վերը նշվածներից, կարելի է հիշել համաձայնագրերի անվավերությունը, որոնք ստորագրվել են ուժի կիրառման կամ սպառնալիքի օգնությամբ «խտրական վերաբերմունքը» երրորդ պետությունների կողմից: Ոչ 1928թ. Փարիզի պայմանագիրը, ոչ էլ ՄԱԿ-ի կանոնադրությունը ագրեսիայի վերաբերյալ սահմանում են չեն պարունակում: Գոյություն ունի 1974թ. դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 3314 բանաձևը, որը հենց այդպես էլ անվանվում է «Ագրեսիայի սահմանում»: Տվյալ բանաձևի տեսքովից երևում է, որ «ագրեսիա» հասկացությունն ունի խիստ միջպետական բնույթ, իրենից ներկայացնում է «պետության կողմից ռազմական ուժի կիրառումը այլ պետության սուվերենության, տարածքային անձեռնմխելիության կամ էլ քաղաքական անկախության դեմ» (հոդված 1), և առկա պետք է լինի ռազմական ուժի կիրառման հերթականության չափանիշը (ՄԱԿ-ի կանոնադրության խախտմամբ պետության կողմից առաջինը ռազմական ուժի կիրառումը հանդիսանում է prima facie /«առաջին հայացքից» - լատ./, ագրեսիայի ակտի վկայություն (հոդված2): Բանաձևի հիշյալ հոդվածները պարունակում են ձևակերպումներ ագրեսիայի միջպետական հասկացության հնարավոր շեղումներից (հոդված 1-ում նշված է, որ տվյալ ձևակերպման մեջ «պետություն» տերմինը օգտագործվում է առանց ճանաչված լինելու կանխորոշման կամ արդյոք պետությունը ՄԱԿ-ի անդամ է), ինչպես նաև ուժի կիրառման առաջնահերթությունների պարտադիր լինելու հանգամանքը (բանաձևի հոդված 2-ում ասվում է, որ «Անվտանգության խորհուրդը կանոնադրության հետ համաձայնեցված կարող է որոշում կայացնել, որ եթե ագրեսիայի ակտն իրականացվել է, այն չպետք է արդարացվի այլ հանգամանքներում, ներառելով այն փաստը, որ համապատասխան ակտերը կամ նրանց հետևանքները բավարար լուրջ բնույթ չեն կրում):

Փորձագետները նշում են ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի թիվ 3314 /XXIX/ բանաձևի անբավարար համապատասխանությունը ագրեսիայի իրական սահմանմանը. «Եթե հաշվի չառնենք ազգային ազատագրական պատերազմները», ապա բանաձևն ըստ էության ուշադրության է արժանացրել տարբերակի տարրը ռազմական ուժի կիրառման պատճառը, ինչն անհամաձայնեցվել է իրական սահմանման հետ, բանի որ իրավական հետևանք ունեցող սահմանումը պետք է հիմնվի օբյեկտիվ և ստուգման ենթակա տարրերի վրա»³:

Պետության գործողություններում ագրեսիայի անկայության փաստին միջազգային-իրավական գնահատական տալու իրավասությունը բացառապես պատկանում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին: Գլխավոր Ասամբլեայի բանաձևը ՄԱԿ-ի անդամ-երկրների համար կրում է խորհրդատվական բնույթ, ուստի և «չկան իրավաբանական չափանիշեր և Անվտանգության խորհրդի որոշումը հանդիսանում է միայն քաղաքական ակտ»⁴:

Ազգային-ազատագրական պատերազմների ժամանակ, ժողովրդի կողմից սեփական պետականության ստեղծման օրինական իրավունքի իրականացման ժամանակ, կարող է մի իրավիճակ առաջանալ, երբ տվյալ իրավունքի իրականացումը հանդիպում է ուժային հակազդեցության փուլզման փուլում գտնվող պետական գոյացության կողմից: Ժողովրդի ժողովրդավարական կամքի արտահայտմանը խոչընդոտող նման գործողությունները, որը միտված է սեփական պետականության ստեղծմանը, կարելի է գնահատել որպես «նեքրին ագրեսիա», առավել ևս որ նման դիտարկման համար գոյություն ունեն բոլոր փաստացի հանգամանքները:

Աղբյուր՝ ՄԱԿ-ի ստեղծվել է 1920 թ. Ռուսաստանի բոլշևիկների ու բենալիստական ՖՆՐԵԿԻ-ի ջանքերով որպես բազմազգ պետական ձևավորում /նի կողմ թողնելով տվյալ պետական գոյացության պատմա-քաղաքական ու իրավական օրինականությունը/, որտեղ որպես պետականաստեղծ ազգեր էին հանդես գալիս թուրք-նախնդակները կամ կովկասյան քաղաքները /ներկայիս ադրբեջանցիները/ և հայերը /վերջիններս հանրապետության այլ ազգություններից միակն էին, որոնք Աղբյուր՝ ՄԱԿ-ի կազմում ստացան ինքնավարությունը: ԽՍՀՄ ընդհանուր փուլում Կազմում ժամանակաշրջանում, Ադրբեջանը ձեռնամուխ եղավ սեփական ազգային պետության կառուցմանը, որը դարձավ միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի անկախ սուբյեկտ:

Պրան նախորդող իրադարձությունները, որոնք ծավալվում էին ներկայիս Ադրբեջանի Դանրապետություն /ԱԴ/ տարածքում, սակայն որոնք դեռ ընթանում էին փաստացի և իրավաբանորեն /դե-ֆակտո և դե-յուրե/ այն ժամանակ գոյություն ունեցող միասնական ԽՍՀՄ-ում /1988-1990 թթ./, ակնհայտորեն ցույց տվեցին նորաստեղծ թուրք-ադրբեջանական պետականության ի դեմս Աղբյուր՝ ՄԱԿ պետականաստեղծ ազգերից մեկի /ադրբեջանցիների/ անկարողությունը անհետացող Աղբյուր՝ ՄԱԿ-ի մյուս պետականաստեղծ ազգի /հայերի/ հետ խաղաղ «բաժանման» և էթնիկ տարրաբաժանման հարցում: Նոր ստեղծվող ադրբեջանական պետականության ազգայնական-շովինիստական բնույթի քաղաքական ուժերը, որոնք այնուհետև ստանձնեցին Ադրբեջանի Դանրապետության իշխանական ղեկը, ստորում և անմիջականորեն իրագործում էին զանգվածային բնույթի բռնի գործողություններ հանրապետության հայ ժողովրդի ներկայացուցիչների նկատմամբ: Գլխավոր նպատակը հայկական պետականաստեղծ տարրի ֆիզիկական վերացումն էր նոր ստեղծվող ԱԴ-ի քաղաքական-իրավական տարածքից: Նեքրին ագրեսիան ուղղված էր բժկաբանակով և պետականաստեղծ ներուժով երկրորդ ազգի նկատման և իր դիտարկումը գտավ մտրդկության դեմ ամենածանր հանցանքներով ուղեկցվող զանգվածային բռնի տեղահանումներով, իսկ հայերի առավել պարիսակ ու քաղաքականապես զգալի բնակեցման տեղանքներում իրականացվեցին իշխանությունների կողմից իրաիրված և ծրագրավորված ցեղասպանության գործողություններ: Որևէ պետական գոյացության ներսում ցեղասպանության գործողությունների իրականացումը ցանկացած ազգային, էթնիկ, ռասսա-

յական կամ կրոնական խմբի նկատմամբ հանդիսանում է պետական իշխանության ազդեցիկության ակնառու նշան, որը դրսևորվում է «իր ներսում» դուրս չգալով իր սահմաններից: Բացի այս ամենը, եթե տվյալ գործողություններն իրականացվել են կոնկրետ ազգային խմբի նկատմամբ, որը տվյալ «ներքին ազդեցող-պետության» պետականաստեղծ ազգային միավոր է և հետապնդում է ստեղծվող քաղաքական անկախության պետական շրջանակներում «զոհ-ազգի» ֆիզիկական ոչնչացման կոնկրետ քաղաքական-իրավական նպատակ, ապա ակնհայտ է, որ ռազմատենչ ազգայնականության ազդեցիկ ուղղվածությունը պետք է հանգեցնի կամ «զոհ-ազգի» լիարժեք ֆիզիկական ոչնչացմանը կամ վերջինիս կողմից սեփական քաղաքական անկախության ստեղծմանը ազդեցող-պետության որոշակի հատվածում իր քաղաքական կարգավիճակի հետագա ինքնուրույն ընտրությամբ: Առանձին պետական գոյացության տեսքով սեփական քաղաքական անկախությունը կարող է ստեղծվել այնտեղ, որտեղ «զոհ-ազգն» արդեն ունեցել է իշխանության որոշակի, քն խորիրոգանշական պետական ատրիբուտներ /Լեոնային Դարաբաղի Ինքնավար Մարզում, ԼՂԻՄ/, որտեղ տվյալ ազգն իրեն անվտանգ է զգում, որն ապահովվում է միութենական հանրապետությունների և ընդհանրապես միջազգային հանրության կողմից, և որտեղ տվյալ ազգը կարող է կառուցել իր հետագա խաղաղ կյանքը կենսագործունեության բոլոր ոլորտներում ստեղծելով արդյուրակալետ, քաղաքականապես և սոցիալ-տնտեսապես կայացած ժողովրդավարական պետություն:

Հայերի նկատմամբ ցեղասպանության գործողությունները ԱդրբեյՃանում և ԱՀ տարածքներում⁵, որտեղ հայերը անհրաժեշտ նախապայմաններ չունեին «ներքին ազդեցիկայից» արդյունավետ պաշտպանվելու և ինքնուրոշման իրենց օրինական իրավունքի իրականացման համար, նախկին ԼՂԻՄ հայերին ակնհայտ անդադնելու հոյակապ ցույց տվեցին սեփական պետականության կառուցման անհրաժեշտությունը, որը միայն կարող էր ընդանց պաշտպանել ազդեցող-պետության այլ տարածքներում հայերի ճակատագրին արժանանալուց:

Ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է՝ այդ տերմինի իրավաբանական գիտակցմամբ: Ցեղասպանության նպատակների, իրականացման ու հետևանքների պատճառ-հետևանքային կապերի քաղաքական բաղկացուցիչը, բացի ամենը, վկայում է պետության կողմից ներքին ծրագրավորվածության ու ազդեցիկայի կոնկրետ նպատակներ հետապնդելու մասին, որը քրեական ծանր հանցագործությունների կատարմամբ, զանգվածային ու բռնի բնույթի էթնիկ գտումներ է իրագործում, թվաբանական ազգային փոքրամասն-ությունը պատկանող կոնկրետ անձանց նկատմամբ, որոնք միևնույն ժամանակ հանդիսանում են ազդեցող-պետության լիիրավ քաղաքացիներ, և որը կողմնում է բոլոր քաղաքական, քաղաքական և, աննակարևորը, իրավական հիմքերը խոչընդոտելու ցեղասպանության ենթարկվող անձանց կողմից ազդեցող-պետության «հասանելիության» սահմաններից դուրս, առանձին պետականության ստեղծման իրավունքն ու հնարավորությունը:

Ցեղասպանության հանցագործության կանխման և այն պատժելու 1948 թ. Կոնվենցիայի վերապահումների շուրջ, ՄԱԿ-ի Միջազգային Ղատարանի 1951 թ. մայիսի 28-ի Խորհրդատվական եզրակացության մեջ ուշադրություն է դարձված այդ Կոնվենցիայի հատուկ բնույթի վրա. «Ակնհայտ է, որ Կոնվենցիան ընդունվել է զուտ մարդասիրական ու քաղաքա-

կրթական նպատակով: Եվ իրականում, ղժվար է պատկերացնել մի կոնվենցիա, որում նման կրկնակի խնդիրը ավելի արտահայտված լինի, քանի որ դրա նպատակը մի կողմից հանդիսանում է մարդկանց որոշ խմբերի պատկանումը, իսկ մյուս կողմից մարդասիրության ամենատարակալան սկզբունքների հաստատումը՝ ու հավանությունը: Նման կոնվենցիայում պայմանավորվող կողմերի մոտ բացակայում է որևէ սեփական շահեր, նրանցից յուրաքանչյուրի մոտ առկա է ընդհանուր շահը, այն է կոնվենցիայի *raison d'être* հանդիսացող բարձրագույն նպատակների ձեռքբերումը»⁶:

Ավելի ուշ, 1970 թ. փետրվարի 5-ին, ՄԱԿ-ի Միջազգային Ղատարանը «Barcelona Traction» գործի հետ կապված իր որոշման մեջ նշել է. «Շատ կարևոր է տարբերակել միջազգային հանրության նկատմամբ պետության պարտավորությունների և այլ պետության նկատմամբ ծագած պարտավորությունների միջև: Իր էությանը առաջինը վերաբերվում է բոլոր պետություններին: Ուշադրության արժանացնելով համապատասխան իրավունքների կարևորությունը, կարելի է համարել, որ բոլոր պետությունները օրինական շահեր ունեն դրանք պաշտպանելու, և այդ պարտավորությունները հանդիսանում են *erga omnes* պարտավորությունները»: ժամանակակից միջազգային իրավունքի մեջ այդպիսի պարտավորությունները բխում են, օրինակ, ազդեցիկայի և ցեղասպանության գործողությունների արգելումից, ինչպես նաև մարդու անձի հիմնական իրավունքներին վերաբերվող սկզբունքներից ու նորմերից ներառյալ ստրկությունից և ռասայական խտրականությունից պաշտպանությունը»⁷:

Ցեղասպանության հանցագործության կանխման ու դրա համար պատժի կիրառման 1996 թ. հուլիսի 11-ի գործում /Նախնական հեղուկը/ ՄԱԿ-ի Միջազգային Ղատարանը նշել է. «...այդ Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքների միջազգային քաղաքակիրթ երկրների կողմից ճանաչվել են որպես պետությունների համար իրավաբանորեն պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ պայմանագրային պարտավորությունների... ինչպես ցեղասպանության դատապարտումը, այնպես էլ համագործակցությունը այդպիսի նողկալի արձեղից մարդկության ազատման շուրջ /Կոնվենցիայի նախաբան/ ունեն ունիվերսալ բնույթ»⁸:

Հայաստանի Հանրապետությունը որպես սեփական արտաքին քաղաքականության սուվերեն պետություն, միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, միջազգային հանրության լիիրավ անդամ, ունիվերսալ և տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների մասնակից, լիակիր իրավունք ունեւր անհատական ու կոլեկտիվ միջոցառումներ կիրառելու /այլ պետությունների հետ համագործակցությամբ/ Սորբեշանի կողմից հայ պետությունների հետ համագործակցության քաղաքականությունը կանխելու համար: ԱդրբեյՃան և ԱՀ-ի կողմից նախաձեռնված, հրահրված և իրականացվող նման քաղաքականության վերացումը, ամբողջությամբ համապատասխանում են գործող միջազգային իրավունքի նորմերին: Ցեղասպանության հանցագործության կանխման ու դրա համար պատժելու 1948 թ. Կոնվենցիայի 8-րդ հոդվածում սակավ է. «Տվյալ Կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից կարող է պահանջով դիմել Միացյալ Ազգերի համապատասխան մարմին, Միացյալ Ազգերի Կազմակերպության կանոնադրության դրույքներին համապատասխան, ցեղասպանության գործողությունների կանխարգելման ու կասեցման նպատակով ընդունելու իր տեսակետից

բոլոր անհրաժեշտ միջոցները...»: Իր հերթին ՄԱԿ-ի Կանոնադրությունը նորմ է պարունակում, որը նշում է ՄԱԿ-ի յուրաքանչյուր և բոլոր անդամների պարտավորությունը «ձեռնարկել ինքնուրույն և Կազմակերպության հետ համատեղ գործողություններ, մարդու բոլորի հիմնական ազատությունների իրավունքների համընդհանուր հարգման ու պահպանման ձեռքբերման համար /55-րդ և 56-րդ հոդվածներ/:

Ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է, որը խաթարում է քաղաքակիրթ աշխարհի մարդասիրական սկզբունքների հիմքերը: Որոշակի ազգության պատկանող անձանց նկատմամբ զանգվածային սպանություններով, բռնաբարություններով, առողջությունը վնասող գործողություններով ուղեկցվող էթնիկ գտումը, նրանց գույքի զանգվածային քայլանք ու ոչնչացումը ոչ այլ ինչ են, քան պետության կողմից իր ժողովրդի նկատմամբ իրականացվող ցեղասպանություն: Էթնիկ գտումը հետապնդում է կոնկրետ պետության տարածքից որոշակի ազգության պատկանող բոլոր անձանց ֆիզիկական ոչնչացման նպատակ: «Ցեղասպանություն իրականացնող պետությունը հանդես է գալիս ոչ միայն որպես միջազգային-իրավական նորմերը խախտող միջազգային իրավունքի սուբյեկտ և քաղաքական կազմակերպություն, որը հանդիսանում է ցեղասպանության արջուրն ու հրահրողը, նա հանդես է գալիս նաև որպես դրա անմիջական իրականացնողը: Ցեղասպանության որպես միջազգային հանցագործության իրականացման ղեկավարում, ի հայտ են գալիս ունիվերսալ իրավահարաբերություններ ոչ միայն տուժողի, այլ նաև միջազգային հանրության առջև: Խոսքը վերաբերվում է *ergo omnes* ունիվերսալ պարտավորությունների խախտմանը: Նման ղեկավարում միջազգային իրավունքի ցանկացած սուբյեկտ իրավախախտողից իրավունք ունի պահանջել հանցավոր գործողությունների դադարեցում և դրանց հետևանքների վերացում»¹⁰:

Հայտնի է Ցեղասպանության հանցագործության կանխման ու դրա համար պատժելու Կոնվենցիայի վերապահումների շուրջ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի 1951 թ. Խորհրդատվական եզրակացությունը, որում «Պատժողական պարզ և ոչ երկիմաստ նշում է, որ «սկզբունքները, որոնց վրա հիմնված է Կոնվենցիան, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված են որպես պարտադիր բոլոր պետությունների համար այռանց Կոնվենցիայի հետ կապակցման»¹¹: «ՄԱԿ-ի Միջազգային դատարանի եզրակացությունից հետևում է, որ ցեղասպանությունը իրենից այնպիսի հանցագործություն է ներկայացնում, որի կանխարգելումը, կասեցումը և որի համար պատժումը հանդիսացել է հանդիսանում են պարտադիր, աշխարհի ցանկացած պետության համար անկախ Կոնվենցիային նրանց մասնակցելուց կամ չմասնակցելուց, և անկախ նրանից, թե ցեղասպանությունը իրագործվել է մինչև Կոնվենցիայի ընդունումն ու ուժի մեջ մտնելը, թե դրանից հետո»¹²:

Միջազգային հանցագործությունները կասեցնելու համար պետությունների կողմից անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը պարտավորեցնող /հենց պարտավորեցնող, քանի որ միջազգային հանցագործությունների իրականացման իրավիճակում միջազգային հանրությունը կենսակենդանի առահարգված է միջազգայնորեն հանցագործ բնույթի գործողությունների շահա հայտնաբերման ու դրանց կասեցման մեջ, որոնք խաթարում են *ergo omnes* սկզբունքները/ ունիվերսալ միջազգային-իրավական նորմերի կարելի է նշել 1973 թ. Ապարտեիդի հանցագործության կասեցման ու դրա

համար պատժելու Միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածը. «Տվյալ Կոնվենցիայի մասնակից-պետությունները պարտավորվում են...ք/ իրենց արդարադատությանը համապատասխան ձեռնարկել օրենսդրական, դատական և վարչական միջոցներ այն անձանց հետապնդման, դատավարության ու պատժելու համար, որոնք պատասխանատվություն են կրում կամ մեղադրվում են ներկայիս Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված գործողությունների իրականացման համար»¹³ անկախ այն բանից գտնվում են արդյոք նրանց տվյալ պետության տարածքում, որտեղ կատարվել են այդ գործողությունները, թե հանդիսանում են այդ կամ որևէ այլ պետության քաղաքացի կամ ընդհանրապես չունեն որևէ քաղաքացիություն»:

Սեփական պետականությունը չունեցող ԼՂՀ ժողովրդի իրավունքի իրացումը խոչընդոտելու Արրեջանի ուժային քաղաքականության իրականացման ժամանակաշրջանում, Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում էր տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների ու համաձայնագրերի մասնակից /Օրինակ, ԵԱՀԽ/¹⁴, ուստի և կրում էր տարածաշրջանային անվտանգության ու խաղաղության պահպանման, սեփական ուժերով և այլ պետությունների հետ համագործակցությամբ /այդ բնույթ նաև նրանց հետ, որոնք օգտագործելով ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի դրույքը անհատական ու կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքի մասին, անմիջականորեն պաշտպանվում էին արտաքին ազդեցիկից/ սեփական պետության ստեղծմանն ուղղված ազգերի օրինական իրավունքի իրականացման դեմ ուղղված ազդեցիկի հանցավոր գործողությունների կասեցման ու վերացման պարտավորություններ:

Գլուխ 2. Նախկին Ադրբեջանական ԽՍՀ սահմաններով ՄԱԿ-ի կազմում Ադրբեջանի Հանրապետության ընդգրկման քաղաքական-իրավական գնահատականը

Պետության ներսում կոնկրետ ազգային փոքրամասնության նկատմամբ ցեղասպանության գործողությունների իրականացումը «դեպի ներս ուղղված» ազդեցիկի ակնհայտ նշան է: 1988-1990 թթ. Ադրբեյխանի ներքին ազդեցիկ, երբ հայերն աճեղջրությամբ դուրս մղվեցին այն տարածքներից, որոնք այնուհետև կազմեցին Ա՜Ն տարածքային հիմքը, իր արտաքին դրսևորումը գտավ արդեն 1991-1992 թթ, երբ ԼՂՀ այն ժողովուրդը այն ժամանակ Ա՜Ն տարածքային տակ եղած հարցակողական սպառազինության կիրառմամբ, ենթարկվեց լայնածավալ հարծակման: Սեփական հայ քաղաքացիների ստանձամբ ենթքին ազդեցիկն արդեն իրենց հայկական պետությունը նկատման ԼՂՀ հայերի դեմ ուղղված արտաքին ազդեցիկի վերածման միջազգային քաղաքական-իրավական բաղկացուցիչը, մատնանշում է հետևյալը. Ա՜Ն ՄԱԿ-ի կազմում ընդգրկվել է հռչակված ԼՂՀ-ի նկատմամբ իր արտաքին ազդեցիկի առավել ակտիվացման ժամանակաշրջանում:

Համաձայն 1945 թ. ՄԱԿ-ի Կանոնադրության 4-րդ հոդվածի. «Կազմակերպությանը անդամակցությունը բաց է բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք կտանձամբ տվյալ Կանոնադրության պարտավորությունները, և որոնք ըստ կազմակերպության դատողության, կարող են և ցանկանում են կատարել այդ պարտավորությունները»: 1992 թ. Ադրբեջանի նկատմամբ «խաղաղասեր» հատկանիշը բացակայում է,

քանի որ ՄԱԿ-ի կազմում ԱՅ-ի ընդդիմյան պահին /1992 թ մարտի 2/ առկա էր իրադարձությունների հետևյալ շարքը.

1. 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների հիման վրա, 1992 թ. հունվարի 6-ին ընդունվել է ԼՂՀ խորհրդարանի 3ռչակագիրը պետական անկախության մասին, իսկ նույն թվականի հունվարի 25-26-ին ԱՅ-ի պաշտպանության նախարար Թաթևադին Մեհտիկի գլխավորությամբ, տեղի է ունեցել ադրբեջանական ռազմական ստորաբաժանումների հարձակում Զարին Տակ գյուղի վրա.

2. 1992 թ. փետրվարի 19-ին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ-պետությունների ղեկավարներին ուղղված ԼՂՀ Գերագույն խորհրդի դիմումից հետո, որը կոչ էր անում միջոցներ ձեռնարկել ԼՂՀ-ի դեմ ԱՅ-ի զինված ագրեսիայի կասեցման ու հանրապետության խաղաղ բնակավայրերի հրթիռ-հրետամային ռմբակոծության կանխման ուղղությամբ, նույն թվականի փետրվարի 25-26-ին Բաքվում ներքաղաքական իրավիճակի խարխվման նպատակով Ադրբեջանի ժողովրդական ճակատի /ԱժԲ/ զինված ստորաբաժանումների կողմից կազմակերպվեց «խոջալուխ սադրանքը»: ԱժԲ-ի «խաղաղասեր ուժերը» կազմակերպեցին խոջալուխ սեփական բնակչության զնդակահարությունը, որպեսզի այդ սադրանքի հետևանքով իշխանությունից հեռացնել Ադրբեջանի նախագահ Ա. Մուսթաֆիդիլին, իրենք զան իշխանության և որպես Ադրբեջանի առաջատար քաղաքական ուժ, պետության շահերը ներկայացնեն ՄԱԿ-ում:

«խաղաղասիրությանը» ԱՅ-ն «հետամուտ լինելը» պահպանվեց նաև ՄԱԿ-ի կազմում ընդգրկվելուց հետո, 1992 թ. մարտի 26-ին ՄԱԿ-ը սահմանեց Ղարաբաղյան 3ակամարտության կարգավորմանը իր մասնակցության ձևը՝ ԵԱԶԽ-ին քաջակցության տեսքով, իսկ նույն տարվա ապրիլի 10-ին ադրբեջանական բանակը զրավեց Մարդակերտի շրջանի Մարաղա գյուղը և խաղաղ հայ բնակչության սպանող իրագործեց¹⁵:

«խաղաղասիրության» հատկանիշը, այսինքն գործող միջազգային իրավունքի *ius cogens*¹⁶ սկզբունքին հետամուտ լինելը, որը նշված է ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 3-րդ մասում¹⁷, հատուկ չէր ներկայիս ԱՅ-ին: 1991 թ. իր անկախության հռչակման պահից մինչև օրս ԱՅ-ն գործողություններ է իրականացնում, որոնք հակասության մեջ են գտնվում ՄԱԿ-ի Կանոնադրության նշված հոդվածով նախատեսված խաղաղասիրության և միջազգային իրավունքի սկզբունքներին հետամուտ լինելու հետ /հաջորդաբար դրանք էին: շրջափակումը և բաց ռազմական գործողությունների սկիզբը, հրադադարի պայմանավորվածությունների խախտումը, «սառը պատերազմի» սկիզբը, իրադարձի ուժիմի հաստատումից հետո՝ քճնամական բնույթի քարոզչության բոլոր միջոցների կիրառմանը, հրադադարի գծի ամբողջ երկայնքով իրավածության սրումը:

ՄԱԿ-ի Կանոնադրության 4-րդ հոդվածի համաձայն Միացյալ Ազգերում ճոր պետության անդամակցության հաջորդ չափանիշերը ևս 1992 թ. դրույթաբար բացակայում էին ԱՅ-ի նկատմամբ և հիմնականում շարունակում են բացակայել մինչև օրս /«...ստանձնում է ներկայիս Կանոնադրության մեջ պարունակվող պարտավորությունները և... կարող են ու զանգվածում են կատարել այդ պարտավորությունները»: Սյապե, մինչ օրս հիմնավորված կասկածներ են առաջացնում ԱՅ-ի կողմից ՄԱԿ-ի Կանոնադրության հետևյալ սկզբունքների ու նորմերի կատարման համար ստանձնած միջազգային պարտավորությունները.

ա/ 1. Պաշտպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը... և արդարության ու միջազգային սկզբունքների համաձայն խաղաղ միջոցներով իրագործել այն միջազգային վեճերի ու իրավիճակների լուծումը, որոնք կարող են հանգեցնել խաղաղության խաթարմանը.

2. Ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքների հիման վրա զարգացնել բարեկամական հարաբերությունները ազգերի միջև...».

3. Միջազգային համագործակցություն իրականացնել տնտեսական, սոցիալական, մշակութային և հումանիտար միջազգային հիմնախնդիրների լուծման և մարդու իրավունքների ու բոլորի հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի խրախուսման ու զարգացման հարցերում առանց ռասայական, սեռային, լեզվական ու կրոնական խտրականության» /հոդված 1-ին/.

բ/ «Միացյալ Ազգերի Կազմակերպության բոլոր Անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից և դրա կիրառումից» /2-րդ հոդվածի մաս 4-րդ/.

գ/ Կազմակերպության բոլոր Անդամները պարտավորվում են ձեռնարկել անհատական և Կազմակերպության հետ համագործակցված գործողություններ 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար»¹⁸ /54-րդ հոդված/:

Վերոնշյալից հետ կապված կարելի է համեմատություններ բերել 1920 թ. Ազգերի Լիգայի 5-րդ կոմիտեի եզրակացությունների և ՄԱԿ-ի կազմում նոր պետության ընդգրկման գործող չափանիշերի միջև: Այն ժամանակ Լիգայի կոմիտեն տարակուսամբ հայտնել Ադրբեջանի կողմից միջազգային պարտավորությունների ստանձնման հնարավորության ու կարողության և Ազգերի Լիգային անդամակցության երաշխիքների տրման հարցում: Ներկայիս ԱՅ-ն ավելի լավ վիճակում չէ: Որոշակի միջազգային-իրավական պարտավորությունների ստանձնման և, ամենակարևորը, դրանց կատարման տեսակետից, այն իր որոշ հարևան երկրների կողմից չի դիտարկվում որպես հուսալի պետություն: Այլ խոսքով, Ազգերի Լիգայի 5-րդ կոմիտեի փաստարկումները մինչև օրս պահպանել են իրեն արդիականությունը¹⁹:

Նախկին Ադրբեյջանի միլիտերական հանրապետություններից միակն էր, որը մինչև ԽՍՀՄ ձևավորումը գործող ու կնքված բազմակողմ միջազգային պայմանավորվածությունների համաձայն, իրավունք չուներ անկախություն ստանալ այն տարածքներում, որոնք 1921 թ. ներառվել էին նրա սահմանների մեջ /Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը/: 3ամաձայն արդեն փաստացի գործող 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի, Նախիջևանը ընդամենը տրված էր Ադրբեյջանի հոկտեմբերյանը այն երրորդ կողմին չփոխանցելու պայմանով: Կարսի պայմանագիրը ստորագրել էին Թուրքիան և խորհրդային Ռուսաստանի մասնակցությամբ երեք խորհրդային անդրկովկասյան համրապետությունները՝ Ադրբեջանական ԽՍՀ, 3այկական ԽՍՀ և Վրացական ԽՍՀ: Ինչ վերաբերվում է Լեռնային Ղարաբաղին, ապա այն խորհրդային Ադրբեջանին 1921 թ. փոխանցվել է երրորդ կողմի ի դեմս Կավբյուրդի կուսակցական մարմնի որոշմամբ: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղը դե-ֆակտո դուրս է բերվել Ադրբեյջանի ներակայությունից դեռ խորհրդային ժամանակաշրջանում /1989 թ./, երբ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից ԼԴԻՄ-ում մտցվեց այսպես կոչված «3ատուկ կառավարման ձևը»:

1989 թ. նոյեմբերին «Ղատուկ կառավարման ձևը» Լեռնային Ղարաբաղում վերացվեց, սակայն ԽՍՀՄ փլուզման պատճառով չհասցրեցին անցնել այլ կարգավիճակի, և Մոսկվային ուղղակի ենթակայությանը ԼՂԻՄ հատուկ կառավարումը դարձավ մարզի վերջին իրավական կարգավիճակը ընդհուպ մինչև ԼՂՀ կազմավորումը²⁰:

ԱրդիսՄՀ սահմաններով ԱՅ-ն ՄԱԿ-ին անդամակցության չափանիշերի սխալակամությունը կարելի է ցուցադրել նաև նախկին ԽՍՀՄ վարչական սահմանների վնասաբեր քաղաքական-իրավական մեկնաբանությունների օրինակով: Միջազգային իրավունքի ադրբեջանական մասնագետները հանդես են գալիս այն դիրքերից, որ «ժամանակակից միջազգային իրավունքում գոյություն ունի ընդհանուր սկզբունք, համաձայն որի հին վարչական սահմանները, որոնք գոյություն ունեին ինչպես նախկին գաղութների, այնպես էլ դաշնային միավորումների շրջանակներում, դառնում են միջազգային սահմաններ այն իրավիճակներում, որոնք կապված են քաղաքական բաժանման հետևանքով նորանկախ պետությունների ձևավորման հետ»²¹: Ընդ որում, ուշադրությունից վրիպում է այն, որ վարչական էին ոչ միայն միութենական հանրապետությունների միջև ընկած սահմանները, այլ որպես այդպիսին էին հանդես գալիս նաև միութենական հանրապետության կազմում ինքնավար կազմավորումների միջև սահմանները:

ԼՂՀ-ն կազմավորվեց իր սեփական սահմաններին շրջանակներում, որոնք կոչուր կապի մեջ չէին ԼՂԻՄ վարչական սահմանների հետ, քանի որ ԱՅ-ի արգելիչ գործողությունները ինչպես 1992 թ. ՄԱԿ-ին անդամակցության պահին, այնպես էլ մինչև հրադադարն ընկած հետագա տարիների և արդի շրջանի «սառը պատերազմի» փուլի ընթացքում, հիմքեր չեն տալիս այդ պետությանը վերաբերվելու որպես միջազգային-իրավական պարտավորություններ ստանձնող ու կատարող հուսալի գործընկերոջ²²: ԱՅ-ի նորմատիվ-իրավական գործողությունները²³, ԼՂՀ-ի դեմ նրա սկսած ռազմական գործողությունները, շարունակվող հակահայկական ագրեսիվ-քարոզչական արշավը և ԱՅ-ի զեղուգույն ղեկավարության պարտական հայտարարությունները, որոնք հակասում են գործող միջազգային իրավունքի ոգուն և հիմնական սկզբունքների քուվանդակությանը, ԼՂՀ-ին քաղաքական-իրավական հիմքեր տվեցին սեփական պետականության կազմավորման համար արդյունաձեռն անվտանգության ապահովման դիրքեր-ից նպատակահարմար սահմաններում:

Եթե 1923 թ. Ադրբեջանը կարող էր արհեստականորեն և անօրինական կերպով սահմանափակել Ղարաբաղի ինքնավարության տարածքային շրջանակները, իսկ 1991 թ. ընդհանրապես ձևակամորեն «լուծարել» Ղարաբաղի ինքնավարությունը և հրաժարվել ԱդրբեյՄՀ իրավական ժառանգությունից, ապա ԼՂՀ-ն և տարածքային հարցերում կարող է իրեն չսահմանափակել, իսկ միջազգային հանրությունը ՄԱԿ-ի կազմում ԱՅ-ին չի վերաբերվում որպես պետության նախկին ԱդրբեյՄՀ սահմաններում: Բացի այդ, չի կարելի նաև մոռանալ այն անձանց նկատմամբ արդարության վերականգնման մասին, որոնք առավելագույն տուժել են մինչև ԱՅ-ի ագրեսիան և դրա ընթացքում, որի հետևանքներ են Արևելյան Անդրկովկասի բնիկ հայ բնակչության երեկվ գտումները և բռնի տեղահանումները: Խուսքը գնում է գործնականում կես միլիոն հայ փախստականների մասին, որոնք հանդիսանում էին ԱդրբեյՄՀ նախկին քաղաքացիներ, և որոնք մինչ օրս հիմնականում գտնվում են անորոշ իրավական կարգա-

վիճակում և ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում: Մարդկանց այդ կատեգորիան ունի քոլոր իրավունքները նախկին ԱդրբեյՄՀ տարածքի որոշակի հատվածում բնակվելու համար, և հաշվի առնելով մի շարք գործոնները, այդ թվում նրանց հետագա բնակեցման անվտանգությունը, դա կարող է լինել Ղաշտային Ղարաբաղի տարածքը, որը Ադրբեջանի ռազմական ագրեսիայի արդյունքում գտնվում է ԼՂՀ իրավասության տակ:

Գլուխ 3. Ադրբեջանական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Չանրապետության հայ ժողովրդի դեմ Ադրբեջանի Չանրապետության ագրեսիայի միջազգային-իրավական պատասխանատվության իրացման հնարավոր մոտեցումները

Երկրային ԱՅ-ն չի հանդիսանում ԱդրբեյՄՀ իրավահաջորդը, ուստի և նա չի կարող քաջարձակ և որևէ հակափաստարկ չհանդուրժող իմաստով հավակնել նախկին խորհրդային Ադրբեջանի ամբողջ տարածքին: Քաղաքական-իրավական իմաստով որպես նման հակափաստարկ է հանդես գալիս ԼՂՀ «արդյունավետ հսկողությունը»/հաշվի առնելով 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի հիման վրա Չանրապետության տեղեկման փաստի իրավական անբերիությունը/ իր պատմական այն տարածքների նկատմամբ, որոնք նկատմամբ ոչ «1918-1920 թթ. նմուշ» Ադրբեջանի Ղեկավարական Չանրապետությունը ԱՂԳՂ, ոչ էլ «1990-2000-ական րվականների նմուշ» Ադրբեջանի Չանրապետությունը երբեք նման հսկողություն չեն իրականացրել, այնպես, ինչպես և չեն ունեցել օրինակաւորեն սահմանված ու միջազգային հանրության կողմից ճանաչված այն սահմանները, որոնք նկատմամբ ներկայումս հավակնություններ է ներկայացնում այժմյան Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը: Այս կապակցությամբ կարելի է նշել, որ Անդրկովկաս կատարած թուրքական ագրեսիայի արդյունքում 1918 թ. ձևավորված և քաղաքական քարտեզի վրա առաջին անգամ հայտնված ԱՅ-ն, իր հարևան քոլոր պետություններին անհիմն տարածքային պահանջներ ներկայացրեց սկսած Բաքվից մինչև Բաթում, որի առթիվ 1919 թ. Ազգերի Լիգա ներկայացրեց համապատասխան փաստաթուղթ: Սակայն Ազգերի Լիգան ԱՅ-ի այդ պահանջները համարեց անօրինական /ինչը և Լիգայի կողմից ԱՅ-ն դե-յուրե ճանաչելու հրաժարման հիմնական պատճառ հանդիսացավ/, և տվյալ պետությունը լրջե աշխարհի քարտեզը առանց միջազգայնորեն ճանաչված և լեգիտիմ սահմանների: 1991 թ. հռչակված ԱՅ-ն փաստորեն վերադարձավ 1918-1920 թթ. իրավական իրողությանը, դառնով իսկ դառնալով մի պետության իրավահաջորդը, որը չուներ միջազգայնորեն ճանաչված սահմաններ և համապատասխանաբար իրավունքներ ներկայումս ԼՂՀ իրավասության տակ գտնվող տարածքների նկատմամբ: Ավելին, նույնիսկ Ադրբեջանի անդամակցումը ՄԱԿ-ին, ԵԱԿ-ին և միջազգային այլ կազմակերպություններին /նմանատիպ ձևով նաև հետխորհրդային մնացած պետությունները/ ԽՍՀՄ միջազգային իրավասության կազմակերպության հիերարխիի հետևանք էր և չէր ենթադրում այդ կազմակերպությունների կողմից որևէ սահմանների կամ տարածքների ճանաչում, որոնք նկատմամբ այժմ պաշտոնական Բաթում փորձում է իրավունքներ ներկայացնել:

Միևնույն ժամանակ, հայ ժողովրդի երեկվ գտումները և բռնի տեղահանումները նախկին ԱդրբեյՄՀ-ում, իսկ հետագայում ԱՅ-ի ուղղակի ագրեսիան սեփական պետության կառուցման իր օրինական իրավունքը

իրականացնելու ձգտող ԼԳՅ ժողովրդի նկատմամբ, նույնպես հանգեցրին որոշակի իրավական ու քաղաքական հետևանքների:

Հայերի անրողությունը տեղահանման իրավական հետևանքները մի տարածքից, որի նկատմամբ ԱՀ-Գ այժմ իրականացնում է պետական-իրավական սուվերենությունը /ներքին ազդեցիկ/ և դրան հաջորդած միջազգային հունանիտար և ընդհանուր առմամբ միջազգային նորմերի խախտմամբ ԼԳՅ-ի դեմ ռազմական գործողությունների պատասխանող, նախապատրաստվող, ծավալում են ու իրականացումը /արտաքին ազդեցիկ/ ակնհայտորեն վկայում են ճշված հետևանքներից առավել տուժած անձանց օրինական իրավունքների առաջնահերթ վերականգնման անհրաժեշտության մասին: Արդյունքի ներքին ազդեցիկից տուժել են անձինք, որոնք այժմ գտնվում են անդրոշ իրավական, ծանր սոցիալ-տնտեսական դրության մեջ և զրկված են իրենց ունեցած իրավունքների ու ազատությունների պաշտպանության իրավական միջոցներից: Գտնվելով նախկին Ադրբեյժան տարածքի գոլթա, այնուամենայնիվ նրանք ունեն միջազգային սկզբունքների և նորմերի վրա հիմնված իրավունքներ, անվտանգ-զուլթան պայմաններում վերադառնալու նախկին բնակավայրերը իրենց հասցված նյութական վնասի հատուցմամբ, ինչպես նաև վերականգնելու իրենց անձնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավունքներն ու ազատությունները: Արդյունքի ներկայիս դիրքորոշման օբյեկտիվ իրականության հերթը, իր նախկին քաղաքացիների նկատմամբ ճշված բոլոր պայմանների ապահովմամբ վերադարձող հնարավոր է, իրականացվի և արդյունավետ բոլոր պարանետրերով /անվտանգություն, կարգավիճակի քաղաքական-իրավական վերականգնվելու իրավունք, պետության կողմից սոցիալ-տնտեսական աջակցություն և այլն/ միայն ԼԳՅ ներկայիս պետա-իրավական սուվերենության իրականացման տարածքներում: Այսպիսով, ԱՀ-ի ներկայիս սուվերենության մեջ ակնհայտ և արդյունավետ կունենա նյութական րովանդակություն տեղահանված հայերի տվյալ տարածքները վերադառնալու միջոցառումներին չխտընդդատելու, նախկին Ադրբեյժան տարածքները վերադարձող տվյալ անձանց նկատմամբ ազդեցիկ գործողությունները չվերակասելու և վերջինիս տարածքում բողոքված գույքի /որտեղ այդ անձանց կողմից բողոքվել է գործնականում ամբողջ անշարժ և շարժական սեփականությունը/ փոխատուցման երաշխիքների տրամադրման դեպքում:

Այնուհետև է ԱՀ-ի «փախույթ» միջազգային-իրավական պատասխանատվությունը, քանի որ նրանից միայն պահանջվում է վերադարձող անձանց ԼԳՅ իրավասության տակ գտնվող տարածքներում բնակվելու անվտանգության և նրանց որոշակի փոխհատուցում վճարելու երաշխիքների տրամադրում: Թեև ակնհայտ է, որ այդ անձանց վերադարձի կազմակերպման, իրականացման ու արդյունավետ ինտեգրման հարցերի կուժման ու դրանցից բխող պատասխանատվության հիմնական ծանրությունն ընկնելու է ԼԳՅ պետական մարմինների վրա: Տեղահանված անձանց իրավունքների վերականգնմանը, նրանց աղետալի սոցիալ-տնտեսական վիճակի հարթախարմանը, նյութական դրության բարելավմանը և նորմալ կենսագործունեության պայմանների ստեղծմանն ուղղված հարցերում ԱՀ իշխանությունների կողմից բացարձակ չունենալով որևէ նպաստող քայլ, ԼԳՅ իշխանությունները պետք է իրենց վրա վերցնեն տվյալ կատեգորիայի անձանց նկատմամբ շարունակվող անարդարության

վերացման հիմնական բեռը: Դա առավել ևս կարևոր է և օրինաչափ, քանի որ ամբողջ Արդյունքի տարածքում հայերի էթնիկ գտնվածքը սկսելու համար որպես ֆորմալ առիթ է հանդիսացել ԼԳՅ-ի հայերի շարժումը, իրենց ունեցած իրավունքների պաշտպանության համար: ԼԳՅ անվտանգության համար իրենց կյանքն ու ունեցածները զոհարեցրին Արդյունքի հազարավոր հայեր, ինչը այդ մարդկանց նկատմամբ ծանրակշիռ բարոյա-իրավական պարտավորություններ է դնում ԼԳՅ-ի վրա:

Ադրբեյժանի միջազգային-իրավական պատասխանատվությունը այդ միտքերնական հանրապետության տարածքում բնակվող հայերի նկատմամբ կատարած ներքին ազդեցիկի և ԱՀ-ի պատասխանատվությունը ԼԳՅ ժողովրդի նկատմամբ իրականացված արտաքին ազդեցիկի համար, վերջինիս բարի կամքով կարող է հանգեցվել հետևյալին. 1. ԱՀ-ի ներկայիս և հետագա իշխանությունների կողմից ցանկացած գործողությունների չվերականգնման, չիրականացման և չխտընդդատման երաշխիքների տրամադրումը, որոնք այսպես թե այնպես բացառում են նախկին Ադրբեյժանի հայ ժողովրդի սեփական ժողովրդավարական պետության ստեղծման իրավունքը, 2. վերաբնակվող անձանց վերադարձին, տեղաբաշխմանն ու ինտեգրմանը չխտընդդատել այն տարածքներում, որտեղ ԼԳՅ իշխանությունները պարտառտ են ստանձնել վերաբնակվողների կյանքի պայմանների բարելավումն ու հիմնական պատասխանատվությունը, 3. ԱՀ-ի կողմից առկա հնարավորությունների սահմաններում, պարտադիր կարգով նյութական միջոցների և ֆինանսական ռեսուրսների տրամադրումը վերադարձող անձանց բարելավության համար, ինչը կզմահատվի որպես իրողակի փոխհատուցող միջոց /նեպարացիայի²⁴ և ռեսուրսուցիայի²⁵ տեսքով/ Ադրբեյժան գոյության շրջանում, նրա տարածքից տեղահանված հայ բնակչության կողմից բողոքված ունեցվածքի դիմաց, որն այն ժամանակ ուներ Ադրբեյժանի հանրապետական քաղաքացիություն, և որը համապատասխանաբար, տեղահանման ենթարկված չլինելու պարագայում կարող էր ստանալ ԱՀ քաղաքացու կարգավիճակ, 4. քաղաքական-իրավական կարգավիճակի ընտրության հարցում վերադարձող բնակչության կամքի արտահայտմանը չխտընդդատել, որը նրան կկայուն է որոշակի փախույթից հետ /քաղաքացիության ընտրություն/, 5. հետագայում որևէ գործողությունների չիրագործումը, որոնք կարող են կասկածի տակ դնել ԼԳՅ պարտադիր ներգրավումը տարածաշրջանային բնույթի բոլոր քաղաքական, տնտեսական, սոցիալական, հումանիտար զարգացման հարցերում, ինչպես նաև ԼԳՅ և նրա բարեկամ երկրների մեկուսացմանն ուղղված գործողությունների անթույլատրելիությունը իրավախախտար, փոխառնակումն ու խաղաղ մասնակցությունից այնպիսի նախագծերում, որոնցում նրանք չափազանցված են և որոնցում առանց նրանց մասնակցության հնարավոր չէ ապահովել նախագծերի իրականացման արդյունավետության անհրաժեշտ մակարդակ, որ ոլորտում էլ դա լինի ռազմա-քաղաքական փոխգործակցությունից մինչև տնտեսական համագործակցությունը:

Նշված միջազգային-իրավական փափուկ օբյեկտիվացման նկատմամբ ԱՀ-ի անընկալունակության պարագայում, ԼԳՅ-ն կարող է իրեն ավելի կոշտ դիրքորոշման իրավունք վերապահել ընդհուպ մինչև Արդյունքի նկատմամբ յուրատեսակ ռեպրեսալիաները²⁶ հիմնվելով հետևյալ միջազգային քաղաքական-իրավական փաստարկման վրա:

ժամանակակից միջազգային իրավունքի մեջ տարածքի զիջման կարևոր տեսակ է հանդիսանում ագրեսիայի տարածքի մի հատվածի կորստի հետևանքով առաջացած տարածքային փոփոխությունը, եթե այդ տարածքը պարբերաբար օգտագործվել է որպես պլանցյարմ հարակից պետությունների վրա հարձակվելու համար: Ենթադրյալով, որ անհատական միջազգայնորեն դատապարտելի գործողությունների /ագրեսիայի/ համար, ինչպես նաև որպես վերջիններիս կրկնման դեմ ուղղված միջոց: Միջազգային-իրավական պրակտիկայում նման փոփոխությունը կոչվում է արյունղիկացիա, արբիտրաժի կամ միջազգային դատարանի որոշմամբ առանձնաբերված տարածք: Արյունղիկացիան հանդիսանում է տարածքի ձեռքբերման օրինական եղանակ, թեև որ երբեք և, որ պետությունների ունեն բավարար իրավական հիմքեր նման վիճարկելի տարածքների տնօրինման համար²⁷: Որպես արյունղիկացիայի պատմա-իրավական վառ նախադեպ է ծառայում հակահիտլերյան կալիցիայի երկրների որոշումը, երբ 1945 թ. Պոտսդամի հռչակագրի հիման վրա լուծարվեց ֆաշիստական գերմանիայի նախկին տարածքը Արևելյան Պրուսիան, որպեսզի «այն երբեք չպաշտեն իր հարևաններին»²⁸: Դրանով իսկ ագրեսիո-պետության պատասխանատվությունը, ըստ արդի միջազգային իրավունքի, ագրեսիո-րի նկատմամբ ներառում է նաև այնպիսի միջոցներ, որոնք մասնակրպապես կարող են արտահայտվել նրա տարածքի մի հատվածի տարածմամբ՝ ավազայում ագրեսիայի կամխարգվածան նպատակով: Աղբյուրային պարագայում արյունղիկացիա հասկանալուց զործում է իր ոչ լիարժեք միջազգային-իրավական իմաստով, քանի որ ԱՂ-ն չի հանդիսանում է Աղբյուրային իրավահարգողը և չի կարող հավակնություն ունենալ նրա անբողջ տարածքի, այդ թվում նաև այն շրջանների նկատմամբ, որոնք Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ ագրեսիայի ընթացքում ակտիվորեն օգտագործվում էին, և որոնց վրա այժմ տարածվում է ԼՂԴ իրավասությունը:

1. Լեռնային Ղարաբաղի Դանդապետության երկրորդ պետական անվանումն է Արցախը:
2. «Ներկայիս սահմանման մեջ ոչինչ...չի կարող որևէ կերպ վնասել Կանոնադրությունից /ԱՄԿ-ի հեղ. ծանոթ./ բխող ժողովուրդների ինքնորոշման, ազատության և անկախության իրավունքին, որոնք բռնի կերպով զրկված են այդ իրավունքից...» /Իրանձի 7-րդ հոդված/:
3. *Փ. Բյուտոն*, *Справедливая война, агрессивная война и международное гуманитарное право // Международный журнал Красного Креста. Сборник статей*, 2002, с. 219.
4. *Փ. Բյուտոն*, *Указ. соч.*, с. 220.
5. ԱՄԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի «Ցեղասպանության կանխումը» բանաձևում, որն ընդունվել է 2008 թ. մարտին հունիսի 7-րդ նստաշրջանում, նշված է. «Գանձակցած պետություն պատասխանատվություն է կրում ցեղասպանությունից իր բնակչությանը պաշտպանելու համար, իսկ դա ենթադրում է համապատասխան և անհրաժեշտ միջոցների կիրառումով նման հանցագործությունը կանխում, այդ թվում նաև կրահրումը» /Փաստաթուղթ A/HRC/7/L.11/Add.1, 28 March 2008/:
6. Reservations to the Convention on Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion, ICJ Reports 1951, p.23.
7. Բաագհորին «բլուրի նկատմամբ»: Իրավական սկզբունք է, որը նշում է որևէ նորմի բնույթը որպես իրավունքի բլուրի սուբյեկտների նկատմամբ համընդհանուր պարտադիր և իրավասահմանող:
8. *Barcelona Traction, Light and Power Company Limited (Belgium v. Spain)*, p. 32 para. 33.

9. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, p. 616, para. 31.
10. *Н.В. Моисеевская*, Проблемы ответственности за геноцид, www.genocide.ru, 19.09.2004.
11. Reserves a la Convention sur le genocide. Avis consultative. C. I. J. Recueil., 1951, p.15.
12. *И. Барсегое*, Геноцид армян – преступление против человечества (о правомерности термина и юридической квалификации). Ереван, 1990, с. 11.
13. Այս հոդվածում նշված կոնկրետ գործողությունների շարքում կարելի է նշել հետևյալները. ա/ ռասայական խմբի կամ խմբերի անդամի կամ անդամների կամ և ազատության իրավունքի զրկումը, բ/ ռասայական խմբի կամ խմբերի համար այնպիսի կենսական պայմանների կամխարգված տեսիլներ, որոնք հաշվարկված են որանց մասնակի կամ լրիվ ֆիզիկական ոչնչացմանը, գ/ օրինակողական և այլ բնույթի ցանկացած միջոցներ, որոնք հաշվարկված են այն բանի համար, որպեսզի խոչընդոտեն ռասայական խմբի կամ խմբերի մասնակցությունը երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքին:
14. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1965 թ. ընդունված Միջազգային կոնվենցիան Ռասայական խտրականության բոլոր մեծի վերացման մասին սահմանում է «ռասայական խտրականությունը նշանակում է ցանկացած տարբերակումը, քաջատուրը, սահմանափակումը կամ նախապատվությունը, որը հիմնված է ազգային կամ երեկ ծագման հատկանիշի վրա, որ նպատակը կամ հետևանքն է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ ոլորտում իրավահավասար սկզբունքներով մարդու իրավունքների ու ազատությունների ճանաչման, օգտագործման կամ իրականացման ոչնյաջումը կամ նսնծադրումը» /Կոնվենցիայի 1-ին հոդված/:
14. 1995 թ. հունվարի 1-ից ենՄԿ:
15. Մարաղ գյուղում տեղի ունեցած որբերգությունից մասին մանրամասն տես *Cox C. Eibner J. Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabakh*. London: Institute for Religious Minorities in the Islamic World, 1993.
16. Բոլոր պետությունների համար համընդհանուր պարտադիր բնույթի իմանքատիվ միջազգային-իրավական նորը միջազգային իրավունքի հիմնական սկզբունք է:
17. «Միջազգայ Ազգերի Կազմակերպության բոլոր Անդամները իրենց միջազգային վեճերը լուծում են խաղաղ եղանակներով այնպես, որպեսզի սպառնալիքի տակ չդնեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունը և արդարությունը»:
18. «Ազգերի միջև խաղաղ և բարեկամական հարաբերությունների համար անհրաժեշտ կայունության և բարեկեցության պայմանների ստեղծման նպատակով, որոնք հիմնված են ժողովուրդների ինքնորոշման ու իրավահավասարության սկզբունքների հարգման վրա, ՄԱԿ-ն աջակցում է. ա/ կենսամակարդակի բարձրացմանը, բնակչության լիարժեք զբաղվածությանը և սոցիալական և տնտեսական զարգացման ու առաջընթացի պայմաններին, բ/ միջազգային հիմնախնդիրների լուծմանը տնտեսական և սոցիալական ոլորտներում...միջազգային համագործակցությանը մշակույթի և կրթության ոլորտներում, գ/ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համընդհանուր պահպանմանն ու հարգմանը առանց ռասայական, սեռային, լեզվական և կրոնական տարբերության»:
19. «Աղբյուրանը պետական սահմանների հարցի շուրջ բազմաթիվ հիմնախնդիրներ ունի հարևան պետությունների հետ». *League of Nations. Journal No 17 of the First Assembly, Geneva 1920*, p. 139.
20. *A. Манасян*, Карабахский конфликт: территориальные аспекты проблемы в её информационном образе // Освобожденная территория Армении и урегулирование Карабахского конфликта (под ред. А. Айвазяна), Ереван, 2006, с. 72-74.

21. Т. Мусав, Правовые рамки урегулирования вопросов территориальной и границ на примере территориальных притязаний Армении к Азербайджану // Центральная Азия и Кавказ, 2003, №2 (26), с. 48.

22. Որպես հաստատում ԱՊ-ի միանշանակ ուժային քաղաքականության ուղղված ԱՂԶ ժողովրդի կողմից սեփական պետության ստեղծման խոչընդոտմանը, որպես 1992-1994 թթ դեպքերի զննատական, մեջ բերենք Ղարաբաղյան Հանրապետության զարգացման գործընթացին տեղյակ և չեզոք անձնավորության Վ. Կազիմիրովի տեսակետը /ՄԳ արտակարգ և լիազոր դեսպան, 1996 թ. Ռուսաստանի կողմից համաձայնագահ/, «1. Աղբյուրների ղեկավարությունը /թե Ա. Էլչիրին, և թե Գ. Սլիկի օրոք/ գլխավոր շնչոը դնում էր ուժային լուծման, այլ ոչ թե անվտանգությունների վրա, 2. Բացում ԱՎԿ-ի Սեփականություն հարցի չորս բանաձևերի առաջին և բազմակի խախտողն էր, որոնք ընդունվել էին բուն մարտական գործողությունների ընթացքում /1993 թ. ապրիլ-նոյեմբեր/: Ակաժան անձնավարտը և առանցքայինից կրակի, ռազմական գործողությունների և թշնամական ակտերի անմիջապես դադարեցումից, 3. Աղբյուրները Ղարաբաղյան Հանրապետության լուծման ուժային մոտեցման հիմնական կողմն էր... Աղբյուրների համառ պնդումները ԱՎԿ Ան-ի բանաձևերի կատարման կարևորություն մասին /հիարեն, միայն գրավյալ տարածքներից դադարադադան ուժերի դուրս բերման մասով/ մեզ ստիպում են անդրադառնալ ու նայել, թե ինչպես էր ընթանում այդ պարտադիր որոշումների կատարումը: Հատկապես այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին կրակի և մարտական գործողությունների դադարեցումն է, այլ պահանջների իրականացումը կախված էր ևս նրանից: Մենք մշտապես դատապարտել ենք զավթումները, սելուպացիայի նոր գոտիների առաջացումը, սակայն ռազմական գործողություններն ըստ էության հիշ են դրանով: Իսկ առանց դրանց դադարեցման զավթիչ ուժերի դուրս բերումը գրեթե իրականացելի չէ: Ժամանակագրությունից երևում է, որ ԱՎԿ-ի Ան-ի բանաձևերից հետո Բաքուն բազմիցս էլ հեռացել ռազմական գործողությունների ասիմանափակումից և դադարեցումից, խախտել է հրադադարի պայմանավորվածությունները, որոնք մեջ էին բերվել Ռուսաստանի միջնորդությամբ: Բոլոր չորս բանաձևերի առկայության պարագայում, Բաքուն 4 անգամ չզնայ հրադադարի /1993 թ. դեկտեմբեր, 1994 թ. փետրվար և մարտ/: Ի դեպ, հենց նույն 1993 թ. դեկտեմբերին, Բաքուն ուժերի լարումով անցավ խոչընդոտման, որը նրան ավելի շատ կորուստներ բերեց, քան հաջողություններ: Այսինքն, ԱՎԿ Ան-ի բանաձևերը վկայակոչող Աղբյուրներն ինքն էր առաջինը խախտում դրանց պահանջները և որևէ մեկը չէր իրագործում տասացիորեն ոչ մեկը: Արդեն սովորական է դարձել հարցումը, կարո՞ղ է դա թե ոչ, կարո՞ղ էր դա հետևանքներ ունենալ: Ի դեպ, անտանելի իրավիճակ էր ստեղծվել նաև Սեփականության խորհրդի համար և 1993 թ. նոյեմբերից նա դադարեց որոշումներ կայացնել Ղարաբաղի հարցի շուրջ: Բաքուն մարտական գործողությունների դադարեցմանը դիմում էր միայն ժամանակ շահելու, շունչ քաշելու, ուժեր վերադասավորելու համար /մեկ անգամ 1993 թ. հոկտեմբերի 3-ի նախագահական ընտրությունների համար/: Ուժի կիրառումը հնարավոր չէ արդարացնել, սակայն այն ունի բացատրություն, նոր պետության մեջ իրավիճակի անկայունությունը շատ բանով բացատրվում էր նաև անհաջողություններով Ղարաբաղյան Հանրապետության մեջ: Հինավուրց ավանդույթներ չունեցող պետականության կայացումը զավթիչ և ջրածուրումներով էր ընթանում քաղաքական ու կատարված փորձ չունեցող անձանց զուխներում անտեղի գործողության պայմաններում» (В.Казмиров, Кто искал силового решения в Карабахе?, www.regnum.ru, 18.01.2005).

23. 1991 թ. հոկտեմբերի 18-ի «Աղբյուրների Հանրապետության պետական անկախության մասին» Սահմանադրական ակտը, 1991 թ. նոյեմբերի 26-ի ԱՊ-ի Օրենքը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Արտոգ վերացման մասին»:

24. Ռեպարացիան /ուս. reparatio – վերականգնում/ խաղող պայմանագրի կամ միջազգային այլ ակտերի հիման վրա պետության կողմից վնասի հատուցումն է, որը հասցվել է հարձակման ենթարկված պետությանը /պետությունների/:

Ռեպարացիայի ծավալը և բնույթը սահմանվում են հասցված նյութական վնասի համապատասխան իրաժամանություն կատարված կարողությամբ:

Արտակարգ ռեպարացիաների նպատակը կայանում է ոչ միայն նյութական վնասի հատուցման մեջ այլ նաև նրանում, որպեսզի բացառվեն ագրեսիայի կամ այլ անարարության հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնները:

Ռեպարացիաները կարող են հանդես գալ նաև պետությունների տեսքով:

25. Ռեստիտուցիա – մի դրության վերականգնումը, որը գոյություն ունի մինչև իրավախախտումը: Ռեստիտուցիան կատարվում է արտադրական անօրինական ակտությունից պետությունների կատարմանը: «Պատասխանատվության մասին»

26. Ռեպրեսալիաները կարող են հանդես գալ նաև պետությունների կողմից: Ռեպրեսալիաները կատարվում են իրավունք ունի միջազգային իրավախախտում կատարած պետությունից ստանալ վնասի փոխհատուցում, որը հասցված է այնպիսի գործողությանը, երբ վնասը չի փոխհատուցում, որը հասցված է պետությանը: Ըստ «Պատասխանատվության մասին» 44-րդ հոդվածի, փոխհատուցումը ներառում է իրավունք ունի միջազգային իրավունքով զննատելի վնասը, որը կրել է տուժած պետությունը, և կարող է ընդգրկել տոկոսներն ու բաց բողոքում շահույթը: Փոխհատուցումը նշանակում է փողի վճարման տեսքով ռեպարացիա որպես հասցված վնասի փոխհատուցում:

26. Ռեպրեսալիաներ /լատ. reprehendo – պահում են, կասեցնում են/, հարկադիր միջոց է, որը անհամափակում է միջազգային իրավունքով պաշտպանվող այլ պետության իրավունքները ի պատասխան իրավախախտմանը: Իրենց անօրինակացնում է որևէ պետության կողմից այլ պետության անօրինական գործողություններին ի պատասխան անհատական պատժամիջոցների կիրառում վերջինիս ստիպելով փոխհատուցումներն ապագայում:

Կանխել իրավախախտումներն ապագայում:

27. Большой юридический словарь (под ред. А.Я. Сухарева, В.Е. Крутеких, М., 2002.

28. Тегеран – Ялта – Потсдам. Сборник документов, М., 1971, с. 386.

Ղարաբաղյան հակամարտության ռազմական փուլը և հումանիտար հետևանքները: Քաղաքական և իրավական ասպեկտները

Միխայիլ Աղաբալյան

Ներածություն

1990 թ. սկզբից շոշափելի դարձավ Ղարաբաղյան Հակամարտության սրժան անխուսափելիությունը: Հակամարտության սրժան և կողմերի բազմախոս ռազմական առճակատման բաղադրիչների աստիճանական ծավալումը հանգեցրեցին երկկողմանի «Էթնիկ զուտմաների»: Կարելի է խոսել այն մասին, որ Հայկական խՍՀ-ից /ՀԽՍՀ/ արդրեջանական բնակչության դուրս մղումը, ի տարբերություն Ադրբեջանական խՍՀ-ից /ԱՄՍՀ/ հայկական բնակչության արտաքսման, չէր ուղեկցվում մարդու իրավունքների զանգվածային և կոպիտ խախտումներով: ՀԽՍՀ տարածքում ադրբեջանական բնակչության նկատմամբ չիրականացվեցին ցեղասպանության բնույթի ակտեր, ի տարբերություն ԱՄՍՀ-ում բնակվող հայկական բնակչության նկատմամբ կատարված ցեղասպանության ակտերի: Մեր տեսանկյունից կարևոր է ընդգծել, որ չնայած Էթնոքարտրական հակամարտության կողմերի՝ միութենական երկու հանրապետությունների տարածքներում «հակադիր» էթնոսի ներկայացուցիչների նկատմամբ մարդու իրավունքների կոպիտ խախտումների ինտենսիվության և զանգվածայնության տարբերությանը, հակամարտության հայկական և ադրբեջանական կողմերում դրանք մեծ մասամբ ունեցան միևնույն արդյունքները՝ քաղաքացիական բնակչության պաշտպանության միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտում, ինչպես նաև մարտական գործողությունների հետևանքով ի հայտ եկան բազմաթիվ փախստականներ և ներքին տեղաշարժված անձինք:

«Էթնիկ զտման» գործողությունների կտրվածքով, հատկապես ցայտուն է արտահայտվում էթնոսի իրավունքների զանգվածային խախտումների կոլեկտիվ ելությունը, չնայած այն դրսևորվում է նաև անհատական մակարդակով: «Էթնիկ զտման» են ենթարկվում նաև առանձին անհատներ, սակայն նրանք դրան ենթարկվում են հատկապես որոշակի էթնիկական խմբի կամ միավորմանը պատկանելու հիմքի վրա: Ադրբեջանական խՍՀ-ում հատկապես այստեղ բնակվող հայ ժողովրդի նկատմամբ մեծան գործողությունները կանոն դարձան կողմերի էթնոքաղաքական հակամարտության հենց սկզբից՝ 1988 թվականից:

Ըստ հակամարտության գոտում ԵՄԱԽ առաքելության Չեկոյցի եզրափակիչ մասի, որը հրապարակվեց կողմերի՝ էթնոքաղաքական հակամարտության բացահայտ զինված առճակատման վերջնականապես ակնհայտ դառնալու պահին (1992 թ.)՝ առաջին ամիսներին՝. «առճակատումը Լեռնային Ղարաբաղում զտնվում է ճգնաժամային փուլում: Ծակառամարտերն ավելի ինտենսիվ են դառնում ինչպես բուն տարածաշրջանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս գեների հասանելիության պատճառով: Ամենուրեք փախստականների հոսքեր են, որոնցից շատերը ուժեղացված հումանիտար օգնության կարիք ունեն: Հակամարտության երկու կողմերից խախտվել են մարդու հիմնական իրավունքները, ներառյալ փոքրամասնության

իրավունքները, երկու կողմերում էլ ընտանիքները ի վիճակի չէին տեղեկանալ իրենց ազգականների ճակատագրի մասին: Առճակատման արդյունքներ, որոնք զգալի էին տարածաշրջանում, պատճառ հանդիսացան ողջ տարածքում փախստականների հոսքերի...»:

Ուժային հակամարտության առանձին օջախներն աստիճանաբար միասնացվեցին ընդհանուր ռազմաճակատի մեջ, և Ղարաբաղյան Հակամարտությունը վերածեց իսկական պատերազմի: Չանգվածաբար օգտագործվում էր ժամանակակից ծանր սպառազինությունը, ներառյալ տանկեր և այլ զրահատեխնիկա, հրետանային հանազարկային կրակի հրթիռային կայանքներ, ռմբակոծիչ ավիացիա: Իրականացվում էին մասշտաբային հարձակողական օպերացիաներ, գրավվում էին ընդարձակ տարածքներ, մարտերը տարածվում էին Լեռնային Ղարաբաղի սահմաններից հեռու, մոտենում էին այլ երկրների սահմաններին, հասնելով հակամարտության միջազգայնացման վտանգավոր եզրին²:

Փուլի 1. Ղարաբաղյան Հակամարտության ռազմա կան փուլը (1991-1994 թթ.)

Ղարաբաղյան Հակամարտության ռազմական փուլը շոշափեց միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտումների մի հսկայական շերտ, որը պարունակում էր զինված հակամարտությունների կարգավորման միջազգային իրավական նորմեր՝ էլեմելով հումանիտար սկզբունքից (միջազգային-իրավական կարգավորման առարկայի ճշտման համար «միջազգային հումանիտար իրավունք» հասկացությանը երբեմն ավելացվում է «զինված առճակատումների ընթացքում կիրառվող» բառակապակցությունը): Միջազգային հումանիտար օգնությունը, որը կիրառվում է զինված առճակատումների ժամանակ, պարունակում է միջազգային իրավունքի նորմերի ամբողջություն, որոնք նպատակն է զինված առճակատումների զոհերի պաշտպանությունը:

Միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտումները Ղարաբաղյան Հակամարտության ընթացքում հատկապես բացահայտ բնույթ էին կրում ադրբեջանական կողմի գործողություններում: Ադրբեջանի զինված ուժերը մարտական գործողությունների գոտում հատկապես խախտում էին քաղաքացիական բնակչության պաշտպանության միջազգային նորմերը: Միջազգային հումանիտար իրավունքի այս ոլորտում խախտումների տեսակներից մեկը, որն առավելագույն տարածուն ստացավ զինված առճակատման 1991 թ. վերջից մինչև 1994 թ. մայիսն ընկած ժամանակաշրջանում, ադրբեջանական ռազմական ու կիսառազմական միավորումների կողմից խաղաղ քաղաքացիական բնակչության վայրերում մարտական գործողությունների ընթացքում ոչ ընտրանքային մեթոդների և միջոցների կիրառումն էր:

ԱՄԿ-ի Միջազգային Դատարանը իր հորիորատվական եզրակացություններից մեկում հումանիտար իրավունքի որոշ «զխխվող սկզբունքներ» սահմանեց որպես տվորական: Դրանք ներառում են նպատակների տարբերակման սկզբունքը և այն զենքի արգելումը, որի կիրառումն ժամանակ հնարավոր չէ տարբերակում զենք քաղաքացիական և ռազմական օբյեկտ-

ների միջև, կոմբատանտներին³ չափից դուրս տառապանքներ պատճառելու արգելքը, ինչպես նաև այնպիսի զենքի կիրառման արգելքը, որը առաջ է բերում նման տառապանքներ կամ հանգեցնում է այդպիսի տառապանքների անօգուտ խորացմանը: Այդ սկզբունքներն ամրագրված են 1949 թ. օգոստոսի 12-ի ժնկյան կոնվենցիաների I Լրացուցիչ արձանագրությամբ, (ժնկյան կոնվենցիաների՝ 1977թ. հունիսի 10-ի Լրացուցիչ արձանագրություն, որը վերաբերվում է միջազգային զինված առճակատումների զոհերի պաշտպանությանը), որի մի շարք դրույթներ վերաբերվում են պատերազմի վարման միջոցներին և մեթոդներին⁴: Լրացուցիչ արձանագրության 35 հոդվածը նշում է, որ «զինված առճակատման մեջ պատերազմի վարման մեթոդների և միջոցների՝ կողմերի ընտրության իրավունքները անսահմանափակ չեն հանդիսանում»: Նշված հոդվածն արգելում է «կիրառել զենք, արկեր, նյութեր և ռազմական գործողության մեթոդներ, որոնք ընդունակ են պատճառել ավելորդ վնասվածքներ կամ ավելորդ տառապանքներ», «կիրառել ռազմական գործողությունների վարման մեթոդներ և միջոցներ, որոնք նպատակ ունեն պատճառել, կամ վարելի է սպասել, որ կպատճառեն խոշոր, երկարաժամկետ և լուրջ վնաս բնական միջավայրին» (համապատասխան բաժին 2 և 3):

Թիվ I Լրացուցիչ արձանագրության 51 հոդվածը արգելում է կիրառել ռազմական գործողությունների վարման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք առանց տարբերության խոցում են ռազմական օբյեկտները և քաղաքացիական անձանց: Միջազգային հումանիտար իրավունքի մասնագետների մեջ կարելի է ընդունված համարել հետևյալ դրույթը. «Եթե գնահատվող զենքի տեսակը, պատերազմի վարման միջոցը կամ մեթոդը չի ընկնում պայանագրային նորմերի կամ սովորական իրավունքի կոնկրետ արգելքի տակ, պետությունը պետ է որոշի, արդյոք նրանք համապատասխանում են I Լրացուցիչ արձանագրության 35 հոդվածի 2-րդ մասում պարունակվող արգելքի վերաբերյալ Միջազգային Պատարանը եկավ հետևյալ եզրակացությանը. ավելորդ տառապանքը՝ դա «ավելի մեծ վնաս պատճառել է, քան այն, որն անխուսափելի է օրինական ռազմական նպատակներին հասնելու համար»⁵: Այլ կերպ ասած, պետք է հավասարակշռություն հաստատել ռազմական անհրաժեշտության և այն վնասի միջև, որը պատճառում է զենքը, որպեսզի վերջինս չափից դուրս չլինի այդ ռազմական անհրաժեշտության համեմատությամբ⁶:

Մի բանի ամիս առաջ մինչև այն, երբ ՄԱԿ-ի Միջազգային Պատարանը կայացրեց «Միջուկային զենքով սպառնալու կամ նրա կիրառման օրինականությունը» խորհրդատվական եզրակացությունը, նախկին Չարավսլավիայի հարցերով Միջազգային տրիբունալը եկավ եզրակացության, որ «Լորդը, որը նախատեսում է, որ քաղաքացիական քնակչությունը և առանձին քաղաքացիական անձինք չպետք է դառնան հարձակման

օբյեկտ, հանդիսանում է միջազգային հումանիտար օրենքի հիմնական նորմ, որը կիրառվում է բոլոր զինված առճակատումների մեջ»⁸:

Միջազգային հումանիտար օրենքի նորմերին համապատասխան քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների վրա հարձակման արգելումը ներառում է բռնության բոլոր ակտերի արգելքը, անկախ նրանից, քե դրանք իրականացվում են հարձակման, քե պաշտպանության նպատակներով: Արգելվում են նաև հարձակումները կամ բռնության սպառնալիքները, որոնք նպատակ ունեն անարելել քաղաքացիական քնակչությանը⁹: Քաղաքացիական քնակչության կամ առանձին քաղաքացիական անձանց անկախությունը կամ տեղաշարժը չպետք է օգտագործվի հարձակումից ռազմական օբյեկտների պաշտպանության կամ ռազմական գործողությունների բողարկման համար, ինչպես նաև դրանց օժանդակելու կամ խանգարելու նպատակով¹⁰:

Հայկական և առանձնապես արդեջանական կողմերից 1992-1994թթ. ինտենսիվ զինված առճակատման ընթացքում սպառազինության տարբեր տեսակների (ծանր հրետանու, «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի՝ ԴՂՌ, Արդեջանի մարտական ավիացիայի կողմից բնակավայրերի, փաստորեն «գորգային ռեթարկումներ» և այլն) ոչ ընտրամբային կիրառությունը միարժեքորեն վկայում է միջազգային հումանիտար օրենքի հիմնարար նորմերի կոպիտ խախտման մասին:

Ղարաբաղյան Հակամարտության՝ միջազգային հումանիտար օրենքի նորմերի խախտումների կողմը սահելուն նպաստող կարևոր գործոն է հանդիսանում այն, որ ռազմական գործողությունները արագորեն ձեռք բերեցին լայնամասշտաբ պատերազմի բնույթ, երկու կողմից անընդհատ աճող ծավալներով սպառազինության և ռազմական տեխնիկայի նորանոր տեսակների ընդգրկմամբ: Առանձնապես դա արտահայտվեց արդեջանական կողմի զինված կազմավորումների գործողություններում:

Օրինակ, եթե Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի սահմաններում առաջին բախումների ժամանակ օգտագործվում էր գործնականորեն միայն թթև հրաձգային սպառազինություն, ապա արդեն 1991թ. ապրիլ-մայիսին «Օղակ» օպերացիայի (արդեջանական ՀՆՄՏ, ԼԳՆ և ԽՄՅՄ ՊՆ համատեղ ուժերով) իրականացումից հետո, արդեջանական կողմը առաջին անգամ սկսեց կիրառել զրահատեխնիկա՝ ԲՏՌ¹¹ և ԲՐԴՄ¹², որոնք գտնվում էին արդեջանական ՀՆՄՏ սպառազինության մեջ և ստացվել էին ԽՄՅՄ Պաշտպանության նախարարության և ԼԳՆ զորամասերից: Ինչպես նշում են իրենք արդեջանական աղբյուրները, արդեն 1990 թ. հունվարին Բաքվի դեպեերի՝ տեղի հայկական բնակչության զանգվածային կոտորածի և քարոզիկի ընթացքում, արդեջանական զինված կազմավորումների կողմից ԽՄՅՄ Ձինված ուժերի գործառնից զավթվել էին ոչ միայն թթև և հրածոգային զենքի հարյուրավոր միավորներ, այլ նույնիսկ 4 հատ S-72 տանկեր, որոնք, ծիշտ է, հետագայում են վերադարձվեցին¹³:

1991 թվականից ռազմական ընդհարումների ժամանակ արդեն օգտագործվում էին հակակարկտային հրանոթներ և «Ալազան» տիպի հրթիռային կայանքներ: 1991թ. վերջին, Լեռնային Ղարաբաղից և սահմանանեո՞ծ շրջաններից Ներքին զորքերի և Խորհրդային բանակի զորամասերի դուրս բերման սկզբից ռազմական տեխնիկայով կողմերի հազեցման մակարդակը սկսեց ավելանալ. հայտնվեցին ակամանետեր, նռնակաճետեր, ՅՏՂԴ¹⁴, ՄՍԱ¹⁵:

Ռազմական գործողությունների ակտիվ փուլի սկզբից հետո, որը ընդունված է համարել 1992թ. հունվարը, արդրեջանական կողմից առաջին անգամ սկսեց օգտագործվել ԲՄ-21 «Գրադ» ՅԿՈԴ, զանգվածային բանակով ՄԻ-24 մարտական ուղղաթիռներ, խոշոր տրամաչափի հրետանի, տանկեր և այլ ծանր տեխնիկա: Իսկ արդրեջանցիների կողմից ՄՈւ-25 գործիչների և այլ տիպի մարտական ինքնաթիռների կիրառման սկզբից, և առանձնապես 1992թ. հունիսին արդրեջանական բանակի ամառային լայնամասշտաբ հարձակումից հետո, որտեղ, օդից ակտիվ աստարման պայմաններում, արդեն մասնակցում էին հարյուրավոր միավոր տանկեր և ՄՍԱ, ռազմական գործողությունները լայնամասշտաբ պատերազմի բնույթ ստացան: Այս ամենը ուղեկցվում էր խաղաղ հայկական բնակչության դեմ սպառազինության նորանոր տեսակների մշտական օգտագործմամբ, միջազգային - իրավական հումանիտար նորմերի խախտումներով:

Ինչպես գտնում են փորձագետները, Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության դեմ Արդրեջանի կողմից ծանր տեխնիկայի և սպառազինության զանգվածային ոչ ընտրանքային կիրառման սկիզբ կարելի է համարել 1991 թ. սեպտեմբերի 25-ը: Այդ օրը Շուշիի կողմից «Ալազան» հրթիռներով գնդակոծվեց Շուշիի շրջանի Քարին Տակ բնակավայրը: Այդ նույն օրը սկսվեց Ստեփանակերտի գնդակոծումը «Ալազան» հրթիռներով: Քաղաքի վրա արձակվեց 7 հրթիռ: Նույն օրը երեկոյան Արդրեջանի երկու քաղաքացիական ուղղաթիռներ նռնակներ նետեցին Ստեփանակերտի, ինչպես նաև Շոշ և Քարին Տակ գյուղերի վրա: Այդ նույն ժամերին արդրեջանաբնակ խոջալու բնակավայրից սկսվեց Ասկերան շրջկենտրոնի և Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղի գնդակոծումը «Ալազան» հրթիռներով: Սեպտեմբերի 25-ի երեկոյան Շուշից վերսկսվեց Շոշ գյուղի հրետանակոծումը, իսկ մոտավորապես մեկ ժամ հետո կրակը տեղափոխվեց Ստեփանակերտի վրա: Այդ նույն օրը ինտենսիվ գնդակոծման ենթարկվեց Մարդակերտի շրջանի Կիչան գյուղը: Սեպտեմբերի 25-ին, ողջ օրվա ընթացքում, ՄՍԱ-երից, ինչպես նաև «Ալազան» հրթիռներով գնդակոծվեցին Շահումյանի շրջանի Կարաչինար և Մանաշիղ գյուղերը: Այս գյուղերում զոհվեց 4 մարդ, այդ թվում վեցամյա մի տղա: Ընդ որում, հենց նախօրեին, սեպտեմբերի 18-ին Լեռնային Ղարաբաղը այցելեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բ. Ելցինը և Ն. Նազարբաևը, իսկ սեպտեմբերի 23-ին ժելզգնդկողնում ստորագրվեց Դամաստի կոմյունիկե Ռուսաստանի Ղաշնության նախագահ Բ. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի միջնորդական առաքելության արդյունքների մասին: Դաջորդ օրերին Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի գնդակոծման ինտենսիվությունը ավելացավ:

1991թ. աշնանը հայկական բնակավայրերի բազմաթիվ գնդակոծումներից բերև առավել ինտենսիվ էր Նոյեմբերի 15-ին Ասկերանի շրջանի Խարամուտ գյուղի գնդակոծումը հրետանու և «Ալազան» տիպի հրթիռների կիրառմամբ: Արդեն 1991թ. Նոյեմբերի կեսից Ստեփանակերտի բնակչությունը գնդակոծումներից ապաստան փնտրելով ստիպված էր իջնել Նուրդիներ: Լեռնային Ղարաբաղի Դանրապետության (ԼԴԴ) մայրաքաղաքը ենթարկվում էր ամենօրյա գնդակոծումների: Քաղաքում, որը գրկված էր ջրից, էլեկտրականությունից, ցեմենտից և սննդամթերքից, ապրում էր ավելի քան 55 հազ. մարդ: 1991 թ. Նոյեմբերի ողջ երկրորդ կեսին և դեկտեմբերին ամբողջ ընթացքում Ստեփանակերտն ամեն օր գնդակոծվում էր, ինչպես և ԼԴԴ մյուս բնակավայրերը: Արդրեջանցիները ավելի հաճախ էին գնդակոծում ժամանակ օգտագործում «Ալազան» ռեսակտիվ հրթիռներ, հրետանի, խոշոր տրամաչափի գնդացիներ: Դայկական բնակավայրերին հարող գործնականորեն բոլոր բարձունքները և տեղաբախշված էին արդրեջանական դիպակահարներ, որոնք կրակում էին ցանկացած շարժվող նշանակետերի վրա: Առանձնապես ինտենսիվ էին գնդակոծումները դեկտեմբերի 10-ին (անկախության հանրաքվեի անցկացման օրը) և 1992 թ. ամամուրյա գիշերը: Այդ գիշեր միայն Ստեփանակերտի վրա մոտակա արդրեջանաբնակ գյուղերից և Շուշիից արձակվեցին «Ալազան» տիպի 86 հրթիռներ: Այդ նույն գիշեր գնդակոծման ենթարկվեցին. Մարտունի ավանը (1 մարդ զոհվեց, 1 վիրավորվեց), Շահումյան ավանը (2 մարդ զոհվեցին, 1 վիրավորվեց), Մարդակերտ քաղաքը (7 մարդ վիրավորվեցին)¹⁶:

1992 թ. հունվարի 13-ին Շահումյանի գնդակոծման ժամանակ արդրեջանական կողմը առաջին անգամ կիրառեց ԲՄ-21 «Գրադ» համազարկային կրակի ռեսակտիվ հրթիռային համակարգեր: Ավանի վրա արձակվեց լրիվ համազարկ 40 հրթիռներ, ինչի արդյունքում զոհվեցին 5 մարդ, ծանր վիրավորվեցին 21 մարդ: Դուռվարի 19-ին ինտենսիվ գնդակոծման ենթարկվեցին Ստեփանակերտը և Մարտունի ավանը:

Փետրվարի սկզբին Արդրեջանի ժողովրդական ճակատի հրամանատար Ռ. Գազիկը (որը փետրվարի 10-ից դարձավ Շուշիի պարետը, իսկ մարտի 17-ին՝ ԱԴ պաշտպանության նախարարը) երկու «Գրադ» հրթիռային կայանքներ տեղափոխեց Ստեփանակերտից վեր գտնվող Շուշի, որպեսզի այնտեղից քաղաքը գնդակոծի արդեն այս համակարգերի օգնությամբ: «Գրադ» կայանքներից Ստեփանակերտի վրա կրակը վարվում էր առանց համաձայնեցնելու, երբ և ինչպես կրակել:

1992 թ. գարնան ընթացքում այդ գնդակոծումների արդյունքում զոհվածների ընդհանուր քանակը հաշվվում էր հարյուրներով: Այսպիսով, սկսած 1991 թ. Նոյեմբերից և մինչև 1992 թ. զինադադարի հաստատումը, Ստեփանակերտ քաղաքը գործնականում ամեն օր գնդակոծվում էր զենքի տարբեր տեսակներից. «Ալազան» հրթիռներով, ԲՄ-21 «Գրադ» ՅԿՈԴ, տանկերով, տարբեր տրամաչափի հրանոթներով, ապա նաև ենթարկվեց արդրեջանական ինքնաթիռների հարձակումներին: Ընդհանուր առմամբ քաղաքի վրա ընկել են 21000 «Գրադ» հրթիռ, տարբեր տրամաչափի 1900 հրետանային արկ, 180 գնդիկային ակիատումբ, մոտ հարյուր հատ հինգ հարյուր կիլոգրամանոց ակիատումբ, այդ թվում 8 վակուումային:

ԼԳԴ մայրաքաղաքը և նրա բնակչությունը ոչնչացնելու Ադրբեջանի ձգտման մեջ Ստեփանակերտն ամենևին էլ բացառություն չէր: Ոչ պակաս խիտ կրակ էր վարվում Ասկերան, Մարտունի և Շահումյան ավանների, Քարին Տակ, Կարաչինար, Խրամորտ, ճորտար և այլ գյուղերի վրա: ԼԳԴ բնակավայրերի նման զանգվածային գնդակոծումը հանդիսացավ Հանրապետության հայկական բնակչության ոչնչացմանն ուղղված Ադրբեջանի պայքարի մտադրությունների ապացույցը: 1992 թ. սկզբին, շրջափակման և մշտական գնդակոծումների պատճառով, գյուղական վայրերից սնդղամբերի առաքումը քաղաք ամբողջովին դադարեցվեց: ԼԳԴ ղեկավարությունը ստիպված էր անցնել բնակչությանը սննդամթերքով կարողնային ապահովմանը, սակայն փետրվարի վերջին նույնիսկ այդ չէին բուսակությունը չէր տրամադրվում վաճառքի ցանցերին: Ստեփանակերտի բնակչության համար ծագեց քաղցի իրական վտանգ: Էլեկտրաէներգիայի, խմելու ջրի բացակայությունը ստեղծեցին վարակիչ հիվանդությունների տարածման սպառնալիք:

ԼԳԴ խաղաղ բնակավայրերի զանգվածային գնդակոծումները առանձնապես ուժեղացան 1992 թ. հունիսին, ադրբեջանական լայնամասշտաբ հարձակումից հետո: Դա բերեց փախստականների զանգվածային հոսքերի Շահումյանի, Մարդակերտի և Ասկերանի շրջաններից, որոնք մշտապես ենթարկվում էին հրետակոծումների և ադրբեջանական ավիացիայի ուժերի կոնտինյունների: Այսպես, 1992 թ. օգոստոսի 5-ին Աղզամի շրջանից «Գրադ» ՅԿԳԴ-ով Ստեփանակերտի ինտենսիվ գնդակոծման արդյունքում զոհվեցին 26 և վիրավորվեց 65 մարդ: Չրեատվածումների և ավիատեղակայումների արդյունքում արդեն Ստեփանակերտում զոհվեցին 119 փախստականներ Մարտակերտի շրջանից: ԼԳԴ բնակավայրերի սիստեմատիկ հրետակոծումները շարունակվեցին գործնականորեն մինչև ռազմական գործողությունների րուն ավարտը: Սիստեմատիկ, սկսած 1992 թ. մայիս-հունիս ամիսներից, Ադրբեջանը սկսեց խաղաղ բնակչության դեմ ավելի ակտիվ օգտագործել մարտական ինքնաթիռներ և ուղղաթիռներ (որոնք հիմնականում վարում էին նախկին ԽՍՀՄ զինված ուժերի զորամասերից վարձկանները), չնայած հավանաբար մեջ ավիացիայի կիրառումը զրանցվել էր նաև ավելի շուտ:

Սկսած դեռ 1990 թ. աշնանից Լեռնային Դարաբաղի վրայով թռչող ադրբեջանական ուղղաթիռներից բազմիցս գնդացրա-ինքնաթիռային կրակ է արձակվել հայկական բնակավայրերի վրա: 1991 թ. մայիսի 8-ին Շուշիի շրջանի Սեծ Շեն գյուղի վրայով թռչող ուղղաթիռներից նռնակներ են նետվել: Լեռնային Դարաբաղի խաղաղ բնակչության դեմ ավիացիայի օգտագործման նման դեպքերը հետազայում բազմիցս կրկնվեցին: 1991 թ. մայիսի 15-ին Հադրուբի շրջանի Ափիսակաշեն հայկական գյուղի շրջանում ուղղաթիռից իջեցվել է Ադրբեջանի ԵԿԿ ՅՏՄՁ ստորաբաժանումներից դեսանտը, որը կատարել է գյուղի բնակիչների լրիվ տեղահանություն: 1991 թ. հոկտեմբերի 14-ին Շահումյանի շրջանի Կարաչինար գյուղում վայրէջք կատարեց ՄԻ-8 քաղաքացիական ուղղաթիռը: Ուղղաթիռում գտնվում էին ադրբեջանական օժնդակները, որոնք կրակ բացեցին գյուղի բնակիչների վրա: 1991 թ. սեպտեմբերի 18-ին ադրբեջանական կողմն առաջին անգամ կիրառեց ՄԻ-24 մարտական ուղղաթիռներ Ասկերանի շրջանի Նորագյուղ, Մեհուշեն և Բերքածոր գյուղերի քաղաքացիական բնակչության գնդակոծման համար: Երկու ուղղաթիռներ չղեկավարվող հրթիռներով (ՉԴՈՎ) հրթիռակոծեցին գյուղացիների տները, ինչի

արդյունքում Նորագյուղում զոհվեց մի կին, ևս 7 մարդ վիրավորվեցին: Դրանից հետո և քնդուակ մինչև զինադադարի կնքումը Ադրբեջանը ակտիվորեն օգտագործում էր մարտական ուղղաթիռները ԼԳԴ քաղաքացիական բնակչության դեմ:

1992 թ. հուլիսից, դուրս հանվող ռուսական զորքերի կողմից իրենց օդանավակայաններում թողնված տասնյակ մարտական ինքնաթիռների զավթման արդյունքում, ադրբեջանական ավիացիան սկսեց կատարել արդեն խնդրային հարձակումներ ԼԳԴ խաղաղ բնակավայրերի վրա: Միաժամանակ, 1992 թ. օգոստոսից, Ադրբեջանը սկսեց կիրառել միջազգային կրկնվեցններով արգելված այսպես կոչված «գնդիկային» ավիատուներ, որոնք նախատեսված են քաղաքացիական բնակչության ոչնչացման համար: Այսպես, 1992 թ. օգոստոսի 31-ին Ստեփանակերտի վրա զցվեցին տասներկու «գնդիկային» ավիատուներ, ինչի արդյունքում զոհվեցին 16 մարդ, տարբեր աստիճանի ծանրության վերքեր ստացան 121 մարդ: Միայն Ստեփանակերտի վրա ադրբեջանական ավիացիան զցել է 180 ՄԿ4 (բեկորային ենթառավանքներով միանգամայն ռուսբային կոնտեյնի» «գնդիկավոր» ռուսներ) և մոտ հարյուր, 500 կգ բեկորա-ֆուգասայր» ռուսներ, Ներառյալ 8 ՕԴԱԻ (ծավալային դետոնացման ավիատուսը կամ այսպես ասած, «վակուումային» ռուսը)՝:

Եթե ադրբեջանական կողմից միջազգային-հումանիտար նորմերի զանգվածային և կոպիտ խախտումների «թրթապանակը» բավականին ծավալուն է, պարունակում է այդպիսի խախտումների լայն փաստագրական նյութ, ապա նրա հայկական համանմանը հիմնականում կիզակետվում է 1992 թ. փետրվարի «Խոջալուի ողբերգության» վրա:

Տվյալ իրադարձությունների սարդիչ լինելու ներքաղաքական քնույթի վերաբերյալ ադրբեջանական կողմից կան շատ հրապարակումներ: Մեր աշխատանքում կասեմանափակվեց ադրբեջանաբանակ խոջալուում ռազմական օպերացիայի իրականացման ընթացքում հայկական կողմից միջազգային հումանիտար իրավունքի նորմերի պահպանման հիմնական փաստագրական տարրերի լուսաբանմանը՝:

Գրոհից առաջ, ռադիոկապով ադրբեջանական ուժերին առաջարկվել է բնակավայրից դուրս բերել խաղաղ բնակչությանը: Գրոհի սկզբից դեռևս մի քանի օր առաջ, հայկական կողմի ներկայացուցիչները բազմիցս, օգտագործելով ռադիոկապը, խոջալուի իշխանություններին հայտնեցին սպասվող գրոհի մասին և նրանց կոչ արեցին բնակավայրից անհապաղ հանել քաղաքացիական բնակչությանը:

Մինչև գրոհի սկիզբը խոջալուի քաղաքացիական բնակչության մի մասը թողեց բնակավայրը, և 1992 թ. փետրվարի վերջին, ըստ տարբեր արդյունքների, այստեղ մնացել էին 1000-ից մինչև 2500 մարդ, հիմնականում խաղաղ բնակիչներ և ադրբեջանական զինված կազմավորումների զինվորներ:

Հայկական ուժերը գրոհից հետո չեն ձեռնարկել որևէ ակցիա խոջալուի քաղաքացիական բնակչության ոչնչացման ուղղությամբ:

Գրոհի արդյունքում մոտ 700 փախստականներ, որոնք չէին հասցրել կամ չէին կարողացել լքել խոջալուն, բերվեցին Ստեփանակերտ, ԼԳԴ մայրաքաղաք: Չնայած հայերի մեջ սննդամթերքի հուսահատական վիճա-

կին, աղրբեջանական բոլոր փախստականները ապահովվեցին օրական երկու անգամ սնունդով: Չեռաքրքրի փաստ. հուջալուի փախստականները Ստեփանակերտում թուլտվություն խնդրեցին, իսլամի օրենքներին համաձայն, իրենք իրենց համար ունեւիք պատրաստել, ինչին ի պատասխան նրանց հանձնվեց հուջալուից բշված ոչխարների ոչ մեծ հոտը: Մի քանի օր անց, հուջալուի բոլոր փախստականները, իրենց կամքին համաձայն, հանձնվեցին աղրբեջանական կողմին, առանց որևէ պայմաններ առաջ քաշելու:

Մի քանի տասնյակ աղրբեջանիցներ զոհվեցին հուջալուի պաշտպանության ժամանակ, ինչպես նաև Նախիջևանի կուրդի մատույցներում: Բոլոր զոհված աղրբեջանիցները, որոնք զոհվեցին հայկական ուժերի կողմից վերահսկվող տարածքներում, Աղդանում հանձնվեցին աղրբեջանական կողմին: Չոհված խուջալուցիների հիմնական զանգվածը՝ 200-300 մարդ, զոհվեցին Աղդանին կից և աղրբեջանական զինված կազմավորումների կողմից վերահսկվող տարածքներում: Այս փաստը հաստատվում է հենց աղրբեջանական բազմաթիվ վկայություններով¹⁹:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել հուջալույում ռազմական օպերացիայի ընթացքում հայկական կողմից զերի վերցված կոմբատանտների նկատմամբ միջազգային հումանիտար իրավունքի նորմերի փաստը: Չամաձայն 1977թ. I Լրացուցիչ արժանագրության 41 հոդվածի, «Արգելվում է հարձակման ենթարկել անմիջ, որը ճանաչվել է, կամ որի տվյալ իրավիճակում պետք է ճանաչել որպես շարքից դուրս եկած անմ» (շարքից դուրս եկած է համարվում ցանկացած անմ, եթե նա, մասնավորապես, հստակ արտահայտում է զերի հանձնվելու մտադրություն: (I Լրացուցիչ արժանագրությունում 41 հոդվածի 2 մասի "բ" կետ): հուջալուի գործից հետո «զերի հանձնվելու հստակ մտադրություն արտահայտած» աղրբեջանական կոմբատանտներին հայկական զինված կազմավորումները հաճախ հրաժարվում էին պաշտպանել և նրանք ենթարկվում էին հարձակման, ընդհուպ մինչև զենքը ցած դրածների գնդակահարություն: 1

Ընդհանուր առմամբ, 1991-1994 թթ. հակամարտության գոտում մարտական գործողություններն ուղեկցվում էին ինչպես հայկական, այնպես էլ աղրբեջանական կողմից միջազգային հումանիտար իրավունքի տվյալ նորմի խախտման բազմաթիվ դեպքերով:

Ժամանակակից միջազգային իրավունքի նորմերը միաթեքորեն վկայում են, միջազգային ու միջազգային-հումանիտար իրավունքի տեսանկյունից, մարդու իրավունքների խախտումներից այդ իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ-նորմատիվային մեխանիզմների փոխլրացման օգտին: Միջազգային իրավունքի նշված երկու ոլորտների փոխլրացման ճանաչումը և փաստացի կոնվերգենցիայի ընդունումը զարգացում ստացավ նաև միջազգային - իրավական պրակտիկայում: Մարդու իրավունքների ՄԱԿ-ի հանձնաժողովը, որն այժմ վերափոխվել է մարդու իրավունքների հոդրիդի, 2005 թ. ապրիլի 23-ի 2005/63 բանաձևում ընդունեց, որ «մարդու իրավունքները և միջազգային հումանիտար իրավունքը լրացնում և ամրապնդում են միմյանց: Պաշտպանությունը, որն ապահովվում է Մարդու իրավունքի մասին իրավունքով, շարունակում է գործել զինված առճակատումների պայմաններում...»: Բանաձևի մեջ նաև

ընդգծվում է, որ «միջազգային հումանիտար իրավունքը խախտող վարքը նաև կարող է ներկայացվել որպես մարդու իրավունքի կոպիտ խախտում»:

2005 թ. դեկտեմբերի 16-ին ընդունելով «Չիմնական սկզբունքները և դեկլարատոր դրույթները, որոնք վերաբերվում են մարդու իրավունքներին և միջազգային հումանիտար օրենքի լուրջ խախտումների ոլորտում միջազգային նորմերի կոպիտ խախտումների զոհերի համար իրավական պաշտպանության և վնասի փոխհատուցման իրավունքին» բանաձևը, ՄԱԿ-ի Գլխավոր Ասսամբլեան փաստորեն ընդունեց իրավունքի այս երկու ոլորտների ինտեգրացումը (2005 թ. դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասսամբլեայի A 160 147 բանաձև): Տվյալ բանաձևում չի բերվում որևէ եսկան տարբերություն մարդու իրավունքների և միջազգային հումանիտար իրավունքի, ինչպես նաև քննարկվող ոլորտում այս կամ այն համաձայնագրերի խախտումներից կախված վնասի փոխհատուցման և իրավական պաշտպանության իրավունքին վերաբերվող սկզբունքների միջև:

ՄԱԿ-ի Միջազգային Պատարանը, զբաղվալ պաղեստինյան տարածքում պատի շինարարության իրավական հետևանքներին վերաբերվող իր հորիդոնատվական եզրակացության մեջ հայտարարեց, որ «Մարդու իրավունքների մասին կոնվենցիաներով ապահովվող պաշտպանությունը չի դադարում զինված առճակատումների ժամանակ: Իսկ ինչ վերաբերվում է միջազգային հումանիտար իրավունքի և մարդու իրավունքների ոլորտում ստանդարտների միջև փոխադրում կապին, ապա գոյություն ունեն երեք հնարավոր իրավիճակներ. որոշ իրավունքներ կարող են լինել բացառապես միջազգային հումանիտար իրավունքի հարցեր, մյուսները կարող են լինել բացառապես մարդու իրավունքների ոլորտում ստանդարտների հարցեր, երրորդները կարող են լինել հարցեր, որոնք ընդգրկված են իրավունքի այս երկու ոլորտներում: Պատարանը պետք է ուշադրություն դարձնի միջազգային իրավունքի այս երկու ոլորտների, հատկապես մարդու իրավունքների ոլորտում ստանդարտների և, որպես lex specialis²⁰ (հատուկ օրենք)՝ միջազգային հումանիտար իրավունքի»²¹:

Տվյալ եզրակացության համատեքստում Պատարանը հետևություն արեց այն մասին, որ մարդու իրավունքների միջազգային իրավունքը հանդես է գալիս որպես lex specialis: Այսպիսի հետևությունը հաստատվում է մի շարք պայմանագրային կոնվենցիոն մարմինների գործունեությամբ: 2001 թ. Մարդու իրավունքների ՄԱԿ-ի Կոմիտեն ընդունեց համար 29 (2001) ընդհանուր կարգի դիտողությունը, որը վերաբերվում է արտակարգ իրավիճակի հետ կապված պարտավորություններից հետ կանգնելուն: Այդ դիտողություններում Կոմիտեն հստակ նշեց, որ 1966 թ. քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային Չամաձայնագիրը կիրառվում է նաև այն իրավիճակներում, երբ տեղի է ունենում միջազգային և ներքին զինված առճակատումներ, իսկ մարդու իրավունքների Կոմիտեն կարող է քննարկել մարդու իրավունքների խախտման ցանկացած տեղեկություններ իր իրավասության սահմաններում, նույնիսկ զինված առճակատումների պայմաններում:

Քաղաքային Չակամարտության կողմերի առճակատման զինված փուլի ժամանակ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ անհրաժեշտ է նշել միջազգային հումանիտար իրավունքի նորմերի իրակա-

նացման առանձնահատկության հետևյալ քաղաքական և իրավական ասպեկտները:

Ղարաբաղյան Հակամարտության բուն քաղաքական կոնֆիդուրացիայի առանձնահատկությունը ցույց է տալիս, որ քաղաքական տեսանկյունից որպես հակամարտության կողմը հանդես են գալիս միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների երկու ընդունված սուբեկտները (Սօրբոքեանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը), ինչպես նաև միջազգային հանրության կողմից չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Իսկ եթե Ղարաբաղյան Հակամարտության սուբյեկտային կոնֆիդուրացիան դիտարկենք ռազմա-քաղաքական պիզմայի միջով, ապա առկա են արդեն միմյանց հակադրվող երկու «սուբյեկտներ»՝ հայկական կողմը և ադրբեջանական կողմը, որտեղ ջնանաչված ԼՂՀ-ի դերը շատ բանով որոշիչ է հանդիսանում, քանի որ սերտորեն փոխկապակցված է տարածաշրջանային անվտանգության պահպանման ընդհանուր համակարգի կայացած քաղաքականության հետ:

Ինչպես և ներկայիս այլ էթնոքաղաքական առճակատումներում, ռազմա-քաղաքական հակամարտության կողմերը մարտական գործողությունների ընթացքում միջազգային հումանիտար նորմերի իրականացմանը վերաբերվում էին բավականին «ընտրողաբար»: Միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտումների առավելազյան ծավալը կապված էր մարտական գարծողությունների գոտում քաղաքացիական բնակչության իրավունքների խախտումների հետ: 1994 թ. մայիսին ռազմական գործողությունների ավարտին ի հայտ եկավ որոշակի «պատային» իրափճակ, ռազմական գործողությունների ընթացքում խախտված մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների նկատմամբ: Հակամարտության քաղաքական չկարգավորվածությունը հնարավորություն չէր տալիս ձեռնամուխ լինել հակամարտող կողմերի գործողությունների միջազգային-իրավական գնահատմանը, 1991-1994թ.թ. ընթացքում նրանց կողմից միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտման տեսանկյունից: Ավելին, առկա էր հակամարտության կողմերից մեկի և կարգավորման գործընթացի մեջ ընդգրկված միջազգային միջնորդների դիրքորոշումը, որը արտահայտվում է «սկզբում քաղաքական կարգավորման, հետո միայն զինված հակամարտության ընթացքում կողմերի գործողությունների իրավական գնահատական» սկզբունքով: Համարվում է, որ քաղաքական կարգավորման համեմատությամբ, իրավական գնահատման առաջնահերթության նախաձեռնությունները կարող են էլ ավելի հեռացնել հակամարտության կարգավորման՝ կողմերի դիրքորոշումները և դրանք դարձնել քացարձակորեն հակադիր:

Ղրա արդյունքում միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտումների նկատմամբ կիրառվող մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքը մնում է «կախված» փճիկում և ներկայումս քացայալում են Ղարաբաղյան Հակամարտության ռազմական փուլի հետևանքների նկատմամբ դրանց կիրառումն իրականացնելու նախարարյանը:

Միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտումների համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուն ուղղված միջազգային իրավական ջանքերի նկատմամբ քաղաքական քաղաքիչի

ճնշումը բացահայտորեն երևակվեց «խարավակական միջազգային-հումանիտար թրթապանակում»²²:

Ղարաբաղյան հակամարտության զինված փուլի հետևանքների նկատմամբ միջազգային հումանիտար իրավունքի նորմերի իրականացման առանձնահատկության իրավական ասպեկտները ցույց են տալիս, որ վերը նշված քաղաքական և ռազմա-քաղաքական անհամամասնությունները հակամարտության սուբյեկտային կոնֆիդուրացիայի մեջ կարող են հաղթահարվել, մեր տեսակետից, միջազգային հումանիտար իրավունքի ոլորտում միջազգային - իրավական պարտավորությունները հակամարտության բոլոր կողմերի վրա ընդհանուր տարածելու միջոցով, անկախ նրանց միջազգային ժամանակածության փաստից²³:

Ժնևյան կոնվենցիայի և Լրացուցիչ արձանագրությունների մասնակիցների վրա պարտավորություն էր դրվում գործողության մեջ դնել օրենսդրությունը, որն անհրաժեշտ է արդյունավետ քրեական պատիժ ապահովել կոնվենցիայի այս կամ այն խախտումները կատարած, կամ կատարելու հրաման տված անձանց, փնտրել անձանց, որոնք մեղադրվում են այս կամ այն խախտումները կատարելու կամ կատարման հրաման տալու մեջ, և նրանց հանձնել իրենց դատարանին կամ հանձնել մյուս շահագրգիռ կողմին, դատելու համար, ձեռնարկել միջոցներ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայի բոլոր այլ, լուրջ խախտումներից բացի, խախտումների կանխման համար:

Կարևոր է նշել, որ Ժնևյան կոնվենցիայի ոչ մի մասնակից - պետություն իրավունք չունի իրեն կամ որևէ այլ կողմի ազատել պատասխանատվությունից, որը դրված է նրա կամ այլ պատմականորովոր կողմի վրա, Ժնևյան կոնվենցիան խախտելու հետևանքով (չորս Ժնևյան կոնվենցիաների 51/52/131/148 ընդհանուր հոդվածներ, 1 Լրացուցիչ արձանագրության 86 հոդված): Այսպիսով, խոսքը գնում է քացարձակ պատասխանատվության և ընդհանուր միջազգային իրավունքի հրամայական նորմերի (jus cogens) մասին²⁴:

Միջազգային հումանիտար իրավունքի նորմերի լուրջ խախտումների համար պետության քացարձակ պատասխանատվությունը արտահայտվում է միջազգային իրավունքի «erga omnes պարտականություններ» սերմիմով: Erga omnes պարտականությունների հասկանությունը ձևակերպման ժամանակ ավանդական է հանդիսանում «Barcelona Traction»-ի գործով 1970 թվականին ՄԱԿ-ի միջազգային դատարանի կայացրած վճռին դիմելը, որում Ղատարանը, մասնավորապես, նշում է, որ «անհրաժեշտ է տարբերակել ողջ միջազգային հանրության առջև պետության պարտականություններն այն պարտականություններից, որոնք ծագում են այլ պետության նկատմամբ՝ դիվանագիտական պաշտպանության ոլորտում: Իրենց բնույթի շնորհիվ առաջինները նշանակություն ունեն բոլոր պետությունների համար: Ելնելով տվյալ իրավունքների կարևորությունից՝ պետությունը կարող է դրանց պաշտպանության իրավաբանական հետաքրքրություն ունենալ, դրանք կոչվում են erga omnes պարտականություններ»: Ղատարանը կարևոր իրավունքների թվին է դասել նաև «այն

ակզրուներն ու նորմերը, որոնք որոշում են մարդու հիմնական իրավունքները», որոնք ամրագրված են «ուճիվներալ կամ քվազիուճիվներալ բնույթի միջազգային փաստաթղթերում»²⁵;

Հանրահայտ է, որ 1949 թվականի ժնկյան չորս կոմվենցիաներն ունեն ուճիվներալ բնույթ և, հետևաբար, պարունակում են erga omnes պարտականություններ²⁶:

Մարդու իրավունքների միջազգային իրավական և մարդու իրավունքների խախտմանը վերաբերող միջազգային հումանիտար իրավունքի նորմերի արդյունավետ կիրառությունը քաղաքական կարգավորման նախորդող փուլում կարող է հանգեցնել մարդու իրավունքների պաշտպանության վերականգնվող տարրերի չիրականացման հետ կապված առաջացող իրավական «վակուումի» [ցվելուց: Դա կնպաստի նաև, որ հակամարտության ողջ շրջանը ներգրավի ավելի սերտ միջազգային-իրավական շրջանակների մեջ ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության ներքին մեխանիզմների ջանքերով, ինչը կպահովի տարածաշրջանային խաղաղությունը և անվտանգությունը:

Ինչպես փորձագետները նշում էին դեռևս Ղարաբայյան հակամարտության ռազմական փուլի ավարտի արդյունքներով զինադադարի կնքման նախօրեին, «... Անդրկովկասյան զինված հակամարտությունների կարգավորման մեջ հումանիտար իրավունքի համարժեք կիրառությանն ուղղված ջանքերի համակարգումը կարող է նպաստել համաձայնության ձեռքբերմանը պատերազմող կողմերի միջև՝ ազգային և տարածաշրջանային անվտանգության ապահովման շահերից ելնելով՝ Անդրկովկասում բարդ, բազմամակարդակ իրականացում ենթադրող խաղաղարար գործընթացում օգտակար դեր կարող էր խաղալ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված ռազմաքաղաքական ծրագրի իրականացումը ժնկյան կոմվենցիաների պահանջների կատարման ուղղությամբ, դրանք ստորագրած Աղբրեջանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի²⁷ Հանրապետության և Հայաստանի Հանրապետության նկատմամբ»²⁸:

Պրա հետ մեկտեղ, ներկա փուլում ակնհայտ է հակամարտության կողմերի դրական կողմնորոշման բացակայությունը՝ միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ օբյեկտիվ իրավական գնահատականների ձևավորման նկատմամբ: Հակամարտության կարգավորման հանդեպ կողմերի մոտեցումների ներկա քաղաքական հակադրությունը կողմնակալության է հանգեցնելու մարդու իրավունքի պաշտպանության ոլորտում ներքին ինստիտուցիոնալ կառույցների (ազգային դատարաններ) հնարավոր իրավական գնահատականներում: Ի հաստատումն դրա՝ կարելի է բերել հայ սպա Գ. Սարգսյանի սպանությունն իրականացրած (Հունգարիա, ք. Բուդապեշտ) աղբրեջանցի սպա Ռ. Սաֆարովի կերպարի «հերոսացումը» իր հայրենիքում:

Հատկապես շոշափելի են միջազգային հումանիտար իրավունքի նորմերի իրականացման իրավաքաղաքական «պահանջարկի բացակա-

յության» բացասական կողմերն այն անձանց նկատմամբ, ովքեր անենալստն են տուժել զինված փուլի և Ղարաբայյան Հակամարտության ողջ էփնորտադարական առճակատման հետևանքներից: Դրանք են փախստականները և ներքին վերաբնակեցված անձինք (հարկադիր վերաբնակներ):

Պյուլտ 2. Ղարաբայյան Համակարտության հումանիտար հետևանքները և դրանց հարթահարման հնարավոր մոտեցումները

Ղարաբայյան Հակամարտության հումանիտար հետևանքների վրա ուշադրությունը կենտրոնացնելու մի քանի պատճառ կա:

Առաջին հերթին, տվյալ հակամարտությունը ներկայումս գտնվում է չկարգավորվածության փուլում, իսկ նրա լուծման հետևակարները ընդհանրապես ներկա փուլում չեն քննարկվում: Ղարաբայյան Համակարտության մեջ իրերի այրպիսի վիճակի պատճառային բաղադրիչներից մեկը, որը հանդես է գալիս կողմերի էքոնոքաքական հակասությունների անենաստաքին փուլերի իրականացմանը խոչընդոտող նշանակալի գործոնի դերում, փախստականների և ներքին վերաբնակեցված անձանց կարգավիճակի իդենտիֆիկացման հարցերին կողմերի հակադիր մոտեցումն է:

Երկրորդ, փախստականների և ներքին վերաբնակեցվածների հարցը Ղարաբայյան Հակամարտության կարգավորման ընդհանուր համատեքստում հանդես է գալիս որպես խառը իրավաքաղաքական բնույթի հարց, քանի որ փախստականների և հարկադրաբար վերաբնակեցվածների իրավունքների պաշտպանության ոլորտում գոյություն ունեցող միջազգային և դրանից բխող ներպետական նորմերի մի նշանակալի մասը հակամարտության կարգավորման գործում պետք է մեկնաբանվի, իմաստավորվի և պահանջարկ ունենա կողմերի հակասության քաղաքական պրիզմայի միջոցով:

Վերջինը վկայում է, որ Ղարաբայյան Հակամարտության կարգավորումն միայն իրավական յուրահատկության միջոցներով ասանանափակելու ցանկացած փորձեր չեն կարող փոխձեռնադուր և երկարաժամկետ բնույթ ունենալ հակամարտող կողմերի համար: Փոխզիջումը, որի մասին ամենից շատ խոսվում է հակամարտության կարգավորման գործընթացի ներկա փուլում, քաղաքական բնույթի հակակցություն է, որին անհրաժեշտ է ձգտել նույնպես քաղաքական միջոցներով, հատկապես և առաջին հերթին՝ հակամարտության բոլոր կողմերի միջև բանակցությունների ճանապարհով:

Երրորդ, փախստականների և հարկադրաբար վերաբնակեցվածների հարցը մեծ չափով աղավաղված է Ղարաբայյան Հակամարտության ընդհանուր տեղեկատվական կերպարում, ինչը խոչընդոտում է հիմնական կոմֆլիկտաժին պատճառների և հակամարտության հետևանքների, կողմերի հակասության կարգավորման ներկա գործընթացի վրա դրանց համալիր բացասական ազդեցության համարժեք ուսումնասիրությանը, որն էլ, իր հերթին, իրականացվում և ուղղորդվում է միջազգային միջոցներով ջանքերով:

Եվ, վերջապես, փախստականների և հարկադրաբար վերաբնակեցվածների հարցը, որպես Ղարաբայյան Հակամարտության հումանիտար հետևանքների առավել իրատապ հարցերից մեկը, կոմկրետ գործողությունների իրականացումն է մարդու իրավունքների պաշտպանության

ուրոտում, մինչև ներկա պահը շարունակվող էթնոքաղաքական հակասության հետևանքներից առավելագույնս տուժած անձանց իրավունքների վերականգնումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային հանրությունը ձեռնամուխ եղավ այսպես կոչված փախստականների միջազգային պաշտպանության գծով միջոցների մշակմանը: Այդպիսի միջոցների անհրաժեշտություն առաջացավ միջազգային խաղաղության և անվտանգության պաշտպանության ընդհանուր իրավաքաղաքական զինանոցում փախստականների իրավունքների պաշտպանության հատուկ դերի գիտակցման հետ:

Փախստականների միջազգային պաշտպանությունը (international protection of refugees) անձնից առաջ օգնության և աջակցության տրամադրումն է այն անձանց, ում երկրների կառավարությունները չեն ցանկանում կամ ի վիճակի չեն պաշտպանել սեփական քաղաքացիներին: Ֆիզիկական անձինք կարող են լրջորեն տուժել իրենց հանձնակատարի անձնական իրավունքների այդքան լուրջ խախտումներից, ինչն ստիպում է անվտանգություն փնտրել այլ երկրներում: Քանի որ փախստականների հիմնական իրավունքները այլևս չեն պաշտպանվում նրանց քաղաքացիության երկրների կառավարությունների կողմից, հիշյալ հիմնական իրավունքների հարգման և իրականացման պարտականությունն իր վրա է վերցնում միջազգային հանրությունը: «Միջազգային պաշտպանություն» բառակապակցությունը ներառում է միջոցառումների ողջ համալիրը, որի միջոցով երաշխավորվում են փախստականների իրավունքները:

Փախստականների միջազգային պաշտպանությունը պետությունների կամ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գործողություններն են այն անձանց անունից, ովքեր ապաստան են փնտրում, կամ փախստականների անունից՝ նրանց իրավունքների պաշտպանության երաշխիքների նպատակով՝ ճանաչված միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ գործողությունները ներառում են նրանց իրավունքների և անվտանգության ապահովումը, չարտաքսելու սկզբունքի հարգման երաշխիքը, փախստականի կարգավիճակի որոշման արդարացի գործընթացների իրականացումը և այլն:

Փախստականների հարցերով ՄԱԿ-ի Գերագույն հանձնակատարի իրավասության մեջ գտնվող անձինք /persons of concerns to UNHCR/, կամ, այլ խոսքով, վերջինիս պաշտպանության տակ գտնվող անձինք, ըստ 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի, դրանք փախստականներ են, անձինք, որոնք ստիպված են եղել լքել իրենց երկրները հակամարտությունների կամ այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք լրջորեն խախտել են հասարակական կարգը, դրանք առանց քաղաքացիության անձինք են և, որոշ դեպքերում՝ ներքին տեղաշարժվածները:

Գոյություն ունի պատճառային կապ մարդու իրավունքների խախտման և փախստականների ի հայտ գալու միջև: Մարդիկ լքում են իրենց երկրները իրենց քաղաքացիական ու քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների խախտման հետևանքով, նրանք փախչում են տարերային աղետներից և պատերազմներից, որոնք ստեղծում են այնպիսի իրավիճակ, երբ մարդու իրավունքները չեն կարող իրականացվել հարկ եղած չափով: UNHCR-ի Գործադիր կոմիտեն, միջազգային միասնության և փախստականների պաշտպանության հարցերին

նվիրված իր 1988 թ. ֆիվ 52 եզրակացության մեջ /XXXIX/ խորը անհանգստություն հայտնեց մարդու իրավունքների լրջագույն խախտումների առնչությամբ, որոնք ծնել են փախստականների առաջացման, ինչպես նաև տեղաշարժերի ու տառապանքների հիմնախնդիրներ, որոնց ենթարկվում են միլիոնավոր մարդիկ: Գոյություն ունեն մարդու անխախտելի իրավունքներ, որոնք վերաբերում են նաև փախստականներին, որտեղ էլ նրանք լինեն, քանի որ ընդունող կողմը պետք է հարգի իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքները՝ ներառյալ արտասահմանցիներին և փախստականներին: Փախստականների իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների բազմակողմանի մշակույթի մասն է²⁹:

Միջազգային աղբյուրները խոսում են 360 հազ. հայերի մասին, ովքեր 1988-1990-ական³⁰ թվականներին ստիպված են եղել լքել Ադրբեջանական ԽՍՀ-ն: Նշվում է նաև Լեռնային Ղարաբաղում մարտական գործողությունների հետևանքով փախստականների և հարկադրաբար վերաբնակեցվածների քանակը:³¹

Փախստականների և հարկադրաբար վերաբնակեցվածների թվաքանակի հարցը քաղաքականացված է Ղարաբաղյան Հակամարտության կարգավորման կողմերի ներկա ձևաչափում, ինչը չի կարող չարտացոլվել «փախստական» և «ներքին վերաբնակեցված անձ» կարգավիճակով անձանց քանակական ներկայացվածության օբյեկտիվ պատկերի ի հայտ բերման վրա ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմից: Ադրբեջանը բերում է «սեփական փախստականների» և հարկադրաբար վերաբնակեցվածների ակնհայտորեն ուռճացված թվեր, իսկ Հայաստանը՝ Ղարաբաղյան Հակամարտության ոլորտի ճանաչված հետազոտողների մակարդակով փորձում է վիճարկել տվյալ թվերը³², միաժամանակ ավելի ու ավելի համառորեն պնդելով, որ 1988-1989 թվականներին ՀԽՍՀ-ն պահել է ադրբեջանցիներին «փախստական» կարգավիճակ տրամադրելու մեջ գոյություն ունեն նշանակալի իրավական և քաղաքական բացթողումներ³³:

Դրա հետ մեկտեղ, փախստականների և հարկադրաբար վերաբնակեցվածների քանակը հակամարտության գոտում և նրա շուրջ, որոնք նշում են որոշ հեղինակներ, վերաբնակեցված անձանց թվաքանակի հարցի օբյեկտիվ պատկերից շատ հեռու են³⁴:

Ըստ 1989 թվականի Համամիութենական մարդահամարի տվյալների՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրում էր 391 հազ. հայ: Անհրաժեշտ է նշել, որ ԽՍՀՄ-ում բնակչության վերջին մարդահամարի անցկացման պահին արդեն նշանակալի մաս էին կազմում Ադրբեջանական ԽՍՀ-ից³⁵ հայերի և ՀԽՍՀ-ից ադրբեջանցիների գանգվածային հոսքերը, ընդ որում՝ վերջիններիս մասին կարելի է ասել, որ 1989 թվականի ավարտին, գործնականում, ՀԽՍՀ-ի ողջ ադրբեջանական բնակչությունը տեղափոխվել էր իր ազգային միութենական հանրապետություն³⁶:

Հայկական կողմի բերած տվյալներն ավելի մեծ ուշադրության են արժանի, հատկապես՝ աղբրեջանական կողմի «մեկ միլիոն աղբրեջանցի փախստականներ» քվի վերացական խորապատկերի վրա³⁷:

1988 թվականին, նախկին Աղբր. ԽՍՀ-ում ապրում էր ավելի քան 500 հազար հայ (ըստ 1979 թվականի մարդահամարի՝ 475 հազար):³⁶ Հանրապետության մայրաքաղաք Բաքվում ապրում էր ավելի քան 252 հազար հայ: Աղբր. ԽՍՀ-ի գործնականում բոլոր խոշոր քաղաքներում բնակչության մեծ մասը կազմում էին հայերը: Միայն հենց Սոււմգայիթում ապրում էր 18 հազար հայ, Աղբր. ԽՍՀ մյուս արդյունաբերական կենտրոններում (Մինգեչաուր և այլն) և ապրում էին հազարավոր հայեր: Վերջապես, Շենավտու, Իսմայիլի, ժղանուլի (Ներկայումս՝ Բեյլազանի) Կուտկաշենի և Աղբր. ԽՍՀ մի շարք այլ շրջաններում կային տասնյակ հայկական գյուղեր, ուր խիտ ապրում էին տասնյակ հազարավոր հայեր:

Խելի քան 400 հազար հայեր փախստական դարձան Աղբրեջանում իրականացված ցեղասպանությունների և էթնիկական գտումների արդյունքում: Առաջինը, եռօրյա կոտորածների այդուցում 1988 թվականի փետրվարին, հայերը արտաքսվեցին Սոււմգայիթից: Միևնույն թվականի ամռանը - աշնանը տասնյակ հազարավոր հայեր լքեցին Բաքուն: 1988 թվականի աշնանը լայնամասշտաբ ծրագրերի և էթնիկական գտումների արդյունքում արտաքսվեցին Լեոնային Ղարաբաղի հյուսիսային մասի, Աղբրեջանական ԽՍՀ-ի բոլոր գյուղական շրջանների հայերը, բաքվեցի հայերի մեծ մասը: 1990 թվականի հունվարին Բաքվում հայերի կոտորածների ընթացքում քաղաքը լքեցին հայերի մնացորդները:

Նշված 400 հազար փախստական թիվը բերվում է առանց հաշվի առնելու Լեոնային Ղարաբաղի հայերին, ովքեր ստիպված եղան լքել ինքնավարությունը, ապա և հռչակված ԼՂՀ-ն՝ հակամարտության շիկացման արդյունքում: Ըստ 1989 թվականի մարդահամարի պաշտոնական տվյալների՝ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) բնակչությունը կազմում էր 189 հազար մարդ, որից հայերը՝ 145,5 հազ (76,9%), աղբրեջանցիները՝ 40,6 հազ (21,5 %): Շահույնյանի շրջանում, ըստ միևնույն թվականի տվյալների, բնակվում էր ավելի քան 17 հազար հայ (շրջանի բնակչության մոտ 80%-ը) և մոտ 3 հազար աղբրեջանցի: Մարդահամարի արդյունքում չհաշվառված մնացին Բաքվից, Սոււմգայիթից, մի շարք այլ քաղաքներից մոտ 23 հազար փախստականները, ովքեր 1989 թվականի հունվարին, մարդահամարի անցկացման պահին, փաստացի ապրում էին նախկին ԼՂԻՄ-ում՝ չունենալով տեղական գրանցում, և այդ պատճառով, գրանցման մասին նրանց անձնագրերում եղած հին նշումների համաձայն, դասվեցին իրենց հին գրանցման վայրերին³⁹:

Այսպիսով, ԼՂԻՄ-ի և Շահույնյանի շրջանի հայ բնակչությունը, որոնք կազմեցին հռչակված ԼՂՀ-ի սկզբնական պետական - տարածքային «լրացումը», միասին վերցրած, հաշվվում էին 185 հազար մարդ, աղբրեջանցիները՝ 44 հազար, և 3,5 հազար մարդ կազմում էին ռուսները, հույները, ուկրաինացիները, թաթարները և այլն:

1992 թվականի ամռանը-աշնանը տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում աղբրեջանական զինված կազմավորումները

լիովին զբաղեցրին ԼՂՀ-ի Շահույնյանի շրջանը, ԼՂՀ Մարդակերտի շրջանի մոտ երկու երրորդը, Մարտունու, Ասկերանի և Գաղուբի շրջաններից որոշ մասեր: Դրա արդյունքում 66 հազար հայեր դարձան փախստական (լքեցին հռչակված ԼՂՀ տարածքը) և ներքին վերաբնակեցին (փոխադրվեցին ԼՂՀ այլ շրջաններ): 1994 թվականի մայիսին մարտական գործողությունների ավարտից հետո, 35 հազար հայ փախստականներ վերադարձան ԼՂՀ տարածք:

Հայկական արյուղները խոսում են 1991-1994 թվականներին մարտական գործողություններով զբաղված տարածքներից փախստականների հետևյալ ընդհանուր թվի մասին. 114 հազար մարդ, այդ թվում՝ 83 հազարը՝ Հյուսիսային Ղարաբաղի շրջաններից⁴⁰: ԼՂՀ-ում մոտ 30 հազար հայ համարվում են ներքին վերաբնակեցված անձինք (զերազանցապես Լեոնային Ղարաբաղի Շահույնյանի և Մարդակերտի շրջաններից)⁴¹: 1991 թվականին ԼՂՀ-ում հայ բնակչության 185 հազար ընդհանուր թվաքանակի պայմաններում 1998 թվականին ԼՂՀ-ից փախստականներ և ներքին վերաբնակեցված կազմում էին 61 հազար մարդ: Հաշվի առնելով նախկին Աղբր. ԽՍՀ-ի (այդ թվում նաև՝ Հյուսիսային Լեոնային Ղարաբաղի) տարածքից փախստականներին՝ հայ փախստականների և ներքին վերաբնակների ընդհանուր քանակը ողջ Լեոնային Ղարաբաղի հաշվով կազմում է 144 հազար⁴²:

1988-1992 թվականներին ՀԽՍՀ-ը լքել է մոտ 168 հազար աղբրեջանցի. Լեոնային Ղարաբաղը՝ 40 հազար: Ներկայումս ԼՂՀ-ի կողմից վերահսկվող Աղբրեջանի տարածքներից ներքին վերաբնակներ են դարձել մոտ 375 հազար աղբրեջանցի: Այսպիսով, աղբրեջանցի փախստական և ներքին վերաբնակ են դարձել մոտ 583 հազար մարդ⁴³:

Հայ հեղինակներն ընդգծում են, որ վերաբնակեցված աղբրեջանցիների մի զգալի մասին չի կարելի փախստական համարել: Նախ, ՀԽՍՀ-ն լքած աղբրեջանցիների նշանակալի մասը կարողացել է իրեն հարմար պայմաններով բնակարանները փոխանակել Աղբր. ԽՍՀ-ից հայ փախստականների հետ, իսկ ՀԽՍՀ-ի ընդհանուր 168 հազար աղբրեջանցի բնակչության մնացած մասն էլ նյութական փոխհատուցում է ստացել ՀԽՍՀ կառավարությունից: 1989 թվականին Հայաստանի իշխանությունների կողմից միակողմանի կարգով 14,5 հազար աղբրեջանցի ընտանիքների փոխհատուցում է վճարել Հայաստանում բողոքված տների ու գույքի դիմաց՝ այդ պահին 110 մլն ԱՄՆ⁴⁴ դոլարի չափով: Այնինչ Աղբր. ԽՍՀ-ից ավելի քան 400 հազար հայ փախստականներից ոչ մեկը ոչ միայն ոչ մի նյութական փոխհատուցում չի ստացել, այլ հանրապետությունը լքել են շտապ կարգով՝ իրենց կյանքին սպառնացող անմիջական վտանգի պայմաններում՝ դրանից բխող բոլոր նյութական-գույքային և բարոյական հետևանքներով:

Երկրորդ, անմիջականորեն Լեոնային Ղարաբաղի և նրան հարող շրջանների աղբրեջանական բնակչության նշանակալի մասը չի կարող փախստական համարվել ինչպես այն փաստի հիման վրա, որ ամենա-

ակտիվ մասնակցությունն է ունեցել 1991-1994⁴⁵ թվականների ռազմական գործողություններում, այնպես էլ հաշվի առնելով այն, որ հռչակ-ված ԼՂԻ-ի սահմաններից դուրս ապրում էր իր քաղաքացիական պատկանելության ազգային պետության տարածքում և ստիպված լինելով փոխադրվել իր ազգային պետության այլ շրջաններ՝ միջազգային իրավական տեմոններով չի կարող դիտարկվել որպես «փախստա-կան», այլ ընկնում է «ներքին փոխադրված անձինք» (ԵՓԱ)⁴⁶ բնորոշման տակ:

Ըստ 2006 թվականին ՄԱԿ-ի ամենամյա վիճակագրական զեկույցի տվյալների՝ Ադրբեջանի տարածքում գտնվում էր ԵՓԱ կարգավիճակով 686 հազար 586 անձ: Ադրբեջանի տարածքում, համաձայն 1951 թվականի Փախստականի կարգավիճակի մասին կոնվենցիայի, փախստականի կարգավիճակ ուներ 2, 618 հազար անձ: Դրա հետ մեկտեղ, Ադրբեջանից փախստականի կարգավիճակ ունեին 126 հազար մարդ: Չայաստանի տարածքում կային 113 հազար 714 փախստական, իսկ Չայաստանից փախստականի կարգավիճակ ուներ ընդամենը 15 հազար մարդ⁴⁷:

Փախստականը, ըստ միջազգային իրավական տեմոններաբանության, «այն անձն է, ով ռասայի, հավատքի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական հանձնաճակատների համար հալածանքների պատճառով գտնվում է իր քաղաքացիական պատկանելության երկրից դուրս և չի կարող օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ ցանկանում օգտվել այդպիսի պաշտպանությունից՝ այդպիսի վտանգի պատճառով: (Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 1-ին հոդված):

1988-1990-ական թվականներին Ադրբ. ԽՍՀ-ում իրականացվել է հայկական պատկանելության անձանց զանգվածային արտաքսում: Չայերը արտաքսվում և իրենց հանրապետական պատկանելությունից զրկվում էին բացառապես իրենց ազգային պատկանելության պատճառով⁴⁸: Սակայն տվյալ անձանց և պետության միջև միակողմանի կարգով խզված իրավաքաղաքական կապը՝ ի դեմս քաղաքացիության, գոյություն ուներ միայն տվյալ անձանց միջև և կոնկրետ նախկին միութենական հանրապետությունում՝ ի դեմս Ադրբ. ԽՍՀ-ի: Միասնական միութենական պետությունը դեռևս գոյություն ուներ, այդ պատճառով կարելի է փաստել, որ տվյալ արտեգորայի անձանց համար պատասխանատվություն անմիջապես անցնում էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին, քանզի որ նախկին Ադրբ. ԽՍՀ-ից (որի շրջանակներում ձևավորվեց Ադրբեջանի Դաճարապետությունը) հայ բնակչության վերջին զանգվածային արտագաղթը տեղի է ունեցել 1990 թվականի սկզբին, երբ ԽՍՀՄ-ը դե-յուրե և դե-ֆակտո գոյություն ուներ և կենտրոնական իշխանությունները դեռևս քիչ թե շատ արդյունավետ կերպով, ավելի կամ պակաս կողմնակալությամբ, վերահսկում էին իրավիճակը ԽՍՀՄ ողջ տարածքում: Այդ դեպքում, եթե մարդիկ լիովին չէին զրկվում իրենց մշտական կարգավիճակից՝ ի դեմս քաղաքացիության, այլ միայն զրկված էին իրենց իրավունքներից՝ որպես առանձին միութենական հանրապետության քաղաքացիներ, ապա նրանց

մասին չի կարելի խոսել որպես փախստականների՝ այդ հասկացության խիստ իրավաբանական ըմբռնմամբ⁴⁹:

Դեռևս չփորձված միասնական պետության տարածքում անձի ձևական գոյությունը մեզ բույլ չի տալիս խոսել Ադրբ. ԽՍՀ-ից արտաքսված հայերի մասին՝ որպես փախստականների: Սակայն, փաստացի իրավիճակը՝ ի դեմս միասնական Միության կազմում հանրապետության պաշտպանությունից օգտվելու անհնարինության և այդպիսի պաշտպանությունից օգտվելու ցանկության բացակայությունը տվյալ պահին Ադրբ. ԽՍՀ-ի հայերի համար հստակորեն և միանշանակ արտահայտված էր: Այնպիսի կարգավիճակը, ինչպես ԵՓԱ-ն է, նախկին ԽՍՀՄ տարածքում դեռևս չկար, քանի որ անգամ տվյալ կարգավիճակին վերաբերող միջազգային նորմերն ավելի ուշ սկսեցին ձևավորվել:

Այնուամենայնիվ, դե-ֆակտո իրավիճակի նույնացումը բռնի տեղահանումը ԽՍՀՄ նախկին հանրապետության տարածքից, որը ըստ ԽՍՀՄ 1977 թվականի Սահմանադրության՝ «պետություն էր պետության մեջ», և, որպես դրա հետևանք, մշտական բնակության վայրից հարկադրված փոխադրումը, ինչպես նաև դե-յուրե իրավիճակը՝ ճանաչված միջազգային սահմանները չհատելու, համարումը էինք են տալիս խոսել այն մասին, որ այն պահին, երբ միասնական Միությունը դեռևս գոյություն ուներ, տվյալ մարդիկ փաստացի ԵՓԱ կարգավիճակ ունեին:

1998 թվականին ձևական որոշակիություն ստացան երկրի ներսում անձանց տեղափոխման հարցով ղեկավար սկզբունքները: Մարդու իրավունքների ՄԱԿ-ի հանձնաժողովի կողմից, նշված տարում և հետագայում սկզբունքների ներկայացումից հետո, ՄԱԿ-ը միաձայն հավանություն տվեց դրանք ի գիտություն ընդունելու մասին եզրակացությունը: ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհուրդը և Գլխավոր Ասամբլեան նույնպես պաշտոնապես հաստատեցին Սկզբունքները, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպես, օրինակ, ԵԱՀԿ-ն: Չետաքրիթի 1996 թ. սկզբունքների մշակման ընթացքում և փորձագետների խմբի զեկույցում ձևակերպված եզրակացությունը. «...չնայած գործող միջազգային իրավունքը զգալի չափով տարածվում է երկրի ներսում տեղափոխվածների վրա, սակայն, որոշ կարևոր բնագավառների նկատմամբ կիրառման առումով, այն բավարար էինքեր է պարունակում նրանց պաշտպանության և օգնության ապահովման համար»⁵⁰:

Դեկավար սկզբունքներում տրվում է ԵՓԱ-ի հետևյալ բնորոշումը. «...երկրի ներսում փոխադրված անձինք են համարվում այն անձինք կամ անձանց խմբերը, որոնց ստիպել կամ հարկադրել են բողոք կամ լքել իրենց տները կամ սովորական բնակության վայրերը, մասնավորապես՝ զինված բախման, բռնության համընդհանուր արտահայտումների, մարդու իրավունքների խախտման, տարերային կամ մարդու գործողությունների հետևանքով առաջ եկած աղետների արդյունքում կամ ի խուսափումն զրանց, և որոնք չեն հատել միջազգայնորեն ճանաչված պետական սահմանները» (Դեկավար սկզբունքների ներածության 2-րդ կետ):

Սկզբունքներում հայեցակարգային բնույթի և մեկ նորմ է հանդիսանում 1-ին սկզբունքի 1-ին կետի դրույթը. «Երկրի ներսում փոխադրված

անձինք օգտվում են, լիակատար հավասարության հիման վրա, միջազգային իրավունքով և ներպետական օրենսդրությամբ նախատեսված միևնույն իրավունքներից և ազատություններից, որոնցից օգտվում են նրանց երկրում մյուս անձինք: Երանք չպետք է խտրականության ենթարկվեն ցանկացած իրավունքների և ազատությունների իրականացման ժամանակ այն հիմքով, որ նրանք հանդիսանում են երկրի ներսում փոխադրված անձինք»:

Աղբը. ԽՍՀ-ն, որպես իր քաղաքացի, հայերի զանգվածային բռնի արտագաղթի նախաձեռնող պետություն, ակնհայտորեն ցույց տվեց իր վերաբերմունքը նշված կատեգորիայի անձանց նկատմամբ: Ոչ այն ժամանակ, ոչ հետո, ոչ հիմա ոչ նախկին Աղբը. ԽՍՀ-ը, և ոչ էլ, առավել ևս, ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ) քայլեր չեն արել ոչ միայն նախկին քաղաքացիների նկատմամբ իրենց իրավաբաղադրական պատասխանատվության ճանաչման ուղղությամբ, այլ նաև իրենց վրա բացարձակապես ոչ մի բարոյական պատասխանատվություն չեն վերցրել կատարվածի համար: Ոչ բռնի տեղափոխության առաջացման, ոչ բուն տեղափոխության ժամանակ, ոչ հետագայում («Իշխանության իրավասու մարմինները կրում են գլխավոր պարտականությունը և պատասխանատվությունը պայմանների ստեղծման համար, ինչպես նաև՝ միջոցների տրամադրման համար, որոնք թույլ կտան երկրի ներսում փոխադրվող անձանց՝ կամավոր կերպով, անվտանգ պայմաններում և արժանապատվորեն վերադառնալ իրենց տեղերը կամ մշտական բնակության վայրերը, կամ էլ կամավոր կերպով վերաբնակվել երկրի որևէ մասում» (28-րդ սկզբունք), «Իշխանության իրավասու մարմինները կրում են պարտականությունը և պատասխանատվությունը՝ երկրի ներսում փոխադրված անձանց վերադառնալու և փոխադրվելու նկատմամբ, հնարավորության չափով, նրանց կողմից թողնված կամ նրանցից առգրավված գույքը փոխադրումից հետո իրենց վերադարձնելու համար: Եթե այդպիսի գույքի և սեփականության վերադարձնելն անհնար է, ապա իշխանության իրավասու մարմինները ապահովում կամ հեշտացնում են այդ անձանց կողմից համապատասխան փոխհատուցման կամ մեկ այլ ձևով արդարացի հատուցման ստացումը» (29-րդ սկզբունք) երկրի ներսում անձանց փոխադրման հարցով ղեկավար սկզբունքներ) ոչ Աղբը. ԽՍՀ իշխանությունները, ոչ ԱՀ իշխանությունները ոչ մի այնպիսի քան չեն արել, ինչը գրեն որևէ կերպ ի հայտ կբերեր նրանց նպատակաուղղվածությունը մարդու, իրենց հայազգի նախկին քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այն պահին նշված ղեկավար սկզբունքների գոյություն չունենալու, և ՌՓԼ կարգավիճակի իրավական իմաստավորման բացակայությունը, նշված սկզբունքների խորհրդատվական բնույթը, նշանակում է, որ իրավաբանորեն նրանց ոչ պարտադիր լինելու մասին իրավաբանական բնույթի առարկությունները կարող են ի գիտություն ընդունվել միայն բացառապես նախկին Աղբը. ԽՍՀ-ի նկատմամբ: Սակայն սա միայն հարցի գուտ իրավաբանական մասն է, որը ներկայիս Ադրբեջանի իշխանություններին չի ազատում քաղաքական ու քաղաքական պատասխանատվությունից: Աղբը. ԽՍՀ-ի քաղաքական և քաղաքական պատասխանատվությունը փոխանցվել է ԱՀ-ին, քանի որ տվյալ կատեգորիաները ընկան են ոչ այնքան իրավահարողության խիստ ըմբռնման, որքան միջազգային իրավունքի մեջ իրավաբանական ինստիտուտի հարրության վրա:

Մարդու իրավունքները և ազատությունները, որանց պաշտպանությունը, որանց խախտման պատճառների վերացումը չեն կարող լինել իրավահաջողության կամ անիրավահաջողության հարցեր: Ավելի ճիշտ, իրավահաջողության հարցը չի կարող դրվել՝ պետությունների, ողջ միջազգային հանրության համար բացարձակ այդ կատեգորիաների շարքում: Դեռևս 1970 թվականին ՍԱԿ-ի Միջազգային Դատարանը «Barcelona Traction»-ի գործով իր որոշման մեջ ճանաչել է այն պարտավորությունները, որոնք պետությունները կրում են ընդհանուր առմամբ ողջ միջազգային հանրության նկատմամբ (erga omnes պարտականություններ), այնպիսիք, ինչպես «ագրեսիայի և ցեղասպանության ակտերի արգելումը» և «մարդկային անձնավորության հիմնական իրավունքներին վերաբերող սկզբունքների և նորմերի իրականացումը, ներառյալ՝ ստրկությունը և ռասայական խտրականությունը»: Այլ կերպ ասած՝ եթե պետությունը խախտում է այդ պարտականությունները, ցանկացած պետություն կարող է օրինական կարգով գործ հարուցել ի պաշտպանություն մարդու այդ հիմնարար իրավունքների և կարող է բողոքել նրանց խախտումների դեմ:

Գործող միջազգային իրավունքը ճանաչում է երկու կոնվենցիա, որոնք կարգավորում են պետությունների իրավահաջողության մասին խստիվ կանոնակարգված օբյեկտներին վերաբերող հարաբերությունները. 1978 թվականի՝ Պայմանագրերի վերաբերյալ պետությունների իրավահաջողության մասին 1983 թվականի Վիեննայի կոնվենցիան և Պետական սեփականության, պետական արխիվների և պետական պարտքերի վերաբերյալ պետությունների իրավահաջողության մասին: Այդ կոնվենցիաները նշում են, որ կարող են կիրառվել միայն իրավահաջողության հետևանքներին, իսկ դա նշանակում է, որ համապատասխան տարածքային փոփոխություններ ինքնին չեն դիտարկվում որպես իրավահաջողություն, այլ հանդիսանում են ընդամենը նրա հիմքերը: Դրա հետ մեկտեղ, կոնվենցիաների իրավահաջողության մասին գրույթներից կարելի է ճերակացություն անել, որ համաձայն «իրավահաջողություն» տերմինի տառացի իմաստը նշանակում է միջազգային իրավունքների և պարտականությունների անմիջական և իրավաչափ փոխանցում մեկ պետություն – միջազգային իրավունքի սուբյեկտից մեկ այլ պետություն – միջազգային իրավունքի սուբյեկտի: Նշված կոնվենցիաների դրական գիծն է հանդիսանում նրանց տեքստում այն բանի նշումը, որ իրավահաջողությունը կիրառվում է միջազգային իրավունքին համապատասխան, այդ թվում՝ այն միջազգային-իրավական սկզբունքներով, որոնք մարմնավորված են ՍԱԿ-ի Կանոնադրության մեջ⁵¹:

Ժամանակակից ժողովրդավարական Գերմանիան նույնպես չի հանդիսանում նախկին նացիստական Գերմանիայի իրավահաջողող, սակայն դա նրան չի խանգարել իր վրա վերցնել ոչ միայն «Երրորդ Ռայխի» չարագործությունների քաղաքական և քաղաքական պատասխանատվությունը, այլ նաև իր վրա վերցնել բոլոր նրանց կրած վնասների փոխհատուցումը, ում իրավունքները և ազատությունները խախտվել են Ֆաշիստական ռեժիմի կողմից: Եթե ժամանակակից Գերմանիան, որը կանգնած է բոլոր չափափոխներով անհամեմատելիորեն ավելի հեռու, քան իր նախորդը, գնաց այդպիսի քայլի, ապա ինչու ժամանակակից ԱՀ-ն, որտեղ Սահմանադրու-

թյան մեջ ամրագրված է, որ «մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովումը պետության գերազույն նպատակն է» (հոդված 12 «Պետության գերազույն նպատակը»), չի կարող իր վրա վերցնել եթե ոչ արդեն պետական կազմավորման տարածքում տեղի ունեցածի, որի իրավահաջորդն է նա հանդիսանում (Աղբյ. ԽՍՀ), ապա զոհն այդ իրազարծությունների հետևանքների պատասխանատվությունը (երկրի ներքում անձանց փոխադրման մասին ղեկավար սկզբունքների 28 և 29 հոդվածներ):

Սեկ անգամ ևս ընդգծենք, որ հղումներն այն փաստին, որ Ղեկավար սկզբունքները չեն կարող տարածվել տվյալ հարցի վրա ինչպես դրանց ոչ պարտադիր բնույթի, այնպես էլ՝ նախկին Աղբյ. ԽՍՀ-ի գործողությունների համար ԱՊ Իրավաբանական պատասխանատվություն չկրելու պատճառով, սեմանկ են: Պետությունը, որն ունի սահմանադրորեն ամրագրվող բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող անմիջականորեն զործող նորմ՝ «պետության գերազույն նպատակի» մակարդակով, չի կարող հղում կատարել իր ներկա տարածքում անցյալում կատարված իրադարձություններին և, առավել ևս, դրանց ժամանակակից հետևանքներին իր անմասն լինելուն: Որպես տվյալ հետևանքներ հանդես են գալիս Աղբյ. ԽՍՀ-ից արտաքսված և հարկադրաբար ԽՍՀ Միության այլ հանրապետությունների տարածքում վերաբնակված անձանց կարգավիճակի անորոշությունը, դրա հետ կապված՝ նրանց իրավունքների ու ազատությունների խեղճանությունն ու սահմանափակությունը:

Նշված կատեգորիայի անձանց համար տեղավորման սկզբնական վայր հիմնականում հանդիսանում էր Հայկական ԽՍՀ-ն, որտեղ Աղբյ. ԽՍՀ-ից իրենց ազգային պատկանելության հատկանիշի հիման վրա արտաքսված անձանց հիմնական զանգվածը ստացավ ապաստարան և որոշակի նյութական օգնություն: Սակայն հետագայում, Հայաստանի ծանր սոցիալ-տնտեսական վիճակի պատճառով, որը զտնվում էր ոչ միայն տնտեսական անկման, այլ նաև Աղբյ. ԽՍՀ-ի և Թուրքիայի կողմից լայնամասշտաբ շրջափակման պայմաններում, Նշված անձանց հիմնական մասը այս անգամ «տնտեսական ապաստարան» գտավ արդեն նախկին ՌՖՖՍՀ-ի և ժամանակակից Ռուսաստանի (ՌԴ) տարածքում: Բացի դրանից, Աղբյ. ԽՍՀ-ի քաղաքացիների որոշակի մասը, հիմնականում Բաթու քաղաքի և մոտակա շրջանների բնակիչները, ժամանակավոր ապաստարան գտավ նաև Նախկին Թուրքմենական ԽՍՀ-ի⁵² տարածքում:

Աղբյ. ԽՍՀ-ից հեռանալը և ՀՍՀ-ում տեղավորվելը կրում էր անվտանգ ապաստան ձեռք բերելու բնույթ, քանի որ այդ պահին տվյալ անձանց հիմնական և, հավանաբար, միակ հոգսը սեփական կյանքը և մերձավորների կյանքը փրկելու տարրական ցանկությունն էր, տվյալ պահին սոցիալական և զուլայի բնույթի տնտեսական հարցերը եսկան բնույթ չէին կրում: Մարդիկ գիտակցում էին մի պարզ փաստ՝ իրենց փոխադրվում են իրենց քաղաքացիական պատկանելության երկրի ներսում, իրենց հեռանալը պայմանավորված է ԽՍՀ-ի՝ բուն տեղափոխման նախանշանող հանրապետության հետ իրենց որևէ իրավաբարաբանական կապի մեջ գտնվելու անհնարինությամբ: Տնտեսական անկազմակերպությունը հանգեցրեց նրանց զանգվածային փոխադրմանը տնտեսական առումով համեմատաբար առավել բարեկեցիկ երկրի՝ ՌԴ մոտակա

շրջանները՝ Հյուսիսային Կովկաս, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասեր: Մի մասը մեկնեց Մոսկվա և Մոսկվայի մարզ:

ԽՍՀ-ից հայ փախստականների տվյալ քաղաքացի խմբի մի նշանակալի մասը մինչև այժմ գտնվում է անորոշ իրավաբարաբանական կարգավիճակում, որն արտահայտվում է նրանց ներկա բնակության երկրում մշտական կարգավիճակի բացակայությամբ: Դա մեզ հիմք է տալիս խոսել ԽՍՀ-ից հայ փախստականների մասին՝ որպես Դարաբաղյան Հայկամարտության հումանիտար հետևանքներից առավելագույնս տուժած անձանց: Տվյալ կատեգորիայի անձանց իրավունքների և ազատությունների առաջնահերթությունը բխում է անորոշ իրավական կարգավիճակում երկար ժամանակ նրանց գտնվելուց, նրանց նյութական-զուլային կարգավիճակի շարունակական անտեսվածությունից, ինչն իր հերթին, հանրագումարում հիմք է հանդիսանում տվյալ կատեգորիայի անձանց համարելու Դարաբաղյան Հակամարտության զոհեր՝ նրա հումանիտար հետևանքների լույսի ներքո:

Դարաբաղյան Հակամարտության հումանիտար հետևանքների վերացման առաջարկվող մոտեցումը, մեր տեսակետից, ներդաշնակորեն համակցում է մարդու իրավունքների պաշտպանության իրավական սկզբունքը և հակամարտության կարգավորման տվյալ փուլում ստեղծված քաղաքական իրողությունները: Հենց մարդու իրավունքների պաշտպանության իրավաբարաբանական բնույթը թելադրում է այնպիսի մոտեցման իրագործում, որի շրջանակներում հնարավոր կլիներ ներդաշնակորեն համատեղել իրավունքների (օրինակ, մարդու իրավունքների պաշտպանության նորմատիվ իրավական միջոցներ) և քաղաքական (համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներով ապահովվածություն) և այդպիսի ապահովվածություն տուրքերի քաղաքական կամք) բնույթի կատեգորիաները: Դարաբաղյան Հակամարտության բննարկվող հումանիտար հետևանքների հաղթահարման քաղաքական տեսանկյուններից պետ է դասել նաև առավելագույն չափով տուժած անձանց իրավունքների պաշտպանության հարցը՝ նրանց համար իրենց նախկին քաղաքացիական պատկանելության երկրի տարածքում անվտանգ կենսագործունեության համար պայմանների ստեղծման համատեքստով:

ա/ Դարաբաղյան հակամարտության հումանիտար հետևանքներից առավելագույն չափով տուժած անձանց պաշտպանության նորմատիվ իրավական միջոցները և մեխանիզմները

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների դուրսում գործող միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը սահմանում են արդարադատությանը ազատ դիմելու, խախտված իրավունքների վերականգնման դատական միջոցների իրավունքը՝ որպես աշխարհի ցանկալի պետության արդյունավետ իրավակարգի անհրաժեշտ տարր: 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը 8-րդ հոդվածում նշում է. յուրաքանչյուր մարդու՝ «սահմանադրությամբ կամ օրենքով տրամադրվող հիմնական իրավունքների խախտումների դեպքերում իրավատու ազգային դատարանների կողմից նրա իրավունքների արդյունավետ վերականգնման» իրավունքը: 1950 թվականի Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների եվրոպական կոնվենցիան 6-րդ հոդվածում ամրագրում է արդարացի դատաբանության իրավունքը:

Փախստականների իրավունքների ոլորտում եղած միջազգային փաստաթղթերը ցույց են տալիս իրավասու դատարաններին դիմելու օրինակներ իրավունքի հնարավորության կարևորությունն այն անձանց համար, ում իրավունքները խախտված են: Այսպես, 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան նախատեսում է, որ «1. Յուրաբանյալոր փախստական իրավունք ունի ազատորեն դատարան դիմել քոլոր Պայմանավորվող Կողմերի տարածքներում: 2. Պայմանավորվող Կողմերի տարածքում, որտեղ գտնվում է նրա սովորական բնակության վայրը, յուրաբանյալոր փախստական կօգտվի դատարան դիմելու իրավունքից այն նույն դրությամբ, ինչ և քաղաքացիները, մասնավորապես, իրավաբանական օգնության և դատական միջոցների վճարման ապահովումից ազատման հարցերում»: (Կոնվենցիայի 16-րդ հոդված):

1985 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր հտորհրդաժողովը ընդունեց Գանցագործության և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների ղեկավարացիան (40/34 եզրակացություն): Չնայած այն բանին, որ ՄԱԿ-ի Գլխավոր հտորհրդաժողովի տվյալ եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ, նրա դրույթները արտահայտում են պետությունների, միջազգային հանրության կրթիքը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտումների դեպքում պաշտպանության դատական միջոցների մատչելիության իրավական ապահովվածության հարցը: Առաջին հերթին, Գոչակազիրը տալիս է «խանցագործության զոհ» և «իշխանության չարաշահման զոհ» հասկացությունների բնորոշումը, և առաջին դեպքի համար բերում է հետևյալ ձևակերպումը. «այն անձինք, ում անհատապես կամ կոլեկտիվ կերպով հասցվել է վնաս՝ ներառյալ մարմնական վնասվածքները կամ բարոյական վնաս, հուզական տառապանքները, նյութական վնասը կամ նրանց հիմնական իրավունքների էական խախտումը գործողությունների կամ անգործության արդյունքում, որը խախտում է անդամ երկրների գործող քրեական օրենքները, ներառյալ՝ իշխանության հանցավոր⁵³ չարաշահումը»: Երկրորդ, Գոչակազիրի 4-րդ կետը նշում է բոլոր զոհերի իրավունքը՝ «արդարադատության միջոցների հասանելիության և նրանց հասցված վնասի դիմաց ամենաարագ փոխհատուցման՝ ազգային օրենսդրությանը համապատասխան»: Դետո, Գոչակազիրը ձևակերպում է այն դրույթները, որոնք ցույց են տալիս ռեստիտուցիայի⁵⁴ (նախքան հակաիրավական գործողության իրականացումը գոյություն ունեցած դիրքի վերականգնում) և մարդու իրավունքների խախտումների արդյունքում հասցված վնասի հատուցման անհրաժեշտությունը. «Երբ պետական պաշտոնատար անձինք կամ այլ ներկայացուցիչներ, որոնք գործում են պաշտոնական կամ կիսապաշտոնական կարգով, խախտում են ազգային քրեական օրենքները, զոհերը պետք է ռեստիտուցիա ստանան այն պետությունից, որի պաշտոնատար անձինք կամ ներկայացուցիչները կրում են պատասխանատվությունը պատճառված վնասի համար: Այն դեպքերում, երբ այն կառավարությունը, որի օրոք տեղի է ունեցել վիկտիմիզացիայի հանգեցրած գործողությունը կամ անգործությունը, արդեն գոյություն չունի, զոհերին պետք է ռեստիտուցիա տրամադրի իրավահարող պետությունը կամ կառավարությունը» (կետ 11) և «Չարկավոր է աջակցել զոհերին փոխ-

հատուցում տրամադրելու համար նախատեսված ազգային հիմնադրամների ստեղծմանը, ամրապնդմանը և ընդլայնմանը: Անհրաժեշտության դեպքերում այդ նպատակներով կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, այդ թվում նաև՝ այն դեպքերում, երբ պետությունը, որի քաղաքացին հանդիսանում է զոհը, ի վիճակի չէ փոխհատուցել զոհին հասցված վնասը» (կետ 13):

1985 թվականի Գոչակազիրի 11-րդ և 13-րդ կետերը շոշափում են սկզբունքային հարցեր, որոնք անմիջական առնչություն ունեն նախկին ՄԱԿ-ի տարածքում մշտապես բնակվող և 1988-91⁵⁵ թվականներին էքսիլ գտնված ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության և վերականգնման հետ: Իրենց հայտերի կրողները, բռնարարների ենթարկվելը, որոնք ուղեկցվում էին ցեղասպանության ակտերով, գործնականում ողջ շարժական և անշարժ գույքից զրկվելը, հետագայում հանդիսացան տվյալ անձանց ծանր օտգիալ-տնտեսական կացության և իրավական կարգավիճակի անորոշության գլխավոր պատճառները: Ճշշող մեծամասնությանը դրանք անձինք են, որոնց անձը հաստատող վերջին փաստաթղթը հանդիսանում է նախկին հտորհրդային Միության անձնագիրը, որտեղ նշված է նաև տվյալ անձանց քաղաքացիական, հանրապետական-իրավական կապը նախկին ՄԱԿ-ի հետ:

Ներկայիս Ադրբեյջանի Գանրապետության հրաժարումը Ադրբ.ԽՍՀ-ի ժառանգությունից արտահայտված են 1991 թ. օգոստոսի 30-ի պետական անվավերության վերականգնման մասին Գոչակազիրում, ինչպես նաև նույն թվականի հոկտեմբերի 18-ի Սահմանադրական ակտում: Ադրբ. ԽՍՀ իրավական ժառանգությունից հրաժարվելու պատճառներից մեկը, ըստ երևույթի այն իրադարձություններից պատասխանատվության խոսափումն է, որոնք տեղի ունեցան հտորհրդային Ադրբեյջանի, այնուհետև նաև Ադրբեյջանի Գանրապետության տարածքում 1988-1991 թվականներին: Խոսքն այն իրադարձությունների մասին է, որ տեղի են ունեցել հենց այն վայրերում, որոնք հետագայում մտել են նախկին ԱՀ սահմանադրական-իրավական դաշտ և որոնցում ներկայումս կենտրոնացված է պետական – իրավական գերիշխանությունը: Սուսգայիթի, Կիրովբաթի, Բաքվի հայերի ջարդերը և տեղի են ունեցել այդ տարածքներում: Ատացվում է, որ ԱՀ խոստովանել է «տվյալ տարածքներում⁵⁶ միջազգային հարաբերությունների վերաբերյալ պատասխանատվությունը, բայց գերծ է մնացել տվյալ տարածքներում բնակված, ապա բռնի տեղահանված բոլոր անձանց ուղեհարված իրավունքների՝ միջազգային սկզբունքներով և նորմերով վերականգնումից և պաշտպանությունից: Ինչպես երևում է, ԱՀ-ն խոստովանում է իր տերիտորիալ-տարածական ամբողջականության կարևորությունը և առաջնահերթությունը՝ այն վեր դասելով մարդկային իրավունքից և ազատությունից:

Ժամանակակից միջազգային իրավունքը միանշանակ է մարդու իրավունքի պաշտպանության հարցում, որի համար, մասնակիորեն, նախատեսված են պաշտպանության այնպիսի կոնկրետ միջոցները, ինչպես արդարադատության դիմելու իրավունքը, արդար դատաքննությունը, միջազգային նորմերի, միջազգային հումանիտար իրավունքի կոպիտ խախտումների արդյունքում զոհերի կորցրածի փոխհատուցումը:

ԱՄԿ-ի ԷԿՕՍՍՈ իր 2005 թ. հունիսի 25-ի 2005/30 եզրակացության մեջ նշել է, որ «Միջազգային հումանիտար իրավունքն իր մեջ ներառում է ա) իրավահավասար և արդյունավետ մոտեցում արդարադատությանը, բ) ստացված կորստի համանման, իրական և արագ փոխհատուցում, գ) խախտված իրավունքների ուղհանարման և կորստի փոխհատուցման մասին համապատասխան տեղեկատվության մատչելիություն» (11 կետ)։ ԷԿՕՍՍՈ-ի 2005/30 եզրակացությունը նշել է նաև, որ «կրդարարատության անհատական մոտեցման հետ միասին, իշխանությունները պետք է ձգտեն այնպիսի գործընթացների մշակմանը, որոնք թույլ են տալիս ներկայացնել կորստի փոխհատուցման վերաբերյալ կոլեկտիվ հայցեր և ստանալ փոխհատուցում» (կետ 13)։ Հարավայր է նշել նաև ԷԿՕՍՍՈ-ի եզրակացության 16 կետի հաստատումը. «Իշխանությունները տուժածների կորստի փոխհատուցման և այլ օգնությունների համար պետք է ստեղծեն ազգային մեխանիզմներ այն դեպքում, եթե կողմը, որ պատասխանատու և կորստի համար, հնարավորություն չունի, կամ չի կամենում իրագործել իր պարտականությունները»։

ԱՄԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության Հանձնաժողովի, մարդու իրավունքների պաշտպանության և աջակցության ենթահանձնաժողովի իր 2005 թ. հունիսի 28-ի⁵⁷ եզրակացության մեջ ամբողջապես ներքին է մտնում փախուսածների կորստի փոխհատուցման նյութական դատավարական ապահովվածությունը, որոնք կարելի է կենտրոնացնել եզրակացության 2 ենթակետերի մեջ. «Իշխանությունները ապահովում են փոխհատուցան և վերականգնման մասին հայցի ուսումնասիրությունները, որոնք պետք է մատչելի լինեն փախուսականների և փոխհատուցման ենթակա այլ անձանց համար, անկախ բնակության վայրից և այն վայրերից, որտեղ մտադիր են բաքնվել»։ Իշխանությունները ապահովում են, որպեսզի բոլորն իմանան փոխհատուցման գործընթացի և վերականգնման վերաբերյալ հայցերի ուսումնասիրության մասին և, որպեսզի այդ գործընթացը լինի դյուրանատեղի» (13.4 ենթակետ) և «Պետությունները ներդնում են բոլոր ջանքերը՝ ստեղծելու վերականգնման վերաբերյալ հայցերի ուսումնասիրման կենտրոններ և բյուրոներ բոլոր այն շրջաններում, որտեղ ներկայումս բնակվում են պտենցիալ հայցատուներ։ Տուժածներին առավելագույն մատչելիության ապահովման համար, վերականգնման վերաբերյալ հայցերը հարկավոր է փոխանցել փոստով, լիազորագրով, կամ անձամբ։ Իշխանություններն ուսումնասիրում են նաև մոբիլային ստորաբաժանումների ստեղծման հարցը /13.5 ենթակետ/։

Ունիվերսալ և տարածաշրջանային բնույթի միջազգային դատական մարմինները համապատասխան գործը վճեղու համար ելուն է են բոլոր փախսականների իրավունքի պաշտպանության սկզբունքից։ Հետևաբար, մարդու իրավունքների պաշտպանության ռեզիոնալ դատական մարմինները ինպես եվրոպական⁵⁸ այնպես էլ, օրինակ, միջամերիկյան, հետևողական կերպով տվյալ գոտերին հատկացնում են փոխհատուցում։

Նախկին Հարավսլավիայի պատերազմական հանցանքների վերաբերյալ Միջազգային Տրիբունալի օրենքը թույլ է տալիս միաժամանակ որոշում կայացնել տուժածներին վերադարձնելու ունեցվածքը կամ եկա-

մուտը, անգամ եթե այդ ունեցվածքը փոխանցվել է այնպիսի մեկին, որը որևէ առնչություն չի ունեցել հանցանքի հետ (1994 թ. ֆեբրվարի 11-ին Վրիտանիայի կողմից ընդունված օրենքի՝ գործընթացի և ապացույցների մասին 105 հոդված)։

Կարելի է նշել նաև, Միսկիտոյի գործի քննարկման ժամանակ, Մարդու իրավունքների հարցերով Միջամերիկյան Հանձնաժողովի կողմից արված առաջարկությունները վերադարձած ՆՓԱ-րին կորսված գույքի դիմաց արդար փոխհատուցման վճարման մասին ներառյալ տները, ցանքատաքածոները, ընտանի կենդանիները և տնային գույքը։ Հանաշխարհային թանկի դիրեկտիվները, որոնք վերաբերվում են ոչ կանավոր տեղաշարժերին, նույնպես նախատեսում են բոլոր կորուստների փոխհատուցման հարցերը, որոնք ի հայտ են եկել վերաբնակության, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական խնդիրների պատճառով։ Դետոնյան խաղաղության համաձայնագիրը 1995 թ. Բոսնիայի և Հերցեգովինայի համար նախատեսել էր տեղափոխված անձանց և փախստականների անշարժ գույքի վերաբերյալ պահանջների ուսումնասիրման հանձնաժողովի ստեղծումը։ Հանձնաժողովին տրվեց վերջնական և պարտադիր որոշումներ ընդունելու ուղղակի մանդատ, որոնք վերաբերվում էին 1991-1995 թթ. ժառերազմի ժամանակ ոչ իրենց կամքով վաճառված կամ այլ միջոցներով ուրիշ տրված անշարժ գույքին։ Պահանջները կարող են նախատեսել ունեցվածքի վերադարձ կամ արդար փոխհատուցում⁵⁹։

1988-91թթ. ժամանակահատվածում ԱրդրևՄԻ տարածքից վտարված անձանց իրավունքի վերականգնման և պաշտպանության համար ստեղծված խորհրդային ներպետական կառավարար-իրավական մեխանիզմներն ու միջազգային դատական գործընթացները համարվեցին անարդյունավետ ու անկիրառելի։ Ակսած խՄՄԻ Նախարարների խորհրդի 1990 թ. ապրիլի 7-ի թիվ 329 «ԱրդրևՄԻ-ից և ՀայկեՄԻ-ից ստիպողաբար հեռացած քաղաքացիներին օգնություն ցուցաբերելու մասին», ինչպես նաև ֆինանսների, արդարադատության, ներքին գործերի հանրապետական նախարարությունների համատեղ ճանակի և խՄՄԻ աշխատանքի պետական կոմիտեի 1990 թ. հունիսի 12-ի ««ԱրդրևՄԻ-ից և ՀայկեՄԻ-ից ստիպողաբար հեռացած քաղաքացիներին պատկանող բնակելի տարածքների և այլ կառույցների հաշվառման կարգի և նյութական կորուստների փոխհատուցման մասին» թրքի վրա մնացած որոշումներից միջև մեր օրերը, երբ նախկին ԱրդրևՄԻ-ի և ներկա ԱՊ-ի ազդեցիվ քաղաքականությանը հետպահան քաղաքացիական բնակչության հետամնաց համապատասխան միջազգային-իրավական գնահատական չի տրվել միջազգային մակարդակներում, ԱրդրևՄԻ, ներկայումս ԱՊ-ի տարածքում տուժած բոլոր անձանց օրինական իրավունքների վերականգնումը մնում է իրատապ օրակարգային հարց։

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հաճախ միջազգային կազմակերպությունները և դրանց դատական առյանները համարժեք չեն ընկալում արմատական տարբերությունները /քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական/ ԱրդրևՄԻ-ից փախած անձանց, որոնք փրկվում էին իրենց և իրենց հարազատների կյանքը և ՀայկեՄԻ-ից տեղափոխված անձանց, որոնց համար ընթացիկ խնդիրը նյութա-գույքային ձեռքբերման, ՀայկեՄԻ կառավարության կողմից տրվող փոխհատուցումը ժամանակին ստանալու և այլ հարցեր էին, և ոչ թե իրենց և իրենց հարազատների փրկությունը կամ զոնե ինչ-որ չափի անձնական գույքի պահպանումը։

ԱղբրեսՄ3-ից բռնի տեղահանված անձանց իրավունքների վերականգնման հարցը ԱԴ-ի կողմից բացառապես չլնդունելու ներկա իրավիճակը, թելադրում է հորիորդային Արդբեջանի նախկին քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում «իրավական վակուումի» լրացման անհրաժեշտությունը, որն առաջացել է ԱԴ-ի ԱղբրեսՄ3-ի իրավահաջորդ լինելու հրաժարումից:

Հաշվի առնելով արդբեջանական իշխանությունների ներկայիս դրությունը, դժվար է ենթադրել ԱԴ դատական իշխանական մարմինների անկախ, անաչառ և կշռադատված մոտեցումը հեռացված անձանց անձնական և ունեցվածքային իրավունքների վերականգնման հարցում: ԱղբրեսՄ3-ի նկատմամբ ԱԴ-ի անհրաժեշտագործությունը դեռ չի Շահանկուն, որ նախկին միութենական հանրապետության տարածքում չկա պետական սուբյեկտ, որն ունակ է լրացնել հորիորդային Արդբեջանի փլուզումից հետո առաջացած «իրավական վակուումը»:

ԼՂՀ-ն կարող է պատասխանատվության որոշակի չափ ստանձնել ԱղբրեսՄ3-ից վտարված բնակչության իրավունքների վերականգնման մասով, դա հիմնավորելով, որ տուժած անձինք, ԼՂՀ ներկայիս քաղաքացիների հետ, մի ժամանակ քաղաքացի-իրավական կապի մեջ էին ԱղբրեսՄ3-ի հետ: Այդ դեպքում կարելի է խոսել ԼՂՀ-ի որոշակի չափով, որպես ԱղբրեսՄ3-ի իրավահաջորդ մասին, այն մասով, ինչը վերաբերում է հորիորդային Արդբեջանի տարածքում մարդու և քաղաքացու ոսոնահարված իրավունքների և ազատությունների վերականգնմանը և պաշտպանությանը: Այդպիսի իրավահաջորդ լինելը ԼՂՀ-ի բարի կամքի դրսևորումը կլինի, եթե իր պատասխանատվության զգացումը ԱղբրեսՄ3-ի տարածքում խաղաղ բնակչության նկատմամբ հանցավոր գործողությունների արդյունքում առավել տուժած անձանց ծակատազրի, ինչպես նաև տուժած անձանց արագ և իրական օգնություն հասցնելու գործում: ԼՂՀ-ը կարող է հանդես գալ որպես պետական երաշխավոր տուժած անձանց իրավական պաշտպանության դատական միջոցներից, ինչպես նաև ազգային /ներպետական/ արդարադատությունից օգտվելու հարցում: Ունենալով պետական իշխանության արդյունավետ կառուցվածք, որը հիմնված է իրավական պետության իշխանության տարրաբնույթից սկզբունքի վրա, տուժած անձանց համար ԼՂՀ-ն իր դատական մարմինների օգնությամբ կարող է անմիջական շփումներ ունենալ արդարադատության միջոցների հետ և իր կազմակերպ-իրավական մեխանիզմներով ապահովել հասցված վնասների մի մասի փոխհատուցումը և ոսոնահարված իրավունքների որոշակի վերականգնումը:

ԼՂՀ-ի դատարանները կարող են քննարկման ընդունել տուժած անձանց հայցերը և, առաջին հերթին այն հայցերը, որոնք վերաբերում են 1988-1991 թթ. իրադարձությունների ընթացքում առգրավված անշարժ ունեցվածքին, ինչպես նաև արդեղից բխող բարոյական և նյութական կորստի փոխհատուցման հայցերը: Ակնհայտ է, որ հայցերը կարող են հարցնազրվել ԱԴ-ին, որի տարածքում կատարվել են հանցագործությունները և անիրավ առգրավվել է ունեցվածքը, որը հնարավոր է, մինչ օրս գտնվում է անբարեխիղճ սեփականատիրոջ ձեռքերում: Դրա հետ միասին իրական դրությունը նշում է ԼՂՀ դատական մարմինների որոշիչ դերը, որոնք կարող են ապահովել տուժածների շփումը արդարադատության արդյունավետ միջոցներին, ապահովել անձնական և ունեցված-

քային ոսոնահարված իրավունքների ամբողջական և անմիջական վերականգնումը, կորստի մի մասի փոխհատուցումը:

Միևնույն ժամանակ ԼՂՀ պետական իշխանությունները կարող են ելնել նրանից, որ.

1. Մարդու իրավունքի և ազատության խախտումները համարվում են ունիվերսալ իրավագործության սահմանման հիմք, որ բոլոր իշխանություններին հնարավորություն է տալիս անսահմանելու մարդու իրավունքների խախտումների կանխման գործին, որտեղից էլ որ դարձնի բխեն: Ունիվերսալ իրավագործությունը հիմնված է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, որ միջազգային իշխանություններին հնարավորություն են տալիս ընդունել կոլեկտիվ, ինչպես նաև ինքնուրույն խստնվածքի արդյունավետ չափանիշները: Այդ է ապացուցում ունիվերսալ միջազգային փաստաթղթերի նորմերի և միջազգային դատական մարմինների գործունեության պրակտիկան:

2. ԱԴ-ի ԱՄՍ3 իրավահաջորդության մեթոմը նախկին միութենական հանրապետության տարածքում չպետք է հանգեցնի «իրավական վակուումի», հատկապես, եթե այն կապված է տուժած բնակչության իրավունքի և ազատության պաշտպանության հետ: ԼՂՀ-ն կարող է ապահովել տուժածների արդյունավետ մոտեցումը իրավական օգնությամբ և, առաջին հերթին՝ իշխանության դատական պաշտպանության միջոցներին, ինչը չի կարող և՛կամ չի ցանկանում իրականացնել հետաքրքրվող կողմերից և ո՛ր մեկը:

3. ԼՂՀ-ն կարող է դիտարկել որպես ԱՄՍ3 իրավահաջորդ, որն ապահովում է տուժածների ունեցվածքի և անձնական իրավունքների վերականգնումն ու պաշտպանությունը, քանզի ԱԴ-ի հետ հավասար իրավունքներով, այն և ձևավորվել է նախկին ԱՄՍ3 տարածքում իր ներկայիս փաստացի սահմաններում, և, ի տարբերություն ԱԴ, չի հրաժարվում նախկին միութենական հանրապետության բնակչության ոսոնահարված իրավունքների վերականգնման և պաշտպանության խնդիրների լուծման իր բաժնից, որոնք առավել չափով տուժել են Լեռնային Դարարադի և Արդբեջանի միջև հակամարտության արդյունքում:

Ուսումնասիրելով հայցերը, ԼՂՀ-ի դատարանները ներկայացված ապացույցների դեպքում կարող են վճիռ կայացնել կոնկրետ ունեցվածքը սեփականության իրավունքով անձանց պատկանելու մասին, ինչպես նաև օրինական սեփականատերերի կողմից տվյալ գույքի տիրապետման և օգտագործման հետ կապված բոլոր սահմանափակումների և խոչընդոտների վերացման անհրաժեշտության մասին: ԼՂՀ-ի դատարանները կարող են կայացնել նաև վճիռ հանցավոր գործողություններից տուժված և ունեցվածքից զրկված անձանց մտավոր և նյութական փոխհատուցման մասին:

Այն դեպքում, եթե ԱԴ-ն չի անձամայնվի հակամարտության հուսանելուտ հետևանքների հաղթահարման հարցերը լուծելու նպատակով միասնական կազմակերպ-իրավական մեխանիզմներ ստեղծելու մասին ԼՂՀ-ի հնարավոր առաջարկությունների հետ /օրինակ, ներկայացվող հայցերի կապակցությամբ, իրավական օգնության և իրավական հարաբերությունների վերաբերյալ համաձայնության կնքում, ինչպես նաև միասնական հանձնաժողովի ստեղծում ներկայացվող հայցերի փոխադարձ հաշվառման և գնահատման համար, միասնական կոմիտեների ստեղծում փոխհատուցման վճարման անմիջական իրականացման նպատակով⁶⁰, ապա ԼՂՀ-ն կարող է ԱղբրեսՄ3 նախկին տարածքները դիտարկել որպես

նյութագրային միջոց անձանց, որոնց իրավունքներն ու ազատությունները ոտնահարվել են, պահանջների մի մասի անմիջական բավարարման համար:

ԱՅ-ի շարունակվող հրաժարումը վերականգնել հայ փախստականներին և բռնի տեղահանվածներին հասցված կորուստները, հինգ է տալիս ԼՂՀ-ին ճանաչել նախկին Ադրբեյխանի տարածքում գտնվող միակ պետական տարբերակ, որն իր վրա կարող է վերցնել հակամարտությունից առավել տուժած անձանց իրավունքների վերականգնման պատասխանատվությունը, գործողություններ իրականացնել նշված անձանց գույքային կորուստների փոխհատուցման ուղղությամբ: Այս համատեղությունը ԼՂՀ-ի կողմից ներկայումս վերահսկվող տարածքները, որոնք նախկին ԼՂՀ-ի սահմաններից դուրս են և այնտեղ փաստորեն գործող Չանրապետության օրենքները պետք է հասկացվեն որպես Ադրբեյխանի կողմից հայությանը հասցված գույքային կորուստների փոխհատուցման ապահովման գործում անհրաժեշտ քաղաքական-իրավական տարրեր:

Բ/ Ղարաբաղյան հակամարտության հունամիտարի հետևանքներից առավել չափով տուժած անձանց իրավունքների պաշտպանության իրավաքաղաքական տեսանկյունները

Չաչվի առնելով մինչև օրս անորոշ իրավական դրություն ունեցող մարդկանց հիմնական զանգվածի տեղափոխման պարագիծը, կարելի է ասել, որ այդ մարդկանց հետագա հասկատագրի որոշմանը մասնակցող երկրներն են Չայաստանը, Ռուսաստանը և Ադրբեյջանը:

Ադրբ. ԽԱՅ-ի հայերի մի եական մասը անմիջապես փոխադրվեց նախկին ՌՖՖՍՀ-ի տարածք, նրանց մի մասը այնտեղ ժամանակավոր կարգավիճակ ստացավ և հետագայում դարձավ ՌԴ քաղաքացի: Սակայն անմիջականորեն Ռուսաստան փոխադրված մարդկանց տվյալ խմբի էլ ավելի մեծ մասը նրա տարածքում մնում է անորոշ իրավական կարգավիճակով:

Տեղափոխված մարդկանց այս խմբի իրավական կարգավիճակի անորոշության հարցում հատկանշական է միգրացիայի իրավական դրույթների գծով ռուս փորձագետի կածիթը (Մ.Ա. Փանուշկինա, «Մեծորիակ» իրավական կենտրոնի «Միգրացիա և իրավունք» ցանցի ղեկավար)։ «...Ադրբեյջանից 1989-1990-ական թվականների փախստականները էքսիլական հայաժամանակների գոհեր են, որոնք եկան իրենց պետության մայրաքաղաք՝ Մոսկվա, կամ էլ Ռուսաստանի այլ մասերը: Նրանք չեն հատել իրենց քաղաքացիական պատկանելության սահմանները: Իշխանությունները չեն ցանկանում նրանց ճանաչել որպես ՄՖՄ կատեգորիայի անդամներ: Նրանց դատում են մեկ մի, մեկ մյուս խմբերին: Եվ հիմա նրանց համար շատ ծանր է: Մոսկվայի շրջանում նրանցից շատերը չեն ընդունել քաղաքացիությունը, որի համար մի քանի պատճառներ կային: Նախ, նրանցից ոմանք չէին էլ ցանկանում ընդունել ՌԴ քաղաքացիությունը: Բացի դրանից, կար մարդկանց մի խումբ, ովքեր պնդում էին, որ նրանք հանդիսանում են ՌԴ քաղաքացիներ ըստ ընդունման (1991 թվականի «ՌԴ քաղաքացիության մասին» ՈՂ օրենքի 13.1 հոդված), քանի որ նրանք չեն հատել իրենց պետության սահմանները՝ Ռուսաստան ժամանելով դեռևս խորհրդային ժամանակներում: Երբ 1997 թվականին ի հայտ եկավ «Փախստականների մասին» օրենքի նոր՝ Միգրացիայի դաշնային ծառայության (ՄԴԾ) խմբագրությունը, խտասկություններ սկսվեցին այն մասին, որ Ադրբեյջանից

փախստականների դրությունն անորոշ է, քանի որ նոր խմբագրության մեջ շատ լավ նկարագրված է կարգավիճակի տրամադրման գործընթացը, իսկ կրանք այն չեն անցել, և անգամ միջնորդություն չեն ներկայացրել կարգավիճակի տրամադրման համար: ՄԴԾ ղեկավարությունը որոշեց, որ վատ չէր լինի՝ ինչ-որ այնպիսի բան անել, ինչը կթեքսայնե Օտաշության քեռը: Անգամ խոսակցություններ կային այն մասին, որ լավ կլինեի նրանց ետ ուղարկելին հետ՝ Ադրբեյջան: Մենք սկսեցինք ակտիվորեն գործել, ՄԱԿ-ից տեղեկություն ստացանք Ադրբեյջանի՝ որպես ելքի երկրի մասին: ՄԱԿ-ը միանշանակ աջակցեց մեր դիրքորոշմանը, որ փախստականներին չի կարելի է ետ վերադարձնել Ադրբեյջան»⁶¹:

ՄՖՄ հարցում ՌԴ իրավական դիրքորոշումների անորոշությունը մատնացույց են անում նաև տվյալ ոլորտի այլ փորձագետներ: Նրանք ընդգծում են, որ ռուսական իրավակարգում բացակայում է բուն «երկրի ներսում վերաբնակեցված անմիջակ» հասկացությունը այն իմաստով, որը դրան տրվում է Ղեկավար սկզբունքների ներածության 2-րդ կետում: «Չարկադիր վերաբնակ» տերմինը, որը գործում է ռուսական օրենսդրության մեջ և որի սահմանումը պարունակում է «Չարկադիր վերաբնակների մասին» ՌԴ օրենքի 1-ին հոդվածում (ընդունված է 1993 թվականի փետրվարի 19-ին⁶²), ՆՓՄ հասկացության հետ, որից ելնում են Ղեկավար սկզբունքները, ունի միայն բառային նմանություն: Եթե խոսենք բովանդակային չափորոշիչների մասին, ապա, ըստ սահմանման՝ հարկադիր վերաբնակ «ՌԴ քաղաքացին է, ով լքել է բնակության վայրը նրա կամ իր ընտանիքի անդամների նկատմամբ հասկացված բռնությունների կամ այլ նկրալ հետապնդումների հետևանքով...»: Այնհայտ է, որ հարկադիր վերաբնակի սահմանումը կառուցված է ըստ 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայում փախստականի սահմանման հիման վրա, և ճիշտ այնպես, ինչպես և փախստականների իրավունքում, անձին համարվող վերաբնակ ճանաչումը ենթադրում է հատուկ գործընթաց, որը անամանում է ապաստան փնտրող անձի կողմից իրականացվող գործընթացին: Այստեղից՝ հարկադիր վերաբնակի կարգավիճակի բացակայության դեպքում երկրի ներսում փոխադրված անձը չի կարող օգտվել այն իրավունքներից և երաշխիքներից, որոնք նրա համար ապահովվում են պետության պաշտպանությունն ու աջակցությունը: Սակայն, ի տարբերություն փախստականների, ում հատուկ կարգավիճակ անհրաժեշտ է այն պատճառով, որ նրանք կորցրել են սեփական երկրի պաշտպանությունը և ստիպված են այն որոնել օտար պետության տարածքում, ՆՓՄ-ն կարիք չունի այդ կարգավիճակի, քանի որ նրանք մնում են քաղաքացի և այդ պատճառով ունեն այն նույն իրավունքները, ինչ և մնացած քաղաքացիները: Նրանք ունեն ընդամենը լրացուցիչ երաշխիքների կարիք, որոնք հնչապցնում են այդ իրավունքների իրականացումը և հարկադրական փոխադրման պայմաններում տեղավորվելը⁶³:

Այսպիսով, նախկին Ադրբ. ԽԱՅ-ի հայերի այն եական մասը, ովքեր անմիջակաբերու տեղավորվեցին Ռուսաստանում և ունեն որոշակի պաշտոնական կարգավիճակ, կամ արդեն մշտական կարգավիճակ են ստացել ՌԴ քաղաքացիության ձևով, կան էլ գտնվում են փախստականների կարգավիճակում, այլ ոչ թե հարկադիր վերաբնակների՝ ըստ ռուսական օրենսդրության, քանի որ ժամանակավոր կարգավիճակ կարող է ունենալ միայն ՌԴ քաղաքացին:

Ավելի մեծ բանակություն են կազմում այն անձինք, ովքեր անմիջապես վտարումից հետո բնակություն հաստատեցին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տարածքում, երկար ժամանակ գտնվում էին այստեղ և արդեն Հայաստանի Հանրապետությունից փոխադրվեցին ՌԴ: Ստացվում է, որ այս կատեգորիայի անձինք հատեցին արդեն միջազգայնորեն ծանաչված սահմանները և դրանով իսկ չեն կարող դիտարկվել որպես ՆՓԱ խումբ: Արդեն այս կատեգորիայի անձանց մեծամասնությունը փաստորեն էլ քաղաքացիություն չունեցող անձ (ապատրիդ)⁶⁴, քանի որ նրանց վերջին մշտական կարգավիճակը եղել է Ադրբ. խՍՀ քաղաքացու կարգավիճակը և նրա միջոցով՝ նախկին խՍՀՄ քաղաքացու կարգավիճակը, իսկ հետագայում նրանք ունին ստացել ոչ ՀՀ, ոչ էլ ՌԴ քաղաքացիություն, իսկ ժամանակավոր կարգավիճակ՝ ի դեմս փախստականի, որը տրամադրվում է խիստ որոշակի ժամանակով, նրանք արդեն չունեն:

Մասնակից պետությունների համար ուժի մեջ է մտել (1975 թ.) 1961 թվականի⁶⁵ Կոնվենցիան ապաքաղաքացիության կրճատման մասին, որի գլխավոր սկզբունքը հանդիսանում է մասնակից պետությունների համար այն անձանց սեփական քաղաքացիության տրամադրումը, ովքեր այլ կերպ դրան չեն կարող հուսալ⁶⁶:

մարդու ազատությունն ու իրավունքները, որի քաղաքացին է նա հանդիսանում, նա իրավունք ունի անվտանգ զարգացման այն երկրի շրջանակներում, որտեղ որ նա այլ անհատների հետ միասին հանդիսանում է ինքնիշխանության օժտված անձ և այդ պետության իշխանության բնական աղբյուրը, իսկ պետությունները, որոնք այսպես թե այնպես ներգրավված են այդ իրավունքների իրականացման և պաշտպանության մեջ, ունեն այդ իրավունքներին համապատասխան պարտականություններ: Եվ ընդհակառակը, պետություններն իրավունք ունեն ապահովել անհատների կողմից օրենքների և այլ նորմատիվ-իրավական կարգավորումների պահպանումը, և այդ պատճառով ի հայտ են գալիս արդեն անհատների իրավունքներին համապատասխան պարտականություններ /օրինակ, ապատրիդների կարգավիճակի մասին համաձայնագիր, 1954 թ., «Յուրաքանչյուր ապատրիդ ունի պարտականություններ երկրի նկատմամբ, որում նա գտնվում է, և որի ուժի ներքո, մասնավորապես, նա պետք է ենթարկվի օրենքներին և որոշումներին, և նաև ընդհանուր կարգավիճակի համար ընդունվող չափանիշներին»/:

71 Անգամ ոչ հետո անցյալում մարդը դիտվում էր որպես միջազգային իրավունքի օբյեկտ: Ձեկույցներից մեկում, որ ներկայացված էր միջազգային իրավունքի օրինակաբանում համար անցկացվող Հաագյան կոնֆերանսի նախապատրաստման ընթացքում /1930 թ./, ասվում էր, որ անհատները հանդիսանում են միջազգային իրավունքի ոչ թե սուբյեկտներ, այլ ընդամենը օբյեկտներ / *И.И. Лукашук, Концепция права международной ответственности // «Государство и право», М., 2003, № 4, с. 85*

1. Ներածություն

Ղարաբաղյան հակամարտության հարցում իր անզիջում քաղաքականություն և մտտեցումների մեջ Աղրբեջանի հիմնական փաստաթղթերից մեկը համդիսանում է նավթի և գազի արդյունահանումից ստացված նշանակալի եկամուտների հեռանկարի գործոնը: Բաքուն համոզված է, որ կասպիական եներգակիրների արտահանումից ստացված գերշահույթների շնորհիվ նա կարող է Հայաստանին և Ղարաբաղին, տարածաշրջանում սպառազինության մրցավազք պարտադրել դրանով ստիպելով դարաբաղյան հարցում զգալի զիջումների գնալու: Մյուս կողմից, Բաքուն շարունակում է հուսալ նաև, որ արևմտյան երկրների ու եվրոպական կառույցների հետաքրքրությունը կասպիական ածխաջրածինների նկատմամբ կստիպի նրանց ինչ-որ փուլում սատարել Բաքվի դիրքորոշմանը ինչպես Ղարաբաղյան խաղաղ գործընթացում, այնպես էլ հենց Աղրբեջանի ներսում ժողովրդավարացման ու մարդու իրավունքների պաշտպանության շարունակ պահպանվող հիմնախնդիրների անտեսման հարցերում:

Մինչևուրեք ժամանակ պետք է հաշվի առնել այն կարևորագույն հանգամանքը, որ ոչ Ղարաբաղյան Հակամարտությունն ինքնին, և ոչ էլ դրա շարունակվող չկարգավորվածության փաստը ԱՄՆ-ի, առաջատար եվրոպական երկրների կամ շահագրգիռ այլ պետությունների համար չեն կարող դիտարկվել որպես խոչընդոտ եներգետիկ անվտանգության ու դեպի կասպիական եներգակիրները զգալի մուտքի ապահովման հարցերում: Ղարաբաղյան հակամարտության գոտուն անմիջապես հարակից տարածքում, 2006 թվականից, «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի և «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղի անխափան շինարարությունը և անվտանգ գործարկումը, ինչպես նաև տարածաշրջանում այլ մասշտաբային հեռանկարային եներգետիկ նախագծերի իրականացման հնարավորությունը ապացուցում են, որ նույնիսկ Աղրբեջանի հետ հակամարտության չկարգավորվածության պայմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և նրա զինված ուժերը տարածաշրջանային անվտանգության, կայունության պահպանման հարցերում հանդիսանում են տևական ստատուս-քվոն ապահովող գործոններ և սպառնալիք չեն նշված եներգետիկ նախագծերի համար:

Իրականում Հարավային Կովկասի անվտանգության ու տարածաշրջանային եներգետիկ ու կոմունիկացիոն նախագծերի կայուն գործարկման համար լրջագույն սպառնալիքը շարունակում է մնալ սպասադիտության ճոր մրցավազքի արագացման նպատակով աղրբեջանական իշխանությունների կողմից նավթային գերշահույթների օգտագործման վտանգը, Աղրբեջանի կողմից էլ ավելի շատ սպառազինության ու ռազմական տեսիլակայի գնումը /այդ թվում նաև «հիմնախնդրային երկրներից» անլեզալ տրանսֆերտների տեսքով/, ինչպես նաև Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական գործողությունների ծավալման ճանապարհով Ղարաբաղյան Հակամարտությունը լուծելու նպատակով Բաքվի կողմից մշտապես հնչող սպառնալիքները:

Սակայն, դրա հետ մեկտեղ, Աղրբեջանի նավթագազային ոլորտում տիրող եներկայիս իրավիճակի, տնտեսության, ինչպես նաև այդ երկրի հասարակական-քաղաքական ու սոցիալական կյանքի վրա դրա ազդեցության և դրա զարգացման հետագա հեռանկարների մանրակրկիտ և առարկայական վերլուծությունը մեզ համոզեցնում է բավական ոչ միանշանակ եզրակացությունների ու ծնում է լիովին կոնկրետ հարցեր:

2. Նավթը, գազը և Աղրբեջանը. վարդազույն առասպելներ և դաժան իրականություն

Կասպիական ծովի շեֆում նավթի և գազի աղրբեջանական պաշարների գումարային զնահատույնը տատանվում է կախված հետազոտողների քաղաքական նախապատվություններից և շատ դժվար է օրյենտիրվել պատկերացումներ կազմել Աղրբեջանի իրական ածխաջրածնային ներուժի մասին: Այնուամենայնիվ, պետք է խոստովանել, որ դրանք զգալի են /նավթի ապացուցված պաշարները կազմում են շուրջ 3-7 մլրդ. բարել և բնական գազինը շուրջ 850-1370 մլրդ.խոր.մ./, տևական ժամանակահատվածում ընդունակ են ազդեցություն քոլոնել Աղրբեջանի տնտեսական զարգացման վրա և անպայմանորեն պետք է հաշվի առնվեն տարածաշրջանային քաղաքական, ռազմատեսիլիկական և սոցիալ-տնտեսական գործընթացների վերլուծության ժամանակ:

Սակայն նավթը և գազը հանդիսանալով համաշխարհային տնտեսության կարևորագույն հումքային ռեսուրսներից մեկը, միևնույն ժամանակ արտահանող երկրների տնտեսական աճի և քաղաքական զարգացման համար բացարձակապես փրկիչ գործոն չեն, հատկապես երբ այդ երկրներն ունեն պետական շինարարության փոքր փորձ և առաջին քայլերն են կատարում ժողովրդավարության ներմուծման և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորման մեջ: Պատահական չէ, որ գիտական ու վերլուծական գրականության մեջ նույնիսկ գոյություն ունի «նավթային անեծք» տերմինը, որը բավական դիպուկ է բնորոշում տնտեսական, սոցիալական և քաղաքական հիմնախնդիրների ու քարտուրյունների աստիճանը, երբ երկրի վրա թափվում է բնական ռեսուրսների վաճառքից ստացված դրամային հոսքը: Այս հիմնախնդիրները հանդիսանում են նավթ արտահանող երկրների տնտեսական քարեկեցության ու քաղաքական զարգացման ճակատային մասի «մուխ կողմը»: Համաշխարհային պատմության մեջ կան երկրների տասնյակ օրինակներ,² որոնց հետագա ճակատագրում և նույնիսկ գոյության խնդրում հարուստ բնական ռեսուրսների առկայության գործոնը համախալ կատարել է դավադիր և նույնիսկ ճակատագրական դեր՝ Նիգերիայից մինչև Սեբսիկա, և Հարսուրդների իսպանական կայսրությունից մինչև ԽՍՀՄ³:

Գործնականում արսիտան է դարձել գաղափարն այն մասին, որ բնական ռեսուրսների առատությունը (առաջին հերթին՝ ածխաջրածինը), որոնցից ստացված եկամուտը կազմում է պետական բյուջեի մեծ մասը, նավթ արտահանող, զարգացող երկրներում ժողովրդավարության գարգացման ճանապարհին շատ լուրջ խոչընդոտ է հանդիսանում:² Այս կոնտեքստում Աղրբեջանը համարվում է առավել քրեատոմատիկական օրինակներից մեկը, որտեղ նավթը բացասական ազդեցություն ունի երկրի ժողովրդավարացման գործընթացի վրա:³ Չէ՛ որ ածխաջրածինների հարսության վերահսկողությունը նավթ արտադրող երկրների իշխանություններին թույլ չեն տալիս իշխանությունը կիսել կամ քաղաքական էլիտային

համար ռոտացիայի հնարավորությունը ստեղծել, քանի որ այն իշխանություններին հարմարավետ հնարավորություն է տալիս ժողովրդի այքերում գտել իրենց օրինակաբերությունը (կամ էլ այն ընդունել տալ արդյունավետ ուսիկանական և ճնշող պարաստի միջոցով), այլ ոչ թե ձեռք բերել իրական ժողովրդավարական ընտրությունների մրցակցության ժամանակ: Այնուամենայնիվ, երկրի բնական ռեսուրսների արտահանումից կախումը երկարամեամյեա հեռանկարներում երկիրը դարձնում է խոցելի ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական և սոցիալական բնագավառներում:

Մասնավորապես, Լեւոզառեսուրսներ արտահանող հանդիսանալով՝ Ադրբեջանը, ինչպես և այլ զարգացող պետություններ, որոնք տնտեսության զարգացումը հիմնականում կախված է բնական ռեսուրսների արտահանումից, մեծ մասամբ ենթարկվում են այսպես կոչված «հոլանդական հիվանդության» ախտահանիչ: «Հոլանդական հիվանդության» ելքունը այն է, որ տնտեսության հուճեքային բնագավառից ստացված եկամուտները նպաստում են «ոչ հումքային» տնտեսության բնագավառի աշխատավարձի և արտադրության ծախսերի բարձրացմանը: Տեղի է ունենում «ժամագին» արժույթի ներհոսք, որը բերում է ազգային արժույթի կուրսի չափազանց շատ բարձրացման: Այդ ժամանակ տնտեսության մյուս բնագավառները դառնում են ոչ մրցունակ, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրանից դուրս: Տեղի է ունենում նաև ներդրում ակտիվության անկում (բնականաբար, բացառություն է կազմում հումքային արդյունաբերությունը և դրա հետ կապված սպասարկման և ծառայությունների բնագավառները⁶), քանի որ ապրանքների ներմուծումն առավել արդյունավետ է, քան դրանց արտադրությունը երկրի ներսում: Արդյունքում այս ամենը բերում է ոչ հումքային սեկտորի արտադրության կրճատմանը, միակողմի լինելուն և տնտեսության կախվածությանը միջազգային շուկայում հումքային ապրանքի գների տատանումից, սոցիալական լարվածության ուժեղացմանը, կապված երկրի փոքր և միջին բիզնեսի սնանկացման հետ⁷: Սոցիալական բնագավառում կուտակված խնդիրներն անհնար է լուծել առանց մնացած ոչ նավթային տնտեսական բնագավառների զարգացման, քանի որ նավթային բնագավառը, ընդգրկելով մեծ կապիտալ, բնակչության մեծ մասին չի կարող ապահովել աշխատատեղերով և լուծել գործազրկության խնդիրը:

«Հոլանդական հիվանդության» բոլոր վերը նշված ախտահիշները, այս կամ այն ձևով արդեն վաղուց առկա են Ադրբեջանի սոցիալ-տնտեսական կյանքում⁸: Դա և բյուրակրատացումն է, և մենաշնորհը նավթամշակման արդյունաբերությունում, և օլիգարխային տնտեսությունը, և ներգաղթը մայրաքաղաք սնանկացած գյուղերից ու շրջաններից (ինչպես նաև արտագաղթը արտասահման, հատկապես Ռուսաստան և Թուրքիա), և արագացված ու սպառնալի չափերի ուրբանացումը: Տարեցտարի Ադրբեջանում մեծանում է ինֆլյացիան, և, ըստ անկախ ադրբեջանական փորձագետների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների 2008-ի հաշվարկներն ասում են, որ այն հասնում է 30%-ի, իսկ, ըստ վերջին երեք տարիներ հաշվարկի՝ ավելի քան 111%: Այսինքն՝ Ադրբեջանը բախվում է ոչ թե պարզ, շատ բարձր մակարդակի ինֆլացիայի իրավիճակի, այլ կանգնած է հիպերինֆլացիայի և տնտեսության համակարգային «շիկացման» սպառնալիքի առաջ: Ադրբեջանի համար ավանդական, տնտեսական ոչ հումքային այնպիսի բնագավառների, ինչպիսիք են՝

զգալի աշխատատեղեր ապահովող գյուղատնտեսությունը, քիմիական արդյունաբերությունը, անկման և ոչ մրցունակ լինելու հետ կապված առաջացել է գործազրկության և աշխատունակ մարդկանց արտագաղթի խնդիրը: Բնակչության գույքային շերտավորման խորացումը, Ապշերոնյան մեգապոլիսի և գյուղական շրջանների միջև աճող տարբերությունը, որն անհավասարության և տնտեսության միակողմանի զարգացման արդյունք է (օրինակ, Ադրբեջանի գյուղատնտեսության բամբակի արդյունաբերության գրեթե ամբողջական սնանկացումը), հանգեցնում է երկրի սոցիալական լարվածության կուտակմանը:

Պետք է հաշվի առնել նաև այն, որ, ի տարբերություն, օրինակ, քիչ բնակչություն ունեցող Պարսկական ծովածոցի նավթարդյունահանող փոքր պետությունների (Թուվեյթ, Բախրեյն, ԱՄԷ), որոնք արդյունահանվող նավթի ընդհիվ կարող են իրենց բոլոր քաղաքացիների համար ապահովել բարձր կենսամակարդակ, Ադրբեջանի պարագայում դրությունը բոլորովին այլ է: Ադրբեջանը, ինչպես նաև Ղազախստանը, Սաուդյան Արաբիան, Վենեսուելան, Նիգերիան և գրեթե բոլոր միջին և խոշոր նավթամշակող պետությունները (բացառությամբ՝ Նորվեգիայի և Մեծ Բրիտանիայի) բնութագրվում է նավթի արդյունահանման զգալի մակարդակով, որը կարող է ազդել ներքին և արտաքին քաղաքականության վրա, սակայն ոչ այնքան, որ ի վիճակի լինեն իրենց բնակչության ապահովել բավարար կենսամակարդակով⁹: Արդյունքում, նման նավթային երկրներում ստեղծվում է բնակչության հսկայական գույքային և սոցիալական շերտավորում կամ այսպես կոչված «երկիրարկան տնտեսություն», որտեղ բնակչության մեծ մասն ապրում է «խողովակի» գերշախույթներից (կամ դրա «սպասարկման» հասանելությունից), մինչդեռ բնակչության մյուս մասն ընկնում է ամբողջ ուժով մեծածաղ աղքատության մեջ:

«Հոլանդական հիվանդության» մյուս բացասական դրսևորումը ադրբեջանական սոցիալական կյանքում գործազրկության մակարդակի բարձրացումն է, մասնավորապես գյուղական շրջաններում: Վերջին տարիներին իշխանությունների բոլոր ձեռնարկումները նոր աշխատատեղեր ստեղծելու համար և պաշտոնապես հայտարարված վիճակազրկությունը լուրջ կասկածներ և քննադատություն են առաջացնում Ադրբեջանի հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների կողմից: Օրինակ, 2008-ի ընտրություններից կես տարի առաջ, Ադրբեջանում վեճ առաջացավ Ի. Ալիևի այն հայտարարությունների շուրջ, թե 2007 թ. իր իշխանության օրոք ստեղծվել են շուրջ 650 հազար աշխատատեղ: Ըստ ադրբեջանական անկախ փորձագետների և լրագրողների՝ այս թվերը, իրականում, երբ անգամ մեծացված են¹⁰: Ամբողջությամբ, գործազրկության խնդիրն Ադրբեջանում շարունակում է մնալ երկրի ամենատար սոցիալ-հասարակական խնդիրներից մեկը, որը հանգեցնում է մոտավորապես 2-2,5 մլն. աշխատունակ քաղաքացիների անդադար արտադրքին, հիմնականում՝ Ռուսաստան և Թուրքիա:

Բայց մյուս կողմից, նավթավերամշակմամբ զբաղվող Ադրբեջանի սոցիալական կյանքում առկա ներկա պարտոբային իրավիճակը դեպի երկիր էժանագին օտարերկրյա աշխատույթի հոսքի արդյունք է, այն էլ, հսկայական թիվ կազմող գործազրկության և սեփական երկրի քաղաքացիների արտահոսքի պայմաններում: Սա լուրջ, սոցիալական բացասական գործոն է, որը վերջին շրջանում անհանգստություն է առաջացրել առա-

քատար արդրեջանական փորձագետների և դժգոհություններ՝ Արդրեջանի լայն հասարակական շրջանում⁹:

Եվ, վերջապես, Արդրեջանի սոցիալական լարվածությունը, եկամուտների և երկրի քաղաքացիների բարեկեցության բևեռացումը հանգեցնում են ոչ միայն բնակչության դժգոհության աճի, (թեև դա առայժմ պաշտոնապես չի նկատվում) կամ էլ երիտասարդ և աշխատունակ բնակչության զգալի արտագաղթին: Դրանք բնակչության սոցիալապես ակտիվ հատվածի համար «իսլամիզացիայի» զայաթկության բարեմպատտ հող են ստեղծում՝ ի պատասխան կամ արձագանք երկրի հասարակական ու հոգևոր կյանքի արագացած արդիականացմանը¹⁰: Իսկ դա արդեն կարող է ժամանակակից Արդրեջանում լուրջ սպառնալից ստեղծել՝ իր պետական կառուցվածքի և քաղաքական ինստիտուտների գործունեության համար:

3. Արդրեջանի նավթազազային ապագան՝ «ռեսուրս» թե՛ «անծեք»

Ղարաբաղյան խաղաղության գործընթացում ներգրավված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և առաջատար արևմտյան տեղաբնակների կողմից անկողննակալ վերլուծությունը բավականին զուսպ է զնահատում Արդրեջանի «նավթային գերեկամուտների» հիման վրա ուժային շանտաժի իրականությունը: Դեռևս 2003 թվականին, Caspian Revenue Watch հեղինակավոր հետազոտական կազմակերպությունը, Կենտրոնական Ասիայի Բաց Հասարակության Ինստիտուտի նախագծի շնորհիվ ներառված իրապարկելից համակողմանի զեկույց՝ «Կասպյան նավթային եկամուտները՝ ո՞վ կփայտնվի հարթողի դերում», որը պատրաստվել էր Ավետյանա Ցալիկի կողմից, որում հետազոտվել էր առկա և հեռանկարային խնդիրների ամբողջությունը, որոնց հետ մոտ ապագայում կարող էին բախվել Արդրեջանն ու Ղազախստանը՝ կասպյան ածխաջրածինների արդյունահանումից ստացված ապագա եկամուտների անապահովման ժամանակ¹¹: Ձեկույցում հատուկ ուշադրություն էր դարձվել Արդրեջանում նավթային շահույթների կառավարման հարցերում հասարակական վերահսկողության և թափանցիկության լուրջ և համակարգային ապահովման հիմնահարցի վրա, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրներում նավթային հիմնարկամերի գործառնության վրա և դրա հարմարեցումը Կասպյան տարածաշրջանի երկրներում: Ձեկույցում եզրակացություն էր արվել, որ չնայած իշխանությունների կողմից ձեռնարկված և պլանավորված բոլոր միջոցառումներին, Արդրեջանի /ինչպես նաև Ղազախստանի/ համար տվյալ ոլորտում իրավիճակը շարունակվում է մնալ ստացմապալի:

Ղարաբաղյան հակամարտության գոտում ռազմական գործողությունների վերսկսման հավանականության և տարածաշրջանի ռազմապայմանում կրճատված գործունի արդյունքներն արդեն առավել մանրամասն ու մանրակրկիտ ուսումնասիրվել է հատուկ վերլուծական զեկույցում (IGG), որը իրապարկվել է Միջազգային ճգնաժամային խմբի կողմից 2007 թվականի նոյեմբերին: «Լեռնային Ղարաբաղ» պատերազմի վտանգով՝ վերագրված զեկույցում միջազգային փորձագետները ցույց են տալիս, որ չնայած Արդրեջանի կողմից սպառազինության մեծաքանակ գնումներին, այնուամենայնիվ ռազմական հավասարակշռությունը ընդիստոր առմամբ չի փոփոխվել և դժվար թե փոփոխվի մոտ ապագայում, ինչը մեծամասամբ պայմանավորված է Լեռնային Ղարաբաղում ճակատային

զոնի հայկական կողմի համար չափավա աշխարհագրական դիրքով, որտեղ բարձունքների գերակշռող մասը գտնվում է հայկական հսկողության տակ, իսկ արդրեջանական գործերի հետ բախման խոցելի տարածքներն իրենցից ներկայացնում են ամրաշեն քանակա կառույցների խոր ռազմական շարանման զիծ¹²: Բայց սրա հետ մեկտեղ վերուստաբանները նշել են, որ պատերազմական գործողությունների իրական վտանգ կարող է ծագել ոչ այնքան Արդրեջանի ուժեղացող ռազմականացման հետևանքով, որքան որ Արդրեջանի նավթային արդյունահանման հնարավոր կտրուկ անկման պատճառով մինչև 2012 թվականը և հակամարտությունը ուժով լուծելու ցանկությամբ, «եր Արդրեջանի նավթի արտահանումից ստացված եկամուտները, հավանաբար կակնեն նվազել, և այդ ժամանակ ռազմական ավանտյուրաները կարող են ներկայացվել որպես երկրի տնտեսական հիմնախնդիրներից քաղաքացիների ուշադրության շեղման միջոց»¹³:

Արդրեջանում նավթային գործնի էության և իրողության առավել ամբողջական բացատրման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում IGG-ի զեկույցի հեղինակների կողմից առաջ քաշված թեզը 2012 թ.-ից հետո Արդրեջանի նավթային եկամուտների հետագա բուռն աճի խնդրահարյույց լինելու մասին, ինչը կհասկանալի է Կասպից ծովի արդրեջանական հատվածում նավթի և գազի կեսախաղված հիմնական պաշարների սպառման հետ և նրանց՝ այսպես կոչված «ընկնող արդյունահանում» փուլին անցման հետ: Այս վերլուծությունն արվել է միջազգային փորձագետների, այդ թվում նաև British Petroleum (BP) քրիստոնական հայտնի նավթային ընկերության աշխատակիցների եզրակացությունների հիման վրա: Բացի այդ նշվում են նաև Արդրեջանում կոռուպացվածություն և նավթային եկամուտների վերաբաշխման բարդությունները, ինչպես նաև այդ երկրում դրսևորվող «հոլանդական հիվանդության» հատակ ախտանիշները և դրա հետ կապված արդրեջանական տնտեսության ոչ նավթային սեկտորի խորը ճգնաժամը: Այս ամենի հետ մեկտեղ Արդրեջանի նավթային արդյունաբերության կապիտալատարողունակ սեկտորն ապահովում է բնակչության միան չնչին մասի զբաղվածությունը: այնտեղ աշխատում են մոտավորապես 76 հազար արդրեջանցի, այն դեպքում, երբ աշխատունակ ժողովրդի ընդհանուր թիվը հասնում է մոտավորապես 4 միլիոնի /ըստ պաշտոնական վիճակագրության/¹⁴:

Ինչպես նույն է հեղինակները փաստաբերել այս քաժմում, որը բավական հատկանշական կերպով վերնագրված է որպես «Արդրեջանի նավթային անծեք» և որը վերլուծում է Կասպյան ածխաջրածինների պաշարների դերը այս երկրի տնտեսական զարգացման գործընթացում, պետության «ոչ նավթային բյուջեն» ներկայումս դեֆիցիտային է: Ծախսերի մոտավորապես 70%-ը ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորվում է նավթի վաճառքի հաշվին¹⁵: Չնայած 2012 թվականին Արդրեջանում, ըստ երևույթին, կապիտանի Կենտրոնական Ասիայից խողովակաշարերով գազի և նավթի տեղափոխման հաշվին վարձավաճառքեր տրամալու հնարավորությունը, բայց սա չի փոխառնուցի Արդրեջանի սեփական նավթի արդյունահանման անկման պատճառով տնտեսության կորուստները: Միջազգային Արդյունային Հիմնարկում փորձագետները գնահատականներով 2009 թվականին նավթի վաճառքի եկամուտները կհասնեն առավելագույնի (ՀՆԱ-ի 46%) և 2012 թվականին կընկնեն մինչև 36%, ինչը նույնիսկ արժեքով 2009 թվականին կկազմի մոտ 20.5 մլրդ դոլար, իսկ

2012 թվականին 17.8 մլրդ դոլար: Այն պայմաններում, երբ նավթից ստացված համալիր եկամուտները Ադրբեջանի համար կմնան բյուջետային ծախսերի գրեթե միակ աղբյուրը, 2012 թվականին, երբ կանխատեսվում է նավթի արդյունահանման անկման սկիզբը, այս երկրում կարող է առաջանալ մասշտաբային տնտեսական ճգնաժամ՝ «երբ կսկսեն նվազել նավթի վաճառքից ստացված եկամուտները, նույնը է տեղի կունենա ԴՆԱ-ի իրական աճի հետ: Ոչ նավթային եկամուտների սպառնալից է բյուջետային ծախսերը 2011 թվականին կհասնեն շուրջ 60%-ի դեֆիցիտի, իսկ 2012 թվականին՝ 65 %: 2012 թվականին, առավելագույն եկամուտներից միայն 2 տարի անց, հավանաբար կպահանջվեն նավթային ֆոնդի ակտիվներ բյուջեի մինչև ԴՆԱ-ի 5.4 % դեֆիցիտի վերականգնման համար: Գաշվի առնելով տնտեսության մեջ ղեկավարության կոռուսիայացվածությունը ու ոչ կոմպետենտությունը՝ Ադրբեջանը ոչ պակաս, քան 8 տարուց կարող է հայտնվել դժվար իրավիճակում»¹⁶:

Սրա հետ մեկտեղ կարևոր է նշել հետյալ հանգամանքը. հայտնի է, որ նավթի արդյունահանման մոտավորապես 95%-ը Ադրբեջանում իրականացնում է Ադրբեջանի Դանրապետության Պետական նավթային ընկերությունը (ԱԳՊՆԸ) և միջազգային կոնսորցիումը՝ AMOK-ը: Նավթի արդյունահանմանը զբաղվում է նաև ոչ մեծ համատեղ ձեռնարկությունների մի շարք, սակայն նրանց դերը Ադրբեջանի նավթագազային սեկտորում աննշան է: Սրա հետ մեկտեղ ԱԳՊՆԸ-ն հիմնականում շահագործում է հին նավթային հանքավայրերը՝ (նրանցից մի քանիսում նավթը արդյունահանվում է արդեն 100 տարի) բարձր և տարեցտարի աճող արդյունահանման ինքնաբերելով (2005 թվականի սկզբին այն կազմում էր մոտավորապես 41 դոլլար տոննայի համար): Դա բացատրվում է ԱԳՊՆԸ-ի ֆիզիկական և նյութապես հնացած նավթային սարքավորումներով, պետական նավթային արդյունաբերության արդիականացման համար զգալի կապիտալ ներդրումների անհրաժեշտությամբ, ինչպես նաև սեփական նավթի հանքավայրերի արագացված սպառմամբ (ըստ ադրբեջանական տվյալների, դրանք կազմում են մոտավորապես անվան պատճառով Ադրբեջանի պետական բյուջեի (մոտավորապես 70%-ը) ուղղակի կամ անուղղակի ձևավորվում է նավթի և գազի վաճառքների եկամուտների հաշվին) զգալի չափով կկազմվի արդեն ոչ թե սեփական արդրեջանական պետական ու մասնավոր նավթագազային ընկերությունների հաշվին, այլ միջազգային կոնսորցիումից և նրա մեջ մտնող ընկերությունների հաշվին ու միջոցների հավաքման արդյունքում: Պետական եկամուտների կառուցվածքում նավթի և գազի մասնաբաժնի բարձր մակարդակի պատճառով, մոտ ապագայում Ադրբեջանը կարող է հայտնվել երկրի ներսում օտարերկրյա նավթային ընկերությունների կողմից իրականացվող ծրագրերից ու նախագծերից տնտեսական գերկախվածության իրավիճակում: Այս նկատարով միտումը կարող է հանգեցնել Ադրբեջանի տնտեսության և քաղաքականության առավել խոցելիությանը արտաքին գոծոնների կողմից¹⁷, հատկապես երբ հաշվի առնենք Ղարաբաղյան հարցում Ադրբեջանի հայտնի գերկախվածությունը արտաքին սահմանափակիչներից, կապված «Բաբու-Թիլիսի-Ջեյհան» նավթամուղիի և այլ մեծամասշտաբ միջազգային կոմունիկացիոն նախագծերի անվտանգությունը ապահովելու խնդրի հետ:

Լեռնակիրների վաճառքից ստացված գերեզմուտները նույնպես զգալիորեն նվազեցնում են բազմաթիվ նավթային ընկերությունների հետաքրքրությունը լիբերալ տնտեսական բարեփոխումների անցկացման և թիզնեսի խթանման հարցերում: Ինչպես նշվում է ԱՄՆ-ի առավել եղիկանավոր վերլուծական և հետազոտական կենտրոններից մեկի՝ Միջազգային հարաբերությունների խորհրդի զեկույցում (Council on Foreign Relations), աշխարհի նավթային պետությունների մեծամասնությունը, հավանաբար տարեկան հաշվետվությունների և առաջատար համաշխարհային ֆինանսային կազմակերպությունների ինդեքսի (The World Bank's Doing Business, The World Bank's Enterprise Surveys, the Fraer Institute's Economic Freedom of the World, the World Economic Forum's the growth Competitiveness Report, the Heritage Foundation's and the "Wall Street" Journal's index of Economic Freedom և այլն), բավական են լուրջ խնդիրներ կաշառակերության հարցերում, բիզնեսի խթանման հարցերում, տնտեսական ազատությունների պաշտպանության և ձեռնարկատիրության ընդունելի մակարդակի պահպանման գործում: Ի դեպ, նավթային փոքր երկրներից ոմանք (Քուվեյթը, Կատարը, Բահրեյնը) կարողացան խուսափել այդ ճակատագրից, սակայն բացառապես լուրջ ներքաղաքական ամբիջիաներից հրաժարման և իրենց աշխարհագրական ու ժողովրդագրական կոմպակտության շնորհիվ, ինչպես նաև ԱՄՆ-ի քաղաքական վերահսկողության անմիջական ազդեցության շնորհիվ¹⁸: Թվում է, որ այժմյան ադրբեջանական իշխանություններն ու քաղաքական էլիտան Ադրբեջանի ապագան և նրա քաղաքական զարգացման առաջնությունները չեն տեսնում Պարսից ծոցի փոքր պետությունների օրինակով: Բայց հենց դրանով Ադրբեջանը իրապես վտանգում է բախվել բոլոր վերը նշված խնդիրների հետ տնտեսական ազատությունների ոլորտում և ձեռնարկատիրության խթանման և թիզնեսի խթանման կենսագործունեության հարցերում: 2007 թվականին հրատարակված տարեկան հաշվետվության մեջ՝ «Transparency International», Ադրբեջանը արդեն հայտնվել է 40 առավել կոռուսիայացված երկրների ցուցակում¹⁹, իսկ «Forbes»-ի տվյալներով այդ նույն ժամանակահատվածում զբաղեցրել է միայն 82-րդ տեղը աշխարհում, ինչպես բարենպաստ անցկացման չափանիշների համաձայն²⁰:

Մեկ այլ բացասական գործոն, որը կապված է տնտեսական զարգացման վրա սեփական էժանագին Լեռնադաշտաբնակների ազդեցության և Ադրբեջանի մրցունակության հետ, հանդիսանում է Լեռնադաշտաբնակությունների խնդիրը: Ցանկացած խնայողություն, հետևաբար նաև մրցունակության չափանիշ, մասնավորապես համդիսանում է այնպիսի պարանոստրոլը, ինչպիսին է ԴՆԱ-ի Լեռնադաշտաբնակությունը: Ադրբեջանի տեղական ռեսուրսներից ստացված էլեկտրաէներգիայի ավելցուկների շնորհիվ այս երկրում չկան բավականաչափ խթաններ նրա տնտեսման համար, հատկապես հաշվի առնելով այն, որ բազմաթիվ սպառողներ տարանում են ուղղակի և անուղղակի պետական լրավաճարներ: Արդյունքում, որքան էլ որ տարօրինակ է թվում, Ադրբեջանում մեկ շնչին բաժին ընկնող էլեկտրաէներգիա ավելի շատ է արտադրվում, քան օրինակ Գայանաում, սակայն այն չի բավականացնում նույնիսկ երկրի շատ շրջանների շուրջօրյա էլեկտրամատակարարման համար: Արդյունաբերական միավոր արտադրանքի վրա բարձր է էլեկտրաէներգիայի ծախսը, որը նույնպես ազդում է տնտեսության արդյունավետության վրա: Չնայած Միջազգային կազմակերպությունների զգուշացումներին, միայն մոտավորապես 2005

թվականին Ադրբեջանը այս խնդրի լուծման համար սկսեց ճշտումներ կատարել տվյալ հարցի քաղաքականությունը մեջ²¹:

Այնուամենայնիվ, արդեն 2008 թվականին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) հրատարակեց էներգետիկ ամփոփագրության կայունության մասին հաշվետվություն, անցումային շրջանի երկրներում: Ինչպես նշված էր տվյալ հաշվետվության մեջ, էներգետիկ կայունության ինդեքսը Ադրբեջանում գնահատված է (ԷԿԻ) 0.11 բալ մակարդակով, ինչը համեմատելի է Չերնոգորիայի մակարդակի հետ: Ադրբեջանը ըստ ՎՋԵԲ-ի տարբերակի ցույց տվեց ամենավատ արդյունքներից մեկը՝ էներգետիկ արդյունավետության մակարդակը (0.06), վերականգնված արդյունքների օգտագործմանը (0.17), վերջին ցուցանիշով զիջելով միայն Մոլդովիային (0.13): Այս փաստը համազօլջ կերպով ցույց է տալիս, թե ներկայումս նավթարդյունահանող Ադրբեջանում որքան սուր են նրա էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացիայի, ինչպես նաև ադրբեջանական տնտեսության արդյունավետության ու էներգատարողության ապահովման խնդիրները²²:

Բացի այդ լուրջ անհանգստության առաջացման համար գոյություն ունեն գան այլ պատճառներ Ադրբեջանի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման համար: Դաճախ նավթ արտահանող երկրները մեծացնում են իրենց բյուջեի ծախսերը՝ սպասելով հեռանկարային զգալի անվտանգության և նույնիսկ վարկեր են վերցնում՝ տարատեսակ մասշտաբային նախագծերի իրականացման համար, սակայն ակնհայտ է որ այդ քայլին ոչ մի ուրիշ դեպքում չէին դիմի²³: Դա կարող է լինել կապիտալ շինարարության ծախսերի, ենթակառուցվածքի զարգացման, կրթության և սոցիալական բնագավառներում նախագծերի իրականացման հարցերը, ինչպես նաև կարող են լինել ռազմականացման մեջ ի հայտ եկող ծախսերը՝ մեծաքանակ սպառազինության գնումների և ռազմական բարեփոխումների հարցերը: Սակայն այսպիսի արագընթաց և քանկարծեք նախագծերի վստահեցն այն է, որ եթե նավթի գները հանկարծ ընկնեն, ապա կապիտալ ներդրումների նախկին զգալի մակարդակը շարունակել կամ նույնիսկ պահպանել տվյալ նախագծերի համար բավականին դժվար կլինի կամ նույնիսկ անհնար: Դա կրեթի պետական բյուջեի կտրուկ կրճատմանը, սոցիալական վարձավճարների դադարեցմանը և երկրում ներքին արվածության մեծացմանը²⁴:

Այլ խոսքերով, եթե հանկարծ կտրուկ ընկնեն նավթի գները, միանգամայն ռեալ է այն իրավիճակը, երբ Ադրբեջանը ոչ միայն չի կարող շարունակել նախկին մակարդակով սպառազինման գնումները և երկրի ռազմականացումը, այլև երկրի հեռավոր գյուղական մարզերում չի կարող կառուցել ավտոմայրուղիներ, կինոթատրոններ և մեծ սպորտային դահլիճներ, ինչպես նաև ստիպված կլինի կտրուկ կրճատել սոցիալական վարձավճարները և բյուջետայինների աշխատավարձերը:

Գրումներ

1. Տես մանրամասն *Гайдар Е. Гибель империи. Уроки для современной России*, 2-е изд. М., 2007; *May В. Уроки Испанской империи // Россия в глобальной политике*, Т.3, №1, Январь - Февраль, 2005.

2. Էժանգիմ բնական ռեսուրսների ուղղակի բացասական ազդեցությունը ներթափանցող արտահանող, զարգացող երկրների ռեժիմների քաղաքական բնույթի վրա և այդ երկրների ժողովրդավարացման գործընթացները բավական մանրամասն ունևումնասիրվել են համաշխարհային քաղաքականությունասպակն

դիտության մեջ: Տես՝ մասնավորապես, *Гайдар Е. Гибель империи. Уроки для современной России*, С.88-95.

3. *Джугуровы Т. Нефть и демократические ценности: опыт Азербайджана // Диаспора. Нефть и рознь. Чем живут государства Южного Кавказа*. Ереван: Фонд Г. Беляя и Кавказский институт СМИ, 2005. С.43-47:

4. Ադրբեջանական տնտեսության նավթ արդյունահանող սեգմենտի «սպասարկման» բնագավառ, կարելի է համարել զվարճությունների բնագավառը, մասրաքաղաքային ատևորի ծախսերից մեծ մասը, ինչպես նաև VIP- շինարարությունը Բաքվում: Որոշակի իմաստով կան կապի, տրանսպորտի և հաղորդակցման բնագավառները:

5. *May В. Уроки Испанской империи*, С.162-167.

6. «Պետք է նշել, իդանդական հիվանդության այտուցներից մի քանիսը նկատվում են Դալաստանի տնտեսությունում: Սակայն այս դեպքում «հունքի» դերը, որն ապրում է երկիր մտնող դրամական միջոցների ծավալի վրա և որը կախված է հարկված տնտեսության իրական վիճակից, կատարում են փոխանցումները և դրանի մուտքը սփյուռքից և արտասահմանում աշխատող հայերից, ովքեր մեծ որսանվան գումարներ են ուղարկում իրենց բարեկամներին և ընտանիքներին: Սակայն այս փոխանցումները կրում են անհատա-կան բնույթ և հասնում են միայն որոշակի մարդկանց, դրանք այդքան էլ մեծ բացասական ազդեցություն չունեն երկրի տնտեսության վրա: Ավելին, դրանց զգալի դեր են խաղում երկրի տնտեսության իրական զարգացման հարցում: Բանի որ «իդանդական հիվանդության» իրենական խնդիրներից մեկը հանդիսանում է հենց մեծաքանակությամբ և դեկավարման կոտուցիան և կլանումների պետական-բյուրոկրատական սպարառների և/կամ կամ-օլիգարխային էլիտաների բաշխման վրա: Պետական և մեծաշնորհային ստուգման բացակայությունը երկրի դրսից ստացվող անհատական փոխանցումների բնագավառում լուրջ խոչընդոտ չի հանդիսանում տնտեսության զարգացման համար և, որը շատ կարևոր է, չի ստեղծում օբյեկտիվ ազդեցվեթ ժողովրդավարական ինստիտուտներ կառուցելու համար, ինչպես դա կատարվում է աշխարհի բնական ռեսուրսներով հարուստ երկրներում:

7. Օրինակ՝ Սաուդյան Արաբիայում՝ աշխարհում ամենամեծ նավթամշակող պետությունում, յուրաքանչյուր անձի հասնում է օրական 0.7 քարել, մինչդեռ Քուվեյթում այդ ցուցիչը հասնում է 2.8 հ, քարելի: Տես *Кондратьев В. Учассть и предназначение нефтяных доходов // Международные процессы*, Том 6, №1 (16), Январь - Апрель 2008.

8. *Saxatova Э. Азербайджан: обещания президента о создании рабочих мест не выполняются // EurasiaNet.org*, 31.05.2008.

9. *Илдар Мамедов: «Делевельй труд иностранцев Азербайджану сейчас ни к чему. Его/их следует выдворять из страны, и начать освобождать бизнес» // Day.az*, 19.06.2008.

10. *Юнусов А. Ислам в Азербайджане*. Баку, 2004. С.276-277.

11. Տես մանրամասն *Tsalik S. Caspian Oil Windfalls: Who Will Benefit? New York: Caspian Revenue Watch - Open Society Institute*, 2003.

12. Տես մանրամասն *Минасян С. Неопределенный риск войны: Новый доклад по Карабаху Международной кризисной группы // Голос Армении*, 29.01.2008.

13. *Nagomo-Karabakh: Risking War // Crisis Group Europe Report №187, 14 November 2007*. P.i-ii, 19.

14. *Nagomo-Karabakh: Risking War*. P.10.

15. *Nagomo-Karabakh: Risking War*. P.9.

16. *Nagomo-Karabakh: Risking War*. P.10.

17. *Евгизарян А. Истинная роль и значение нефтяного сектора в контексте социально-экономического развития Азербайджана // Армяне Азербайджана. Утраченная родина. Равноденная компетенция / Материалы конференции*, 19.12.2005. Ереван, 2006. С.100-105.

18. *Shlaes A., Tiwari G.* Smart Countries, Foolish Choices // A Maurice R. Greenberg Center for Geoeconomic Studies Working Paper, Council on Foreign Relations, N.1, April 8, 2008, P.3-8.

19. «Азербайджан попал в список 40 наиболее коррумпированных стран мира» // Day.az, 29.06.2008.

20. «Азербайджан занял 82-ое место в мире по удобству ведения бизнеса» // Day.az, 28.06.2008.

21. *Хачатрян А.* Энергетическая безопасность стран Южного Кавказа – роль стран региона и внешних сил // Кавказ. Ежегодник КИСМИ. Ереван: СМИ, 2006. С.124-125.

22. Աղբրեցանի հետ համեմատած էներգետիկ անվտանգության մակարդակով վատագույն ցուցանիշները եղան Թուրքմենստանում (0,05), իսկ նմանատիպ երկրներից առաջատարը ըստ ԶԿԵԲ-ի եղան Ալուվենիան և Լիտվան (0,61), Ռուսաստանը հավաքեց էՄԻ-ի 0,25 մակարդակ, Ղազախստանը՝ 0,15, Գայաստանը՝ 0,44, իսկ Վրաստանը՝ 0,42: Համեմատության համար ԳԳՀ-ն օժտված է 0,78 ինդեքսով, Իսպանիան՝ 0,75%, Սեծ Բրիտանիան՝ 0,74: Սանրածանն նա-յեմբ. «Среди стран переходного периода только Туркмения уступает Азербайджану по уровню энергетической безопасности» // www.regnum.ru/new/1002628.html:

23. *Мамедов С.* Нефть строит дороги в Азербайджане // Независимая газета, 17.03.2008.

24. *Гайдар Е.* Гибель империи. Уроки для современной России. С.105-106.

ԷՔՆԻԿ ՎՈՐՔՐԱՄԱՏԱՆՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԻԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՊՐԵՅՑԱՆՈՒ

Գրիգոր Բոյախյան

ԾԱԳՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԿԱՄ ՈՐՊԵՆ ՆԱԽԱՐԱՆ

20-րդ դարի պատմագրական դատողություններում մասնավորապես, երբ խոսքը վերաբերվում է արևմտյան գիտնականների մեկնաբանություններին, ազգային ինքնության և պետականության կազմավորման գործընթացը խստորեն պայմանավորված է էքնիկ-լեզվական բաղադրյալի առկայությամբ, որտեղ էքնիկ և լեզվական պատկանելության համամասնուճը հանդիսանում է ազգային գիտակցության ձևավորման անհրաժեշտ գործոն: Այսպես՝ զարգացման որոշակի աստիճանի հասնելուն պես, լեզվական և մշակութային առանցքի շուրջ համախմբված մարդկային բազմությունը հազարամյակների ընթացքում լուր հասունանալով, պատիվ գոյակցությունից ձևավորվում է որպես ժողովուրդ¹: Ծագումնաբանական մեկնաբանություններում, սրա հետ մեկտեղ, չափազանց կարևորվում է նաև ազգային ինքնագիտակցության, որպես առաջնորդող պատմական ներուժի իմաստավորման ու ապավինումը, որի արդյունքում կազմավորվում է պետական և հասարակական մտածելակերպի ավանդույթն ու մշակույթը:

Պետականության կազմավորման տեսական պատկերացումներում էքնիկ և լեզվական ընդհանրացումները, թեև կարևոր, ոչ մի կերպ չեն հանդիսանում միակ և որոշիչ բաղկացուցիչը: Ազգային հավաքական երևակայությունը, անցյալում տեղ գտած հիշողությունների նորովի շարադրումն ու մեկնաբանությունները ընդհուպ մինչև մոռացված պատմական ավանդույթների վերհանումը, նույնքան նշանակալից են, որքան ազգային պատկանելիության և քաղաքական համախմբվածության զգացում ձևավորելու գործընթացը: Ավելին՝ շատ դեպքերում նույնիսկ անցյալի հիշողություններում ամփոփված պատմական, աշխարհագրական անվանումների և մոռացված ավանդույթների ոգեկոչումը բավական է առանձնակի ազգային ինքնության շուրջ քաղաքական համաձայնություն ապահովելու համար: Վերը նշված դիտարկումները վկայում են, որ ծագումնաբանական և ազգային առանձնակի ինքնության շուրջ ծավալվող բացատրությունները հաշվի առնելով դրանց ազգային հավաքական ներուժը, հատկապես ենթարկվում են քաղաքական ձևախեղման և աղավաղման արդյունքում զրկվելով ճշգրիտ և իմնավորված պարզաբանումներից: Այս դրսևորումները հատկապես առկա են աղբրեցանական իրարամերժ և հակասական պատմագրական էջերում՝ շատ անգամ պայմանավորված լինելով մտացածին և առավելագույն քաղաքականացված պատմության մատուցմամբ: Ուստի, ավելիոր չէ, մինչ բուն նյութի քննարկմանն անդրադառնալը, մեկ անգամ ևս փաստել, թե որքան խեղաթյուրված են Կովկասյան Ալբանացիների որպես նախնիներ և իրենց, որպես ժառանգորդներ ներկայացնելու աղբրեցանական գիտական արդյունքների վկայակոչումները, հատկապես, երբ գոյություն ունեն արևելյան և խորհրդային գիտնականների կողմից ներկայացվող բավականին հստակ և կշռադատված փաստարկներ: Ինչն էլ իրապես արժանի ուշադրության աղբրեցանական մեկնաբանություն-

ներում, դա այն քաղաքական ենթատեքստն է, ըստ որի ջանք չի խնայվում ընդուպ միջև սեփական պատմության և պատմագրության աղավաղումը, դիմակայելու հայկական ավելի վաղ, շարունակական ներկայությանը Կովկասյան տարածաշրջանում՝ ներառյալ Լեոնային Դարաբաղում², և պետականության հաստատման հնգազույն ավանդույթին, որն Աղբբեջանի պարագայում բացակայում էր մինչև 20-րդ դարի սկիզբը³:

Անցման կարգով հարկ է նաև վերհիշել, որ նույնիսկ ազգային առանձնակի ինքնություն գաղափարի ձևավորումը որպես համախմբող և հատկապես օտար քաղաքակրթություններից տարբերակող հասարակական-քաղաքական գործոն, տարիներ շարունակ հասու չի եղել աղբբեջանական ազգային գիտակցությանը: Մանրամասնեմք, թե ինչպես է բնութագրվում մուսուլման, այդ թվում նաև «աղբբեջանցի» ազգաբնակչությունների ազգային գիտակցությունը 1917թ.-ի հաղափոխության տարիներին: Նախահեղափոխական շրջանի մուսուլմանը քոչվոր, գեղջուկ, բացարձակապես զուրկ էր որևէ առանձնահատուկ ազգային պատկանելության գիտակցությունից...: Նույնը ճշմարտացիորեն կարելի է վերագրել Կոլզայի թաթար և ազերի բնակչություններին: Նույնիսկ «ազերի» կամ «թաթար» անվանումները որպես այդպիսին, երբեք կիրառության մեջ չեն եղել նախքան հեղափոխությունը: ... Ազերիներն իրենց անվանում էին բերդեր, հետևաբար, ազգային միակ կապակցող օղակը հանդիսացել է Իսլամը⁴:

Աղբբեջանում միայն 20-րդ դարի առաջին հատվածում աղբբեջանական մտավորականությունը ի դեմք եկրում սկիզբ առած մոդեռնիզացիոն շարժման վառ ներկայացուցիչների, լիովին ընկալեց ազգային առանձնակի ինքնագիտակցության և ինքնության ձևավորման անհրաժեշտությունը որպես հասարակական-քաղաքական և կրոնական պատակավածությունները մեղմող միջոց: Իրականում, սակայն, մի շարք քաղաքական հարցադրումներից գալու, շարժումն առավելագույնս միտված էր հարբեցնելու կրոնական անհանդուրժողականությունը, որպես լուծման միջոց առաջարկելով աշխարհիկ արժեքների վրա խարսխված պետականության և հասարակական կենսակերպի գաղափարը: Նույնիսկ ազգային ինքնության արժևորման այդ տարիներին, անգամ, Աղբբեջանում շարունակվում էին պահպանվել աղբբեջանական հասարակությանը բնորոշ խորքային հակասություններն ազատական, աշխարհիկ և մյուս կողմից ավանդապահ իսլամական նորմերով առաջնորդվող կենսակերպի հեռանկարները: Ժամանակակից Աղբբեջանում ընդգծվող կրոնական գաղափարները վկայում են, որ Իսլամն Աղբբեջանի Գանրապետության աշխարհիկ արժեքներով պայմանավորված պետականության ֆունկցիա ստանում է առավել ընդգծված արտահայտվածություն, իսկ վեջին տարիների կտրվածքով դիտարկելիս վերելք է ապրում⁵:

ԵՆԻՎԿԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՄՐՁ ԺԱՄԱԿԱԿԻՑ ԱՂԲԲԵՋԱՆՈՒՄ. ՊՍՄԱԿԱՆ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՂԻԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ազգային կամ էթնիկ փոքրամասնություն հասկացությունը՝ հստակ գիտական սահմանման և ընկալման կարիք ունենալուց գալու⁶, հաճախ արժանանում է նաև աննշան ուշադրության, հատկապես անցումային շրջանին բնորոշ ազատական և ժողովրդավարական գործընթացները գնահատելիս և իմաստավորելիս: Պատահական չէ, թերևս, որ ազգային

փոքրամասնությունները նույնիսկ բնութագրվում են որպես ողջ ժողովրդավարացման գործընթացի ակնհայտ զոհեր՝ անցումային շրջանին ընդդեմ կազմավորման զարգացումների համատեքստում ենթարկվելով մարզինսպակցման, իսկ առավել հաճախ ուղղակի մտազույթան⁷: Այլ կերպ ասած, ազգային փոքրամասնություն հասկացությունը տեսական սահմանումներին զուգահեռ, իրականության մեջ ունի բացմաթիվ այլ դրուկումներ շատ անգամ պայմանավորված լինելով էթնիկ խմբավորման ոչ գերիշխող, հպատակեցված կարգավիճակից ծագած ազգային ինքնություն անմիջականորեն սպառնացող ինքնորոշման պայթյալի ծավալմանը և վերջինիս ձգտումների դեմ պետության մեծողական կեցվածքի դրուկումներ:

ԽՍՀՄ փլուզման գործընթացի զուգահեռ, նորաստեղծ հանրապետությունների քաղաքական օրակարգում, մի շարք կարևոր տնտեսական և քաղաքական խնդիրների հետ մեկտեղ, հայտնվեց նաև քաղաքացիական հասարակության և բազմաէթնիկ կառուցվածքի շուրջ ձևավորված ժողովրդավարական պետության նախագիծը: Ազգային փոքրամասնությունների հարցը, հասկանալիորեն, առավել ընդգծված բնույթ ստացավ հատկապես Գարավային Կովկասի պետությունների անկախացման գործընթացի համատեքստում: Մասնավորապես, ԽՍՀՄ ապահիտեղափոխում գործընթացներին զուգընթաց ելնելով մի շարք օբյեկտիվ ու կանխատեսելի պատճառներից, իսկ մասամբ նաև Աղբբեջանի որոշակիորեն արհեստական կառուցվածքի իրողություններից, խիստ ընդգծվեց նաև բազմաէթնիկ բաղադրյալ կառուցվածքով առանձնացող Աղբբեջանի ներքին խնդիրներն ու պատմական խտությունները: Թեև ժամանակակից Աղբբեջանի Գանրապետության պարագայում ազգային փոքրամասնությունների՝ նկատմամբ որդեգրած պետական քաղաքականությունն արտահայտվում է տարբեր հարթություններում ընդգրկելով քաղաքական, սոցիալական, մշակութային և կրոնական շրջանակները, ելնելով նյութի ծավալուն բնույթից, անդրադարձ հիմնականում կկատարվի լեզգի և թալիշ էթնիկ փոքրամասնությունների կարգավիճակին և քաղաքական հիմնախնդիրներին առնչվող զարգացումներին: Ընտրության այս տրարամությունն առաջին հերթին պայմանավորված է վերջիններիս պարագայում համեմատաբար առավել ակտիվ, հասունացած ու ներկայացուցչական քաղաքական և սոցիալական ինքնություն հաստատման ուղղված պահանջների դրուկումներով: Մինևույն ժամանակ, այս մտղեքմամբ զգալիորեն ընդհանրացվում է նաև քաղաքական զարգացումների Եշանակայից հատվածը՝ վերհանելով ժամանակակից Աղբբեջանում էթնիկ փոքրամասնությունների ինքնապահպանման և ազատ ինքնադրուկումն արհեստական պետությունները ի հակակշիռ աղբբեջանական կառավարության կողմից ձեռնարկված և հետևողականորեն իրականացվող մերժեցման և ուժեղացման գործառույթներին:

ԼԵԶԳԻ ԵՆԻՎ ԳՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Թեև ժամանակակից Աղբբեջանի հանրապետությունն ամեն կերպ փորձում է սքորել ազգային փոքրամասնությունների և կառավարության միջև առկա քաղաքական և սոցիալական լարվածությունները, ոչ վաղ անցյալում տեղ գտած խտությունները, հետադարձ հայրենույթ, դրանք

համախ մեկնաբանվում են որպես նորաստեղծ հանրապետության քաղաքականապես ոչ հասուն ղեկավարության պաշտոնավարման տարիներին բուլլ տրված բացթողումներ: Վերհիշման կարգով փաստենք, որ խոսքը վերաբերվում է Ադրբեջանի Հանրապետության նորաստեղծ կառավարության այսպես կոչված «ժողովրդական ճակատ» /Popular Front/ ղեկավարության ծայրահեղ ազգայնական հիմքի վրա ձևավորված քաղաքականությանը և գերիշխող էթնիկ խմբի «ազերիների» նոր ազգային ինքնության կերտմանը: Արմատապես ազգայնական նման շարժումն անփոփոխված համատարած «Թըրքացում, Իսլամականացում և ժողովրդավարություն» լոզունգում անհազատության մեծ ալիք բարձրացրեց ադրբեջանական ազգային փոքրամասնությունների շարքերում լայն արձագանք գտնելով ավար, ուրիշ, քուրդ փոքրամասնությունների ազգային ինքնության և լեզվա-մշակութային առանձնահատկություններին ուղղված մերժեցման և ինտեգրման սպառնալիքների ներքո:

ԽՄՄՄ փլուզմամբ պայմանավորված անկախացման գործընթացը և զուգահեռաբար ընթացող սահմանների վարչական կարգավիճակից դեպի միջազգային անցումը բացասական ազդեցություն ունեցավ հատկապես բանական առումով երկրորդ խոշոր ազգաբնակչություն համարվող լեզգի էթնիկ փոքրամասնության վրա: Ապահովեցրացիոն զարգացումներին համընթաց, հետագա խոտվությունների հիմք անշուշտ հանդիսացավ բաժանման վարչական և հոգեբանական գործոնը, ըստ որի, առավելագույնս վտանգի ենթարկվեց լեզգի էթնիկ փոքրամասնության ազգային ինքնության մասնատումը երկու անկախ պետությունների Ռուսաստանի Դաշնության կազմում Դաղստանի և նորանկախ Ադրբեջանի հանրապետությունների միջև¹⁰:

Ինչպես հայտնի է, ներկայիս ադրբեջանաբնակ լեզգի փոքրամասնությունը պատկանում է Իսլամի Աունի կրոնական թևի հետևորդներին և խիտ բնակեցված է երկրի Դաղստանի հանրապետության հետ կապող սահմանամերձ տարածքներում, մասնավորապես Քուպա, Քուսարի, Խաչմաս, Գաբալա շրջաններում և մասնակիորեն նաև մի շարք այլ հյուսիսային հատվածներում: Թեև ազգաբնակչությանը վերաբերող վիճակագրական տեղեկություններն այստեղ բավականին հակասական են և առավելագույնս քաղաքականացված, փաստենք, որ ըստ 1999 թ. -ի ադրբեջանական պաշտոնական տեղեկությունների, լեզգի էթնիկ փոքրամասնությունը կազմում է երկրի ընդհանուր բնակչության 2, 2% -ը, որը, ի դեպ, լեզգի տարաբնույթ տեղեկատվական աղբյուրների կողմից մեկնաբանվում է որպես կրկնակի ցածր ներկայացված ցուցանիշ: Ինչ վերաբերում է Դաղստանի հանրապետությանը, ապա այտեղ լեզգի փոքրամասնությունը զգալիորեն գերախլում է Դերբենտ քաղաքում և մի շարք այլ հարավայն շրջաններում, որոնց թվին են պատկանում Մաղարամբեդե, Քուրախ, Դորուգաբարա և Ռուրուկ վարչական միավորները կազմելով ընդհանուր բնակչության շուրջ 12% -ը¹¹:

Լեզգի էթնիկ ազգաբնակչության պատակավածությունը երկու միջազգային սահմանների միջև, որը սահմանազատվում է Մամուր գետի երկայնքով, շարունակում է մեծ մասամբ կանխորոշել բնակչության գեոքաքական, սոցիալական և մշակութային կյանքը: Քաղաքական առումով, հասարակության մասնատումը երկու հանրապետությունների միջև դրսևորվում է մի շարք շարժումների և միավորումների առկայությամբ, որոնցից առավել ներկայացուցչական և ազդեցիկ են «Մաղվալ» շարժումը հիմնադրված

1990թ-ին Դերբենտ քաղաքում, որի քաղաքական օրակարգային խնդիրների շրջանակում քննարկման է արժանացել Ադրբեջանի և Դաղստանի լեզգիաբնակ տարածքների միասնության հիմնահարցը¹², «Մամուր» կազմակերպությունը հիմնադրված ադրբեջանաբնակ լեզգի փոքրամասնության կողմից և մի շարք այլ քաղաքական միավորումներ ի դեմս «Լեզգի ժողովրդավարական» և «Ալպան» կուսակցությունների, որոնք համապատասխանաբար գործում են Ադրբեջանի և Դաղստանի հանրապետություններում:

Քաղաքական ուժերի և միավորումների նման դասավորությունը, թեև արտաքուստ կարող է ընկալվել որպես լեզգի ազգային շարժման բազմաբևեռ պայքարի որոշակի ռազմավարության դրսևորում, իրականում ավելի շուտ պայմանավորված է հենց բնակչության սահմանի երկու կողմերում մասնատված լինելու փաստով և դրանից բխող բոլոր հետևանքներով: Նման քաշիվածությանը հատկապես, երբ խոսքը վերաբերում է ադրբեջանական հանրապետությունում կազմավորված լեզգի որոշ քաղաքական կառույցներին ավելի բնորոշ է որոշակի բալանսավորման դերակատարությունը, որպես սահմանի մյուս կողմից բարձրացված կոչերին հակակշիռ, քան ազգային պահանջների ազատական և անկաշակնող արտահայտում:

Ինչ վերաբերում է «Մաղվալ» շարժմանը, ապա ադրբեջանական կառավարության կողմից այն շարունակաբար ընկալվում է որպես ահաբեկչական անջատողական շարժում, թեև 1991-1994 թթ.-ին բարձրածայնած անջատողական պահանջները¹³ 1996թ.-ի Վեցերորդ կոնգրեսի ընթացքում վերանայվել են և ներկայիս շարժմանը բնորոշ են ավելի չափավոր շեշտադրումները հիմնականում կենտրոնանալով սահմանային ազատ ռեժիմի կիրառման, Ադրբեջանում լեզգի ազգաբնակչության նկատմամբ տարվող սոցիալական և մշակութային անհավասարությունների քաղաքականության և պարտադրված մերժեցման գործառույթների դեմ: Հատկանշական է, որ շարժման առաջնորդների քաղաքական հայտարարություններն ու պահանջները ադրբեջանական իշխանությունների կողմից ամենուրեք մեկնաբանվում են որպես ոչ ներկայացուցչական մի ստվար հատվածի կազմակերպած սադրանքներ նպատակաուղղված թուլացնելու երկրի ներքին կայունությունը¹⁴:

Երկուստեք անվստահության և մտավախությունների գերիշխող այս մթնոլորտը հնարավորություն է տալիս մեկնաբանել լեզգի ազգային փոքրամասնության հետ կապված զարգացումների հիմքում ընկած ողջ տրամաբանությունը, որը հատկապես երբ խոսքը վերաբերում է ադրբեջանական իշխանությունների որդեգրած քաղաքականությանը, հիշեցնում է այսպես կոչված «կոնսպիրացիոն տեսությանը» առաջնորդվող պետություն: Ենթադրաբար, հենց սրանով են պայմանավորված ադրբեջանական կառավարության կոշտ քաղաքականությունն ու ռեպրեսիվ միջոցառումները, որոնց միջոցով փորձ է արվում ամեն կերպ արտաքուստ թաքցնել լեզգի փոքրամասնության անջվող խնդիրների առկայությունն ու բաց քննարկումը: Տեսականորեն, նույնիսկ եթե սահմանի երկու կողմերում հաստատված լեզգի փոքրամասնության պահանջները վերածվեն միջպետական բննարկման առարկայի, ապա դրանց զգալի մասն ադրբեջանական իշխանություններին կկանգնեցնեն նորանոր մտավախությունների և խոչընդոտների առջև:

Բավականին լուրջ քննարկման առկա է հանդիսանում միջպետական սահմանային ռեժիմի թուլացման համատեքստում լեզգի փոքրամասնու-

րյան երկբաղաբարացիության հարցը, որը առավելագույնս վիճարկելի է հատկապես ադրբեջանական կառավարական օղակներում, եթե նկատի ունենանք երկրի բազմաթեմնի կառուցվածքը և այսել առկա եթնիկ ռուսների ներկայությունն ու նրանց նմանատիպ վերաբերմունքի իրավաբանությունը: Ընդ որում, չի բացառվում, որ իրադարձությունների նման զարգացումը կարող է նախաբանապես հանդիսանալ մի շարք այլ ադրբեջանաբնակ ազգային փոքրամասնությունների թաթար, ավար, կալմիկ քնակիչների շարքերում, որոնք, ըստ տրամաբանության, լիովին կընկնեն Ռուսաստանի Ռաշունության քաղաքացիության իրավունքի ենթակայության տակ¹⁵: Վերը նշված պարզարանումները վկայում են, որ ադրբեջանական կառավարությունը դեռ երկար ժամանակ անկարող կլինի լուծելու լեզգի ազգաբնակչության կողմից բարձրացրած նմանատիպ պահանջները, քանի որ այս զարգացումներն էապես կթուլացնեն առանց այն էլ ազգային փոքրամասնությունների շարքերում երկրի իշխանությունների հանդեպ տիրող անկայուն լոյալությունն ու օրինապահությունը:

Մինչդեռ Դադստանի Գանրապետությունը ճանաչում է լեզգի փոքրամասնության երկու պետությունների միջև մասնատվածության հարցը որպես այդպիսին, իսկ ադրբեջանական իշխանություններին բնորոշ են առավելագույնս զգուշավոր և սահմանափակ մոտեցումները, հաշվի առնելով այն անցանկալի զարգացումները, որ նման հայտարարությունները կարող են հանգեցնել կապված ադրբեջանցի ազգաբնակչության իրանական և ադրբեջանական հանրապետությունների միջև մասնատման խնդրի և ինչու ոչ Դարսաբաղյան հակամարտության շուրջ: Սա, թերևս, մեկ անգամ ևս մատնանշում է, որ լեզգի փոքրամասնության պառակտվածության հարցն ադրբեջանական կառավարության համար ենթակա է ավելի ընդարձակ համատեքստում դիտարկման ու ընկալման և պայմանավորված է մի շարք այլ գործոնների առկայությամբ և ազդեցությամբ:

Ուստի, փոքր ինչ առաջ անցնելով կարելի է ենթադրել, որ Ադրբեջանի և Դադստանի հանրապետությունների միջև շարունակաբար աճող վարչական և կառուցվածքային տարբերությունները, հաշվի առնելով դադստանաբնակ լեզգիների ընտրական համակարգում որոշակի արտոնությունները, կառավարական նշանակումները և ընդհանրապես Ռաշունների բաշխման և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող պետական քաղաքականությունը, ոչ միայն առավելագույնս ընդգծում են երկու պետությունների միջև խորացող հասարակական և քաղաքական անբարեկամությունը, այլև բավականին տեսանելի համեմատական հիմքեր են ստեղծում լեզգի ազգաբնակչության շարքերում սահմանի երկու կողմերի միջև գոգապետներ անցկացնելիս: Նման կարգավիճակն ու դրանից բխող բոլոր հավանական զարգացումները հատկապես, երբ խոսքը վերաբերում սահմանային երկու վարչակարգերի միջև մասնատված ազգաբնակչությանը, ոչ միայն շարունակաբար ապահովում են ազգաբնակչության կարգավիճակին առնչվող խնդիրների արդիականությունը ի հակակշիռ ռեպրեսիվ և սահմանի լիցիցիոն միջոցառումների, այլև առավելագույնս ընդգծում են խառնությունների և անհնազանդությունների առժամ սքոլված ներուժը:

ՔԱՆԻՆ ԵՆԻՎԱ ՓՈՔՐԱՄԱՍՆԱԿՈՒՅՈՒՆ

Ետխորհրդային ժամանակաշրջանն Ադրբեջանի իրականության մեջ բնութագրվում է նաև այստեղ լայն տարածում գտած «Թուրքիզմ» գաղա-

փարախոսության առկայությամբ՝ լավագույնս ամփոփված «Մեկ Ազգ, երկու Պետություն» բանաձևում (իհարկե, նկատի ունենալով Ադրբեջանի և Ռուրիքայի հանրապետությունները): Գաղափարական նման շեշտադրումները, հասկանալիորեն, ամհանգատության մեծ ալիք բարձրացրեցին հատկապես թալիշ էթնիկ փոքրամասնության շրջանակներում, որին պատմականորեն բնորոշ է իրանական կողմնորոշումը:

Թալիշ փոքրամասնությունը խիտ բնակեցված է Ադրբեջանի հարավարևմտյան Լենջրոան, Լեռիք, Մասալիկ, Ասարա, Եսարտիսի շրջաններում, Բաքվում և Սոււմգայիթում: Թեև թալիշ փոքրամասնության մի հատված ներկայացված է նաև Իրանի Իսլամական հանրապետությունում, վերջիններս իրենց ադրբեջանական ազգակիցներին, որոնց զգալի մասը հարում է Շիա կրոնական քնին, հիմնականում տարբերվում են Իսլամի Սուննի գերիշխող դավանանքով: Վկայակոչելով 1999թ.-ի ադրբեջանական վիճակագրական տվյալները, թալիշ էթնիկ փոքրամասնության թվաքանակն այստեղ կազմում է ամբողջ բնակչության 1%-ը (շուրջ 76.800), որը մեկնաբանվում է որպես ոչ ճշգրիտ տեղեկություն, քանի որ գուցաևեռաբար ներկայացվում է նաև մեկ միլիոնը հատող թվաքանակը¹⁶:

Ադրբեջանաբնակ թալիշների շարժումը դրսևորվելով պատմական տարբեր ժամանակահատվածներում¹⁷, իր զարգացման զագաբնակեցին հասավ Արցախի հակամարտության բեծ տարիներին, երբ 1993 թ.-ի հունիսի 21-ին երկրի հարավ-արևմտյան շրջաններում հռչակվեց Թալիշ-Մուզհան անկախ հանրապետությունը: Նույն թվականին Լենջրոանի շրջանում տեղի ունեցավ Մեջլիսի հավաքը, որի ընթացքում որոշվեց ինքնահռչակ հանրապետության օրիներգն ու դրոշը, և առաջնորդներն ուղղեծուղ դիմեցին ադրբեջանական իշխանություններին հորդորելով իրավիճել երկրում Գերագույն խորհրդի նիստ ճառաչելու ներաստեղծ անկախ հանրապետության հռչակումը: Թալիշ-Մուզհան հանրապետությունը, սակայն, չափազանց կարճ կյանք ունեցավ և նույն թվականի օգոստոսի 24-ին վերջ դրվեց ինքնահռչակ հանրապետության գոյությանը¹⁸:

Չնայած իր կարճատև գոյությանը, հարկ է նշել, Թալիշ-Մուզհան հանրապետության հռչակման իրադարձությունն իր խոր դրոշմը բողեց թալիշ ազգային ինքնագիտակցության վրա և մինչև եսր շարունակում է ծառայել որպես հիշատակման հուգալկան աղբյուր և նախադեպ:

Ժամանակակից Ադրբեջանում թալիշ ազգային շարժման շարունակականությունն ու կենսունակությունը այլևս կարելի է որակել որպես իրականության անբաժանելի մասնիկ, եթե նկատի ունենանք շարժման կազմակերպված տեղեկատվական ցանցը, որն ապահովում է տեղեկատվության արդյունավետ փոխանակություն ինչպես սփյուռքի, այնպես էլ ադրբեջանաբնակ թալիշ համայնքների միջև, խնդիրների սահմանված քաղաքական օրակարգը և դրանց լուծմանը միտված համակարգված գործողությունները: Այս առումով չափազանց կարևոր դերակատարություն ունի սփյուռքի թալիշ համայնքների ծավալած գործունեությունը՝ ներկայացված հիմնականում Անկախ պետությունների համագործակցության (ԱՊԳ) տարածաշրջանում և Արևմտյան Եվրոպայում, որը կարելի է որակավորել որպես շարժման զագափարական մտահղացումների և սկզբունքային մարտավարությունների «արտադրական կենտրոն»:

Ընդհանուր առմամբ, ադրբեջանաբնակ թալիշ ազգաբնակչության կողմից պարբերաբար հնչեցրած իրապարկումներն ու պահանջները կարելի է պայմանականորեն բնութագրել ելնելով երկու հիմնական դրույթ-

ներից, որոնք հստակորեն ուրվագծվում են հայտարարությունների և հարցազրույցների բովանդակային համատեքստը վերլուծելիս: Թեև դրանց մանրամասնումը դուրս է ներկայիս հրատարակման շրջանակներից, սակայն, հարկ է նշել, որ հայտարարությունների և պահանջների բաղաբաղական շրջագիծը բավականին լայն է և բազմաշերտ ընդգրկելով մշակութային, լեզվական ինքնավարության իրավունքով պայմանավորված թափ ձգող ազգային փոքրամասնության կացությունը Ադրբեջանի կազմում և առավել ծայրահեղ լիակատար անկախացումը որպես լուծման լավագույն միջոց, առաջարկությունները:

Ներկայիս Թալիշ ազգային շարժումն (ԹԱՇ) առանձնանում է իր ներքին կազմակերպվածությամբ ու կատարելագործված տեղեկատվական ցանցով, որը հնարավորություն է ընձեռում բարձրաձայնել թալիշ փոքրամասնության խնդիրներն ինչպես Ադրբեջանի կառավարական շրջանակներում, այնպես էլ միջազգային կառույցներում¹⁹: Շարժումն, ի տարբերություն երկրում գործող մյուս էթնիկ համայնքների քաղաքական գործունեության, այքի է ընկնում նաև քաղաքական հասունությամբ, քանի որ չի սահմանափակվում միայն թալիշ ազգաբնակչությանը հուզող խնդիրների անդրադարձով, այլև առավել լայն քաղաքական պատճառներին հանդես գալով բարձրաձայնում է նաև Ադրբեջանի հանրապետության կազմում գտվող տարբեր ազգային փոքրամասնությունների կացության և կարգավիճակին առնչվող համընդհանուր խնդիրները²⁰: Ավելին, ինքնուրուճան գաղափարն այստեղ, ելնելով որդեգրած քաղաքականության ընդհանուր տրամաբանությունից, չի սահմանափակվում միայն թալիշ ազգաբնակչությանը հասու իրավունքով և մեկնաբանվում է մշակութային, սոցիալական, լեզվական և մի շարք այլ ազատությունների ներքո: Երկրի բազմաէթնիկ ազգաբնակչությանը հասցեագրված ընդհանրացված ելույթներն ու քաղաքական հրատարակայնությունն անկասկած շարժումը հաղորդում է առավել ներկայացուցչական բնույթ:

Վերջապես, կարելի է միանշանակ փաստել, որ Ադրբեջանի Հանրապետությունում առկա է թալիշ ազգաբնակչության խնդիրը, որին բնորոշ է բավական ակտիվ և բազմաբեկոտ պայքարը ընդդեմ երկրի իշխանությունների կողմից իրականացվող լեզվա-մշակութային մերժեցման և ինտեգրման ռեպրեսիվ միջոցառումների: Նման սահմանափակումները մի երկրում, որը 2001 թ.-ից հանդիսանում է Եվրոպայի հորիզոնի (այսուհետև՝ ԵԽ) անդամ ստանձնելով ազգային փոքրամասնությունների առնչությամբ մի շարք իրավաբաղադրական պարտականություններ²¹ մատնաշում են Ադրբեջանի իշխանական ռեժիմի էթնիկ փոքրամասնությունների խնդիրներին հետամուտ լինելու դժկամությունը, իսկ որպես հանրապետություն անկախորդնակ լինելը:

Ամփոփման կարգով նշենք նաև, որ Ադրբեջանի իշխանությունների քաղաքական և ռազմավարական ընկալումներում Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող զարգացումներն ու վերջնական հանգուստնառումը դիտարկվում է առավել լայն համատեքստում՝ ամուրղակիորեն անդրադարձնալով հաջորդիվ լեզգիին և թալիշ էթնիկ փոքրամասնությունների կարգավիճակի առնչությամբ պարտադրված հստակեցումներով²²: Ավելին, նման մտավախություններն ամնիջակաճործն շաղկապված են հանրապետության ներսում բեյադրվող կառուցվածքային փոփոխություններով: Չարգացումների այս հեռանկարը, որի դրսևորումը մասնավորապես թալիշ և լեզգի էթնիկ փոքրամասնությունների պարագայում առարկայանում է

ինքնավար կարգավիճակի տեսքով, Ադրբեջանում ընկալվում է որպես պետականության հիմքերի թուլացման և արտաքին միջամտությունների համար նպաստավոր պայմանների ստեղծման զարգացում:

ԱՊՐԵՋԱՆՈՒ ԹԵՆԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳՅՈՒՆ ԿՈՒՐՅՑՆԵՐՈՒՄ ՍՄԱՆՁՆԱԾ ՊՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏՐՄԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ադրբեջանի իշխանությունների դիտակետից, որն, ի դեպ, բնորոշ է մի շարք ավտորիտար ռեժիմների, ազգային փոքրամասնությունների կացության, լեզվա-մշակութային ազատությունների և քաղաքական կարգավիճակին առնչվող հարցադրումները շարունակաբար ընկալվում են որպես պետականության ամնիջակաճործն սպառնացող զարգացումներ²³: Բացառելով էթնիկ բազմազանության նմկատմամբ հանդուրժողականությունը պայմանավորված ժողովրդավարական հանրապետություններին բնորոշ արժեքային համակարգն ու կառավարման մոդելները ներկայիս ադրբեջանական իշխանությունների մոտեցումները փոխադրելով, ուղղակիորեն միտված են խիստ միանույլ հասարակական և պետական կառուցվածքի կերտմանը, որտեղ գործնականում կորանալանապես մերժվում է ազգային փոքրամասնություններին լայն ազատությունների, իրավասության և լիազորությունների շնորհումը, իսկ կառուցվածքային առումով խեղճատիվ կամ ինքնավար սվերոնքների հիման վրա ձևավորված պետականության գաղափարը: Ժողովրդավարացման համաձայնած միտումները ներկայիս ադրբեջանական ռեժիմին ստիպում են, թերևս, որդեգրել ժամա-նակակից քաղաքացիական հիմունքներով ամրագրված պետության տեսլականը, որտեղ, համենայն դեպս ձևակերպումներում, առաջնայնորեն կարևորվում են անհատի իրավունքները, իսկ պետական հոգա-ծությունը տարածվում է հավասարապես անկախ ազգային, ռասայական, կրոնական և լեզվական պատկանելության: Գործնականում, սակայն, նման շեշտադրումները մի երկրում, որն առանձնանում է բավական բարդ բազմաէթնիկ կառուցվածքով ուղղակիորեն արտահայտվում են ազգային փոքրամասնություններին առանձին խումբ ձևաչելու դժկամությամբ²⁴, իսկ միջազգային հարթակում իրավական դաշտում վերջիններիս կարգավիճակի կանոնակարգմանն ուղղված են հորդորներին դիմակայելու մարտավարությամբ²⁵:

Յետադրորական է նշել, որ չնայած արտաքին աշխարհի բավարարվածությունը հայցող այս ձևակերպումներին, իրականում էլ ավելի է սահմանափակվել էթնիկ փոքրամասնությունների հուզող որևէ սոցիալ-տնտեսական կամ մշակութային ուղղվածություն ունեցող հարցադրումների կառավարական օրակարգում հայտնվելը մի կողմ թողնելով դրանք բննարկումներում կամ, որն իրապես ժողովրդավարական է, որոշում կայացնելու գործընթացներում ազգային փոքրամասնությունների ամնիջակա մասնակցությունը²⁶: Նման սահմանափակումներն ակնհայտ են մի շարք հեղինակավոր միջազգային կառույցների կողմից Ադրբեջանի Հանրապետության օրենսդրական, մարդու իրավունքներին, մշակութային և լեզվական ազատությունների վերաբերյալ պաշտոնապես արձանագրված դիտարկումներում:

Ինչպես արդեն նշվեց, 2001 թ.-ին անդամագրվելով ԵԽ կազմակերպությանը, Ադրբեջանի Հանրապետությունը միաժամանակ ստանձնեց ազ-

գային փոքրամասնություններին առնչվող մի շարք իրավա-քաղաքական և բարոյական պարտավորվածություններ, որոնք մինչ այժմ մնում են անկատար: Մասնավորապես, եւս շրջանակներում ստանձնած պարտավորությունների շարքից հարկ է առանձնացնել Ադրբեջանի Գանրապետության ազգային փոքրամասնությունների առնչությամբ օրենսդրական կանոնակարգման ուղղված եւս հորդորները²⁷: Ադրբեջանի Գանրապետությունում ոչ միայն բացակայում են ազգային փոքրամասնությունների վերաբերյալ օրենսդրական սահմանումները, այլև այստեղ ընդհանրապես գոյություն չունեն քաղաքական կառույցներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունն ապահովող իրավական չափորոշիչները: Եւս շրջանակներում խիստ կարևորվում է նաև Ադրբեջանի կազմում ազգային փոքրամասնությունների խնդիրներին համակարգային (ինստիտուցիոնալ) բնույթի հաղորդումը Ազգային փոքրամասնությունների խորհրդի տեսքով: Նման ձևաչափը ելնելով այստեղ տիրող սահմանադրած խտրականություններից և սահմանափակումներից, վկայակոչվում է որպես որոշում կայացնելու գործընթացներում էթնիկ փոքրամասնությունների անմիջական մասնակցությունն ապահովող միջոց²⁸: Եւսեք, որ նման գործառույթներով օժտված մարմիններ գոյություն ունեն եվրոպական տարրեր երկրներում, այդ թվում նաև Ֆրանսիայում, Իտալիայում և Շվեյցարիայում, որոնք էթնիկ ուղղվածություն ունեցող բազմաբնույթ խնդիրների լուծման հարցերում ծավալում են բավական ազդեցիկ և արդյունավետ գործունեություն: Եթե փորձենք նման կառույցի հաստատման հեռանկարը կամ արդյունավետությունը դիտարկել Ադրբեջանի քաղաքական իրողությունների շրջանակում, քանի որ ինքնին կառույցի հաստատումը ինքննապատակ չէ և դրա արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է լայն իրավասությունների և գործառույթների իրական օժտվածությամբ, ապա Ադրբեջանում գերիշխող քաղաքական կարգը, միջավայրն ու մթնոլորտը միանշանակ համահունչ չեն խորհրդի հեռահար նպատակների հետ: Առաջարկվող խորհրդի ձևավորման և արդյունավետ գործունեության համար, հարկ է նշել, որ էական դերակատարում ունի այն հանգամանքը, թե կառույցը որքանով է համապատասխանելու երկրում առկա քաղաքական և հասարակական իրողություններին ու տրամադրություններին: Այս տեսանկյունից Ազգային փոքրամասնությունների խորհրդի առարկայացումը Ադրբեջանի քաղաքականապես ավտորիտար քաղաքական համակարգի շրջանակներում, մի կողմ թողնելով դրա արդյունավետության կամ փոքրամասնությունների խնդիրների հասարակական շրջանակներում լսելի ու լուծելի դարձնելու խնդիրները, բավական խնդրահարույց և ծախվորման դատապարտված նախաձեռնություն է: Ադրբեջանի Գանրապետության իրավական դաշտում նույնիսկ արգելափակված է էթնիկ փոքրամասնությունների շահերը ներկայացնող քաղաքական կուսակցությունների ներակայացուցչական գործունեությունը: Սա ոչ միայն ազգային փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման և երկրում տեղ գտնող քաղաքական գործընթացներից օտարման հերթական դրսեվորում է, այլև երկրի հասարակական-քաղաքական կյանքին և կառավարմանը փոքրամասնությունների մասնակցությունը զսպող լուրջ գործոն է: Նման մեթոդական կենցաղածրն առաջին հերթին պայմանավորված է գործող ռեժիմի կողմից փոքրամասնությունների կուսակցական գործունեությունը որպես անջա-

տողական շարժումներ ծավալելու համար քաղաքական նպատակոր հիմքեր ստեղծելու ընկալումներով:

Նույնքան խտուն են, թերևս, Ադրբեջանի կրթական ոլորտում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ դրսևորվող լեզվա-մշակութային խտրականությունները, եթե հաշվի առնենք, որ ընկալության շուրջ 2 մլն.-ն այստեղ հարողակցվում է այլ լեզուներով²⁹: Անդամակցելով եւս շրջանակներում Տարածաշրջանային և Փոքրամասնությունների Լեզուների /Charter for Regional and Minority Languages/ սահմայագրին Ադրբեջանի իշխանությունների կողմից այն ընկալվում է ավելորդ միջազգային պարտավորվածություն, իսկ գործնականում դրսևորվում որպես ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը խոչընդոտող միջոցառում: Փոքրամասնությունների մայրենի լեզուների առնչությամբ դրսևորվող ընհանուր սահմանափակումները, իսկ տեղական մակարդակում ճնշման սաստկացումը՝ մասնավորապես վերջիններին համախուժմբ բնակչության շրջաններում ընդհանուր կրթության համակարգերի մեջ ադրբեջաներենի ծանրակշիռ ներդրման միջոցով, ունենում է ճիշտ հակառակ ազդեցությունը հանցեղենելով էթնիկ համախմբման գործընթացների ուժեղացմանը: Նման սահմանափակումները, սակայն, նպաստում են ազգային փոքրամասնությունների լեզվական և հետևաբար ազգային առանձնակի ինքնության ունչացմանը, ինչը հատկապես արժանազան է քալիչ, լեզգի, ավար, թաթ և քուրդ ազգաբնակչությունների դեպքում, որոնք իրենց մշակութային և լեզվական ինքնությունը որսևորման պարտազայում առավել հաճախ ենթարկվում են տեղական իշխանությունների ճնշումներին³⁰: Նման մոտեցումը խիստ հակասում է միջազգային-իրավական և նորմատիվ ակտերի դրույթներին, համախուժմբ բնակչության շրջաններում ապրող փոքրամասնությունների շահերի և պատասխանների պահպանմանը, քանի որ այն առավել քան նպաստում է ազգային փոքրամասնությունների լեզվա-մշակութային արժեքների և ազգային ինքնագիտակցության աստիճանական վիժեցմանը:

Բացահայտ քննադատության է արժանանում նաև Ադրբեջանի Գանրապետության 2002 թ.-ին Պետական լեզվի մասին ընդունված օրենքը, որի արդյունքում ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռահարողակցվող ծրագրերը տեղում խիստ սահմանափակվել են: Նման ձևակերպումները գերիշխում են հատկապես եւս խորհրդարանական կոմիտեի Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոմիտեցիայի (ՄՓՇԿ) կողմից արժանագրված փաստարկներում³¹:

Ադրբեջանի Գանրապետությունում, հարկ է նաև նշել, սպառնալիցներին, հասարակական և քաղաքական տարրեր բնագավառներում պարբերաբար դրսևորվող խտրականությունների և ճնշումների են ենթարկվում հատկապես ադրբեջանաբնակ հայ քաղաքացիները, որոնք ընհանուր քանակն այստեղ հասնում է 10.000-30.000³²: Դաշվի անելու երկրում տիրող համընդհանուր անհանդուրժողականության մթնոլորտը, ազգությամբ հայ քաղաքացիները, որպես անձնական անվտազության ապահովման միջոց, ստիպված են թաքցնել իրենց իրական ինքնությունը, իսկ առավել հաճախ անձնագրերում կատարել կենսական անհամաժշտությամբ թելադրված փոփոխություններ: Նման արժանագրույթները հեղեղված են մասնավորապես եւս շրջանակներում Բուր ձևերի ռասայական խտրականությունների վերացման միջազգային կոմիտեցիայի /Convention on Elimination of all forms of Racial Discrimination/ 2005 և 2007թթ.-ների գեկույցներով:

Վերոգրյալ դիտարկումները փաստում են, որ ժամանակակից Ադրբեյջանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների ազատության, մշակութային կամ լեզվական ինքնուրույնության դրսևորումները բացարձակապես երաշխավորված չեն: Բարդ բազմաէթնիկ կառուցվածք ունենալով հանդերձ, այստեղ ոչ միայն բացակայում են ազգային փոքրամասնությունների ազատությունները երաշխավորող օրենսդրական հստակեցումներն ու կանոնակարգման գործառույթները, այլև էթնիկ բազմազանության նկատմամբ ժողովրդավարական հանրապետությունների բնորոշ արժեքային համակարգն ու հանդուրժողականությամբ պայմանավորված կառավարման մոդելները: Ավելին ազգային ինքնուրույնության յուրաքանչյուր օրինաչափ և բնակչունը դրսևորում էլենելով միաձույլ հասարակական կառուցվածքի կերտմանն ուղղված կառավարական ջանքերից, Ադրբեյջանում ընկալվում է որպես պետականության հիմքերի թուլացմանը միտված միջոցառում՝ արժանանալով բազմապիսի ռեպրեսիվ միջամտությունների:

ԱՍՓՈՒՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՍ ՈՐՊԵՏ ՎԵՐՋԱԲԱՆ

Ժամանակակից Ադրբեյջանի Հանրապետությունում մարդու և ազգային փոքրամասնությունների իրավաբաղաբական, սոցիալական և լեզվա-մշակութային իրավունքների պաշտպանության ամբողջ սպեկտրը բավականաչափ սուր և բարդ խնդիր է: Թեև Ադրբեյջանի իշխանական ընտրա-խավը բազմիցս հայտարարել է ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվելու նվիրվածության մասին, գործնականում, սակայն, փոքրամասնությունների նկատմամբ որդեգրած պետական քաղաքականությունը ստանում է առարկայապես ծիշտ հակառակ դրսևորումները: Ազգային փոքրամասնությունների խնդիրներին ժողովրդավարական հանրապետություններին հարիր լուծումներ գտնելու ղեկամությունը Ադրբեյջանում առաջին հերթին պայմանավորված է երկրի ռազմավարական ընկալումներում փոքրամասնությունների նկատմամբ դրսևորվող մտավախություններով և նրանց հետագա կարգավիճակի վերաբերյալ պարտադրված հստակեցումներով ու կառուցվածքային փոփոխություններով: Նման ռազմավարական մտավախությունները հասկապես գերիշխում են լեզգի և թալիշ փոքրամասնությունների նկատմամբ, որտեղ գրեթե յուրաքանչյուր էթնիկ յուրօրինակություն պայմանավորված ինքնադրսևորման փորձ արձանանում է երկիր իշխանական և ուժային կառույցների արագ արձագանքին և ռեպրեսիվ միջամտությանը:

Էթնիկ փոքրամասնությունների խնդիրներին հետանուտ լինելու Ադրբեյջանի Հանրապետության անկարողունակությունը պայմանավորված է նաև երկրում արձատագող ավտորիտար բարբերի առաակալության³³, որոնց արտահայտվածությունը առավել հստակ դիտարկելի է մասնավորապես փոքրամասնությունների ազատություններին վերաբերող մի շարք քաղաքական, սոցիալական և մշակութային հարցույթումներում: Այս առումով, ողջ Եմխորհրդային ժամանակաշրջանում Ադրբեյջանի կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականությունը ոչ միայն չնպաստեց փոքրամասնությունների իրավունքների, ինքնուրույնության և ազգային արժեքների պահպանմանը, այլև, ընդհակառակը, առավել ընդգծեց պետության և մյուս կողմից էթնիկական փոքրամասնությունների միջև հետզհետե խորացող անջուպե-

տը, քաղաքական հակասությունները և սրբոլված բացասական ներուժը: Այս, մասամբ, պայմանավորված է դեռևս ոչ վաղ անցյալից ժառանգած հայտնու հասարակական կազմության շուրջ ստեղծված արհեստական պետական միավորման կամ կառուցվածքի գործոնով, որը ԽՍՀՄ փլուզման գարգացումներին զուգընթաց, հասկանալիորև, ենթարկվեց լիովին տրամաբանական, կանխատեսելի և հիմնավորված գարգացումների ու փոփոխությունների, մասնավորապես եթե վերհիշենք Արցախի անկախացման գործընթացը: Այս համատեքստում դիտարկման պարագայում, լեզգի, թալիշ և մի շարք այլ տիտուլյար էթնիկ փոքրամասնությունների անկախացման ձգտումներն ու առանձնակի ինքնուրույնության դրսևորումները, ձեռք են բերում հստակ և տրամաբանություն և պատճառաբանվածություն: Ուստի արդեջանաբանակ էթնիկ փոքրամասնությունների քաղաքական, սոցիալական և լեզվա-մշակութային ինքնուրույնության պահանջները և ժամանակակից Ադրբեյջանի քաղաքական կյանքում փոքրամասնությունների կողմից պարբերաբար դրսևորվող ազատական ձգտումները կարելի է բնութագրել որպես բնական և խիստ օրինաչափ գարգացումներ: Թեև էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ արձանագրվող ասիմիլացիային կողմնակալ քաղաքական քաղաքական կյանքում փոքրամասնությունների կողմից պարբերաբար դրսևորվող ազատական ձգտումները կարելի է բնութագրել որպես բնական և խիստ օրինաչափ գարգացումներ: Թեև էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ արձանագրվող ասիմիլացիային կողմնակալ քաղաքական ավտորիտար համակարգի այլատյալացության և անհանդուրժողական բարբերին, իրական և խորքային դրաքառատնա-ները, սակայն, հստակ դիտարկելի էին դեռևս պետականության ստեղծման ակունքներում: Այսինքն, ադրբեյջանաբակ էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ ներկայումս գործադրվող ռեպրեսիվ միջոցառումները անցյալում արձանագրված վայրագ և զավթողական պետականաշինության կապակցված շարունակություն են միտված հնարավորին միաձույլ պետական և հասարակական կառուցվածքի կերտմանը:

Ադրբեյջանում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականության վրա իր ազդեցություն է թողնում ինչպես երկրի կառուցվածքային, այնպես էլ խնդիրների նկատմամբ պետական գործառույթների և մասնավորապես քաղաքական կամքի բացակայությունը: Էթնիկ փոքրամասնությունները, այս առումով, գնալով ավելի են օտարվում ադրբեյջանական պետությունից՝ չցուցաբերելով երկրի քաղաքական և հասարակական կյանքին հարմարվելու որևէ պատրաստակամություն: Ավելին, մարզինալացման և օտարվածության այս համապատկերող դրա-կիրեն նպաստում է գործող իշխանական համակարգի և մյուս կողմից էթնիկ փոքրամասնությունների միջև առժամ սրբոլված ներքին հակամարտության խորացմանը, որը պարբերաբար դրսևորվում է ապակայունացմանը միտված բազմապիսի գարգացումներով: Թեև նմանատիպ խնդիրներ ծագում են մի շարք առաջատար երկրներում, սակայն դրանց լուծումն առաջին հերթին ենթադրում է երկրում ժողովրդավարական կարգի, արժեքների և հասարակական հանդուրժողականության մքնուրոտի ձևավորում, որը Ադրբեյջանի Հանրապետության պարագայում բացարձակապես բացակայում է: Կառուցվածքային առումով, սա ենթադրում է ավտորիտար ռեժիմի ապամոնտաժում և բոլոր պետական կառույցների ազատականացում, ինչպես նաև ադրբեյջանական հասարակության դիրքորոշման արձատական վերափոխում: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե Ադրբեյջանի Հանրապետությունը և հասարակական կյանքը շրջանակները դադարեցնեն էթնիկ փոքրամասնություններին ընկալել որպես իրենց-տիստական, օտար, կամ անցանկալի տարրեր և իշխանական ողջ

ներում ու ռեսուրսները ուղղվեն երկրում էքնիկ փոքրամասնությունների ազատ ինքնադրսեվորման իրական երաշխիքների ստեղծմանը: Մասնավորապես, սա ենթադրում է, որ կառավարական ողջ ներուժը գործադրվի ոչ թա պոլյունակետ սահմանափակման և ճնշման միջոցառումների փնտրտուքի ուղղությամբ, այլ փոքրամասնություններով խիտ բնակեցված շրջաններում իրական ինքնակառավարման մեխանիզմների և էքնիկ ինքնության յուրահատկությունների պահպանման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկմամբ: Ենթադրում է ևս մա պայմանների և ազատությունների առկայության դեպքում էքնիկ փոքրամասնությունները Ադրբեջանի Գանրապետությունում կոդադրեն լինել սոսկ քաղաքականության կողմնակի վերածվելով որա ծավալորման անմիջական մասնակիցների: Ադրբեջանում քաղաքացիական հասարակության կայացման և հասարակական-քաղաքական գործընթացներում էքնիկ փոքրամասնությունների անմիջական մասնակցությունն ապահովող նախաձեռնությունները ներկայա սավտորիտար բարքերի համատեքստում ուղղակիորեն անհնարին են:

Ինչպես արդեն նշվեց, Ադրբեջանի Գանրապետությունը հանդիսանում է միջազգային տարբեր կազմակերպությունների անդամ, որոնց շրջանակներում երկիրը ստանձնել է անհատի իրավունքների և էքնիկական փոքրամասնությունների պաշտպանության առնչությամբ մի շարք միջազգային-իրավական և քարոյական պարտավորություններ: Միևնույն ժամանակ, ինչպես էքնիկ փոքրամասնությունների հիմնարար ազատությունների դրույթների կատարման արձանագրությունները մատնանշեցին, Ադրբեջանի կողմից ստանձնած պարտավորությունների ծավալներն ու դրանց կատարման մակարդակը, մասնավորապես փոքրամասնությունների ինքնակառավարման մարմինների ծավալորման տեսանկյունից, լիովին բացակայում են: Սա առաջին հերթին ենթադրում է էքնիկական փոքրամասնությունների խիտ բնակեցված վայրերում գործուն վարչական և կառավարման գործառույթների ստանձնումն և ինքնակառավարման հստակեցումների միջոցով պետական, հանրային և տեղական հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունք: Վերոգրյալ դիտարկումները փաստում են նաև, որ ժամանակակից Ադրբեջանի Գանրապետությունում ազգային փոխարմասնությունների ազատությունների, մշակութային կամ լեզվական ինքնուրույնության դրսերումները բացարձակապես երաշխավորված չեն: Բարդ, բազմաէքնիկ կառուցվածք ունենալով հանդերձ, այստեղ ամբողջությամբ բացակայում են ազգային փոքրամասնությունների ազատությունները երաշխավորող օրենսդրական հստակեցումներն ու կանոնակարգման գործառույթները առավելագույնս ընդգծելով ներքին օրենսդրության մեջ էքնիկ փոքրամասնությունների աշտպանության հարցերում իրավական դաշտի շտկման և հիմնարար միջազգային-իրավական նորմերին համահունչ դարձնելու խնդիրները:

Վերջապես, Ադրբեջանում առկա էքնիկ խնդիրները տեղահանումների, ռեպրեսիվ միջոցառումների կամ ուղղակիորեն ուժային միջամտություններով լուծելու քաղաքականությունը հանգեցնելու է Ադրբեջանի և ողջ Գարավային Կովկասի տարածաշրջանային անկայունությանը: Ադրբեջանաբնակ փոքրամասնությունների խնդիրների լուծումը, հետևաբար, ոչ միայն կարևորվում է հարևան երկրում ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական հասարակության կայացման անհրաժեշտությամբ, այլև ողջ Գարավային Կովկասի տարածաշրջանում կայունության հաստատման տեսանկյունից: Ազգային փոքրամասնությունների խնդիրների սառեցումը,

որը դրսերվում է մասնավորապես լեզգի և թալիշ էքնիկ փոքրամասնությունների պարագայում, չի հանգեցնում ընդհանուր իրավիճակի բարելավմանը և միայն արտաքնապես սքոզում կամ զսպում է շարունակաբար ուստակվող բախումնային ներուժը: Ներկայիս պայմաններում շարունակվում է լարվածություն կուտակվել հատկապես էքնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված շրջաններում, ինչը տեսանելի ապագայում ինչպես Ադրբեջանի սահմաններում, այնպես էլ Գարավային Կովկասի ողջ տարածաշրջանի անվտանգության համատեքստում կարող է հանգեցնել րացասական քաղաքական հետևանքների:

1.12. Բնակչությունն ըստ էքնիկական խմբերի¹⁾
(համաձայն մարդահամարի տվյալների)

էքնիկական խմբեր	Ներկայացված հազարներով							
	1926	1939	1959	1970	1979	1989	1999	
Ընդհանուր բնակչություն	2314,6	3205,2	3697,7	5117,1	6026,5	7021,2	7953,4	
որոնցից								
ադրբեջանցիներ	1438	1870,5	2494,4	3776,8	4708,8	5805	7205,5	
լեզգիներ	37,3	111,7	98,2	137,3	158,1	171,4	178	
ուսներ	220,5	528,3	501,3	510,1	475,3	392,3	141,7	
հայեր	282	388	442,1	483,5	475,5	390,5	120,7	
թալիշներ	77,3	87,5	0,1	?	?	21,2	76,8	
ավարներ	19,1	15,7	17,3	30,7	36	44,1	50,9	
թուրքեր	?	?	0,2	8,5	7,9	17,7	43,4	
քաբեր	?	?	5,9	7,8	8,9	10,2	10,9	
քաբարներ	9,9	27,6	29,6	31,8	31,4	28,6	30	
ուկրաինացիներ	18,2	23,6	25,8	29,2	26,4	32,3	29	
ցախուրներ	15,6	?	2,9	6,2	8,5	13,3	15,9	
վրացիներ	9,5	10,2	9,5	13,6	11,4	14,2	14,9	
բրդեր	41,2	6	1,5	5,5	5,7	12,2	13,1	
իրեններ	30,9	41,2	40,2	41,3	35,5	30,8	8,9	
ուղիներ	2,4	?	3,2	5,5	5,8	6,1	4,1	
այլ ազգություններ	112,7	318,3	25,5	29,3	31,3	31,3	9,6	
	%							
Ընդհանուր բնակչություն	100	100	100	100	100	100	100	
որոնցից								
ադրբեջանցիներ	62,1	58,4	67,4	73,8	78,1	82,7	90,6	
լեզգիներ	1,6	3,5	2,6	2,7	2,6	2,4	2,2	
ուսներ	9,5	16,5	13,6	10	7,9	5,6	1,8	
հայեր	12,2	12,1	11,9	9,4	7,9	5,6	1,5	
թալիշներ	3,3	2,7	0	?	?	0,3	1	
ավարներ	0,8	0,5	0,5	0,6	0,6	0,6	0,6	
թուրքեր	?	?	0	0,2	0,1	0,2	0,5	
քաբեր	?	?	0,2	0,15	0,14	0,14	0,13	
քաբարներ	0,4	0,9	0,8	0,6	0,5	0,4	0,4	
ուկրաինացիներ	0,8	0,7	0,7	0,6	0,4	0,5	0,4	

զայտություններ	0,7	?	0,1	0,1	0,1	0,2	0,2
վրացիներ	0,4	0,3	0,3	0,3	0,2	0,2	0,2
բրդեր	1,8	0,2	0	0,1	0,1	0,2	0,2
իրաններ	1,3	1,3	1,1	0,8	0,6	0,4	0,1
ուղիներ	0,1	?	0,1	0,1	0,1	0,1	0,05
այլ ազգություններ	5	2,9	0,7	0,55	0,66	0,46	0,12

Աղբյուր: Ադրբեջանի Հանրապետության պետական վիճակագրական կոմիտե

Օգտագործված գրականություն

1. Sbu Connor, Walker. The Nation and its Myth. International Journal of Comparative Sociology XXXIII, 1-2, 1992. Sage Publications.
2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն անվանումները նույնական են»: Տես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասիանախարության հոդված 1-ը:
3. Ստորև նշված պարզաբանումը քերական ադրբեջանական ծագումնաբանության շուրջ առկա հակասությունների լավագույն ամփոփումն է. «Իրենց ոչ ուշ անցյալում կազմավորված ազգային ինքնության հետ մեկտեղ, ադրբեջանական մտավորականությունը նույնպես զգաց իր ազգությանը որպես հիմնավորը և տեղաբնակ Կովկասյան բարձրակարգության ժառանգորդի լեզուիմություն հաղորդելու կարիքը: Երանք ստիպված եղան աղավաղել իրենց քուրբալան էրնիկ և լեզվական արձանները, գերիշխող Հիւս կրոնական ուղղվածությունը... և վաստիկուն չենըջնող Կովկասյան էրնիկ և լեզվական ծագումը: Արդյունքում՝ որպես իհն, տեղաբնակ Կովկասյան ժողովուրդը ներկայանալու անկնկալիքով, ադրբեջանցիները զարգացել են իրենց էրնիկ գենետիկականության ստրանվականությանը պայմանավորված պատկերացումը, ըստ որի, ժամանակին ներկայիս ադրբեջանական տարածքը զբաղեցրած գեղամերերը համարվում են իրենց նախահայրերը»: /թարգմանությունը մերն է/ Astourian Stephan cited in Levon Chorbajian; "Introduction," in Levon Chorbajian, ed., Making a State: From Secession to Rrepublic In Nagorno-Karabagh, New York: St. Martin's Press, 2001, p. 35.
4. Sbu Bennisgen Alexandre cited in Levon Chorbajian; "Introduction," in Levon Chorbajian, ed., Making a State: From Secession to Rrepublic In Nagorno-Karabagh, New York: St. Martin's Press, 2001, p. 34. /թարգմանությունը մերն է/:
5. Swietochowski, Tadeusz. The Hidden Faces of Islam. World Policy Journal, Fall 2002; նաև Valiyev, Anar. Azerbaijan: Islam in a Post-Soviet Republic. Middle East Review of International Affairs (MERIA), Vol. 9, No. 4, December 2005.
6. Իրականում, հարկ է նշել, բազմաէրնիկ բաղադրյալ կառուցվածքով առանձնացող պետության պարագայում ազգային մեծամասնության կամ փոքրամասնության կարգավիճակի սահմանմանը զուգորդող բնորոշչիները ծծոված են շատ ավելի ծանրակշիռ դերակատարմանը, քան զոտ թվաբանական հարաբերակցությանը պայմանավորված մեկնաբանությունները: Առանձին վերցված, խիստ փոփոխական է նաև ազգային փոքրամասնություն հասկացությունը պայմանավորված լինելով ժամանակային, տարածական հատկանիշների կամ փոփոխականների իրողությանը: Ազգային փոքրամասնություն հասկացության տեսական սահմանումների անշուրջ մանրամասն տեղեկությունների համար տես Fenton, Steve. Beyond Ethnicity: The Global Comparative Analysis of Ethnic Conflict. International Journal of Comparative Sociology Vol 45(3-4): 2004. Sage Publications.
7. Popjanjevski, Johanna. Minorities and the State in South Caucasus: Assessing the Protection of National Minorities in Georgia and Azerbaijan; Silk Road Paper, September 2006.
8. Ըստ 1999թ.-ի Ադրբեջանի Հանրապետության բնակչության պետական վիճակագրական տվյալների ամփոփման (ներկայացված հազարներով), ներկայացվում է

- է էրնիկ կառուցվածքի հետևյալ պատկերը. ազերիներ (7205,5- 90,6%), լեզգիներ (178,- 2,2%), քալիչներ (76,8,- 1%), ավարներ (50,9,- 0,6%) և այլն: Տես The State Statistical Committee of the Republic of Azerbaijan. Հետաքրքրական է նշել, որ ադրբեջանական բնակչության վիճակագրական տվյալների վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տարաբնույթ և հակասական տվյալներ: Սառնավորապես, նման իրարմերծ իրողությունը պայմանավորված է հատկապես լեզգի և քալիչ ազգաբնակչության անցյալում իրենց ազգային իրական ինքնության թաքցմամբ, որպես սոցիալական ոլորտում ադրբեջանցիների համար նախատեսված արտոնուրյուններից օգտվելու միջոց: Վիճակագրության առավել մանրամասն տրամադասվորման համար վերլուծության վերջնամասում ներկայացված է տվյալների ցանկը:
9. Ազգային փոքրամասնություններ հասկացության գործածությունը Ադրբեջանի պարագայում, ըստ մեկնաբանությունների, մեղմ ասած չի համապատասխանում իրողությանը, քանի որ նման ծակերկումը ներթափում է զարթած կամ եկվող ազգաբնակչություններ: Մինչդեռ քալիչ, լեզգի, ուղիհն, ավար և որոշակիորեն նաև քուրդ և քաթ ազգային փոքրամասնությունների պարագայում առավել ճշգրիտ է տեղաբնակ (տիտուլյար էրնիկ փոքրամասնություններ) բնորոշումները: Տես Iseeb-Չաօիչաճյօլ E., Oa-աճյօլ A. Aoi-iiiseebii Aqadaaeaaiaa. Adaaai: AA-OAEOTI, 2007. N. 45.
 10. Փաստնմբ, որ լեզգի էրնիկ փոքրամասնության երկու պետությունների միջև մասնատմանը հանգեցուցված մեծամտիպ գործընթաց տեղի է ունեցել նաև XIXդ.-ի սկզբնամասում:
 11. Ներկայացված տվյալները համապատասխանում են 1989թ.-ի վիճակագրությանը: Տես Matveeva, Anna and McCartney, Clem. Policy Responses to an Ethnic Community Division: Lezgins in Azerbaijan. International Journal on Minority and Group Rights, 1998. Դադատմանքակ Լեզգի փոքրամասնության թվաքանակը, ըստ հավաստումների, հասնում է շուրջ 240.000-ի: Cheterian, Vicken. Little Wars and a Great Game: Local Conflicts and International Competition in the Caucasus. Working Paper 32 Berne, July 2001, p. 55.
 12. Տես Minority Group Chronologies for Post-communist States. Lezgians: Risk Assessment. The Minorities at Risk (MAR) database, 2000. University of Maryland. On the Web at www.cidcm.umd.edu/mar/.
 13. Ի սկզբանե, լեզգի էրնիկ փոքրամասնության շարժումն ընկալվում էր որպես Ադրբեջանի Հանրապետության սահմաններում «Լեզգիստան» անկախ հանրապետության ստեղծման ուղղված միջոցառումներ: Եշեք նաև, որ շարժման ակտիվության տարիներն ու հասարակական խտությունները պայմանավորված էին լեզգի ազգաբնակչությանը զրավոչելու և Ղարաբաղ-յան պատերազմին մասնակից դարձնելու Ադրբեջանի նախաձեռնությանը: Տես Cullen, Svante E. Conflicts in the North Caucasus. Central Asia Survey 1998, p. 426; նաև Minority Group Chronologies for Post-communist States. Lezgians: Risk Assessment. The Minorities at Risk (MAR) database, 2000. University of Maryland.
 14. Matveeva, Anna and McCartney, Clem. Policy Responses to an Ethnic Community Division: Lezgins in Azerbaijan International Journal on Minority and Group Rights, 1998.
 15. Լույն տեղում էջ 250-251:
 16. Ter-Abrahamian, Hrant. On the Formation of the National Identity of the Talishis in Azerbaijan Republic. Caucasian Centre for Iranian Studies, Brill, Leiden, 2005.
 17. Հետաքրքրական է, որ մասամբ անկախ Թալիշ-Մուգիան հանրապետության մասին իշխատակում է նաև 1919թ.-ին տեղ գտած զարգացումներում: Լույն տեղում էջ 122.
 18. Որպես առաջնորդներ նշվում է զինվորականների մի սովոր գանգված գեներալ Ալի Ալրամ Հունմատովի գլխավորությամբ, ով, ի դեպ, Ղարաբաղյան պատերազմի ընթացքում դեկավարել է Լեմդրանի գունդը: Լույն տեղում էջ 123.
 19. 2005թ.-ից Թալիշ ազգային շարժումն (ԹՄՀ) անդամակցում է «Հանրակայացված ազգությունների և ժողովուրդների» կազմակերպությանը: Տես, օրինակ, Unrepresented Nations and People Organization (UNPO). On the Web at www.unpo.org/.

20. Ter-Abrahamian, Hrant. On the Formation of the National Identity of the Talishis in Azerbaijan Republic. Caucasian Centre for Iranian Studies, Brill, Leiden, 2005.
21. Եւս շրջանակներում էքնիկ փորձաքննությունների նկատմամբ նախատեսված պարտավորվածություններն Ադրբեյջանի Հանրապետության կողմից չեն վավերացվում: Տես World Directory of Minorities and Indigenous People: Azerbaijan Overview. Status of ratification of major international and regional instruments relevant to minority and indigenous rights as of October 2007. On the Web at www.minorityrights.org.
22. Swietochowski, Tadeusz. Azerbaijan: perspectives from the crossroads. Central Asian Survey, 1999, pp. 421-423.
23. World Directory of Minorities and Indigenous People: Azerbaijan Overview. On the Web at www.minorityrights.org.
24. Ասորո իրավունքների տեսական դաշտում, հարկ է նշել, առանձին խնդրակային իրավունքների ճանաչումը ենթակա է փնտրանության: Տես, օրինակ, Donnelly J. Universal Human Rights in the Theory and Practice. Cornell University Press, 1996, pp. 109-124.
25. Տես՝ Second Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities, Strasbourg: COE, 10 January 2007. Doc.no. ACFC/SR/II (2007)001. On the Web at www.coe.int
26. Alternative Report on the Compliance of the Azerbaijan Republic with the Convention on Elimination of all forms of Racial Discrimination. International League for Human Rights, New York, 2005.
27. European Commission against Racism and Intolerance (ECRI). Second report on Azerbaijan, 15 December, 2006.
28. Report by the Commissioner for Human Rights, Mr. Thomas Hammerberg on his Visit to Azerbaijan, Chapter 4: Minorities, Strasbourg, 20 February 2008.
29. Տես՝ Popjanevski, Johanna. Minorities and the State in the South Caucasus: Assessing the Protection of National Minorities in Georgia and Azerbaijan. Silk Road Paper, 2006, p. 64.
30. World Directory of Minorities, Azerbaijan Overview: Ethnic Minority Protection. On the Web at www.minorityrights.org.
31. Second Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities, Strasbourg: COE, 10 January 2007. Doc.no. ACFC/SR/II (2007)001. On the Web at www.coe.int
32. European Commission against Racism and Intolerance (ECRI). Second report on Azerbaijan, 15 December, 2007.
33. Carothers, Thomas. The End of the Transition Paradigm. Journal of Democracy Volume 13, Number 1 January 2002.

Թուրք-ադրբեյջանական ռազմական համագործակցության միտումները Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի անվտանգության համատեքստում

Լևոն Դովետչյան

Հոդվածում շեշտադրումը կատարվում է Ադրբեյջանի հետ Թուրքիայի ռազմական հարաբերությունների զարգացման վերջին միտումներին, արդրեջանական բանակի բարեփոխումների գործընթացում Թուրքիայի դերակատարության և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների անվտանգության խնդիրներին առնչվող հարցերի վրա: Հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգության և կայունության խնդիրների առնչվող գործոնների մեջ առաջնային ազդեցություն և ձևաչափային բնույթ ունեն Թուրքիայի, Ադրբեյջանի և Վրաստանի միջև տարբեր էներգետիկ-հաղորդակցային ուղիների համագործակցության ընդլայնումը: Սակայն, ռազմական անվտանգության տեսակետից առավել կարևոր են նույն այդ երկրների միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման միտումները և Թուրքիայի դերակատարությունը այդ գործում: Ելնելով Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի անվտանգության առաջնահերթություններից առավել կարևորվում են Թուրքիայի և Ադրբեյջանի միջև ռազմա-քաղաքական համագործակցության վերջին զարգացումները, որոնք կարող են իրենց ազդեցությունն ունենալ տարածաշրջանի հետևյալես Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի անվտանգության վրա:

Ադրբեյջանի կառավարությունն ակտիվ քայլեր է ձեռնարկում երկրի զինված ուժերի ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղությամբ, ինչը նպատակ է հետապնդում դրանք ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ԱՏՕ-ում առկա չափորոշիչներին: Ադրբեյջանի ռազմական բարեփոխումներն իրականացվում են Հյուսիսատլանտյան դաշինքի ԱՄՆ-ի հետ համագործակցության Գործընկերության Գործողությունների Օրագրին (IPAP-Individual Partnership Action Plan-այսուհետ՝ ԱԳԳԾ) Ադրբեյջանի մասնակցության շրջանակներում: Մասամբ ավարտելով առաջին տասնամյակը՝ ներկայումս ընթացքի մեջ է ԱԳԳԾ երկրորդ փուլը: Նորմալ ընթացքի պայմաններում նախատեսված է ադրբեյջանական բանակի անբողջական վերափոխումները ԱՏՕ-ի չափանիշերին համապատասխան ավարտի հասցնել 2015 թ.: Ադրբեյջանական բանակի բարեփոխումների իրականացման գործում լուրջ դերակատարություն է փորձում ապահովել Թուրքիան: Ադրբեյջանական բանակի բարեփոխումների գործընթացում թուրքական զինվորական շրջանակները պետք է անմիջական դերակատարություն ունենան ադրբեյջանցի զինվորների կրթության, սպայական կազմի վերապատրաստման և բանակային կառուցվածքը ԱՏՕ-ի չափանիշերին վերափոխելու խնդրում: Թուրքիայի համար ադրբեյջանական բանակի բարեփոխումների ծրագրերը առաջին հերթին ելնում են սեփական ռազմավարական շահերի դիրքերից ձգտելով «եղբայրական երկրի» ռազմական համակարգում ապահովել իր անմիջական ազդեցությունը:

Դեռևս Ղարաբաղյան պատերազմի սկզբնական շրջանում, 1990 թ. հունվարին, ռուսական լրատվական գործակալությունները տեղեկացրեցին առաջին փաստերը՝ Թուրքիայի կողմից Նախիջևան զինատեսակների և սպառազինության փոխադրման վերաբերյալ: 1991-1992 թթ.

թուրքական կողմի իրականացրած գաղտնի օդային փոխադրումների արդյունքում, Նախիջևան են հասցվել մի քանի հազար իրենամիզ, մեծ քանակությամբ զինամթերք, ականանետեր և այլն: Թուրքական ադրբայ՝ ռների համաձայն՝ Թուրքիան նույնիսկ 30 մլն դոլարի չափով վարկ է հատկացրել Ադրբեջանին թուրքական տիպի զինամթերք ձեռք բերելու համար⁹: 1992 թ. հունիսին ղեկորայքի և սննդամթերքի անվան տակ Թուրքիայից Ադրբեջան է հասցվել շուրջ 5 հազար «Stinger» հրթիռներ, հրթիռակայաններ և ականանետեր:

Պաշտոնապես թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը բուժն զարգացում ապրեց 90-ական թվականների կեսերից: Երկու երկրների միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության խնդիրները կարգավորվում են հիմնականում 1996 թ. հուլիսի 10-ին Անկարայում ստորագրված «Ռազմական կրթության, տեխնիկական և գիտական համագործակցության» մասին պայմանագրով, 2001 թ. մարտին ստորագրված «Ադրբեջանի և Թուրքիայի կառավարությունների միջև փոխադրած ռազմական օգնության» մասին համաձայնագրով և «Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի միջև նյութական օգնության» վերաբերյալ արժանագրության⁵: Թուրքական կողմը քաղաքացիներն մեծ ներդրում է ունեցել ադրբեջանական բանակի կայացման և ամրապնդման գործում, ինչը դրսևորվել է ինչպես զինվորական կադրերի պատրաստման, ուսուցանման, այնպես էլ տարբեր տիպի սպասազինության, ռազմական տեխնիկայի և ֆինանսական օժանդակության տրամադրման ձևով: 2005 թ. Ադրբեջան կատարած այցի ընթացքում, Թուրքիայի պաշտպանության նախարար Վեչդի Գյոնուլը հանդիպումներից մեկի ժամանակ նշել է, որ Թուրքիայի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական օգնությունն ընդհանուր առմամբ կազմել է ավելի քան 170 մլն դոլար⁶: Նշված թիվը իրականում չի համապատասխանում իրականությանը, քանի որ թուրքական ռազմական օժանդակությունը ավելի մեծ գումարների է հասնում: Ադրբեջանի անկախությունից հետո Թուրքիայի կողմից ռազմական տեխնիկայի, ինչպես նաև ռազմական տարբեր օժանդակությունները զգալիորեն մեծ են եղել հատկապես Նախիջևանում, ինչը հաստատել է նաև ադրբեջանցի ռազմական փորձագետ Ուզեյրի Չաֆարովը⁷: Միայն 2001 թ., երկու երկրների միջև ստորագրված ռազմական կրթության, տեխնիկական և գիտական համագործակցության մասին պայմանագրի շրջանակում, Թուրքիայի ՁՈՒ-ը Նախիջևանի 5-րդ բանակային կորպուսի հրամանատարությանն է նվիրել 80 ռազմական փոխադրամիջոց և 4 շինարարական մեքենա: Դանձնման արարողության ժամանակ Թուրքիայի ՁՈՒ 21-ին մեխանիկական հետևակային բրիգադի հրամանատար Նեքմեթին Բաբուլը խիստ կարևորել է Նախիջևանի աշխարհաքաղաքական դիրքը և դրանից ելնելով նաև մեքենայացված մարտական միավորումների անհրաժեշտությունը Նախիջևանում⁸:

1990-ական թթ. սկզբին, դեռևս չունենալով ռազմական համագործակցության վերաբերյալ երկկողմ պայմանագրեր, Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Թուրքիան զգալի ռազմական աջակցություն ցույց տվեց Ադրբեջանին փորձելով ապահովել այդ երկրի լիակատար հաղթանակը: Խայտելով միջազգային կոնվենցիաներն ու ճորձերը, Թուրքիան, թեև ոչ անմիջական, սակայն Ադրբեջանին տրամադրված լայնածա-

վալ ռազմական օժանդակությամբ փորձում էր ազդել պատերազմի վերջնական ելքի վրա⁹: Ադրբեջանին ռազմա-տեխնիկական օժանդակությանը զուգահեռ թուրքական զինվորական շրջանակները սկսեցին մեխանիզմներ մշակել ադրբեջանական բանակի կազմավորմանն աջակցելու համար: Թուրքիայում մշակվեց համապատասխան ծրագիր՝ մինչև 1995 թ. ադրբեջանական բանակի արդիականացման նպատակով, հատկապես շուրջ 300 մլն դոլար: Նախատեսվում էր թուրքական բանակի պահեստային սպաների կազմից Ադրբեջան գործուղել շուրջ 3 հազար զինվորական մասնագետների և հրահանգիչների¹⁰:

Այն, որ Ադրբեջանը գտնվում է Թուրքիայի աշխարհաքաղաքական գերակայությունների տիրույթում, հետևում է Թուրքիայի միջուկում ուժերի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար Իլթեր Բաշբուրդի 2005 թ. գարնանը Ադրբեջան կատարած այցի ժամանակ ինչեցրած այն հայտարարությունից, որ «Ադրբեջանը Թուրքիայի համար եզակի է մոլոր առումներով և եզակի է նաև ռազմական համագործակցությունը»: Թուրք բարձրաստիճան զինվորականը Ադրբեջանի գործընկերներին վստահեցրել է, որ Թուրքիան ադրբեջանական բանակի վերակազմավորման գործում ապահովելու է լուրջ աջակցություն¹¹:

Վերջին շրջանում ակտիվացան երկու երկրների միջև բարձրաստիճան զինվորականների փոխայցելություններն ու համաներդ միջոցառումները: Արևելքում է ռազմական ոլորտում թուրք-ադրբեջանական համագործակցության աշխուժացում, ինչը հիմնականում ուղղված է ԱԳԳԾ շրջանակներում ադրբեջանական բանակի բարեփոխումների Թուրքիայի կողմից աջակցության տրամադրմանը: Ակտիվացել են թուրք բարձրաստիճան զինվորականների այցելությունները Ադրբեջան տեղում զմահատելու և քննարկելու բարեփոխումների հիմնական ուղեգծերն ու ոլորտները: 2007 թ. մարտի սկզբին Ադրբեջան այցելում Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի երկրորդ պետ Էրզին Ասլազունը ադրբեջանցի գործընկերներին հետ քննարկել է երկու երկրների միջև ռազմական համագործակցության խնդիրներն ու անելիքները հավաստիացնելով, որ Թուրքիան իր ակտիվ ներդրումը կապահովի ադրբեջանական բանակի վերակազմավորման գործում: Թուրք բարձրաստիճան զինվորականը երկու երկրների ռազմական համագործակցության մեջ առանցքային է համարել հատկապես զինվորական կադրերի վերապատրաստման և կրթության հարցերը¹²: Այցի շրջանակներում Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի միջև համագործակցության զարգացման վերաբերյալ փաստաթուղթ է ստորագրվել¹³:

Նույն ժամանակահատվածում Ադրբեջան այցելում Թուրքիայի ՁՈՒ ցամաքային զորքերի հրամանատար Իլթեր Բաշբուրդը, տեղում ծանոթանալով ադրբեջանական բանակի զարգացման և բարեփոխումների ընթացքին, ԱԳԳԾ շրջանակներում ԱՍՏՈ-Ադրբեջան համագործակցության խնդիրներին վերաբերող հաստատել է Թուրքիայի կողմից Ադրբեջանի ՁՈՒ բարեփոխումների գործում ցուցաբերվելիք աջակցության շարունակականությունը¹⁴:

Բանակի բարեփոխումների այդ գործընթացն արագացնելու և առավել սահուն իրականացնելու նպատակով նախատեսվում է ադրբեջանական ՁՈՒ և պաշտպանության նախարարության համակարգում, մի խումբ թուրք բարձրաստիճան զինվորականների նշանակել որպես խորհրդակցություն:

Աղբրեջանական մանուկի համայնքն Աղբրեջանում պատրաստվում են պաշտպանության նախարարի օգնական Նշանակել Թուրքիայի ՁՈՒ մի գեներալի, իսկ նրան և նրա հետ Թուրքիայից եկած խմբին լայն իրավասություններ են աշխատելու թույլտվություն տալ: Ենթադրվում է, որ մինչև 2011 թ-ը տեվելիք այդ աշխատանքներում ծառայություն կատարեն Թուրքիայի զինված ուժերի ևս մի խումբ գեներալներ¹⁵: Բացի այդ, նախատեսվում է տեղեղել թուրք-աղբրեջանական համատեղ ռազմական հանձնաժողով, որն էլ իրավասություն կունենա ծրագրել և մշակել աղբրեջանական բանակի բարեփոխումների գործընթացը այն համապատասխանեցնելով ՆԱՏՕ-ական չափանիշերին: Աղբրեջանի զինվորական շրջանակները իրենց թուրք գործընկերներից հիմնականում աջակցություն են սպասում ՆԱՏՕ-ի չափանիշերին համապատասխան ռազմական ուսուցման, ռազմական գործողություններում տեխնոլոգիաների կիրառման և ռազմական ոլորտում նորամուտայնությունների ներդրում հարցերում¹⁶: Հարկ է նշել, որ հենց թուրք զինվորականների գործուն աջակցությամբ կատարվեց Բաքվի սովորական ուսումնարանի վերակազմավորումն ու դրա համապատասխանեցումը ՆԱՏՕ-ական չափանիշերին: Թուրքիայի բարձրագույն ռազմական հաստատություններում, զինվորական ուսումնարաններում, տարբեր հատուկ դասընթացներում ուսումնառություն են անցնել աղբրեջանական ՁՈՒ 1137 ներկայացուցիչ, 2006 թ. ընթացքում 121 զինվորական շարունակել են իրենց կրթությունը: Աղբրեջանի սպաները ամեն տարի մասնակցում են Թուրքիայում անցկացվող «Mechmetik», «Deniz Aslan», «Karadeniz Ortaklik» անուն-ները կրող զինավորությունների: Թուրքական կողմը օժանդակություն է տրամադրում նաև աղբրեջանական խաղաղարար ուժերին, որոնք թուրքական զորակազմում ծառայություն են կատարում Կոստոլյում և Աֆղանստանում¹⁷: Ներկայումս Աղբրեջանի ներքին գործերի (այսուհետ՝ ՆՁ) հրամանատարին կից ծառայում է թուրք բարձրաստիճան զինվորական Ավնի Յիլզըզը, որը համակարգային և խորհրդատվական ծառայություն է իրականացնում: Համաձայն 1997 թ. աղբրեջանական ՆՁ և թուրքական ժամդարմերիայի միջև ստորագրված արձանագրության ամեն վեց ամիսը մեկ Աղբրեջանի ՆՁ հրամանատարի խորհրդական է նշանակվում թուրք զինվորական, որը համակարգում է ՆԱՏՕ-ական չափանիշերին համապատասխան ուսումնական կատարելագործման գործընթացը¹⁸: Դեռևս 2006 թ. դեկտեմբերին Բաքու այցելեց Թուրքիայի ժամդարմերիայի հրամանատար Ըշքը Քոչաները, որի այցը կապված էր աղբրեջանական ՆՁ զինծառայողների կադրային վերապատրաստման և ուսումնառության կազմակերպման խնդիրների հետ: Աղբրեջանի ՆՁ սպաները այդուհետ հնարավորություն ստացան մասնակցելու Թուրքիայի հատուկ նշանակության զորամիավորությունների համար կազմակերպվող ուսումնա-գործնական նախագծերին: 1997 թ. հոկտեմբերի 31-ին Թուրքիայի ժամդարմերիայի հրամանատարության և Աղբրեջանի ՆՁ հրամանա-տարության միջև ստորագրված հատուկ արձանագրությամբ աղբրեջանի զինծառայողները մասնակցում են Թուրքիայում կազմակերպվող տարբեր կուրսերին և կրթության ստանում ռազմաուսումնական հաստատություններում¹⁹: Ամենայն հավանականությամբ թուրք զինվորական շրջանակներն իրենց դերակատարությունը կունենան նաև առաջիկայում ընդունվելիք Աղբրեջանի պաշտպանական հայեցակարգի հիմնական ռազմավարական ուղեգծերի սահմանման մեջ:

Ի դեպ, Աղբրեջանում պատրաստվող և դեռևս մշակման փուլում գտնվող պաշտպանական հայեցակարգը նախատեսում է տոտալ (համընդհանուր) պաշտպանության սկզբունքը²⁰:

Աղբրեջանական բանակում թուրք զինվորական խորհրդականների գործունեությունը ինքնին նորություն չէ: Դեռևս 1992 թ., Դարաբաղյան պատերազմի ժամանակ, տասնյակ թուրք գեներալներ և բարձրաստիճան զինվորականներ անմիջական մասնակցություն են ունեցել ռազմական գործողությունների մշակման և աղբրեջանի զինվորների վարժեցման գործում²¹: Երկու երկրները համագործակցում են նաև հետախուզական ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակման ոլորտում: 2007 թ. սեպտեմբերին Բաքու այցելեց թուրքական ռազմական պատվիրակություն Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի հետախուզական վարչության պետ, գեներալ Մյունիր Էրթենի գլխավորությամբ, նրանք քննարկվեցին ռազմական հետախուզության ոլորտում երկկողմ համագործակցության խնդիրները²²: Մեկ ամիս անց այդ երկիր այցելեց նաև Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (Milli Istihbarat Teşkilatı) բարտուղար Էմին Թաները, որն էլ իր աղբրեջանի գործընկերոջ հետ քննարկեց երկու երկրների հատուկ ծառայությունների միջև առկա հարաբերությունների ներկա մակարդակը, հետագա համագործակցության զարգացմանը և մի շարք ոլորտներում համատեղ գործողություններ վերաբերող հարցեր²³: Գրեթե նույն ժամանակահատվածում Աղբրեջան այցելեց նաև Թուրքիայի Ներքին գործերի նախարարության ավիաներծ պայքանության հրամանատար Ջան Էրեմողլուի գլխավորած զինվորական պատվիրակությունը: Այցի շրջանակներում քննարկման են դրվել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերը, հետագա ռազմական համագործակցության խնդիրները: Երկու երկրների համապատասխան կառույցների մեջ ստորագրվեց երկկողմ համագործակցության մասին արձանագրություն²⁴: 2008 թ. մայիսի սկզբին պաշտոնական այցով Այրդղան Բարաօղլուն մի շարք հանդիպումներ անցկացրեց Աղբրեջանի բարձրագույն քաղաքական և զինվորական իշխանությունների հետ, որի իմնական նպատակը երկկողմ ռազմական համագործակցության զարգացման հեռանկարների մշակումն էր: Աղբրեջանի պաշտպանության նախարար Սաֆար Սիբիև, բարձր գնահատելով աղբրեջանական բանակի զարգացման և անրապնդման գործում Թուրքիայի ռազմական աջակցությունը՝ էլ ավելի կարևորեց երկկողմ ռազմական համագործակցության անհրաժեշտությունը, նշելով, որ «Աղբրեջանին և Թուրքիային միավորող բազմաթիվ գործոններ կան, այդ թվում Հայաստանի կողմից «գրավված» արաբեջանական տարածքների վերադարձման անհրաժեշտությունը»: Իր հերթին էլ թուրք գեներալը նշեց, որ Թուրքիան միշտ հավատարմ է մնալու «Մեկ ազգ-երկու պետություն» սկզբունքին, դրանից բխող բոլոր հետևություններով²⁵: Երկկողմ ռազմական հարաբերությունների զարգացման նպատակով նախատեսվում է ակտիվացնել նաև համագործակցությունը երկու երկրների ռազմաարդյունաբերական համալիրների միջև: Թուրքիայի իշխանություններն ու հատկապես զինվորական շրջանակները քայլեր են ձեռնարկում Աղբրեջանի հետ համատեղ ռազմաարդյունաբերական ոլորտում համագործակցության ծավալման ուղղությամբ: Բաքվում Թուրքիայի դեսպան Թուրան Մոդալը հայտարարել է, որ իր

երկիրը մասնակցությունն է ունենալու Ադրբեջանի ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման գործում՝ նշելով, որ ծրագրվում է ռազմական մեքենաշինության ոլորտում համատեղ նախագծերի մշակում, քանի որ առկա են բոլոր մեխանիզմները Թուրքիայի եւ Ադրբեջանի միջև ռազմական դաշինք ձևավորելու համար: Թուրք դեսպանը նշել է, որ անհրաժեշտության դեպքում Թուրքիան ըստ արժանվույն կգնահատի ստեղծված իրավիճակն ու անհրաժեշտ քայլեր կձեռնարկի այդ ոլորտում²⁵: Ադրբեջանական մամուլի համաձայն մոտ ժամանակներս թուրքական «Aselsan» եւ «Roketsan» ռազմարդյունաբերական ընկերությունները²⁷ համագործակցության կոնկրետ ծրագրեր կառաջարկեն Ադրբեջանի նորաստեղծ պաշտպանական արդյունաբերության նախարարությանը՝ ռազմական տեխնոլոգիաներ վաճառելու փոխարեն համատեղ արտադրության առաջարկներ ներկայացնելով Ադրբեջանին²⁸: Դեռևս 1996-1997 թթ. Aselsan ընկերությունը Ադրբեջանի բանակին տրամադրեց զորահրամանատարային կապի միջոցներ, իսկ 1998 թ. ավարտեց շուրջ 20 մլն դոլար արժողությամբ կապի միջոցների վերանորոգման համար մասնագետների վերապատրաստումը: Արդեն, ամենայն հավանականությամբ, դրանով հնարավորություն էր ընձեռնվում գրեթե լիովին անցնել արևմտյան տիպի կապի միջոցների ամբողջական օգտագործմանը²⁹: 2008 թ. մայիսի 24-ին Aselsan ընկերությունը Ադրբեջանի պաշտպանության նախարարության հետ ստորագրեց շուրջ 2.3 մլն դոլար արժողությամբ պայմանագիր՝ ադրբեջանական բանակին ադրիական միջոցների և տարբեր սքետ-տրանսների ու բաղադրամասերի համընթաց վերաբերյալ, որն ամբողջությամբ բանակում կներդրվի 2009 թ.³⁰: Վերջին շրջանում ակտիվացել է համախառն են դարձել երկու երկրների ռազմարդյունաբերական գերատեսչությունների միջև շփումներն ու փոխադարձ այցելությունները: Թուրքական կողմը շահագործություն է հայտնել ադրբեջանական ռազմական գերատեսչության ենթակայության տակ գտնվող տանկերի վերանորոգման ֆարրիկայի արդիականացման աշխատանքների վերաբերյալ, ինչն իրականացվելու է երկու երկրների միջև ստորագրված 2 համաձայնագրերի ծրագրերի շրջանակներում: Ծրագրերի իրականացման խնդիրների հետ կապված՝ թուրքական ռազմական արդյունաբերության քարտուղարության ներկայացուցիչները հանդիպումներ են անցկացրել ադրբեջանցի գործընկերների հետ Բաքուում այս տարվա մայիսին: 2008 թ. հունիսին Ադրբեջան այցելեց Թուրքիայի ռազմական արդյունաբերության պատվիրակությունը՝ պաշտպանական արդյունաբերության ղեկավար Մուրադ Բայարի գլխավորությամբ, որի ընթացքում հանդիպումներ անցկացվեցին Ադրբեջանի ռազմական գերատեսչության և ռազմարդյունաբերության նախարարության հետ՝ ադրբեջանական ռազմական արդյունաբերության հնարավորությունները ճշգրտելու համար, ինչպես նաև հետագա համագործակցության զարգացման և ռազմարդյունաբերական ծրագրերի շուրջ: Ս. Բայարը նշել է, որ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության ցանկությամբ՝ Ադրբեջանը հետագայում հնարավորություն կունենա բարձրորակ, ևԱՏՕ-ի չափանիշերին համապատասխան, զինատեսակներ և սպառազինություն արտադրել: Թուրքական պատվիրակության կազմում ընդգրկված են եղել թուրքական ռազմարդյունաբերական Aselsan, Roketsan, Havelsan, FNSS Savunma Sistemleri և այլ ընկերությունների ներկայացուցիչները, որոնք շահագործություն

են հայտնել ադրբեջանական ռազմարդյունաբերական ծրագրերին մասնակցություն ունենալու խնդրում³¹: Պատվիրակության կազմում գտնվող Yonca-Onuk թուրքական ընկերությունը Ադրբեջանին է առաջարկել սեփական արտադրության ռազմական նավեր, մոտորանավակներ և տարբեր սարքավորումներ: Այդ ընկերությունը նախատեսում է նաև իրականացնել մի շարք ծրագրեր՝ կապված Ադրբեջանում նավաշինական գործարանի կառուցման հետ³²: Թուրքական կողմը ադրբեջանական ռազմական արդյունաբերության ղեկավարությանն է առաջարկել մասնակցել թուրքական ՁՈՒ համար նոր տանկերի արտադրությանն ու թուրքական բանակի T-72 տանկերի արդիականացման ծրագրերին³³: Մասնավորապես թուրքական Aselsan ընկերությունն առաջարկել է տանկերի համար նոր նախագծվող կրակային համակարգերի և նորագույն այլ սարքերի, ինչպես նաև բանակի համար հատուկ կապի միջոցների համատեղ արտադրություն հիմնել: Ադրբեջանում արդեն գործում է այդ ընկերության ներկայացուցությունը: Համատեղ ռազմական արտադրության ոլորտում հետաքրքրություն է դրսևորում նաև թուրքական Roketsan ընկերությունը, որը րանակցություններ է վարում մի շարք նախագծերի գործարկման նպատակով³⁴: Թուրքական պաշտպանական արդյունաբերության ղեկավարը հաստատել է այն փաստը, որ Ադրբեջանի հետ բանակցություններ են ընթանում այդ երկրին թուրքական արտադրության հրթիռային համակարգերի վաճառքի շուրջ, որոնք սկսվել էին դեռևս 2005 թ.³⁵: Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է թուրքական արտադրության և թուրքական բանակի սպառազինության մեջ գտնվող Aselsan ընկերության արտադրության ATILGAN, ZIPKIN Stinger ցամաքային շարժական և BORA հրթիռային համակարգերի մասին:

2007 թ. մայիսին, ադրբեջանական զինվորական պատվիրակությունը՝ պաշտպանության նախարար Մաֆար Աբլիևի և ռազմարդյունաբերության նախարար Յավեր Ջամալովի գլխավորությամբ, մասնակցեցին Անկարայում անցկացված 8-րդ միջազգային ռազմարդյունաբերական ցուցահանդեսին, որը կարելի է ասել առաջին գործնական քայլն էր թուրքական ռազմական արդյունաբերական արտադրանքին ծանոթանալու և համատեղ ծրագրեր մշակելու ուղղությամբ³⁶: Դեռևս 2005 թ. ղեկտնմանից, Ադրբեջանի նախագահի հրամանագրով ստեղծվեց Ռազմարդյունաբերության նախարարություն, որը պետք է ադրբեջանական բանակի համար անհրաժեշտ սպառազինություն և զինտեխնիկա արտադրի: Չնայած արդեն գործող նախարարության գոյությանը և հատկացվող մեծ գումարներին, այնուամենայնիվ այն դեռևս կայացման լուրջ գործընթաց պետք է անցնի: 2007 թ. ռազմական բյուջեով ռազմարդյունաբերության նախարարությանը հատկացվել է շուրջ 114 մլն դոլար: Նախատեսվում է, որ այդ հատկացված գումարները նպատակ ունեն վերականգնել արդեն ռազմարդյունաբերության նախարարության ենթակայության տակ գտնվող մի շարք գործարանների գործունեությունը, ինչպես օրինակ «Ավիաարտգեստ», «Ուլուգ», «Ազոն» և այլն: Արդեն իսկ բանակցություններ են վարվում Թուրքիայի, Ուկրաինայի, Բելառուսի, Ռուսաստանի, Իսրայելի, Ռումինիայի և Պակիստանի համապատասխան գերատեսչությունների հետ՝ համատեղ կոնկրետ ծրագրերի իրագործման ուղղությամբ: Ադրբեջանական կողմը, հատուկ ուշադրություն է դարձնում հատկապես Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հետ ամուր

համագործակցությանը, ինչի համար շահագրգռված է նաև թուրքական կողմը: Ուզմարդյունաբերության ոլորտում համագործակցության ակտիվացումն է նկատվում նաև Պակիստանի հետ, որի հետ Թուրքիան ունի ռազմատեխնիկական համագործակցության ամուր բազա³⁷: Ադրբեջանի նորաստեղծ ռազմարդյունաբերական համալիրի կայացման և զարգացման գործում իր լուրջ դերակատարությունը կունենա Թուրքիան, որն այդին հաջողություններ է գրանցել այդ ոլորտում: Բացի այդ, թուրքական կողմի աջակցությամբ Ադրբեջանի նորաստեղծ զերատեսչությունը կարող է համապատասխան քայլեր ձեռնարկել հատկապես իսրայելական և պակիստանյան համապատասխան կառույցների հետ ռազմատեխնիկական գործարքների հաստատման ուղղությամբ: Այսպիսով, Թուրքիան փորձում է ռազմական համագործակցության միջոցով լուրջ դերակատարություն տանձնել ադրբեջանական ուժային համակարգում անրակցելով իր ռազմաքաղաքական ազդեցության լծակներն ինչպես այդ երկրում, այնպես էլ տարածաշրջանում, եթե հաշվի առնենք նաև Վրաստանի հետ նրա ակտիվ ռազմատեխնիկական համագործակցության զարգացումը: Ի դեպ, բավականին ինտենսիվ են զարգանում այդ երկու երկրների միջև ռազմական փոխգործակցության տեմպերը: Ակտիվացել են Թուրքիայի ռազմական ոլորտի ներկայացուցիչների այցելությունները Վրաստան: Թուրքական կողմը տարբեր պայմանագրերի ու ծրագրերի շրջանակներում վրացական բանակին է տրամադրում տարբեր չափի դրամաշնորհներ, ինչպես նաև զինտեխնիկա, հանդերձանք և սպառազինության տեսակներ: Չի բացառվում, որ թուրքական սպառազինությունն ու տեխնիկայի որոշ տեսակներ Ադրբեջանին փոխանցվեն Վրաստանի տարածքով: Ուստի, թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության զարգացումն ու դաշինքի ձևավորումը, հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության չկարգավորված լինելու պայմաններում, լուրջ խնդիր է ներկայացնում տարածաշրջանում ուժային հավասարակշռության խախտման, ինչպես նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության համար: Ինչ վերաբերում է Թուրքիայի ռազմավարությանն ու վարած քաղաքականությանը Հարավային Կովկասում, ապա նպատակ ունենալով դառնալ տարածաշրջանում որոշում կայացնող երկիր այն առաջին հերթին պետք է հենվի Ադրբեջանի վրա, որի հետ եթնիկական ընդհանրություն ունենալուց բացի ունի նաև ընդհանուր ռազմաքաղաքական շահեր: Հետևաբար Թուրքիան ձգտում է տարածաշրջանում ունենալ ռազմականապես և տնտեսապես հզոր Ադրբեջան, իր ազդեցության տակ գտնվող Վրաստան և, իհարկե, բոլոր առումներով թույլ Հայաստան: Ադրբեջանի նկատմամբ Թուրքիայի ազդեցության մեծացումը պայմանավորված է նաև Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում թյուրքալեզու հանրապետությունների հետ Թուրքիայի հեռու զննցող քաղաքական նպատակներով: Ինչպես բազմաթիվ թուրք զինվորական և քաղաքական գործիչներ են բազմիցս հայտարարել, այնպես էլ նոյեմբերի 6-8-ը Ադրբեջան կատարած այցի ժամանակ, Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը հայտարարեց, որ Ադրբեջանի հետ տարբեր ոլորտներում լուրջ գործակցությունը նոր հեռանկար է բացում եվրասիական քաղաքականության համատեքստում նշելով, որ «Թուրքիան և Ադրբեջանը եվրասիական աշխարհաքաղաքականության ողնաշարն են կրթվում»³⁸: Հարկ է նշել, որ Եվրասիայի աշխարհագրության մեջ թուրք զինվորական և քաղաքական շրջանակները ներառում են հիմնականում Անդրկովկասի

Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրները: Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները ռազմավարական իմաստով զուտ երրկողմ հարաբերություններ չեն, դրանց զարգացումը պայմանավորում է Թուրքիայի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական նկրտումների հետագա ողջ համապատկերը: Դեռ այս համատեքստում կարելի է դիտարկել նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն ու դրա նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքը: Լեռնային Ղարաբաղի խնդիրը ինչպես 90-ական թթ., այնպես էլ ներկայումս դիտարկվում է որպես խոչընդոտ Թուրքիայի հետագա աշխարհաքաղաքական և աշխարհամոտնեսական ծրագրերի իրականացման համար, ինչը կարող է լուրջ մարտահրավեր ներկայացնել Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության տեսակետից: Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության զարգացմամբ, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ նոր ռազմական գործողություններ սկսելու պարտազան-ում Թուրքիան կարող է ունենալ իր զգալի ազդեցությունը չմնալով ռազմական գործողությունների թատերաբեմից այն կողմ:

Տարածաշրջանային ռազմավարության համատեքստում Թուրքիան, բնական է, Ադրբեջանի հետ միասին ձգտելու է դուրս բողնել Հայաստանին ոչ միայն տարածաշրջանային համատեղ նախագծերից, այլև ընդհանրապես ամեն տիպի ինտեգրացիոն ծրագրերից, ինչն ամբողջապես համահունչ է Թուրքիայի «փոքր եղբայր» Ադրբեջանի շահերին եւ ձգտումներին փորձելով համատեղ կանխորոշել Լեռնային Ղարաբաղի հետագա ճակատագիրը: Տարածաշրջանային ռազմավարական նախագծերում, հատկապես Թուրքիայի ցանքերով հնարավոր եղավ ընդգրկել Վրաստանին, ինչին մեծ խթան հանդիսացան վրաց-ռուսական լարված հարաբերությունները, ինչպես նաև այդ երկրի ԱՏՕ-ին անդամակցելու ձգտումները:

Տարածաշրջանային անվտանգության և կայունության հեռանկարը հանգում է նաև նոր աշխարհաքաղաքական զարգացումների, ինչպես նաև անվտանգության տարածաշրջանային հանակարգերի վերածննդին:

Տարածաշրջանում ձևավորվում է անվտանգության 2 համակարգ, ինչը չի կարող նպաստել համընդհանուր անվտանգության կայացմանը: Հարավային Կովկասի հանրապետություններում, սեփական ազգային անվտանգության պատկերացումների լուրջ համակարգային տարբերություն կա: Նախ Թուրքիայի գլխավորությամբ Ադրբեջանը և Վրաստանը իրենց անվտանգության ապահովման տրամաբանությունը կատարում են ԱՏՕ-ի հետ, իսկ այդ պարագայում Թուրքիան հանդես է գալիս որպես միջնորդ և ազդեցիկ դերակատար: Պատասխան չէ, որ 2005 թ. ընդունված Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգում Թուրքիան, ԱՄՆ-ից և Ուկրաինայից հետո, նշված է որպես երրորդ ռազմավարական դաշնակից: Իսկ Հայաստանը, իր անվտանգության ձևաչափը սահմանել է Հավաքական անվտանգության պայմանագրով հայ-ռուսական ռազմավարական համագործակցության շրջանակում: Ուստի տարածաշրջանային անվտանգության համապատկերում խնդիրն էլ ավելի է բարդանում անվտանգության 2 համակարգերի ձևավորման պարագայում չխտելով արդեն թուրք-ադրբեջանական երկկողմ ռազմաքաղաքական շահերի ու մտտեցումների մասին:

Այժմ համառոտ անդրադառնալով տարածաշրջանային անվտանգության և կայունության համատեքստում Թուրքիայի գործունի: Ներկայիս Թուրքիայի պաշտոնական պաշտպանական քաղաքականության հոչա-

կամ հիմնական նպատակներն են դառնալ տարածաշրջանային տերություն և տարածաշրջանային հավասարակշռության գործոն, տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում ներդրում ունեցող երկիր, տարբեր պետությունների հետ համագործակցության ու մերձեցմանն ուղղված նախաձեռնությունների առաջըջում և իրականացում: Ազգային անվտանգության բաղաբաղկանության նպատակներն են տարածաշրջանում լարվածության թուլացմանը նպաստելը, հակամարտությունների խաղաղ կարգավորմանն աջակցելը, ժողովրդավարության և օրենքի նկատմամբ հարգանքի ընդլայնումը, անվտանգության և կայուն իրավիճակի հաստատումը:

Թուրքիայի պաշտոնական պաշտպանական քաղաքականության հռչակած տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում ներդրում ունեցող երկիր հանդիսանալու, տարբեր պետությունների հետ համագործակցությանն ու մերձեցմանն ուղղված նախաձեռնությունների առաջըջման և իրականացման վերաբերյալ դրույթները, իրականում չեն համապատասխանում Թուրքիայի վարած քաղաքական ուղեգծին, ինչը վկայում է այդ երկրի ոչ կառուցողական ու նույնիսկ ագրեսիվ նկրտումների մասին: Մինչև այժմ հայ-թուրքական սահմանի փակ լինելու հանգամանակ և դրա նկատմամբ Թուրքիայի ոչ կառուցողական դիրքը, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանում թուրքական պետության ակտիվ նախաձեռնությամբ ու գործում օժանդակությամբ իր հարեան Չայաստանի մեկուսացմանն ուղղված ծրագրերի իրականացումը դրա վրա վկայություն են:

Հարավկովկասյան տարածաշրջանում պաշտոնական Անկարայի հետևմտած քաղաքականության ագրեսիվ կողմերը բացահայտվեցին հատկապես դարաբաղյան պատերազմի ընթացքում, երբ Թուրքիան, քեհ ոչ անմիջականորեն, ներգրավվեց հակամարտության մեջ՝ Ադրբեջանին տրամադրելով զգալի ռազմական օժանդակություն, նպաստելով հակամարտության խորացմանն ու արագացմանը հօգուտ Ադրբեջանի ռազմական հաղթանակի: Մինչև այժմ Թուրքիան շարունակում է տարածաշրջանային խաղաղության ու կայունության ամրապնդման դեմ ուղղված իր քաղաքական գիծը ընդդեմ Չայաստանի ձևավորելով թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինք և տարբեր տիպի ռազմական օժանդակություն տրամադրելով Ադրբեջանին: Չնայած ներկա աշխարհաքաղաքական պայմաններում խիստ ամհավանական են Թուրքիայի կողմից Չայաստանի դեմ ռազմական գործողությունները, այնուամենայնիվ թուրքական պլաններն ու որոշակի նպատակները, այդ թվում ռազմական ուժի կիրառումը, իրականացվել և դեռ կարող են իրականացվել Ադրբեջանի միջոցով: Լինելով անկանխատեսելի և ներքին հակաությունների տրամաբանությամբ երկիր, Թուրքիան կարող է լուրջ սպառնալիք ներկայացնել Չայաստանի անվտանգությանը: Ինչպես ստակ ամրագրված է 2007 թ. ընդունված Չայաստանի Ազգային անվտանգության ռազմավարության մեջ՝ «Չայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքներն են հինգու Ադրբեջանի Հանրապետության կողմից: Թեև առկա են այդպիսի զարգացումը կանխող բազմաթիվ գործոններ, այնուամենայնիվ ամենաարժեքավոր մակարդակով հնչող բացահայտ ռազմաշունչ հայտարարությունները հիմք են տալիս դրանք համարելու անմիջական սպառնալիքներ: Այդպիսի զարգացման պարագայում Թուրքիայի Հանրապետու-

թյունը, լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է նման սպառնալիք ստեղծել: Չայաստանի Հանրապետությունը, հենվելով միջազգային իրավունքի համբախայտ նորմերի վրա, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շրջափակումը դիտարկում է որպես իր դեմ ուժի կիրառում: Չայաստանի Հանրապետության դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիք է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատեքստ քաղաքականությունը, այն է՝ այդ հիմնախնդիրը լուծել Չայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու միջոցով: Հայ-թուրքական հարաբերությունների չկարգավորված ընկյթը, մասնավորապես՝ փակ սահմանը, Չայաստանի ազգային անվտանգության համար ստեղծում է սպառնալիքներ և խտրվողուում Չայաստանի կայուն զարգացման գործընթացին: Ուստի այդ հարաբերությունների չկարգավորվածությունն իր անմիջական բացասական ազդեցություն է ունենում նաև տարածաշրջանում կայունության ամրապնդման, տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա:

1. Khazri Bakinsky and Mina Muradova, Azerbaijan pursues NATO integration, <http://www.eurasianet.org>, 16.03.2007. ԱԳԳ պարզ Ադրբեջանը ԱՏՕ-ի դեկավորությանն է ներկայացրել դեռևս 2004 թ., որից հետո սկսվեցին քննարկումներն ու նախապատրաստական աշխատանքները: 2005 թ. օգոստոսից գործնական քայլեր են ձեռնարկվում, որոնք նախատեսված են դաշինքի հետ ԱԳԳ պլանով: «Նաչապանության դրոշմում նախատեսվում է պաշտպանական հայեցակարգի և նմանատիպ այլ փաստաթղթերի մշակում և հաստատում, գինդրական կրթության համապատասխանեցումն ԱՏՕ-ի չափանիշին, բախանիցի ռազմական բյուջեի պլանավորման նպատակով հատուկ կադրերի պատրաստում և փաստաթղթերի ընդունում, մոբիլ բանակային միավորումների հիմնում, ՁՈՒ «Գործընկերություն հանուն խաղաղության» կրթական կենտրոնի ընդլայնում, ռազմածովային ուժերի նավերի և ռազմական օդակայանների արդիականացում: Украина НАТО сотрудничает, Азербайджанские Вооруженные силы готовы отчитаться по плану IPAP, http://www.vpk-news.ru/article.asp?pr_sign=archive.2006.136.articles.chronicle_01
2. ԱԳԳ երկրորդ փուլը հիմնականում նախատեսում է բարեփոխումներ Ադրբեջանի պաշտպանական գերատեսչության կենտրոնական ապարատում, ինչի արդյունքում ՁՈՒ Գլխավոր շտաբն առանձնացվելու է պաշտպանության նախարարությունից, իսկ նախարարությունը դառնալու է մեծամասամբ քաղաքացիական կառույց: <http://www.azp.az>, 25.06.2008
3. Ганк Леонович, Турция и Карабахский конфликт, Ереван 2006, стр. 107-111
4. Հավոր Չաքրյան, Ղարաբաղյան հիմնախնդիրը հայ-թուրքական փոխհարաբերությունների համատեքստում, Երևան 1998, էջ 24:
5. Nazim CAFERSOY, Azerbaijan - Türkiye ilişkileri (1993 - 2000), <http://www.turksam.org/tr>
6. Сергей Минасян, Вооруженные силы Азербайджана: оценка военного потенциала и перспективы развития, <http://www.nogavank.am>
7. Турецкие военные помогут Азербайджану реорганизовать бывшее суворовское училище в Баку в современный военный лицей НАТО, http://www.mia-uz.ru/news/full/article/120.html?no_cache=1&cHash=52e6e62820
8. TURKEY DONATES 80 MILITARY VEHICLES TO AZERBAIJAN, <http://www.byeon.gov.tr/YAYINLARIMIZ/CHR/ING2001/09/01x09x17.HTM>
9. Ղարաբաղյան պատերազմի ընթացքում Ադրբեջանին Թուրքիայի կողմից տրամադրված ռազմական օժանդակության մասին ավելի մանրամասն տե՛ս Գանկ Լեռնայի, Турция и Карабахский конфликт, Ереван 2006.
10. Նույն տեղում, էջ 121.
11. Turkish Daily News, 18.05.2005

12. <http://www.regnum.ru>, 01.03.2007
13. Azerbaijani Defense Ministry and Turkish Armed Forces General Staff sign cooperation document, http://www.turkses.com/index.php?option=com_content&task=view&id=1835&Itemid=36
14. <http://www.regnum.ru>, 07.03.2007
15. <http://www.zerkalo.az>, 07.01.2007
16. Turkish Daily News, 03.04.2007
17. "РЕФОРМЫ В АРМИИ - ПРОЦЕСС ДОЛГОВРЕМЕННЫЙ", <http://old.zerkalo.az>
18. <http://www.regnum.ru>, 01.08.2007
19. <http://www.apa.az>, 21.06.2008
20. Տոսալ պաշտպանության պետուները ենթադրում է պատերազմի ժամանակ ոչ միայն երկրի ՁՈՒ կիրառում, այլ նաև բշնամուց պաշտպանվելու բոլոր հնարավոր մեթոդների ու միջոցների օգտագործում: <http://www.echo-az.com/politika02.shtml>
21. Դեռևս 1990-ականների սկզբին Ադրբեջանի Նախկին Նախագահ Է. Էլչիրեյի խորհրդական է նշանակվել թուրք գեներալ Յ. Դեմիրոլպեր, որը հետագայում դարձել է նաև Ադրբեջանի Անվտանգության խորհրդի անդամ: Տես Գառք Դեմոսի, Կ. 111. Դարարադայան պատերազմի ժամանակ՝ 1992 թ. Ադրբեջանում ստեղծվել է թուրք խորհրդականների ու ռազմական մասնագետների հատուկ ապարատ: Այդ ընթացքում Արբեջանի Նախագահի խորհրդական է նշանակվել թուրքական բանակի բրիգադի գեներալ Քալաբայջին: Նշված ժամանակահատվածում Արբեջանում է գտնվել շուրջ 450 թուրք ռազմական մասնագետներ, որոնց մեծ մասը ուղարկված է եղել թուրքական բանակի ՁՈՒ գլխավոր շտաբի և հատուկ ծառայությունների կողմից: 1994 թ. Բուդապեշտում թուրք-քիմիայի ներկայացուցիչները հայտարարել են, որ պատրաստ են շուրջ 480 զինվորներ ուղարկել դարարադայան հավանաբար ստեղծված գոտի: Ադրբեջանում թուրքական կողմի աջակցությամբ հիմնվել են մի քանի ռազմական ուսուցման ու վարժանքի գոտիներ՝ գրոհայինների պատրաստման նպատակով: Նման բազա է գործել Ալաշերոյան շրջանի Գյուզդուք գյուղի շրջակայքում «Գորշ գայլեր» կազմակերպության հիմքի վրա, որտեղ պատրաստվել են շուրջ 2 հազար գրոհայիններ, որոնք մասնակցել են ինչպես Դարարադայան պատերազմին, այնպես էլ Արխազիայում, Գեյնիայում: Արտաքինից թեև ոչ պաշտոնական ճանապարհով, սակայն տարբեր կազմակերպությունների միջոցով (հիարկեն թուրքական ռազմաքաղաքական շրջանակների հովանավորությամբ) թուրքիայում կամավորական խմբեր էին ձևավորվում Արխազիայում ռազմական գործողություններին մասնակցելու համար: Հավաքագրումն իրականացվում էր թուրքիայում ապրող էթնիկ մուսուլման արխազներից, ինչին մեծ աջակցություն էր տրամադրում թուրքական «Արխազիայի հետ համերաշխության կազմակերպության» կողմից: Տես՝ Александр Сваранц, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва 2002, стр. 490-491
22. <http://www.day.az>, 20.09.2007
23. MIT MÜSTEŞARI EMRE TANER, BAKÜ'DE, Haber 10, 16.10.07.
24. <http://www.regnum.ru>, 26.09.2007
25. <http://www.day.az>, 01.05.2008
26. <http://www.regnum.ru>, 16.08.2006
27. Թուրքիայի ռազմադրոշմաբերական համալիրի վերաբերյալ մանրամասն տես Լևոն Գոլսեֆյան, Թուրքիայի ռազմադրոշմաբերական համալիրի զարգացման և զինված ուժերի արդիականացման ռազմավարությունը, Թուրքիա: Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները, Վերլուծական նյութեր, Թողարկում 1, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Երևան 2007, էջ 78-103: Թուրքիայի ռազմական արդյունաբերության զարգացման և զինված ուժերի արդիականացման մասին տես Լևոն Գոլսեֆյան, Թուրքիայի զինված ուժերի արդիականացման խնդրի շուրջ, Մերձավոր Արևելք, N 4, Երևան 2007: <http://www.zerkalo.az>, 07.01.2007
29. Азербайджан против народа Карабаха, Ереван 2006, стр. 124.
30. Aseilan Azerbaycan'a manga telsizi satacak <http://www.gbulen.ssm.gov.tr>, 27.05.2008
31. <http://www.apa.az>, 08.07.2008; <http://www.regnum.ru>, 08.07.2008
32. Դուկիսին Կոնա-Օսուկ ընկերությունը Վրաստանի ալիանսը պահպանուր-յան ծառայությանը հանձնեց առաջին ռազմական մտորանալակը: <http://www.regnum.ru>, 10.07.2008; 2008 թ. մարտին Թուրքիան Վրաստանի ռազմածուկային ուժերին հանձնեց նորագույն ռադիոտեխնիկական նախագահին ապրանքներ: Այդ ապրանքներին հանձնուը վրագական կողմին իրականացվել է Վրաստանի ՁՈՒ համալրման նպատակով, թուրքական դրամաշնորհների հուսուլազման մասին 2005 թ. երկու երկրների միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում: <http://www.regnum.ru>, 14.03.2008
33. <http://www.regnum.ru>, 21.07.2008
34. Մուրադ Բայաթի հարցազրույցը ադրբեջանական վերլուծական կայքերից մեկին՝ <http://www.analitika.az>, 28.07.2008
35. Նույն տեղում:
36. <http://www.regnum.ru>, 23.05.2007
37. <http://www.regnum.ru>, 20.05.2007
38. Zaman, 07.11.2007

**Ղարաբաղյան Հակամարտության արդի փուլի
ռազմաքաղաքական ասպեկտները**

Սերգեյ Մինասյան

1. Լեռնաձորյան

Հողվածում դիտարկված են Ղարաբաղյան Հակամարտության հիմնական ռազմաքաղաքական ասպեկտները: Ելված թեման հատուկ կարևորություն ունի, քանի որ տարածաշրջանի ռազմական բաղկացուցիչը և ուժերի հավասարակշռությունը հանդիսանում են Ղարաբաղյան Հակամարտության գոտում փոխում գինարդարի պահպանման առավել կարևոր պայմանները /միջազգային համրության կողմից հակամարտող կողմերի վրա արտաքին ճնշման գործոնի հետ մեկտեղ/ կամ հակառակը, ռազմաքաղաքական հավասարակշռության խախտման պարագայում հիմնական սպառնալիքները ամբողջ Հարավային Կովկասի կայունության և անվտանգության պահպանման համար:

Աշխատանքում հիմնական շեշտը դրվելու է 1992-1994 թթ. հակամարտող կողմերի միջև խորհրդային ռազմական ուժեցվածքի բաժանման հետ կապված իրավիճակի զարգացման դինամիկայի, ինչպես նաև Ղարաբաղյան Հակամարտության ռազմական փուլի ավարտից հետո սպառնալիքները մրցավազքի և ռազմականացման գործընթացի հետագա ակտիվացման վրա: Լուսարանված են նաև Հարավային Կովկասում սպառնալիքային մեկտանք վերահսկողության և Ադրբեջանի ու Հայաստանի կողմից սպառնալիքային հսկողության ոլորտում առկա ռեժիմների ու փաստաթղթերի շրջանակներում պարտավորությունների կատարման հետ կապված հարցերը:

Մանրակրկիտ ներկայացված է Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ռազմական ներուժի և Ղարաբաղյան Հակամարտության գոտում մարտական գործողությունների վերականգնման տեսական հավանականության պարագայում, նրանց զինված ուժերի մարտունակության համեմատական վերլուծությունը: Հետազոտված են ռազմա-տեխնիկական, քաղաքական և հայեցակարգային բնույթի կարևորագույն գործոնները, հավանական մարտական գործողությունների վարման կողմերի մոտեցումները, ինչպես նաև հակամարտության գոտում մարտական գործողությունների չվերականգնման հետևանքների վրա ազդող և տարածաշրջանային կայունության պահպանմանը նպաստող պայմանները:

2. Խորհրդային ռազմական ուժեցվածքի բաժանումը և Ղարաբաղյան Հակամարտության գոտում ռազմականացման գործընթացի սկիզբը

Իր գոյության վերջին տարիներին Խորհրդային Միությունը, ՆԱՏՕ-ի ակտիվ անդամ Թուրքիայի սահմանակից տարածաշրջանում, ուներ հզոր ռազմական ներուժ, որը ներառում էր Անդրկովկասյան Կարմիր դրոշակակիր զինվորական օկրուգի /ԱԿՕՕ/ և Անդրկովկասի սահմանային օկրուգի միավորումները, ՀՕՊ 19-րդ առանձին բանակը, 34-րդ օդային բանակը, Կասպիական նավատորմը, Սևծովյան նավատորմի նավերի բրիգադը: Բացի այդ, տարածաշրջանում տեղակայված էին նաև կենտրոնական ենթակայության զորամասեր՝ տրոպիկոսիային հետախուզության

կենտրոնը /Թբիլիսիի մոտ/, հրթիռային հարձակման վաղ նախազուլացման ու տիեզերական տարածության հսկողության ռադիոլոկացիոն կայանը /Գարալինյան ՌԼԿ Ադրբեջանում/, ինչպես նաև ԽՍՀՄ ՆԳՆ-ի ներքին և ՊԱԿ-ի զորքերի ստորաբաժանումները:

Անդրկովկասի զինվորական օկրուգում միավորված էին 4-րդ համազորային բանակը, 7-րդ զվարդիական բանակը, 31-րդ բանակային կորպուսը, 104-րդ օդա-դեսանտային դիվիզիան, 171-րդ ուսումնական կենտրոնը և մի շարք առանձին զորամասեր: Ադրբեջանական ԽՍՀ տարածքում տեղակայված 4-րդ բանակը ներառում էր 3 մոտոհրաձգային դիվիզիաներ /ՄՀՂ/ 23-րդ ՄՀՂ-ն Կիրովաբադում /Գյանջա/, 60-րդ ՄՀՂ-ն Լենքորանում և 295-րդ Գյուլզեկում, ինչպես նաև առանձին ստորաբաժանումներ: Նախկինում էին գտնվում 75-րդ ՄՀՂ-ն, որը ԽՍՀՄ գոյության վերջին շրջանում փոխանցվեց ՊԱԿ-ի զորքերի կազմին: Բացի այդ, Ադրբեջանական ԽՍՀ տարածքում /Կիրովաբադում/ տեղակայված էր նաև 104-րդ առանձին օդա-դեսանտային դիվիզիան /ՕԳՂ/:

ՀՕՊ 19-րդ առանձին բանակը /շտաբը՝ Թբիլիսիում/ Անդրկովկասի տարածքում տեղակայված էր մի քանի գեներալ-հրթիռային ստորաբաժանումներով և ռադիոտեխնիկական զորքերի զորամասերով: Դրանցից առավել մարտունակ և թվակազմով մեծ զորամասերն ու զորամիավորումները տեղակայված էին Ադրբեջանական ԽՍՀ տարածքում, մասնավորապես Բաքվի և Մինգչաուրի շրջաններում: Անդրկովկասի տարածքում տեղակայված ռազմա-օդային բազաները հիմնականում ենթարկվում էին 34-րդ օդային բանակին /շտաբը՝ Թբիլիսիում/, Կրասնոսնովսկային 9 ռազմական օդանավակայանները, Ադրբեջանում՝ 5-ը, իսկ Հայաստանում՝ ընդհանրապես չկային: Ադրբեջանի տարածքում տեղակայված էին Խորհրդային բանակի ՌՕՌ-ի և ՀՕՊ-ի չորս ավիացիոն զննոր՝ 80-րդ առանձին զորհային ավիացիոն զուևը Սիթք 2այում /որը սպառազինված էր Cy-25 զրոհային ինքնաթիռներով/, ՀՕՊ-ի 82-րդ կործանիչ զուևը Նաստոնիում /ՄուԻ-25ՄԸԸ/, 976-րդ ռմբակոծիչ զուևը Կյուրդամիում /Cy-24 ճակատային ռմբակոծիչներ/ և 882-րդ ավիացիոն հետախուզական զուևը Դայարում /ՄուԻ-25ՄԶ և Cy-24ՄԲ/: Յուրաքանչյուր շահագործվող օդակայանում պահեստավորվում էին ավիացիոն ռազմամթերքի առնվազն հինգ մարտական լրակազմեր /տես աղյուսակ 1/:

Աղյուսակ 1. Նախկին Խորհրդային Բանակի անձնակազմի ու սպառազինության տեղաբաշխումը Լեռնային Ղարաբաղի Հակամարտության մեջ ներգրավված պետությունների տարածքներում /ըստ 1991 թ. վերջի տվյալների³

Երկիրը	Տանկերը	ՄԶՄ ⁴	Հրետան. համակ.	Հարված. ուղղաթ.	Մարտ. ինքնաթ.	Անձնակազմը
Ադրբեջան	378	1165	447	24	124	64000
Հայաստան	258	641	357	7	-	20000
Լեռնային Ղարաբաղ	13	120	16	-	-	2000

Ինչ վերաբերվում է ռազմամթերքին ու զինվորական հանդերձան-քին, ապա Ադրբեջանի տարածքում պահվում էր դրա շատ ավելի մեծ քանակություն, քան նախկին Անդրկովկասի մնացած ամբողջ տարածքում: Ադրբեջանում էին գտնվում մեկ տրաստեզիական պահեստը Պիլյուզում

/ավելի քան 7200 վազոն ծավալով/ երկու օկրուգային պահեստները Ադրասնում և Նասսոնում /1100-ական վազոն/ և չորսը դիվիզիոնային պահեստները Գյուզդենում, Այաջնայում, Լենթորանում և Նախիջևանում /150-200-ական վազոն/: Այդ պահեստների ռազմամթերքի ընդհանուր քանակը գնահատվում էր ավելի քան 11000 վազոն: Համեմատությամբ համար նշենք, որ Հայաստանի տարածքում գտնվում էին ընդամենը երեք դիվիզիոնային պահեստներ /Գյուլնրի, Բալախոլիտ, Կիրովական/ ռազմամթերքի 500 վազոն ընդհանուր ծավալով, այսինքն շուրջ 20 անգամ ավելի քիչ, քան Ադրբեջանում⁹: Ինչ վերաբերվում է Լեռնային Ղարաբաղի տարածքին, որտեղ տեղակայված էին 23-րդ ՄԳԴ-ի 366-րդ մոտոհրաձգային գունդը, քիմիական պաշտպանություն ատանմին գունդարտակը և Հաղորթի սահմանապահ ջոկատը, ապա այդ ստորաբաժանումներն ունեին ռազմամթերքի նվազագույն պաշարները, որոնց մեծ մասը 1991-1992 թթ. տեղափոխվել էր Ադրասնի օկրուգային պահեստ կամ ոչնչացվել էր 1992 թ. փետրվար-մարտ ամիսներին Լեռնային Ղարաբաղի տարածքից այդ զորամասերի ստորաբաժանումների անձնակազմի դուրս բերումից հետո:

Ղարաբաղյան Հակամարտության սրման հետ մեկտեղ /1989 թ. վերջից և հատկապես 1990 թ. հունվարին Բաքվում հայկական բնակչության ջարդերից հետո/, Ադրբեջանի ղեկավարության և որոշակի քաղաքական ուժերի կողմից սկսեցին ձեռնարկվել նախկին ԽՍՀՄ զորամասերի սպառազինության ու ռազմական տեխնիկայի զավթման ու ձեռքբերման միջոցառումներ Ղարաբաղի դեմ ագրեսիայի ընթացքում օգտագործելու համար: Ընդ որում, Ադրբեջանի տարածքում տեղակայված նախկին խորհրդային Բանակի ռազմական օբյեկտների վրա զինված հարձակումները հերթագայվում էին ԱԿՁՕ-ի 4-րդ բանակի և ԽՍՀՄ ՆԿՎ ենթին զորքերի ստորաբաժանումների զինծառայողների ու հրամանատարության բացահայտ կաշառումներով և ադրբեջանական ռազմական կազմավորումների ու ԱդրբխՍՀ ՀՆԳ ՀՆԱՁՁ /ՕՍՕՆ/ կողմից ռազմական գործողություններին, իսկ ավելի ուշ նաև ադրբեջանական կանոնավոր բանակում /1991 թ. վերջից մինչև 1992 թ. սկիզբը/ անմիջականորեն ներգրավմամբ:

Պետք է նշել, որ Ղարաբաղում իրավիճակի սրմանը և հայկական բնակչության երկի գտումներին զուգահեռ, 1990 թ. սկզբից Ադրբեջանի քաղաքական ուժերը բավական լուրջ մտադրություններ ունեին տիրապետել ոչ միայն նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ում տեղակայված ԽՍՀՄ զինված ուժերի զորամասերի սովորական սպառազինությանն /կոմվենցիոնալ/ ու ռազմական տեխնիկային: Խոսք էր գնում նույնիսկ միջուկային ռազմամթերքը զավթելու իրական փորձերի մասին, մասնավորապես տակտիկական միջուկային զենքի /ՏՄՁ/, որը պահվում էր Ադրբեջանական ԽՍՀ տարածքում տեղակայված ԱԿՁՕ-ի պահեստներում: Ինչպես վկայում են իրարաբաժանությունների ակամատեսները, կենտրոնական խորհրդային զինվորական ղեկավարությանը միայն մեծ դժվարությամբ հաջողվեց Ադրբեջանական ԽՍՀ տարածքից դուրս բերել այդ միջուկային ռազմամթերքը և կանխել որպեսզի չգտնվի տարբեանական ռազմական կազմավորումների կողմից. «ՏՄՁ-ի դուրս բերումն անցնում էր բարդ օպերատիվ իրավիճակում, որը կապված էր, մասնավորապես, տարբեր բնույթի քաղաքական խմբավորումների ակտիվացման հետ, որոնցից մի քանիսը կարող էին փորձել այդ թվում նաև ուժով խոչընդոտել այդ գործողությունը: 1990 թ. Բաքվում տեղի ունեցած բախումներից հետո կտրուկ դժվարացել

էր Ադրբեջանից միջուկային ռազմամթերքի դուրս բերումը, որը պայմանավորված էր Ադրբեջանի ժողովրդական ճակատի հետ կապված որոշ տարրերի կողմից այդ գործողություններին խոչընդոտելու փորձերով: Ռազմամթերքի դուրս բերումն իրականացվեց էր հուլիս զարուհուրյան պայմաններում, ինչը հնարավորություն տվեց առանց միջադեպերի այն հասցնել ռազմական օդանավակայան, սակայն այնտեղ քոչվազային ուղին շրջափակված էր քաղաքացիական խմբերի կողմից, որոնք փորձում էին ինքնաբերական հնարավորություն չտալ թօչելու: Ըստ մասնակի վկայությունների, իրավիճակը ծայրահեղ լարված էր, և անձնակազմը ստիպված էր նախագուշակյան կրակ բացել միջին ուժերի ռեպրեզենտի հրամարները, որոնք օգտագործում էին ռազմամթերքի տեղափոխման համար: Բարեբախտաբար ամբողջ ցրվեց և ամեն ինչ ընթացավ առանց զոհերի, ինքնաբերական հանգիստ թոչիչ կատարեցին»:

Ադրբեջանական իշխանությունների, տարբեր քաղաքական կուսակցությունների և զինված միավորումների ակտիվ գործողությունների արդյունքում, արդեն 1992 թ. կեսերին, Ադրբեջանի իսկողության տակ անցավ իր տարածքում տեղակայված բոլոր 4 մոտո-հրաձգային դիվիզիաների¹⁰, ԳՕԴ-ի 3 բրիգադների, հատուկ նշանակության բրիգադի /ՀՆԲ/ ունեցվածքը, բոլոր ռազմա-օդային բազաները /մեծ քանակի ավիացիոն տեխնիկայով/ և ՊԱԿ-ի սահմանապահ զորքերի զորամասերը, որոնք պահպանում էին նախկին ԽՍՀՄ պետական սահմանները¹¹: Ադրբեջանի ձեռք բնվակ նաև Կասպիական նավարկման ու Բաքվի բարձրագույն բանակային ռազմական ուսումնարանի նավթի և ցամաքային ենթակառուցվածքների մի զգալի մասը: Հանրապետությունը յուրաքանչեք նաև ռազմամթերք¹², Փաստորեն, մեծ ուշացումով, ռուսական կողմը, 1993 թ. մայիսին Ադրբեջանից դուրս բերեց միայն Գյալաջայում տեղակայված 104-րդ ՕԴԴ-ն, ըստ որում, որն արդեն կորցրել էր իր ծանր տեխնիկայի մեծ մասը. տասնյակ միավոր ՔՄԳ, ՔՏՆ-Դ, 120-մմ ՍՍՈՒ և այլն: Համաձայն ՌԳ պաշտպանության նախարարության հրամանի, Ադրբեջանական տարածքից Ռուսաստան տեղափոխվեց նաև մարտական ինքնաբերական մի մասը /1992 թ. մայիս-հունիս ամիսներին/:

Ադրբեջանի տարածքում միակ ռուսական ռազմական օբյեկտը մնաց Գաբալայի ՈԼԿ-ն, որը մտնում էր Հրթիռային հարձակման կանխման համակարգի մեջ /ՀԴԿԴ/: Այն բացի Հրթիռային օվիկանոնի տարածքից /այդ թվում նաև սուզանավերից/ արձակված բախտիկական հրթիռների իսկողությունը, հնարավորություն է տալիս մոնիտորինգ իրականացնել Իրանի, Թուրքիայի, Հնդկաստանի, Իրաքի, Պակիստանի, մասսաբ նաև Չինաստանի, ինչպես նաև մի շարք ասիական ու աֆրիկյան պետությունների օդային և տիեզերական տարածքները: Կայանը նախատեսված է բախտիկական հրթիռների և տիեզերական օբյեկտների հայտնաբերման, դրանց ուղեկցման, կորոզիանտների որոշման և հետագծի պարամետրերի հաշվարկման համար: Այն կարող է հետևել միաժամանակ մինչև 20 բարդ թիրախներ /օրինակ, հրթիռային մարտական օվիկաներ/ 20 տարբեր ակտիվության ուղղություններում, հագեցված է պաշտպանության միջոցներով տիեզերական ու արդողիմանիկական խանգարիչներին: 2002 թ. Գաբալայի ՈԼԿ-ն ստացել է ՌԴ ռազմական բազայի կարգավիճակ, որը վարձակալվել է 10 տարի ժամկետով¹³: Կապված նրա հետ, որ ադրբեջանական սահմանադրությունը, ձևական առումով, արգելում է իր տա-

րածքում արտասահմանյան ռազմական բազաների ակտիվությունը, ռուսադրբեջանական բանակցությունների արդյունքում Գաբալայի ՌԿ-ն սկսել է գործել որպես Ռուսաստանի կողմից վարձակալված ռազմական օբյեկտ: Ասլայն, իր բովանդակությամբ տվյալ օբյեկտը լիովին համապատասխանում է ռազմական բազային դասական սահմանմանը: Ավելին, իրականում Գաբալայի ՌԿ-ն Ռուսաստանի համար համարվում է Գարաբային Կովկասի /հենարավոր է նաև Ռուսաստանի սահմաններից դուրս գտնվող այլ օբյեկտների շարքում/ առավել արժեքավոր ստրատեգիական ռազմական օբյեկտը: Պետք է հաշվի առնել, որ Գաբալայի ՌԿ-ն հանդիսանում է ԳՀԿՂ ՌԿ ռուսական 7 կայաններից մեկը, ընդ որում միակը, որն առավել ամբողջականորեն է զննում մեծածորարևելյան տարածաշրջանի և Դնդակական օվկանոսի օդային և տիեզերական տարածքները:

Այսպիսով, չնայած 1992 թ. մայիսի 15-ի Տաշքենտի համաձայնագրի ստորագրմանը /Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի իրականացման սկզբունքների ու գործառնությունների մասին Գամաձայնագիրը և սպառազինության ու տեխնիկայի առավելագույն մակարդակների ակալության մասին Արժանագրությունը/ և Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին 1990 թ. պայմանագրին /ԵՍԶՌ-Պ/ միանալուն, Ադրբեջանը շատ ավելի մեծ քանակների սպառազինություն ու տեխնիկա յուրացրեց, քան բուլլատրված էր նշված փաստաթղթերով /տես աղյուսակ 2/: Հիմնականում դա Ռուսաստանի պաշտպանության նախարարության նախկին ղեկավարության դիբորդման հետևանք էր, որը պատասխանատու էր սպառազինության ու ռազմական տեխնիկայի բաժանման համար, ինչպես նաև տեղերում ռուսական զորամասերի հրամանատարների կաշառվածության հետևանք¹²: Արդյունքում ղզվարացավ և խափանվեց Ադրբեջանի տարածքից նախկին խորհրդային Բանակի ապակազմավորված զորամասերից սպառազինության ու ռազմական տեխնիկայի դուրս բերումը: Ընդ որում, նույնիսկ 4-րդ համազորային բանակի ռազմական գույքի պաշտոնական բաժանման ու Ադրբեջանին փոխանցման գործընթացը ընթանում էր ադրբեջանական իշխանությունների ուժեր ճնշման տակ, որոնք Լեռնային Դարաբաղի Հանրապետության դեմ մարտական գործողություններ վարելու համար սպառազինության խիստ կարիք ունեին: Որոշ ղեկավարում Ադրբեջանում ռազմական գույքի գաղթումն իրականացվում էր 4-րդ բանակի հրամանատարության առանձին ներկայացուցիչների բուլլատրությամբ, որը կենտրոնացված զինվարական կառավարման համակարգի փլուզման պայմաններում միշտ էլ, որ համաձայնեցնում կամ տեղյակ էր պահում Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության ղեկավարությանը: Օրինակ, համաձայն Ռուսաստանի պաշտպանության նախարարության 1992 թ. հունիսի 22-ի թիվ 314/3/022 հրահանգի, Ադրբեջանին փոխանցվել է 237 տանկ, 325 մարտական գրահապատ մեքենա /ՄՏՄ/, 170 հրետանային համասարքեր: Այսպիսով, միայն մեկ հրահանգով Ադրբեջանին փոխանցված սպառազինությունը մի քանի կառեզրիպյով գերազանցում էր ԵՍԶՌ-Պ-ով թուլատրված առավելագույն մակարդակների շուրջ Ադրբեջանի պարտավորությունները: 1992 թ. Ադրբեջանն ընդհանուր առմամբ ստացել է /միայն իր տարածքում տեղակայված նախկին խորհրդային Բանակի զորամասերի ու ԽՍՀՄ ԵԳԸ մեքենաների հաշվին/ ավելի քան 325 տանկ, 789 ԲԲՄ, 458 հրետանային համասարքեր, մեծ քանակի ավիացիոն տեխնիկա, ավելի քան 100 հազար միավոր թեթև և իրաձգային զենք /ԹԶԷ/¹³: Դա դեռ հաշ-

վի չափերով Ադրբեջանի կողմից սպառազինության, ռազմական տեխնիկայի ու ռազմամթերքի զանգվածային զնուցմանը այլ երկրներից, ինչպես նաև զենքի անհատույց տրամադրումը Թուրքիայից:

Արդյունակ 2. Սպառազինության ազգային /ԱՍՄ/ և տարածքային /ՏՍՄ/ սահմանային մակարդակները, որոնք սահմանափակված են ԵՍԶՌ-Պ-ով և հարմարեցված են Գարաբային Կովկասի երկրների համար

երկիրը	Տանկեր	ԲԲՄ	Հրետան	Մարտական Գարվածային համակարգեր	Ինքնաթիռներ	ուղղաթիռներ
Ադրբեջան	220	220	285	100	100	50
Հայաստան	220	220	285	100	100	50
Վրաստան	220	220	285	100	100	50

Ըստ որում պետք է նկատել, որ նույնիսկ նման զգալի զինանոց ստանալով Ադրբեջանը բավարարված չէր ռուսական կողմի պաշտոնապես տրամադրած սպառազինության ու ռազմական տեխնիկայի ոչ թվաքանակով, ոչ էլ, ինչպես նշում էին ադրբեջանցի զինվորականները, դրանց շահագործման ցածր որակով: Օրինակ, չնայած նրան, որ 1992 թ. Ադրբեջանին իր բոլոր հարևանների համեմատությամբ, անհամեմատելի ավելի շատ ավիացիոն տեխնիկա հասավ /շուրջ 50 մարտական ինքնաթիռ և ավելի քան 20 մարտական ու տրանսպորտ-դեսանտային ուղղաթիռ/, ադրբեջանցի փորձագետները շարունակում են դժգոհություն հայտնել այն կապակցությամբ, որ Ադրբեջանի տարածքում տեղակայված ավիաբազաների մարտական ինքնաթիռների ու ուղղաթիռների մի մասն այնու մեծ-նայելով ռուսական կողմը դուրս բերեց /36 հատ ՍԻ-25, 8 ՍԻ-4-25, 38 ՍԻ-24, 28 Իլ-76, 6 ԱԸ-2, 3 ԱԸ-26, 13 ՍԻ-24, 11 ՍԻ-8, 9 ՍԻ-2, 2 ՍԻ-9, 1 ՍԻ-6 և այլն/¹⁴:

Ադրբեջանի կողմից իր տարածքում տեղակայված խորհրդային Բանակի զորամասերի սպառազինության մեծ մասի փաստացի «սեփականաշնորհումից» հետո Բաքուն ռազմատեխնիկական առունձով գերազանցող առավելություն ստացավ ԼԳՀ-ի նկատմամբ /և նույնիսկ Հայաստանի նկատմամբ, որը պաշտպանում էր Լեռնային Դարաբաղի ժողովրդին ադրբեջանական ագրեսիայի դեմ պայքարում/: Համեմատության համար նշենք, որ 1992-1994 թթ. Հայաստանին, նախկին խորհրդային Բանակի գույքից, մոտ 2,5-3 անգամ ավելի քիչ ցամաքային սպառազինություն և ռազմական տեխնիկա հասավ, քան Ադրբեջանին, իսկ մարտական ինքնաթիռների առունձով շուրջ 10 անգամ:

Առանձնահատուկ պետք է նշել, որ բացի ադրբեջանական բանակից դարաբաղյան ջոկատների կողմից գաղթված ռազմավարային զենքն ու ռազմական տեխնիկան¹⁵, նախկին խորհրդային Բանակի գույքից ԼԳՀ-ին հասավ միայն 366-րդ ՄԳԳ-ի հաստիքային սպառազինության ու ռազմական տեխնիկայի մի չնչին մասը: Համաձայն պաշտոնական տվյալների, 1993 թ. նոյեմբերի 19-ի դրությամբ, Ստեփանակերտում տեղակայված 366-րդ ՄԳԳ սպառազինության մեջ գտնվում էին 13 միավոր S-72 տանկ, 10 միավոր ԲԲՄ և 16 հրետանային համակարգեր¹⁶: Ըստ Ռուսաստանի Ղաշտպանության նախարարության պաշտոնական տեղեկությունների, ուղղաթիռներով զնդի անձնակազմի դուրս բերումից հետո, նշված քանակությունից հայկական կողմին բողոմվել է ընդամենը 9 տանկ և 87 ԲԲՄ /5 միավոր ԲՏՈ-70, 49 միավոր ԲՄՊ-1, 28 միավոր ԲՄՊ-2 և 5 միավոր ԲՄՊ-

14), որոնք գտնվում էին վատ տեխնիկական վիճակում: Գնդի մնացած ռազմական տեխնիկան պարզապես ոչնչացվել էր ռուսական զինծառա-
յողների կողմից: Ուստի 1992-1994 թթ. ռազմական տեխնիկայով դարա-
բաղյալ բանակի սպառազինության մատակարարման հիմնական աղբյու-
րը դա մարտական ռազմավարն էր:

Այսպիսով, ադրբեջանական տարածքում տեղակայված խորհրդային
Բանակի, ինչպես նաև ԽՍՀՄ ԵԿԸ և ՊԱԿ զորքերի գործնականում ամբողջ
սպառազինության յուրացումից հետո, Ադրբեջանը մի քանի անգամ ավելի
շատ սպառազինություն և ռազմական տեխնիկա, ինչպես նաև ռազմա-
մթերք և այլ ռազմական ունեցվածք ստացավ, քան Հայաստանը և ԼՂՀ-ն
միասին վերցված: Բացի այդ, Ադրբեջանը ստացավ մեծ քանակի ավիա-
ցիոն տեխնիկա և Կասպիական ռազմական նավատորմի մի մասը, այն
դեպքում, երբ սպառազինության բաժանման ընթացքում Հայաստանը
չստացավ մարտական ինքնաթիռներ¹⁷ և բնական է՝ ռազմա-ծովային սպա-
ռազինություն: Ինչպես նշում են աղևմտյան փորձագետները, հենց Հայաս-
տանի և Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության Բանակի նկատմամբ
Ադրբեջանի ռազմատեխնիկական զերակշռող առավելություններն էլ
հետագայում հանդիսացան Հարավային Կովկասում սպառազինություն-
ների մրցավազք սկսելու զլխավոր պատճառը, որը հատկապես սաստ-
կացավ Ադրբեջանի կողմից 1992-1994 թթ. Ուկրաինայից հարյուրավոր
տանկերի ու ԲԲՄ-ների ձեռքբերումից հետո¹⁸:

3. Հսկողությունը սպառազինության նկատմամբ տարածաշրջանում և սպառազինության մրցավազքի ակտիվացումը Հարավային Կովկասում

Ինչպես արդեն նշվել է, ըստ 1992 թ. մայիսի 15-ի Տաշքենտի համա-
ձայնագրերի, Ռուսաստանը և Հարավային Կովկասի երեք միջազգային
ճանաչում ունեցող երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը,
պայմանավորվել էին տարածաշրջանում սպառազինության և ռազմական
տեխնիկայի /ՍՈՏ/ առկայության առավելագույն թույլատրելի մակարդակ-
ների մասին եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանա-
գրի /ԵՍՁՈՒՊ/ համաձայն, միմյանց միջև բաժանելով կովկասյան տարա-
ժաշրջանում նախկին ԽՍՀՄ-ի առկա թվումները: 1999 թ. ԵԱԿԿ Ստամ-
բուլյան զագաբաժողովի ընթացքում հարավկովկասյան երկրների կողմից
ստորագրվեց նաև Հարմարեցված ԵՍՁՈՒՊ-ը, որը որոշակի շտկումներ էր
նախատեսում այսպես կոչված թևային սպառազինության շուրջ, սակայն
այն չվավերացվեց և գործածության մեջ չնտավ Հարավային Կովկասի ոչ
մի պետության կողմից:

Հարավային Կովկասի պետությունների կողմից ԵՍՁՈՒՊ-ի դրույթների
կատարման կարգը խիստ տարբեր էր: Հայաստանն քնդիհանուր առմամբ չի
խախտել Պայմանագրի դրույթները: Ավելին, օրինակ, Ղարաբաղյան
Հակամարտության զոտում մարտական գործողությունների ընթացքում
ԵՍՁՈՒՊ-ի շրջանակներում Հայաստանում իրականացվել են միջազգային
տեսչական ստուգումներ, որոնք արձանագրել են Հայաստանի կողմից
Պայմանագրով նախատեսված միջազգային պարտավորությունների
խախտումների բացակայությունը²⁰: Մյուս կողմից, ադրբեջանական փոր-
ձագետները և պաշտոնական աղբյուրները պնդում են, որ դա պայմա-
նավորված է նրանով, որ Հայաստանն իր զինված ուժերի ՍՈՏ-ի մեծ մասը
պահում է Լեռնային Ղարաբաղի տարածքում: Սակայն այս դեպքում մենք

բախվում ենք արմատապես մի այլ իրավիճակի, որը ոչ մի կերպ կապված
չէ Հայաստանի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությու-
նների կատարման հետ: Լեռնային Ղարաբաղի տարածքում տեղակայված
ՍՈՏ-ն պատկանում է ոչ թե Հայաստանի զինված ուժերին, այլ միջազ-
գային հանրության կողմից չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրա-
պետությանը: Ընդ որում, այդ սպառազինության զգալի մասը դարաբաղ-
յան կողմը գրավել է դեռևս 1992-1994 թթ. Ադրբեջանի դեմ մարտական
գործողու-թյունների արդյունքում: Դրանով իսկ միջազգային հանրության
կողմից ԼՂՀ-ի չճանաչված լինելու իրավաբանական փաստը հիմնա-
խդիրներ է ստեղծում նրա զինված ուժերի ՍՈՏ-ի վրա ԵՍՁՈՒՊ-ի
դրույթների տարածման առումով:

Այդուհանդի 3. 2004-2006 թթ. Ադրբեջանի կողմից ՍՈՏ-ի ներկրումը ըստ
կոնվենցիոնալ սպառազինության շուրջ ՍԱԿ-ի Ռեզիստորի

Կատեգորիան	Արտահանող երկիրը	ՍՈՏ-ի տեսակը	Քանակը
ԲՏ	Բելառուս Ուկրաինա	S-72	60
		S-72	45
Ընդամենը ԲԲՄ	Ուկրաինա	ԲՏՈ-3ՈՒ/12,7 ԲՄՊ-1	105 3 2 5
		Ընդամենը Հրետանային համակարգեր	Ուկրաինա
Ընդամենը		սկանանետ ՊՍ- 38	12 85
Մարտական ինքնաթիռներ	Ուկրաինա	ՄիԳ-29 L-39	97 5 ²³ 12
		Վրաստան	Սու-25
Ընդամենը			

Այդուհանդի 4. Ադրբեջանի ՍՈՏ-ի թվաքանակն ըստ ԵՍՁՈՒՊ-ով ներկայացված պաշտոնական տվյալների

Տարին	Մարտական տանկեր	ԲԲՄ	Հրետանային համակարգեր	Մարտ. ինքնաթ.	Հարվածային ուղղաթիռներ
2004	220	210	285	54	15
2005	214	185	285	54	15
2006	217	183	260	62	15
2007	261	183	343	64	15

ԵՍՁՈՒՊ-ի գործողության ամբողջ ժամանակահատվածում նկատելի
էին բացահայտ խախտումներ Ադրբեջանի կողմից: Մասնավորապես, եթե
Լեռնային Ղարաբաղում մարտական գործողությունների ավարտից հետո,
մինչև 1990-ական թվականների կեսերը, Ադրբեջանի կողմից հայտաբա-
րագրված տանկերի, ԲԲՄ-ների և հրետանային համակարգերի թվաքա-
նակը շատ ավելի գերազանցում էին նրա թվումներն ըստ առավելագույն
թույլատրելի մակարդակների /հավանաբար ադրբեջանական ԱԳՆ-ի
չինվոկիկները «չինացությանը» ներկայացնում էին ադրբեջանական զին-
ված ուժերում առկա ՍՈՏ-ի իրական քանակները/, ապա հետագա տարի-
ներին Բաբուն հայտարարագրում էր ՍՈՏ-ի միավորների այնպիսի քանա-

կություն, որքան էՍՀՈՒՊ-ի սահմանափակումներով նրան թույլատրված է ունենալ ըստ Սովորական սպառազինության և տեխնիկայի ազգային սահմանային մակարդակների մասին Արժանագրության ընդ որում չկատարելով ռազմական տեխնիկայի որևէ կրճատում: Այսպիսով, կան բոլոր հիմքերը պնդելու, որ իրականում Ադրբեջանը զգալիորեն գերազանցում է Սպառազինության և տեխնիկայի պայմանագրով սահմանափակված /ՄՏՊ/²¹ քանակությունները: Բացի այդ, վերջին տարիներին այդ երկրի կողմից մեծ քանակների ՄՏՊ-ի նոր միավորների ակտիվ գնումները /տես աղյուսակներ 3-4/ գործնականում նույնպես չեն ազդել այդ երկրի կողմից ներկայացվող տվյալների վրա²²: Ընդ որում, իհարկե պետք է հաշվի առնել, որ ՄԱԿ-ի Ռեզիստը ընդգրկում է միայն այն տվյալները, որոնք կամավոր կերպով տրամադրում են մասնակից-երկրները, և ընկալվածները չեն ներառում այսպես կոչված սպառազինության «մոխր-բազույն» տրանսֆորմների շրջանակում Ադրբեջանին մատակարարված ՄՏՊ-ի ցանկը:

Ավելին, մի քանի տարիների ընթացքում Ադրբեջանը շրջանցելով էՍՀՈՒՊ-ի դրույթները, փորձում էր /թեև, անհաջողությամբ/ ավելացնել սպառազինության իր քվոտան, ինչպես նաև դրանով հիմնավորել իր զինված ուժերում առկա սպառազինության գերազանցման առավելագույն մակարդակը: Օրինակ հղում կատարելով այն քանին, որ Ադրբեջանի բնակչության թվաքանակը և տարածքի մակերեսը զգալիորեն գերազանցում են էՍՀՈՒՊ անդամ հանդիսացող «փոքր պետությունների» նմանատիպ ցուցանիշները, իսկ այդ ցուցանիշները խիստ կարևոր էին ցամաքային սպառազինության սահմանային մակարդակների որոշման ժամանակ /տեսները, ԲԲՄ-ներ և հրետանային համակարգեր/, արդրեջանցիները նշում էին, որ սպառազինության այդ կատեգորիաների իրենց քվոտաները պետք է զգալիորեն ավելացվեն²⁴: Ինչպես խոստովանում էին արդրեջանցի հետազոտողները. «Քանի որ այդ համաձայնագիրը /էՍՀՈՒՊ/ սահմանում է Ադրբեջանի զինծառայողների, սպառազինության և ռազմական տեխնիկայի առավելագույն քանակների խիստ սահմանափակումներ, ապա նա տիպված է թաքցնել իրական թվերը»²⁵: Ադրբեջանը դա կապում է իբր թե ԼՂՀ-ին հարակից շրջաններում տեղակայված իր բանակի ստորաբաժանումների սպառազինության մասին տեղեկատվության տրամադրման անհնարինության հետ²⁶: Բացի այդ, Ադրբեջանի կանոնավոր բանակում ԲԲՄ-ների բանակը ԱՄՄ-ին համապատասխանեցնելու համար, դրա զգալի մասը /չուրջ 200 միավոր/ փոխանցվել է երկրի ներքին և սահմանափակ գործերին, թեպետ Չարավային Կովկասի երկրների համար ներքին անվտանգության կառույցներում ԲԲՄ-ների առավելագույն թույլատրված թվաքանակը սահմանափակված է 135 միավորով:

Իհարկե, պետք է խոստովանել, որ ոչ «բազային» էՍՀՈՒՊ-ը, ոչ էլ նրա Չարավային Կովկասում սպառազինության վերահսկողության համար, ինչը Ադրբեջանին տարածաշրջանային ռազմականացման գլխավոր նախաձեռնողին, «լայն» հնարավորություններ է տալիս նրա կայքերը շրջանցելու համար /ընդհուպ մինչև մշտական տեղակայման վայրերից մարտական տեխնիկայի հեռացումը դեպի սարերը միջազգային ռազմական տեսչների ժամանումից մի քանի ժամ առաջ և այլն/ «Մտադր պատերազմի» այս իրավաբանական վերապրուկը գործում է չեղավ փոփոխայի իր կիրառման գոտում տարածաշրջանային և ենթատարածա-

շրջանային անվտանգության համակարգերի նկատմամբ կիրառելու, ինչպես նաև ստեղծված հակամարտությունների գոտիներում և հետխորհրային տարածքի չճանաչված պետություններում կիրառելու համար: Չարավային Կովկասի յուրահատկությունը, երեք չճանաչված պետությունների առկայությունը և անվտանգության ոլորտում իրական շփումների բացակայությունը միմյանց և իրենց նախկին «նետրոպոլիսների» միջև, լուրջ հիմնախնդիրներ էին առաջացնում դարաբաղյան կամ, օրինակ, վրաց-աբխազական հակամարտությունների գոտիներում էՍՀՈՒՊ-ի մեխանիզմների պրոյեկցման համար /քանի որ դա ոչ մի կերպ չէր կապվում այդ Պայմանագրի դրույթների հետ, որը կնքվել էր 1990 թ.: Եվրոպայի «երկրկային» բաժանման ժամանակաշրջանում:

Այլու կողմից, առաջատար արևմտյան երկրների ու Ռուսաստանի միջև առկա քաղաքական հիմնախնդիրները նույնպես այդ փաստաթուղթը դարձրին զլոբալ քաղաքական գործընթացների պատանդը: Ադրբեջանի անսահմանափակ ռազմականացման ու տարածաշրջանի սպառազինության մրցակցաբեկ նոր հնարավորություններ են առաջանում Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի դրույթների կատարման շուրջ Ռուսաստանի կողմից հայտարարված մորատորիումի հետ կապված իրավիճակի և փաստորեն սպառազինության ու ռազմական գործունեության նկատմամբ վերահսկողության այս մեխանիզմի ձախողման պատճառով²⁷:

Դրանով իսկ ակնհայտ է դառնում, որ Բաբուն ակտիվորեն ավելացնում է իր սպառազինությունը և նախաձեռնում է սպառազինության մրցակցաբեկ տարածաշրջանում: Դրա արդյունքում վերջին տարիների ընթացքում Ադրբեջանը զգալի քանակության սպառազինություն և ռազմական տեխնիկա է գնել, հատկապես կողմից, հրետանային համակարգեր և մարտական ինքնաթիռներ: Սպառազինությունը հիմնականում մատակարարվել է Ռուսիայից, Ռուսաստանից, Կենտրոնական Ասիայի, Արևելյան Եվրոպայի պետություններից, Թուրքիայից, Իսրայելից և Չինաստանից: Որպես տարածաշրջանի վրա ապակայունացնող ազդեցություն ունեցող էական գործոն արևմտյան փորձագետները դիտարկում են 2004-2005 թթ. ընթացքում Ռուսիայից Ադրբեջանին մատակարարված 12 միավոր 300-մմ 9Ս52 «Սմերչ» համազորակային կրակի իրֆոնային համակարգերը /ՌՍԶ/, որոնց իրենց հարվածային ազդեցությամբ սերտորեն մտնում են զանգվածային ոչնչացման զենքի բնութագրիային: Ադրբեջանի ՉՈՒ-երում «Սմերչ» համակարգերի հայտնվելը լատինական է ազդել Չարավային Կովկասում առկա ռազմական հավասարակշռության վրա²⁸: Ներկայումս Ադրբեջանի սպառազինության մեջ հայտնվել են նաև 9479-1 «Տոչկա-Ռ» օպերատիվ-տակտիկական իրֆոնային կոմպլեքսներ, որոնք ունեն կրակի բավական մեծ դիպուկություն և գործողության հեռահարություն /մոտ 120 կմ/, որոնք ընդունակ են էլ ավելի ազդելու ուժերի տարածաշրջանային առկա հավասարակշռության վրա:

Ինչ վերաբերվում է զրահատեխնիկային, ապա վերջին տարիներին, Բաբունի կողմից, մասշտաբային գնումները հանգեցրել են նրան, որ Ադրբեջանական բանակի սպառազինության մեջ զտնվող միայն տանկերի թվաքանակը, ըստ տարբեր գնահատականների, կազմում է ավելի քան 500 միավոր²⁹: Ըստ ճանխական տվյալների, միայն 2007 թ. ընթացքում Ադրբեջանը Ուկրաինայից գնել է 60 միավոր 122-մմ Դ-300 հատուկիցներ և դրանց 13 հազ. արկ, 20 միավոր ԲՏՌ-70, 300-մմ 9Ս52 «Սմերչ»

համակարգերի 145 հրթիռ, 50 միավոր ՊՏՌԴ-ներ և շուրջ 11 հազ. միավոր Կալաշնիկովի ինքնաձիգեր³⁰: Ուկրաինայից գնվել է նաև ծանր 203-մմ ՍԱՌ՝ «Պիոն», իսկ Խարյեյից՝ նոր «Linx» ՈՍԶՕ-ներ /122-մմ տրամաչափի «Գրադ» տեսակի հրթիռներով, 160-մմ «LAR-160» տեսակի հրթիռներով, ինչպես նաև 300-մմ EXTRA տեսակի հրթիռներով հագեցած/ի, ինչպես նաև տարբեր տեսակի անոթաչափ հետախույզ ինքնաթիռներ: 2007 թ. հուլիսին, Ադրբեջանը պայմանագիր կնքեց «Ուսուրդունենթադրուսի» հետ շուրջ 70 միավոր ԲՏՌ-80Ա մատակարարելու վերաբերյալ³¹: Տախտեսվում է, որ ԲՏՌ-80Ա-ները հիմնականում պետք է լրացնեն Ադրբեջանի ԶՈՒ խաղաղապահ ստորաբաժանումների սպառազինությունը:

2007 թ. հուլիսին, ադրբեջանական արդյունքները տեղեկատվություն հաղորդեցին Ադրբեջանի ՌՈՒԻ-ի, մինչև 2008 թ. վերջը, բանակական ավելացման ծրագրերի մասին: Ըստ Day.az ինտերնետային գործակալության տեղեկատվության. «պլանավորվում է, որ նշված ժամանակահատվածում ՄիԳ-24 կործանիչների թվաքանակը կհասցվի 29-ի, JF-17 Thunder մարտական ինքնաթիռներին՝ 24-ի³², Մի-24 մարտական ուղղաթիռներին՝ 25-ի³³: 2007 թ. ընթացքում իրականացվել են ադրբեջանական ՄիԳ-29 կործանիչների և այլ ավիացիոն տեխնիկայի ցուցադրական բեյթք-ներ անմիջապես Դարաբաղյան Ֆակամարտության գոտու հարակից օդային տարածքում:

Ադրբեջանում աշխատանքներ են տարվում նաև սեփական ռազմարդյունաբերական համալիրի տեղեղման և ադրբեջանական ծեռնարկություններում որոշ տեսակների ՄՍՏ-ի ու ռազմական հանդերձանքի արտադրության ուղղությամբ: Շարունակվում են Յավեր Ջամալովի կողմից ղեկավարած Պաշտպանական արդյունաբերության նախարարության զարգացման աշխատանքները: Ենթադրվում է, որ այդ նախարարության բյուջեն միայն 2007 թ. կազմել է շուրջ 60-70 մլն. դոլար: 2007 թ. մարտից, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հրամանագրով վերացվել են Ազգային ակրտիվեզերական գործակալությունը և նախագահին առընթեր Դատվ մեքենաշինության ու կոնվերսիայի Կոմիտեն: Այս հաստատությունների լուծարումը կապված էր Ադրբեջանի Պաշտպանական արդյունաբերության նախարարության կառուցվածքային ամրապնդման հետ, և նշված հաստատությունները ներառվել են տվյալ նախարարության կառուցվածքում³⁴:

Բավական երկար է թուրքիայի ներդրումը Ադրբեջանի ԶՈՒ-ի ամրապնդման մեջ զինվորական մասնագետների նախապատրաստում, տարբեր տեսակի ՄՍՏ-ի մատակարարում /առաջին հերթին, թուրքական ծծեռնարկությունների արտադրած տարբեր տրամաչափի հրետամային համասարքեր, որոնք համատեղելի են խորհրդային/ռուսական արտադրության ռազմավորների հետ/, ինչպես նաև զինվորական խորհրդակցանքի օգնություն: Նախորդ տարվա ընթացքում, Ադրբեջանը, ռազմատեխնիկական և ռազմաթաղաթական համագործակցությունը շարունակում էր զարգացնել ոչ միայն թուրքիայի հետ /թեև Անկարայի հետ Բաքվի հարաբերությունները ռազմական ոլորտում ունեն հատուկ նշանակություն արդրբեջանական բանակի համար/, այլ նաև ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ: Սասնավորապես, 2007 թ. շարունակվեց բանակի անցումը նատոյական կազմակերպական-հաստիքային կառուցվածքին, պլանավորվում էր նաև ՆԱՏՕ-ի հետ առաջին երկամյա փուլի իրականացման ավարտը և ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության նոր փաստաթղթին անցնելու գործըն-

թացը³⁵: Վերջին շրջանում նկատվում է նաև Ադրբեջանի և Ռուսաստանի ռազմական համագործակցության ակտիվացում:

Բնական է, որ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը նույնպես ստիպված էին արձագանքել Ադրբեջանի կողմից փաթաթված սպառազինության մրցավազքին: Զգալի չափով դա իրականացվում է Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության և ԴՄԴԿ-ին Հայաստանի անդամակազմում հաշվին, ինչը Հայաստանին հնարավորություն է տալիս արտոնյալ պայմաններով ձեռք բերել ռուսական ՄՍՏ: Բացի այդ, 1990-ական թվականների վերջին, Հայաստանը Զինաստանից գնեց նաև մի քանի ՈՍԶՕ WM-80 «Թայֆուն» /այդ բվում արդիականացված համակարգեր մինչև 120 կմ կրակի հեռահարությամբ/: 2004 թ. Սլովակիայից գնվել է 10 միավոր Սու-25 զրոհային ինքնաթիռ:

Վերջին տարիներին նույնպես շարունակվել է սպառազինության նոր նմուշներով հայկական բանակի համաժամանակ գործընթացը: Սասնավորապես, ըստ ԴԴ պաշտպանության նախարարության 2007 թ. ամենամյա վերին հաշվարկության /2008 թ. հունվարի 18-ին հրապարակված/, տարվա ընթացքում համալրվել է Հայաստանի ՌՈՒԻ-ի կազմը, ինչպես նաև հաշվետու շրջանում հաջողվել է ավարտին հասցնել հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծումը, որը հաջեցած է ժամանակակից հրթիռային համալիրներով /ՅՈՒԿ Ա-300/: Բացի այդ, շարունակվում է հայկական զինված ուժերի ՄՍՏ-ի արդիականացումը և առաջին գծում իրականացվում են ինժեներա-ֆինարարական ու ամրաշինական աշխատանքներ³⁶: 2007 թ. սկզբից Սերբիան հանցեց Հայաստանին ինքնաձիգների և խոշոր տրամաչափի դիպուկահար իրացանքների թվաքանակի վաճառքի ազելքը /շուրջ 2,6 մլն. դոլար/, որը տարվա ընթացքում մատակարարվեց հանրապետություն³⁷:

Զարգանում է նաև Հայաստանի ռազմատեխնիկական համագործակցությունը ՆԱՏՕ-ի որոշ երկրների հետ: Ընդ որում, բացի ավանդական գործընկերները ԱՄՆ-ն և Դուսաստանը, փորձեր են արվել ռազմատեխնիկական համագործակցություն հաստատել նաև այլ երկրների հետ: Ասանավորապես Իտալիան Հայաստանին առաջարկել է խորացնել մասնական համագործակցությունը ռազմական կրթության, ռազմական բժշկության, խաղաղապահ գործունեության ոլորտներում, ինչպես նաև օդաչուների և սակրավորների պատրաստման ոլորտում³⁸: 2007 թ. Հայաստանի վարչապետ Ս. Սարգսյանի և Ս. Սարկոզիի Փառիզում կայացած հանդիպման ժամանակ ֆրանսիացի նախագահը նախաձեռնություն ցուցաբերեց երկու երկրների միջև ռազմական համագործակցության հաստատման վերաբերյալ: Նույն տարվա հոկտեմբերին, Ռումինիայի պաշտպանության նախարար Թեոդոր Մելեշկանուի Հայաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հայ սպաներին ռումինական ռազմա-կրթական հաստատություններում ուսանելու մասին³⁹:

Ինչ վերաբերվում է Վաշինգտոնի հետ ռազմական համագործակցությանը, ապա այն ևս ակտիվորեն զարգանում է: Սասնավորապես, 2007 թ. հուլիսին ԱՄՆ կառավարությունը որոշում ընդունեց Հայաստանի պաշտպանության նախարարությանը 3 մլն. դոլար տրամադրել խաղաղապահ գումարտակի համար, որը պետք է համալրվեր ՆԱՏՕ-ի ստանդարտների համապատասխան: ԱՄՆ կողմից հանդերձանքը տրամադրվեց արտաքին ռազմական ֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Համա-

ծայն այդ ծրագրի, ընդհանուր առմամբ, Հայաստանին տրամադրվեց է 8 մլն. դոլար, որն ուղղվեց հայկական խաղաղա-պահ զուսմարտակը ՆԱՏՕ-ի ստանդարտներին համապատասխանեցնելու: 2008 թ. ամերիկյան ռազմական օգնությունը ուղղվեց նաև ամերիկացիների կողմից 2007 թ. տրամադրված դաշտային իրափոխալի տեխնիկական համայնքում⁴⁰:

Հայաստանում սեփական ռազմարդյունաբերական համալիրի /ՈԱՄ/ ստեղծման աշխատանքների շրջանակներում 2007 թ. սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ «Նեյտրոն» ՓԲԸ-ների վերազորման համաձայնագրի ստորագրումը: Հայկական մասնավոր «Գի Ջի Սոն Զոր-փորել» ընկերությունը նշված նախագծի շրջանակներում գործարանի արտադրամասերի վերանորոգման ու արտադրական հզորությունների ավելացման համար կատարեց 4,7 մլն. դոլարի ներդրում: Հիմնարարական աշխատանքներին զուգահեռ գործարաններում իրականացվեցին հաստոցների կապիտալ վերանորոգումը, տարվեցին տեխնոլոգիական գործընթացները կարգի բերելու աշխատանքներ, ստեղծվեց գնդակների ու պարկուճների արտադրության, ինչպես նաև փամփուշտների հավաքման ամբողջական ցիկլը: Տեխնոլոգիաների ու սարքավորումների արդիականացման նպատակով, ընկերությունը նախատեսում է կատարել ևս 22 մլն. դոլարի ներդրումներ, ներդնել նոր հոսքագծեր, որը հնարավորություն կտա ավելացնել ինչ-պես արտադրության ծավալները, այնպես էլ արտադրանքի տեսականի: Ընկերությունը իրաքագծեր է ավելացնելու Արևմտյան քաղաքի արտադրական տարածքներում, որով ապահովելու է արտադրության 70 մլն. արժույթայնը լրացուցիչ ծավալներ⁴¹:

4. Ռազմա-քաղաքական հավասարակշռությունը

և հակամարտող կողմերի ռազմական ներուժի վերլուծությունը

1994 թ. զինադադարի հաստատումից հետո, Ղարաբաղյան Հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերը զգալի աշխատանքներ են տարել իրենց զինված ուժերը ամրապնդելու ուղղությամբ: Այս խորցում հատկապես աչքի է ընկել Ադրբեջանը: Մասնավորապես, իրականացվել է Ադրբեջանի ՁՈՒ կառուցվածքային վերակազմակերպումը և տեխնիկական վերազինումը, ներկայումս այն մարտունակությամբ զգալիորեն գերազանցում է 1992-1994 թթ. Ղարաբաղյան պատերազմի շրջանի ադրբեջանական բանակին:

Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ռազմական ներուժի պաշտոնական վիճակագրությունը /տես աղյուսակ 5/, բնական է, չի կարող տալ ընդհանուր պատկերը, քանի որ այն առաջին հերթին հիմնվում է Հարավային Կովկասի միջազգայնորեն ճանաչված պետությունների /այսինքն, Հայաստանի և Ադրբեջանի/ կողմից տրամադրված տվյալների վրա ԵՄՁՈՒՊ-ի և վստահության ու անվտանգության ամրապնդման միջոցների մասին ԵՄՀԿ Վիեննայի փաստաթղթի շրջանակներում: Առկա ԱՌՏ-ների, ինչպես նաև զենքի ու ռազմական տեխնոլոգիաների արտահանման ու ներկրման մասին նշված պաշտոնական տվյալները միշտ չէ, որ համապատասխանում են իրականությանը, քանի որ տարածաշրջանային հակամարտությունների չկարգավորվածության պայմաններում այդ պետությունները ստիպված են թաքցնել, նվազեցնել կամ խեղաթյուրել քանակական տվյալները իրենց զինված ուժերում ԱՌՏ-ների առկայության մասին: Բացի այդ, ԵՄՁՈՒՊ-ի մեխանիզմների յուրահատկությունը և անկատարությունը մասնակից-պետությունների հնարավորություն են

տալիս նվազեցնել իրենց ՁՈՒ-երում առկա ԱՌՏ-ի իրական քանակները ձևակերպող են այն վերաբնթարկելով այլ ռազմականացված ստորաբաժանումներին /օրինակ, ոստիկանական կամ սահմանապահ զորամասերին/: Ղարաբաղի իսկ իրականում Հարավային Կովկասի պետությունները հնարավորություն են ստանում մարտական զորամասերի սպառազինության մեջ ունենալ ավելի շատ ԱՌՏ, քան դա թույլատրված է ԵՄՁՈՒՊ-ի ազգային սահմանային մակարդակներով:

Ինչպես երևում է թիվ 5 աղյուսակից, քանակական առումով ադրբեջանական բանակը զգալիորեն գերազանցում է Հայաստանի ՁՈՒ-ին, իսկ Ղարաբաղյան բանակի բերված գնահատականները հիմնված են բացառապես 1997 թ. Ադրբեջանի կողմից ԵՄՀԿ կառույցների ներկայացված տվյալների վրա, ուստի և հնարավորություն չկա դրանք ստուգելու կամ դատելու դրանց օբյեկտիվության մասին:

Այնուամենայնիվ, ներկայումս գերազանցելով հայկական զինված ուժերին անձնակազմի և ԱՌՏ-ի քանակով, Ադրբեջանի ՁՈՒ-երը զիջում են մարտունակության ընդհանուր մակարդակով: Մասնավորապես, ադրբեջանական ՁՈՒ-ին հատուկ է մեծ չափերի հասնող կաշառակերությունը, որը չի կարող չանդրադառնալ զինծառայողների բարոյա-հոգեբանական վիճակի վրա: Բացի այդ, դեռևս բավական թույլ է անձնակազմի վարժվածությունը, իսկ ադրբեջանական սպաների կողմից ձեռքբերված արևմտյան ռազմական կրթությունը և փորձը դեռ պահանջարկ չունեն զինված ուժերի ամբողջ մասշտաբով: Բնական է, որ նման ղվկարություններ ունեն ևս Հայաստանի զինված ուժերը /ինչպես նաև ԼՂՀ Պաշտպանության Բանակը/, սակայն հաշվի առնելով հետխորհրդային շրջանում ներթափառված ու սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև 1992-1994 թթ. մարտական գործողությունների բարեհաջող ելքի գործոնը հայկական կողմի համար, նշված հիմնախնդիրներն այնքան սուր չեն դրված, որքան Ադրբեջանում:

Աղյուսակ 5. Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կանոնավոր քանակների անձնակազմի և ԱՌՏ-ի հայտարարագրված թվաքանակները 2007 թ. դրությամբ⁴²

Կատեգորիան	Ադրբեջան	Հայաստան	Լեռնային Ղարաբաղ -20000
Կանոնավոր ՁՈՒ անձնակազմը	66740	43553	
Տանկեր	220	110	316
ԲԲՄ	595	240	324
Հրետանային համակարգեր	270	229	322
Մարտական ինքնաթիռներ	47	16	-
Հարվածային ուղղաթիռներ	15	8	?

Ադրբեջանի ՁՈՒ-ի առանձնահատուկ կողմն այն է /հայտարարյանի համեմատությամբ/, որ այն իր սպառազինության մեջ ունի մեծ քանակի մարտական ինքնաթիռներ ու ուղղաթիռներ: Միևնույն ժամանակ, Ադրբեջանի ՁՈՒ-ի մարտական ինքնաթիռների զգալի մասը կազմում են տարբեր

վերափոխության ՄիԳ-25 կործանիչները /30 միավորից ոչ պակաս/, որոնք հիմնականում նախատեսված են օդային մարտերի ու խորքային հետախուզության համար և այնքան էլ արժանաբերված չեն ցամաքային զորքերի դեմ գործողություններին /թեև աղբյուրացիները 1992-1994 թթ. ընթացքում Ղարաբաղում փորձեր էին ձեռնարկում նման օգտագործման համար/: Հայկական ավիացիայի անընդամ քակակազմի պայմաններում, հավանական օդային մարտերում արդեջանական ՄիԳ-25 կործանիչ-զավթիչների օգտագործումը կարող է խիստ սահմանափակ լինել:

Ասկայն, պետք է նշել, որ Ադրբեջանի ՌՈՒՄ-ի սպառազինության մեջ գտնվում են նաև Մու-25 զրոհային ինքնաթիռներ: Վերջին տարիներին դրանց քանակն ավելացել է, և այժմ Ադրբեջանը տնօրինում է ավելի քան 20 միավոր Մու-25 ինքնաթիռ, որոնք նախատեսված են ցամաքային ուժերի անմիջական կրակային աջակցության համար: Բացի այդ, Ադրբեջանի ՌՈՒՄ-ն իրենց սպառազինության մեջ ունեն Մու-24 ճակատային օմբակոծիչների որոշակի քվեաքանակ: Մու-25 զրոհային և Մու-24 օմբակոծիչ ինքնաթիռներն իրենց բավական լավ են դրսևորել մի շարք տեղային մարտերի ընթացքում և Ադրբեջանի կողմից ակտիվորեն օգտագործված են 1992-1994 թթ. ռազմական գործողությունների ժամանակ:

1990-ական թվականների երկրորդ կեսից, ՌՈՒՄ-ի կողմից ցամաքային ԶՕՊ-ը ճնշելու հնարավորությունների մեծացման նպատակով, Ադրբեջանը գնել է մեծ քանակի հակադիվերսիոն հրթիռներ իր Մու-24 և ՄիԳ-25 ինքնաթիռները համարելու համար: Ուկրաինական կողմի հետ համագործակցությամբ վերջին տարիներին Ադրբեջանում ստեղծվել է ՌՈՒՄ-ի մասնագիտացված ավիացիոն վերանորոգման և ուսումնա-վարժական կենտրոն, ինչպես նաև Ուկրաինայից մատակարարվել են արդիականացված ՄիԳ-29 կործանիչներ և L-39 ուսումնա-մարտական ինքնաթիռների նոր թվաքանակ:

Ասկայն, մարտական գործողությունների վերսկսման պարագայում Ադրբեջանի ՌՈՒՄ-ի օգտագործման արդյունավետությունը զգալիորեն նվազում է շնորհիվ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միացյալ ուժեր ԶՕՊ համակարգի: Ընդ որում, հայկական ուժերն ունեն ԶՕՊ-ի շարանված համակարգ, որն ընդգրկում է հեռահար և միջին շառավղի գործողության զենիթ-հրթիռային համալիրներ /Ս-125, Ս-75, «Կրուզ», «Կուր», մոտ շառավղի զենիթ-հրթիռային և զենիթ-իրետանային համալիրներ, ինչպես նաև տեղափոխվող զենիթ-հրթիռային համալիրներ /«Օսա», ՋՍՈՒ-23-4, «Իգլա», «Ստրելա»/: Հայկական զորքերի ԶՕՊ-ի մատակարարումը նոր ԶԶԳ-ներով, զգալի չափով հնարավորություն տվեց չեզոքացնել Ադրբեջանի թվային գերազանցությունը օդում:

Թեև չի կարելի բացառել այն, որ ներկայումս ադրբեջանական ՌՈՒՄ-ն ավելի շատ հնարավորություն ունի հայկական զինված ուժերի ԶՕՊ-ի անվան ճնշման համար /չնայած նրան, որ 1992-1994 թթ. ռազմական գործողությունների համեմատությամբ, զգալիորեն աճել է հայկական ԶՕՊ-ի ադրբեջանական ավիացիային հակազդելու ներուժը/: Հայկական ԶՕՊ-ի համար, բացի հակադիվերսիոն հրթիռները, որոշակի վտանգ կարող են ներկայացնել «Սմեդչ» ՈՍԶՕ-ների և «Լյոն»-երի, «Տոչկա-ՈՒ» ՕՏՊ-ների, Ս-46, ՉԻ36 «Գիացիտ» և 203-մմ ԱՄՈՒ «Պիոն» հեռահար իրետանային համակարգերի հրթիռ-իրետանային համակարծակի հարվածները, ինչպես նաև ադրբեջանական դիվերսիոն խմբերի գործողությունները: Ադրբեջանական բանակի սպառազինության մեջ խոսքից անկախ արտադ-

րության անօդաչու հետախույզ-ինքնաթիռների /ԲՊԼԱ/ հայտնվելը /«Aerostar» և Hermes-450 տեսակի, ինչպես նաև փոքր շառավղով գործողության «Orbiter» տեսակի տակտիկական ԲՊԼԱ-ներ/ ճուլճուլան կարող է Ղարաբաղյան շակամարտության գոտում հայկական ԶՕՊ-ի համար հիմնախնդիրներ ստեղծել՝ ինչպես հայկական ԶԶԳ-ների դիրքերի հայտնաբերման հետախուզական հնարավորությունների ավելացման, այնպես էլ ադրբեջանական բանակի կողմից առաջին զանգվածային հարվածի պարագայում, Ղարաբաղի երկնքում իրական և Լեռն օդային փրայմերի քանակի ավելացման պատճառով: Նշված հանգամանքները հեռանկարում կարող են նվազեցնել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ԶՕՊ-ի արդյունավետությունը:

Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի տեղանքի բարդ լեռնային մեկնիքը, Ադրբեջանը կարող է մեծ արդյունավետություն օգտագործել Մի-24 հարվածային ուղղաթիռները, որոնք բանակը վերջին տարիներին զգալիորեն ավելացել է /ներկայումս ադրբեջանական բանակի սպառազինության մեջ կա շուրջ 30 միավոր Մի-24 հարվածային ուղղաթիռ, այդ թվում Մի-24Պ և Մի-24Բ վերափոխված տարբերակներ/: Ադրբեջանական բանակի Մի-24 ուղղաթիռների մեծ մասը արդիականացվել է ուկրաինացի մասնագետների օգնությամբ հարավաֆրիկյան ԱԵ ընկերության «Super Hind Mk-III» ծրագրի շրջանակներում: Ասկայն ադրբեջանցիների կողմից հարվածային ուղղաթիռների զանգվածային օգտագործումը նույնպես ստանձնակի որակական գերազանցություն չի ստեղծի ղարաբաղյան ուղղությամբ հայկական ցամաքային զորքերի նկատմամբ:

Այսպիսով, ինչպես և 1992-1994 թթ. պատերազմի ընթացքում, Ղարաբաղում հավանական մարտական գործողությունների ելքը որոշվելու է գետնի վրա, սակայն հիետանու և հորիզոնի համակարգերի ռեդի զգալի ավելացմամբ: Մարտական տեխնիկայի բնական ծերացումը /օրինակ, Ադրբեջանի սպառազինության մեջ գտնվում են դեռ 1950-ական թվականների վերջին արտադրված մեծ քանակի Տ-55 սնակեր, որոնք ղարաբաղյան պատերազմի տարիներին գնվել են Ուկրաինայից/ հանգեցրել է նրան, որ ադրբեջանական բանակի ՍՏՏ-ի զգալի մասը կապիտալ վերանորոգման կամ ամբողջությամբ վերափոխման կարիք ունի: Հաշվի առնելով այն, որ ադրբեջանական բանակի ՍՏՏ հիմնականում հանդիսանում է ռուսական/տորիդային, արևելաեվրոպական կամ չինական արտադրության, Ադրբեջանի ՁՈՒ-երը Լաչակ կախված են պահեստամասերի ու համալիր զույգերի ներկրումից: Բնական է, որ նմանատիպ խնդրի են բախվում նաև հայկական զինված ուժերը, սակայն ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության և Ռուսաստանի հետ ռազմա-քաղաքական դաշինքի շնորհիվ, հայկական բանակի ՍՏՏ-ի նորոգման ու համալրման խնդիրներն ավելի արդյունավետորեն են լուծվում: Կարևոր նշանակություն ունի նաև այն, որ հենց ռուսաստանյան ՌԱԶ-ի ձեռնարկություններն են հանդիսանում հայկական բանակի սպառազինության մեջ գտնվող ՍՏՏ-ի հիմնական մասի մշակողներն ու արտադրողները: Այն դեպքում, երբ ադրբեջանական բանակի խորհրդային/ռուսական արտադրության սպառազինության նորոգումն ու համալրումը հիմնականում իրականացվում է Ուկրաինայում, որն ռազմարդյունաբերական համալիրը գլխավորապես իրականացրում է ԽՄԶՄ-ում կամ ներկայիս ռուսական ձեռնարկություններում արտադրված ռազմական տեխնիկայի «երկրորդական» սպասարկում /առնալի ոչ լիցենզիոն³³:

Արդրեջանի ՁՈՒ-երի և ԼՂՀ ու ՀՀ զինված ուժերի մարտունակության համեմատական վերլուծության ժամանակ կարելի է նշել, որ քստ փորձագետների գնահատականների դարաբաշխյան բանակը հանդիսանում է համեմատաբար հավաքը, շարժունը, պրոֆեսիոնալ սպայական կազմ ունեցողը, որի միջին և բարձր օդակները գործնականում ամբողջովին կազմված են 1992-1994 թթ. մարտական գործողությունների վետերաններին: ԼՂՀ Պաշտպանության Բանակը /ՊԲ/ տեխնիկայես բավական լավ է հագեցված, այդ թվում նաև ռազմավարային ՍՈՏ-ով, որը դետաբաշխյան մասանք արդիականացվել է: ՊԲ-ի կազմակերպչական կառուցվածքը նրա ոչ մեծ տարաբաժանումների հնարավորություն է տալիս գործել շարժուն և արդյունավետ կերպով, հատկապես պաշտպանական մարտերում և լեռնային տեղանքում: Բացի այդ, ինչպես ցույց են տվել ԼՂՀ-ի տարածքում պարբերաբար իրականացվող զինավարժությունների արդյունքները, ռազմական գործողությունների սկսման դեպքում Ղարաբաղի արևմտյան սեռի բնակչության զորահավաքը կազմում է գործնականում 100 տոկոս: դա հնարավորություն է տալիս ոչ միայն ավելացնել ԼՂՀ Պաշտպանության Բանակի թվականը, այլ նաև որակապես այն ամրապնդել դարաբաշխյան պատերազմի վետերանների հաշվին, որոնք ունեն մարտական գործողությունների վարման հարուստ փորձ և լավ ծանրք են տեղանքին: Դա հաստատում են նաև ԼՂՀ ՊԲ-ի հրամանատարա-չտարային և դաշտային զորավարժությունների արդյունքները: Բնական է, որ այս փաստը չի կարող վերացնել մարդկային ռեսուրսներում առկա զգալի անհամասնակցությունը, և մարտական գործողությունների վերսկսման պարագայում արդրեջանական բանակը կշարունակի քանակային գերակշռություն ունենալ հայաստանյան ու դարաբաշխյան զորքերի նկատմամբ, սակայն Պաշտպանության Բանակի կազմում զգալի թվով վետերանների ներկայության գործոնը որակապես կարող է չեզոքացնել նշված տարբերությունը: Որպես այս փաստի հաստատում բավական է բերել 2008 թ. մարտի 3-4-ին ԼՂՀ Մարդակերտի շրջանի Լեվոնաթյուս գյուղի մոտ տեղի ունեցած մարտի արդյունքները, որը Ղարաբաղում դիմակայման գծում հանդիսացավ առավել մասշտաբային մարտական բախումը 1994 թ. զինադադարի կնքումից հետո⁴⁴:

Ինչպես արդեն նշվել է, դարաբաշխյան բանակի թույլ կողմը մարտական ավիացիայի բացակայությունն է /բացի Մի-24 հարվածային ուղղաթիռները/, ինչը տեսականորեն հնարավորություն է տալիս վարել զուգակցված ու լայնամասշտաբ հարձակողական գործողություններ, հատկապես Բուժ Ղարաբաղի տարածքից դուրս գտնվող հարթավայրային տեղանքում: Չնայած մարտական ինքնաթիռների բացակայությանը և ՁՀՀ-երին ու ԱԿԿ-ին ուղղված արդրեջանական բանակի առաջին հարվածներից հետո, արդյունավետ «կենսակայունության» պարագայում, ԼՂՀ Պաշտպանության Բանակում առկա ՀՕՊ միջոցները սկզբունքորեն կարող են մեծ արդյունավետությամբ չեզոքացնել Արդրեջանի ՈՕՈՒ-ի գերազանցությունը մարտական գործողությունների վերսկսման դեպքում:

Ղարաբաղյան կողմն ընդհանուր առմամբ պատերազմի սկզբնական փուլում հարձակողական գործողություններ չի պլանավորում, քանի որ ներկայիս պաշտպանական դիրքերը նրան հնարավորություն են տալիս փոքր տեղերով ավելի արդյունավետ պաշտպանություն վարել: Գնականային գծի երկայնքով տեղեկված ամրաշինական դիրքերը, որոնց չինարաբաշխյան վրա հայկական կողմը զգալի նյութական ռեսուրսներ է ծախսել,

ռազմական գործողությունների դեպքում պետք է մեղմեն հարձակվող արդրեջանական բանակի առաջին հարվածը և նրա անձնակազմին ու տեխնիկային շոշափելի կորուստ պատճառեն: Մտաջին հարվածը հետ մղելուց հետո հնարավոր են նաև դարաբաշխյան կողմի հակահարձակողական ակտիվ գործողություններ հետազայում դուրս գալով օպերատիվ տարածք, որը հաջողության դեպքում կարող է վտանգի տակ հնել Արդրեջանի մի շարք կենսականորեն կարևոր շրջանները:

Միասնական պետք է հաշվի առնել նաև այն, որ Արդրեջանի կողմից ագրեսիայի պարագայում դարաբաշխյան բանակի պատասխան հրթիռ-հրետանային հարվածները /անկախ մարտական գործողությունների ընդհանուր զարգացումից և արդյունքներից/ կարող են այն սատիճան նախան վնաս հասցնել Արդրեջանի տարածքում տեղակայված էներգետիկ և հաղորդակցման օբյեկտներին, որ դա երկարաժամկետ հեռանկարում բացասականորեն կանդրադառնա Արդրեջանի տնտեսական ու քաղաքական զարգացման վրա: Հայաստանի Հանրապետության ՁՈՒ հրթիռ-հրետանային ներուժը զգալիորեն գերազանցում է դարաբաշխյան հրետանու նմանատիպ հնարավորությունները: Մասնավորապես, հայկական բանակի սպառազինության մեջ գտնվում են չինական արտադրության ՈՍՁՈ WM-80 «Թայֆուն»-ը /այդ թվում մինչև 120 կմ կրակի հեռավորություն արդիականացված համապարզորը/, ինչպես նաև 9472 «Էլբրուս» օպերատիվ-տակտիկական հրթիռային համալիրները /որոնք, քստ խորհրդային ռազմական տեխնիկայի արևմտյան համակարգով նշման, ավելի հայտնի են «Scud-B» անվամբ/: Տվյալ օպերատիվ-տակտիկական հրթիռային համալիրները /8 միավոր 9Պ117U կրակային համասարքեր և 32 միավոր Պ-17 հրթիռներ/ խորհրդային ռազմական գույքի բաժանման գործընթացի շրջանակներում, Հայաստանին են փոխանցվել 7-րդ զվարդիական բանակի 176-րդ հրթիռային բրիգադի կազմից: Պ-17 հրթիռներն ունեն մինչև 300 կմ կրակի հեռավորություն մեծ տարածությունների վրա կրակի մինչև 0,6 կմ հավանական շրջանային շեղմամբ: Ըստ ռազմական փորձագետների գնահատականների, Արդրեջանի կողմից մարտական գործողությունների ծավալման և ԼՂՀ ու ՀՀ բնակավայրերի գնդակործանման դեպքում, հայկական բանակի 9472 ՕՏՈ-ները և ՈՍՁՈ WM-80-ները կարող են արդյունավետորեն օգտագործվել արդրեջանական կարևորագույն ռազմական, կոմունիկացիոն և ռազմադրոյունաբերական օբյեկտների դեմ, այդ թվում նաև Արդրեջանի տարածքի խորքում տեղակայված: Իսկ հավանաբարտկացային պայթյառի համար հայկական կողմը կարող է օգտագործել ինչպես 152-մմ քաղաքային 2Ա36 «Գիսցինո» հրանոթները /ոչ պակաս, քան 24 միավոր/, այնպես էլ մեծ քանակի 152-մմ ՍԱՈՒ 2Ա3 «Ակացիաները» և 122-մմ ՍԱՈՒ 2Ա1 «Գվոդիկաները», որոնք թվականոր Հայաստանի ՁՈՒ-երում և Լեռնային Ղարաբաղի ՊԲ-ում տվյալ պահին ավելի են, քան արդրեջանական բանակում:

Փորձագետների կողմից ՀՀ Ձինված ուժերը ամենամարտունակ են գնահատվում ամբողջ Հարավային Կովկասում: Հայկական բանակի գլխավոր հարվածային ուժը շարունակում են մնալ ցամաքային զորքերը: ՈՕՈՒ-ն հայկական բանակի մարտական ներուժում դեռ փոր-ինչ աստանափակ դեր ունեն, թեև 2004 թ. Սյուվախայում գնվել է Սու-25 գրոհային ինքնաթիռների զգալի քվաքանակ, և ներկայումս հայկական ավիացիայի կազմում կան տարբեր վերափոխումների առկազն 15 միավոր Սու-25 գրոհայիններ: Չնայած ՀՀ Պաշտպանության նախարարության ներկայա-

ցուցիչների հայտարարություններն այն մասին, որ դա շահավետ գործարք էր, առանց կործանիչների պաշտպանության խիստ տարակուսելի է գրոհային ավիացիայի օգտագործման արդյունավետությունը: Պետք է հաշվի առնել, որ Ադրբեջանը համեմատաբար ավելի մեծ քանակի կործանիչների է տիրապետում /այդ թվում նաև Ուկրաինայում գնված ՄիԳ-29 ինքնաթիռները/ և հույս ունի Ռուսաստանից ԴՊՊ-ի նոր քանակների մատակարարման կամ հենրի արդիականացման /այդ թվում, հեռահար շտապփոխ ազդեցության Ա-200 ԶԳԳ-ները/: Դրանից ելնելով, հայկական ավիացիայի օգտագործումը ավելի շուտ կկրի տեղային բնույթ⁴⁵: Մինևույն ժամանակ Ֆայաստանի ԴՊՊ համակարգը, որը համատեղելի է իր տարածքում տեղակայված ռուսական 102-րդ ռազմական բազայի ՌՕՈՒ-ին և ԴՊՊ-ին /ՄիԳ-29 ինքնաթիռների տակադրիվան և Ա-300Բ ԶԳԳ-ների 2 դիվիզիոնը/, հնարավորություն է տալիս ծածկել երկրի ամբողջ օդային տարածքը:

Տեղային բախումների վերջին փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ճշշող գերազանցությունը օդում ի վիճակի չէ երաշխավորել ցամաքային զորքերի հաջողությունը: Դա ցայտուն կերպով ցույց տվեց 2006 թ. ամռանը Իսրայելի ներխուժումը Լիբանան: Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանի ամենաուժեղ իսրայելական ՌՕՈՒ-ները, որոնք հազեցած էին ժամանակակից ինքնաթիռներով և իրենց սպառազինության մեջ ունեին զենքի բարձր ճշտության համակարգեր, այդպես էլ չկարողացան կտրել փաստորեն «Դեզոլվախի» անվանում ջրկատների դիմադրությունը, որոնք ԴՊՊ-ը համարված էր միայն տեղափոխվող ԶԳԳ-ներով: Պետք է հաշվի առնել նաև այն, որ մարտական գործողությունների վերսկսման պարագայում Ադրբեջանը ի վիճակի չէ, նույնիսկ հիպոթետիկ ձևով, օդում հասնել այնպիսի բացարձակ ու անպատիժ գերազանցության, որն ուներ իսրայելական ՌՕՈՒ-ն 2006 թ. լիբանանյան գործողությունների ժամանակ⁴⁶: Ադրբեջանական ՌՕՈՒ-ն ունի 30 միավորից փոքր-ինչ ավելի մարտական ինքնաթիռ, որոնք մասնագիտացած են ցամաքային թիրախներին ռումբ-զրոհային հարվածներ հասցնելու մեջ /Մու-20, Մու-24 և Մու-25 ինքնաթիռներ/: Ցամաքային թիրախներին հարվածելու սահմանափակ խնդիրներ կարող են լուծել նաև Ուկրաինայում մասամբ արդիականացված ՄիԳ-29 կործանիչները⁴⁷: Մինևույն ժամանակ թեթև ուսումնա-վարժական Լ-29 և Լ-39 ինքնաթիռները, որոնք մեծ քանակություններ կան Ադրբեջանական ՌՕՈՒ սպառազինության մեջ, ինչպես ցույց տվեց արարների կողմից դրանց մարտական օգտագործման փորձը /ինչպես և դրանց իսրայելական նմանակներից/ 1967 թ. և 1973 թ. պատերազմների ընթացքում, չեն կարող առանձնահատուկ դերակատարություն ունենալ մարտական գործողությունների ընթացքում՝ բշմամու ԴՊՊ-ի նույնիսկ նվազագույն հազեցվածության պայմաններում /թեև ոչ միայն տեղափոխվող ԶԳԳ-ների և զենիթային հրետանու առկայությունը:

5. Դավանական պատերազմի իրողությունները.

Նպատակների ու հայեցակարգերի անհամաչափություն

Այսպիսով, մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ Ղարաբաղյան Դավանարության գոտում մարտական գործողությունների վերսկսման պարագայում դրանք կրկին ընթանալու են հիմնականում դիմակայող կողմերի ցամաքային ուժերի մասնակցությամբ, որոնք հազեցած կլինեն գրահատիվիկայի և հրետանու մեծ քանակներով: Դա մեծացնում է ներ-

կայիս ճակատի երկայնքով տեղակայված ղարաբաղյան բանակի պաշտպանության ամրաշինությունների նշանակությունը ու արդյունավետությունը: Բնակյա է, որ, ինչպես ցույց է տալիս պատերազմների պատմությունը, Լեռնային Ղարաբաղի ամրաշինությունները չեն կարող փրկություն հանդիսանալ ծավալուն մարտական գործողությունների սկսման պարագայում, և ղարաբաղյան բանակը չի կարող այդ ամրություններում պարզապես «սպասել» պատերազմի ավարտին: Սակայն, դաշտային ամրությունների և երկարաժամկետ շինությունների խելացի համատեղումը /որը հնարավորություն է տալիս զգալիորեն նվազեցնել հանկարծակիության էֆեկտը և ժամանակ չափել ղարաբաղյան բանակի մոբիլիզացիոն ծավալման համար/ ակտիվ պաշտպանության հետ, հույսեր չի տալիս ադրբեջանական բանակին Ղարաբաղում արագ հաջողության հասնելու կամ «բլիցկրիգի» համար:

Մյուս կողմից, վերջին շրջանում բազմաթիվ ադրբեջանական բաղաբազաններ և ռազմական փորձագետներ, ներկա պայմաններում Ղարաբաղում անիրականանալի «բլիցկրիգի» գաղափարի փոխարեն, առաջ են բաշում հավանական մարտական գործողություններ վարելու այլ հայեցակարգ այսպես կոչված «սահմանափակ սեփանջի» գաղափարը: Այս հայեցակարգի ելություն այն է, որ Ադրբեջանի ռազմականացումը ու մեծ քանակի սպառազինության ձեռքբերումից հետո, Բաքուն իբր իրական հույսեր է ձեռք բերում ղարաբաղյան ճակատում հաստատված ռազմական հավասարակշռությունը փոխելու համար: Մի շարք ադրբեջանական փորձագետներ գտնում են, որ այս դեպքում ադրբեջանական կինոակ կլինի Ղարաբաղում ռազմական օպերացիա սկսելու և կարող է ազատագրել թեև ուղղորդ հարաբերության տարածքներ, որոնք այժմ գտնվում են ԼՂՀ Պաշտպանության Բանակի վերահսկողության տակ /առաջին հերթին Աղզամի և Ֆիզուլու շրջանները/: Ինչպես պնդում են ադրբեջանական փորձագետներն ու քաղաքագետները, Պաշտպան Ղարաբաղի այդ երկու շրջանները զբաղեցնելու միջոցով, Բաքուն կարող է շոշափելի հոգեբանական և ռազմա-քաղաքական առավելություններ ստանալ Ստեփանակերտի և Երևանի նկատմամբ, բանակցային գործընթացը շարունակել իր համար ավելի շահավետ դիրքերից:

Տվյալ հայեցակարգի տրամաբանական շարունակությունն է առաջ բաշված այն գաղափարը, որ Ղարաբաղում «բլիցկրիգի» համար հնարավորությունների բացակայության պայմաններում ադրբեջանական բանակը հեռահար ծանր հրետանու, մեծ տրամաչափի ՌՍԶՈՒ-ի և օպերատիվ-ակտիվական հրթիռների միջոցով /ինչպես նաև իր ավիացիայի մարտական հնարավորությունների ավելացման, անօդայու ինքնաթիռների ու օդային հետախուզման ժամանակակից միջոցների ձեռքբերման օգնությամբ/ կարող են Դայաստանին և Ղարաբաղին երկարատև «խրամատային» ու «դիստանցիոն» հյուծիչ պատերազմ պարտադրել⁴⁸: Ենթադրվում է, որ Դայաստանի ու Ղարաբաղի բնակավայրերի ու մարտական դիրքերի տևական հրթիռ-հրետանային ու ավիացիոն հարվածների ընթացքում, Բաքուն կարող է հայկական ղեկավարությանը ստիպել զգալի զիջումների գնալու, այդպես էլ չսկսելով պաշտպանական գծերի ակտիվ գրոհը և չօգտագործելով զգալի ցամաքային ուժեր: Այսինքն, կարող է մասնակիորեն լուծել Ղարաբաղյան Դիմախնդիրը. ըստ որում մարտական գործողությունների վերսկսման պարագայում չկրելով մարդկային ու նյութական մեծ կորուստներ:

Մասնավորապես, արդրեցանական փորձագետները նաև պնդում են, որ կիսաշրջափակման պայմաններում գտնվող Հայաստանը, որը կախված է վրաստանի և Իրանի կոնունիկացիաներից, վերսկսված ռազմական գործողությունների պայմաններում չի կարող կազմակերպել իր գինված ուժերի և ընդհանրապես երկրի բնակչության երկարա-ժամկետ ապահովումը անհրաժեշտ ամենով: Սակայն պետք է հաշվի առնել, որ նմանատիպ և նույնիսկ ավելի ծանր տրանսպորտային շրջափակման իրավիճակ էր Հայաստանի և Ղարաբաղի համար դեռ 1992-1994 թթ. մարտական գործողությունների ժամանակ, ինչը հատուկ ազդեցություն չունեցավ Ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի համար բարենպաստ ելքի վրա:

Կարծում ենք, ընդհանուր առմամբ «դիստանցիոն» պատերազմի տվյալ հայեցակարգը, որն առաջին հայացքից թե ռազմական, և թե առավել ևս քաղաքական տեսանկյունից զգալի առավելություններ է խոստանում Ադրբեջանին, նույնպես եական թերություններ ունի: Ռազմական տեսանկյունից հրթիռ-իրետանային և ռումբային հարվածներով ուղեկցվող տևական «դիստանցիոն» պատերազմը ընդունելի է ինչպես հայկական կողմի, այնպես էլ ադրբեջանական կողմի համար: Մասնավորապես, շատ հնարավոր է, որ որոշ պարամետրերով ներկայումս ադրբեջանական բանակը որոշակի առավելություն ունի /մեծ տրամաչափի ՌԱՋՌ-ի և մարտական ավիացիայի մեծ քանակներ/, սակայն Ադրբեջան ավելի խոցելի է հայկական զորքի կողմից պատասխան հրթիռ-իրետանային հարվածների համար, առաջին հերթին զգալի նամթագալային համալիրի առկայության, նաև՛քի արդյունահանման համապատասխան ծավալների, ածխաջրածնային հումքի վերամշակման ու տեղափոխման պատճառով, որը կազմում է ադրբեջանական արդյունաբերության շուրջ 80 տոկոսը: Բացի այդ, հայկական բանակի սպառազինությունը մեզ գտնվող ՌԱՋՌ-ի և ՕՏՊ-ի գործողության շառավիղը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի աշխարհագրական դիրքը հնարավորություն են տալիս հարվածներ հասցնել Ադրբեջանի առավել խոշոր քաղաքների ու արդյունաբերական կենտրոններին, այդ թվում նաև մայրաքաղաքին:

Վերջապես, պատերազմի վերսկսումը, նախաձեռնող ու հարձակվող կողմի համար, Ղարաբաղում տևական մարտական գործողությունների ելքը կունենա ավելի զգալի ռազմական ու քաղաքական բացասական հետևանքներ, քան պաշտպանվող կողմի համար: Ինչպես արդեն նշվել էր, մանատիպ իրավիճակ էր ստեղծվել նաև, օրինակ, տվյալ պահին իբրև «դիստանցիոն» տեղային պատերազմի ժամանակ, 2006 թ. ամռանը Լիբանանում: Խոսելով պաշտպանվող կողմի ժամանակային գործունի առավելությունների մասին, ինչպես դիպուկ նկատել է ռազմական դասական գործիչը «այն ամբողջ ժամանակը, որը չօգտագործված է ընթանում, դրվում է պաշտպանվող կողմի կշռաթափ վրա»⁴⁹: Իսկ Հայաստանում և Ղարաբաղում կուտակված սպառազինությունն ու նյութական պաշարները հնարավորություն են տալիս բավական տևական մարտական գործողություններ վարել մինչև Հայաստանի անվտանգության ապահովման այնպիսի ռազմա-քաղաքական գործոնների գործադրումը, որպիսին են 102-րդ ռուսական բազայի առկայությունը, երկրի անդամակցությունը ՉՊԿ-ին և ԱՄՆ-ի ու առաջատար եվրոպական երկրների հետ Հայաստանի փոխլրացող համագործակցությունը:

Լեռնային Ղարաբաղում տևական ռազմական գործողությունների սահմանափակման քաղաքական գործոններից առավել էականը մեզ կանա-

բար կլինի արտաքին քաղաքականը, այսինքն արտաքին դիվալատորների ու համաշխարհային առաջատար տերությունների դիրքորոշումները: Համաշխարհային հանրությունը պարզապես թույլ չի տա կողմերին տևական /բազմաթիվ շաբաթներ, առավել ևս ամիսներ տևողությամբ/ ռազմական գործողություններ մղել աշխարհի համար այդպիսի կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում, նաև՛քի ու զագի զգալի պաշարներին մոտակա տարածքում և առաջատար տերությունների շահերի ու հակառակությունների բախման կետում:

Բացի այդ, մարտական գործողությունների ծավալման քաղաքական հետևանքները և դրանց ելքի տևական անորոշությունը /բացառությամբ համաձայնարի հանրության և առաջատար տերությունների կայուն բացասական արձագանքի/ Ադրբեջանի ներկայիս քաղաքական վերնախավի համար, որի իշխանություններին օրինակահանություն է հիմնականում կախված է ուժային ճանապարհով Ղարաբաղի լիարժեք վերադարձման խոստումներից, ավելի զգալի կլինի, քան Լեռնային Ղարաբաղի կամ նույնիսկ Հայաստանի համար: Ստեփանակերտի և Բաքվի միջև գոյություն ունի նպատակների հտտակ «անհամաչափություն», կամ այլ խոսքով՝ Ղարաբաղի և Ադրբեջանի հասարակության կողմից վերաբերմունքի ու ընկալման «անհամաչափություն» հավանական մարտական գործողությունների նկատմամբ: Ինչպես ցույց է տալիս ժամանակակից տեղային բախումների մեծամասնության փորձը, ռազմական գործողությունների հաջողությունը հաճախ կախված է ոչ այնքան և ոչ միայն դիմակայող կողմերի ուժային ու ռազմա-տեխնիկական ներուժի քանակական հարաբերակցությունից, այլ նաև հաղթանակի ռազմական ու ոչ ռազմական գործոնների փոխգործակցությունից քաղաքական, հոգեբանական ու զաղափարական, մասնավորապես, կողմերի ունակությունից հասարակության մոթիլիզացման ու երկրի բնակչության բոլոր խավերի կողմից ռազմական գործողությունների իրական օրինականացման համար⁵⁰: Այս առումով ժամանակային գործողը ևս հիմնականներից է, քանի որ ռեվանշիստական մարտական գործողությունների վերսկսման առավել հավանական նախաձեռնող Ադրբեջանը, հայտնի պատճառներով, կբախվի ռազմական գործողությունների «օրինականացման» ավելի լուրջ սահմանափակումների հետ, քան Ղարաբաղի հասարակությունն ու բնակչությունը, որոնց համար այդ պատերազմը կլինի ոչ այլ ինչ, քան պայքար գոյության համար:

Ինչպես ցույց է տալիս գաղութատիրական պատերազմների պատմությունը և նախկին «մետրոպոլիսների» ու ջնհանգված պատական ձևավորումների միջև ներկայիս դիմակայությունը /կամ դե-ֆակտո պետությունների/, դիմակայող կողմերի կամքի ու նպատակների անհամաչափությունը հանգեցնում է մի իրավիճակի, որում ըստ հայտնի արևմտյան փորձագետի արտահայտության՝ «դե-ֆակտո պետությունները երկարատև խաղ են խաղում, որում չպարտվելը հաղթանակ է նշանակում»⁵¹: Լեռնային Ղարաբաղը կարող է նաև չհաղթանակի Ադրբեջանի հետ հերթական, այս անգամ արդեն «խրամատային» կամ «դիստանցիոն» պատերազմում, սակայն նույնիսկ մնան ելքի դեպքում, նա այդ պատերազմում նաև տանուլ չի տա: Իսկ ահա ադրբեջանական ռազմա-քաղաքական ղեկավարության համար, որն արդեն 14 տարի մշտապես ռեվանշի և ռազմական ճանապարհով Ղարաբաղը վերադարձնելու կոչեր է անում, մարտական գործողությունների ցանկացած ելքը, բացի Լեռնային Ղարաբաղի տարածքի

նկատմամբ լիարժեք հսկողության ձեռքբերումը, կնշանակի ոչ միայն քաղաքական, այլ նաև ռազմական պարտություն՝ հաջողորդ անդրաձեռնի հետևանքներով, այդ թվում նաև երկրի իշխող վերնախավի համար»⁵²:

Կարծում ենք, որ իրական իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել հայկական կողմից տարվող հակառակորդի զսպման քաղաքականության դերն ու հնարավորությունները: Հայ-արդրեջանական դիմակայման գոտում, սպառազինության մրցավազքի հերթական պատույտի հետ զուգընթաց, նվազում է մարտական գործողությունների վերսկսման հավանականությունը: Այս իրավիճակը թեև փորձից հակասական է, սակայն լավ հայտնի է դեռ Մառը պատերազմի տարիներից և լավ ուսումնասիրված է քաղաքագիտության մեջ: Գործի է դրվում այսպես կոչված փոխադարձ զսպման մեխանիզմը, երբ հակամարտության մեջ ներգրավված կողմերի ռազմական ներուժի բարձր մակարդակի պատճառով, ռազմական գործողությունները սկսած երկրի համար մարտական գործողությունների սկսման ցանկացած օգուտ չի կարող արդարացնել իր կողմից կրած մարդկային և նյութական կորուստները, չխոսելով նույնիսկ միջազգային հանրության բացասական արձագանքի հետևանքով առաջացած քաղաքական հետևանքների մասին: Ռազմատարաբանագիական հետազոտությունների շրջանակներում մշակված տեսությունների համաձայն, որոնք հաստատվում են վերջին տասնամյակների ընթացքում միջազգային ու տարածաշրջանային անվտանգության պաշտպանման փորձով, զսպման տակ հասկանում են մի կողմի անցանկալի ռազմա-քաղաքական գործողությունների կանխումը մյուսի նկատմամբ /որն իր ուժային ներուժի քանակով սովորաբար գիշում է առաջինին/⁵³ նրան անհանդուրժելի վնաս հասցնելու սպառնալիքի միջոցով:

Կրկնենք, որ իրավիճակը ամենինքն նորը չէ և որոշակի առումով ամրագրում է առջը պատերազմի և հերթափոխությունների երկրենտ դիմակայման ժամանակների միտումները, սակայն այն ժամանակ խոսքը գնում էր միջուկային զենքի զսպող ներուժի մասին: Իսկ տվյալ պարագայում խոսքը վերաբերվում է տվորական սպառազինության կոնվենցիոնալ զսպմանը, սակայն պետք է հաշվի առնել այն, որ սպառազինության մրցավազքի արդյունքում հայկական և արդրեջանական կողմերի ռազմական ներուժերը համեմատելի չեն, 1990-ական թվականների ռազմական գործողությունների ժամանակաշրջանի հետ: Առավել ևս, որ կողմերի սպառազինության մեջ գտնվող որոշ համակարգեր, օրինակ ՌՍՀՈ 9ՍՁ2 «Սմեթը» և «Լոռ»-ը արդրեջանցիների մոտ և ՎՄ-80 «Թայֆունը» հայերի մոտ, իրենց ոչնչացնող հատկություններով սերտորեն մոտենում են տակտիկական միջուկային զենքին: Նմանատիպ քաղաքական-հոգեբանական և ռազմական նշանակություն կարող է ունենալ նաև կողմերի կողմից օպերատիվ-տակտիկական հրթիռային համալիրների օգտագործումը հայերի կողմից 9472 «էլբրուս» և արդրեջանցիների կողմից 9479-1 «Տոկչա-Ու»-ն: Մեծ է նաև այն հավանականությունը, որ մարտական գործողությունների վերսկսման դեպքում մարտերի առաջին իսկ օրը հակամարտող կողմերի զինված ուժերի և խաղաղ բնակչության կորուստները կկազմեն ոչ թե հազարներ, այլ տասնյակ հազարներ: Առավել ևս, որ ռազմատեխնիկական տեսանկյունից հիմքեր չկան Ղարաբաղում արդրեջանական արագ «բլիցկրիզի» համար, այլ հակառակը, վերսկսման դեպքում մարտական գործողությունները ավելի հավանական է, որ կընթանան 1980-1988 թթ. իրան-իրաքյան տևական «խրամատային»

պատերազմի սցենարով: Այս դեպքում, ձգձգվող մարտական գործողությունները թե ռազմական, թե քաղաքական տեսանկյունից /հատկապես միջազգային հանրության աչքերում/< կործանաբար կլինեն, առաջին հերթին դրանց վերսկսման նախաձեռնողի համար:

Այսպիսով, որքան էլ հակասական է հնչում, այնուամենայնիվ Ղարաբաղյան Հակամարտության գոտում սպառազինության փոխադարձ մրցավազքը իրականում տվյալ փուլում բարձրացնում է մարտական գործողությունների վերսկսման շեղբը: Դրան նվազեցնում է դրա հավանականությունը: Դա իհարկե մարտական գործողությունների չվերսկսման լիարժեք երաշխիք չի հանդիսանում, սակայն դրանք համար լուրջ սահմանափակիչներ է ստեղծում: Արդրեջանի կողմից սպառազինության գնումների շարունակումը իրականում սկզբունքորեն կարող է որոշ չափով փոխել ռազմական հավասարակշռությունը, սակայն Ղարաբաղյան Հակամարտության գոտում կայունությունը կպահպանվի արդեն նոր հավասարակշռության հաշվին, որը կարելի է անվանել «սպառնալիքների հավասարակշռություն», որը կողմերին դեռ երկար ժամանակ կստիպի պահպանել փխրուն և անկայուն խաղաղությունը: Ինչպես նշում էր հայտնի անգլիացի ռազմական տեսաբան ու պատմաբան Քեյլի Լիդդել-Պարտը. «քանակացած պատերազմի նպատակը խաղաղությունն է, ավելի լավը, քան մինչև պատերազմը էր /թեկուզ գուտ ձեռ տեսանկյունից/⁵⁴: Այն պայմաններում, երբ դիմակայող կողմը կզիտակցի, որ Ղարաբաղում մարտական գործողությունների ցանկացած ելքի դեպքում նրա կորուստները կկազմեն տասնյակ հազարավոր մարդիկ և նպաստական նյութական ու տնտեսական վնասներ կկրեն, ապա նա մեկ անգամ չէ որ լավ կմտածի մինչև հակամարտության վերսկսման որոշում կայացնելը: Եթե Արդրեջանը որոշի վերսկսել մարտական գործողությունները, ապա հազիվ թե արդյունքում նա ավելի լավ խաղաղություն ստանա, քան մինչպատերազմականն էր: Ինչպես նշում է անգլիացի դասական ռազմագետը. «Իր իրական իմաստով հաղթանակը նշանակում է, որ խաղաղության հետպատերազմական կառուցվածքը և ժողովրդի նյութական վիճակը ավելի բարվոք են, քան մինչև պատերազմը: Նման հաղթանակ հնարավոր է միայն այն դեպքում, երբ ձեռք է բերվում արագ արդյունք, կամ եթե տևական ջանքերը տնտեսվարությամբ են ծախսվում երկրի ռեսուրսների համապատասխան: Նպատակը պետք է համապատասխանի միջոցներին»⁵⁴:

Այս ամենից ելնելով, առանց հստակ պատասխանի հարց է առաջանում. Արդրեջանի համար որքանով է արդյունավետ ու ազդեցիկ իրապես դեռ «հետաձգված ռեվանշի» վրա անվերջ սպառազինության մրցավազքի պայմաններում, որը տարածաշրջանում ձևավորում է «սպառնալիքների հավասարակշռություն», և որի դեպքում բացակայում է Ղարաբաղում «բլիցկրիզի» հնարավորությունը: Մյուս կողմից, եթե Արդրեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը մտադրելի սկսել հյուժող, ձգձգվող «դիտանցիոն» պատերազմը, ապա պատրա՞տ է արդյոք նա կրելու համապատասխան քաղաքական ու նյութական վնասներ, և վստա՞հ է արդյոք նա, որ ժամանակային գործոնը և տևական մարտական գործողությունների հնարավորությունը բխում են հենց իր շահերից:

1. Մանրամասն տես. *Минасян С. Южный Кавказ: проблемы ограничения и контроля над вооружениями // Южный Кавказ: проблемы региональной безопасности и интеграции / Под ред. Минасяна С. Т. 1, №1. РАУ: Ереван, 2004.*

2. *Բյուշուկյան Մ.* Вооружая Кавказ: Неожиданное наследство Москвы // Кавказ: вооружен и разобщен / Под ред. Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ: Лондон – Москва, Февраль 2004. С.164-167.
3. Հաշվարկված և պաշտոնական փաստաթղթերի և հետևյալ հրատարակումների տվյալների հիման վրա. The Military Balance 1991/1992. ISS: London, 1991. P.45, 61, 92; SIPRI Yearbook 1992: World Armament and Disarmament. Oxford University Press, SIPRI: Oxford, 1992. P.347.
4. ԱՄՆ – մարտական գրահավատ մեքենաներ.
5. *Եսուսով Ա.* Азербайджан: в ожидании перемен под бременем истории // Кавказ: вооружен и разобщен / Под ред. Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ: Лондон – Москва, Февраль 2004. С.61.
6. ՀԱՄՆ – հատուկ նշանակության միլիցիայի ջոկատ: Ղարաբաղյան հակամարտության սկզբնական շրջանում /1990 թ. աշնանից/ Ադրբեջանի իշխանությունների կողմից համարապետության ԼԳՆ համակարգում ձևավորվեցին բազմաթիվ զինված ջոկատներ, որոնք ակտիվորեն օգտագործվում էին Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչության դեմ: Հանրապետության տարածքում տեղակայված Խորհրդային Բանակի զորամասերի զինանոցից նրանց զգալի քանակի հրազեն և գրահատիչներն փոխանցվեց: Նրանք սկզբում կազմում էին 3000 մարդ, իսկ հետագայում նրանք բվարձանակը զգալիորեն ավելացավ:
7. Ядерное нераспространение / Под ред. Орлова В.А. Т.1. ПИР-Центр: М., 2002. Т.1.С.211.
8. Բացի Ստեփանակերտում տեղակայված 23-րդ ԱԳԴ-ի 366-րդ մոտորավազային զույգը, որի սպառազինությունն ու ռազմական տեխնիկան ոչնչացվել էր 1992 թ. փետրվարին, հակամարտության զոտոց ղուրս գալու ժամանակ, այդ սպառազինության միայն մի մասը հայտնվեց Ղարաբաղյան ինքնավարության մեջ:
9. Բացի Հաղուրթի սահմանապահ ջոկատը, որը գտնվում էր Լեռնային Ղարաբաղի տարածքում:
10. *Баранец В.* Так вооружали Закавказье // Общая газета, 22.10.1998.
11. *Коротченко И.* Определен статус Габалинской РЛС // Независимое военное обозрение, 08.02.2002.
12. Օրինակ, ըստ ադրբեջանական կողմի վկայությունների, 1992 թ. հունիսի կեսին, Ադրբեջանի նախկին պաշտպանության փոխնախարար Բարս Լազարյին 20 մլն. դոլար արժողությամբ ձեռք բերեց Գյանջայում տեղակայված 23-րդ ԱԳԴ-ի ամբողջ սպառազինությունն ու ռազմական տեխնիկան վերջինիս հրամանատար գեներալ-մայոր Յուրի Պախտովից: Սանրամասն տես. *Եսուսով Ա.* Азербайджан: в ожидании перемен под бременем истории. С.62.
13. *Եսուսով Ա.* Азербайджан: в ожидании перемен под бременем истории . С.63-64.
14. *Алиев Y.* Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol.1, Issue 2, Summer 2004. P.47.
15. Մանավորապես, բրիտանական լրագրող Թ. դե Վալիեի տված հարցազրույցում այն ժամանակվա Հայաստանի պաշտպանության նախարար Ս. Արարկյանը հայտարարել էր, որ 1992-1994 թթ. մարտական զործույթյունների ընթացքում Ղարաբաղյան զորերը ադրբեջանական բանակից զավթել էին 156 տանկ: Սանրամասն տես. *De Waal T.* Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War. New York – London, 2003; *de Waal T.* Черный сад: Армения и Азербайджан между миром и войной. М., 2005. С.408. Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Չինված Ուժերը Ադրբեջանի հետ սահմանամերձ բախումների ընթացքում զավթել են նաև նվազագույնը 8 միավոր S-54/55 տանկ, որոնք վերանորոգվել են և վերցվել են սպառազինության հայկական բանակի կողմից: Սանրամասն տես. CFE Joint Consultative Group Documents - JCG.DEL/29/01, 30.10.2001; JCG.DEL/30/01, 06.11.2001; JCG.DEL/32/01, 13.11.2001.
16. Տեղեկատվության փոխանակման շրջանակներում նախկին ԽՍՀՄ կողմից տրամադրված տվյալների համաձայն, որոնք նախատեսված էին 1990 թ. ստորագրված ԵՍՁՈՒՊ-ով:
17. Ավելի ուշ, միայն ռուսական զինվորական ղեկավարությունը Հայաստանին փոխանցեց 6 միավոր Սու-25 զրոյային ինքնաթիռներ, իսկ ադրբեջանական ՌՕՈՒ-ի 1 ՍիԳ-25 կործանիչը 1994 թ. հայկական հատուկ ծառայությունների զործույթյունների շնորհիվ առևանգվեց վարձակալ-օդաչուի կողմից և նույնպես քրոջովեց հայկական ՌՕՈՒ-ի կազմում:
18. *Hagelin B.* Arms Transfers to the South Caucasus and Central Asia Compared, 1992-2002 // Armament and Disarmament in the Caucasus and Central Asia. SIPRI: Stockholm, 2003. P.27-28
19. Սանրամասն տես. *Минасян С.* Проблемы ограничения и контроля над вооружениями на Южном Кавказе // Центральная Азия и Кавказ, №6 (36), 2004.
20. *Капка А.* Некоторые проблемы взаимодействия России и европейских международных организаций в области контроля над обычными вооружениями // Россия и основные институты безопасности в Европе: вступая в XXI век / Под ред. Тренни Д. М., 2000. С.239.
21. Սանրամասն տես. *Минасян С.* Военно-технические аспекты региональной безопасности и проблемы контроля над вооружениями на Южном Кавказе // Регион, №2 (6), Ереван: НОФ «Нораванк», 2005.
22. UN Register of Conventional Arms. (http://disarmament.un.org/UN_REGISTER.nsf).
23. ՍԿԿ-ի 2006 թ. Ռեզիստրում Ադրբեջանի և Ուկրաինայի հաշվետվությունների մեջ բերվում է ՍիԳ-29 ինքնաթիռների 5 միավորի քվադրանտը: Համաձայն ուկրաինական ՋԼՄ-ների այլ տեղեկությունների, Ուկրաինայից մատակարարված ՍիԳ-29 կործանիչների ընդհանուր քանակը կազմել է 14 միավոր, որոնցից 2-ը ՍիԳ-29ՈՒԲ ուսումնա-մարտական վերափոխման, որը սակայն նշված չէ 2006 թ. ՍԿԿ-ի Ռեզիստրում: Հնարավոր է, որ դրանք նշվեն 2007 թ. տվյալներում: Սանրամասն տես. *Зубаиров Н.* Чем занимается украинский ОПК // Инвестгазета, 19.02.2007.
24. Այսպես, ադրբեջանական փորձագետների կողմից դուրս բերվող այսպես կոչված հազ.ք.վ. /տարածքային պարամետր/ կամ մ.ն. բնակչությանը /ծողովրդագրական պարամետր/ ընկնող սպառազինության ցամաքային տեսակների միավորի միջինացված զործակցի օգտագործման դեպքում /տանկ, ԱՄՄ/, ապա ստացվում էր, որ ըստ ԵՍՁՈՒՊ-ի Ադրբեջանի սպառազինության սահմանային մակարդակը պետք է ավելացվի մինչև 727 տանկի և 1030 ԱՄՄ-ի /համասպասախանաբար ըստ տարածքային պարամետր/ կամ 607 տանկի և 870 ԱՄՄ-ի /ըստ ժողովրդագրական պարամետր/ : Սանրամասն տես. *Алиев Y.* Arms Control Process in Transcaucasia // Polaris Quarterly, Vol.1, Issue 2, Summer 2004. P.45-46.
25. *Եսուսով Ա.* Азербайджан: в ожидании перемен под бременем истории. С.69.
26. *Lachowski Z.* Arms Control in the Caucasus // Armament and Disarmament in the Caucasus and Central Asia. SIPRI: Stockholm, 2003. P.34-36.
27. Սանրամասն տես. *Минасян С.* Мораторий на ДОВСЕ и Южный Кавказ // Россия в глобальной политике, №3, Май – Июнь 2008.
28. *Минасян С.* Можно ли считать Украину крупнейшим поставщиком вооружений государствам Закавказья? // www.fondsk.ru, 01.06.2006.
29. Սանրամասն տես. *Минасян С.* Азербайджан против РА и НКР: военно-политический баланс, оценки боеспособности и перспективы развития вооруженных сил // Вопросы стратегии и безопасности / Под ред. Айвазяна А. Ереван, 2007.
30. *Микаелин Л.* Украина не вмешивается в конфликт? // Голос Армении, 27.09.2007.
31. Ռուսական գրահատիչկապի /ուղափառման և Ադրբեջան մատակարարման պայմանագրի գումարը կազմել է շուրջ 40 մլն. դոլար. // Ведомости, 2007.
32. Չի՞ն-պակիստանյան համատեղ արտադրության:
33. Ադրբեջանի ՌՕՈՒ-ն նոր ավիատեխնիկա է գնում: Մինչև 2008 թ. ավարտը նախատեսված է բարձրացնել Ադրբեջանի Ռազմա-օդային ուժերի ավիացիոն պարկը: // www.day.az/news/politics/87396.html, 30.07.2007.

34. Աղբրեցանում լուծարված են Ազգային ակրոսիեզերական գործակալուք-ունը, նախագահին աղընքը Մեքենաշինության և կոմերսիայի հատուկ կոմիտեն // www.day.az/news/politics/72190.html, 01.03.2007.
35. Азербайджан в НАТО: Роберт Симмонс о планах Североатлантического Альянса на Южном Кавказе // Военно-промышленный курьер, №24 (190), 27.06.2007.
36. Министр обороны: В 2007 году армянская армия была обеспечена современным вооружением // www.regnum.ru/news/944375.html, 18.01.2008.
37. В первые месяцы 2007 года Сербия продала Армении вооружений на сумму \$2,6 млн // www.regnum.ru/news/763399.html, 04.01.2007.
38. Италия предложила Армении сотрудничать в вопросе подготовки саперов и военных летчиков // www.regnum.ru/news/927894.html, 05.12.2007.
39. Армянские офицеры пройдут обучение в румынских военно-образовательных учреждениях // www.regnum.ru/news/898187.html, 11.10.2007.
40. США предоставили \$3 млн. на укомплектование армянского миротворческого батальона // RapArmenian.Net, 01.08.2007.
41. В Армении предпринимаются шаги для развития военно-промышленного комплекса страны // www.regnum.ru/news/881398.html, 06.09.2007.
42. Պաշտպանական տվյալների հիման վրա, ինչպես նաև The Military Balance 2007/2008. IISS: London, 2008.
43. Դա հաստատում են նաև ԽՍՀՄ փլուզումից հետո Ուկրաինայում մնացած, ուկրաինական ծննդավայրերում գտնվող «կոսմոսիկ» նորոգում անցած և հաճախ դեմպինգային գներով հետխորհրդային երկրներին վաճառված տարբեր մոտոշենի ՍՍՀ-ի բազմաթիվ վթարները: Օրինակ, Կրասոսնին 2004-2005 թթ. վաճառված 40 միավոր ԴՄԱ-2-ները /որոնցից 38-ը անապր վիճակում էին/ կամ Աղբրեցանի և Դազախաստանի կողմից Ուկրաինայում 2008 թ. ծեղրերված ՍիԳ-29ՈՒՐ ուսումնամարտական ինքնաթիռների վթարները:
44. 2008 թ. մարտի ընթացքում աղբրեցանական բանակի 703-րդ քրիզադի հետախուզական վաշտը օգտվելով երևանում 2008 թ. մարտի 1-2-ի հեղուկաբանական իրադարձություններից, փորձեցին մարտով հետախուզել դարաբաղային դիրքերը ճակատային գծի իյուսիս-արևելյան հատվածում, սակայն անհաջողություն կրեցին: ԼՂՀ Պաշտպանության Բանակի ստորաբաժանումների պատասխան միջոցառումների արդյունքում պահանջվեցին աղբրեցանական զորքի մոտ 13-15 զինվոր և սպա, այն դեպքում, երբ դարաբաղային կողմի կորուստները կազմեցին միայն 2 վիրավոր:
45. Սիևույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ կողմերի զրեթն անրողը մարտական ավիացիան ունի շահագործման առնվազն 18-20 տարվա ժամկետ: Թեև գործնականում սպառազինության մեծ մասը արտադրվել է մինչև 1980-ական թվականների վերջը, սակայն մարտական ավիացիայի քարոյական ու տեխնիկական ծերացման խնդիրը շատ սուր է կանգնած: Գործնականում կողմերի ավիացիայի մեծ մասը պատել է իր քոչեջային ռեսուրսը, և նույնիսկ նրանց խորք արդիակառուցումը չի կարող զգալիորեն ավելացնել նրանց մարտական հնարավորությունները: Իսկ ցամաքային զորքերի և ԴՕՊ զորքերի պարագայում ՍՈՏ-ի մաշման հիմնախնդիրը այնքան էլ ծանր չի անդրադառնում դրանց մարտական ու շահագործման հատկությունների վրա: Դա ցայտուն դրսևորվեց, մասնավորապես, Ուկրաինայից վերջերս տեղափոխված ՍիԳ-29ՈՒՐ ուսումնամարտական կործանիչ /որը արդիակառուցվել էր ուկրաինացի մասնագետների կողմից/ 2008 թ. հունվարի 29-ին Կասպից ծովի վրա տեղի ունեցած վթարի ժամանակ:
46. Ինչպես նշում են իսրայելական փորձագետները, ըստ 2006 թ. ամռան մարտական գործողությունների արդյունքների, Իսրայելը ստիպված կլինի իրաժարվել «փոքր արյանք» իր հարևաններին հետագա պատերազմներում հարթելու հույանքից միայն ավիացիայի հարվածներով կամ հատուկ նշանակության ջոկատների գործողություններով: Ներկայումս ՑԱԽԱՆ-ը կրկին պետք է վերադառնա այն մարտավարությանը և ռազմավարությանը, որոնց օգնությամբ նա մինչ այդ հաղթում էր արաբների հետ մղվող պատերազմներում, այսինքն պետք է պատ-

- րատ լինի վարել մանրալինի ու սրընթաց մարտական գործողություններ ցամաքային ուժերի զգալի քանակների ներգրավմամբ /բնական է, ավիացիայի արակցությանը/ և չնայելով կարուստներից նպատակի ծեղրերնան վճռականությամբ: Բացի այդ, Լիբանանում իսրայել-ցիների կրած անհաջողության հիմնական պատճառներից մեկը 1999 թ. Դա-րավյալիայի դեմ ԱՏՏՕ-ի գործողությունների արդյունքների ոչ ճիշտ գնահատումն էր: Մասշտաբային ռեպլոնությունների և իրանական տնտեսության ու ենթակառուցվածքների օբյեկտների ունեցման միջոցով «Յեզրոլլաիի» քաղաքական և ռազմական ներուժի նվազեցմանն ու բնակչության կողմից նրան սատարման չեզոքացմանն ուղղված իսրայելցիների հույանքը ամփոփն դուրս եկան: Մանրամասն տես. *Spyer J. Lebanon 2006: Unfinished War // Middle East Review of International Affairs*, Vol. 12, №1 (March 2008), P.6.
47. Печорина Н. Модернизация МиГ-29: операция реинкарнация // www.ugmk.info, 08.05.2007.
48. См. подробнее: *Мартirosян С. Азербайджан готовится к войне нового типа // http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=643*, 19.04.2007.
49. *Клеуевич К. О войне. М. – СПб, 2007. С.386.*
50. *Дергизаова Л. Парадокс асимметрии в международном конфликте // Международные процессы*, Т.3, №3 (9), сентябрь – декабрь 2005. С.86-89.
51. *Lynch D. Separatist States and Post-Soviet Conflicts // International Affairs*, Vol.78, №4, 2002. P.848.
52. Ենամատիկ կերպով Դ. Քիսախնեցը նկարագրում է անհամաչափ հակամարտությունը ՄԱՆ և Վիետնամի միջև, որտեղ վիետնամական պատերազմում «բույլին» բավական էր միայն չարսրակն, որպեսզի հաղթել: Փոքր ազգերը կամ պետությունները, որոնց պատերազմ են մղում հանուն հանրճոխարն նշանակության զաղափարի և որոշակի քաղաքական կամ քարոյական գործոնների առկայության պայմաններում /օրինակ, Ֆինլանդիան 1939-1940 թթ. «Չճնտային պատերազմի» ժամանակ, Լիվորը 1950-1960 թթ., Վիետնամը 1940-ականներից մինչև 1970-ական թվականների ՄԱՆ և Ֆրանսիայի դեմ պատերազմների ժամանակ, Իսրայելը 1948-1982 թթ. արաբ-իսրայելական պատերազմների ժամանակ, հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունները 1990-ական թվականների առաջին կեսին և այլն/ ունակ են տևական ժամանակա-հատվածում ապահովել նյութական ու մարդկային ռեսուրսների մորիլզացիա հանուն ուժերի զերազանցություն ունեցող քշմամուս հարթելու: Մանրամասն տես. *Дергизаова Л. Парадокс асимметрии в международном конфликте. С.87-88.*
53. *Люддез-Гарт В. Стратегия непрямым действий (Энциклопедия военного искусства)*. М. – СПб., 1999. С.403.
54. *Люддез-Гарт В. Стратегия непрямым действий (Энциклопедия военного искусства)*. С.408.

Ժամանակակից իրավիճակում արտաքին դերակատարների շահերն ու դիրքը Ղարաբաղյան Հակամարտության շուրջ

Իգոր Մուրադյան

Տարածված կարծիքն այն մասին, թե խորհրդային Ադրբեջանի վերահսկողությունից Ղարաբաղի դուրս գալու գործընթացը տեղի է ունեցել հիմնախնդրի տեղայնացման և տվյալ իրադարձությունների մեկուսացման պայմաններում, այնքան էլ ճիշտ չէ։ Այս իրադարձությունների հենց սկզբից եղել է ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Թուրքիայի արձագանքը։ Ղարաբաղյան խնդրի նկատմամբ ամենան չի եղել նաև Իրանը։ Արևմտյան երկրների իրական գործողությունները և արձագանքը իրադարձությունների ծավալման առաջին փուլում մեծ հաշվով, վարչակարգերում գաղտնի մնացին, սակայն տեղի ունեցավ տեղեկատվության մանրակրկիտ կուտակում, այն մարդկանց ընտրություն, որոնք կարող էին դառնալ ապաստիղ գործընթացների վերահսկողներ։ Առավելալի կտրուկ և ծայրահեղ բշմամական արձագանքը բարենպաստ դարձավ Արևմուտքի և, ամենից առաջ, ԱՄՆ-ի ազդեցության ուժեղացման համար։

Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի դուրս մղման կարևոր պատճառ դարձավ Մոսկվայի քաղաքականությունը, այսինքն այն գործընթացի, որը շարունակվում է արդեն 20 տարի։ Մկսած 1989 թ. ընդհուպ մինչև 1994 թ., ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան կազմակերպեցին հանքահում-բային պաշարների՝ ամենից առաջ նավթի, գազի, ուրանի, գունավոր և ազնիվ մետաղների և հավազագուտ հողային տարրերի մասին տեղեկության հավաքում, ներառյալ համապատասխան թղթաբանության ուղղակի վերացումը կառավարական և հետազոտական հիմնարկություններից, ինչպես նաև տիեզերական տեխնիկայի օգտագործումը։ Առաջին հերթին, այսպիսի աշխատանքները իրականացվում էին Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի նկատմամբ, ի դեպ, այս տեղեկատվության գլխավոր «մատակարարները» հանդիսանում էին խորհրդային և ռուսական իշխանության բարձրագույն էշեյոններում հավաքագրված աղմիճիստրատորները և աշխատողները։ Տվյալ տեղեկությունը դարձավ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի խոշորագույն նավթային ընկերությունների սեփականությունը և հավառակ այն պնդումների, թե այս պետությունների ընկերություններին և վարչապազմերին հասել է խիստ անորակ և ոչ ճիշտ տեղեկատվություն, լուրերը բավական արժեքավոր էին և հիմնվում էին բազմակողմանի մշակումների վրա։ Սա կարևորագույն դեր խաղաց տարածաշրջանում Արևմուտքի ազդեցիկ պետությունների քաղաքականության և Ղարաբաղյան Հիմնահարցում նրանց շահագրգռությունների ձևավորման մեջ։

Ոչ քիչ ժամանակ պահանջվեց Թուրքիայի և պանթուրքիզմի ուսուճնքի առնչությամբ, Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի և Եվրոպական Միության քաղաքականության ձևավորման համար, ոչ միայնազնակ զարգացած Արևմուտքի հարաբերությունները Ռուսաստանի հետ, այլիթաձև և անհրաժեշտ ազդեցության լծակների պայմաններում կատարվեց Արևմուտքի և Արևելքի քաղաքականության իրականացումը ռազմական և քաղաքական տարածաշրջանային հակամարտությունների նկատմամբ, բայց Ղարաբաղյան բեման ամուր գրադեցրեց իր տեղը միջազգային քաղաքականության մեջ։ Ղարաբաղյան Հիմնահարցը, հաշտության բացակայության պայմաններում,

րում, հարաբերական խաղաղ գոյակցության օրինակ է, որը դարձել է այն առաջատար արտաքին դերակատարների կարևոր քաղաքական ռեսուրսը, որոնք շահագրգռված են տարածաշրջանում իրենց ներկայությամբ։ Հասկանալու համար ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի նպատակներն ու խնդիրները Կովկաս-Կասպիական և Անձովկան-Կովկասյան տարածաշրջանում, պետք է ընդունել անխալ վարկածն այն մասին, որ օվկիանոսային տերությունների տարածաշրջանում հետաքրքրում է նավթը, միայն նավթը և ոչինչ նավթից բացի։ Հասերի և վեկտորների ողջ մաստրիան ծառայում է այս նպատակին։ Այն ամենը, ինչը դուրս է այս առաջնահերթ շահագրգռությունների շրջանակից, չի հետաքրքրում ամերիկացիներին և րիտանացիներին, ինչը այս կամ այն չափով ազդեցություն է գործում Եվրոպական Միության քաղաքականության տրամաբանության և հետևողականության վրա։ Տարածաշրջանային քաղաքականության տվյալ առանձնահատկության վերծանման համար տեղական փորձագետներից և վերլուծաբաններից պահանջվեց ոչ քիչ ժամանակ։ Այս վերծանումը, անկասկած, վրացական և ադրբեջանական քաղաքական գործիչների համար խորը հիասթափություն հանդիսացավ, իսկ հայ քաղաքական գործիչները այդպես էլ չմտածեցին դրա պատճառ-առիտեսանքային սխեմաների շուրջ։

Դրա հետ միասին, այնքան էլ ոչ հասարակ միջազգային իրավիճակում, սխալ կլիներ ուշադրություն չդարձնել այլ ռազմավարությունների և Ղարաբաղյան Հարցի շուրջ դրանց հանգույցների վրա։ Այսպիսի շեղված համահարաբերակցությունների կարելի է վերագրել Ղարաբաղյան բեմայի «խանգույցը», որպես Ռուսաստանի վրա ճակատային ճնշման գործոն ռուս-ամերիկյան հարաբերություններում հավաիրթի-նային գաղտնաբանության խնդրի աղիթով։ Այնպիսի անհամեմատ նշանակալի գործընթացների կողմից, ինչպիսին ԱՏՕ-ի ընդլայնումն է և տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ներկայության ամրապնդումը, Ղարաբաղյան բեման ժամանակ առ ժամանակ դառնում է Ռուսաստանի վրա ճնշման միջոց, ընդ որում այսպես կոչված կարգավորման գործընթացի սահմաններում։ Օրինակ, հակամարտությունը «կարգավորելու» այդքան ընդգծված փորձը Քի-Կեսում, որն ամմիջականորեն կապված էր «իրթիռային պայմանագրի» խնդիրների հետ, այդպես էլ զարգացում չստացավ, և գործնականում չի հիշվում քաղաքական քննադատումների մեջ։ Այս վարկածը ամենևին չի ընդունվում ամերիկացիների կողմից, ինչու էլ նաև ռուսները չեն ձգտում այս վարկածին տալ «քաղաքացիության իրավունք», բանի որ ԱՄՆ-ի՝ Եվրոպիա առաջ գնալու խնդրի տեղայնացումը չի կարող ընդունվել Ռուսաստանի կողմից, որովհետև նրա դիրքորոշումը կդիտվեր ավելի կորուստաբեր։ Այդուհանդերձ, վերջին տարիներին և՛ Արևմուտքը, և՛ Արևելքը զլուրալ քաղաքական պայթյալում ընդունեցին ռեսուրսային գործոնների առաջնահերթության մասին վարկածը։

Անկախ Ղարաբաղյան Հիմնահարցի շուրջ արտաքին դերակատարների քաղաքականության ձևավորման տվյալ հիմնական բաղկացուցիչ, կար մեկ այլ սկզբունքային հանգամանք կարգավորման գործընթացի տեխնոլոգիաները։ Ակզբում Ռուսաստանը, իսկ հետո նաև ԱՄՆ-ն ընդունեցին «հիմնարար տեխնոլոգիա» Ղարաբաղյան Հիմնահարցի կապակցությամբ կարգավորման իմիտացիա։ Հիմախնդրի հնարավոր կարգավորման վերջին պատրանքները եղել են Բ. Քլինթոնի մախ-լիբերալ վարչակազմի մոտ, երբ Ս. Թուրքը, Ս. Մեստամուլիչը և Տ. Պիկկերինգը փորձում էին քափահարել «ճոր մտածողության» դրոշմները։ Ջ. Բուչի վարչակարգում

այնպիսի խոր վերլուծաբաններ, ինչպիսիք են Ռ. Արմիթեջը և Ռ. Գասսը ոչ մի պատրասքը չբողջեցին, որ տեղավորվում էր Ջ. Բուշի կողմից հռչակված սկզբունքներում, «ԱՄՆ-ն չի միջամտում հակամարտություններին՝ թույլ տալով կողմերին բանակցել, և ընդամենը առաջարկում է իր օգնությունը»: Սա մասնավորապես լուսարանված է արաբախուրայեական հակամարտության օրինակով: Եթե իր վարչակարգի գոյության թոփ ներքո Բ. Քլինթոնը Իսրայելին, Սիրիային և Պաղեստինին առաջարկում էր մի բանի միխորդ դոլար, ապա Ջ. Բուշը կատեգորիկ մերժեց նման մտաեցունքները: Պետք է նաև նշել, որ բացի կոնցեպտուալ պայմաններից ԱՄՆ-ն հասկացավ, որ Ղարաբաղյան թեման շրջել իր շահի համար չի հաջողվի: Ռուսաստանի (և առավել ևս Ֆրանսիայի) ԱՄՆ-ի այս քաղաքականությունը լիովին բավարարում էր, բանի որ այն գործնականում խնդիրը ստեղծում էր: Միայն Մեծ Բրիտանիայում առանձին քաղաքական գործիներ, որոնք պարտավորություններ ունեին Ադրբեջանի ղեկավարության առաջ, չէին կարող համաձայնվել այս իրավիճակին և փորձում էին ծավալել «ադրբեջանամետ» նախաձեռնություններ՝ քաղաքական ծառայությունների համար համապատասխան «տարիֆներով»: Մեծ Բրիտանիան ջանքեր գործադրեց այս նախաձեռնությունները ծավալել եվրոպական կառույցների հարթակում, որոնք լիակատար ծախողում կրեցին 2005-2006 թթ.: Բնորոշ է, որ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան և Եվրոպական Միությունը զարմանալի համախմբվածություն ցույց տվեցին Աբխազիայի և Մեծըղեստիի կառավարման, սակայն միայն Ռուսաստանի իրական դուրս մղման պայմաններում: Ղարաբաղյան Գլխնահարցի շուրջ ԱՄՆ-ի և Եվրոպական Միության միջև հարաբերությունները նույնպես համերաշխ են, բայց բոլորովին այլ տրամաբանական սխեմայում, այսինքն՝ Ադրբեջանի վերահսկողության տակ Ղարաբաղյան մարզի վերադարձի անհրաժեշտության միջազգային ճանաչման և խնդրի քաղաքական լուծումների քաղաքականության ռեժիմում:

2007-2008 թթ. Ղարաբաղյան թեմայի ծավալման մեջ անցավ երկու փուլ՝ սույալ թեմայի շրջանակներում քաղաքականապես շահավետ կոնստրուկցիաների նախագծման քիչ թե շատ ակտիվ փորձերի փուլը և քաղաքական կարգավորման իմիտացիայի փուլը: Դավանաբար սկսվել է դիմակայության մի նոր փուլ, որը դեռ չույն հստակ արտահայտված տրամաբանություն և խնդիրներ, բայց խստը զնում է միայն տեխնոլոգիաների մասին, բանի որ արտաքին դերակատարների նպատակն ու շահերը մնում են նույնը:

Թուրքիան, որը փորձեց «խառնվել» Ղարաբաղյան թեմային 1980-ականների վերջին զանգվածային հայտարարությունների ժամանակաշրջանի առաջին օրերից, շատ շուտով պարզեց, որ ի տարբերություն 1920-ական թ. սկզբի և 1960-ական թ. վերջի, դա իրեն չի հաջողվի, հանձնարյալ դեպ, քաղաքական հարաբերությունների ոլորտում: Ըստ Եվրոպայի և ԱՄՆ-ի առաջատար շատ փորձագետների գնահատականի, Թուրքիան, Գարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում բախվեց այնպիսի խնդիրների, որոնք անկարող էր լուծել, այդ թվում նաև Ղարաբաղյան Գլխնահարցի մասով:

Իր հերթին Ղարաբաղյան Գլխնահարցի ծավալման սկզբում, Իրանն անցավ հեղափոխական ռոմանտիզմի ժամանակաշրջանը և այս երկրում իշխանություն էին կազմում պրագմատիկներն ու աջ պահպանողական-

ները, որոնք Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող դեպքերը դիտում էին որպես բուրբ-սարքեջանական միության թուլացման հնարավորություն:

Գաղապաս են նշված այս գործոններն էլ մեկնարկային դարձան Ղարաբաղյան Գլխնահարցի արդի ժամանակաշրջանի վերանայման համար:

Գարավային Կովկասում ռազմական և քաղաքական հակամարտությունները մարում են կամ զարգացնում են սպորտն ալելի նշանակալի գործոնների և հանգամանքների ձևաչափում: Գաղապաս են նշվում, որ հաճախ են գալիս միայն որպես կատալիզատոր և շարժառիթ նշանակալի և իմաստալի պահերի շարքի համար, բայց ինքնուրույն չեն: Եթե փորձեց որոշել Գարավային Կովկասի երկրների քաղաքական էլիտաների պահվածքի գլխավոր ուղղությունը, ապա հար կարողված սպառազինության մրցավազքի քաղաքականությունը վարելն է: Սպառազինության մրցավազքի «հարկադրվածությունը» ոչ պակաս կարևոր գործոն է, քանի որ կովկասյան էլիտաները տարված են հարստացման մոլուցքով, և նրանց օտար են իրացրինալ պահվածքը և քաղաքական գաղափարայնությունը: Սպառազինության մրցավազքը հանդես է գալիս որպես բազմաֆունկցիոնալ խնդիր՝ ընդհանուր և մասնավոր քարոզչություն, իշխանության լեգիտիմության գործոնների փնտրուղ, կոռուպցիայի և հարստացման ոլորտ, հայրենասիրության պատրանքների պահպանում՝ որպես իշխանությունը պահելու միջոց: ԱՄՆ-ն և Ռուսաստանը՝ որպես Գարավային Կովկասում և հարևան տարածաշրջաններում երկու հիմնական մրցակիցներ, հասկանում են, որ տարածաշրջանի երկրների միջև ռազմական հակամարտության նախկին ցածր մակարդակում դիվար և անարդյունավետ և անվարարության ենթարկվելու և հասնել ռազմաքաղաքական ներկայության նոր դիրքերի: Այդ պատճառով ԱՄՆ-ն և Ռուսաստանը հետաքրքրված են սպառազինության մրցավազքի անրապրոցմանը՝ որպես տարածաշրջանում ազդեցության կարևոր լծակ: ԱՄՆ-ն ծայրահեղորեն հետաքրքրված է Ադրբեջանի և Վրաստանի և ներտարբին ազդեցիկ առաջին փորձերի հետ մղման ընդունակությամբ և Արևելքի հաղորդակցությունների ու նավթային արդյունաբերության քիչ թե շատ ինքնուրույն պաշտպանության մեջ: ԱՄՆ-ն օգտագործում է Վրաստանի և Ադրբեջանի վերահսկողության և հետախուզման տարրերի տեղափոխման համար, ռազմական տարանցման և որոշ, դեռևս սահմանափակ, ռազմական բազավորման խնդիրների իրականացման համար:

Գաղապաս են ներտարածաշրջանային հակամարտություններում լազրում է հաշվեհաշուի դեր, ինչու և հետաքրքրված է ոչ միայն Ռուսաստանը, այլև ԱՄՆ-ն: Դեռևս Գայաստանը, ունենալով մարտունակ զինված ուժեր, որոշակի չափով ապահովում է ուժերի հաշվեհաշու, բայց ոչ միայն տարածաշրջանի ներսում, այլև Թուրքիա-Իրան-ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների ձևաչափում: Արևմուտքի ոչ մի երկիր և Ռուսաստանը ընդհանրապես հետաքրքրված չեն հակամարտությունների վերսկսման մասշտաբային մեկալի մեջ, բայց դրա հետ մեկտեղ խրախուսում և չեն սահմանափակում սպառազինության մրցավազքը՝ որպես տարածաշրջանում վերահսկողության պայման և միջոց: Ըստ աջ քաղաքական շրջանակները ներկայացնող և պաշտպանական հետազոտություններում ինտեգրված որոշ ամերիկացի վերլուծաբանների համոզման, այսպիսի փակուղային պայմանները, որոնք ծավալվել են Գարավային Կովկասում կապված

ռազմական հակամարտությունների և հակասությունների հետ (ինչպես նաև դաժան աշխարհաքաղաքական պայքարով), ռազմական հակամարտության բարձր մակարդակը դառնում է խաղաղ գոյակցության պահպանման գործոն, չնայած շատ լուրջ ռիսկերի և իրական սպառնալիքների: «Լարվածության միջին մակարդակում հարաբերական կայունության» գաղափարը, որը գործնականում դարձել է Հարավային Կովկասում և այլ տարածաշրջաններում ամերիկյան քաղաքականության հիմքը, արդիական նշանակություն է ձեռք բերում Ամերիկայի քաղաքականության համար և ավելի շատ է ընկալվում եվրոպական առաջատար պետություններում:

Հարավային Կովկասում իրականում տեղի չեն ունենում անսպասելի գործընթացներ և իրադարձություններ: Փորձագետների և քաղաքագետների նշանակալի քանակակազմի համար շատ բան անսպասելի չի եղել ԱՄՆ-ի և ԱՏՕ-ի համագործակցության չափաքանակներում և ձևաչափում և փրաստանի անվտանգության ապահովման համար: Դրանով հանդերձ կառավարող կիսաաները, ի տարբերություն վերլուծաբանների նեղ շրջանակի, ընդհանրապես չիմենավորված սպասելիքներ ունեն: Վրաստանի որոշակի կարգավիճակ տալու և ԱՏՕ մտնելու համապատասխան ծրագրի մեջ ընդգրկելու վերաբերյալ: Բայց, չնայած իրավիճակի կանխատեսելիությանը, պայմանավորված արտաքին և ներքին գործուճեղի ազդեցությամբ, արտաքին պայմանները ենթարկված են ավելի մեծ դինամիկայի, քան ներքինը, և այս իմաստով համաշխարհային քաղաքականության մեջ սպասվում են որոշակի նոր սյուժեներ, որոնք վերաբերվում են Հարավային Կովկասին, այդ թվում նաև Ղարաբաղյան թեմային:

Եվրոպական Միությունը կանգնեց Նոր մարտահրավերների առջև, և եվրոպական էլիտան ավելի շատ նախընտրում է իրականացնել մեկուսացման քաղաքականություն, ընդ որում այլ՝ խիստ շրջանակներում, երբ պարզ է դառնում, որ հասել է հանրակցության ընդլայնման սահմանը և այսպես կոչված դադար դառնում է ավելի երկարատև, քան ենթադրվում էր ավելի վաղ: Եթե Ֆրանսիան և Գերմանիան այս գործընթացի սկզբում արտահայտում էին եվրոպայի միայն մի մասի, ապա այժմ արդեն գործնականորեն ողջ եվրոպայի շահերը: Այս միտումը կամ կրերի Հարավային Կովկասի տարածաշրջանի նկատմամբ եվրոպական Միության հետաքրքրությունների կորստի, կամ ընդհակառակը՝ Բրյուսելը կնախընտրի տարածաշրջանը դիտել, որպես ամրոց՝ ընդդեմ Մերձավոր Արևելքի և Եվրասիայի: Եվրոպացիների դիրքորոշումը շատ դեպքերում կախված կլինի ոչ միայն իրենց անիցիաներից կամ գործնական, աշխարհատեսական ծրագրերից, այլ տարածաշրջանում Ամերիկայի ներկայության աստիճանից: Հարավային Կովկասի երկրները դեռևս տեղավորվում են եվրոպական կառույցների հայտնի ինստիտուցիոնալ սխեմաների մեջ, իսկ ԵՄ-ն շարունակում է զարգացնել արդեն հինգամ խնդիրները: Այդուհանդերձ եվրամիության դիրքորոշումը մի փոքր այլ է թվում, քան Եվրոպայի առանձին պետություններինը:

Եվրոպայի առաջատար ցամաքային պետությունները՝ Ֆրանսիան, Գերմանիան Հարավային Կովկասը, ներառյալ հակամարտությունները, դիտում են որպես ասպարեզ՝ ուժերի հավասարակշռման և արտաքին ազդեցության համար, և եթե չեն փորձում սահմանափակել ԱՄՆ-ի դերն ու դիրքը, ապա, ամեն դեպքում, չեն մասնակցում ԱՄՆ-ի աջակցությանը: Եվրոպացիները՝ Ղարաբաղյան թեմային խառնվելու որոշակի ցուցադրական փորձերից հետո, որոշակի ուշացմամբ, լուրացրեցին այն իրողություն-

ները, որոնք ամերիկացիները ընդունել էին ավելի վաղ՝ Ղարաբաղում հայկական պետական ձևավորումը ոչ մի դեպքում չի վերադառնա Արդեթյանի իրավասության տակ, սպառնալիքներ չի ներկայացնում տարածաշրջանին և չի հանդիսանում ագրեսիվ՝ Երթայան և նպատակներով, հանդիսանում է Հայաստանի գոյության և անվտանգության կարևորագույն պայման ներկա աշխարհաքաղաքական կառուցվածքում, և վերջապես, հանդես է գալիս որպես տարածաշրջանի կառավարման կարևոր գործոն: Եվրոպական առաջատար քաղաքական գործիչները, ի տարբերություն եվրոպական կառույցների վարձված չինովնիկների, հասկանում են, որ Ղարաբաղյան մարզում քաղաքական կառուցվածքի ցանկացած արժանաչափ փոփոխությունը կհանգեցնեն այս տարածաշրջանի հայության ոչնչացմանը և Հայաստանի համար մարդասիրական աղետի: Եվրոպական Միությունը և առաջատար եվրոպական պետությունները, չնայած լրիվ ձևակառուցված հռչակագրերի, շատ հեռու են Ղարաբաղյան Ֆինանսիոնի շուրջ ստիպողական քաղաքականության իրականացման պատրաստակամությունից: Եվրոպական կապիտալը, ամենից առաջ՝ բրիտանականը, գերմանականը և ֆրանսիականը, թավակալին հաջող է լուծում ներդրման խնդիրները Հարավային Կովկասում, որտեղ, ըստ Երթայան, հանդիպել է ավելի բաղադրյալ վերաբերությանը, քան սպասվում էր: Սեֆ Բրիտանիան տարածաշրջանում հաջողություններ է իմանց հսկայական էներգետիկ և էներգահաղորդակցական համակարգ, ներառյալ ընդհանուր նշանակություն կարևոր հաղորդակցությունների նկատմամբ վերահսկողությունը:

Սեֆ Բրիտանիայի ղեկավարությունը ինչպես միշտ աշխատեց բրիտանական ընկերությունների հետ սերտորեն կապակցված՝ ստեղծելով տարածաշրջանի պետությունների կառավարություններին և հասարակության նկատմամբ ազդեցության լուրջ լծակներ: Եվրոպացիները ոչ մի հիմք չունեն Ղարաբաղյան Ֆինանսիոնի կողմերին պնդելու, իրականացնել այս կամ այն «միջազգային» և «իրավական» կանոնները: Ֆրանս-գերմանական տանդեմը, ինչպես նաև շատ եվրոպական այլ պետություններ, չեն կարող իրականացնել տարածաշրջանային քաղաքականությունը Հարավային Կովկասում, այդ թվում նաև Ղարաբաղյան Ֆինանսիոնի շուրջ՝ առանց հաշվի առնելու Ռուսաստանին (այս կամ այն ձևով): Ֆրանսիայի համար, որն արտահայտում է եվրոպական պետությունների մեծամասնության դիրքորոշումը Ղարաբաղյան թեմայի վերաբերյալ, Հայաստանի գոյատևումը նշանակում է Հարավային Կովկասում ամուր դիրքերի հույս, և Փարիզի համար ոչ մի հիմք չկա մասնակցելու տարածաշրջանում իր համար օտար խաղերին: Գերմանիան, անկասկած, հետևում է հենց այն տրամաբանությանը, որով ղեկավարվում է Ֆրանսիան:

Բրիտանիայի համար Ղարաբաղյան Ֆինանսիոնիը ավելորդ բեռ է տարածաշրջանում իր խնդիրների վրա: Այս խնդիր ոչ մի ձևով էլ սպառնում իր շահերին, տարածաշրջանում կոնկրետ ծրագրերին և նախագծերին, և նույնիսկ ինչ-որ չափով նպաստում է վերահսկողությանը Արդեթյանի նկատմամբ: Սեֆ Բրիտանիան պաշտոնապես հասկացել է, որ Ղարաբաղյան Ֆինանսիոնիը ոչ մի ձևով չի կարող լինել Ռուսաստանի վրա ճնշման Բրիտանական համակարգի տարր, որը Լոնդոնը պարբերաբար իրականացնում է Կովկասի, Սև և Կասպից ծովերի ողջ տարածքում: Ղարաբաղյան թեման Լոնդոնի համար մշտական հիշեցում է Արդեթյանում իշխող ընտանիքի առաջ անկատար պարտականությունների մասին, քայք դրանք

ոչ այնքան առաջնային պարտականություններ են Մեծ Բրիտանիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնապատկերի վրա: Աղբյուրների հույսերը՝ կապված Բրիտանիայի օժանդակությամբ իր շահերի լայնամասշտաբ լոբբինգի հետ, չարդարացան (համեմայն դեպա եվրոպական հարթակում), իսկ ԱՄՆ-ն, նույնիսկ մասամբ, երբեք չփորձեց իր քաղաքականությունը Աղբյուրների նկատմամբ ձևավորել լոբբինգի սիստեմ: ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան տարածաշրջանում իրականացնում են իրենց ռազմավարությունը, և Աղբյուրների շահերի «լոբբինգ» են համարում նավթի և գազի հանույթի և տեղափոխման կազմակերպման մեջ հաջողությունները: Աղբյուրները ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում երրորդ կարգի փորձագետների և քաղաքական հեղինակների մի խումբ հավաքագրեց, կարողացավ ինչ-որ չափով նախապես ձեռք բերել որոշ պաշտոնաթղթ, բայց դեռևս ազդեցիկ քաղաքական գործիչների օժանդակությունը, կապելով նրանց բացառապես նավթային հետաքրքրություններին, և դրանով կանգնեցրեց լոբբինգային գործունեությունը:

Ընդհանուր առմամբ արևմտյան հասարակությունը մշակել է իր դիրքորոշումը Ղարաբաղյան բեմայի նկատմամբ, և այս դիրքորոշումը օբյեկտիվորեն կոնսոլիդացված է, չնայած Եվրասիայի տարածաշրջաններում համաշխարհային կենտրոնների ուժերի միջև շատ տարածայնությունների: Կրճատորը հետաքրքրված է Ղարաբաղյան Գիմնասիոնորի ստեղծման մեջ, և ցանկացած հոչակագրեր պետք է տանել դիվանագիտական երկխոսության (կամ մեմոխոսության) ոլորտ:

Շատ դեպքերում մանրորինակ դիրքորոշում է զբաղեցնում Ռուսաստանը, սակայն ընդունել ռուսական դիրքորոշումը որպես համաձայն արևմտյանին սխալ կլիներ: Արևմուտքի և ոչ մի երկիր Գարավային Կովկասը չի դիտարկում այնպես, ինչպես Ռուսաստանը, որը տարածաշրջանը դիտում է ոչ այն որպես ռազմավարական կամ ինչ-որ այլ շահերի տեղ, այլ որպես «ժամանակավորապես կորցրած» տարածք: Դաշվի առնելով, որ ներկայումս Ռուսաստանը ղեկավարում է ծայրահեղ տնտեսականացված և կոռուպացված էլիտան, ռազմավարության և աշխարհաքաղաքականության մասին պատկերացումները թվում են որպես ինչ-որ մոտ նպատակներ, կամ էլ որպես քաղաքական առաջնահերթությունների բացակայություն: Եթե փորձել դասակարգել ուժերի միջազգային կենտրոնները ըստ ԼԳԴ-ի հայկական պետական կառույցի փաստացի ճանաչման մոտեցման, ապա, իհարկե, առաջնորդ հանդիսանում են ԱՄՆ-ն, հետո Իրանը և Ֆրանսիան, իսկ Եվրոպական Միությունը և Ռուսաստանը հանդիսանում են խաղից դուրս: Դա այն ժամանակ էր, երբ Ռուսաստանը տնտեսապես և քաղաքականապես թուլացած էր, դա չփոխվեց նաև Ռուսաստանի տնտեսական և ռազմական ներուժի վերականգնման ժամանակաշրջանում: Ռուսաստանի այս դիրքորոշումը քաղաքականորեն է հենց նրանով, որ ռուսական էլիտան Գարավային Կովկասը դիտում է բոլորովին այլ կերպ, քան արևմտյան տերությունները: Ռուսաստանը մինչ այժմ ոչ միայն տնտեսական օգնություն չի ցուցաբերել հայկական պետությանը Ղարաբաղյան մարզում, այլ նաև չի ճանաչել ԼԳԴ-ն նույնիսկ սահմանափակ ձևով: Դրանով հանդերձ, Ռուսաստանը աջակցում է ԳԴ-ին տնտեսական և պաշտպանական առումով, որը ընդունվում է բոլոր շահագրգիռ պետությունների կողմից առանց բացառության՝ որպես օժանդակություն երկրորդ հայկական պետությանը: Չնայած Ռուսաստանում իշխանության կենտրոնացման որոշ տենդենցների, պետության

քաղաքականության վրա շարունակում են ուժեղ ազդեցություն թողնել մասնավոր ընկերությունները՝ Էներգետիկայի, հուճերի, ֆինանսների, սպորտազինության և տեղեկատվության ոլորտում:

Այս իրավիճակում Թուրքիան և Աղբյուրները, որպես վճարունակ պետություններ, եթե ոչ հիմա, ապա մոտ ապագայում ազդեցություն և կոնտեքստ ռուսական արտաքին քաղաքականության վրա: Թուրքիան և Աղբյուրներն այս փուլում միասնական են, ինչպես երբեք և Եվրասիայում այն էքոնոմիկապես ճակատում հանդես են գալիս միասնաբար: Թուրքիան խոստովանել է, որ անցյալ տասնվեցերորդ ինքը պաշտառ Ռուսադրություն չի ցուցաբերել իր հավատարիմ համայնության և լրացնում է ռաջ քողածը: Բայց այս անգամ Թուրքիան աշխարհաքաղաքական էքսպանսիվների ծրագրերով հանդես եկավ արդեն առանց ԱՄՆ-ի՝ նրան համարելով անհուսալի գործընկեր Եվրասիայում, նախընտրելով անցկացնել երկարամյակետ խաղ Ռուսաստանի հետ «համախոհ-հակառակորդ» ռեժիմում:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների վատթարացմամբ քաղաքականորեն Ռուսաստանի և Թուրքիայի միջև ոչ երկարատև «մերթսմայից» հետո, որը գոյություն ուներ Մոսկվայի պատրաստիային հույսերի հնայքի ներքո, վրա հասավ սթափեցումը: Որքան էլ տարօրինակ է, հենց թուրք-ամերիկյան հարաբերությունների շարունակվող վատթարացման պայմաններում, Թուրքիան պատրաստակամություն ցուցաբերեց ընդդեմ Ռուսաստանի իրականացնել մասշտաբային քայքայիչ գործունեություն՝ հիմնվելով նոր հասարակական և հասարակական-կրոնական կառույցների վրա, որոնք կողմնորոշված են ռուսական պետության փաստական մասնատման վրա: Թուրքիայի այս գործունեությունը բացատրվում է ոչ միայն Ռուսաստանի ռազմավարական թուլացման խնդիրներով, այլև պաշտպանորի կուտակման անհրաժեշտությամբ՝ ռուսական բեմայի շուրջ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ երկխոսություն անցկացնելու համար: Միաժամանակ Թուրքիայի խուսանավելու քաղաքականության վարել Արևմուտքի և Արևելքի միջև՝ չունենալով դիրքեր ինչպես Արևմուտքում, այնպես էլ Ռուսաստանում, Իրանում և արաբական աշխարհում: Այդ պատճառով Թուրքիայի քայքայիչ գործունեությունը իրականացվում է շահերի թուր ուղղություններով: Այս պայմաններում եմբարդյալ դաշինքը, կամ նույնիսկ սերտ ռազմավարական համագործակցությունը Ռուսաստանի և Թուրքիայի միջև, ոչ այլ ինչ է, քան պատրաստ: Այսպիսի գնահատականների են հանգում շատ փորձագետներ ԱՄՆ-ում և Եվրոպայում: Ռուսական փորձագետները նույնպես դա հասկացել են, բայց դեռ փորձում են ձգել այս կամ այն պատրաստիային պատկերացումները: «Համախոհ-հակառակորդ» ձևաչափը պարզ է թուրք-ռուսական հարաբերությունների համար, քանի որ Թուրքիային պետք չէ գիջել դիրքեր Եվրասիայում, որոնք առանց դրա էլ այնքան էլ բավարար չեն, բայց որոնց տիրանալու համար Թուրքիան ծախսել է ոչ քիչ քաղաքական և տնտեսական ռեսուրսներ: Եվրասիայում Թուրքիայի էքսպանսիան ունի ոլորապատույտ ձև, և ճնշման հետևանքով անկունից հետո գալիս է նոր փուլ, ավելի մասշտաբային և բազմաբարդ:

Չնայած Թուրքիայի հնարավոր անդամակցության մասին ԵՄ-ից գործողականում ստացված սկզբունքային պատասխանին և Բալկաններում ու Գարավային Կովկասում անվտանգության և համագործակցության հարցերի շուրջ Եվրոպայի հետ հարաբերությունների խզման սպառնալիքներին, Թուրքիան շարունակում է հաշվի առնել եվրոպացիների դերն ու արձա-

գանձը իր քաղաքական հավակնությունների նկատմամբ, այս կամ այն տարածաշրջաններում: Տարածաշրջանում նրա քաղաքականության վրա ավելի կարևոր կասեցնող դեր է կատարում ԱՄՆ-ն՝ չհաշված Ռուսաստանը և Իրանը: Այնուամենայնիվ թուրքերն չի կարող թույլ տալ իր համախոս Արդրեջանի շահերի անվերջ ամոտեսում, քանի որ դրանով վնաս կհասցվի բուրբական շահերին տարածաշրջանում և աշխարհում նրա վարկաբեկչին: Թուրքական ղեկավարությունը այլևս չի կարող թաքցնել իր անկախ ուղղությունը Արդրեջանին արմատական օգնություն ցուցաբերելու մեջ՝ այն ծածկելով սեփական պրագմատիկ շահերի թողով: Անկարայում հասկանում են, որ վաղ թե ուշ պետք է ակտիվորեն միջամտել հայ-արդրեջանական հակամարտությանը, և ձգտում են մաքսիմալ կերպով հետաձգել այդ միջամտությունը՝ փորձելով Դարաբադյան Զինմասնորդի լուծել Արդրեջանի օգտին ուժերի և ռազմաքաղաքական հաշվեկշիռի խախտման ապահովման ճանապարհով: Զինադադարի կնքումից հետո Դարաբադի մարզում Արդրեջանը հնարավոր չէր համարում Գայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսել՝ առանց Թուրքիայի ակտիվ միջամտության և մասնակցության: Ավելին, այս սկզբունքը դրված է որպես կարևորագույն պայման թուրք-արդրեջանական հարաբերությունների զարգացման համար: Ներկայումս տեսնված է բավականին սերտ թուրք-արդրեջանական դաշինք՝ ավելի ընդարձակ, քան նախկինում, պլաններով և մտադրություններով: Անկարայում ավելի ու ավելի են հասկանում, որ առանց Արդրեջանի օգտին Դարաբադյան Զինմասնորդի լուծման, հնարավոր չէ իրականացնել եվրասիական քաղաքականությունն անբողջությամբ:

Այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ միայն Անկարայից կարող է ազդանշան տրվել Դարաբադում պատերազմ սկսելու մասին, և դրա հետ մեկտեղ դա կնշանակի ավելի մեծ զինված հակամարտություն, որը կարող է հանգեցնել նյութական հսկա ծախսերի և քաղաքական վնասների: Ընդ որում, միայն այս սցենարը կարող է հանգեցնել Դարաբադի նկատմամբ Արդրեջանի իրավասության վերականգնմանը, քանի որ լիովին կարելի է ենթադրել, որ ԱՄՆ-ն, ԵՄ-ն, և Ռուսաստանը կզննա գիշումների և Գայաստանի քաղաքական ղեկավարությանը կստիպեն դարաբադյան տարածքներ զիջել Արդրեջանին: ԱՄՆ-ում և Ռուսաստանում կան բավական ազդեցիկ ուժեր, որոնք ճնշում կգործարարեն իշխանությունների վրա, իսկ նրանք էլ ճոր պայմաններում կարող են զնալ գիշումների և կզբաղեցնեն Գայաստանի համար հարկադարների դիրքորոշում: Անհրաժեշտ է նշել, որ ԱՄՆ-ի և Ռուսաստանի դիրքերի առաջարկված վերլուծությունը Դարաբադյան խնդրի նկատմամբ, արդիական է և հիմնավորված է ներկա պայմանների վրա, երբ տարածաշրջանում հնարավոր դարձած պահպանել ուժերի հավասարակշռությունը և կայունությունը: Բայց ճոր իրավիճակը, եթե այն ի հայտ գա, անպայման ուղղումներ կտնցնի երկու շահագրգիռ տերությունների դիրքորոշումների մեջ, որոնք շատ դեպքերում անկայուն բնույթ են կրում: Դա նշանակում է, որ ԱՄՆ-ի քաղաքականությունը Զարավային Կովկասի նկատմամբ ձեռք կբերի քրիստոնական քաղաքականության տրամաբանություն, երբ Ամերիկայի հակամարտությունները դիտում է որպես իր քաղաքականության և ռազմավարության տիպա՝ և ոչ այնքան ֆունկցիոնալ հավելուկ: Եվ եթե Աբխազիան դարձել է խնդիրների լուծման հարթություն՝ կապված Սև ծովի հետ, ապա Դարաբադյան խնդիրը գրեթե անգործության մատուցված գործոն է, որը նշանակություն ունի միայն

տարածաշրջանում ինչ-որ քաղաքական իրավիճակների ակտիվացման պայմաններում: Այսինքն ԱՄՆ-ի դիրքորոշումը, ինչքան էլ տարօրինակ է, հստակ ուրվագծեր չունի կապված աշխարհաքաղաքական առաջնահերթությունների հետ: Ռուսաստանի դիրքորոշումը դիտվում է այլ կերպ, և ռուսական քաղաքական գործիչները չեն կարող հաշվի առնել Դարաբադյան գործոնը իրենց ռազմավարության մեջ՝ ավելի գործնական պլանում, քան ԱՄՆ-ն: Դրանով հանդերձ, Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը կախված է Ռուսաստանի նախագահի վարչակազմում տարբեր խմբերի շահերից և գտնվում է կոնյունկտուրային շահերի ազդեցության ներքո և լիովին հնարավոր է պատկերացնել, որ Ռուսաստանը հեշտությամբ կզոհաբերի Գայաստանի շահերը: Ռուսաստանի կողմից իր դարավոր և հուսալի դիրքերի կորստի հեռանկարները Զարավային ռազմավարական ուղղության վրա, չի կարող բավարար փաստարկ լինել ներկա ռուսական էլիտայի համար, որին դեռևս անհասանելի են այսպիսի կատեգորիաները:

Այդուհանդերձ, ժամանակակից աշխարհում, երբ ռազմական գործողությունները դառնում են միակ և այլընտրանք չունեցող միջոց նպատակին հասնելու համար, նշանակում է տվյալ պետությունը գտնվում է միջազգայնորեն ծայրահեղ կորուստ կրած իրավիճակում: ԱՄՆ-ն և Ռուսաստանը միանգամայն տարբեր պատճառներով և հանգամանքներով ոչ պակաս ջանքեր ենթորոնցին, որպեսզի ոչ միայն թույլ չտան եվրասիայում Թուրքիայի ներկայության ամրապնդումը, այլ նաև մեկուսացնեն և գործնականում դուրս մղել Դարաբադյան կարգավորման գործընթացից նրան դնելով կողմնակի դիտորդի կարգավիճակում: Դա բավական վնասակար իրավիճակ է, որին Թուրքիան համաձայնեց ենթադրելով որոշակի փոխտեսուցում այլ ոլորտներում և քաղաքական ուղղություններում, սակայն այս փոխտեսուցումների սպասումները մնացին ապարդյուն: Եթե Իսրայելի օրինակի վրա ցուցադրվեց, որ տարբեր հետաքրքրություններ ունենալով ԱՄՆ-ն և Ռուսաստանը եկել են, շատ դեպքերում, նույնպես դիրքերի, ընդ որում դրական իմաստով, ապա Թուրքիայի դեպքում և ԱՄՆ-ն, և Ռուսաստանը հետաքրքրված են Անկարայի մեկուսացման մեջ, Բալկաններից մինչև Կենտրոնական Ասիա տարածքում թույլ չտալով նրան ունենալ ինքնուրույն աշխարհաքաղաքական «բնեթի» դեր: ԱՄՆ-ն պատրաստ է օժանդակել Կենտրոնական Ասիայի պետությունների համեմալի կազմակերպության ձևավորմանը առանց Թուրքիայի, իսկ Ռուսաստանը գործնականում սկսեց իրացնել իր առաջնորդ լինելու գաղափարը բուրբական պետությունների և ազգերի միջակայքում (գործնականում Ռուսաստանը կարող է դառնալ պատերազմի ուսումնի առաջնորդ, բայց առանց Թուրքիայի մասնակցության): Այսպիսով, Թուրքիային չհաջողվեց «կապել» իրեն Դարաբադյան խնդիրը, բայց նա առաջվա նման կծոկի դրան: Ասկայն հետաքրքրությունը Դարաբադում պատերազմ ծավալելու մեջ Թուրքիայի կողմից չի կարող հիմնավորվել Արդրեջանի որոշիչ օժանդակություն ցուցաբերելու զանկությամբ: Զինված հակամարտությունը Զարավային Կովկասում և նրան հարևան այլ տարածաշրջաններում Անկարայի համար ընդունելի կլինի միայն Ամերիկայի, ԵՄ-ի և Ռուսաստանի ձևաչափում «ցուցումների» ինքնուրույն քաղաքականություն վարելու իր ընդունակությունը և «ով է տան տեղը» ցույց տալու պայմաններում: Նմանատիպ իրադարձություններ են տեղի ունենում Գյուսիսային Իրաքում, ուր Թուրքիան, չնայած ԱՄՆ-ի համաձայնությանը, բայց անբեր-

կացիների վրա ուժեղ ճնշման պայմաններում, ռազմական գործողություններ է իրականացնում ընդդեմ քրդերի:

Առաջարկված «Կովկաս-Կասպիական տարածաշրջան» հասկացությունը լայն աջակցություն չստացավ քաղաքական գրականության մեջ՝ չնայած մի շարք հեղինակների կողմից դրա օգտագործմանը: Միաժամանակ Անժոլյան-Կովկասյան տարածաշրջան սահմանում բավականին արագ կիրառում գտավ վերլուծական և այլ բնույթի հրապարակումներում: Իսկապես, հենց այս տարածական ձևաչափում հասկանալի դարձան տարածաշրջանային և արտաքին դերակատարների շատ նպատակներ և խնդիրներ: Առաջին հերթին, խնդիրն այն է, որ իրադարձությունների և ուշադրության կիզակետը աստիճանաբար Բալկաններից, Կովկասից և Կենտրոնական Ասիայից տեղափոխվում է Սև ծովի ավազան: Հասկանալի է դառնում, որ առանց գերակայության կամ, ծայրահեղ դեպքում, Սև ծովում ուժեղ ռազմաքաղաքական ներկայության ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան չեն կարող հուսալ համոզիչ կերպով վերահսկել եվրասիական նախագծերը: Սակայն Սև ծովի նշանակությունը ոչ միայն հաղորդակցությունների վերահսկման և եվրասիա ներթափանցելու համար բազայի ստեղծման մեջ է: Սև ծովը անգլո-սաքսոնական բուլկի կողմից դիտվում է որպես Ռուսաստանի և Եվրոպայի, Ռուսաստանի և Թուրքիայի, Թուրքիայի և Եվրոպայի միջև պատմեչ, կամ գիծ: Այս ծրագրերը գոյություն ունեին բավականին վաղուց, բայց արդիականացվեցին թուրք-ամերիկյան հարաբերությունների կտրուկ վատթարացումից հետո, երբ ԱՄՆ-ն հասկացավ, որ եկել է ժամանակը կառուցելու գործընկերների և համակոնների նոր դաշինք և ընդհանրապես նոր աշխարհառազմավարական ուրվագիծ այնպիսի պայմաններում, երբ Թուրքիայի որպես գործընկերոջ հուսալիության ժամանակաշրջանը անդառնալիորեն անցել է: Կարծես, եկել է ժամանակը, երբ հնարավոր փոխզիջումները կամ վաղաժամ են և ինստիտուցիոնալ միջև տարածաշրջանում ուժերի նոր հաշվեկշիռը պարզելը, կամ հակադրվում են Ամերիկայի և տարածաշրջանային պետությունների շահերին: Սա բավականին կարևոր հանգամանք է, որը կարող է բացատրել շատ տարօրինակություններ և տրամաբանական կապակցումների բացակայությունը տարածաշրջանում գործընթացների դիտարկման ժամանակ:

Անժոլյան թեման արդեն դարձել է արդիական և պահանջված նաև արխազական խնդրի դիտարկման պայմաններում: ԱՄՆ-ն և Եվրոպական Միությունը համերաշխություն ցույց տվեցին առանց Վրաստանի մասնակցության Աբխազիայի արտորգիայի նկատմամբ, բավականին տարօրինակ ծրագրերի իրականացման գործում, որը մեծ անհանգստություն առաջ բերեց վրացական դեկալարության մոտ: Վրաստանին գործնականում հայտարարվեց, քանի որ Աբխազիայի նաև հարաբերությունները կարգավորելու նրա տարիների ջանքերը հաջողությամբ չպսակվեցին, ապա Ռուսաստանի ազդեցությունից Աբխազիայի դուրս բերմամբ զբաղվելու է անմիջականորեն Արևմուտքը, բայց առանց Վրաստանի: Սա մասամբ իր ազդեցություն ունեցավ 2008 թ. ամռանը Վրաստանի կողմից Հարավային Օսիայի դեմ պատերազմ սկսելու վրա: ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան խիստ հետաքրքրված են Սև ծովում ուժերի հաշվեկշռի փոփոխության մեջ, սակայն դա հեշտ չէ իրականացնել Թուրքիայի կողմից կոչտ դիմադրության պայմաններում, որը չի ջանկարում կորցնել իր աշխարհառազմա-

վարական նշանակությունը: Այդ պատճառով ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային հետքերում են Սև ծովի ավազանում մի շարք աշխարհաքաղաքական կետեր, ամենից առաջ Ռուսիայի և Բուլղարիայի նավահանգիստները, Պանոնի գետաբերանը, Դոնը, ինչպես նաև Աբխազիան: Կարևոր նշանակություն է ձեռք բերում Ուկրաինան, որը կոչված է զոնե միջանկյալ ապագայում մասնակիորեն «փոխարինել» Թուրքիային: Բայց այն, որ այս քաղաքականության մեջ գործողության մեջ են հավանաբարտված կետեր և տարածաշրջաններ, թույլ է տալիս ենթադրել, որ այս հակամարտությունները կբնանորոշվեն ելնելով Սև ծովի հետ կապված ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, ինչպես նաև նրանց հակառակորդների ռազմավարությունից և շահերից:

Հնարավոր է, փորը-ինչ վաղաժամ է, բայց հայտնաբերվում են շատ նախանշաններ, որ Սև ծովը հայտնվում է եվրոպական և եվրասիական քաղաքականության կիզակետում, և ըստ կարևորության ու դերի, այս տարածաշրջանը ներքաշում է ավելի շատ եակա խնդիրներ և կենտրոնացնում է Արևելյան Եվրոպայի բոլոր գլխավոր դերակատարների ջանքերն ու շահերը: Սև ծովի խնդիրներն այնքան լուրջ են և անմիջականորեն կապված են գլոբալ գործընթացների հետ, որ Հարավային Կովկասը իր թեմայով կամ այլ խնդիրներով գրեթե «ուզվում» է սևծովյան խնդիրների մեջ: Ամեն դեպքում, նույնիսկ եթե ենթադրել, որ արտաքին առաջատար դերակատարները ջանքեր գործարկեցին հարավկովկասյան խնդիրները ստեղծելու և ապաստիակալանացնելու համար, ապա, այսպես թե այնպես, այս տարածաշրջանի երկրները, որոնք լուրջ խնդիրներ են կրում, չեն կարող դրանք նկատմամբ պահպանել արտաքին ուշադրությունը:

Այս պայմաններում և այսպիսի միտումների ժամանակ Դարաքաղաք Հիմնախնդիրը չի կարող իր տեղը գտնել միջազգային ուշադրության ապարեզում: Դրանով հանդերձ, կարծես, դեռ վաղ է բավականին իմենավորված հետևություններ անել Սև ծովի տեղի և դերի մասին հեռանկարում, քանի որ ԱՄՆ-ն դեռևս վերջնական որոշումներ չի ընդունել իր ներկայության նպատակների և մասշտաբների վերաբերյալ: Առայժմ տեղի են ունենում «հարթեցումներ» ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև Սև ծովի խնդիրների շուրջ, քննարկվում են նախկին վստահության վերականգնման և համագործակցության նոր ձևաչափի հնարավորությունները: Դրա հետ մեկտեղ դժվար կլինի ներկայումս նշել Ուկրաինայի դերն ու տեղը այս ռազմավարության մեջ՝ առանց որի դժվար է խոսել Սև ծովում ուժերի դասավորման մասին: Պետք է ուշադրություն դարձնել, որ նախկինում ԱՄՆ-ն մի քանի անգամ դիմեց այս տարածաշրջանում ներկայության ամրապնդման գարավիտության, և կա նաև մտադրություններից հրաժարվելու պրակտիկա: Բայց, այսպես թե այնպես, Հարավային Կովկասը որպես քիչ թե շատ ուրվագծված տարածաշրջան, աշխարհաքաղաքական իմաստալիկ ձևաչափում այլևս գոյություն չունի, այլ օբյեկտիվորեն գոյություն ունի ավելի ընդարձակ տարածաշրջան, որտեղ հաստատվել են նոր և ընդհանուր օրենքներ և օրինաչափություններ: Այս տարածաշրջանում առկա հակամարտությունները չեն կարող շրջադարձային լինել արդի քաղաքականության մեջ: Ուժերի այս կազմավորվող դասավորվածության մեջ իմենական դերակատարները ստիպված կլինեն, որպես կանոն, զմալ քաղաքական առևտրի, այս կամ այն խնդրի առիթով՝ հանուն ռազմավարական նպատակների ձեռք բերման: Այս մտադրված դասական կերպով արտացոլում է տարածաշրջանում բրիտանական քաղաքականության խորը

հետադարձությունը, և այդ պատճառով անհրաժեշտ է այս մրցակցային ռազմավարությունները դիտել որպես վերահսկողության և ազդեցության համար ոչ միայն ամերիկա-ռուսական, այլև բրիտանա-ռուսական պայթյալի ուղիղ շարունակություն: Այսինքն, խոսքը գնում է, ոչ թե ինչ-որ աշխարհատեսեսական նորամուծության, այլ հին և փորձված ավանդական տրամաբանությանը և ոճով աշխարհաքաղաքական հավանարության մասին: Այս հանգամանքները կարող են սրբազրել Հարավային Կովկասից փորո-ինչ արևմուտք շեշտերի և քանքերի տեղափոխման մասին ենթադրությունները, եթե նկատի ունենանք, որ Սև ծովի համար պայթյալը Մեծ Բրիտանիան դիտարկում է Ռուսաստանի և այլ պետությունների վրա պարբերաբար լծակների միջոցով ճնշում գործադրելու բրիտանական նախագծի համակարգային կարևոր տարր, որոնց մեջ դիտարկվում են նաև Հարավային Կովկասի խնդիրները: Այս հարաբերությունները կարող են նաև դրականորեն արտացոլվել Հարաբադյան խնդրի վրա, քայց կարող են նաև հանգեցնել թուլատրելի ռիսկերի մակարդակի նոր հասկացողությանը, որը պատճառ կդառնա պատերազմի վերսկսման այս կամ այն մասշտաբով: Ծավալվում է ոչ միայն խաղարկային, այլ նաև բազմաթիվ իրավիճակ:

2005-2007թթ. քննազգրվում են համաշխարհային քաղաքականության մեջ էական բեկումով, նոր առաջնահերթությունների ի հայտ գալով, առաջատար պետությունների և տարածաշրջանային գերտերությունների արտաքին քաղաքականության մեջ ընձանակալի փոփոխություններով: Համաշխարհային քաղաքականության մեջ այս շարժերի վերաբերյալ կան վերլուծաբանների տարբեր գնահատականներ՝ ամենից առաջ նշված միտումների ժամանակավոր առաջնահերթությունների կանխատեսումների ուղղությամբ: Ամեն դեպքում, համաշխարհային վերլուծական ընկերակցությունը, հասկանալով համաշխարհային քաղաքականության մեջ որոշակի սկզբունքային փոփոխությունների անկասկածությունը, դեռ չի ձևակերպել այս գործընթացների պատճառները և գործոնները: Այս փոփոխությունների հիմնական արտաքին նշաններից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Պարզվեց, որ ԱՄՆ-ի վիճակի չէ իրականացնել հռչակված և ոչ հրապարակային քաղաքականություն՝ պատշաճ ֆինանսական, ռազմատեխնիկական, արտաքին քաղաքական, հետախուզական ռեսուրսների բացակայության պատճառով,
2. Տարածաշրջանային և ֆունկցիոնալ քաղաքական ու ռազմաքաղաքական դաշինքների ձևավորման մեջ աշխարհում նկատվում է լուրջ հետաքրքրությունների բացակայություն, ամենից առաջ տարածաշրջանային ասպեկտում:
3. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը սուր հակասության մեջ մտավ ամերիկյան հասարակության շահերի հետ, որը չընդունեց ռազմավարական նպատակներին հասնելու մեթոդներն ու մոտեցումները էլեյնով կարճաժամկետ և միջնաժամկետ շահերից:
4. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը, չնայած թվացյալ հաջողությունների, լուրջ պարտություն կրեց Մերձավոր Արևելքում, Կենտրոնական Եվրասիայում, չինական և տրանսատլանտյան ուղղություններում, նոր խնդիրներ ծագեցին Լատինական Ամերիկայում և Հարավ-Արևելյան

Ասիայում, սրվեց լարվածությունը Ռուսաստանի հետ հարաբերություններում:

5. Համաշխարհային էներգետիկ իրավիճակը նոր պահանջներ ներկայացրեց ԱՄՆ-ի և նրա առաջատար գործընկերների, պարզվեց, որ գերադասացած ինդուստրիալ տերությունները կորցրել են պատմական ժամանակը և չեն կարողացել տնտեսապես ու տեխնոլոգիապես պատրաստվել էներգետիկ ճգնաժամի նոր փուլերին:

6. Շարունակվում է պաշտպանության և քաղաքականության Տրանսատլանտյան համակարգի կազմալուծումը, ԱՆՏՕ-ն և շատ այլ միջազգային կազմակերպություններ դարձել են ամերիկյան քաղաքականության զարգացման արգելակ, որոշումներ կայացնելու գործընթացում խոչընդոտ, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի ճգնաժամը նախաձեռնված ԱՄՆ-ի կողմից, չբովեց նրանց շահերի դեմ, քանի որ կորցվել են քաղաքական էքսպանսիայի շատ գործիքներ:

7. Եվրոպական գաղափարը բախվել է զերբալ հակասությունների և համակարգային ճգնաժամ է ապրում, որը կհանգեցնի եվրոպական հանրության տրանսֆորմացիայի, ԵՄ-ի անդամներից ռազմաքաղաքական և տնտեսական ուղղություններով «ակումբների» տրոհման՝ Թուրքիայի և միջերկրածովյան երկրների հետ հետազգայում համարժեք հարաբերություններ կառուցելու անկարողությամբ:

8. Ճապոնիան և Հարավ-Արևելյան Ասիան խոր տնտեսական ճգնաժամ են ապրում, որը ըխում է այս տարածաշրջանի պետությունների տնտեսական և քաղաքական խնդիրների անհամապատասխանությունից, ֆինանսավարկային, վարչական և տեխնոլոգիական ոլորտների միջև անհավասարակշռությունից:

9. Ռուսաստանն անպատրաստ էր նավթից և գազից տեսցվող գերշահույթների օգտագործմանը, նա նախկինի պես համակարգային ճգնաժամի մեջ է քաղաքական ոլորտում, նա չկարողացավ հաշվեկշեռը հարաբերությունները ԱՄՆ-ի, Եվրոպայի, Չինաստանի և ասիական տարածաշրջանների հետ:

10. Չլուծված են մնում խոշոր տարածաշրջանային հակամարտությունները, որոնք ԱՄՆ-ն և եվրոպական հանրությունը դիտում են որպես Բալկաններում, Մերձավոր Արևելքում, Կովկասում, Աֆղանստանում և Հարավային Ասիայում իրենց արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղություն:

Այս խնդրահարույց վիճակը համաշխարհային քաղաքականության մեջ գոյություն է ունեցել նաև ավելի վաղ, քայց հիմա ԱՄՆ-ն և նրա գործընկերները բախվեցին միջազգային հարաբերությունների և կարգի կազմալուծման նոր փուլի ի հայտ գալու և նախադեպը չունեցող տարանջատվածության հետ, որը սկսվեց ԽՄԽ-ի կազմալուծումից: Քաղաքական վերլուծաբանների և նախագծողների որոշակի լավատեսությունը բացատրվում է համաշխարհային էլիտայի հիմնական խմբերի միջև նկատվող որոշակի գործողությունների համակարգմամբ: Մասնավորապես, փորձեր են ձեռնարկվում գոնե մասամբ վերակենդանացնել ԱՏՕ-ն, դաշինքին տալ ավելի շատ դիմամիզմ և գործառույթներ: Կան որոշակի պայմանավորվածություններ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև Մերձավոր Արևելքի, Իրանի և Արևելյան Եվրոպայի նկատմամբ: Կան ԱՄՆ-ի և ԵՄ-ի քաղաքականության համաձայնեցման փորձերի իրականացման նշաններ Չինաստանի նկատմամբ: Սակայն ավանդական, միջազգային հարաբերու-

թյունների քայքայումը պայմանավորեց քաղաքական էլիտաների հայացքների փոփոխությունը ոչ միայն համաշխարհային մրցակցային ռազմավարությունների ընդհանուր սխեմայի, այլև տեղի ունեցող գործընթացների համար պատասխանատվության նկատմամբ: ԱՄՆ-ի և մասամբ Եվրոպայի քաղաքական շրջանակներում նկատվում են գաղափարներ, որոնք կապված են զլորալիզացիայի ժողովրդավարական զարգացման «տարածակց» ասպեկտի վերանայման հետ: Այսինքն, համաշխարհային ճոր կարգը տեղայնացված տեսքով ենթադրվում է Գլոսիսային Առլանտիկայի սահմաններում, ինչպես նաև Եվրասիայի փոխադարձ կապակցված տարածաշրջաններում: Այս գաղափարները մտնում են բացառապես էլիտար խմբերի քննարկման առարկա, քայքայվելի ու ավելի են ընդգրկում արդի քաղաքական գործիչների և վարչապարոնների: Այս կարծիքները հիմնվում են ոչ այնքան քաղաքակրթական առանձնահատկությունների, որքան համաշխարհային նյութական ռեսուրսների կանոնակարգման անհրաժեշտության վրա:

Միանգամայն հնարավոր է, որ խոսքը գնում է առաջարկված զուրալ գործընթացի ոչ «առանցքային» բաղադրիչի, այլ ընդամենը համակարգային որոշումների նախաբանի մասին, որը կպահանջի սկզբունքային համաձայնություններ, առնվազն ԱՄՆ-ի և Եվրոպական հանրություն միջև: Բավական կարևոր հարց է ծագում արդյոք նոր հարաբերությունները ինստիտուցիոնալ բնույթ կատանան, թե բավարար կլինի պահպանել և ձևափոխել ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի, ԵՄԳԿ-ի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների, միջազգային դատական պրակտիկայի և այլ գոյություն ունեցող կառուցվածքները: Դրա հետ մեկտեղ, այս փուլում կարևոր է կոնկրետ քաղաքական պրակտիկայի ծավալումը:

Խոսք կարող է գնալ միջազգային հարաբերությունների նորմատիվների և որոշ սկզբունքների կիրառման վերանայման մասին, այդ թվում նաև պետությունների տարածքային ամբողջականության որպես իրանայական սկզբունքի մասին: Այս միտումը նկատվում էր դեռ Արևելյան Եվրոպայում քաղաքական համակարգի քայքայումից և Մեծավոր Արևելքում քաղաքական գործընթացներից անմիջապես հետո: Խնդիրն այն է, որ «տարածքային ամբողջականության» սկզբունքի պահպանումը հակասում է արևմտյան հանրության անվտանգության առաջնահերթություններին, քանի որ ավելի հեշտ է ռեվիզիայի ենթարկել այս սկզբունքը, քան օժանդակել նրան: Խտրականության ենթարկված և բաժանված էթնոսները, ազգային-ազատագրական և էթնո-կոմունական շարժումները ժամանակակից աշխարհում նշանակալի ներուժ ունեն և ավելի շատ հետաքրքրություն են դրսևորում ազատական կարգերի և ժողովրդավարության նորմատիվների իրականացման մեջ:

ԱՄՆ-ի և Եվրոպական հանրության մի շարք քաղաքական գործիչներ և պաշտոնական անձինք համառոտն նշում էին 2006 թ.՝ որպես Դարաբաղյան Դիմախնդրի կարգավորման համար բարենպաստ ժամանակաշրջան: Դրա հետ մեկտեղ, այդպիսի ակնակալիքների համար ոչ մի լուրջ հիմք չկար: Շահագրգիռ տեղությունները որևէ գործնական նախաձեռնություն այս առիթով չէին ցուցաբերում: Դարավային Կովկասի տարածաշրջանում զուգահեռ հետաքրքրությունները ոչ մի կերպ վնաս չեն կրում Լեռնային Դարաբաղի շուրջ իրավիճակի ստեղծումից: Այս իրավիճակի պահպանման մեջ հետաքրքրված են գրեթե բոլոր արտաքին կողմերը, ներառյալ Թուրքիան: Գործնականում Արևմտյան հանրության մեջ միայն երկու

գործառնային ստորաբաժանումներ են զբաղված Դարաբաղյան Դիմախնդրով՝ ԵՄ-ի քաղաքական գործիչների և աշխատակիցների ոչ մեծ խումբ, որը լորբինգի է ենթարկվում «ԲՓ» ընկերության կողմից, և ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի համապատասխան տարածաշրջանային բաժանմունքը: Ըստ Պետդեպարտամենտի կարծիքի, Դարավային Կովկասում հնարավորություններ կային հակամարտությունների կարգավորման շուրջ համապատասխան որոշումներ «անցկացնելու», սակայն այս կարծիքը, ավելի շուտ, հիմնվում էր Ռուսաստանի մասնակցության հույսերի վրա: Կ. Ռայսի՝ Մոսկվա կատարած ձախողված այցելությունից հետո, այս հույսերը հույս ցնդեցին: Ներկայումս աներկայացների ակնկալիքները փոքր-ինչ այլ են: Իրականում, նրանց կարծիքով, 2006 թվականը Արդրեջանի վերջին հույսը եղավ Դայաստանից որոշակի զիջումներ ստանալու կապակցությամբ: 2006 թվականը, հնարավոր է, նաև որոշ հետագա ժամանակաշրջան դիտվում էր որպես վերջին պահուստային ժամանակ «տուժած» կողմի՝ այսինքն Արդրեջանի համար, միջազգային հարաբերություններում նոր քաղաքական պարտիզմաների հաստատումից առաջ, իր խնդիրները կարգավորման համար: ԱՄՆ-ն և Եվրոպական հանրությունը շարունակում են հակամարտության կարգավորման գործընթացի իմիտացիոն քաղաքականությունը, ինչի համար 2006 թվականը օգտագործվեց որպես սապակե ռոշում որոնման ապարդյունության ցուցադրման և կողմերի միջև համաձայնության համար: ԱՄՆ-ի և Եվրոպական հասարակության քաղաքականությունը կայանում է Արդրեջանին, այդ թվում արդրեջանական հասարակությանը, համոզել գործորի՝ գոյություն ունեցող դրությամբ ճանաչման անհրաժեշտության մեջ: Արևմուտքի քաղաքականությունը և փորձագետները գործնականորեն իրական չեն համարում կարգավորման ոչ մի տարբերակ: Դրանով հանդերձ, կարծես, ի հայտ է գալիս նոր խնդիր՝ Դարավային Կովկասում իրավիճակային որոշումների նախապատրաստում, որոնք ընդունվել են (կամ պետք է ընդունվեն) Բոսնիայի, Կոսովոյի և Գլոսիսային Կիպրոսի վերաբերյալ: Այս ակնաններում Դայաստանի քաղաքական գործիչների կողմից ցանկացած մտադրությունը արագացնում կարգավորման գործընթացը, կարելի է համարել սխալ և անհամապատասխան ոչ իրավաբանական քաղաքականության գործընթացների զարգացման օրինաչափություններին: Արդրեջանի ղեկավարությունը բաց գիտակցում է, որ աշխարհը փոխվում է, ի դեպ արագ տեմպերով, և ծագում է անբարենպաստ քաղաքական պրակտիկա տարբեր նախագծերի որոշման մեջ: Եթե ինչ-որ երկրի ղեկավարող վարչակազմն իրոք պատեկազմելու մտադրություն ունի, ապա այդ ծագումը չի վերաբերվի ցուցադրական ֆարսի: Պետք է ստել, որ, ի տարբերություն Ռուսաստանի, ԱՄՆ-ն և ԵՄ-ն ակտիվորեն օգտագործում են Արդրեջանի միլիտարիստական հիստորիան՝ որպես ճնշում Դայաստանի վրա, սակայն նրանք համոզվեցին, որ դա լրիվ անմատա է: Միևնույն ժամանակ, այս ճշումը բացատրվում է ոչ թե «դարաբաղյան» մոտիվներով, այլ պայմանավորված է Դայաստանը Ռուսաստանի ազդեցությունից դուր բերելու ծրագրերով, այսինքն տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքում շտկումներ մտցնելով:

Անվերահսկելի տարածքների հիմնախնդիրների և տարածքային հակամարտությունների լուծման որոշակի մոտեցումներ ԱՄՆ-ում մշակված են արդեն ավելի քան 7 տարի: Այս մշակումներին մասնակցում էին ոչ

մեծ թվով փորձագետներ և նախագծողներ, սակայն այս հետազոտությունները անցկացվում էին չնայած ոչ փակ, քայքայ ոչ էլ հրապարակային ռեժիմով: Բավական նախանշաններ կան այն բանի, որ ԱՄՆ-ում արդեն ձևավորված են այս խնդիրների լուծման մոտեցումները, որոնք, ինչ-որ չափով, կարելի է ներկայացնել որպես կարևոր պահուստ որոշակի դոկտրինի ընդունման և մշակման համար: Այս «դոկտրինը» հիմնված է ոչ թե գաղափարական, այլ քաղաքա-տեխնոլոգիական սկզբունքների վրա և պարունակում է լուծման նպատակային գործառույթներ տարածաշրջանում նոր քաղաքական և աշխարհաքաղաքական ենթակա և ընդունելի պայմանների ստեղծման համար: ԱՄՆ-ն վճարակառույթային լի է և պատրաստ մոտակա տասնամյակում լուծել հրթիռային պորոլեմների և զենքի նոր տեսակների ստեղծման հիմնական խնդիրները, որոնք համարվում են արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություն և անվտանգության նոր գլոբալ համակարգի ստեղծման հենասկզբային խնդիրներ: Այս խնդիրների լուծումից հետո, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը եուրյունը և հիմքը կդառնա տարածաշրջանային քաղաքականությունը, այսինքն՝ նոր աշխարհաքաղաքական կառույցների նախագծման մեթոդների և մոտեցումների ամբողջականությունը, որոնք պատասխանատու և օժանդակող են անվտանգության գլոբալ համակարգի ստեղծմանը, այդ թվում՝ տնտեսական և էներգետիկ: Դրա հետ կենտեղ, ԱՄՆ-ն չի կարող չընդունել, որ տարածաշրջանային քաղաքականության կարևոր խնդիրները մեկը համարվում է ամբողջությամբ լեգիտիմ ճանապարհով նոր պետությունների ստեղծումը: Բրիտանական աշխարհաքաղաքական կառուցվածքը, որը ստեղծվել է երկրորդ աշխարհամարտից հետո, ամերիկյան դոմինանտության ծավալման համար ավելի ու ավելի է դառնում լուրջ սահմանափակող, որն իր նշանակությանը դարձել է երկրորդ խոչընդոտը, խորհրդային աշխարհաքաղաքական համակարգից հետո:

Բազմիցս տիրաժավորված ԱՄՆ-ի սկզբունքները և Կոսովոյի խնդրի լուծման մեջ եվրոպական Միությանը պարտադրված մոտեցումները, իրականում, լիովին համապատասխանում են Վաշինգտոնի երկարաժամկետ մտադրություններին: Դա նշանակում է, որ նմանատիպ որոշումը չի կարող կիրառվել հակամարտությունների և անվերահսկելի տարածքների նկատմամբ, եթե տվյալ գոտիների քաղաքական պայմանները չեն համապատասխանում նրանց, որոնք ձևավորված են Կոսովոյում: Կոսովոյում պայմանները ենթադրում են.

1. Չինված և քաղաքական հակամարտության առկայություն, որն ապացուցում է միջազգային պատասխանատվություն ցեղասպանության գործողությունների, զանգվածային ոչնչացման և բնակչության բռնագաղթի իրականացման հնարավորության, կենսագործունեության պայմանների խախտման, միջբնիկական և միջկրոնական առնակատումների բացահայտ առկայության մեջ, որոնք կրեթեն այդպիսի հետևանքների
2. Էթնիկական հասարակության հակամարտության մեկ կամ մի քանի սուբյեկտների առկայություն, որոնք արտահայտում են քաղաքական անբիցիաններ, անջատողական ձգտումներ
3. Հակամարտության մարման գործընթացին միջազգային ինստիտուցիոնալ բնույթի հաղորդումը՝ միջազգային առաջատար կազմակերպությունների և ժողովրդավարական բնույթի խոշոր պետությունների մասնակցությամբ

4. Խաղաղասիրական կամ ռազմական խոշոր գործողությունների անցկացում, տարածաշրջանի և հակամարտող կողմերի անվտանգության ապահովման նպատակով՝ ժողովրդավարական պետությունների մասնակցությամբ և միջազգային կազմակերպություններ որոշմամբ

5. Տարածաշրջանում ընթացիկ քաղաքական համակարգի լիովին ապամոտաժում, ժողովրդավարական հասարակության և ամենից առաջ, ընտրովի ներկայացուցչական և գործադիր իշխանությունների հիմքերի ստեղծում, ժողովրդավարական հանրության և միջազգային կազմակերպությունների սկզբունքների և պահանջների պահպանում

6. Էթնիկական և կրոնական փոքրամասնությունների ազատությունների և իրավունքների պահպանում

7. Եվրոպական Միության և ԱՄՆ-ի միջև ձեռք բերված համերաշխ որոշումների և քանքերի կորդինացում:

Այսպիսով, բազմաթիվ համապատասխան պայմանների առկայության դեպքում կարևորագույնը համարվում է ԱՄՆ-ի և Եվրոպական Միության ռազմական և քաղաքական վերահսկողությունը, իհարկե, տվյալ տարածքի նկատմամբ, և ԱՄՆ-ի շրջանակում: Ռազմական ներկայությունը և քաղաքական պատասխանատվությունը միջազգային հանրության կողմից լեգիտիմ որոշումների շրջանակներում, անկասկած, կհանգեցնեն ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում արդեն նոր պետությունների ստեղծման գործընթացում: Այսինքն, կիրառվում է անկասխանապես որոշակի տեխնոլոգիա և սխեմա: Անկասկած է, որ անկախության գործընթացները, շատ դեպքերում, կկիրառվեն ընտրողաբար՝ կախված ԱՄՆ-ի և նրա գործընկերների շահերից: ԱՄՆ-ում լիովին հնարավոր են համադրում 15-25 տարի հետո մինչև 3 տասնյակ նոր պետությունների ստեղծումն աշխարհում, որը աշխարհաքաղաքական դասավորման մեջ նշանակալի փոփոխություններ կբերի, հիմնականում, Առաջավոր Ասիայում և Ֆարավարեյան Ասիայում: Այս դոկտրինը թույլ է տալիս ոչ միայն ամրապնդել ԱՄՆ-ի գործընկերների դիրքերը, այլև մեծ հաշվով կախվածության մեջ պահել գործընկերներին, քանի որ, նոր պետությունները ինքնըստինքյան կարող են հանդես գալ գործընկերոջ դեմ:

Օրինակ, եթե Վրաստանը չի կարող արդյունավետ գործընկեր դառնալ ԱՄՆ-ի և Եվրոպական Միության համար, ապա որոշ ուղղություններում և որոշ սահմանափակ գործառույթներով այդ ֆունկցիան կարող է կատարել Աբխազիան: Արդեն 2002թ. աշնանը, ԱՄՆ-ի Ազգային Անվտանգության խորհրդի համապատասխան բաժնում կային բավական մանրամասն քաղաքական-աշխարհագրական քարտեզներ, որոնցում ներկայացված էր Ուկրաինայի, Բոսնիայի, Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Եգիպտոսի, Ալժիրի, Մարոկոյի, Բիրմայի, Հնդկաստանի, Պակիստանի, Թայլանդի, Ինդոնեզիայի քաժաման պատկերները: Կարելի է ենթադրել, որ այս սխեմաները արտահայտում են միայն եքոտարածքային խնդիրների առկայությունը, սակայն խնդրին որոշակիություն հաղորդելն ինքնին դրա լուծման առաջին քայլն է: Կոսովյան մոդելն արդարացիորեն ներկայացվում է որպես յուրահատուկ, քանի որ ոչ մի տեղ չկան նմանատիպ պայմաններ, նախ և առաջ, և ԱՄՆ-ի գինված ուժերի դասավորության տեսքով: Այն տարաշրջաններում, որտեղ սա տեղ կգտնի, դա կարվի կամ էթնիկական խմբերի հարկադիր ենթարկելու, կամ նոր պետությունների անվասխան տեսքով՝ կախված ամերիկյան շահերից: Մեր կողմից ավելի մերձակա ռեժիմում որպես այդպիսի իրադարձություններ դիտարկվում էին Աբխա-

գիայում, Հարավային Օսիայում, ԼՂՀ-ում, Կոսովոյում, Պաղեստինում և Իրաքյան Քրդստանում տեղի ունեցող գործընթացները, իսկ վերջին իրադարձությունները կարծես հաստատում են այս վարկածը: Հավանաբար, որոշ պատճառներով մինչև 2006թ. ԱՄՆ-ն պատրաստ չէր այս դոկտրինի ընդարձակմանը: Նեկայումս այս դոկտրինը ծավալվում է ամբողջությամբ: Կարելի է ենթադրել, որ նախկին մտտեցումները կիրառություն չգտան և ընդունվեցին որպես չկայացած: Բացի այդ, պետք է նկատել ունենալ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության որոշակի ժառանգականություն և դեմոկրատական կուսակցության իշխանության գալը, որն այժմ քարոզում է ծախ և աջ-լիբերալ գաղափարներ, որը կարևոր գործոն կարող է դառնալ նոր պետությունների անկախացման այս նոր դոկտրինի կիրառման համար: Արտաքին քաղաքական սապեկտներում այն գաղափարները, որոնք անցկացնում են դեմոկրատները, ինչքան էլ տարօրինակ է, համապատասխանում է այն խմբավորումների գաղափարներին, որոնք անդամներին ընդունված է ամենայն նեոպապիստոսականներ:

Լեոնային Ղարաբաղի Հիմնահարցի ներկայիս իրավիճակն ունի քաղաքական գործընթացների զարգացման որոշակի նախնական փուլ: Մոտավորապես 1999թ. աշնան կեսերին ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը Պետդեպարտամենտի համապատասխան բաժանմունքների պահանջելով Ղարաբաղյան Հիմնախնդրի կարգավորման առաջարկներ: Սակայն տվյալ բաժանմունքները չկարողացան առաջարկել կարգավորման իրական ծրագրեր: Նշված իրադարձություններից հետո, ծրագրի վերամշակումը հանձնարարվեց ԱՄՆ-ի գեներալ Վերլուժակյան և փորձագիտական հաստատությունների: Այս ջանքերի արդյունքում հաջողվեց հավաքել ստեղծված իրավիճակի միայն առանձին փորձագիտական գնահատականներ և բնութագրումներ: Այս գործին մասնակցեցին վերլուծաբաններ և փորձագետներ՝ կապված ինչպես նախկին լրբիստական շրջանակների, այնպես էլ հայամետ տրամադրություններ ունեցող վերլուծաբանների հետ: Ավելի իրատեսական (ըստ Պետդեպարտամենտի կարծիքի) ծրագիրը առաջարկվեց Հայաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հարրի Գիլմորի կողմից, որն այժմ համագործակցում է դիվանագիտական ծառայության կրթական հաստատության հետ: Քանզի Հարրի Գիլմորը երկար ժամանակ կապված էր թուրքական խնդիրների հետ, նրա ծրագիրը գործնականում կապվում էր թուրք-հայկական հարաբերությունների առաջնահերթ կարգավորման խնդրի հետ: Գաղափար այն էր, որ Հարավային Կովկասում կա 2 հիմնական խնդիր՝ ռուս-վրացական և թուրք-հայկական: ԱՄՆ-ի և Արևմտյան հանրության քաղաքականությունը պետք է ուղղված լինի Ռուսաստանից Վրաստանի ավելի հեռացումը՝ ընձեռելով նրան անհրաժեշտ քաղաքական և ֆինանսական աջակցություն, միևնույն ժամանակ կարգավորել թուրք-հայկական հարաբերությունները՝ որպես Հարավային Կովկասի տարածաշրջանի նկատմամբ ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի վերահսկողության իրականացման որոշիչ գործոն: Գ. Գիլմորի կարծիքով (հնարավոր է նաև նրա համահեղինակների) Ղարաբաղյան Հիմնախնդիրը համարվում է «Հայաստան-Թուրքիա-Արդրեջան» հարաբերությունների սծանցյալը, որոնք պետք է դիտարկել միասին: Անհրաժեշտ է նշել, որ Գ. Գիլմորը անձնական մտերմի հարաբերություններ ունի Մարկ Գրոսմանի հետ, ինչպես նաև Ջ. Քուչմանի հետ: Այս հարաբերությունները ստեղծում են Գ. Գիլմորի և Մ. Գրոսմանի, ինչնույն

ստեղծագործող անհատներ, մշակում էին այս կամ այն քաղաքական ծրագրերը՝ կապված Թուրքիայի հետ, իսկ հետագայում Եվրասիայի պետությունների և Ռուսաստանի վերաբերյալ:

ԱՄՆ-ի այս ծրագիրը նախատեսում էր.

1. Արդրեջանի վերահսկողության ներքո Լեոնային Ղարաբաղի վերահարձակման անհնարինությունը:

2. Լեոնային Ղարաբաղի անկախային գոյության անհնարինությունը և Հայաստանի հետ հաղորդակցության ապահովման համար նրան սահմանակից Լաչինի շրջանի տարածքների ընդարձակումը:

3. Խնդրի կարգավորման բոլոր նախնի փաթեթային և փուլային մտեցումների անարդյունավետությունը, բանի որ ոչ՝ Արդրեջանը, ոչ՝ Հայաստանը պատրաստ չեն կարգավորման այս մտեցումներին:

4. Կարգավորման «հենակետային» մտեցումների ստեղծումը՝ հիմնված Թուրքիայի, Հայաստանի և Արդրեջանի միջև օգտագործման համար բաց ինստիտուցիոնալ հաղորդակցական միջանցքների ստեղծման վրա, համաձայնության ձեռք բերում տնտեսական հարաբերությունների զարգացման մասով՝ մինչև մինչյանց քաղաքական ճանաչման ակտերը:

5. Այս հաղորդակցական «միջանցքները» պետք է վերահսկվեն ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Լորվելիայի, ՆԱՏՕ-ի այլ երկրների ուղղակի սահմանափակ քանակակազմի կողմից:

6. Ենթադրվում է 4 հաղորդակցական «միջանցքների» ստեղծում՝ Կարս-Գյումրի-Ղազախ, Կարս-Երասու-Նախիջևան-Մեղրի-Ալյաթ-Բաբու, Նախիջևան-Լաչին-Մտեվհանակերտ-Եվլախ: Հնարավոր է, որ այս երթուղիները վերջնականապես ճշտված չեն եղել:

7. Տնտեսական համագործակցության հիման վրա ձեռք են բերվում ընդհանուր պայմանավորվածություններ 3 պետությունների համակցության և քաղաքա-տնտեսական ինտեգրացիայի համակարգի շուրջ՝ ԱՄՆ-ի և Եվրոպական հասարակության մասնակցությամբ:

8. Կարգավորման բոլոր եղանակները պետք է ենթարկվող մտեցումները կարող են դիտարկվել որպես երկրորդական այս նախագծի նկատմամբ, որը հանդես է գալիս որպես կոնցեպտուալ մեխանիզմ:

Այսպիսով, այս նախագիծը հիմնվում էր Հայաստանի, Արդրեջանի և Թուրքիայի տնտեսական խնդիրների լուծման հնարավորության վրա: Կասկած չկա, որ հենց Հայաստանն է դիտվում որպես ավելի շահագրգիռ կողմ հաղորդակցությունների բացման մեջ: Այս ծրագիրը ենթադրում է Հարավային Կովկասից Ռուսաստանի դուրս մղում և տարածաշրջանի պետությունների հետ Իրանի հարաբերությունների վրա վերահսկողության հաստատում: Նախագիծը ենթադրում է կարգավորման և գոյակցության համակարգի ստեղծում, ինչպես նաև իրենից ներկայացնում է համաձայն խնդիրների լուծման փորձ:

Այս նախագիծը ծավալվեց 1999 թ. աշնան վերջին և դիվանագիտական ճանապարհներով տարածում գտավ 2000 թ.: Պետք է նշել, որ ԱՄՆ-ն չփորձեց քարոզել կամ տարածել այս նախագիծը: Գործնականում այս նախագիծը դուրս չեկավ խիստ զաղտնի քաղաքական կապերի շրջանակից: Ընդ որում հիմքեր կան պնդելու, որ ԼՂՀ-ի և Հայաստանի քաղաքական իշխանությունը և դիվանագիտական ծառայություններն ամբողջությամբ չընկալեցին այս նախագծի նշանակությունը: Կոնկրետ ֆունկցիոններին թվում էր, որ խտրաբ գնում է ինչ-որ մասնավոր նախագծի մասին, որն ուղղված է հակամարտող կողմերի միջև հարաբերություն-

Ների բարելավմանը: Թերագնահատված էր Թուրքիայի դերը, որը ենթադրվում էր այս նախագծով:

ԱՄՆ-ի այս նպատակների հետ կապված պետք է որոշել Հայաստանի դերն ու տեղը Վաշինգտոնի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ: Ներկայումս Հայաստանի դիրքը շատ է հիշեցնում Սիրիայի դիրքն ու տեղը Մերձավոր Արևելքում: Զույնենալով նշանակալի ունկնդրալ նետուրաներ, զբաղեցնելով խոցելի աշխարհաքաղաքական դիրք, Սիրիան պահպանում է իր առանցքային դերը տարածաշրջանում՝ շնորհիվ քաղաքական կողմնակի քաղաքականության, պաշտպանելով արաբական աշխարհի շահերը, պահպանում է տարածաշրջանային առաջատար ռազմական տերության կարգավիճակը: Սիրիայում ազդեցության համար այսպես էր զննում արաբական առաջատար պետությունների, ԱՄՆ-ի, եվրոպական Միության, Ռուսաստանի և Իրանի միջև: Երկու ձևով պատկերացնելով նաև Հայաստանի տեղն ու դերը, հասկանալով, որ Հայաստանը Հարավային Կովկասում միակ երկիրն է, որը կարող է զարգացնել բարձր տեխնոլոգիաներ, ունենալ մարտունակ բանակ, ստանալ միաժամանակ և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի օժանդակությունը, ԱՄՆ-ն ձգտում էր «պահեստավորել» Հայաստանը տեսանելի ապագայի համար, շրջափայտց նպատակով: ԱՄՆ-ի համար կարևոր գործոն է այն, որ 1,5 մլն. հայեր համարվում են ամերիկյան ազգի օրինապահ և ինտեգրված մաս: Կապված սրահ հետ, ԱՄՆ-ի ինչ-որ կոչտ քաղաքական և տնտեսական ճնշման մեթոդները Հայաստանի վրա բացառվում են: Սակայն Հայաստանի «պահեստավորման» վարկածը, եթե նույնիսկ ներկայումս մնում է արդիվատ, ապա այժմ արդեն այս վիճակում էլ նկատվում է քաղաքային դինամիկա: Շարունակելով սահմանափակել Հայաստանի նկատմամբ իր քաղաքականությունը՝ ԱՄՆ-ն «զուրկավոր հեղափոխությունների» անհաջողություններից հետո հաճախ երկիրը հավասարակշռման դիրքից միջազգային հարաբերություններ դուրս բերելու գաղափարին՝ տարածաշրջանում ամերիկյան ռազմավարությանը ավելի ակտիվ ինտեգրվելու փուլին:

Ներկայումս Հ. Գիլմորի այս նախագիծը գործնականում ապատրոհականացված է և, ամենայն հավանականությամբ, գտնվում է պահեստում: Դա բացատրվում է նաև նրանով, որ ԱՄՆ-ն չի ցանկանում ակտիվորեն միջամտել Հարավկովկասյան հակամարտությունների (որոնք ամերիկացիները վտանգավոր չեն համարում իրենց աշխարհառաջավարական և աշխարհատնտեսական նպատակների համար): ԱՄՆ-ում օրինակներ են բերվում գերմանական և ֆրանսիական տնտեսական երկրամասի հաջողությունների մասին՝ ծախսերի քաղաքականության ասիմետրիան քաղաքական ներկայություն ապահովելու Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, Իրանում և Մերձավոր Արևելքում: Այս արտաքին քաղաքական գաղափարախոսության սահմաններում ԱՄՆ-ն ձգտում է մի քիչ իջեցնել Կենտրոնական Ասիայում իր պատասխանատվության մակարդակը և, կարծես, վերանայում է Հարավային Կովկասում իր քաղաքականության համանման տարբերակները: Դեռևս չկան Հարավային Կովկասի նկատմամբ այս արտաքին քաղաքական գաղափարախոսության իրացման որոշակի նշաններ: Սակայն պետք է հասկանալ, որ «պատասխանատվության մակարդակի իջեցման» ներքո մենք հասկանում ենք միայն մասնակցություն անվտանգության ապահովման մեջ, այլ ոչ քաղաքական և տեղեկատվական ներկայությունը: ԱՄՆ-ն չի պատրաստվում լքել այս տարածաշրջանները, որոնք դիտվում են որպես էներգակիր: Սակայն

տարածա-շրջանի հիմնախնդիրների բազմաբարդությունը պայմանավորում էր ԱՄՆ-ի ձգտումը չակտիվանալու և փաստացի գաղափարն այն խնդիրներով, որոնք չեն ստեղծում զգալի սպառնալիքներ ամերիկյան նախագծերին և կարող են մնալ չլուծված՝ առանց զգալի վնաս հասցնելու ամերիկյան շահերին:

Պետք է նշել, որ եվրոպական խորհրդարանի կողմից հաստատված այսպես կոչված «ընդհանուր պետության» մոդելը առաջարկված է ոչ թե նվտուացիների, այլ ամերիկացիներ էղվարդ Ջեքիջյանի և Պիտեր Ռոզենբլատի կողմից: (Է. Ջեքիջյանը քաղաքական նախագծողներից մեկն է, մտն է Հանրապետական կուսակցությանը, Մերձավոր Արևելքի մասնագետ է): Այս մոդելը գործնականում թույլ կտար բացահայտել կարգավորման շեղված գաղափարներն ու ԵՄՀԿ-ի նախաձեռնությունները: «Ընդհանուր պետության» գաղափարի քննարկումները թույլ տվեցին բավական երկար ժամանակով և, որ գլխավորն է, խիստ կարևոր քաղաքական ժամանակաշրջանում հետաձգել կարգավորման այս սխեմաները, ինչը թույլ տվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը իրականացնել պաշտպանության և անվտանգության մի շարք խնդիրներ, լուծել կազմակերպչական հարցեր քաղաքացիական կառավարման ոլորտում, ինչպես նաև հարցադարձ տնտեսության քայքայումը և Ղարաբաղյան մարզում քնակեցման համակարգի խոչընդոտները: Էղվարդ Ջեքիջյանը ղեկավարում է Ջ. Բեկերի Ինստիտուտը Ղրաբանում, որը համարվում է ԱՄՆ-ում նախկին իրզնեսի առաջատար «ուղեղային» կենտրոնը, նախկինում աշխատել էր ղեկավար Իսրայելում և Սիրիայում, ինչպես նաև Անվտանգության խորհրդում նախագահի հատուկ օգնական, մտածում է ոչ միայն աշխարհատնտեսական բնույթի կատեգորիաների մասին, այլև լավ ծանոթ է տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման մոտեցումների և միջոցների: Պիտեր Ռոզենբլատը, որը գլխավորում է քաղաքական խորհուրդը և համարվում է ԱՄՆ-ում լոբբիստական կազմակերպությունների կարկառուն ֆունկցիոներ, կպետք ունի Ադրբեջանի իշխող շրջանակների հետ, նույնպես չի տարվում Ղարաբաղյան Հիմնախնդրի շուտափույթ կարգավորման պատրաստեցնելով: Երկու քաղաքական գործիչներն էլ առաջարկեցին խնդրի լուծման այլ մոտեցում, որը կոչ էր անում արմատապես վերանայել Լեռնային Ղարաբաղի կառավարման ձևը, որը խիստ հիշեցնում էր ԽՍՀՄ ԿԿ-ի փորձերը լուծել այս խնդիրը՝ 1988թ. Ա. Վոլսկու գլխավորությամբ «Կառավարման հատուկ կոմիտե» ստեղծելու միջոցով: Օժաղմունկ այլ ամերիկացի է. Ջեքիջյանը և Պ. Ռոզենբլատը՝ մարդ, որը մտերիմ հարաբերություններ ունի Ադրբեջանի իշխանությունների հետ, փորձում էին ոչ թե արագացնել կարգավորման գործընթացը, այլ խնդիրը դուրս բերել քաղաքական նոր վիճակի, որը ճանապարհ էր բացում պետական այս կառուցվածքի անկախացման համար: Հետագայում այս մոտեցումը կներդրվի «Միջազգային ճգնաժամային խմբի» առաջարկի մեջ: Այս երկու նախագծերը նպատակ չէին հետապնդում լուծելու խնդիրը, այլ փորձում էին հանել դրա սրությունը և Հարավային Կովկասում ստեղծել ավելի անվտանգ պայմաններ: Այսպիսով, արդեն 1997թ. ԱՄՆ-ն որոշակի ինստիտուցիոնալ պայմանակարգում մոտեցավ ԼՂՀ-ի անկախացման գաղափարին:

Այդ ժամանակ Ֆրանսիան, որը մեծ հաջողությունների էր հասել օրագնացության և այլ բարձր տեխնոլոգիական շուկաների գրավման մեջ, ըստ լուրջան, հաստատեց իր վերահսկողությունը կասպիական խոչընա-

գույն Թեմզիզի նավթի հանքավայրի վրա՝ ձեռք բերելով «Բրիթիշ Փետրոլիումի» բաժնեմասը, ինչպես նաև առաջատարը էր Իրանի հարավում նավթի և գազի վերամշակման մեջ: Ֆրանսիան և Գերմանիան խիստ հետաքրքրված են իրանական գազի եվրոպա արտահանմամբ: Ներկայումս Ֆրանսիայի և Գերմանիայի կառավարությունները, երկու երկրների խոշորագույն բանկերի հետ համատեղ, մշակում են Իրան - Չայաստան - Վրաստան - Աև ծով - Ուկրաինա - Եվրոպա ցամաքային գազատարի նախագիծը: ԱՄՆ-ն, չնայած «Իրանական գործունի» առկայությանը, հետաքրքրված է Ռուսաստանից՝ Եվրոպայի էներգետիկ կախվածության նվազեցմամբ: Եվրոպայում իրականացվող գազի գների ազատականացումը կհանգեցնի որանց բարձրացմանը, որը թույլ կտա ապահովել իրանական գազի օգտագործման բարձր շահութաբերություն: Դրա հետ կապված Ֆրանսիան՝ որպես համաեվրոպական քաղաքականության ուղղորդող, չափազանցված է Չայաստանում և Վրաստանում կայունության ապահովմամբ՝ որպես գազատար երթուղու ավելի խոցելի տարանցիկ երկրների (Նշեմք, որ սովորաբար այսպիսի մոդուլային գազատարները ունենում են մինչև 35 - 55 մլրդ խորանարդ մ. բաց թողնման հնարավորություն: Այժմ ԵՄ-ի երկրները սպառում են 500 մլրդ խորանարդ մ., որից մինչև 124 մլրդ խորանարդ մ. մտնում է Ռուսաստանից):

Քաղաքական վարկածներն ու ենթադրությունները չեն հնանում, եթե որանց հերքված չեն: Այլ խնդիր է, որ քաղաքական վարկածները սահմանված են քաղաքական դասի կամ նրանց համար, ովքեր կարող են քաղաքական ընկալել: Նրանց, ովքեր հայտնվեցին ոչ ֆորմալ քաղաքական սահմաններից դուրս, ավելի շուտ պետք է սկանդալ, քան քաղաքական վերլուծություն: Մինսկի խումբը կուտակվել է տարածաշրջանային խնդիրների քննարկման մեջ տարբերակված մոտեցման ոչ քիչ փորձ այնպիսի պայմաններում, երբ բոլոր երեք գործընկերները նշանակալի շահեր ունեն, չեն ցանկանում զիջել մեկը մյուսին ռազմավարական հարցերում, սակայն լիովին պատրաստ են համագործակցության և փոխըմբռնման տարածաշրջանի առանձին ինդիվիդուալ շուրջ: Այսինքն, Կովկաս-Կասպիական տարածաշրջանում իրենց սկզբունքային, մրցակցային ռազմավարությունը շարունակելու պայմաններում ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Ֆրանսիան (որը փորձում է արտահայտել ինչ-որ համաեվրոպական դիրքորոշում) հետաքրքրված են ռազմական հակամարտությունների հնարավոր վերակենդանացման մարմամբ և կասեցմամբ: Իհարկե, որպես հետաքրքրված արտաքին կողմեր խոսել միայն Մինսկի խմբի երեք համաձայնագրահանրի մասին այնքան էլ ճիշտ չէ, քանի որ այս գործընթացում ոչ պակաս կարևոր դեր է կատարում Մեծ Բրիտանիան, ինչպես նաև խիստ ակտիվ է Թուրքիան, բայց և այնպես մշակումների և համաձայնեցման գործընթացում նշված են համաշխարհային աշխարհաքաղաքականության երեք «բևեռների» երեք դիրքորոշումները: Մրցակցության և համաձայնության ճկուն զուգադրման այս մարտավարությունը իրենցից ունի մի օրիգինալ և նոր քան չի ներկայացնում համաշխարհային քաղաքականության մեջ, սակայն Դարավային Կովկասում փորձագիտական լայն հասարակության համար այս ոճը դիտվում է գրեթե ֆանտաստիկ վարկած: Իրական իշխանության տուլբյուտների համար այս բոլոր դատողությունները ընդհանրապես ավելորդ ծխախոտ են, եթե նույնիսկ ժամանակ առ ժամանակ ի հայտ է գալիս «զուգահեռ

իրականության» գոյության և ոչ հրապարակային քաղաքականության ինչպեստիվների գազգողություն:

ԱՄՆ-ի վարչակազմի բարձրաստիճան աշխատակից Մեթյու Բրայզայի կողմից հրապարակվել են ամենակն ոչ մշուշուտ ակնարկներ, որոնք վերաբերում են Դարաբաղյան Զինամխմորի կարգավորման հնարավոր սխեմային: Սակայն, հարձարվելով դիվանագիտական ելևէջների գաղտնիությանը, կարելի է հասնողված լինեն, որ առաջարկվում է պատճենահանված կարգավորման սխեման, որը կարծես վերամշակված է տիրապետչական Միջազգային ճգնաժամային խմբի կողմից: Այսինքն, առաջարկվում է չհասնել որոշակի արդյունքների, այլ ստեղծել նոր իրավիճակ, երբ Ադրբեջանը, ստանալով այն, ինչը կորցնել է Դարաբաղի դեմ իր ագրեսիայի հետևանքով, չի կարող ինչ-որ պահանջներ առաջ քաշել առաջիկա 20 տարիներին, այսինքն մինչև նավթի հանույթի «սուրբ» ժամանակաշրջանի վերջը: Այս նոր, բայց իհն սխեման քննարկման առաջին փուլի ժամանակ ենթադրում էր ԱՄՆ-ի բավական ուժեղ ճնշումը հակամարտության կողմերի, սակայն, իհարկե գլխավորապես Չայաստանի վրա: Բրիտանական կառավարության հովանու ներքո ստեղծված նախագծողների կոնսորցիումը շատ ավելի վաղ, քան Ռաժմուլեյի ներկայացումը, հասկացավ, որ հայտնվել է ամհարմար իրավիճակում, քանի որ չհայտնաբերվեցին այն քանի շնանները, որ Կաշինգտոնը պատրաստվում է ճնշում գործադրել Չայաստանի վրա: ԱՄՆ-ի վարչակազմը հաջողությամբ ծախսողց այն նախաձեռնությունները, որոնք կապված են եվրոպական քաղաքական հարթակի հետ, և այժմ փորձում է ցուցադրել իր հնարավորությունները այս ուղղության մեջ: Այս սխեման մշակված էր Մեծ Բրիտանիայի մի շարք վերլուծական և նախագծային ինստիտուտների և կենտրոնների համատեղ քննարկում, որոնք միավորվել էին «Դարաբաղյան կոնսորցիում» պայմանական անվան տակ: Այս «կոնսորցիումի» մեջ մտնում էին՝ International Alert, London Information Network on Conflicts and State-building (LINKS), The International Institute for Strategic Studies (IIS) և Conciliation Resources: Սակայն այս սխեմայի ձևավորումը իրականացրեց Միջազգային ճգնաժամային խումբը (ICG), որը գործում էր որպես ԱՄՆ-ի վարչակազմի արտաքին քաղաքական կառուցվածք:

Մեթյու Բրայզան և նրա անմիջական ղեկավար Դանիել Ֆրիդը «արևելաեվրոպական նախագծի» ղեկավարներն են: Դա նշանակում է ոչ միայն համապատասխան քաղաքական գաղափարախոսություն, տեխնոլոգիա և ռեաբանություն, այլ նաև նյութի շատ լավ իմացություն: Ըստ փորձառու ամերիկյան դիվանագետներից մեկի գնահատականի, «որպեսզի աշխատել Արևելյան Եվրոպայում, բավական չէ լինել դիվանագետ, պետք է լինել քստերական ռեժիտորի պես մեկը»: Դեռ այս վարչապարտները, որոնք զբաղված են տարածաշրջաններով և հիմնախնդիրներով, լինելով Ազգային անվտանգության խորհրդում, դարձան այն հասկացողության տարածողները, որ Դարաբաղում եղած իրականության չկա քաղաքական լուծում և չի կարող լինել վերադարձ անցյալին: ԱՄՆ-ն հայտնվեց երկիմաստ վիճակում՝ ընդունելով որոշում եթե ոչ անկախության ճանաչման, այլ Լեռնային Դարաբաղում եղած իրականության չկա քաղաքական մասին, ստիպված են խաղեր տալ ճակատագրի կողմից վիրավորված Ադրբեջանի հետ՝ մշակելով կարգավորման սցենարներ և նրան նախապատրաստել նոր իրականության հետ հաշտվելու անհրաժեշտության ընկալմանը: Այսինքն, խաղը շարունակվում էր գործնականորեն լրիվ

Աղբրեցանի վրա, որին միանշանակ արգելեցին պատերազմել, սակայն որին, իր ամբողջ վնասակարությանը հանդերձ, պետք է ցույց տալ իր դիրքերի ապարդյունությունը: Դա հեշտ չէ, եթե հաշվի առնել, որ աղբրեցանական հասարակությունը կարող է իր աշխարհայացքային առանձնահատկություններով բառացի ընդունել ԱՄՆ-ի վարչակազմի պատասխանատու պաշտոնյաների հռչակագրերը: Գործը հասավ նրան, որ վարչակազմի աշխատողները առանձին դեպքերում, օրինակ, «ուղեղային հարծակուսման» մասնակցության դեպքում նախընտրում են ներկայանալ որպես ԱՄՆ-ի առաջատար համալսարանների աշխատակիցներ:

Ըստ եվրասիայի և այլ տարածաշրջանների առաջատար ամերիկյան փորձագետներից մեկի վկայության, ԱՄՆ-ում աղբրեցանական (միաժամանակ և թուրքական) շահերի պաշտպաններին ուղղված իր հարցին՝ «Ինչպե՞ս համոզել Հայաստանին զեպել գիշուսներին» հետևեց պատասխանը, որ «պետք է ուղրել Հայաստանի ձեռքերը և կարողանալ դա անել մինչև վերջ»: Սակայն նույնիսկ այս պաշտպանները Ի. Ալիևից չստացան այն, ինչ սպասում էին քաղաքական ծառայությունների դիմաց, Վաշինգտոն կատարած նրա այդի ժամանակ: Այսինքն, նույնիսկ շահագրգիռ խնդրավորումները ավելի քիչ հիմքեր ունեն մնալ շահագրգիռ: Սա երևալություն չէ, սա մեր զանգիլ հետազոտություններն են անցկուսաբանական փորձագիտական հասարակության միջավայրում: Իսկ հնարավոր է՝ ի արդյոք ընդհանրապես նպատակաուղղված և ֆունկցիոնալ ճնշում Հայաստանի վրա Դարարադյան թեմայի շուրջ: ԱՄՆ-ն արդեն Հայաստանի վրա ճնշում գործադրելու փորձեր է ձեռնարկել, որի արդյունքում դեպքում Ջոն Օրդոնելը Պետդեպարտամենտում բարձր պաշտոնում նշանակվելու սպասումների կոխարեն ուղարկվեց «բարտի» արևոտ Դագախտանալ:

Չնայած ամերիկյան քաղաքականության մեջ որոշ մղուսներ կանխորոշվել են, օրինակ, «կարգավորել» թուրք-հայկական հարաբերությունները՝ Ռուսաստանից Հայաստանի մեկուսացման և այն մտարբրայի աստելիսի վերածելու ճանապարհով, Հայաստանում իշխանություն բերել կեղծ ազատական խնդրավորումները, որը ծրագրավորված է ծայրահեղ հնազանդության, ամերիկացիները երբեք չեն փորձել և խնդիր չեն դրել օգտագործել Դարարադյան Հիմնախնդիրը՝ որպես Հայաստանում իշխանությունների և հասարակության վրա ճնշման լծակ: Սա, անկասկած, լավ հիմք դարձավ ԱՄՆ-ի և Հայաստանի միջև հարաբերությունների զարգացման համար: Այս գործոնը ուներ այնպիսի նշանակություն, ինչպես ռուսական ռազմաբազան Գյումրի-ում: Եթե ԱՄՆ-ում որոշեն հրաժարվել իրենց սեփական «մուրաբություններից» և ամեն դեպքում օգտվեն Դարարադյան գործոնից Հայաստանի ներքին նախածեռնություններում, դա կլինի իրենց մեծագույն սխալը Հարավային Կովկասում քաղաքականության մեջ «վարդագույն հեղափոխությանը» հավանություն տալուց հետո: Դարարադյան հարցում մի կայարություն արդեն իսկ սաստիկ դառել է:

Բայց չպետք է բացառապես դրական ընդունել ԱՄՆ-ի քաղաքականությունը տարածաշրջանում: ԱՄՆ-ն այնպիսի երկիր է, որը և՛ '20, և՛ '21-րդ դդ.-ում թույլ է տվել մի շարք ռազմավարական սխալներ (իկարեն, իր շահերի տեսակետից) ինչպես հանրապետականների, այնպես էլ դեմոկրատների օրոք: Գլխավորը, ինչ կարող է անել ԱՄՆ-ն տարածաշրջանում պատերազմ թույլ չտալ է, գլխավորը, ինչը չի կարող անել ԱՄՆ-ն տարածաշրջանում պատերազմների երաշխավորված կանխումն է: Չնայած այս տարածաշրջանում երաշխիքների մասին խոսելն ընդհանրապես ծիծաղել-

լի է: Այսպիսով, անա հենց այս երկրներանքը, ոչ հրապարակային ուղր-տում, որն առկա է զուգահեռ քաղաքականության մեջ, կարող է հանգեցնել ռազմական գործողությունների վերականգնմանը, չնայած պատերազմի համա-կարգային գործոնների բացակայությանը: Այդ պատճառով, այն տեխնո-լոգիաները, որոնք կիրառվում են քաղաքական ռիսկերի գնահատա-կաններում, սանքը, Արևելյան Եվրոպայի այլ տարածաշրջաններում, ընդունելի չեն Հարավային Կովկասի համար: Հարավային Կովկասը հայտնի իմաստով ընդհանրապես Եվրոպա չէ և ոչ էլ սանգվինիկ Արևելյան Եվրոպա, այլ ավելի շուտ Ֆլեգմատիկ Մերձավոր Արևելք: Պատասխանա-տվությունը շատ բարձր է, սխալը այս դեպքում միայն սխալ չէ, դա անբեկանելի բացթողում է պայմանայի ջրանցում:

Երբեմն հարց է տրվում, իսկ ինչու՞ մանրամասնորեն չի քննվում Ռուսաստանի դիրքորոշումն ու քաղաքականությունը Դարարադյան հարցում: Իսկ ինչպես կարելի է որոշել Ռուսաստանի քաղաքակա-նությունը, եթե նա թույլ է տալիս կարգավորման սխեմաները հռչակել կամ ամերիկացիներին, կամ քրիտանացիներին, չնայած Մեծ Բրիտանիան նույնիսկ չի համարվում Միևսկի խմբի համանախագահող: Այնուամենայ-նիվ, Ռուսաստանին ամբողջությամբ ձեռնտու է ԱՄՆ-ի նախածեռնողական քաղաքականությունը: Եթե Մեծ Բրիտանիան գլխավորել կարգավորման գործընթացը, ապա Ռուսաստանի համար խիստ տհաճ կլինի, քանի որ չնայած Մեծ Բրիտանիան փորձում է իրացնել իր «Կովկասյան նախագի-ծը» որպես Ռուսաստանի վրա ճնշման լծակների ստեղծման ինտերակտիվ նախածեռնություն, ԱՄՆ-ն չի ստեղծել այսպիսի նախագիծ: Ամերիկյան նախագիծը Հարավային Կովկասում ունի բոլորովին այլ տրամաբանու-թյուն, բնույթ, ծագում, նպատակներ և խնդիրներ: Ամերիկյան նախագիծը Հարավային Կովկասում ունի «պատմայի ջրանցքի» տրամաբանու-թյուն և ուրիշ ռիշինչ, որը նույնպես սահմանափակ է ժամանակի մեջ: ԱՄՆ-ն տարա-ծաշրջանում «պատմական ժամանակի» հաշվարկ չի կատարում, անե-րիկյան պետության ղեկավարը 4 տարով ընտրվող նախագահն է, այն թե միապետը: Այսինքն ամերիկացիների հետ միշտ կարելի է պայմանավոր-վել, այդ թվում և ռուսները: Իսկ անա քրիտանացիները չեն կարող վիրա-վորված և ծայրահեղորեն խցկված չլինել Դարարադյան կարգավորման ներքը իրենց պլանների ծախտման պատճառով: Սա դժվարությամբ է շուրջ, և այդ պատճառով այս տերությունը նկատմամբ լավ է ցուցաբերել յուրահատուկ նրբազգացություն: Սա զգացվում է այնքան քաղաքորոշ և ապացուցված, որ իրենք՝ քրիտանացի փորձագետ-նախագծողները գզու-չանում են այն ցույց տալ: Ռուսաստանի պետք է ակտիվություն ցուցաբերել այնպիսի հարցերում, որոնցում չկան ոչ՝ պարզ մատակներ, ոչ՝ էլ ռեալ որոշումների ու արդիականացման կարիք: Ռուսաստանը գզա-ղցնում է բավական հասկանալի և կանխատեսելի դիրքորոշում: Այս դիրքորոշման մեջ Ռուսաստանը ռիշինչ չի կրցնում, այլ միայն ձեռք է բերում: Ռուսական իրականության մեջ ժամանակն ունի շատ տարբեր ուղվածություն, սակայն, ինչը շատ եական է, ժամանակը աշխատում է նրա օգտին: Եվ նրա լուրջ մրցակիցներից և ոչ որ դեմ է ժամանակի և իրա-դարձությունների այսպիսի ընթացքին, քանի որ նրանք շատ բաներում բավարարել են իրենց ամբիցիաները:

Բոլոր շահագրգիռ տերությունները, քաղաքությամբ Իրանի, բախվում են Դարարադյան Հիմնախնդրի կարգավորվածություն հետ: Բոլոր տերու-

թյունները, առանց բացառության, հասկանում են, որ քաղաքական «դաշտում» խնդիրը սկզբունքորեն կարգավորելի չէ: Հայաստանի ղեկավարներից ոչ ոք չի համարձակվի ռազմական գործողությունների բացակայության պայմաններում տարածքների վերադարձմանը: Իսկապես, պատմության մեջ եղել է արդյոք դեպք, երբ չավարտված պատերազմը բերի երկարատև և հաստատուն խաղաղության: Եվ հենց այստեղ առաջ է գալիս պարադոքս՝ երկու տերություններ, որոնք ավելի շատ են հետաքրքրված Լեռնային Ղարաբաղում՝ աշխարհաբալաբա-կան, իսկ ավելի ճիշտ աշխարհառազմավարական տարրով, կարող են որոշակի հանգամանքներում որոշ հիպոթետիկ հեռանկարում հետաքրքրված լինել ռազմական գործողությունների վերստանման մեջ՝ որանք, իհարկե, ԱՄՆ-ն և Ռուսաստանն են: Միայն այս երկու տերությունները կարող են հմտորեն օգտվել տարածաշրջանում աշխարհառազմավարական «հարթակներից»: Ոչ՝ Եվրոպան, ոչ՝ Թուրքիան, ոչ՝ Իրանը այս «հարթակներում» գործել չեն կարող: Հենց ԱՄՆ-ի և Ռուսաստանի համար լուրջ խնդիր են հանդիսանում քաղաքական հարաբերությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ՝ Ղարաբաղյան Հիմնախնդրի ամկայության պայմաններում: Սակայն այս տերություններին, ինչպես ամբողջ աշխարհին, ներառյալ Թուրքիային, շատ պարզ է, որ Ադրբեջանին մնում է հաշտվել Ղարաբաղի կորստի հետ: Մնում է միջոց գտնել Ադրբեջանին դրանում համոզելու: Ավելի արդյունավետ միջոց է համարվում պատերազմը: Սակայն մի պատերազմը մյուսի մտան է: Այս զարգափարի շրջանակներում ենթադրվող կարգավորման պատերազմի արդյունքում Հայաստանի և Ադրբեջանի քաղաքական ղեկավարները պետք է ցույց տան իրենց ժողովրդին ուժերի իրական վիճակը, իրենց զազի ներկա հնարավորությունները և կազմակերպվածության ու պահիռնարության մակարդակը: Այսինքն, ցույց տալ, «յուրաքանչյուրինը իրեն»:

Բայց, այդուհանդերձ, եթե հայկական զինված ուժերին հաջողվի պահպանել ներկա դիրքերը Ղարաբաղի քարտեզի վրա, Ադրբեջանում կարող է տեղի ունենալ իշխանությունից Ի. Ալիևի կլանի ուղղակի հեռացում: Եվ այս դեպքում ադրբեջանական հասարակությունը համոզիչ ապացույցներ չի ունենա, որ պատերազմը հնարավոր էր չափել: Կրկին կարող է հաստատվել հնգամյա կամ նույնիսկ տասնամյա զինադադար, սակայն «թեման» սպառված չի լինի: Հետևաբար, պետք են համոզիչ փաստաթղթեր: Ադրբեջանը պետք է հասնի որոշակի հաջողությունների, միևնույն ժամանակ խիստ զգալի զոհեր տալով: Այդ զոհերը կարող են լինել այնքան զգալի, որ ադրբեջանական ժողովուրդը կաղաչի իր իշխանությանը և ողջ աշխարհին դադարեցնել պատերազմը: Հայաստանի ղեկավարությունը նույնպես ձեռք կբերի փաստարկներ, երբ հայկական զորքերը կզիջեն ճակատի որոշակի տեղամասերում (նախանշված): Տեղի կունենա «օբյեկտիվ համեմունք»: Պետք է նշել, որ «յուրաքանչյուրինը իրեն» օբյեկտիվ սպասման» մասին գաղափարը նոր չէ հայկական քաղաքական էլիտայի համար: Արդյունքում Ռուսաստանը Ղարաբաղյան հարթակում հավանաբարության պահպանման հույս կունենա, քայքայ արդեն ավելի ցածր մակարդակում, ինչը նրան կօգնի նորմալացնել հարաբերությունները Ադրբեջանի հետ՝ չնայած հայ-ադրբեջանական հավանաբարության պահպանմանը: Համոզվելով, որ Ադրբեջանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականությունը չի կարող լինել արդյունավետ, Ռուսաստանի իշխանությունները կարող են դիտել այս «ռազմական կարգավորման» պահեստային գաղափարը որ-

պես արդիական: Սակայն կասկած չկա նրանում, որ Ռուսաստանը արդյունքում ուղղակի պատմականորեն տանուլ կտա: Հայաստանը վերջնականապես կընկնի ԱՄՆ-ի վերահսկողության տակ, իսկ ամերիկացիները տարածաշրջանում կսահմանեն «գոյակցության» կոշտ համակարգ: Դա էլ կլինի ոչ այլ ինչ, քան «հայոց պատմության ռուսական ժամանակաշրջանի ավարտը»:

Բացի այդ կարելի է վստահորեն հաստատել, որ ներկայումս ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև և, առավել ևս, Ռուսաստանի և ԱՍՏՕ-ի միջև չկան ինչ-որ համաձայնություններ Ղարաբաղյան Հիմնախնդրի կարգավորման շուրջ: Այդպիսի համաձայնությունը կարող է տեղի ունենալ տարածաշրջանների, նախ և առաջ Կենտրոնական Ասիայի և Կովկասի շուրջ ընդհանուր համաձայնությունների պայմաններում: Երբեքայումս կա ընդամենը սահմանափակ բնույթի բանավոր համաձայնություն, Կենտրոնական Ասիայում սահմանափակ և ծայրահեղականության հիմնախնդրի վերաբերյալ: Եթե խոսենք Ղարաբաղյան Հիմնախնդրի շուրջ համաձայնությունների մասին, ապա այն կարելի է ձևակերպել որպես «իրավիճակի մասին նախնական համաձայնություններ իրական քաղաքականության շրջանակներում»:

Միևնույն ժամի համաձայնագիտողներից մեկը՝ Ֆրանսիան, տարածում է իր ազդեցությունը Հայաստանի վրա, և հարաբերությունների այս փոխդասավորությունը լիովին բավարար է նրա համար, որպեսզի առաջ քաշվի եթե ոչ հավաստաշարկը, ապա զոնե այլընտրանքային առաջնությունը: Բայց, կարծես այս առիթով շատ եական խնդիրներ կան: Նախ՝ Ֆրանսիան չի ձգտում առաջնորդ դառնալ Միևնույն խմբում և քաջ գիտակցում է, որ ԱՄՆ-ն կընդդիմանա և կտապալի Ֆրանսիայի կողմից առաջ քաշված կարգավորման ցանկացած ծրագիր: Միևնույն ժամի Ֆրանսիայի դիրքորոշումը եղել է ճիշտ և ուշադրություն է դարձրել Հայաստանի շահերին և իր շահերին Հարավային Կովկասում, որոնք, ինչպես ինքն է ակնկալում, կիրառվեն ոչ հիմա, այլ ապագայում, երբ եվրոպական ինտեգրացիոն գործընթացները ստանան ավելի մեծ տարածում Հարավային Կովկասի տարածաշրջանում: Այսպիսի խնդիրներում Ֆրանսիան չի կարող զբաղեցնել այնպիսի դիրքեր, որ զբաղեցնում են այն երկրները, որոնք սովորաբար կատարում են միջնորդների դեր, ինչպես օրինակ Ֆինլանդիան կամ Եվեդիան: Դա վայել էլ այն երկրին, որն իրեն դիտում է որպես Եվրոպայի առաջնորդ:

Ռուսաստանը ևս սահմանափակ է իր հնարավորությունների մեջ, քանի որ առաջ է քաշել նախաձեռնություններ այն սկզբունքների սահմաններում, որոնք ներառվում են միջազգային իրավունքի մեջ, որն, անկասկած, կհանգեցնի Հայաստանի վրա ազդեցության կորստի: Անկախ այս լույսի համգամանքներից, չնայած Թուրքիայի և Ադրբեջանի հետ Ռուսաստանի հարաբերությունների գարգացմանը, դեռ չեն զգացվում նոր իրողություններ, որոնք թույլ կտան դուրս բերել ռուս-թուրքական-ադրբեջանական հարաբերությունները ռազմավարական համագործակցությունից: Ոչ՝ Ռուսաստանը, ոչ՝ Թուրքիան ոչ մի շոշափելի իմաստ չեն գտնում միմյանց զիջելու ռազմավարական դիրքերը հատկապես հեռանկարում: Ի տարբերություն ԱՄՆ-ի, որի դիրքերը Հարավային Կովկասում կարող են դիտվել երկարամյակ, քայքայ ամենակի ոչ դարավոր, Ռուսաստանի շահերն ունեն այլ ռազմավարական հեռանկար: Կերբին տասնամյակում բոլոր հետխորհրդային տարածքներում ձևավորվեցին,

Ռուսաստանի համար շատ դեպքերում վնասակար աշխարհաքաղաքական և աշխարհառազգամարական պայմաններ, այդ թվում նաև Չարավային ռազմավարական ուղղության վրա՝ Սևծովյան-Կովկասյան տարածաշրջանում: Այժմ Ռուսաստանը, իհարկե, վախճնում է սաստկացնել ստեղծված իրավիճակը: Դրանով հանդերձ, հենց Ռուսաստանի հավասարակշիռ դիրքը (եթե լուրջ չընդունենք առանձին ռուս քաղաքական գործիչների առաջարկներն ու արտահայտությունները) որոշակի չափով ԱՄՆ-ին բերեցին եթերադաբակական հակամարտությունների արդյունքների անդառնալիության ընդունմանը, որն, իհարկե, անդրադարձավ ամերիկյան նախաձեռնությունների և առաջ քաշված ծրագրերի վրա:

Դրա համար, չնայած ԱՄՆ-ն հետազայում դերում առաջարկների մշակման գործում հանդես կգա առաջնորդի, նա, հնարավոր է, մեծամասամբ հաշվի կառնի Ռուսաստանի դիրքը: Էներգետիկ հաղորդակցությունների նախագծերի ձևավորման հիմնական մասի կատարումից և իրական սպառնալիքների ու տարածաշրջանների վրա վերահսկողություն իրականացնելու հնարավորության պարամետրերի պարզաբանումից հետո, Ղարաբաղյան Ֆիմնախնդիրը վերջնականապես դադարեց դիտվել որպես ԱՄՆ-ի շահերի պոտենցիալ սպառնալիք: Գործնականում, զուգահեռաբար ԱՄՆ-ն եկավ հետևության, որ Չայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշումը չի համահարաբերակցվում Ղարաբաղյան Ֆիմնախնդրի և համապատասխան գործընթացների հետ: Այս երկու պատճառները անհետաքրքիր չեն, սակայն այնքան էլ փոխկապակցված չեն, ինչպես դա ավելի շուտ թվում էր: ԱՄՆ-ն գործնականորեն երբեք չի փորձել օգտագործել Ղարաբաղյան Ֆիմնախնդիրը որպես Չայաստանի վրա ճնշում իրականացնելու գործոն նրա ներքին քաղաքական և իշխանության հարցերի համար: Ամերիկյան սցենարները, որոնք վերաբերվում են թուրք-հայկական հարաբերությունների կարգավորմանը, որի շրջանակներում, իբրև, Ղարաբաղյան Ֆիմնախնդիրը, ամեն դեպքում, ինչ-որ դեր է խաղացել, այժմ սպառված են, որը շատ դեպքերում պայմանավորված է թուրք-հայկական հարաբերությունների վատթարացմամբ: Խնդիրը միայն կարգավորման գործընթացի իմիտացիան շարունակելու ընդունելի սցենարի ընտրության մեջ է, ինչը և պայմանավորված է Ղարաբաղյան Ֆիմնախնդրի շուրջ ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև առձևատման բացակայությամբ, և ընդհակառակը՝ ըստ մի շարք ամերիկացի փորձագետների գնահատականի, Ղարաբաղյան գործընթացի իրողությունները օգնեցին Ամերիկային պարզել արխազական և հարավօսական խնդիրների կարգավորման փորձերի ապարդյունությունը:

Ղարաբաղ-արդեբջանական հակամարտության կարգավորման րանակցային գործընթացը եԱԳՄ Միևսկի խմբի շրջանակներում

Սերգեյ Շաքարյան

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության /ԵԱԳՄ/ մուտքը Ղարաբաղ /արցախյան/ արդեբջանական հակամարտության կարգավորման գործընթաց, առաջին հերթին, նշանավորվեց Չայաստանի Չանրապետության և Ադրբեջանի Չանրապետության անկախության վերականգնման փաստի միջազգային ճանաչմամբ, որը սկսվեց 1992 թ. հունվարից ամմիջապես հետո, երբ Չայաստանը և Ադրբեջանը դարձան ՄԱԿ-ի անդամ: Սակայն, այն ժամանակ եԱԳՄ-ն, հատկապես որպես միջազգային ինտեզրացիոն ինստիտուցիոնալացված կառույց, գոյություն չուներ նրան նախորդել էր մեկ այլ կառույց, որն անվանվում էր Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդը /ԵԱԳԽ/, որը «ժառանգություն» էր մնացել այն ժամանակվանից, երբ ԱՄՆ-ի գլխավորությամբ, Արևմուտքի երկրները և նախկին ԽՍՀՄ-ի գլխավորությամբ արևելյան բլոկը, չեզոք Չեխիևկյան կայսրուղ մշտական հանդիպումների ժամանակ, ընդունեցին այսպես կոչված Չեխիևկյան ամփոփիչ ակտը: ԵԱԳՄ այսպես կոչված Միևսկի խմբի /ՄԽ/ ստեղծման նախապատմությունը բավական խորն է, և մենք կցանկանայինք միայն պարզաբանել, թե ինչու միջազգային հանրության կողմից ի սկզբանե ընդունվեց միավորող որոշում այն մասին, որ Արցախյան հիմնախնդրի կարգավորման միջնորդական գործունեության մանդատը բաժին հասնի հենց ԵԱԳՄ/ԵԱԳՄ-ին, այլ ոչ թե միջազգային որևէ այլ կառույցի, որը գործում էր Եվրոպայի ամբողջ տարածքում ներառելով հետխորհրդային ամբողջ տարածքը:

1. 1992-1994 թթ. ժամանակահատված

ԵԱԳՄ/ԵԱԳՄ-ի Միևսկի խմբի նախորդողն, ըստ էության, հանդիսանում էր ԵԱԳԽ-ի Ավագ պաշտոնատար անձանց կոմիտեն /ԱՊԱԿ/, որը 1992 թ. նախապես փորձեց զբաղվել կարգավորման հարցերով, հիմնականում հակամարտող կողմերի միջև «տեղեկատվություն փոխանցողի» դեխակատարման մակարդակով: Եվ Չայաստանը, և Ադրբեջանը հայտնեցին իրենց համամարտությունը, որպեսզի հենց ԵԱԳՄ-ն որպես Չեխիևկյան գործընթացի քաղաքական իրավահաջորդ, ստանձնի անկողմնակալ միջնորդի դերը: Սակայն, հակամարտության միջնորդությանը ձեռնամուխ լինելով, ԵԱԳՄ-ն հանդես եկավ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտության դիրքերից անտեսելով 1992 թ. Եվրոպայի և աշխարհի քաղաքական քարտեզի վրա տեղի ունեցած արձատակյան փոփոխությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Չանրապետությունը /ներկայումս՝ Արցախի Չանրապետություն/ հակամարտության մեջ ի սկզբանե հանդես էր գալիս բացառապես որպես հակամարտության մասնակից կողմ, և ինչպես Չայաստանը և Ադրբեջանը, իր անկախությունը ձեռք էր բերել նախկին ԽՍՀՄ-ի ինքնավուզման արդյունքում՝ հորիորդային Միության կազմից դուրս գալու իրավունքի վերաբերյալ այն ժամանակ գործող համամիութենական օրենսդրությանը լիովին համապատասխան:

հնչապես հայտնի է, 1975 թ. Գելսինկյան հռչակագրում իրենց արտա-
ցույուն են գտել և պետությունների տարածքային ամբողջականության, և
ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքները: Մակայն ԵԱՀԿ-ն իր
դիրքորոշումը փաստարկում էր կայունության պահպանման անհրաժեշ-
տությանը և բացահայտ նախապատվությունը տվեց սահմանների անբախ-
տելիության սկզբունքին, չնայած նրան, որ 1990-ական թվականների
սկզբներին Եվրոպայի քարտեզի վրա արդեն տեղի էին ունենում խոշոր
փոփոխություններ ևՄԱԶ-ի ինքնավարությունը տվեց սահմանների մի շարք
անկայան պետությունների գոյաջուլը, Զարավալավիայի քայքայումը
ՅուՆԻՑ-ն կազմից ինքնուրույն տարածքներով նախկին միութենական
հանրապետությունների առանձնացումով /իսկ այժմ նույնիսկ Կոսովոյի և
Սեյտիխայի ինքնավար մարզը/, միայնակ դաշնային Չեխոսլովակիայի
բաժանումը երկու անկայան պետությունների /Ֆախ Չեխո-Սլովակիայի, իսկ
հետո Չեխիայի և Սլովակիայի/, Պերմանիայի վերամիավորումը: Այս ամե-
նը խոստովանում էր հայկական կողմերին հիմք էր տալիս ԵԱՀԿ-ին
մեղադրել երկակի ստանդարտների մեջ, քանի որ թվարկված դեպքերում
«նախապատվությունը» տրվել էր ազգերի ինքնորոշման իրավունքի սկզ-
բունքին ի տարբերություն Արցախյան հիմնախնդրի նկատմամբ մոտե-
ցումների: Այս իրավիճակի մասին դիպուկ է արտահայտվել հայտնի
խորհրդային-ռուս գիտնական Բ. Բրուտենցը իր «Պաշտ Ամերիկանայի
հետևից ընկնելով» աշխատություն մեջ /«Ազատ միտք» հանդես, 1998 թ.
թիվ 5, էջ 35/: «ԱՄՆ-ն բոլոր միջոցներով խթանում էր ազգայնական տրա-
մադրությունները խորհրդային Միությունում և վճռակազմումն սատարում
նախկին խորհրդային հանրապետությունների կողմից ազգային ինքն-
որոշման «սուրբ իրավունքը», սակայն նույն վճռակազմությամբ հանդես
եկավ հակառակ դիրքերից, երբ ևՄԱԶ-ի փլուզումը կայացել էր և խոսքը
գնում էր Աբխազիայի և Լեռնային Ղարաբաղի մասին»:

Բնական է, որ հակամարտության մեջ ԵԱՀԿ-ի միջնորդության ձեռնա-
մուխ լինելուց անմիջապես հետո, Արդրեջանը ապրիլի հայտնվելից որո-
շակի հարթակն ուղիղորդում, քանի որ տվյալ կազմակերպությունը 1992 թ.
ընթացքում հրաժարվում էր ԼՂԳ-ն դիտարկել որպես հակամարտության
ինքնուրույն կողմ: Ճիշտ է, Եվրոպական դիվանագետները կարգավորման
հարցերով սերտորեն սկսեցին զբաղվել ԵԱՀԿ-ի խորհրդի Պրահայում
կայացած /30-31 հունվարի, 1992 թ./ Երկրորդ հանդիպման ժամանակ,
որտեղ որոշում կայացվեց հակամարտության տարածք ուղարկել ԵԱՀԿ-ի
Պաշտոնական Ձեկնուցողի առաքելությունը: ԵԱՀԿ-ի Պաշտոնական Ձե-
կնուցողի առաքելության այս ուղևորությունը կայացավ 1992 թ. փետրվարի
12-18-ին, որի ընթացքում առաքելությունն այցելեց միայն Բաքու և Երևան:
Նույն տարվա փետրվարի 28-ին ԵԱՀԿ-ի ՄՊԱԿ-ն հիմնվելով Ձեկնուցողի
կողմից հակամարտության գոտի կատարած այցելության հաշվետվության
վրա, խնդրանքով դիմեց տարածաշրջանի բոլոր պետություններին, հատ-
կապես Ռուսաստանին և Ղազախստանին, շարունակել խաղաղարար
ջանքերը Արցախ-արդրեջանական հակամարտության գոտում կրակի
դադարեցման ու խաղաղ բանակցությունների աջակցության նպատակով:
Բացատրություն: ԵԱՀԿ-ն հատուկ առանձնացրեց Մոսկվան և Ալմա-
Աթան/Ստաման, քանի որ մինչ այդ եվրակառույցի միջնորդությունը,
հայերի և արդրեջանցիների միջև նաև միջնորդական առաջին լուրջ
փորձը Ռուսաստանի Ղաշնության նախագահ Բ. Ելցինին և Ղազախստանի

նախագահ Ն. Նազարբաևի կողմից ձեռնարկված այսպես կոչված «Ժելեզ-
նոլույսյան նախաձեռնությունն էր» /1991 թ. սեպտեմբերի 23-ին/:

ԵԱՀԿ-ն Արցախ-արդրեջանական հակամարտության բնագավառում
իրականում վերադարձավ միայն 1992 թ. մարտի 24-ին Գելսինկյան
կայացած կազմակերպության Արտագործնախարարների խորհրդի Ստա-
չրջանում: Այս ֆորումի ամփոփիչ փաստաթուղթը, որը կրում էր «Եզրա-
կացությունների ամփոփում» անվանումը, պետք է համարել հակամար-
տության կարգավորման այսպես կոչված «Մինսկի գործընթացի» սկիզբը:
Այս «Եզրակացությունների ամփոփման» 8-րդ կետում նշվում էր, որ «Նա-
խարարները ամուր փաստաթուղթում հայտնեցին, որ Լեռնային Ղարաբաղի
հարցի շուրջ ԵԱՀԿ-ի հովանու ներքո անկախակերպ Կոնֆերանսը
կապահովի ճգնաժամի խաղաղ կարգավորման նպատակով բանակցու-
յունների մշտական գործող մի ձևաչափ, որը հիմնված կլինի ԵԱՀԿ-ի
սկզբունքների, պարտավորությունների և դրույթների վրա: Այս կապակցու-
թյամբ նախարարները խնդրեցին նախարարների խորհրդի գործող
Նախագահին /այն ժամանակ Իրոմ Դիմաթրիևը էր Չեխիայի և Սլովակիայի
նախկին արտագործնախարարը – Ժանթր/ նման կոնֆերանս հրավիրել
որքան հնարավոր է շուտ: Բացի այդ, նախարարները համաձայնվեցին, որ
Մինսկում կայանալից այդ կոնֆերանսի մասնակիցներ կլինեն Արդրեջանը,
Հայաստանը, Բելառուսը, Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանը, ԱՄՆ,
Թուրքիան, Ֆրանսիան, Չեխիայի և Սլովակիայի Ղաշնային Հանրա-
պետությունը, Շվեդիան: Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկա-
պացուցիչները որպես շահագրգիռ կողմ Կոնֆերանսին պետք է հրավիր-
վեին նախագահի կողմից Կոնֆերանսի մասնակից պետությունների հետ
խորհրդակցություններից հետո: ԵԱՀԿ նախարարների խորհրդի գործող
Նախագահը պետք է նշանակվի ԵԱՀԿ-ի հովանու ներքո կազմակերպված
Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ Կոնֆերանսի Նախագահին: Ըուտով Ի.
Դիմաթրիևը Կոնֆերանսի /կամ Մինսկի կոնֆերանսի – Ժանթր/ առաջին
Նախագահ նշանակեց իտալացի Մարիո Ռոմաբելլինին, և այդ պահից
սկսվում են այսպես կոչված «խաղաղ բանակցությունները ԵԱՀԿ/ԵԱՀԿ
Մինսկի խմբի շրջանակներում»:

Այժմ ղժվար է ասել, պատրաստվում էր արդյոք ԵԱՀԿ-ի ղեկավարու-
թյունը 1992 թ. ինչ-որ չափով ճանաչել Արցախի ժողովրդի անկախության
հռչակումը, հատկապես ԵԱՀԿ-ի Արտագործնախարարների խորհրդի Գել-
սինկյան նստաշրջանի ժամանակ, նշված «Եզրակացությունների ամփո-
փում» փաստաթղթի ընդունման պահին: Չնայած դրա հետ մեկտեղ երևում
էր, որ ԵԱՀԿ-ն հաշվի էր առնում ԼՂԳ-ի խորհրդարանական ընտրություն-
ների արդյունքները և խորհրդարանի ԼՂԳ Պետության խորհրդի ձևակե-
րումը /ավելի ուշ ԼՂԳ Ազգային ժողով/, քանի որ ակնհայտ էր, որ հենց
Անդրկովկասի երկրորդ Հայկական անկախ հանրապետության ընտրված
ղեկավարներին ու պատգամավորներին ի նկատի ունեն ԵԱՀԿ-ի նշված
փաստաթղթի «Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչներ»
արտահայտությունը: Մինևույն ժամանակ նրանք իրավունք չստացան
ԵԱՀԿ-ի Մինսկի Կոնֆերանսին հավասար իրավունքներով մասնակցելու
համար, այլ պետք է հրավիրվեին միայն որպես «շահագրգիռ կողմ», ինչով
և ընդգծվում էր ԼՂԳ-ի որպես հակամարտության կողմի նկատմամբ տվյալ
եվրակառույցի անիրավահավասար վերաբերմունքը:

Մինևույն ժամանակ, ակնհայտ էր նաև, որ Մինսկի կոնֆերանսի և
ԵԱՀԿ/ԵԱՀԿ-ի ապագա ՄՄ-ի արևմտյան մասնակիցները չէին կարող և

սկզբունքորեն չէին ձգտում անտեսել Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման մեջ Ռուսաստանի շահագրգռությունը ու մասնակցությունը: Դեռևս ՌԴ-ի կարծիքը վճռորոշ դարձավ Կոմֆերանսի անցկացման վայրի ընտրության հարցում: Բելառուսի մայրաքաղաք Մինսկում, որը, հիշեցման կարգից նկատենք, հանդիսանում է նաև Անկախ Պետությունների Դամոսկովյան կոնգրեսի ԱՊԳ՝ ֆորմալ քաղաքական կենտրոնը, բանի որ տարածքային առումով հենց Մինսկում է տեղակայված ԱՊԳ զործադիր կոմիտեն: Անկախ, դա մինևույն ժամանակ չէր նշանակում, որ որոշ շահագրգիռ երկրներ, այդ թվում նաև ոչ եվրոպական ԱՄՆ, Թուրքիա, հրաժարվում են տարածաշրջանում իրենց ազդեցության ամրապնդման ձգտումներից, անդրկովկասյան երկրներին ու ժողովուրդներին փոխհարաբերություններում թելուգև սահմանափակ միջանտություններին, այդ թվում նաև «Մինսկի գործընթացի» շրջանակներում տվյալ հակամարտության կարգավորման մեջ ակտիվ միջնորդական մասնակցությունից: Այն ժամանակ Արևմուտքում բացահայտորեն պնդում էին, որ Ռուսաստանի կողմից Անդրկովկասի անբաժան վերահսկողության ժամանակները անդարձելիորեն անցել են աշխարհի քաղաքական քարտեզից: ԽՍՀՄ-ի անհետացման հետ մեկտեղ: Բնական է, որ այս համոզումը և նման ձգտումների առկայությունը /իսկ Արևմուտքի մասնավորապես հրապարակումներում հաճախ խոսք էր գնում նաև ամբողջ Կովկասից Ռուսաստանի և ռուսական գործոնի լիակատար դուրս մղման մասին/ հանգեցրին նրան, որ Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործընթացում աստիճանաբար սկսեցին պայմաններ ձևավորվել նաև պաշտոնական Մոսկվայի ու ԵԱՀԽ-ի միջև անձայն մրցակցության ծավալման համար /չնայած փոխադարձ հարգանքի բոլոր արտաքին դրսևորումներին և Ռուսաստանի ու ԵԱՀԽ/ԵԱՀԿ ՄԿ-ի և ՄԻՄ-ի արևմտյան մասնակիցների ջանքերի փոխլրացման մասին բազմիցս արված հայտարարություններին/, առաջին երթին, մի կողմից այդ կառույցներում ՌԴ-ի ներկայացուցիչների, իսկ մյուս կողմից, ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ջ. Սարեսկայի և ԼԴԴ հարցերով ՄԿ-ի նախագահ իտալացի Մ. Ռաֆաելլիի միջև: Օրինակ, երբ Մոսկվան առաջարկեց հակամարտության կարգավորման երկփուլային սխեման, ապա, ի կատարումն ԵԱՀԽ-ի հորիզոնի Դելսինկյան լրացուցիչ հանդիպման «Եզրակացությունների ամփոփման», հակամարտության գոտի ուղևորվեց այդ կազմակերպության առաքելությունը՝ ԵԱՀԽ հորիզոնի զործադիր շահագրգիռ Դամոսկովյանի գլխավորությամբ /13 ապրիլի, 1992 թ./: Իսկ արդեն նույն տարվա մայիսի 1-ին ԱՊԱԿ-ը կայացրեց ԼԴԴ հարցով այդ կազմակերպության առաջին որոշումը, որում ռուսական պլանը ոչ մի արտացոլում չգտավ, այսինքն անտեսվեց: Այս օրինակը մենք մեջերսում ենք առանց ի նկատի ունենալու այն, թե նշված ռուսական պլանը շահավետ էր Հայաստանի և ԼԴԴ համար, թե ոչ: Օրինակը պարզապես բերվում է ի հաստատում այն բանի, որ իր գոյության առաջին իսկ օրվանից «Մինսկի գործընթացը» ԵԱՀԽ/ԵԱՀԿ ՄԿ և ՄԻՄ/ ավելի շատ պետք էր այս կամ այն տերությունների միջև մրցակցության բողոքական համար և այլն, այդ ոչ թե որպես իրական կարգավորման հարթակ: Եթե ի սկզբանե Արևմուտքի ու Ռուսաստանի միջև այս հարցում համաձայնություն չի կարողանում ստանալ, ապա դժվար թե Մոսկվան գիտենալով ԵԱՀԽ միջնորդական առաքելության մասին, որին այլոց շարքում հավանություն էր տվել նաև ինքը, կզարմ տեխնիկական միջնորդական առաքելության ստեղծմանը 1992 թ. մայիսի 5-ին: Մի իրավիճակում, երբ բոլոր շահագրգիռ կողմերը հակամարտությանը բռնկված

այս կամ այն տարածաշրջանում, իրական խաղաղություն և կայունություն են ցանկանում, նրանք զործում են համաձայնեցված և կորդինացված, այդ ոչ թե ստեղծում են մնամատիպ իրավասություններով զուգահեռ կառույցներ...

Դետազայում տվյալ դրույթը բազմիցս է հաստատվել: Օրինակ, ԵԱՀԽ/ԵԱՀԿ ՄԻՄ-ում ՌԴ-ի նախագահի անձնական հանձնակատար դեպի Կազմիմիր Կազիմիրովը բնութագրելով բանակցությունների 1992 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների անդրկովկասյան գործընթացները, հատկապես ԵԱՀԽ ՄԿ-ի նախագահ Մ. Ռաֆաելլիի և ՄԻՄ-ում ԱՄՆ ներկայացուցիչ Ջ. Սարեսկայի Մոսկվայի հանդիպումից հետո, որի ընթացքում ստեղծվել էր Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցում ԵԱՀԽ-ի միջնորդական գործունեության ակտիվացման անհրաժեշտությունը և որը նախաձեռնել էր ԵԱՀԽ-ի շրջանակներում բաց կազմով Հատուկ խմբի նիստը հակամարտության գոտում ԵԱՀԽ դիտորդների Առաջավոր խմբի մանդատի ղեկավար դույթների մշակման հարցի շուրջ, նշվում էր, որ արդեն այն ժամանակ այս գործընթացում ԱՄՆ-ի կարևոր խնդիրներից մեկը Ռուսաստանի խաղաղարար դերի նվազեցումն էր, քանի որ ԱՄՆ-ի գլխավորությամբ Արևմուտքի երկրներն իրենց միջնորդական գործունեության մեջ ելնում էին ոչ այնպես կարգավորման, առավել և՛ հակամարտող կողմերի շահերից, որքան այն մտավախությունից, որ Մոսկվայի միջնորդական առաքելության հաջողությունը կհանգեցնի Անդրկովկասում նրա դիրքերի զգալի ամրապնդմանը /«Միջազգային կյանք» հանրեք, 1999 թ., թիվ 5/: Այլ խոսքով, փորձեր էին ձեռնարկվում թույլ չտալ, որպեսզի հակամարտության գոտու ճակատներում հաստատված զինադադարի նկատմամբ պարբերական դիտորդության գործառնային բացառական գտնվի Ռուսաստանի ձեռքբերում: Մոսկվայի նյութերության խորհրդավորություններից քիչ անց, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների անձնական ներկայացուցիչների ժնկյան ոչ ֆորմալ հանդիպման ժամանակ արդեն խոսք գնաց ոչ թե խաղաղարար ջանքերի առանձին-առանձին իրականացման մասին և ոչ թե հակամարտող կողմերի միջև ուղղակի շփումների մակարդակով, այլ այսպես կոչված «հնգյակի ձևաչափի» շրջանակներում: Դա վկայում էր այն, որ Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործընթացում պաշտոնական Վաշինգտոնն իր վրա էր վերցնում գլխավոր միջնորդի և, մինևույն ժամանակ, Մոսկվայի հակակշիռ դերը: Դրա հետ մեկտեղ, ինչպես կարելի էր այն ժամանակ տեսանալորեն ենթադրել, նա առաջին պլան էր մղում Թուրքիայի, որպես «շահագրգիռ կողմի» շահերը փորձելով վերջինիս հաղորդել Անդրկովկասում և ընդհանրապես Կովկասում արևմտյան հանրության կողմից նշանակված «ճայողի» դերակատարությունը, թեև անբիկյան կողմը քաջ գիտեր և հասկանում էր, որ Երևանը և Ստեփանակերտը կտրականապես դեմ են բանակցային գործընթացում Անկարայի որևէ դերակատարմանը, քանի որ հակամարտության մեջ Թուրքիան ի սկզբանե դուրսդրել էր կողմնակալ վերաբերմունք և մինչ օրս այս հարցում շարունակում է անվերապահորեն աստարել պաշտոնական Բաքվին...

Իսկ արդեն ԵԱՀԽ հորիզոնի 3-րդ հանդիպումից հետո, որը տեղի ունեցավ 1992 թ. դեկտեմբերի 14-ին Ստոկհոլմում, պարզ դարձավ, որ Արևմուտքը գիտակցելով իր որոշակիորեն հետ մնալը ընթացիկ տարում կարգավորման շուրջ խաղաղարար նախաձեռնությունների առաջարկման

հարցում, որոշում կայացրեց ԵԱՀԿ-ն որպես «Եվրոպական ՄԱԿ-ի» տար-
րերակի վերականգնված Ծանալարհով, ինչը հավանաբար ըստ
տվյալ գործընթացը նախաձեռնողների մտադրության, պետք է եվազեցներ
Անդրկովկասում Ռուսաստանի ավանդական ազդեցությունը, այդ բվում
նաև Արցախ-ադրբեջանական հակամարտության գոտում, ինչպես նաև
պետք է ուժեղացներ ՄԱԿ-ի և Եվրոպական երկրների դերակատարու-
թյունը: Բացի այդ, որոշում էր կայացվել բարձրացնել ԵԱՀԿ-ի գլխավոր
գրասենյակին կից հակամարտությունների կանխարգելման կենտրոնի
կարգավիճակը /ավելի ուշ այս Կենտրոնը ակտիվ մասնակցություն ունե-
ցավ 1993-1995 թթ. անդրկովկասյան հակամարտությունների կարգավոր-
ման մեջ/: Հավանաբար հենց սրա հետ կապված էլ Ստոկհոլմի հանդիպ-
ման Ամփոփիչ փաստաթղթի /«Եզրակացությունների ամփոփում»/ «Ռուս-
շումներ» բաժնի «Տարածաշրջանային հարցեր» ենթաբաժնում Արցախ-
ադրբեջանական հակամարտությանը շատ քիչ տեղ ու նշանակություն էր
հատկացվել: «Սադաղ գործընթացի կարգավորմանն ուղղված քանքերի
շարունակման խնդրանքով Նախարարները դիմեցին ԵԱՀԿ Լեոնային
Պարաբալի հարցով Կոնֆերանսի Նախագահ Մ. Ռաֆաելլիին և «Մինսկի
խմբին»: Իդեալ, արդեն 1993 թ. «հնգյակի ձևաչափը» ՉԼՄ-ներում հաճախ
անվանում էին «Եռյակի նախաձեռնություն»: Իբր ըստ նրա չեզոք մաս-
նակիցների բանակի, այսինքն ՄԱԿ-ի, Թուրքիայի և Ռուսաստանի:
«Հնգյակի ձևաչափի» կամ «Եռյակի նախաձեռնության» մասնակիցների
գործունեության տվյալները այն ժամանակ հանգում էր նրան, որ
ԵԱՀԿ/ԵԱՀԿ ՄԱ-ում նշված պետությունների ներկայացուցիչները փորձում
էին շարունակել խաղաղարար գործունեությունը ըստ խիստ սիրոշակի
ժամկետների այսպես կոչված «օրացուցային կարգավորման»: Այդ մասին
քիչ քչ շատ հստակորեն հայտարարվեց, Մ. Ռաֆաելլիի մասնակցությամբ,
Մոսկվայում 1993 թ. հունվարի 5-8-ի հանդիպման ժամանակ: Մոսկվայում
հունվարյան խորհրդակցություններից հետո «Եռյակի նախաձեռնությունը»
կազմավորվեց «3+1 նախաձեռնության» /կամ «5+1 ձևաչափի»/, այսինքն
Մ. Ռաֆաելլին, հետևաբար նաև ԵԱՀԿ/ԵԱՀԿ ղեկավարությունը, դառնում
էին ընթացիկ բանակցային-միջնորդական գործընթացի լիիրավ մասնա-
կիցներ: «Օրացուցային կարգավորման» գաղափարն իրենից սկզբու-
թյուն վատ մտահղացում չէր, որի նպատակն էր հակամարտող կողմերի
հետ համաձայնեցված կոնկրետ միջոցառումների կանոնակարգումը ուղ-
ղված հակամարտության գոտում ռազմական գործողությունների թուլաց-
մանը և հետագա ապառազմակամային ուղղված համընդհանուր
ճանաչում գտած քայլերի իրականացմանը: Սակայն, «օրացուցային կար-
գավորումը» կազմելիս որպես կանոն շնորհմը գրեթե բացառապես արվում
էր դեպի հակամարտության հայկական կողմի «պարտավորությունները»,
ընդ որում հաշվի չէին առնվում 1993 թ. զարմանը-ամռանը ռազմա-
նականառում ստեղծված բոլորովին նոր իրողությունները: Մասնավորապես,
այն փաստը, որ 1992 թ. ամռանը կրած ռազմական պարտություններից
հետո Արցախի Ինքնապաշտպանության ջոկատները կազմակերպչական
առումով միավորվել էին ԼՂԴ միասնական Պաշտպանության բանակի մեջ
/ՊԲ/, որը ծրագրավորված կերպով սկսել էր արդեջանական զավթիչ-
ներից իր տարածքների ազատագրման գործընթացը: Ինչպես նաև այն
հանգամանքը, որ 1993 թ. ռազմական պարտությունները Արդեջանին
ստիպեցին ուղղակի քաղաքական և ռազմաքաղաքական շփումների գնալ
ԼՂԴ ղեկավարության ու ռազմական հրամանատարության հետ: Սակայն,

ընդհուպ մինչև 1993 թ. ավարտը, միջնորդները շարունակում էին «իրենց
գիծը տանել» «օրացուցային կարգավորման» գաղափարի իրականաց-
ման համար, ինչն իր արտացոլումը գտավ կրակի դադարեցման և դեպի
այս կամ այն «նախնական դիրքեր» հակամարտող բանակների հեռաց-
ման հարցերի շուրջ, մի շարք այսպես կոչված «Հրատապ միջոցա-
ռումների գրաֆիկների» առաջացման մեջ:

Հենց 1993 թ. նշանավորվեց ՄԱԿ-ի Ամերիկայից ՄԱԿ-ի Ամերիկայից
չարք բանաձեռնով, որոնք վերաբերվում էին Արցախ-ադրբեջանական
հակամարտության գոտում տիրող իրավիճակին: Այսպես, ԼՂԴ ՊԲ-ի ստո-
րաբաժանումների կողմից իրականացված Քելբաքաղի շրջանի /արավա-
նա/ ապառազմակամային վերաբերյալ ընդունվեց ՄԱԿ ՄԱ-ի թիվ 822
բանաձեռնը: Իսկ 1993 թ. հունիսի 3-4-ին, ԵԱՀԿ/ԵԱՀԿ ՄԱ-ի մասնակիցների
հերթական խորհրդակցության ժամանակ, ընդունվեց հերթական «Հրա-
տապ միջոցառումների գրաֆիկը», այս ամբողջ արդեն այդ բանաձեռնի
կատարման համար: Նշենք, որ Հայաստանը և ԼՂԴ-ն գործնականում
անվերապահորեն ի կատարումն ընդունեցին այդ «Գրաֆիկը», քնն Քելբա-
քաղ-Քարվաճառից ԼՂԴ ՊԲ-ի ստորաբաժանումների անվերապահորեն
պահանջվող դուրս բերումը չէր բխում հակամարտության հայկական
կողմերի շահերից: Սակայն, միևնույն ժամանակ Հոռմյան «Գրաֆիկով»
վերջ ողվեց «Եռյակի», «Երեք գումարան մեկի» և այլոց առանձին նախա-
ձեռնություններին, քանի որ Մ. Ռաֆաելլիի կողմից նախապես հավա-
նություն արժանացած ՄԱԿ-ի, Թուրքիայի և Ռուսաստանի առաջարկու-
թյուններից միացան նաև ԵԱՀԿ/ԵԱՀԿ ՄԱ-ի նյութ մասնակիցները: Սակայն
իրավիճակը տեղում կանգնած չէր, և միաժամանակ իրադարձություններ
էին ծավալվում ինչպես Ադրբեջանում ներթափանցական բախման, այնպես
էլ ԼՂԴ ՊԲ-ի գործառնախորհրդի և ստորաբաժանումների կողմից արցախյան
հողի ազատագրման գործընթացների հետ կապված, ինչը և պատճառ
դարձավ, մասնավորապես, ՄԱԿ ՄԱ-ի թիվ 853 բանաձեռնի ընդունման
համար /եթ արցախյան բանակը հասավ Աղդամ/, ինչպես նաև ՄԱԿ ՄԱ-ի
թիվ 874 բանաձեռնի համար: Դրանցում առավել կոշտ ձևակերպումներ կար
ԼՂԴ ՊԲ-ի նկատմամբ Ադրբեջանի «զավթված տարածքներն ազատելու»
պահանջներով, քնն միևնույն ժամանակ ընդունվում էր, որ ԼՂԴ ՊԲ-ի
գործառնախորհրդի ու ստորաբաժանումները գոյություն ունեն Հայաստանից
անկախ /ինքնավար կերպով/: Այսինքն, ըստ տվյալ, ճանաչվում էր
Արցախի, որպես ռազմական հակամարտության մասնակից ինքնուրույն
կարգավիճակը: ՄԱԿ ՄԱ-ի թիվ 874 բանաձեռնի հիման վրա, ԵԱՀԿ/ԵԱՀԿ
ՄԱ-ի մասնակիցները, նույններից ընդունեցին «Հրատապ միջոցա-
ռումների գրաֆիկի» հերթական տարբերակը, որն ուղարկվեց հակամարտ
տության ԲՈՒՈՐ կողմերին, այսինքն՝ նաև արցախյան կողմին...

Ըստ տվյալ, պատմական նշանակություն ուներ 1994 թ. դեկտեմբերի
5-6-ը կայացած ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթնաժողովը, որի ժամանակ
ԵԱՀԿ-ն վերջնականապես կազմավորվեց ԵԱՀԿ-ի և որոշել առաջին ան-
գամ սկսեց քննարկել ԵԱՀԿ սեփական խաղաղարար ուժերի ստեղծման
հարցը Եվրոպայում և հետխորհրդային տարածքում հակամարտություն-
ների գոտիներում խաղաղարար գործառնությունների իրականացման համար:
Ոչ մեկի համար զգալունք չէր, որ դրա շարժառից հանդիսացավ ինչ
Արցախ-ադրբեջանական հակամարտությունը և դրա կարգավորման մեջ
ԵԱՀԿ/ԵԱՀԿ մասնակցությունը /ավելի ուշ միայն ԵԱՀԿ – ծանոթ./: Արցախ-
յան հիմնախնդրի լուծումն այն ժամանակ երկակի տպավորություն էր

թողնում: Մի կողմից, լուծման առաջարկվող նախագծում կրտ ձևով հաստատվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Ասկայն, Հայաստանը կիրառեց էր իր վետոյի իրավունքը թույլ չտալով Բուդապեշտի գազաթափողվի Ամփոփիչ փաստաթղթի տեքստի մեջ ներառել այս բացահայտ հակահայկական կետը, քանի որ ԵԱՀԿ-ի ղեկավարությունը խախտելով ԼՂՀ-ի քաղաքական կարգավիճակի հարցի կանխորոշվածության անբուլլատրելիության մասին նախնական պայմանավորվածությունները, մնա՞ն ձևակերպմամբ փորձում էր Արցախը տարածքային առումով ամրագրել Ադրբեջանին: Մյուս կողմից, դա անուղղակիորեն հաստատեց այն, որ Արցախյան հիմնախնդրի կարգավորման առաջնության հարցը ընդհանուր առմամբ համդիսանում է ԼՂՀ-ի պետական-քաղաքական վերջնական կարգավիճակի հարցը, այլ ոչ թե պատերազմի հետևանքների վերացման ինչ-որ խնդիրներ: Մեկ այլ կողմից, ԵԱՀԿ-ի Բուդապեշտի գազաթափողվի Ամփոփիչ փաստաթղթում Արևմուտքը և Ռուսաստանը փաստորեն ընդունեցին, որ որպես հակամարտության երրորդ, առանձին կողմ հանդես է գալիս հենց ԼՂՀ-ն: Այսինքն, Ստեփանակերտին պաշտոնապես ամրագրվեց հակամարտության մեջ հայտնի ռազմա-իրավական կարգավիճակը, ինչը հանրապետությանը և նրա ղեկավարությանը, ինչպես նաև Հայաստանին հնարավորություն տվեց Ադրբեջանի հետ իրավահավասարության սպասումներ ունենալ համենայն դեպս, կարգավորման ռազմա-տեխնիկական և ռազմա-քաղաքական հարցերի խմբի շուրջ, և որոնք հետագայում ամբողջովին արդարացան ԱՊՀ անդամ-երկրների Միջխորհրդարանական Սամարխայի շրջանակներում /1994 թ. մայիս/ Բիշքեկի խաղաղության արժանագրությունը կազմելու և ստորագրելու ժամանակ /սա առաջին միջազգային փաստաթուղթն է, որի վրա հավասարազոր իրավունքով դրված է նաև ԼՂՀ այն ժամանակվա խորհրդարանի ղեկավար Կ. Բաբուլյանի ստորագրությունը/, ինչպես նաև Հակամարտության զոտում կրակի դադարեցման մասին համաձայնագրի ստորագրման ժամանակ /1994 թ. հունիս/, որը Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի հետ մեկտեղ ստորագրել է նաև ԼՂՀ ղեկավարությունը: Ասկայն, կար և մի կողմ: Հենց Բուդապեշտում վերանայվեցին «Մինսկի գործընթացի» աշխատանքային մարմինների /ԵԱՀԿ ՄԿ և ՄԽ/ գործունեության սկզբունքները: Այս գազաթափողվի մասնակիցները եկան այն եզրակացության, որ Ռուսաստանը *հատուկ դերակատարություն* ունի Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցում, ուստի և «Մինսկի գործընթացում» նպատակահարմար է համանախագահների ինստիտուտ ստեղծել, որոնցից մեկը, ինչպես և նախկինում, կներկայացնի ԵԱՀԿ-ն /ձշտական ռուսացիայի սկզբունքի հիման վրա/, իսկ մյուսը ՌԴ-ն, ընդ որում մշտական հիմունքներով, եթե նրա փոփոխությունը չջանկանա Մոսկվան: Ըստ ելույթի, հենց սա էլ հանդիսացավ ԵԱՀԿ-ի շրջանակներում Արցախյան հիմնախնդրի կարգավորման խաղաղարար գործընթացի գլխավոր արդյունքը 1992-1994 թթ. ընթացքում: Այդպիսով, Արևմուտքը նաև ղե-յուրե ճանաչեց այս հարցում *Ռուսաստանի միջնորդական ցանքերի գերակայությունը*, թեև Բուդապեշտի գազաթափողվից հետո էլ Ռուսաստանը և ԵԱՀԿ-ն պաշտոնական փաստաթղթերում ընդգծում էին, որ ԵԱՀԿ ՄԿ-ի շրջանակներում համանախագահության ինստիտուտի ստեղծումը կոչված է միջնորդների ցանքերի փոխրացմանը նպաստելուն: Այսպես, նշենք, որ Բուդապեշտից

անմիջապես հետո ռուսական համաճակագահներ նշանակվեցին. ԵԱՀԿ ՄԿ-ում Կ. Լոզինսկին, իսկ ԵԱՀԿ ՄԽ-ում Կ. Կազիմիրովը:

Ասկայն, այս անգամ և՛ հերթական անգամ, լռեյային ընդգծվեց Արևմուտքի և Ռուսաստանի միջև սուր մրցակցության փաստի առկայությունը ԵԱՀԿ շրջանակներում: Թվում է, թե տվյալ Կազմակերպության առանձին խաղաղարար կոնստիգենտի ստեղծման հարցի շուրջ անհամաձայնություն չի կատարել արևմտյան և ռուսական կողմերի միջև: Բայց գազաթափողվի շրջանակներում Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև /ոչին և ուշադրված ենք Մեծ Բրիտանիան, Կանադան, Նորվեգիան, Թուրքիան և ուրիշներ/ սուր բանավեժ ծավալվեց նաև գործերի բանակցական և որակական, այդ թվում նաև զագային կազմի վերաբերյալ: Չէ որ Բուդապեշտի Ամփոփիչ փաստաթուղթը պարունակում էր մի կետ, որը ենթադրում էր «ռազմական գործողությունների դադարեցման մասին համաձայնագրի» ստորագրումից հետո Արցախ-ադրբեջանական հակամարտության գոտի ԵԱՀԿ խաղաղարար ուժերի ուղարկումը: Մոսկվան պնդում էր, որպեսզի այդ ուժերի կազմում ռուսական զինծառայողների մասնաբաժինը լինի զինծառայողների ընդհանուր թվի 50 տոկոսից ոչ պակաս: ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները պնդում էին միայն 30 տոկոսանոց ռուսական ռազմական մասնակցությունը: Այս հարցը իր լուծումը չստացավ նաև հանրող տարիների ընթացքում, թեև 1994 թ. վերջին, անմիջական հակամարտող կողմերի դիրքորոշումները լիովին պարզ էին: Ադրբեջանը պաշտպանեց ԱՄՆ-ի և Թուրքիայի ԵԱՀԿ ենթադրվող խաղաղարար գործերում ռուսական քվոտայի ասիմետրիկական դիրքորոշումը, Հայաստանը նույնպես հանդես եկավ խաղաղարար ուժերի բազմազգ կազմի օգտին, ԼՂՀ-ն պաշտպանեց ռուսական կողմը և կտրականապես դեմ հանդես եկավ այդ բազմազգ կազմում թուրք զինծառայողների մասնակցությանը...

1994 թ. ընթացքում ԵԱՀԿ ՄԽ-ի հովանու ներքո խաղաղարար գործընթացների գործողություններից կարելի է նշել նաև այն փաստը, որ այդ տարվա ապրիլին ԵԱՀԿ ՄԽ-ի ռուսաստանյան համախաղաղ և բանակցություններում ՌԴ-ի նախագահի անձնական ներկայացուցիչ Կ. Կազիմիրովը, իր կառավարության անունից, հակամարտող կողմերի ղեկավարներին ուղերձ հղեց, որում առաջարկվում էր ճակատային զգից հակամարտող գործերի բաժանման թուղթովին նոր բանաձև՝ այսպես կոչված «հավասարակշռված ասիմետրիայի» հիման վրա»: Դա մեծ քայլ էր Հայաստանի և ԼՂՀ-ի այն մշտական պահանջների ուղղությամբ, որոնք կոչ էին անում գործերի բաժանման հիմնախնդրի նկատմամբ մոտեցումներում, տարբեր միջոցառումների ու առաջարկությունների ժամանակի հաշվի առնել Ադրբեջանի և ԼՂՀ-ի տարածքների ստորեր մեծությունների հանգամանքը:

2. 1995-1997 թթ. ժամանակահատված

Ինչպես կարելի է նկատել, 1992-1994 թթ. ժամանակահատվածը ոչ միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի ծավալման իրական սկզբի ժամանակաշրջանն էր, այլ և ինքնին «Մինսկի գործընթաց» անվամբ երևույթի իրական գաղափարական ելույթյան բացահայտման սկիզբը: 1995-1997 թթ. ժամանակահատվածում պարզ դարձավ, որ ԵԱՀԿ ՄԽ-ի գործունեության պրակտիկայում, ըստ ելույթի, գոյություն ունի

ընդհանուր առմամբ իրար նման, սակայն զաղափարապես միմյանցից արձատսապես տարբերվող կարգավորման երկու տարբերակ «փուլային» և «փաթեթային»: Առաջ անցնելով նշենք, որ նույնիսկ 2008 թ., ՈՂ-ի ներկայիս արտգործնախարար Ա. Լավրովը «էթո Մոսկվի» ռադիոկայանին տված հարցազրույցում փաստորեն հասկացնել տվեց, որ ռուսաստանյան ղեկավարության դիրքորոշումը դեռևս հիմնվում է կարգավորման «փաթեթային» տարբերակի վրա. «...պայմանավորվում ենք կամ ամեն ինչի մասին, կամ ոչինչ»: Ուստի, ընդհանուր առմամբ պետք է ընդունել, որ ռուսական կողմը 1995-1996 թթ. էլ չի շեղվել այս դիրքորոշումից, և համապատասխանաբար, ԱՄՆ-ի գլխավորությամբ Արևմուտքի երկրները, պնդում էին կարգավորման «փուլային» տարբերակը: Հաշվի առնելով այն, որ կարգավորման հիմնական հարցը հենց ԼՂՀ կարգավիճակի խնդիրն է, ապա պետք է ընդունել նաև, որ Մոսկվայի դիրքորոշումն այն է, որ հակամարտող կողմերը համաձայնության պետք է գան հատկապես հենց այս հարցի շուրջ: Որից հետո միայն ԵՄՀ4 ՄԽ-ի և ԵՄՀ4 ՄԿ-ի համաձայնագրահները կամրագրեն ձեռք բերված համաձայնությունները և հանդես կգան որպես դրանց իրականացման երաշխավորներ, այդ թվում՝ նաև հակամարտող գործերի փոխադարձ հեռացման, իրենց մշտական բնակության վայրերը ժամանակավոր տեղափոխված անձանց ու փախստականների հավանական վերադարձի, հակամարտության գոտուսում տնտեսական վնասի վերականգնման և այլ հարցերի շուրջ:

«Փուլային» տարբերակը ենթադրում էր կարգավորման նախ երկրորդական, «տեխնիկական» միջոցառումների իրականացում գործերի հեռացում, նրանց միջև խաղաղարար միջազգային ուժերի տեղակայում, հակամարտության գոտուս ապաստանականացում, նրա տնտեսական վերականգնում, ժամանակավոր տեղափոխվածների ու փախստականների վերականգնում և այլն: Ընդ որում, երբ խոսք էր գնում ժամանակավոր տեղափոխվածների ու փախստականների մասին, ապա ԵՄՀ4 ՄԽ-ի առաջարկություններում ինչ-որ պատճառով տեղ էին գտնում միայն արդրեջանական կողմի պահանջները: Ցավոք, դա չարժանացավ Հայաստանի և ԼՂՀ-ի ակտիվ դիմադրությանը ոչ 1990-ական թվականներին, ոչ էլ 2000-2008 թթ. ժամանակահատվածում: Իսկ կարգավիճակի հարցը ենթադրվում էր լուծել *Աղբյուրների տարածքային անբողջականության պահպանման շրջանակներում*, սակայն իբր թե ԼՂՀ-ին տրամադրելով «ամենակայն ինքնավարություն»: 1995-2000 թթ. կարգավորման «փուլային տարբերակի» հիմնական տարբերությունը նրանից, ինչը ներկայումս առաջարկվում է Արևմուտքի կողմից այն է, որ լիովին քայքայված է նախկին ԽՍՀՄ-ի, այդ թվում նաև նախկին «Աղբյուրեջանական ԽՍՀ-ի» կազմից ԼՂՀ-ի օրինական սեցեսիայի փաստը 1991 թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեի հիման վրա: Այժմ, ինչպես հայտնի է, հակամարտության հայկական կողմերին առաջարկվում է այսպես կոչված «հետաձգված կարգավիճակի» գաղափարը ճանաչելով «կրկնակի» հանրաքվեի անցկացման իրավունքը, սակայն միայն ժամանակավոր տեղափոխված անձանց ու փախստականների վերադարձից հետո, ընդ որում՝ հիմնականում աղբյուրեջանական բնակչության: Դա, առնվազն, հետևում է ԵՄՀ4 ՄԽ-ի ամերիկյան ներկայիս համաձայնագրի Սեյրու Բրայդայի կողմից 2006-2008 թթ. ընթացքում արված մի շարք հրապարակային հայտարարություններից:

1990-ական թվականների երկրորդ կեսին, Հայաստանի այն ժամանակվա ղեկավարությունը առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, հանդես եկավ «փուլային կարգավորման» օգտին, այն ղեկավորում, երբ հայկական հասարակության որոշ շրջանակներ, ինչպես նաև ԼՂՀ-ի հասարակությունն ու ղեկավարությունը հանդես էին գալիս «փաթեթային տարբերակի» օգտին: «Փուլային տարբերակի» իրականացման հիմնական խոչընդոտը վերջին հաշվով դարձավ ԼՂՀ ղեկավարության անվճարում դիրքորոշումը կարգավորման առանցքային հարցի շուրջ. Արցախի հայության համար պաշտոնական Բաքվի ուղղահայաց ենթակայության տակ ԼՂՀ-ի վերադարձման անվերապահ անհնարինությունն ու անընդունելիությունը: Արցախյան կողմի պահանջներից առաջին կարևորներն էին նաև. 1. միջազգային հանրության կողմից ԼՂՀ-ի բնակչությանը անվտանգության երաշխիքների տրամադրումը, ինչը վերջին հաշվով նշանակում է Աղբյուրեջանի կողմից պատերազմի չվերսկսման երաշխիք, 2. Արցախի անկախական գոյության անհնարինությունը, որը վերջին հաշվով ենթադրում է «Լաչինի հունանիտար միջանցքի» և նախկին «Հայկական ԽՍՀ-ի» ու «ԼՂԽ-ի» միջև ընկած բոլոր տարածքների պարտադիր պահպանումը ԼՂՀ Զինված ուժերի անվերապահ և անվիճելի վերահսկողության տակ: Իսկ ինչ վերաբերվում է գլոբալ խնդիրներին, որոնք բխում են կարգավորման ռազմավարությունից և մարտավարությունից, ապա մինչ օրս արցախյան ղեկավարությունը և բնակչությունը հանդես են գալիս «փաթեթային կարգավորման» օգտին, այսինքն բոլոր հիմնախնդիրների համալիր դիտարկում. ԼՂՀ վերջնական կարգավիճակի որոշումից մինչև կրակի դադարեցումը, զբաղեցրած տարածքների ազատումը, դրանց ճակատագրի որոշումը, ժամանակավոր տեղափոխված անձանց ու փախստականների վերադարձը և այլն, սակայն նախ սկզբունքորեն պետք է որոշվի կարգավիճակի հարցը:

1996 թ. տեղի ունեցավ ԱՄՆ-ի միջնորդական ջանքերի որոշակի ակտիվացում և, ցավոք, դրանք քայլեր էին, որոնք ուղղված էին «փուլային կարգավորման» պարտադրմանը հակամարտության հայկական կողմերին: Դա արտահայտվեց նրանում, որ այն ժամանակ «Մինսկի գործընթացում» ամերիկյան ներկայացուցիչ Ջ. Պրեսսեյը նույն տարվա սեպտեմբերի 15-17-ին Աղբյուրեջան կատարած այցի ժամանակ հրապարակայնորեն հանդես եկավ արդրեջանից ժամանակավոր տեղափոխված անձանց ու փախստականների, հակամարտության գոտուս, իրենց նախկին բնակավայրերը շուտափույթ վերադարձման օգտին: Մինչ օրս քանակապես գործընթացում դա հանդիսանում է պաշտոնական Բաքվի գլխավոր պահանջներից մեկը: Միաժամանակ ԱՄՆ Կոնգրեսում սկսեցին պահանջներ հնչել Աղբյուրեջանի ֆինանսական օգնություն ցուցաբերելու վրա դրված արգելքի վերացման մասին, որը ժամանակին մտցվել էր արդրեջանիցների կողմից ԼՂՀ-ի և Հայաստանի շրջափակման պատճառով: Ինչն, ըստ էության, այնուհետև կատարվեց ամերիկյան կողմից: Ավելի ուշ, 1996 թ., ԱՄՆ-ն հանդես եկավ Հայաստանի և Աղբյուրեջանի միջև վաշինգտոնում ուղղակի քանակցությունների գաղափարով: Սակայն նման հանդիպումներ առաջին անգամ անցկացվեցին Լյուբեմբուրգում Եվրոպայի խորհրդի նիստերին անդրկովկասյան հանրապետությունների մասնակցության նախապատրաստական հանդիպումների շրջանակներում, և պարունակված էին խոսակցություններով այն մասին, որ հակամարտող կողմերը մերժեցման կետեր կարող են գտնել առանց որևէ միջնորդի: Իմաստ ունի ենթադ-

րել, որ ամերիկյան կողմի գերիշխող միտքը Հայաստանին ու Ադրբեջանին հատկապես Ռուսաստանի, այլ ոչ թե ԵԱՀԿ-ի միջնորդությունը հեռացնելն էր: Ի դեպ, Երևանի և Բաքվի միջև ուղղակի բանակցությունների սկսման մասին Վաշինգտոնին հենց այս առաջարկի պահը, ըստ մեզ, պետք է համաարել բանակցություններից ԼՂՀ-ի որպես հակամարտող կողմի դուրս մղման գործընթացի ելակետը, որն այնուհետև անրագրվեց:

Այս ակտիվացումը բախվեց Ռուսաստանի ակտիվ ջանքերի պատասխանին, որոնք դրսևորվում էին ՌԴ-ի այն ժամանակվա արտգործնախարար Ե. Պրիմակովի քաջ հայտին՝ «մաքրոջային դիվանագիտությունը»: Դրա ընթացքում հիմնականում ավարտվեց գերիների և պատանդների փոխանակման գործընթացը, որն իրականացվում էր Կարմիր խաչի հետ համատեղ: Արդյունքում գերետեղությունների հակադրումը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում հանգեցրեց ԵԱՀԿ-ի տխրահռչակ Լիսաբոնի գազաթաժողովին /1996 թ. դեկտեմբեր/, որի ընթացքում Արևմտյան երկրները ԱՄՆ-ի գլխավորությամբ՝ շրջանցելով Ռուսաստանին, փորձ ձեռնարկեցին Հայաստանին /բնական է, նաև ԼՂՀ-ի/ պարտադրել կարգավորման հենց այն նույն «փուլային տարրերակը»: Ամփոփիչ փաստաթղթի նախագծի բննարկման ժամանակ Հայաստանի պատվիրակությունը օգտվեց իր վետոյի իրավունքից և կասեցրեց այդ առաջարկության երեք առանցքային կետերի ներառումը, որոնք մինչ օրս գնահատվում են որպես «ամերիկյան», և համաձայն որոնց. 1. ԼՂՀ ՊԲ-ի զորամասերն ու ստորաբաժանումները պետք է դուրս բերվեն նախկին ԼՂԻՄ վարչատարածքային սահմաններից դուրս գտնվող վայրերից, 2. իրենց բնակության նախկին վայրերը պետք է վերադառնան ադրբեջանցի ժամանակավոր տեղափոխված անձինք և փախստականները, այդ թվում նաև ԼՂՀ-ի ներսում, առանց հայկական ժամանակավոր տեղափոխված անձանց և փախստականների սիմետրիկ կամ նույնիսկ ասիմետրիկ վերադարձի նույնիսկ միայն ԼՂՀ-ի սահմանների ներսում, 3. վերոհիշյալ երկու պահանջների կատարումից հետո հակամարտող կողմերը ԵԱՀԿ ՄԽ-ի մասնակցությամբ պետք է ձեռնամուխ լինեն հակամարտության դադարեցման ու միացյալ Ադրբեջանի շրջանակներում «ամենալայն ինքնավարությամբ» օժտված ԼՂՀ-ի կարգավիճակի մասին համաձայնության շուրջ բանակցությունների: Իր ուզածին չհասնելով, այնուամենայնիվ Արևմուտքը փորձեց անրագրել այս կետերը ԵԱՀԿ այն ժամանակվա գործող նախագահ Ֆ. Կոտտիի շուրթերով /Շվեյցարիայի արտգործնախարար/, որը այդ երեք սկզբունքների ներառնց իր Ամփոփիչ ելույթի տեքստում...

Հիշատակելով այս մանրամասները, մենք ամենևին չենք ուզում ասել, թե այս ժամանակ Ռուսաստանն ուներ արտահայտված հակառակ դիրքորոշում: Այ՛ն: «Ֆլապիո Կոտտիի նշված երեք կետերի» քվեարկության ժամանակ Մոսկվան ԵԱՀԿ մնացած անդամների հետ ցուցաբերեց միևնույն դիրքորոշումը և, բնական է, սուր բննադատության արժանացավ Հայաստանի և ԼՂՀ-ի կողմից: Իսկ Ադրբեջանը և նրա դաշնակից Թուրքիան, հակառակը, չէին թաքցնում իրենց բավարարվածությունը՝ համոզված լինելով, որ նման քվեարկությամբ Ռուսաստանը ծանաչեց իր «պարտությունը»: Կովկասի համար Արևմուտքի հետ վարվող ռազմավարական մեղամարտում /հիշեցնենք, որ 1996 թ. ՌԴ-ի նվաստացման տարին էր՝ Չեչենիայի հարցով հասավ-Յուրտի համաձայնագրի շրջանակում - ժա՛նոթ./, և շուտով տարածաշրջանի երկու հայկական երկրներին ուրիշ ոչինչ

այլև չէր մնա, քան Արևմուտքի ու Ռուսաստանի համատեղ ճնշման տակ զնալ Հայաստանի ու ԼՂՀ-ի համար կործանարար միակողմանի զիջումների: Սակայն, ԵԱՀԿ-ի շրջանակներում որոշումների կայացման կոնսենսուսի սկզբունքներից հրաժարվելու նպատակահարմարության շուրջ ռուսաստանյան պատվիրակության և արևմտյան գործընկերների միջև ծավալված ծանրագույն վեճը ցույց տվեց, որ ամեն ինչ չէ, որ պարզ էր:

ԱՄՆ-ն պնդում էր նոր սկզբունքի կիրառման վրա «կոնսենսուս համաձայնության» կամ «համաձայն մեկ», այսինքն Վաշինգտոնը, որոշումներ կայացնելիս առանձին պետությունների վետոյի իրավունքը չըջանցելու համար, ձգտում էր ԵԱՀԿ ներսում նման հնարավորություն տեսնել: Այդ թվում նաև տարածաշրջանային հակամարտություններում արտաքին միջամտության առումով: Ենթադրեց, թե 1996 թ. դրությամբ դա ԱՄՆ-ին առավել չափով անհրաժեշտ էր Բալկանյան թերակղզու հակամարտություններին կրշտ ու րացահայտ միջամտության համար, քան Անդրկովկասում, սակայն դրանից ամերիկյան առաջարկությունների տևությունը չէր փոխվում, և դա վերին աստիճանի անչափավետ էր Հայաստանի և, բնական է, անուղղակի կերպով՝ ԼՂՀ-ի համար: Ել չխոսեցնեց Ռուսաստանի մասին՝ հաշվի առնելով բավական ծանր իրավիճակը Հյուսիսային Կովկասում: Այնպես որ Ռուսաստանը Լիսաբոնում ըստ ամենայնի ելնելով զուտ իր ազգային շահերից և Կովկասում իր ներքին անջատողական գործընթացներին Արևմուտքի սատարումը թույլ տալու ձգտումից, կամա թե ակամա աջակցեց Հայաստանին և ԼՂՀ-ին կտրուկ մեթոճելով ամերիկյան առաջարկությունները կոնսենսուսի շուրջ հաստատելով ԵԱՀԿ շրջանակներում որոշումներ կայացնելիս այդ սկզբունքի պահպանման անփոփոխ անհրաժեշտությունը: Պակաս կարևոր չէ նաև այն, որ Ռուսաստանի այդ հակամարտության քայլին աջակցեց եվրոպական կարևորագույն և եվրոպայան Միության առաջատար երկրներից մեկը՝ Ֆրանսիան: Ի դեպ, հենց այդ պահից Հայաստանում, ԼՂՀ-ում և Ադրբեջանում տարբեր քաղաքական ուժեր և հասարակական շրջանակներ, նույնիսկ երկրների ղեկավարների մակարդակով, սկսեցին ենթադրություններ անել այն մասին, որ տարածաշրջանային հակամարտությունների, այդ թվում նաև Արցախ-ադրբեջանական հակամարտության նկատմամբ Արևմուտքի նկրդորոշման նախկին միասնակուցությունը այլև չկա, քանի որ Ֆրանսիային հետևելով, եվրոպացիները նույնպես մերժեցին ԱՄՆ-ի թելադրանքը և հստակորեն ընդգծեցին Ռուսաստանի հետ «չփիճելու» իրենց մտադրությունը՝ հօգուտ աշխարհամասում ամերիկյան շահերի: Այդ պահից անդրկովկասյան բոլոր հանրապետություններում /ճանաչված և «չճանաչված»/ սկսեց տեսակետ արձատարվել, որ եվրոպայի և ԱՄՆ-ի շահերը տարբեր են, այդ թվում նաև Կովկասում...

Ըստ մեզ, հենց այս պատճառով ԵԱՀԿ Լիսաբոնյան գազաթաժողովից հետո արդեն, ԱՄՆ ղեկավարությունը, սկսեց մանրակրկիտ «մշակման» ենթարկել եվրոպական երկրների ղեկավարներին, ինչպես նաև Անդրկովկաս կատարած իր ներկայացուցիչների մի շարք «մաքրոջային այցերի» ընթացքում նաև Հայաստանի, ԼՂՀ-ի և Ադրբեջանի ղեկավարներին: Վաշինգտոնի ակտիվ ճնշման արդյունք հանդիսացավ ԵԱՀԿ ՄԽ-ի համաձայնագրում կատարված ձևաչափի վերանայումը: Եթե նախկինում ենթադրվում էր, որ 1997 թ. այնտեղ նախագահելու են Ռուսաստանը և Ֆրանսիան, ապա ամերիկյան ճնշումից հետո ԵԱՀԿ ղեկավարությունը որոշում կայացրեց համաձայնագրի նկատմամբ համալրել երրորդ մասնակիցով

ամերիկյան ներկայացուցչով, որը Ռուսաստանի և Ֆրանսիայի համանախագահների հետ ունի բացարձակապես լիարժեք իրավունքներ: Մոսկվան և Փարիզը համաձայնվեցին այդ պայմանին, Հայաստանը նույնպես, իսկ Արցախին, ինչպես ասում են, «ոչ ոք չէր հարցնում»: Ասկանը, ավելի շատ այդ որոշումը որոշունկեց Ադրբեջանում և Թուրքիայում, քանի որ ԵԱԳԿ Լիսաբոնյան գազաթափողվից հետո Բաքվում և Անկարայում հավանաբար հասկանալով ԵԱԳԿ-ում որոշումներ կայացնելիս կոնսենսուսի սկզբունքի կիրառման նպատակահարմարության հարցի քննարկումների ժամանակ Ռուսաստանի և Ֆրանսիայի համատեղ կոշտ դիրքորոշման նշանակությունը, քարոզչություն անցկացրեցին իրը Հայաստանի և ԼԳԻ-ի օգտին, Մոսկվայի ու Փարիզի քաղաքացիներն էլ «վարձաիրավիքավորության» մասին: Ավելին, արդեջանցիները և թուրքերը պատրաստվում էին նաև անվտանգություն հայտնել Ռուսաստանի և Ֆրանսիայի խաղաղարար միջնորդությանը /իրապարակային ելույթներում/ պահանջելով հեռացնել Մոսկվայից ԵԱԳԿ ՄՍ-ի համամախագահությունից: Ադրբեջանի և Թուրքիայի կառավարական շրջանակները, ԱՄՆ-ի մուտքը որպես ԵԱԳԿ ՄՍ-ի երրորդ համամախագահ, մեկնաբանեցին նույնիսկ որպես սեփական «կոմպրոմիս» և հիմնական զիջում ինչպես Հայաստանին և ԼԳԻ-ին, այնպես էլ Ռուսաստանին և Ֆրանսիային:

Կարիք չկա գնահատականներ տալ ԵԱԳԿ ՄՍ-ի աշխատանքներում ոչ ԱՄՆ-ի ներկայացուցչի, ոչ էլ Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցչների մասնակցությանը, ինչպես նաև պետք չէ ուշադրություն սեռել այն քանին, թե ինչն էր էին ձեռնարկվում Հայաստանի ու ԼԳԻ-ի ներսում 1997 թ. ընթացքում ամերիկյան կողմի աճող ճնշումը թուլացնելու նպատակով: Միայն նշենք, որ այն ժամանակ Երևանում իշխող նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի վարչակազմը այդ տարվա ավարտին, վերջին հաշվով ձեռնամուխ եղավ հայկական հասարակական կարծիքի զանգվածային մշակմանը հօգուտ ԱՄՆ-ի կողմից խնամակալվող կարգավորման «փուլային տարրերակի», ինչը դրսևորեց, օրինակ, ՀՀ առաջին նախագահի բաց դիմումում. «Պատերազմ, թե՛ խաղաղություն»: Դրանում նա, ըստ էության, շնտառով էր ենթարկում ամբողջ հայ ժողովրդին, մասնավորապես, «նախատում էր» Հայաստանին և ամուլղակիորեն նաև ԼԳԻ-ին, որ «փուլային տարրերակի» և «Ֆյակիո Կոտտիի երեք սկզբունքների» մերժման պարագայում հայերը միայնակ կարող են հայտնվել միջազգային համրության ճնշման դեմ և կրկնել սերը ժողովրդի ճակատագիրը, եթե այդ ժամանակ արդեն ճնշված էր Բալկաններում: Ընդ որում, այն ժամանակվա ՀՀ իշխանությունները իրենց համաձայնությունը տվեցին կարգավորման «փուլային տարրերակին» որպես ԵԱԳԿ ՄՍ-ի ձեռնապահ շրջանակներում խաղաղ բանակցությունների վերսկսման հիմք: Հիշենք, որ ԼԳԻ իշխանությունները ի դեմս հանրապետության այն ժամանակվա նախագահ Լ. Դուկայայանի ներքին արջակցություն ստանալով Երևանից առաջին հերթին ազատագրական պայքարի մասնակիցների կողմից, կորականապես մերժեցին «փուլային տարրերակի» ընդունումը: Հայաստանի հասարակության ուղղված համապատասխան կոչում, ԼԳԻ իշխանությունները անկեղծորեն ընդգծում էին, որ վտանգի տակ են դրված ոչ միայն Արցախի հայությունը, բայց նաև իրենց իրավունքները, քանի որ լիովին պարզ էր, որ «միացյալ», «ընդհանուր» և «միութենական» պետությունների միջև կան էական տարբերություններ:

3. 1998-2008 թթ. ժամանակահատված

ԵԱԳԿ ՄՍ-ի գործունեության մեջ, 1998 թ. սման հիմնապատկերի վրա ի հայտ եկավ «նորացված խաղաղ առաջարկությունների» թեզը, երբ Հայաստանում տեղի էր ունեցել նախկին սմանակցած ռեժիմի իշխանափոխություն: Խոսք էր գնում նաև Արցախյան հիմնախնդրի հնարավոր ինչ-որ «ոչ կոնվենցիոնալ» այսինքն ոչ ավանդական/ լուծման մասին: ԵԱԳԿ Գործող Նախագահի, այն ժամանակ Լեհաստանի արտոգրականարար Բ. Գերեմենկի և ԵԱԳԿ ՄՍ-ի երեք համամախագահների /Ռուսաստան, Ֆրանսիա և ԱՄՆ/ շուրթերից բազմիցս հնչում էին այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են «ընդհանուր պետությունը», «միացյալ պետությունը», «համատեղ» և նույնիսկ «միութենական պետությունը»: Պետք է ենթադրել, որ այդ գաղափարների աղբյուրը բոլոր դեպքերում Ռուսաստանն էր, և ոչ թե Արևմուտքը, քանի որ հենց ՌԴ-ում ձևավորվեց ավելի ուշ հրապարակայնորեն հնչած հարցը. «Կարելի է արդյո՞ք համատեղել Լեռնային Դարաբաղի հայկական քնակցության ինքնորոշումը Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ» (Э.Клайн, "Самостоятельное решение нашин: созидание или опасная забава", журн. "Общественные науки и современность", М., февраль 1998 г.): Փորձելով այս հարցին պատասխանել, օրինակ, վերոհիշյալ Բ. Գերեմենկը հայտարարեց, որ հավանաբարության «ոչ կոնվենցիոնալ» կարգավորումը պետք է պարուրվի «միացյալ պետության» հայեցակարգի «նոր տեսլականի» և «նոր մտայնում» ձևերով: Իսկ ԵԱԳԿ ՄՍ-ի Հայաստանի համամախագահ Ժ. Վոյտե 1998 թ. դեկտեմբերին Բաքվում ելույթ ունենալով արդեջանական ՉԼՄ-ների առջև, հայտարարեց, որ միջնորդները կջանան «հարձուրդ կերպով միավորել արդեջանական կողմի բոլոր պահանջները սովետականության ու տարածքային ամբողջականության մասով» և «բանաձևեր գտնել, որոնք հնարավորություն կտան Լեռնային Դարաբաղին իրականացնելու իրենց ինքնավարությունը ամենայն ճակով»: Այնուամենայնիվ, ինչպես հայտնի է, Ադրբեջանը հրաժարվեց համամախագահների սման թուվանդականության առաջարկություններից: Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքական հարցերով պետխորհրդական Վ. Գուլիզադե և Արթ. Հանրապետության արտոգրականարար Թ. Չուլֆիլարովը մեկնաբանելով Բաքվի մերժման պատճառները, նշում էին, որ արդեջանական կողմը ցավածում է «խուսափել միութենական պետության երկվանատ հայեցակարգից»: ԵԱԳԿ ՄՍ-ի ռուսաստանյան համամախագահ Յու. Չուկալովը Երևանում կայացած մամուլի առկա ժամանակ /24 նոյեմբերի, 1998 թ./ խոսակցություն տարավ «ընդհանուր պետության» մասին և քացատրեց, որ Ռուսի տերմինը գործածվում է նաև խաղաղ բանակցությունների մասնակիցների կողմից, օրինակ, Մոլդովայի և Մերձդնեստրյան-Մոլդովական Հանրապետության /ՄՀՂ/, ինչպես նաև Արցախի և Վրաստանի միջև հավանաբարությունների կարգավորման ժամանակ: Նա պնդում էր, որ արդեն այժմ ԵԱԳԿ-ն առաջին անգամ փորձում է այս գաղափարը կիրառել նաև դարաբաղյան կարգավորման բանակցությունների ընթացքում, նաև առաջին անգամ փորձելով «լցնել այս հասակացությունը կոնկրետ բովանդակությամբ»:

Պարզ դարձավ, որ ԵԱԳԿ բոլոր շրջանակները մտածված կերպով ընթանում են տարբեր իրավաբանական տերմինների անպարտության ճանաչարկով, քանի որ լիովին պարզ էր, որ «միացյալ», «ընդհանուր» և «միութենական» պետությունների միջև կան էական տարբերություններ:

Առաջին դեպքում ի նկատի ունենումիստր պետության տարրերակը, որի շրջանակներում կարող են լինել կամ չլինել սահմանափակ կամ նույնիսկ «լայն» ինքնավարություններ: Եվ եթե ԵԱԳԿ ՄԻ-ի համանախագահների կողմից հենց դա էր առաջարկվում հավանաբար կողմերին, ապա պետք է ընդունել, որ ոչ մի «նորացված» բան նրանք չէին առաջարկում: Նման եզրակացություն կարելի է հանգել, եթե ուշադրություն դարձնել Բ. Գերեմենի և Ժ. Կոմյենի արտահայտությունների վրա: Երկրորդ դեպքում միանգամայն ի նկատի ունեն պետական կառուցվածքի երկու տեսակ՝ ֆեդերացիան և կոնֆեդերացիան: Դատելով Յու. Յուկալովի խոսքերից, ԼԳ-ին առաջարկվում էր դառնալ ինչ-որ ֆեդերացիայի կամ կոնֆեդերացիայի անդամ, բայց որ հենց այս առանցքի շուրջ էին քննարկում բանակցությունները Մոլդովայի և ՄԱԳ-ի, Վրաստանի և Աբխազիայի միջև: 1998 թվականին: Ընդ որում, ԼԳ-ի պարագայում համանախագահները հավանաբար Արցախին առաջարկում էին ինչ-որ այլ պարզ, լրգոված կարգավիճակ որպես հիպոթետիկ ֆեդերացիայի անդամ: Իսկ «միութենական հանրապետություն» արդեն ըստ Բ. Գուլիզադեի և Թ. Ջուլֆուլարովի մեկնաբանության, դա արդեն կոնկրետ ֆեդերացիա է, որը կարող է լինել սինետրիկ, ասինետրիկ և այլն, և որի սուբյեկտները կարող են ունենալ իրավահավասար կամ ոչ հավասար իրավասությունները կամ այլն:

Գերեմենի պարզ է, որ 1998 թ. հետո Արցախյան հիմնախնդրի արմատական լուծման կողմնակիցները Հայաստանում և ԼԳ-ում չէին թուլացնում իրենց ճնշումը: Զանի որ «նորացված» խաղաղ առաջարկությունների հայտնվելուց անմիջապես հետո պարզ դարձավ, որ ԵԱԳԿ ՄԻ-ի համանախագահները այս կամ այն վերապահումներով, նախապատվությունը կտան հենց Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքին՝ ի վնաս ԼԳ-ի բնակչության լիարժեք ու անվերապահ ինքնորոշման իրավունքի: Այս համատեքստում ԼԳ նախագահ Ա. Դուկասյանի կողմից ԵԱԳԿ գործող Նախագահ Բ. Գերեմենի հետ անձնական հանդիպման ժամանակ, արտահայտած խոսքերը հանդիսանում են Հայաստանի այն ժամանակվա ղեկավարության և մեր երկրի բնակչության գերակշռող մասի դիրքորոշման վաղ ցուցադրումը. «Լեռնային Դարաբաղի անկախությունը չի կարող լինել սակարկության առարկա»: Սա վկայում էր հայ ժողովրդի հայրենասիրաբար տրամադրված շրջանակների այն վճռական մտադրության մասին, որ ոչ մի կերպ չի կարելի տուրք տալ արտաքին ճնշմանը և թույլ չտալ ԼԳ-ի վերաբնթարկմանը Ադրբեջանի իշխանություններին:

Նշենք, որ հողվածի թեման անկասկած չատ խորն է և լուրջ հիմք է հանդիսանում խորը ուսումնասիրությունների և մշակումների հոմաք: Օրինակ, շատ կարևոր է ԵԱԳԿ ՄԻ-ի համանախագահների նշված «Նորացված առաջարկությունների» «հեղինակության» հարցը: Կամ, 1990-ական թվականներին տարբեր պարբերականությամբ և տարբեր տարատեսակներով այսպես կոչված «Պոլ Գորի պլանի» հայտնվելու հարցը, որը անիրավահավասար տարածքային փոխանակություն էր նախատեսում Հայաստանի և Ադրբեջանի միջև: որպես հավանաբար կարգավորման մեխանիզմ: Սակայն, տվյալ հողվածի շրջանակներում այս բուրյը ներառել հնարավոր չէ, և դա ավելի շուտ ապագա գիտա-որոնողական աշխատանքների նյութ է հանդիսանում:

1999 թ. աշնան կեսից սկսած ԵԱԳԿ ՄԻ-ի ակտիվությունը կտրուկ նվազեց: Ֆրանսիայի նախկին նախագահ Ժակ Շիրակի նախաձեռնությամբ, 2001 թ. հունվարից, սկսվեցին Փարիզյան անմիջական հանդիպում-

ները Հայաստանի նախագահ Ռ. Քոչարյանի և Նրա ադրբեջանցի գործընկեր Գ. Ալիևի միջև, ինչն արդյունքում հանգեցրեց կարգավորման այսպես կոչված, առաջին «Փարիզյան սկզբունքներին»: Չնայած, որ մի քանի հանդիպումներից հետո և Ռ. Քոչարյանը, և Գ. Ալիևը գործնականում միաժամանակ տարակուսանք հայտնեցին երկխոսության այսպես շարունակելու նպատակահարմարության կապակցությամբ համարելով, որ այս ձևաչափում բանակցությունները կամ սպառել են իրենց, կամ մոտ են մնալ իրավիճակի: Օրինակ, Հայաստանի նախագահը, մասնավորապես, հենց այն ժամանակ թերևս առաջին անգամ հայտարարեց, որ երկխոսություն մեջ առանց ԼԳ իշխանությունների ներգրավման, բանակցությունները որակապես արդյունքի չեն հանգեցնի: Կարծում ենք, հենց այս հայտարարությունը պետք է ելակետ համարել այն բանի, որ անմիջական բանակցային գործընթացին ԼԳ ներկայացուցիչների չմասնակցելու /թերևս, զոհն ԵԱԳԿ ՄԻ-ի համանախագահների հետ/ հայկական նախկին իշխանությունների կողմից պարտադրված անշահավետ ձևաչափի «տանջանքներից» հետո, Հայաստանի իշխանությունները միջազգային հանրությանը բացահայտ հասկացնել տվեցին, որ պետք է վերանայվի այն ձևաչափը, որը մինչ օրս պահպանվում է միայն Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ու համանախագահների միջև չլուծման և միայն այդ երկրների նախագահների անմիջական հանդիպումների մակարդակով երրորդ կողմերի մասնակցությամբ կամ առանց դրա:

Փարիզյան հերթական հանդիպումից հետո, 2001 թ. ապրիլի 3-9-ը ամերիկյան Քի-Ուեսթ բազաբում կարգավորման շուրջ տեղի ունեցան նոր բանակցություններ և խորհրդակցություններ՝ արդեն բացառապես ԱՄՆ-ի հովանու ներքո: Թեև դրանք լայնորեն զովագովել էին ԱՄՆ-ի և Ադրբեջանի ՉԼՄ-ներում, բայց, ինչպես հայտնի է, «Կի-ուեսթյան սկզբունքներին» կամ պայմանավորվածությունները արդյունքում պահանջարկ չունեցան: Նկատելի էր, որ ԱՄՆ նախագահ Ջ. Բուշ-կրտսերը ջանում էր վերջնականապես և ընդմիջտ իր ձեռքը վերցնել նախաձեռնությունները թե ընդհանուր առմամբ ԱՆՊՏԿԿ-ի, թե, մասնավորապես Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցերում: Անուղղակի նշանները կարծես թե վկայում էին Քի-ուեսթում Հայաստանի դիվանագիտական «պարտության» մասին: Օրինակ, Ֆլորիդայում կայացած խորհրդակցություններից հետո, Ջ. Բուշ-կրտսերը նախաձեռնությամբ դիմեց ԱՄՆ Կոնգրեսին և կառավարությանը սպառնալու պաշտպանության Ակտի 907-ը լրացման կասեցման մասին, որն արգելում էր ուղղակի ամերիկյան օգնությունը Ադրբեջանին, բայցի դեմ վերջինս չի դադարեցրել Հայաստանի և ԼԳ-ի շրջափակումը: Եվ 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո Կաշիգուտունը գնաց 907-րդ լրացման գործողության մասնակի կասեցմանը: Երկրորդ, ԱՄՆ նախագահի հրահանգեց ամերիկյան կառավարությանը կրճատել Հայաստանի ֆինանսական օգնությունը և մնալ օգնությունը վճարել Ադրբեջանին ամբողջ 46 տոկոսով: Սակայն, ըստ մեզ, այս անուղղակի փաստերը ավելի շուտ վկայում են ոչ թե Քի-ուեսթում Հայաստանի դիվանագիտական «պարտության» մասին, այլ՝ Ջ. Բուշ-կրտսերի զրգոված արձագանքի կարգավորման որևէ գերկարևոր հարցի շուրջ Ռ. Քոչարյանի հնարավոր անզիջողականությանը:

Ամեն դեպքում, մինչ այդ, ապրիլի 9-ի Ջ. Բուշ-կրտսերի կողմից Ռ. Քոչարյանի և Գ. Ալիևի հետ կայացած առանձնազրույցներից հետո, ԵԱԳԿ երեք համանախագահների համատեղ «Կի-ուեսթյան

բանակցությունների ավարտից հետո ընթերցեց ամերիկյան համանախագահ Ք. Քավանոն/ հետևում էր, որ 1. այս անգամ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել և նույնիսկ չի ամրագրվել, 2. Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների հաջորդ հանդիպումը պետք է կայանա ժնևում, 3. ԵԱՀԿ ՄՍ-ի համանախագահները պետք է հավանարտող կողմերին ներկայացնեն կարգավորման նոր, չորրորդ տարբերակը (!), 4. համանախագահներն ունեն բավարար հիմքեր նոր խաղաղ առաջարկության մշակման համար, 5. հնարավոր է, որ խաղաղ բանակցությունների հետագա փուլերից մեկին նրանց անմիջականորեն կմիանա ԼՂՀ պաշտոնական պատվիրակությունը: Համեմատելով Կոմյունիկեի տեսուղ այն բանի հետ, ինչը Ռ. Քոչարյանը հայտարարել էր Փարիզյան հանդիպումներից մեկից հետո, կարելի է ենթադրել, որ Քի-Ռեյսթում հայկական կողմը նույնիսկ ունեցավ փորոք, մասնակի դիվանագիտական հաջողակ չէ որ մինչ այդ, 1997-2000 թթ. և 2001 թ. առաջին ամիսների ընթացքում, ոչ համանախագահներն էին հայտարարում, ոչ էլ ԵԱՀԿ ՄՍ-ի հովանու ներքո որևէ փաստաթուղթում հատուկ չէր նշվում այն, որ ուղղակի բանակցություններում կարող է նախատեսվել ԼՂՀ իշխանությունների մասնակցությունը:

ԵԱՀԿ ՄՍ-ի ընդհանուր ձևաչափի շրջանակներում, որպես բանակցային գործընթացի բաղկացուցիչներ, նշենք Քի-Ռեյսթի ևս երկու կարևոր նուրբ կողմերի մասին: Նախ, ամերիկացիները սկզբում փորձում էին հիմնավորել Վաշինգտոնի համար ցանկալի Թուրքիայի ակտիվ մասնակցությունը Արցախի խնդրի կարգավորման գործընթացում և ընդհանրապես Անդրկովկասի տարածաշրջանային գործերում: Սակայն, Քի-Ռեյսթյան հանդիպման արդեն առաջին երկու օրերից հետո, այդ հարցը համվեց հենց ԱՄՆ-ի կողմից: Երկրորդ, Ռուսաստանի և Ֆրանսիայի պնդմամբ Ֆլորիդայում համաձայնություն ձեռք բերվեց Քի-Ռեյսթի և նույնիսկ հետագա բանակցային գործընթացի արդյունքների մասին Իրանի Իսլամական Հանրապետությանը տեղեկացնելու նպատակահարմարության մասին: Ընդ որում, այս հայտարարությանը էլ հանդես եկավ ամերիկյան համանախագահ Ք. Քավանոն կրկին ընդգծելով, որ այդպիսին է բոլոր երեք համանախագահների միացյալ որոշումը, չնայած որ դժվար է դրան հավատալ: Մեր ենթադրությունն է. այն ժամանակ Փարիզը պատրաստվում էր փոխել իր ներկայացուցչին ԵԱՀԿ ՄՍ-ի եռանախագահության մեջ, և նրա կողմից համանախագահը պետք է դառնար Թեհրանում Ֆրանսիայի նախկին դեսպան Ֆ. ղե Սյուրմենը: Այնուհետ էլ, որ Ռուսաստանը պաշտպանեց Ֆրանսիայի նախածնունդները ելնելով իր սեփական ինչ-որ շահերից: Կարծում ենք, որ Ֆրանսիացիները և ռուսները ԱՄՆ-ին հիշեցրեցին այն, որ Իրանը ամենակին ցանկություն չույժի իր իյուսիսային սահմանների մոտ Արցախ-ադրբեջանական հակամարտության գոտում տեսնել որևէ արտասահմանյան գործ: Իրանի այս պահանջը, ինչպես և նրա կողմից հայկական և ադրբեջանական կողմերին արված մշտական քաջ հիշատակումներն այն մասին, որ «սեփական» հակամարտությունները և այլ հիմնախնդիրները ավելի լավ է լուծել առանց արտատարածաշրջանային ուժերի մասնակցության, հայտնի է մինչև օրս արդիական:

Ինչ վերաբերվում է ԼՂՀ կարգավիճակի շուրջ առաջարկություններին, որոնք հնարավոր է հնչել են Քի-Ռեյսթում, ապա ըստ մի շարք ՁԼԱ-ների տվյալների, իբր թե առաջարկվել է այսպես կոչված «Անդրդրայի կարգավիճակ», այսինքն համատիրություն ԼՂՀ իշխանական կառույցներում Հայաստանի և Ադրբեջանի «լիազոր ներկայացուցիչների» մասնակցությամբ:

յամբ: Մասնավորապես, հաճախ խոսվել է «հումանիտար միջանցքների կլամամբ» միջազգային վերահսկողության հաստատման մասին, ընդ որում ոչ միայն Հայաստանի և ԼՂՀ-ի միջև, այլև Ադրբեջանի և Նախիջևանի միջև: Սակայն, այժմ դժվար է ասել, թե որքանով է դա իրականությամբ համապատասխանում: Օրինակ, երևանում և Ստեփանակերտում ԵԱՀԿ ՄՍ-ի համանախագահների իրապարակային արտահայտություններից բխում էր /հատկապես ռուսաստանցի և, Գրիբկովի և Ֆրանսիացի Ֆ. ղե Սյուրմենի/, որ միջազգային հանրությունը «այսօր հակված է հասկանալ և գիտակցել, որ Լեռնային Ղարաբաղը վաղուց վեր է ածվել խոշոր ինքնուրույն գործոնի» ներկուվկայային տարածաշրջանային քաղաքականության մեջ: Իսկ ավելի ուշ, հենց նույն և. Գրիբկովը բոլոր շահագրգիռ կողմերին /կարծում ենք, առաջին հերթին ԱՄՆ-ին և Ադրբեջանին/ փորձեց վերադարձնել 1992-1994 թթ. իրավիճակին, երբ «Դելիսիկիում ԵԱՀԿ անդամ-երկրների արտգործնախարարների խորհրդակցության ժամանակ Ղարաբաղն անկանկել էր որպես շահագրգիռ կողմ, հետևաբար, ուզեն, թե չուզեն մյուսները /ենթադրենք, Թուրքիան, Ադրբեջանը – ծանոթ./ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է»: Թե այն ժամանակ, և թե ներկայումս այս արտահայտությունը լիովին կարելի է գնահատել որպես Ռուսաստանի կողմից «Մինսկի գործընթացի» մյուս մասնակիցներին արված հիշատակում այն մասին, որ ոչ մեկին չի հաջողվել ԼՂՀ կարգավիճակի խնդրի լուծումը, առանց հաշվի առնելու հայկական երկրորդ հանրապետության ղեկավարության ու քնակչության կարծիքը: Իր հերթին, դա զգալիորեն նվազեցնում է ԼՂՀ կարգավիճակի հարցի շուրջ ցանկացած առաջարկություն, որոնք հնչել են ինչպես Քի-Ռեյսթում, այնպես էլ դրանից հետո: Այսպես թե այնպես, Քի-Ռեյսթյան պայմանավորվածությունները կամ սկզբունքները» արդյունքում, մերժվեցին Ադրբեջանի նախագահ Յ. Ալիևի կողմից:

Քի-Ռեյսթի յուրատեսակ արդյունք հանդիսացան իրադարձությունները երևանում և Ստեփանակերտում: Երկու հայկական հանրապետությունների խորհրդարանները միախառնու բանաձև ընդունեցին Արցախյան հիմնախնդրի կարգավորման սկզբունքների մասին: Կարիք չկա դրանք կրկնել: Դրանք այն նույն թեզերն են, որոնցով 1991 թ. սկսած հանդես էին գալիս այն ուժերը, որոնք ընդունված է անվանել Հայաստանում «ԴՀԸ-ի ռեժիմի նկատմամբ հայրենասիրական ընդդիմություն»: Հիմնական միտքը մնացել էր նույնը. կարգավորումը միայն այն դեպքում կնկնվալի Հայաստանի և ԼՂՀ հասարակության կողմից, եթե Արցախը վերամիավորվի Հայաստանի հետ, կամ վատագույն դեպքում, կճանաչվի որպես անկախ պետություն: Ադրբեջանին ԼՂՀ-ի ոչ մի վերաենթարկման մասին, Հայաստանի տարածքային ամբողջականությունը և սուվերենությունը վնասող կարգավորման որևէ տարբերակի մասին չի կարող խոսք գնալ: Այդպիսով, երևանում և Ստեփանակերտում օրենսդրորեն հաստատվեց կարգավորման գործընթացում Հայաստանի և ԼՂՀ-ի կողմից հնարավոր զիջումների ծայրահեղ սահմանը:

Միևնույն ժամանակ, որպեսզի մեր պնդումները մերկայաբանող չմնան այն հարցում, որ 2001 թ. Ֆրանսիայի և Ռուսաստանի ջանքերով կարծես թե «վերադարձվեց» Իրանի կարգավիճակը որպես կարգավորման խնդրում և մեկ «շահագրգիռ կողմի», նշենք, որ 2001 թ. Մոյսեբեքի 28-ին Արցախյան հիմնախնդիրը Աստվալում քննարկեցին ԵԱՀԿ ՄՍ-ի ռուսաստանյան համանախագահ Վ. Տրուբեկովը /նույն ինքը՝ Ռուսաս-

տանի Արտաքին հետախուզության ծառայության ղեկավարը – ծանոթ./ և ԻԻԶ փոխարտգործնախարար Մոհսեն Ամինգադեն պայմանավորվելով այսուհետ «կարծիքներ փոխանակել» Արցախի շուրջ: Իսկ Թեհրանի ինքը, եՄԿՄ ՄՍ-ի համանախագահության ապարտիմ կից իր «կորդինատոր» նշանակելից Հայաստանում Իրանի դեսպան Մոհամմեդ Ֆարհադ Քոլեյիին: Կարծում ենք, որ այս փաստերը բավական հատկանշական ու ցուցադրական են, և այսօր էլ շատ բանի մասին են խոսում: 2001 թ. ղեկավորների սկզբին Թուրքիայի կողմից կարգավորմանը միջամտելու և մի փորձ ձեռնարկվեց, երբ թուրքական վարչապետ Բյուլենթ Էջվիթը չվիումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Բ. Պաուլսիի և Պենտագոնի ղեկավար Գ. Ռասմֆիլդի հետ: Հավանաբար այս բանակցությունների ընթացքում տեղի են ունեցել սակարկություններ, օրինակ, ամերիկացիները կարգավորման մեջ առավել ակտիվ դերակատարման դիմաց, թուրքերից պահանջել են քանից հայ-թուրքական սահմանը և կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ: Սակայն, այն ժամանկ թուրքերը առաջ քաշեցին երեք պայման, որոնք, դատելով ըստ ամենայնի, ԱՄՆ-ն՝ թեև մասամբ, բայց ընդունեց. 1. «Հայաստանը դադարեցնում է Ադրբեջանի տարածքի օկուպացիան և նրանց միջև հարաբերություններ են հաստատվում» /մեջբերում թուրքական վարչապետի խոսքից – ծանոթ./, 2. ադրբեջանական փախստականների վերադարձը, 3. ըստ Եուրյան, «Գոբլի պլանի» իրականացումը կամ բառացիորեն մեջբերելով Բ. Էջվիթին, Ադրբեջանի և Նախիջևանի միջև «սիջանցքի» ստեղծումը:

Ինչ վերաբերվում է եՄԿՄ ՄՍ-ի շրջանակներում բանակցային գործընթացին, որն ընթանում է 2002 թ. մինչև վերջերս, ապա, անկեղծ ասած, ինչպես մենք արդեն վերևում նշել ենք, առավել ուշագրավ է այն, որ համախառնահիմնի կողմից ինպուլսներ էին հղվում այն մասին, որ ուզեն դա Ադրբեջանում, թե ոչ, բայց ԼՂԶ պետական-իրավական կարգավիճակի ճակատագիրը պետք է որոշվի հանրաքվեով: Մենք չենք կամենում այժմ մանրամասնորեն մեջբերել բոլոր այն ձևակերպումները, որոնցով մերք համանախագահները, մերք Ադրբեջանի ներկայացուցիչները թաքցնում էին այս քաղաքական միջոցառման Եուրյունը անվանելով այն «պլեբիցիտ» կամ «բնակչության կարծիքի հարցում» և այլն: Այլ բան է, որ, ինչպես արդեն վերը նշվել է, ըստ ամերիկյան կողմի վարկածի, տվյալ հանրաքվեն պետք է «հետաձգվի» 10 կամ 15 տարով, և իրականացվի այն բանից հետո, երբ գոնե «մասամբ կվերադարձվեն» հակամարտության գոտուց այն նույն ադրբեջանական ժամանակավոր տեղակալված անձինք և փախստականները:

«Բի-ունեթյան սկզբունքներն» այնուհետև փոխարինվեցին երկրորդ «Փարիզյան սկզբունքներով», իսկ վերջիններս իրենց հերթին «Պրահայի սկզբունքներով»: Այժմ ՉԼՍ-ներում խոսվում է «Միևնակի գործընթացի» շրջանակներում կարգավորման ինչ-որ «Մադրիդյան սկզբունքների» մասին: Չխորանալով հակամարտության մասնակից-երկրների, ինչպես նաև Արևմուտքի երկրների ու Ռուսաստանի մամուլում արկա շահագրգիռ քննարկումների մանրամասների մեջ, նշենք, որ եՄԿՄ ՄՍ-ի բոլոր բվարկված և բոլոր շարադրված առաջարկությունների նրբությունները բացառությամբ մեկ դեպքի, մինչ օրս զարդեր են պահվում: Դրա պատճառով հնարավոր չէ, նաև նպատակահարմար չէ ենթադրություններ անել այն մասին, թե բանակցությունների ընթացքում հակամարտող կողմերից որ մկնն է «շատ զիջել» Հայաստանը ԼՂԶ-ի հետ, թե Ադրբեջանը: Իսկ «Մադ-

րիդյան սկզբունքներ» անվան տակ ինտերնետ-կայքերում հրապարակված բավական հայտնի ընդհանուր գաղափարները Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման շարունակման հնարավոր ուղիների մասին, ընդամենը կարգավորման տարբեր առանձին առաջարկությունների կրկնություններն են, որոնք ներկայացվել էին դեռ 2006-2007 թթ. "International Crisis Group" /ICG, «Միջազգային ճգնաժամային խումբ»/ անվամբ «ոչ կոնվենցիոնալ կազմակերպություն» կողմից, որն իրեն դրսևում է եՄ-ն կառույցների շարքին և իր ներկայացմանում է եՄ ղեկավարության մի շարք շրջանակների տեսակետը, բայց ոչ ավելին: ՄԾԽ-ն «Փրտաբանվել է» տխրահուշակա «կուտակյան կարգավորման» ժամանակ, փոք, ինչպես հայտնի է, հանգեցրել է Բալկաններում ընդհանուր ճգնաժամի էլ ավելի խորացմանը: Սակայն, ոչ եՄ-ն, առավել ևս ոչ ՄԾԽ-ն չեն հանդիսանում «Միևնակի գործընթացի» բաղկացուցիչ մասեր, հետևաբար, նրանց «կարծիքը» Արցախի հիմնախնդրի կարգավորման հարցում րկ պարսպ խոսակցություններ են թեկուզ և ինչ-որ չափով արտահայտում են Արևմուտքի քաղաքական և հասարակական շրջանակների այս կամ այն տրամադրությունները: Իրականությունն այլ է, չնայած եՄԿՄ ղեկավարների ու նրա կառույցների բազմաթիվ հայտարարություններին /օրինակ, եՄԿՄ Լոռիդղարանական Ամառշնան և այլն/, ըստ եՄԿՄ ՄՍ-ի համանախագահների և այդ համանախագահությանը մասնակից երկրների Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ղեկավարների, 2008 թվականը կարգավորման խնդրում չգարծավ շրջադարձային, չդարձավ «պատուհան» կամ «ոսկե հանրավորություն», ինչպես այդ մասին ուռճածված և խորխուր կերպով արտահայտվում էին ամենատարբեր քաղաքական գործիչներն ու դիվանագետները:

Եզրափակում

Իհարկե, ուսումնասիրությունը չի կարելի լիարժեք և ավարտուն համարել: Թեկուզ այն պատճառով, որ կարգավորման գործընթացն ավարտված չէ, և հակամարտող կողմերի միջև դեռ 1994-1996 թթ. խոստացված Արցախի շուրջ այսպես կոչված «Մեծ քաղաքական համաձայնագիրը» /ՄԶԳ/ այդպես էլ ստորագրված չէ: Այն նույնիսկ ամրագրված չէ, չնայած այն բանին, որ Հայաստանի, ԼՂԶ-ի և Ադրբեջանի հասարակությունները բազմիցս են լսել հայտարարություններ այն մասին, որ հակամարտող կողմերը հավանություն են տվել և ընդունել են «Մադրիդյան սկզբունքները» որպես բանակցությունները շարունակելու հիմք: Ինչ-որ չափով, 2008 թ. բանակցությունների առաջնադասման անհաջողության վրա ազդեցություն է ունեցել այն, որ Հայաստանում և Ադրբեջանում լուծվում էր իշխանության փոխանցման հարցը անցկացվեցին հերթական ճախագահական ընտրությունները: Հայաստանում, օրինակ, դրանք հանգեցրին երկրում խորը ներքաղաքական ճգնաժամի: Սակայն Ադրբեջանում ևս, ըստ ամենայնի, սպասվում է նմանատիպ մի բան, քանի որ այդ հանրապետության Սահմանադրական դատարանը որոշել է նոր ընդունել, որը հնարավորություն է տալիս համահանրապետական հանրաքվե անցկացնելի ադրբեջանական Սահմանադրության մեջ համապատասխան հոդվածի վերանայման հարցի շուրջ, որպեսզի թուլատրելի դառնա Ադրբ. Հանրապետության ներկայիս նախագահ Ի. Ալիևի երկու անգամից ավել պետության ղեկավարի պաշտոնում վերընտրվելու հարցը:

Արդեն վաղուց այս ամենից եզրակացություն է արվել, որ հակամարտության երեք կողմերից ամենվազն երկուսում Չայաստանում և Ադրբեջանում, ներքաղաքական կյանքը անխզելիորեն կապված է Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործընթացի հետ: Եվ Արևելյան Անդրկովկասի այս երկու քաղաքական իրողությունները փոփոխական հաջողությամբ, սակայն բավական ուժեղ ազդում են միմյանց վրա. կարգավորումը Չայաստանի և Ադրբեջանի ներքաղաքական մթնոլորտի և հեռանկարների վրա, նրանց ներքաղաքական կյանքը կարգավորման, դրա տեմպի, ուղղվածության և այլնի վրա: Սակայն հասկանալի է, որ որքան էլ ջանան ԵՆԴԿ ՄԽ-ն և նրա եռանախագահությունը ի դեմս Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի, նույնիսկ 2009 թ. չի դառնա հակամարտության, և ընդհանուր առմամբ ամբողջ Արցախյան հիմնախնդրի վերջնական կարգավորման տարի: 2008 թ. իրավիճակը, դրա նրբությունները /օրինակ, Թուրքիայի հերթական փորձը տարածաշրջանային անվտանգության ու կայունության շուրջ Անկարայի կողմից այդպես էլ չվերծանված «Կովկասյան պատՖորմի» առաջարկությամբ, անդրկովկասյան գործերի մեջ «մխրճվելու», նախկին ԽՍՀՄ տարածքում առկա ազգամիջյան հակամարտությունների կարգավորման համար «կոտովյան նախադեպի» կիրառելիության և չկիրառելիության մասին բանավեճը, այս տարվա օգոստոսյան դեպքերից հետո Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Չարսվային Օսեթիայի անկախության ճանաչումը, և այլ գործոնների հանրագումարը խտսում է այն մասին, որ դեռ մոտ չեն այն ժամանակները, երբ գերտերությունները հստակ ու միանշանակ դիրքորոշում կորոգեզրեն այն հարցի վերաբերյալ, որ համաձայն ենք նրանք, թե՛ ոչ, հաշվի առնելու որ Արցախ-ԼՂԶ-ն արդեն 17 տարի անկախ է: Համապատասխանաբար, հնարավոր չէ կանխատեսել նաև այն, որ հաջողված ու արդյունավետ կլինի՝ արդյոք ԵՆԴԿ ՄԽ-ի միջնորդական գործունեությունը Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում: Իսկ տարածաշրջանում գերտերությունների միջև մրցակցությունը շարունակման կամ ավարտելու մասին հարցը այլ ուսումնասիրության առարկա է:

ՎՈՒՍՍ դիրքորոշումը եթեքաղաքական հակամարտությունների նկատմամբ /Լեռնային Ղարաբաղի օրինակով/

Վլադիմիր Իվանով

Ներածություն

ությունը ընդունեց ԵԱԳԿ միջնորդների դիրքորոշման առիթով:⁴¹ Ի պատասխան դրան ԳԳ այդ ժամանակվա նախագահ Ռ. Քոչարյանը հայտարարեց, որ եթե Բաքուն շարունակի իրականացնել ներկա քաղաքականությունը, սակա երևանք կարող է ճանաչել Լեռնային Ղարաբաղը:⁴² Ընդհանրապես հարթեցնական դիվանագիտության մոտեցումը, որը մեծ հաջվով ուղղված է ներքին կարիքների բավարարմանը (ինչպես նաև ՎՈՒՄ-ի իր մի քանի այլ զինակիցների) դառնում է ավելի բացահայտ, եթե համեմատենք այն, ինչն ըստ իրական հայտարարումն են հարթեցնական պաշտոնական դեմքերը ԵԱԳԿ ՄԻՍ-ի համանախագահների ներկայությամբ բանակցային գործընթացի շրջանակներում, և ինչն ասվում է հենց նույն ղեկավարի կողմից Ադրբեջանի ներսում: Այսպես, չնայած 2008թ. մայիսի 6-ին Ստրասբուրգում կարացած Չայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպմանը, որոնք հաստատեցին, որ Մինսկի գործընթացը պետք է առաջ շարժվի Պրահայի բանակցային գործընթացի շրջանակներում 2007թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում միջնորդների ներկայացրած առաջարկի հիման վրա, ադրբեջանական պաշտոնական անձինք շարունակեցին (հիմնականում երկրի ներսում) խոսել լրիվ այլ բաների մասին կրկին առաջին պլան մղելով Ադրբեջանի սահմանների անխախտելիության մասին դրույթը: Այսպես, մայիսի 14-ի Ա. Ազիմովի ելույթի ժամանակ ինչպե՛ս կամ հակամարտության կարգավորման 8 սկզբունքները, ըստ Չայաստանի արտգործնախարար է. Լալաբադյանի խոսքերի (խորհրդարանում մայիսի 15-ի նրա ելույթի ժամանակ), ոչ մի ընդհանուր բան չունեն իրական բանակցային գործընթացի հետ: ԳԳ ԱԳՆ-ն հաստատեց, որ բանակցությունների հիմնական խնդիրը համարվում է ԼՂ-ի կարգավիճակը, որը պետք է որոշվի հանրաքվեի միջոցով:⁴³ Ըստ հունիսի 6-ին Սանկտ-Պետերբուրգում Չայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպման արդյունքների, ամերիկացի համանախագահ Մ. Բրայզան հայտարարեց. «Նախագահները հենց նոր մեզ հաղորդեցին, որ որոշել են շարունակել բանակցային գործընթացը Մինսկի խմբի շրջանակներում և մեր կողմից Մադրիդում արված առաջարկի հիման վրա»: Այդ ժամանակ էլ է. Մամեդյարովը նշեց, որ Մինսկի ձևաչափը կա և շարունակություն է ունենալու:⁴⁴ Սակայն միջնորդներից հեռու, և հատկապես Բաքվում, շարունակվում էին ինչպե՛ս այլ ելույթներ, և ձեռնարկվում էին գործողություններ (ավելի շուտ գործողությունների պատրաստ), որոնք ուղղակի հակասում էին Սանկտ-Պետերբուրգի հայտարարություններին: Ադրբեջանական կողմը շարունակում էր խոսել ԵԱԳԿ ՄԻՍ-ի փոխարինման մտադրությունների մասին: Այսպես, Ադրբեջանը, կիրառելով ՎՈՒՄ-ում ինչպես իր նախագահությունը, այնպես էլ աճող քաղաքական նշանակությունը, շարունակում էր ջանքեր գործարկել իր մոտեցումների քարոզչության ուղղությամբ: 2008թ. ապրիլի 15-16-ին Բաքվում անցկացված կոնֆերանսի ժամանակ, որը կոչվում էր «ՎՈՒՄ-ի պետությունների մասնաձևում հակամարտությունների կարգավորման սկզբունքային հիմքերը», Ադրբեջանի արտգործնախարարի տղակալ Ա. Ազիմովի կողմից կրկին ինչեզվեց, որ Ադրբեջանը կընձարվի միայն Լեռնային Ղարաբաղի համար ինքնավարության հարցը: Այս կոնֆերանսում էսպես նոր ոչինչ տեղի չուներ, և «պորբեմային» պետությունների ներկայացուցիչները կրկին միակողմանի կարգով ընդգծեցին իրենց պետությունների տարածչային ամբողջականության սկզբունքի հետևողականությունը, ինչպես նաև հերթական անգամ առաջարկեցին իրենց անջատված տարածքներին

ինքնավարության կարգավիճակը»⁴⁵ Ընդհանրապես արդյունավետ և ղեկավարողական վերջին գործողությունների տրամաբանությունը ցույց է տալիս, որ բանակցությունների ձևաչափի տեղափոխման վերջին փորձերը միջազգային այլ կառույցներ, որոնք ուղեկցվում էին հզոր տեղեկատվական աղմուկով, մեծ հաշվով կրում էին պատրանքային բնույթ: Բանն այն է, որ չնչին դեպքերը պետք է արձանագրվեն որպես հզոր հաղթանակ, որն այնքան անհրաժեշտ է Ի. Ալիևին այն բանի համար, որպեսզի պահպանի իր վարկանիշը, և միաժամանակ նախազգախոսությունը: Այդ պատճառով, ամենայն հավանականությամբ, ընդհուպ մինչև հաջորդ տարվա հոկտեմբեր, Ադրբեջանում նախազգախոսական ընտրությունները, արդյունավետ և ղեկավարողական «Նախաձեռնողականությունը» ամբողջ ժամանակ կաճի: Նկատենք, որ ընդունված բանաձևերում (Ադրբեջանի և ՎՌԱՄ-ի վերաբերյալ) Գլխավոր սամարլեայի 63-րդ նստաշրջանի նախնական օրակարգի մեջ որոշված էր ներառել համապատասխան կետեր:⁴⁶ Այս իմաստով ցուցադրական էր Ադրբեջանի արտգործնախարարի մամուլ քարտուղար Յ. Իբրահիմի հայտարարությունը, որը վերաբերվում էր վարչապետի անհամարտությունների կապակցությանը, միասնական դիրքորոշման օժանդակման քաղաքականության շարունակմանը: Այսպես, Բաքվում չէին էլ թաքցնում, որ ամեն կերպ կաջակցեն Վրաստանի դիրքորոշմանը չկարգավորված հակամարտությունների առիթով ՌԴ-ի հետ փոխհարաբերություններում: Մեկնաբանելով Աբխազիայի և Չարավային Օսիայի հետ հարաբերությունների կարգավորման շուրջ Ռուսաստանի վերջին քայլերը Յ. Իբրահիմը հայտարարեց. «Ադրբեջանը պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը և դատապարտում է այդ սկզբունքին հակասող բոլոր գործողությունները... Այդպիսի գործողությունների կանխարգելումը կնպաստեր Վրաստանի տարածքում հակամարտությունների կարգավորմանը»: ՌԴ-ի գործողությունների հետ կապված ՎՌԱՄ-ի հնարավոր միջոցների մասին հարցին Յ. Իբրահիմը ասաց, որ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի օրակարգում գտնվում է ՎՌԱՄ-ի տարածքում ձգձգվող հակամարտությունների մասին հարցը, և համապատասխան բանաձևի ընդունման շուրջ դիվանագիտական ջանքերը շարունակվում են:⁴⁷ Իսկ 2008թ. մայիսի 30-ին, ՎՌԱՄ-ի Գլխավոր քարտուղար Վ.Չեչելաշվիլին Բաքվում լրագրողներին հայտարարեց, որ ՎՌԱՄ-ը մտադիր է նախապես ձեռք բերել «լուրջ դերակատարների» աջակցությունը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում կազմակերպության անդամ-երկրներում ստեղծված հակամարտությունների շուրջ բանաձևի ընդունման համար: Նա ինչպե՞ս հայտնեց, որ «ՎՌԱՄ-ի ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպության անդամ-երկրներում ստեղծված հակամարտությունների մասին» բանաձևի նախագիծը, որը ներառվում է տանել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի սեպտեմբերյան նստաշրջանի քննարկմանը, քվեարկության դեպքում կհավաքի ծայրերի մեծամասնությունը: Ըստ նրա խոսքերի այժմ ՎՌԱՄ-ի անդամ-երկրները շարունակում են ՄԱԿ-ի անդամ-երկրներին համբերուստոր քացատրել բանաձևի նախագիծն իրենց: Ըստ նրա խոսքերի Լեռնային Ղարաբաղի և Աբխազիայի շուրջ ՄԱԿ-ում վերջին 2 բանաձևերի ընդունումը խոսում է այն մասին, որ ՎՌԱՄ-ի անդամ-երկրների դիրքորոշումը աշխարհում «ամրապնդվում է համախմբվում է»:⁴⁸

Ամբողջությամբ քաղաքականացված հարցը, որի շուրջ մշտապես տեղի են ունենում քիչ արդյունավետ, սակայն համառ բանակցություններ

(գործնականում կազմակերպություն ստեղծման պահից), համարվում էր ՎՌԱՄ-ի շրջանակներում սեփական, խաղաղարար բանակակազմի ստեղծման հարցը: Ընդ որում, երբեմն անհասկանալի էր դառնում նրա գործառույթների կատարման հետ կապված հարցը: Մերք խաղաղապահները պետք է պահպանեն խողովակաշարը, մերք պետք է միաժամանակ մասնակցեն նաև հակամարտությունների գոտիներում խաղաղության պահպանման գործողություններին այսինքն կատարեն իրենց ուղղակի պարտականությունները: Տարբեր հայտարարություններ, որոնք տարբեր ժամանակներում առաջ էին քաշվում մերք ՎՌԱՄ-ի երկրների, մերք առանձին երկրների կողմից, որոնք մտնում էին տվյալ դաշինքի մեջ, պարզություն չէին մտցնում այդ հարցում: Սակայն իրավացի էին այն փորձագետները, որոնք այս հայտարարություններում տեսնում էին քաղաքական որոշակի դիվիդենդներ կորելու հերթական փորձը կամ բանակցային գործընթացում, կամ հենց այս նույն խաղաղարար գործողություններում ձևաչափի փոփոխմամբ շահագրգիռ կողմերից: Ինստիտուցիոնալ կերպով նմանտիպ որոշում հայտնվեց դեռ ՎՌԱՄ-ի 2005թ. ապրիլի 22-ի Քիչկուլյան զազաթոզովում: Իսկ 2006թ. օգոստոսի 17-ին Քթիլիսիում ՎՌԱՄ-ի երկրների արտգործնախարարությունների, պաշտպանության և գլխավոր շտաբների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ, կրկին ըվանակվեց ՎՌԱՄ-ի համատեղ խաղաղապահ զուժարտակի ստեղծման թեման: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 61-րդ նստաշրջանի ժամանակ, նաև հնչեցին թե՛ մտերմում ռուսական խաղաղապահների փոխարինմանը վերաբերող հայտարարություններ: 2007թ. հունիսի 19-ին, Բաքվի զազաթոզովի ժամանակ կարծես ձեռք էր բերվել նախնական պայմանավորվածություն մոտ 500 հոգանոց խաղաղապահ զուժարտակի ձևավորման մասին: Սակայն, Մոլդովայի դիրքորոշումը, որը մշտապես թերախավատորեն էր վերաբերվել ՎՌԱՄ-ի շրջանակներում տարբեր խաղաղապահ նախագծերին (թե՛ հաշվի առնեք ոչ թե հայտարարությունները, այլ իրական գործողությունները), մի շարք գործոնների հետևանքով այդ հարցում դարձավ ավելի մերժողական, ինչը նման գործողությունները դարձնում են որոշակի չափով անիմաստ, եթե հաշվի առնենք ՎՌԱՄ-ի շրջանակներում ընդունված որոշումների կրճատման մասին: Այդուհանդերձ, մարտի 11-ին Բաքվից կրկին հաղորդեցին ԱԶ ԵԿԸ «Ներքին գործերի խաղաղապահ ուժերի» առաջին ջոկատի ձևավորման մասին «ՎՌԱՄ-ի տարածքում» հակամարտության գոտիներում համապատասխան գործողություններին մասնակցելու համար: Դրա հետ մեկտեղ ԱԶ ԵԿԸ-ի Գործերի փոխնախարար գեներալ-լեյտենանտ Չ. Դասանովը հայտարարեց, որ սա ձեռնարկվում է արդյունահանատուական IPAP-ի համապատասխան «խաղաղարար գործողություններում ոստիկանության աջակցություն» նախագծի շրջանակներում:⁴⁹ Այս կոնտեքստում պետք է նշել, որ զանազան խոսակցությունները ՆԱՏՕ-ին ներգրավելու՝ կոագարիտացական, հարավ-օսական, մերձդեմետրյան հակամարտությունների տարածքում սոպա խաղաղարար ձևաչափի փոխարինման հարցում, կամ էլ դրանց հայտնվելը Լեռնային Ղարաբաղի Դակամարտության գոտում, ընդհանրապես խիստ հաճելի թեմա են ՎՌԱՄ-ի երկրներում: Ընդ որում, դաշինքը մինչև հիմա հատուկ ցանկություն չի հայտնել թաղաղախաղաղությունները Գլխավոր Կոլկուսում ամբողջապես և, մասնավորապես, իր հաշվին լուծել Ադրբեջանի քաղաքական-հոգեբանական խնդիրները՝ կապված չկարգավորված հակամարտության հետ: Առավել ևս, որ

Հայաստանն ինքը համարվում է դաշինքի շատ միջոցառումների մասնակից: Ավելին, դաշինքը Բաքվում իր ներկայացուցիչ Դինգո Պալմեո Ռուխի միջոցով, հանդես եկավ ի աջակցություն Սիեակի խմբի բանբերին:⁵⁰ Այնուամենայնիվ, բուրբուլին վերջերս Ուկրաինայի պաշտպանության նախարար Յու. Ելասնուրովի Թրիխիսի և Բաքու կատարած այցի ընթացքում, ըստ ՁԼՍ-ների հաղորդագրության, երկկողմանի համագործակցության մասին հարցերի հետ մեկտեղ, կրկին քննարկվեցին ՎՌԻԱՄ-ի ռազմական բաղկացուցիչի հեռանկարները: Մասնավորապես, խոսքը կրկին գնաց ՎՌԻԱՄ-ի շրջանակներում խաղաղարար բանակակազմի ստեղծման մասին:⁵¹ Պետք է նշել, որ ռուսական բազաների դուրս բերման վերաբերյալ, որոնք ՎՌԻԱՄ-ի անդամ-երկրների կողմից դիտվում էին որպես սպառնալիք տարածաշրջանային անվտանգությանը, ժամանակին նույնպես ինտենսիվ խոսակցություններ էին գնում: Կրկին նկատվում էր, որ հաճընկուն են, մասնավորապես, Վրաստանի և Ադրբեջանի դիպլոմատիկ շեղումները: Ենթադրվող ռազմական տեխնիկայի մի մասի տեղափոխումը Գյումրիի ռուսական բանակի բազա, խիստ մեղադրվեց ինչպես Վրաստանում, այնպես էլ Ադրբեջանում: Այսպես, Ադրբեջանում Վրաստանի դեսպան Ջ. Գուլբերիժին հայտարարեց, որ չի պաշտպանում Հայաստանի ռուսական բազայի բերման հեռանակարը:⁵² Ընդ որում, իր ժամանակին, մուտապես մատնացույց էր արվում տարածաշրջանում ռազմա-քաղաքական հավասարակշռության խախտումը և կրկին խոսվում էր տարածաշրջանային անվտանգության սպառնալիքի մասին: Բազաները դուրս բերվեցին: Սակայն պետք է նշել, որ դրանից տարածաշրջանային անվտանգության համար սպառնալիքները չնվազեցին: ԴՖ-ի նկատմամբ տվյալ սպառնալիքներն ավելի մեծացան, քանի որ թուրքական ազդեցության ներդասխանեցման անընդհատ աճը, որը զուգահեռ է բազաների դուրս բերման արդյունքում Վրաստանում ռուսական ազդեցության նվազմանը, սկսեց ընդունել տակավին ոչ հստակ, քայց այնուամենայնիվ սապագա սպառնալիքների լիովին տեսանելի ուղիվազներ: Վրաստանի և Ադրբեջանի ռազմականացումը, եթե հավատանք ինչպես մամուլին, այնպես էլ պաշտոնական աղբյուրների հաղորդագրություններին, գնում է առաջընթաց տեմպերով: Այս իմաստով Ադրբեջանը դեռ վաղուց գերազանցել է ԵՍՁՌՊ-ի թուլլատրեյի մակարդակը, իսկ ռազմական ռևանշի մակարդակը վերջին ժամանակներս աննախընթաց թափ է ստացել: 2004 թ. Բուլղապետում, Գ.Արդաբայանի զագանաբար սպանությունը նույնպես հանդիսանում է Ադրբեջանում ստեղծված մթնոլորտի յուրօրինակ արձագանք: Չկա մի ամիս, որ ադրբեջանական ինչ-որ պատասխանատու անձ սկսած Տախագաի Ի. Ալիևով, և վերջացածն պաշտպանության նախարար Ա. Աբիևից, չաներ այնպիսի հայտարարություն, որ վաղ թե ուշ (իսկ ենթատեսչաղ ավելի շուտ), սակայն պատերազմից խուսափել հնարավոր չէ, և որ Ադրբեջանի մասնակցությունը բանակցային գործընթացում արդեն փոխզիջում է: Դետաքրերականն այն է, որ և վավերագրերով հռչակված, և բանավոր հինգեզված հայտարարությունները, որոնք վերաբերվում են տարածաշրջանային անվտանգության սպառնալիքներին, ունեն միակողմանի բնույթ, և այս հայտարարություններից քիչ է հասկանալի, թե ինչ է նկատի անվում խիստ մոդայիկ դարձած «Նվտանգության տարածաշրջանային համակարգ» բառակապակցության ներքո:⁵³ Ոչ Ադրբեջանը, ոչ Վրաստանը, ոչ՝ աշխարհագրորեն հեռու Ուկրաինան և Մոլդովան, ի վիճակի չէին այս ողջ ընթացքում ստեղծել միացյալ և ՎՌԻԱՄ-ի բոլոր մասնակիցների

չափերն արտահայտող անվտանգության համակարգ: ՎՌԻԱՄ-ի երկրների դեպքում ամբողջապես և Ադրբեջանի մասնավորապես, ամեն ինչ, որպես կանոն, մատնացույց էր անում անվտանգության եվրոատլանտյան համակարգի ձգտմանը, երկկողմանի ռազմաքաղաքական սերտ կապերի զարգացմանը և ռազմականացման աճին, ինչը ենթադաստորաների տիրապետման մի շարք գործոնների հետ նորից կիրառվում է, և շարունակվում է կիրառվել դիվանագիտական ճնշման սպառնալիքով համար: Սեփական խաղաղարար կոնտիկոնցենցների ստեղծման հարցը չափազանց քաղաքականացված է, և հաճախակի կիրառվում է ՎՌԻԱՄ-ի երկրները կողմից որպես ՌԴ-ի վրա ճնշման փորձ: Տվյալ հանգամանքը հատկապես պարզորոշ արտահայտում է Վրաստանի նկատմամբ: ԴՊՎար թե այս հայտարարությունների ետևում կանգնած է իրական ըզվանդակությունը: Ավելին, ինչպես նշում է Ռազմական Տեղեկատվության Կենտրոնի (ԱՄՏ) ավագ գիտաշխատող Տ. Ալալաշևը «ՎՌԻԱՄ-ի անդամները, որոնց ստորաբաժանումները կռվել են Լեռնային Ղարաբաղի, Արխազիայի և Մերձդնեստրի հակամարտություններում, ի վիճակի չեն սպառնալիք իսկապես չեզոք զորք, հինգ նույն հակամարտության գոտում խաղաղարարության համար»:⁵⁴ Ամեն դեպքում, ՎՌԻԱՄ-ի երկրների կողմից այլընտրանքային խաղաղարար կամ ոստիկանական-խաղաղարար ուժերի հարցը հույժ կակտածելի է, առաջին հերթին դրա կիրառման հնարավորության մասով:

ՎՌԻԱՄ: Ներքին և արտաքին հիմնավորիչները: Համառոտ բնութագիր:

ՎՌԻԱՄ-ի գործունեության արդյունավետության վրա ինչպես իր քաղաքականության ամբողջապես իրականացման, այնպես էլ մասնավորապես անտեղծված հակամարտությունների առկայության, ազդեցություն է թողնում տարբեր գործոնների մի ամբողջ հանրագումար: Պետք է նշել, որ այնպիսի կազմակերպություն, ինչպիսին ՎՌԻԱՄ-ն է, շատ դեպքերում կախված է ինչպես արտաքին քաղաքական հարթությունում փոփոխությունների դիմանալիկայից (եթե նկատի ունենանք նրա հիմնական նպատակները, որպես խնդիրների լուծման գործիք կապված չհամապետության միջանցքների ձևավորման հետ), այնպես էլ տվյալ դաշինքի անդամ-երկրների երկկողմանի հարաբերություններից, որոնք մի շարք դեպքերում առաջընդունում են ոչ տարածաշրջանային դերակատարների դիպլոմատիկ և յուրաքանչյուր երկրի ներքին քաղաքական և սոցիալ-տնտեսական իրողությունները: Խիստ պայմանակամորեն, առկա խնդիրները, ՎՌԻԱՄ-ի շրջանակներում միացյալ քաղաքականություն ձևավորման առիթով, որոնց հետ բախվում են (կամ կարող են բախվել) տվյալ կազմակերպության անդամները, կարելի է բաժանել սերտ փոխկապակցված և փոխմիակցված պրոբլեմային համալիրների երկու խմբի, որոնք կարող են բնութագրվել որպես ներդաշինքային և արտաքին:

Ներդաշինքային խնդիրներ: Ներդաշինքային խնդիրները հիմնականում կապված են ՎՌԻԱՄ-ի անդամ-պետությունների երկկողմանի հարաբերությունների և առկա պրոբլեմային համալիրների հետ ՎՌԻԱՄ-ի անդամ-երկրների ներառաբական և սոցիալ-տնտեսական կյանքում: Այստեղ ներկայացվում է միայն նրանց համառոտ բնութագիրը:

1. ՎՌԻԱՄ-ի անդամ-պետությունների երկկողմանի հարաբերություններում պրոբլեմային համալիրները ենթադրվում են ինչպես հին լատեն-

տային (զաղտոնի) և նոր միջպետական խնդիրներով, այնպես էլ, ըստ էության, ՎՌԽՄ-ի երկրների ազգային շահերով, որոնք միշտ չէ որ համընկնում են: Ոչ՝ Մոլդովայի և Ուկրաինայի հարաբերությունները, ոչ՝ վրաց-արդրեջանական փոխադարձությունները չեն կարող բնութագրվել որպես բացարձակապես անմատ: Այս կոնտեքստում կարելի է հիշել, օրինակ, Ուկրաինայի և Մոլդովայի միջև ժամանակին տեղի ունեցած և խորացած վեճը սևծովյան տարածքների փոխանակման վերաբերյալ: Երկկողմանի հարաբերություններում խնդիրների համալիր գոյություն ունի նաև Վրաստանի և Արդրեջանի միջև, որոնք արժե դիտել ՎՌԽՄ-ում նրանց անդամությունից անջատ: Դա և հողային հարցն է Քվեմե/Ե Քարթլիում, որը Վրաստանի արդրեջանցիների Ազգային Լեամբլեայի ջանքերով սպառնում է վերածվել ազգայինի, և տրանսպորտաենթոցտիկ ոլորտում Արդրեջանի աճող պրագմատիզմը (մասնավորապես զագային ենթանյութում), և այլև: Վերջինի վերաբերյալ, ըստ մի շարք ՉԼՄ-ների հաղորդագրության, այս տարի Բաքուն, Վրաստանի համար ավելի քան 2 անգամ բարձրացրեց գազի գինը: Ըստ մասնուում նշանվող հաղորդագրությունների աղբյուրը՝ ջանակներ գազի նոր գինը Վրաստանի համար կմեծանա 1000լիմ-ի համար 120 դոլարից մինչև 261:⁵⁵ ՎՌԽՄ նախագիծը, որը, համաձայն այն իրականացնող երկրների հայտարարությունների, միաժամանակ համարվում է Եվրոպա-Վուկլա-Ասիա միջազգային (ի դեպ, այս նախագիծն էլ Վրաստանի բացառման պատճառով ոչ՝ ԱՄՆ-ն, ոչ՝ ԵՄ-ն այն չեն ֆինանսավորում), օբյեկտիվորեն նվազեցնում է Վրաստանի սևծովյան նավահանգիստների դերը միջնաժամկետ հեռանկարում և ավելի շատ «աշխատում է» Ջեյհան նավահանգստի վրա: Այն մասին, որ Վրաստանը ստիպված է գնացել նման քայլի, վկայում են ինչպես տարրական տնտեսական հաշվարկները, այնպես էլ մի շարք վրացի քաղաքական գործիչների և փորձագետների հայտարարությունները (մասնավորապես Ս. Ջուրաբիշվիլի, և Ռ. Օրավելաշվիլիի և այլն): Ինչպես վկայում է Ռ. Իսմայիլովը. «Երկար տարիներ Վրաստանը չէր վճում միանալ երկաթգծի կառուցման Դախա-գծին նախ և առաջ պահանջելով հատուցում հնարավոր տնտեսական վնասի դիմաց, որն իր 2 սևծովյան նավահանգիստները Բաքունը և Փոթին, կարող են կրել կապված նոր երկաթգծի հետ: Թուրքիան և Արդրեջանը հրաժարվեցին կատարել նման վճարում: Սակայն Ռուսաստանի կողմից 2006թ. տրանսպորտային շրջափակումից հետո Վրաստանը վերանայեց իր դիրքորոշումը»:⁵⁶ Ի լրումն այս ամենի, ինչպես արդեն նշվել է, նրանց վրա ազդեցություն են բոլորում արտաքին գործոնները:

2. *Պրոբլեմային համալիրները ՎՌԽՄ-ի երկրների ներքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակում:* Վերջին ժամանակներս ակնհայտ դարձավ, որ շատ քաղաքական գործիչների այս կամ այն գործողություններն ու հայտարարությունները շատ դեպքերում կրում են իրավիճակային բնույթ, որը թելարված է ոչ միայն միջազգային քաղաքական իրադարձություններով, այլև՝ ներքին իրավիճակով: Այսպես, օրինակ, անկասկած, Արդրեջանի կողմից բարձրացված ռազմական հիստերիան հետապնդում է, մի կողմ թողած ամեն ինչ, արտաքին սպառողի երևակայության վրա ճնշման խաղի նպատակ, որոնց առջև բազմիցս սավել է բոլոր հնարավոր և անհնար մեթոդներով տարածքային ամբողջականությանը հասնելու ձգտման մասին, և այժմ հրաժարվել այս խոստումներից նշանակում է սպասնալիքի տակ դնել սեփական քաղաքական ապագան: Չէ որ չուտով նախագահական ընտրություններ են: Այս իմաստով էլ կարելի է դիտել նաև

Մոլդովայի նախագահ Վ. Կորոնինի վերջին գործողությունները Մոսկվայի հետ իր դիրքերի մերձեցման վերաբերյալ: Ժամանակին գինու արտահանման արգելքը, որը կազմում էր Մոլդովայի պետությունի նկատմի նախն մասը, դրա հետևանքով նաև սոցիալ-տնտեսական այլ գործոնների վատթարացումը, ժողովրդականության նվազումը, Մերձդնեստրյան չկարգավորված հակամարտությունը, Ռուսինիայի հետ խնդիրները, գալիք խորհրդարանական ընտրությունները, ՎՌԽՄ-ի էներգետիկ նախագծերի շրջանցումը, Մոլդովայի տարածք վեր են ածում ՎՌԽՄ-ի թույլ օղակի: Այսպես, օրինակ, «Կոմերսանտ» թերթի 2008թ. մարտի 11-ի արձուկ համաձայն հարցազրույցում /որից հետո ենթադրություններ արվեցին, որ Ռուսաստանը պատրաստ է երաշխավորել Մոլդովայի տարածքային ամբողջականության վերականգնումը, ՆԱՏՕ մտնելուց հրաժարվելու դեպքում/ նախագահ Վ. Կորոնինը հայտարարեց, «Երբ հիմնվեց ՎՌԽՄ-ը, այն իր առջև դրեց այլ նպատակներ: Խոսվում էր Օդեսա-Բրողի նավթատարի կառուցման մասին: Սակայն երբ ես նայեցի այս խորովակաշարի երրորդու քարտեզին, ապա տեսա, որ այն չըջանցում է Մոլդովան շատ հեռվում»: Ինչ վերաբերում է ռուս խաղաղարարների փոխարինմանը նա նշեց. «Մենք չենք ուզում փոխել այսօրվա խաղաղարարներին ցանկացած Վրդիչների հետ»: ՎՌԽՄ-ի հեռանկարների վերաբերյալ նախագահ Վ. Կորոնինի կանխատեսումները այնքան էլ ուրախալի չէին. «Մեր ՎՌԽՄ-ի հետ հեռանկարն աղոտ է: Եթե չլինի տնտեսական շահը, ապա այնտեղ նստել որպես ինչ-որ մեկի հակակշիռ մեզ պետք չէ»:⁵⁷ Չնայած Մոլդովայի ԱԿ-ն հայտարարեց, որ վերջին չի ծրագրել դուրս գալ ՎՌԽՄ-ից⁵⁸, սակայն նախագահ Վ. Կորոնինի բացակայությունը արդեն ՎՌԽՄ-ի 3-րդ զագաթաժողովին անընդմեջ, ամեն անգամ ՎՌԽՄ-ում մոլդովական ներկայության նվազող մակարդակը, դաշինքի ռազմաքաղաքական քաղաքական շուրջ քննարկումներին մասնակցելու մերժումը, շատ փորձագետների ստիպում են խոսել այն մասին, որ Մոլդովան շարունակում է Ուզբեկստանի ճանաչաբարը: Ահալ բանը, որ այսօր շարունակում է նրան միավորել ՎՌԽՄ-ի մյուս երկրների հետ, նույնիսկ աշխարհաքաղաքականությունը չէ, այլ ընդամենը հակամարտությունների արտաքին նմանությունը և դրանց լուծման գործում ցուցաբերված միասնական մոտեցումը (նշեց, որ կապված Աբխազիայի փախստականների բանաձևի հետ, Մոլդովան ձեռնպահ մնաց քվեարկությունը): Այս իմաստով նաև Վրաստանում, ըստ մի շարք փորձագետների կատառուների, ռազմական ճարտասանությունը մասնավորապես կիրառվում է որպես սոցիալ-քաղաքական խնդիրների շրջանցում, որը ձեռք է բերվում համերաշխության ճանաչաբարը՝ քշմանու կերպարի ստեղծման օգնությամբ: Ինչ վերաբերում է Ուկրաինային, իրավիճակը ընդհանրապես խիտ բարդ է, քանի որ այնտեղ պարզորոշ զգացվում է Մեկնուտից և Արևելքի միջև երկում (հնարավոր է, ոչ այդքան սուր, որքան երբեմն բացառաբար տրամադրված ՉԼՄ-ները հայտարարում են, սակայն շատ զգալի է), ինչը ավելի է սաստկանում շարունակվող խորհրդարանական-կառավարական ճգնաժամով, որը սպառնում է դառնալ անընդհատ:

Արտադաշինքային խնդիրները, կապված արտաքին քաղաքական կողմնորոշման և այստեղից ծագող հետևանքներով, հետխորհրդային տարածքում հիմնական ղեկավարարի ՌԴ-ի նկատմամբ, որոնք շատ դեպքերում պայմանավորված են ՌԴ-ԱՄՆ, ՌԴ-Եվրոպա, ԱՄՆ-Եվրոպա և այլ փոխհարաբերություններով, մի շարք դեպքերում միջնորդավորված

ազդեցություն են թողնում հակամարտության գոտիներում իրավիճակի վրա: Այն, որ չկարգավորված հակամարտությունների նկատմամբ վերաբերմունքը թելադրվում է ոչ միայն ՎՌԻԱ-ի երկրների ներքին քաղաքական կոնյուկտուրայով, այլ նաև ավելի մեծ չափով այս երկրների ԱՊՀ տարածքում հիմնական ղեկավարների ՈՂ-ի հետ փոխհարաբերությանը և միջազգային գործընթացների նկատմամբ արձագանքով, որոնք ընթանում են ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային չափումներում, իր ժամանակի ակնհայտորեն ցուցադրեց Քիշնևում 2006թ. աշնանը ՎՌԻԱ-ի խորհրդարանական ասամբլեայի 3-րդ նստաշրջանը: Այդ ժամանակ ՎՌԻԱ-ի այլ մասնակիցներ հրաժարվեցին աջակցել Կրաստանին և ընդունել հատուկ բանաձև վրաց-ռուսական հարաբերությունների առիթով: Այսպես, ՎՌԻԱ-ի խորհրդարանական Ասամբլեայում մոլդովական պատվիրակության անդամ Մոլդովայի Դանրապետության (ՄԴ) խորհրդարանի պատգամավոր Կասիլի Իովկը հայտարարեց, որ գոյություն ունեն հարցեր, որոնք վերաբերվում են պետությունների միջև երկկողմանի հարաբերություններին, որոնք մտնում կան չեն մտնում այդ միջպետական միավորման մեջ, որոնց մեջ, տարբեր, այդ թվում նաև եթիկական պատճառներով մյուս կողմերին միջամտել ընդունված չէ: Այդպիսի հարցերի թվին պատգամավորը դասում էր Ռուսաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների սրացումը:⁵⁹ Վերջերս սկսված (2008թ. փետրվարի 17-ից) Կոսովոյի ճանաչման գործընթացը, նույնպես արագացրեց մի շարք խիստ բարդ գործընթացներ հետխորհրդային տարածքում, որոնք պետականվորված լինելով խոշոր միջազգային ղեկավարների շահերով՝ սպառնում են ավելի բարդանալ:

Ինչպես ՎՌԻԱ-ի երկրների, այնպես էլ այլ շահագրգիռ պետությունների միջև խնդիրներն ու հակասությունները ավելի պարզ են դիտարկվում աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության ոլորտում: ՎՌԻԱ-ի երկրների Լեհաստանի, Բալթյան երկրների և այլնի հետ ունեցած սերտ շրջափակումը, վաղուց առաջ է բերել ռուսական դիվանագիտության պատասխան քայլեր: Նավթագազային ոլորտում փոխհարաբերությունների անցումը անգիջում բիզնեսի, զգալի հարված հասցրեց ՎՌԻԱ-ի մի շարք երկրների: Բացի այդ, այսօր կառուցվող խողովակաշարերը (օրինակ՝ Գյուրխային և Գարավային հոսքերը) ընդհանրապես կոչված են շրջանցել տարանցիկ երկրների տարածքները: Գեոարքային հակասություններ են նկատվում նաև Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան միության ձևավորման և գործունեության մեջ կապված այն նպատակների հետ, որոնք ձգտում են հասնել ՎՌԻԱ-ի առանձին երկրներ, ինչպես նաև նպատակներ, որոնք հռչակված են ամբողջ կազմակերպության կողմից: Այսպես, Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առանցքի հանգույցված աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության, ինչպես նաև տարբեր ոլորտներում միջպետական փոխգործակցության զանազան երկկողմանի համաձայնագրերի հանրագումարի վրա, անդամ-երկրների տարբեր շահերի և պրագմատիզմի պատճառով որոշակի հակասության մեջ է մտնում ինչպես եվրասիական միջանցքի ձևավորման, այնպես էլ այս ծրագրերի իրականացման հետ կապված օբյեկտիվ դժվարությունների հետ: Թուրքիայի ձգտումը ընդգրկել բոլոր էներգահարողականները հոսքերը չի կարող մտահոգություն առաջ բերել Վրաստանում, ինչպես նաև ողջ Արևմուտքում: Ուկրաինան, լոբբիստի անբարեկեղծ Ասիական հոսքի զգալու առիթ կառուցման շուրջ նախաձեռ-

նությունը, որը որոշակի խանգարվածությամբ է ընդունվում նաև Վրաստանում, չի կարող չբախվել Թուրքիայի պարզորոշ չկամությանը՝ մասնակցելու այդ նախագծին: Ընդհանրապես, նախափուլ, զգալիործրաբեր, որոնք փորձում են առաջ մղել ՎՌԻԱ-ի երկրները, բավականին կասկածելի են: Բացի այդ այս նախագծերը օբյեկտիվորեն հակասության մեջ է մտնում Նաբոկկո նախագծի հետ:

Եվ՝ Օդեսա-Բորոյի-Գդանսկը ԲՅՁ-ի և GUEU-ի նկատմամբ, որը կոչվում է նաև Ասիական հոսք, ԲՅՁ-ի նկատմամբ օբյեկտիվորեն համարվում են Թուրքիայի վարած քաղաքականության մրցակիցներ: Այս խնամտով ՎՌԻԱ-ի նավթագազային նախագծերը մրցակցային են և Նաբոկկո խողովակաշարին, և ԲՅՁ ու ԲՅՁ-ին չիառված Սեբոկկոպայան և ռուսական այլ նախագծերը (Գարավային հոսք, Գյուրխային և այլն), և էներգակիրների տեղափոխման արդեն իրապես գոյություն ունեցող երթուղիներին: Գյուրխայիվ հարցի մեջ, թե որքանով են դրանք իրականանալի կամ ոչ, և որքանով շահութաբեր կլինեն նրանք, որոնք ծրագրված է իրականացնել, ինչպիսին կլինի նրանց միջոցով հասցված էներգակիրների վերջնական գինը, չթվելով նաև օբյեկտիվ դժվարությունները կապված ինչպես գոտ աշխարհագրական գործոնների, այնպես էլ դազախական, թուրքմենական, իրանական, ադրբեջանական և այլ էներգակիրների հեռանկարում դրանց հնարավոր լրացման հետ, պետք է ընդունել, որ օբյեկտիվորեն, ՎՌԻԱ-ի որպես կոլեկտիվ կազմակերպության նավթագազային նախագծերը (որտեղ ինչ-որ իրականացված նախագիծ կազմակարարել միաժամանակ բոլոր անդամ-երկրների շահերը) դեռ չեն գտել իրենց իրական րովանագրությունը: Ինչպես նկատում է Ա. Եղիազարյանը, Կիևում 2008թ. մայիսի 23-ի վերջին էներգետիկ զագաթաժողովի վերաբերյալ «Գագաթաժողովի ընթացքում Ուկրաինան, Ադրբեջանը, Վրաստանը, Լիտվան, Լատվիան, Էստոնիան և Լեհաստանը համաձայնեցին ստեղծել միջպետական աշխատանքային խումբ ԵՄ-ի օրենսդրության և ազգային օրենսդրություններին համապատասխան Կասպից-Սև-Բալթիկ ծովերի էներգատարանցիկ տարածության ձևավորման սկզբունքների շուրջ: Ինչ վերաբերվում է եվրասիական նավթատար միջանցքի նախագծի ճակատագրին, այն գործնականում մոլվեց երկրորդ ակնյալին հրապարակել ոչ նավթատարի կառուցման ժամկետները, և մինչ այժմ ոչ մի պայմանագիր չի կնքվել նավթի մատակարարման մասին: Գագաթաժողովի ժամանակ քննարկվել են միայն «Օդեսա-Բորոյի-Գդանսկ» նավթատար երթուղի տեխնիկա-տնտեսական հիմնավորումները և Ուկրաինայում Կասպյան նավթի վերամշակման բարձր տեխնոլոգիական համալիրի կառուցման շուկային ուսումնասիրությունների նախնական եզրակացությունները: Այս հարցի շուրջ ընդամենը ընդունվեց Ադրբեջանի, Վրաստանի, Լիտվայի, Լեհաստանի և Ուկրաինայի նախագծիների համատեղ հայտարարությունը: Այս երկրների համագործակցության նոր ձևաչափի հիմնական նախաձեռնողը իրականում ոչ թե Կիևն էր, այլ Բալթյան քաղաքը (Լեհաստանը՝ զուսմարած Սեբոկկոպայան 3 հանրապետությունները)... Լեհաստանը և Սեբոկկոպայան հանրապետությունները փաստացի գտնվում են մենաշնորհային կախվածության մեջ էներգակիրների ռուսական մատակարարումից...»⁶⁰ Սրանով էլ բացատրվում է Արևելյան եվրոպայի և Բալթյան երկրների նկատմամբ համախառն ՎՌԻԱ-ի հետ: Գեոարքային է սրանով էլ բացատրվում է Լեհաստանի նախագահ Լ. Կաչինսկու հայտարարությունը՝ ՎՌԻԱ-ի Բաթումի զագաթաժողովից հետո, ճեպագրույցի

ժամանակ՝ Լեոնային Ղարաբաղի Հակամարտության կարգավորման հարցի լուծումը Ադրբեջանի այսպես կոչված տարածքային անդրջակամության շրջանակներում:⁶¹ Քանի դեռ կա Օդեսա-Բրոդի-Պլոցկ-Գդանսկ նավթատարի վերջնական կառուցման և լրացման հույս (պատուհանային, թե ոչ, այլ հարց է), Ադրբեջանի դիրքորոշումները կբարձրաձայնվեն այլընտրանքային ենթագտարաններում հաղորդակցությունների կարգավորման մեջ շահագրգիռ երկրների կողմից: Բնորոշ է, որ Լեոնային Ղարաբաղի Հակամարտության հարցում ՌԴ-ի անկողմնակալությունը նվազման դիմաց ադրբեջանական ենթակառուցվածքի վաճառքի հնարավորության վերաբերյալ զրպարտությունները ադրբեջանական ՋԼՄ-ներում սկսեցին հինչել «Գազպրոմի» ղեկավար Ա. Միլլերի 2008թ. հունիսի սկզբին Բաքու կատարած այցի նախօրեին և դրանից հետո (հիշեցնենք, որ Ադրբեջանի հետ «Գազպրոմի» համագործակցությունը գազի մատակարարման ոլորտում ավարտվեց 2007թ. հունվարի 1-ից, երբ Ռուսական ընկերությունը ջանկություն հայտնեց բարձրացնել գազի գինը մինչև 235 դոլար 1000մ³-ի համար): Այսպես, քաղաքական նորամուտությունների և տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար Մուբարիս Սիմեոզյանի իր մասին ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ ադրբեջանական գազի գնման մասին Գազպրոմի առաջարկը կարող է Ադրբեջանին քաղաքական շահույթներ բերել: Ըստ նրա խոսքերի, Ռուսաստանին Ադրբեջանի գոհացուցիչ պատասխանը կարող է երկրի ենթակառուցվածքային շտկման պատճառ հանդիսանալ, իսկ Ռուսաստանը կարող է Ադրբեջանի հետ գործարքի գնալ Լեոնային Ղարաբաղի հարցի կարգավորման մեջ: «Մտածում եմ, որ հանուն Ղարաբաղի վերադարձման, առանց պատերազմի, կարելի է Ռուսաստանին տալ գազ, նավթ և հրաժարվել մտնել որևէ ռազմական դաշինքի մեջ»:⁶² Ավելի ուշ, արդեն փոխվարչապետ Յա. Ելուրովը չբացառեց, որ «նավթամթերքների արտադրության մեծացմանը կհասնեն, այդ թվում նաև, Բաքու-Նովոռոսիսկ խողովակաշարով ադրբեջանական նավթի դադարեցման կամ որոշակի աստիճանով նաև տեղափոխման չափերի նշանակալի նվազումով»:⁶³ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի այցի նախօրեին, ադրբեջանական ՋԼՄ-ներում նույնպես հինչեցին նմանօրինակ զրպարտություններ:

Այն, որ որոշակի աստիճանում ՎՌԽՄ-ում անդամությունը բացասական հետք կարող է թողնել հարևան պետությունների հետ փոխհարաբերությունների վրա, ցույց է տալիս ոչ միայն ՌԴ-ի հետ տվյալ կազմակերպության անդամ-երկրների հարաբերությունները: Դա կարող է երևակվել նաև ՀՀ-ի ՎՌԽՄ-ի անդամ երկրների հետ փոխհարաբերություններում: Ժամանակին Կրասնամի կողմից հինչել էին առաջարկելու և հետաքրքրություն տարածաշրջանային նախագծերում Հայաստանի ներգրավման մեջ, սակայն Ադրբեջանի կոշտ դիրքորոշումը ոչնչի չհանգեցրեց վրացական կողմի այս նախատեղությունը: Ավելին, օգտագործելով ինչպես Վրաստանի աշխարհաքաղաքական դիրքը, այնպես էլ նրա հակաությունները ՌԴ-ի հետ, ադրբեջանական կողմը շարունակում էր և շարունակում է Վրաստանի վրա յուրօրինակ ճնշման փորձերը: Այսպես, դեռևս 2004թ. ադրբեջանական կողմը Վրաստան քաջ չքողեց մի քանի հարյուր վազոն: Ըստ առաջին փոխվարչապետ Ա. Աբբասովի խոսքերի, Ադրբեջանը քաջ չի թողնի բեռները Վրաստան, դրանց Հայաստան ռուարկելու դեպքում: Սա էր համարվում Ադրբեջանի դիրքորոշման իրական պատճառ թե ոչ, սակայն Հայաստանի մասին հիշատակումը ևս

ընդորշ է:⁶⁴ Նույնը կարելի է նկատել արդեն հիշատակված ԿԱԹԲ նախագծի վերաբերյալ: Արդեն այդ ժամանակ ակնհայտ էր, որ Կարս-Գյումրի-Թիլիսի-Բաքու գծով բեռնափոխադրումներ իրականացնելու է լինել Կարս-Գյումրի-Երևան-Բաքու գծով ավելի էժան՝ չհաշված այն հանգամանքը, որ ԿԱԹԲ-ն դեռ պետք էր իրականացնել: Ավելի պարզորոշ բեկումնի հայտ եկավ չկարգավորված հակամարտությունների հարցում: Պետք է նկատել, որ եթե երկրորդն էր հարաբերությունների մակարդակում (Հայաստանի և Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև) համագործակցությունը, չնայած մի շարք առկա խնդիրների, անընդունալից զարգանում է առաջընթաց տեմպերով, ապա հակամարտության լուծման մեջ նրանց դիրքերը կհեռանան: Այս տեսակետից ՎՌԽՄ-ում այդ երկրների անդամությունը Ադրբեջանի կողմից դիվանագիտական ճնշման հնարավորություն է նրանց վրա՝ չկարգավորված հակամարտությունների հարցում դիրքորոշումների առիթով՝ դրա փոխարեն, օրինակ, ենթակառուցվածքի մատակարարումը օբյեկտիվորեն համարվում է հիմնական բաժանող գծերից մեկը, որոնց գոյություն ունեն երկկողմանի հարաբերություններում: Այս բոլոր հանգամանքները չեն կարող չազդել ինչպես երկկողմանի հարաբերությունների, այնպես էլ անարդյունքային ՎՌԽՄ-ի գործունեության արդյունավետության վրա: Դեռ կողմերին հաջողվում է տարբերակված ձևով սահմել մի շարք խնդիրների լուծմանը, այդ թվում նաև սառեցված հակամարտությունների շուրջ:

Եզրակացություն

ՎՌԽՄ կազմակերպությունը, որը ստեղծված է բարդ քաղաքական տեղաշարժերի և ինչպես անդամ-երկրների, այնպես էլ արտաքին ուժերի գործողությունների հետևանքով, այսօր բավական մշուշոտ ասպագ ունի: Այն թվում է մշուշոտ առաջին հերթին, այս դաշինքի մեջ մտնող պետությունների մի շարք հարցերի շահերի բացահայտված անհամապատասխանության պատճառով, ինչը համախա քաջատրվում է արտաքին դերակատարների հետ նրանց փոխհարաբերություններով: Այս իմաստով հիմնական գործոններից մեկը, ինչը պահում է Ադրբեջանին, Վրաստանին և Ադրբեջանի այս կազմակերպության մեջ, դեռևս հանդիսանում է չկարգավորված հակամարտությունների առկայությունը: Ադրբեջանի հետ Ռուսաստանի շրջափակումը, ինչպես արդեն նշվել է, թելադրված է ոչ թե Ղրմիսի լատենտ գործոնով, այլ առաջին հերթին ենթակառուցվածքի եվրոպա մատակարարման այլընտրանքային երթուղու կարգավորման ջանկությամբ: Եվ եթե նախամարտությունների հարցում ՎՌԽՄ-ի երկրները դեռ նախընտրում են (չնայած ոչ միշտ, ինչը ակնհայտ է Մոլդովայի օրինակում) աջակցել միմյանք և ավելին, վերջին ժամանակներս այս ուղղությամբ մի շարք ջանքեր գործարդեցին, ինչը արտահայտվեց ՍԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում մի շարք բանաձևերի ընդունման մեջ, ապա այլ հարցերում, որոնք սերտորեն խառնված են նրանց քաղաքականությանը, հակամարտությունների կարգավորման միասնական մոտեցումների արտահայտման իմաստով, նկատվում են հասունացող հակամարտություններ: Այս կոնտեստում որոշակիորեն քաջ է մնում այն հարցը, թե որքանով հակամարտությունների կարգավորման սկզբունքների միասնական մոտեցումների համաբաշխությունը կնպաստի ՎՌԽՄ-ի որպես կազմակերպության դիրքերի ամրապնդմանը: Քանի դեռ քննարկվում են համատեղ ենթագտարանապորտային նախագծերը (Լեհաստանի, Բալթյան երկրների և այլնի հետ), և,

առաջին հերթին, էներգետիկ, ՎՌՄԱ կազմակերպությունը իր մի շարք անդամների և որոշ արտաքին միջազգային ռեռակատարների համար որոշակի հետաքրքրություն կենթկայացնի: Այն օրը, երբ կարգավոր, որ այս նախագծերը անհրաժեշտանալի են, հակամարտությունների հարցի շուրջ միասնական ճակատի ձևավորումը ճեղքվածք կտա: Այս իմաստով ճուշտ է համարվում կազմակերպության որպես այդպիսին երաշխիք է համարվում կազմակերպության որպես այդպիսին գործունեությունը շարունակելու համար:

ՎՌՄԱ-ի ապագան մշուշոտ է ներկայացվում նաև նրա փոքր արդյունավետության պատճառով: Այսպես, նույնիսկ հակամարտությունների հարցում, որտեղ կազմակերպության գործունեությունը վերջին ժամանակներս ստացավ ամենաշատ արժանացմբը, դիվանագիտական բանցրը, չնայած ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ընդունած մի շարք բանձների, մեծ հաշվով են արդյունավետ թիչ: Այստեղ հստակ երևում է, առաջին հերթին, խաղ ներքին սպառողի երևակայության վրա: Առաջին հերթին, այս պահը հիմնականում վերաբերում է Ադրբեջանին: ԸՈՒՀ-ի հարաբերակցում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ ԵԱԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ դեպի 4. Կազմիտովը: «Ադրբեջանական դիվանագիտության միտումը՝ դետալեմ ընկնել միջազգային տարրեր առյաճներ և փոշիացնել ջանքերը, ԵԱԿ շրջանակներում բանակցային գործընթացի վրա դրանք կենտրոնացնելու փոխարեն, պատահական չէ: Դետալեմ են լինում մի քանի նպատակներ: Դրանցից գլխավորները՝ ձգել բանակցային մարաթոնը հետագա տարիների վրա և քարոզչական շահույթ փնտրել Ղարաբաղյան Դավանարտության ընթացքին ու Եուրոպայի թիչ ժամոք կազմակերպություններում»⁴⁵ Սեծ հաշվով արդրբեջանական դիվանագիտության փորձերը, որն օգտագործում է ՎՌՄԱ-ի ձևաչափը ԵԱԿ ՄՍ-ի շրջանակներում բանակցային գործընթացի հեռանալու կամ դրա կսեսցման համար, նկատի ունենալով բոլոր վերը նշված պահերը, ավելի հետաքրքրական են հոգեբանության, այլ ոչ իրական քաղաքականության տեսակետից:

Արդյունքներ և գրականություն

1. Ա. Մանասյան: Դատական փաստաթղթեր և հակամարտություններ: www.nkr.am 04. 04. 2008: «Դարաբայան կոնֆլիկտ: Հիմնական գաղափարները և ժամանակագրությունը» աշխատության մեջ Ա. Մանասյանը, ավելի մանրամասնորեն վերլուծելով Դարաբայի նկատմամբ Ադրբեջանի «իրավա-կան» հավակնությունները, նշում է «1991թ. օգոստոսի 30-ին հռչակելով ՄԳԴ-ի պետականության վերականգնումը Ադրբեջանի Դարաբայության, Ադրբեջանի իրավախաբորությունից հրաժարվելու ակտով, ըստ Եուրոպայի, մնաց առանց օրինակներին սահմանված սահմանների: Բանն այն է, որ Ադրբեջանի Դետալեմական Դանրապետությունը 1918-20 թթ. չունեց միջազգայնորեն ճանաչված սահմաններ վեճերի պատճառով, որոնք ծագել են ՄԳԴ-ի անհիմն տարածքային հավակնությունների արդյունքում, գործնականորեն բոլոր հարևան պետությունների հետ»: (տե՛ս Ա. Մանասյան: Դարաբայան Դավանարտություն: Հիմնական գաղափարներ և ժամանակագրությունը: - Եր. «Նորվանք» գիտակրթական հիմնադրամ, 2005, էջ 34): Այս կերպ, տարածքային ամբողջականություն սկզբունքը, որով անօրինաբար փորձում է թողարկել Ադրբեջանը, ոչ մի առջնություն չունի նրա հետ: Այս իմաստով Ադրբեջանական դիվանագիտության կողմից գործը որպես տարածքային վեճ ցույց

տալու բոլոր փորձերը, ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման փոխարեն, բախվում են պատմական օրելակով փաստերի:

2. Այսպես, 1966թ. դեկտեմբերի 19-ի (էջ 1) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրում և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին Միջազգային համաձայնագրում ասվում է. «Բոլոր ազգերը ունեն ինքնորոշման իրավունք: Ըստ այս իրավունքի նրանք ազատ են սահմանելու իրենց քաղաքական կարգավիճակը և ազատ պահպանելու են իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը... Այս համաձայնագրում, բոլոր մասնակից պետությունները... պետք է ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին համապատասխան բաջալերեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը»: «ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան, պետությունների միջև համագործակցությանը և դրաջանակ հարաբերությունների վերաբերող միջազգային իրա-ունքի սկզբունքների մասին» դեկլարացիայում (ընդունված 1970թ-ի հոկտեմբերի 24-ին, 2625 (XXV)բանձնով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1883-րդ լիազորված միտում) նշված է. «Ըստ ազգերի ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքի, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, բոլոր ազգերն իրավունք ունեն ազատ, առանց արտաքին միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այս իրավունքը համապատասխան կանոնադրության դրույթներին»: Եուրե տեղում նշվում է, որ ինքնորոշման իրավունքի իրականացման միջոց կարող է լինել «անկախ և սուվերեն պետություն ստեղծումը, որն ազատ է միանալու անկախ պետությանը կամ անջատվելու նրանից, կամ ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի սահմանում՝ ազատ կողմորոշված ազգի կողմից, համարվում են ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման միջոցներ»: Ետնադրված սկզբունքներ ամրագրված են նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱԿ) փաստաթղթերում՝ 1975թ. Զեյլիհայան վերջնական ակտում, Վիեննայի 1986թ. համընդամեն վերջնական փաստաթղթում, 1990թ. Կուպենհագենի խորհրդի փաստաթղթում և այլն:

3. Դ. Բորոնկովա. Этаты развигия ГУЯАМ. Կ.1 www.ia-centr.ru.19.06.2007.

4. Եուրե տեղում

5. В. Митяев. Грузия на Великом Шелковом пути.//Грузия: проблемы и перспективы развития. М. РИСИ, 2001, Т.1, С.310.

6. Ադրբեջանի Դանրապետության, Վրաստանի, Մոլդովայի Դանրապետության, Ուկրաինայի և Ուզբեկստանի Դանրապետության նախագահների վաշինգտոնյան հայտարարությունը: Տե՛ս կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.guam.org.ua, տե՛ս նաև կազմակերպության հին կայքում՝ www.guam.org

7. Ուզբեկստանի նախագահի մատուցեց ՎՌՄԱ-ում անդամության անհետևակարայնությունը: www.regnum.ru, 06.05.2005

8. Դ. Բորոնկովա. Этаты развигия ГУЯАМ. Կ.2 www.ia-centr.ru.20.06.2007.

9. ՎՌՄԱ-ի պետությունների ղեկավարների 2005թ. ապրիլի 22-ի Քիշնյան հռչակագրում մասնավորապես ասված է. «Ընդօժեյով, որ ՎՌՄԱ-ի մի շարք պետություններում չկարգավորված հակամարտություններ խախտում են սուվերենիտետը, ՎՌՄԱ-ի պետությունների անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, խոչընդոտում են տարածաշրջանի տնտեսական զարգացման և ժողովրդավարական բարեփոխումների անցկացման լիամասշտաբ իրականացումը, բացասաբար են ազդում եվրոպական ինտեգրացիոն գործընթացների և իրենցից ներկայացնում են մարտադավեր միջազգային հասարակությանը... 3. Անուր վճակվածություն են հայտնում համատեղ ներդրում մտցնել կայունության և խաղաղության պահպանման մեջ, մտադրություն են հայտնում՝ կարգավորել ռազմաքաղաքական և ռազմական համագործակցությունը, այդ թվում խաղաղափրական գործողությունների ոլորտում... 4. Ընդօժում են ՎՌՄԱ-ի պետությունների և միջազգային հասարակության համատեղ ջանքերի

ինտենսիվության կարևորությունը Մերձդնեստրյան հիմնախնդրի և Արդրեջանում ու Վրաստանում հակամարտությունների կարգավորման մեջ, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հիման վրա անվերահսկելի տարածքների վերամիավորման ճանապարհով այն պետությունների հետ, որոնց մաս են նրանք համարվում, և տարբեր երեկ խմբերի համատեղ խաղաղ գոյակցության ապահովում պետության միջազգայնորեն ճանաչված սահմաններում: 5. Ընդգծում են 1999թ. ԵՆՅԿ Առանձնաբովանակման արժեքները որոշման կարևորությունը և կոչ են անում ԵՄԿ բոլոր պետություններին առավելագույն ջանքեր ներդնել Ռուսաստանի կողմից ընդունված պարտավորությունների կատարման համար՝ ռուսական զորքերը և սպառազինությունը Մոլդովայի Չարնոպետրովկայի և Վրաստանից լիպիսի ճյուղերը բերելու մասին: 6. Արտահայտում են օժանդակություն այն խաղաղ միասնամտություններին և գործընթացներին, որոնք ուղղված են առկա հակամարտությունների լուծմանը: Այս կոնտեքստում ղոջունում են վերջերս կատարված առաջարկները, Վրաստանի նախագահի կողմից Չարավ-օսական ինքնավարության համար ներկայացված խաղաղ ծրագիրը, ԵՄԿ Սինակի խմբի շրջանակներում շարունակվող բանակցությունների «Պուսայի գործընթացը», ինչպես նաև ՎՈՒՄԱ-ի գազարածուղիի ժամանակ Ուկրաինայի և Ռուսիայի նախագահների առաջարկը Մերձդնեստրյան հիմնախնդրի վերաբերյալ: («Չանուն ժողովրդավարության կայունության և զարգացման» ՎՈՒՄԱ-ի պետությունների ղեկավարների Քիշինյան ինչակազիր: www.guam.org.ua, 22.04.2005)

10. P. Исмаилов. Трубопроводная политика на Каспии приводит к заключению страных союзов. www.eurasianet.org, 14.09.2006.

11. Эксперт: «Только Карабах держит Азербайджан в составе ГУАМ-а. www.regnum.ru, 24.05.2006.

12. Կազմակերպության գլխավոր քարտուղար՝ Վ. Չեչելաշվիլիի ելույթը ՎՈՒՄԱ-ի՝ տնտեսական զարգացման և ժողովրդավարության համար կազմակերպության, Բաքվի՝ պետությունների ղեկավարների խորհրդում, 19.06.2007, www.guam.org.ua

13. Բաքվում հաստատվեց Արդրեջանի նախագահության ծրագիրը ՎՈՒՄԱ-ում 2007-2008թթ.: www.regnum.ru, 20.06.2007

14. Ուկրաինայի նախագահը կոչ արեց ՎՈՒՄԱ-ի պետությունների ջանքերը կենտրոնացնել «Մետաքսյա մեծ ճանապարհի» վերածննդի վրա: www.regnum.ru, 19.06.2007

15. Իլիամ Ալին: Մեզ միավորում են նաև անջատողական միտումները ՎՈՒՄԱ-ի երեք երկրներում: www.regnum.ru, 20.06.2007

16. В Якутии. ГУАМ против России – баксинский район. www.regnum.ru, 23.06.2007.

17. Լիվովյան նախածեղումում է ԵՄԱ-ում ՎՈՒՄԱ-ի բարեկամների խմբի՝ ստեղծումը: 10.10.2007թ www.rian.ru

18. ՎՈՒՄԱ-ը պատրաստվում է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի օրակարգ մտցնել «ձգձգվող հակամարտությունների» մասին կետը. www.regnum.ru, 07.09.2005: Ընդհանրապես, հակամարտությունները իրենց ձևով ներկայացնելու առիթով ՎՈՒՄԱ-ի երկրների կողմից ակտիվ փորձեր ձեռնարկվեցին հետագայում՝ և ԵՄ-ում, և՛ ՄԳԳ շրջանակներում և այն, ոչ թե միայն ՄԱԿ-ում: Այսպես, օրինակ 2007թ. փետրվարի 7-ին, Ուկրաինան, ՎՈՒՄԱ-ի անունից հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ պարունակվում էր կոչ ԵՄ-ին դատապարտել Արխազիայում ծրագրավորված փետրվարի 14-ի և մարտի 4-ի խորհրդարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: (տե՛ս S. ժվանիա: Ուկրաինան ՎՈՒՄԱ-ի անունից կոչ է անում Եվրոպայի խորհրդին դատապարտել ընտրությունները Արխազիայում: www.newsgeorgia.ru, 07.02.2007):

19. Չայաստանը բավարարված է ՄԱԿ-ում ՎՈՒՄԱ-ի առաջարկի ծախսումը: www.regnum.ru, 15.12.2005:

20. Statement by GUAM Member States regarding the referendum planned in the Tskhinvali region/South Ossetia, Georgia. www.guam.org.ua, 08.11.2006.

21. «Ժողովրդավարական և տնտեսական զարգացման կազմակերպության ՎՈՒՄԱ-ի» անդամ-երկրների արտոնորմանարարների խորհրդի հայտարարությունը՝ կապված Մոլդովայի Չարնոպետրովկայի Մերձդնեստրյան տարածաշրջանում հանրապետի հետ: www.guam.org.ua, 25.09.2006:

22. 2006թ. սեպտեմբերի 7-ի քանաձևի մասին, տե՛ս փաստաթղթի տեքստը (կոդ A/60/L.60/Rev.2.) և ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 60-րդ նստաշրջանի 98-րդ լիազույսմ ընտի սղագիրը: www.un.org/News/Press/docs/2006/ga_10487.doc.htm.

23. ՎՈՒՄԱ-ի անդամներն առարկեցին Գլխավոր կոմիտեի հանձնարարական և հասան ձգձգվող հակամարտությունների մասին հարցի կցմանը Գլխավոր Ասամբլեայի 61-րդ օրվա ծանուցման մեջ: www.un.org/04.09.2006.

24. Ա. Ջանվիդարյան: «Ինչու՞ չտեղաբաշխել Ղարաբաղում ռուսական զորամաս»: Լեռնային Ղարաբաղ վերջին շաբաթում: www.regnum.ru, 18.09.2006, տե՛ս նաև ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց բանաձև: «Բրավիանկը Արդրեջանի օկուպացված տարածքներում»: www.regnum.ru, 08.09.2006

25. Չայաստանի ԱԿ ղեկավար ՎՈՒՄԱ-ի նախածեղությունները Որմարտաիրավեր Չայաստանի համար: www.regnum.ru, 16.09.2006.

26. В.Соловьев. Против российских миротворцев собирают полицейские силы. Коммерсант, 27.09.2006.

27. ՎՈՒՄԱ-ի երկրներն անհանգստություն հայտնեցին կապված Լեռնային Ղարաբաղում հանրապետի հետ: www.newsgeorgia.ru, 15.12.2006.

28. Չայաստանի ԱԿ ղեկավար Վրաստանը, Ուկրաինան և Մոլդովան միջամտում են ոչ իրենց գործերին: www.regnum.ru, 07.12.2006.

29. ՎՈՒՄԱ-ի երկրները ներմուծեցին ՄԱԿ «ստեղծված հակամարտությունների մասին» բանաձևի նախադիմ: www.regnum.ru, 08.12.2007

30. Չայաստանը պատրաստ է ՎՈՒՄԱ-ի կողմից անվանակցների: www.regnum.ru, 01.12.2006: Այս իմաստով պետք է նշել, որ արդրեջանական դիվանագիտությունը իրականում ձգտում է ներկայացնել բոլոր հակամարտությունները մեկ տեսանկյունից՝ իր դիրքերի ամրապնդման նպատակով, ինչպես ՎՈՒՄԱ-ի շրջանակներում, այնպես էլ միջազգային ֆորումներում: Այսպես, արդրեջանցի փորձագետ Ա. Սեիրովը խորհուրդ է տալիս արդրեջանական դիվանագիտությանը անել այն, ինչ նրանք ըստ էության և ձգտում են իրականացնել՝ «Արդրեջանական դիվանագիտությունը պետք է ընդգծի, ըստ էության, բոլոր 4 հակամարտությունների միակերպությունը և այս հակամարտությունների տարբեր մոտեցումների կիրառման և տարբեր հարաբերությունների արդյունավետությունը... 2) Արդրեջանը միաժամանակ պետք է շարունակի կառուցել մի խմբում Մոլդովայի և Վրաստանի հետ մնալուց, և կառուցել իրեն այս խմբից առանձնացնելու ջանկարացում փորձ չլուծված հակամարտությունների քննարկման ժամանակ: Ի դեպ, այդպիսի փորձեր կիրառվում են Չայաստանի կողմից: Արդրեջանի գտնվելը մի խմբում երկու այլ պետությունների հետ շատ դժգոհություն կգրաստի նրա ամբողջակամության փրկությանը»: Կարգ Սեյազ: Препедит в Косово: уроки для азербайджанской дипломатии. www.regnum.ru, 14.12.2007.)

31. ՎՈՒՄԱ-ի արածնունդը ստեղծված հակամարտությունների հարցը կքննարկվի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում այն ժամանակ, երբ ՎՈՒՄԱ-ը այն նպատակահարմար համարի: www.newsgeorgia.ru, 06.12.2006

32. Ուկրաինայի Գերագույն Ռադան վավերացրեց ՎՈՒՄԱ-ի կանոնադրությունը: www.regnum.ru, 06.03.2007

33. ՎՈՒՄԱ-ը խնդրեց Լատվիային ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում օժանդակել «ստեղծված հակամարտությունների» վերաբերյալ բանաձևին: www.regnum.ru, 06.03.2007

34. Niklas Nilsson. GUAM Leaders Discuss Conflicts and Energy in Baku. www.euractivanalyst.org, 27.06.2007

35. Ժողովրդավարական և տնտեսական զարգացման կազմակերպության ՎՈՒՄԱ-ի արտաքին գործերի նախարարների հայտարարությունը Արդրեջանի Չարնոպետրովկայի վերաբերյալ: www.guam.org.ua, 08.11.2006.

- տրայան Լեռնային Դարաբաղ տարածաշրջանում այսպես կոչված «նախագահական ընտրությունների» առիթով: 09.07.2007, www.guam.org.ua
36. Հայաստանի ՎԳՆ՝ Լեռնային Դարաբաղում ընտրությունները չեն վերաբերում ՎՈՒՄ-ին: www.regnum.ru, 11.07.2007
37. The situation in the occupied territories of Azerbaijan, № A/ RES/ 62/ 243/, փաստաթղթի կոդը՝ A/62/PV.86. www.un.org, 14.03.2008
38. Status of internally displaced persons and refugees from Abkazia, Georgia., № A/ RES/ 62/ 249/, փաստաթղթի կոդը՝ A/ 62/ PV.97. www.un.org, 15.05.2008: Հետաքրքիր է, որ Մոլդովյան քվեարկության ժամանակ խուսափեց ՎՈՒՄ-ի անդամ-պետություններին օժանդակելու:
39. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 62-րդ նստաշրջանի 86-րդ լիագումար միաստի ստեղծության մեջ, մասնավորապես Ադրբեյջանի դեպքում Ա. Մեխտիևի ուղերձում, ակնույն է, որ վերջինն է նկատել, որ « 1918թ. Ադրբեյջանը հռչակել է անկախություն և, ղեկավարվելով քաղաքացիության սկզբունքով, հանձնել ադրբեյջանական Իրան (Երևան) մարզը Հայաստանի Հանրապետությանը: Սակայն...Հայաստանի իշխանությունը պահանջ հարուցեց այլ տարածքների նկատմամբ մերտապես Լեռնային Դարաբաղը»: (տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 62-րդ նստաշրջանի 86-րդ լիագումար միաստի ստեղծությունը, <http://www.un.org/News/Press/docs/2008/fga/10693.doc.htm>): Այս իմաստով ադրբեյջանական ղեկավարությունը գործում է ուղղակի արդեն «դասական» դարձած դոկտոր Գեբրեյի քաղաքատեսուցի ինչպան շատ սուտ, այբան ավելի լավ: Ստացվում է ոչ միայն Լեռնային Դարաբաղը, այլ նաև Երևանն է ինչ-որ ժամանակ եղել ԱԳԴ-ի մաս:
40. Պաշտոնական Բաբրուն ուսումնասիրում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրի փոխարինման ընթացակարգի մանրամասները: www.regnum.ru, 27.03.2008
41. www.day.az, 19.03.2008
42. Ռ. Քոչարյան Հայաստանը կարող է ճանաչել Լեռնային Դարաբաղը: www.regnum.ru, 20.03.2008
43. www.regnum.ru, 15.05.2008
44. Հայաստանի և Ադրբեյջանի նախագահները որոշել են շարունակել բանակցությունները « Մադրիդյան սկզբունքների» հիման վրա: www.regnum.ru, 06.06.2008
45. С. Мамедов, М. Первозкина. ГУАМ ставит на автономию. Независимая газета, 17.04.2008.
46. Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևի տեքստում ասիանված է, «Ադրբեյջանի օլուպագված տարածքներում իրավիճակը» (A/ 62/ L.42) «... 9. Ներառել իրենց 63-րդ նստաշրջանի նախնական օրակարգում կետ, որը վերնագրված է «ՎՈՒՄ-ի տարածքում ձգձգվող հավանաբարությունները և որանց հետևանքները միջազգային խաղաղության, անվտանգության և զարգացման համար»: Տե՛ս միաստաթուղթ № A/ Res/ 62/ 249/, փաստաթղթի կոդը (A/ 62/ L.45): www.un.org, 15.05.2008
47. Р. Гасанов. Ибрагим: Азербайджан не допустит создания независимого Нагорного Карабаха. www.kavkaz.memo.ru, 21.04.2008.
48. ՎՈՒՄ-ը մտադիր է նախապես ձեռք բերել իր դիրքերի «լուրջ դերակատարների» օժանդակությունը աստեղծված հավանաբարությունների վերաբերյալ կազմակերպության գլխավոր քարտուղար: www.regnum.ru, 30.05.2008
49. С. Шакарянц. «Миротворцы» в составе Внутренних войск Азербайджана – против Карабаха или талашей? Новое Время, 13.04.2008.
50. UNSCO-ն պաշտպանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը, որոնք ուղղված են Դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: www.panarmenian.net, 16.06.2008
51. А.Гордиенко, С.Мамедов. Поддержка по-киевски. Министр обороны Украины обещал страны ГУАМ. www.ng.ru, 06.06.2008.
52. www.newsru.com, 03.06.2005

53. Այսպես, հայտնի հետազոտող Բ. Պարախոնսկին նշում է. «Այս կազմակերպության գաղափարախոսությունը լիովին համապատասխանում է տարածաշրջանային անվտանգության համակարգի մասին գաղափարին: ՎՈՒՄ-ի երկրները վճռակամորեն օժանդակում են նոր, իրավահավասար և փոշյառավել համազորակցության կառույցների ստեղծմանը: Այս կազմակերպության մեխանիզմների օգնությամբ ինտեգրված և կոնսոլիդացված տարածաշրջանը ստանում է անհամեմատ շատ հնարավորություններ պաշտպանելու իր շահերը և մասնակցելու միջազգային համագործակցությանը»: (Բ. Պարախոնսկի, ՎՈՒՄ-ը՝ ճանապարհի դեպի Կովկասում ռազմավարական կայունության // Կենտրոնական Ասիա և Կովկաս, № 6(12), 2000, էջ 38): Սակայն իրականում ստացվում է հետևյալ դիվեճան՝ « այն, ինչը անվտանգ է մեկի, խիստ վտանգավոր է մյուսի համար», քանի որ այս ողջ ընթացքում այդպես էլ չի առաջարկվել թուրքերի ձեռնուտ տարածաշրջանային անվտանգության կոնցեպցիա: Ինչպես նշում է Ռ. Արզումանյանը՝ «Այսպիսով, Լեռնային Դարաբաղի խնդրի դիտարկումը տարածաշրջանային անվտանգության կոնցեպտում թույլ է տալիս բացահայտել պարզ հակասությունը, երբ մի կողմից անվտանգության ոլորտում ձեռք է բերված միակ, իրականում գոյություն ունեցող հաշվեկշիռը, իսկ մյուս կողմից, ոչ թե պարզ պատկերացում, այլ բացակայում են զոնե տարածաշրջանային անվտանգության գոյություն ունեցող կամ առաջարկվող նոր համակարգի գոնե որվածությունը: Սա չի կարող չապակողմնորոշել դերակատարներին, քանի որ ինչ-որ կողմնորոշումների բացակայության պայմաններում անհնար է դառնում գնահատական տալ կարգավորման առաջարկվող ծրագրերին, որոնք գտնվում են արկա անվտանգության համակարգից դուրս»: (Ռ. Արզումանյան: Դարաբաղյան հակամարտությունը « գլոբալ ծվածություն»: // Հայաստանի ազատագրված տարածքները և Դարաբաղյան Հակամարտության կարգավորումը: Նյութերի և հոդվածների ժողովածու, կազմող՝ Ա. Այվազյան, Ե., 2006, էջ 194)
54. Valseck, Tomas "Military Cooperation between Georgia, Ukraine, Uzbekistan, Azerbaijan and Moldova in the GUUAM Framework." // Policy Brief 2, Cambridge, Mass.: Caspian Studies Program, 2000, Dec.
55. Ю. Назарова. Баку подделка цены на газ для Грузии более чем в два раза. www.rbcdaily.ru, 12.05.2008.
56. Р.Исмаилов. Азербайджан, Грузия и Турция: создание транспортного триумвирата? www.eurasianet.org, 08.02.2007.
57. www.kommersant.ru, 11.03.2008, «Կոնմեբաստում» տպագրված նախագահ Կ. Կորոնինի հետ հարցազրույցը քաղաքականի սուր արձագանք ստացավ ՎՈՒՄ-երկրների փորձագետների շրջանում և, առաջին հերթին, Ադրբեյջանում: Այսպես, ադրբեյջանցի փորձագետ Ռ. Գունբատովը արտահայտվեց այնպես, որ Մոլդովյան ՎՈՒՄ-ի համար համարվում է յուրօրինակ արդյուն: Հենց Քիչնելը, իշխատակալն է Ռ. Գունբատովը, շրջափակեց ՎՈՒՄ-ի երեք երկրների մտադրությունը՝ ստեղծել սեփական խաղաղարար ուժեր, որոնք կարող էին եսկան ներդրում ունենալ ոչ միայն Լեռնային Դարաբաղում, կամ Հայաստանում, այլ նաև մերձդեմետրոպոլիս հավանաբարությունների կարգավորման մեջ: «Սա գլոբալմտեսական երկիր է՝ չարագացած ենթակառուցվող, ինչպես նաև գտնվում է ենթերեզիլ և տրամսվությունների երթուղիներից մեկուսիս»: Նրա կարծիքով, Մոլդովայում գործնականում չկա տնտեսապես իրապուրիչ ղյնիչ Ադրբեյջանի համար, իսկ ադրբեյջանական ենթակառուցված կըրջանցնե Քիչնելը: Ադրբեյջանցի քաղաքագետ, Մոլդովայի նախագահը «մեկ անգամ ուղարկեմանս»: www.regnum.ru, 11.03.2008
58. Մոլդովայի ՎԳՆ՝ Մոլդովյան չի ծրագրում դուրս գալ ՎՈՒՄ-ից: www.apa.az, 18.06.2008
59. ՎՈՒՄ-ի երկրները չպաշտպանեցին Վրաստանին: www.regnum.ru, 16.10.2006: Ինչպես նշում է Կ. Թունանիշվիլին՝ «Ադրբեյջանի, Մոլդովայի և Ռուսիայի վերջին արձագանքը վրաց-ուսական առնակատման անելու թ-յամբ, այս պետությունների ջանքերով ներքաշված լինել այս դժվար կանխատեսելի գործընթացների մեջ վկայում էր այս խմբի անդամների լուրջ հակասությունների առկայության մասին»:

Ուկրաինային ՎՈՒՍՍ-ը հետաքրքրում է որպես նավթի ձեռք բերման միջոց, Մոլդովային հետաքրքրում է ընդհանուր զարգացման հնարավորությունը, Վրաստանը հետաքրքրված է հայտնի հակամարտությունների խնդիրների շուրջ օգնությանը, Ադրբեջանը երբեք պատանձներ չի ունեցել «ՎՈՒՍՍ-ի առիթով ոչ՝ քաղաքական, ոչ՝ աշխարհա-տնտեսական ապակետներում...»: (Вано Туманович: ГУАМ в энциклопедии столетия интересов США и Европы. www.regnum.ru, 24.10.2006.)

60. Ա. Եղիազարյան: Էներգետիկ ԱՆՏՕ-ն և Կիևում տրանզիտների խտովությունը: www.regnum.ru, 28.05.2008

61. Այսպես, Լեհաստանի նախագահ Լ. Կաչինսկին, ՎՈՒՍՍ-ի Բաթումի զագա-թաժողովի ավարտից հետո ճեպագրություն հայտարարեց, որ Լեհաստանը պաշտպանում է Վրաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: «Լեհաստանը պաշտպանում է Վրաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Ես խոսում եմ ինչպես Արևազիայի և Գարավային Օսիայի, այնպես էլ Լեռնային Դարաբաղի մասին: Բնականաբար, երկրներից և ոչ մեկը չի կարող հանդուրժել արտասահմանյան պետությունների ուժերի առկայությունը իր տարածքում... Լեռնային Դարաբաղ մտել են արտաքին իմպերիալիստական ուժեր, ինչով էլ տեղի ունեցավ միջազգային սկզբունքների կոպիտ խախտում» (Լեյն Կաչինսկի, Լեհաստանը պաշտպանում է Վրաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: www.regnum.ru, 01.07.2008):

62. Ա. Ջանփոլադյան: Գագ ու Նավթ Դարաբաղի դիմա՛ց: Լեռնային Դարաբաղը վերջին շաբաթում: www.regnum.ru, 17.06.2008: Դեռաբքի է, որ Էներգա-տուրանդին տիրապետելու գործոնը՝ որպես ճնշման և շանտաժի լծակ, ադրբեջանական կողմից կիրառվել է նաև վարդուց: Այսպես, Ա. Մյասնիկյանը, հիշելով Կոմիտուրյի 1981թ. հուլիսի 5-ի ճիստի մասին, որը վերաբերում էր Դարաբաղի նկատմամբ ադրբեջանցիների հավակնություններին, հիշատակում է նաև այնպիսի փաստարկ, ինչպես կերտի: Ըստ նրա հիշատակումների, ադրբեջանցիները սպառնում էին, որ եթե Դարաբաղը չմտնի ԱդրբեյՄԳ-ի կազմի մեջ. «այս քաջ չենք թողնի կերտի:» (տե՛ս Լ. Խուրշուդյան: Ճշմարտություն պատմագիտության միակ չափանիշ: Ե. 1989, էջ 39): Ընդ որում, բավական մեծ հույսերը Էներգակիրների նկատմամբ ոգևոլրթ բե արդարացված լինեն: Այսպես, Լ. Գրիգորյան և Ա. Ապիխովը նշում են. « Ինքը՝ երկիրը պետք է որոշի, ինչպես է ինքը հեռանում «հույանդական հիվանդությունից», ինչ կմնա սերունդների նախային րուժից հետո, բացի ֆինանսական մագնատների հիշողություններից...» (տե՛ս Լ. Մ. Գրիգորյան, Մ. Ք. Տախոն. ГУАМ. Пятнашсть лет спустя. Сдвиги в экономике Азербайджана, Грузии, Молдавии и Украины, 1991-2006г. М.: REGNUM,2007, стр.187):

63. Шарифов. Мазут согреть и осветит страну. Азербайджан, отказав «Газпрому» намерен увеличить производство нефтепродуктов. www.azcrizy.az, 28.06.2008.

64. Տրանսպորտային պատերազմը Ադրբեջանի և Վրաստանի միջև: www.regnum.ru, 28.06.2008

65. www.regnum.ru, 26.09.2006:

Ղարաբայան-ադրբեջանական հակամարտության տեղեկատվական-քարոզչական ասպեկտը

Սերգեյ Շաքարյանց

Ինչպես ցանկացած քաղաքական դիմակայության ընթացքում, որը ժամանակի հետ վերաճում է հակամարտության, այդ թվում նաև՝ զինված դարաբաղ-ադրբեջանական (այն իմաստով նաև հայ-ադրբեջանական) հակամարտության պատմությունը, մի անգամ չէ, որ ցույց է տվել, թե ժամանակակից պայմաններում որքան կարևոր է տեղեկատվաքարոզչական բաղադրիչը այն հասարակության քաղաքական և այլ ջանքերում, որը կանգնած է ազգի քաղաքական, պետական ինքնորոշման իրավունքի համար պայքարի ճանապարհին: Այս դեպքում անհրաժեշտ է նշել, որ շատ մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե ինչպիսի ժամանակամիջոց է այս կամ այն կողմը ընտրում հակամարտության հաշվարկման սկզբի համար:

Այս տեսակետից խոսել այն մասին, թե դարաբաղ-ադրբեջանական հակամարտությունը սկսվել է 1988 թ., այսինքն նախկին ԽՄՄ-ի կենտրոնական ղեկավարության վերցրած այսպես կոչված «արագացման» կամ «վերակառուցման» գործընթացից հետո, մեր կարծիքով սխալ է: Սա նապես իջեցնում է զվխավոր առաջնահերթության նշանակությունը, որով թեկուզև ոչ բացահայտ, քայց մշտապես հանդես է եկել հիշյալ հակամարտության հայկական կողմը այն խնդրի վերաբերյալ, որ դարաբաղյան (արցախյան) հիմնահարցը, որպես քաղաքական խնդիր, հայ ժողովրդի առջև ծառայել է դեռ 20-րդ դարասկզբին Ռուսական Կայսրության կազմալուծումից հետո, երբ Անդրկովկասում սկսեցին տեղծվել հայերի, վրացիների և կովկասյան թաթարների կամ նախկին թուրք ադրբեջանցիների անկախ պետություններ: Տվյալ առաջնահերթության շարունակությունը օրգանապես համարվում էր դարաբաղյան-արցախյան հիմնահարցի նույնացումը (հետագայում օգտագործվելու են միայն «արցախյան», «Արցախ» և այլ տերմիններ) Դայ Դատի (1915-23 թթ. Օսմանյան Թուրքիայում և Անդրկովկասում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման համար պայքարի) կամ ամբողջական Գայարկան հարցի բաղկացուցիչ մասերից մեկի հետ:

Միայն առաջին հայացքից է ոչ այնքան կարևոր թվում, թե որտեղից պետք է սկսել արցախյան հիմնահարցի արդիականացման հաշվարկը: Դենց «հաշվարկման սկզբից» ելնելով էլ ամբողջությամբ ձևավորվում է այնպիսի տեղեկատվական-քարոզչական կամպանիա իրականացնելու ռազմավարությունն ու մարտավարությունը, հայկական կողմի համար նպաստավոր հասարակական-բարոյական այնպիսի մթնոլորտ ստեղծելու, որպեսզի անառարկելի ու առանց այլընտրանքի հնարավոր լինի համոզել ինչպես Դայաստանի և Արցախի բոլոր հարևան պետություններին և ազգերին, այնպես էլ ամբողջ համաշխարհային հանրությանը, որ Արցախի հարցում հայ ժողովուրդը փորձում է ընդամենը վերականգնել ժամանակին կրպտրեն ոտնահարված պատմական արդարությունն ու իրավունքները /համենատե՛սը. ծաղուց արդեն ոչ ոք չի կասկածում, որ Դյուսիսային Կիպրոսը նույնպիսի հունակիպրոսական տարածք է, ինչպես Կիպրոսի Դանրապետությունը, կամ Դյուսիսային Իռլանդիան անկախակա՞ծ

Իռանդիայի Գանրապետության բաղկացուցիչ մասն է և այլև՝ և տվյալ հարցի միջազգային քաղաքական-իրավական կողմը:

Այուս հիմնահարցային խնդիրները, որոնք բխում են արցախյան չլուծված հիմնահարցի առկայության բուն փաստից, արդեն Արցախի հայկական բնակչությանը՝ ընդդեմ Մախի՝ ԼՂԻՄ-ի տարածքը՝ Մախի՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ անօրինական ընդգրկման բողոքի արտահայտության գործընթացի զարգացման երկրորդական հետևանքներն են, այդ թվում՝ նաև Արցախի ու Գայաստանի տարբեր քաղաքական գործիչների տարածում գտած պարբերական դիմումները այն փաստի վերաբերյալ, որ Մախի՝ ԽՍՀ-ի ինքնավուզման և ինքնաուժարման պահին Արցախի հայերը ինքնորոշվել են այդ պահին գործող համամիութենական օրենսդրությանը լրիվ համապատասխան:

Հայտնի է, որ պատերազմի տեղեկատվական-քարոզչական ապահովումը, դեռ նախապատմական ժամանակներից այս կամ այն կողմի համար կարևոր օժանդակ գործիք է հանդիսացել հեռու զնացող քաղաքական և այլ նպատակների, իրենց արդիական և առաջնահերթ ռազմավարական խնդիրների իրականացման գործում: Երկուսի կամ այլ, օրինակի համար, ԱՄՆ-ի իշխանությունները որպեսզի բարեպատեհ ֆոն տեսողեն միջազգային ապարդեզում Իրանի դեմ իրենց երկու պատերազմների հանրա, ոչ պակաս ջանքեր գործադրեցին (նաև վճարեցին): ԱՄՆ-ի կողմից նման ակտիվություն մենք տեսնում ենք նաև Իրանի նկատմամբ, ուղղակի այն թխտանական ջանքերը, որոնք իրականացվում են վաշիզդատի կողմից՝ Թեհրանի շուրջ քաղաքական վակուում ստեղծելու նպատակով, բախվում են ինչպես բուն Իրանի, այնպես էլ նրան աջակցող երկրների ոչ պակաս սկզբունքային եւ հիմնավոր հավազդեցությանը: Այդ պատճառով միտել Արցախի անկախության ճանաչման համար մղվող պայքարի գործում ճիշտ ծրագրավորված ու մշակված տեղեկատվական-քարոզչական կամպանիայի նշանակությունը՝ կնշանակի ուղղակի անտեսել աշխարհի քաղաքակրթության հազարամյակների փորձը, անտեսել նաև վերջին՝ նվազագույնը 100-150 տարիների իրողությունները: Արժե՝ արդյոք այստեղ խոսել այն մասին, թե քարոզչական ապահովման կիրառումը ԼՂՀ-ի անկախության ճանաչման համար պայքարի գործընթացում (եթե նախապես համաձայնել, որ դա նպատակներից մեկն է՝ վերջնական կամ ժամանակավոր) համարվում է տեղեկատվական պատերազմի ինքնուրույն ձևերից, որ տարվում ողջ աշխարհում հայտնի հայկական կենտրոնների կողմից Գայ Դատի հարթմանի համար: Գնարարվո է: Բայց, երևի, մեկ եւսայն վերապահումով: Տվյալ դեպքում տեղեկատվական պատերազմը, որպես այդպիսին, Գայ Դատի կամ միջազգային քաղաքականության մեջ Գայաստանի հարցի վերակենդանացման և նրա հաղթանակի համար պայքարում ինքնուրույն բաղկացուցիչ մաս չի կազմում, այլ, ծայրահեղ դեպքում կարող է մտնել այն միջոցների կազմի մեջ, որոնք իրականացվում են Գայաստանի, Արցախի և Ափյուռքի ընդհանուր ուղղվածության մեջ միավորված ակտիվ հարձակողական միջոցները և քայլերը, դրանց օգտագործման ու գործարման ոլորտների լայն ընդգրկումը, տեղեկատվական-քարոզչական ապահովումը:

Ըստ Լուբյան, արցախյան հիմնախնդրի նորագույն զարգացման 1-ին փուլում հայկական կողմը փորձում էր կիրառել ճիշտ տեղեկատվական-քարոզչական հղումը, այսպես ծնվեց Արցախի՝ մայր Գայաստանին «միացման» կարգախոսը: Այս 1-ին փուլը պայմանականորեն կարելի է նշել 1987-

91թթ. (ավելի ճիշտ մինչև 1991թ. Մուսկվայում օգոստոսյան «հեղաշրջումը», հետագայում արդեն զարգացան տվյալ ժամանակաշրջանի տրամաբանությունը և համապատասխան լուզուզները): Թերահավատները կարծես հիշել, որ այս փորձը՝ դիմել արցախյան հիմնախնդրի առաջացման միաժամանակ և՛՝ իրավական, և՛ պատմական սկզբնապատճառներին, լիովին հաջողություն չբերեցին, հայ ժողովրդին չտվեցին ցանկալի և վնասարժեք որոշում: ԼՂԻՄ-ի վերամիավորումը (կամ միացումը) Գայական ԽՍՀ-ին: Գետագայում տեղի ունեցավ փոխձևում: Խաղվ թե ժամանակահատված Գայաստանի քաղաքացիների գալիք սերնդի ներկայացուցիչներից որևէ մեկը կարողանա հողաբաշխ ձևով պատմել ու բացատրել ինչ է մշանակում «միացում»: Սակայն բանն այն է, որ հարթակը, որտեղ ծավալվել և կազմվել է համազգային ջանքերի համապատասխան տեղեկատվական-քարոզչական բաղկացուցիչը «միացման» հասնելու համար, եղել է ոչ այնքան բարենպաստ, չէ որ սկզբնական շրջանում արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցով զբաղվում էին բացառապես Ադրբեջանական ԽՍՀ-ի և Խորհրդային կենտրոնի ղեկավարները: Գայ-կական ԽՍՀ-ն, առավել և Մախի՝ ԼՂԻՄ ղեկավարները, համոծա էին գալիս միայն որպես պասիվ դերակատարներ, լավագույն դեպքում շահագրգիռ կողմեր՝ առանց որոշիչ և խորհրդակցական ծայրի իրավունքի: Իսկ սահա 1991թ. հետո արդեն ոչ ոք և երբեք չի վերահսկել տվյալ թեման, չհաշված այն ժամանակահատվածը, երբ Գայաստանի ներքին ընդդիմությունը, կասկածելով ԳՀՀ-ի իշխող վարչակարգի (90-ական թթ.) նկրտումները Ադրբեջանի հետ պարտավորական հաշտություն կնքելու մեջ, առաջադրեց տիպիկ Գայաստանի իշխանություններին կրկին լսել փաստացի «միացման» մասին պահանջները:

Նշված 1987-91թթ. ժամանակաշրջանը իր հերթին բաժանվում է 2 ենթաշրջանի: Դրանցից առաջինը (1987թ.-ընդհուպ մինչև 1989թ. Մոյսեբերի 28-ը) բնորոշվում է նրանով, որ չնայած հնարավորությունների որոշակի կողիացմանը լայնորեն ներկայացնելու Արցախյան Գիմնախնդիրը միջազգային հանրությանը, հայկական կողմը բավականին հաջողությամբ էր հասել հենց այն պլանում, որն է՝ իր ջանքերի տեղեկատվական-քարոզչական ապահովումը Արցախյան խնդրի պետական-քաղաքական քաղաքամասնետի արդիականացման մեջ: Իսկայես, չնայած նրան, որ Մուկիակ ԽՍՀ-ում շատերը չէին տարբերում, թե ովքեր են հայերը, ովքեր են ադրբեջանցիները, և ինչ է «Դարաբաղի շուրջ վեճը» (ինչ արժե այդ տարիներին բավական հաճախ հնչող հայե-րին ու ադրբեջանցիներին տրված «խորհուրդները» «միավորվել և այդ դարաբաղիցներին ցույց տալ իրենց տեղը»), այնուամենայնիվ Մուսկվայի և Լեհինգրադի այսպես կոչված «դեմոկրատական շրջանակներ» վերջերցին և ամբողջ ուժով «պտտեցին» հայկական կողմի համար ծննդաւու քարոզչությունը, որպեսզի Արցախը դուրս բերվեր Ադրբեջանական ԽՍՀ-ի վարչական-տարածքային ենթակայությանցից: Այս գործում Մուկիակ կարելի է ասել, որ որոշակի ժամանակամիջոցում հաջողվեց համոզել նաև ԽՍՀՄ կոմունիստական բարձրագույն մարմիններին, որ ԼՂԻՄ-ի հետագա մնալը Ադրբեջանի կազմում անբույլատրելի է: Մեր կարծիքով, այս տեսանկյունից կարելի է մեկնաբանել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 12-ի որոշումը՝ Արկալի Կուլույն գլխավորությամբ «ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտե ստեղծելու մասին»: Գիշեցները, որ այս որոշմամբ մարզը դուրս բերվեց Ադրբեջանի պետական կառավարման մարմինների

իրավասությունից, Արցախի տարածումն մտցվեց կառավարման հատուկ ձև (ՉԿԿ), որը միանգամայն տեղին է նույնացնել ուղղակի նախագահական կառավարման հետ: Չնայած այս դեպքում զուգահեռաբար ցրվեցին ԼՂԻՄ-ի իշխանությունները՝ ԽՍՀՎ մարզային կոմիտեն և մարզային խորհուրդը: Ըստ էության, տվյալ որոշումը (այդ պահին) նախադեպ էր ոչ միայն արցախյան, այլև նախկին ԽՍՀՄ տարածքում համանման այլ խնդիրների և հակամարտությունների լուծման համար, քանի որ ընդունվում էր, որ անբույստեղի էր պահպանել խորհրդային հանրապետության իշխանությունը ինքնավարության նկատմամբ, որի բնակչությունը ձգտում է իր պետական-քաղաքական կարգավիճակի վերանայման, առավել ևս, եթե այդ խորհրդային հանրապետությունում կիրառվել էին պատժիչ ճնշումներ այն եթնուի դեմ, որը գեղակից է նշված ինքնավարության բնակչությանը:

Այս ժամանակաշրջանում Ադրբեջանի ջանքերը ոչ մի դրական բանի չբերեցին, քանի որ բավականին քրազ խորհրդային հանրությունը տեղեկացավ Մուճալիթի ու Կիրովաբադի, հետագայում նաև Բաքվի ջարդերին (1990թ. ծննդ) և ԼՂԻՄ-ի շուրջ բնակեցված գյուղական համայնքներից հայ բնակչության բռնի արտաքսումների մասին (1990-91թթ.): Հաշվի առնելով, որ ժողովրդավարացման մասին պահանջների «հարուցիչը» աստիճանաբար Մուճալիթի և Լենինգրադից տարածվել է ողջ երկրով և «վարակել» ինչպես Ռուսաստանին, այնպես էլ մյուս խորհրդային հանրապետությունները, ցանկացած հակաքարոզչություն և քարոզչություն, որ դուրս էր գալիս Բաքվից, բառացի բախվում էր սառն անտարբերության, տարակուսանքի բռնու ալիքի նաև խորհրդային Միության մյուս մասերում: Չէ որ բոլորը արդեն գիտեին, որ Ադրբեջանում «սպանում էին հայերին», եւ ԽՍՀՄ-ի մյուս տարածաշրջանների բնակիչներին տհաճ էր, քե ինչպես կարող է «զանցառու» կողմը շարունակել համառորեն իր հակաքարոզչությամբ «դռներ ծեծել» ու «սողոսկել պատուհաններ»:

Առավել հաջող է անցկացվել ադրբեջանական հակաքարոզչությունը Միության բարձրագույն իշխանության էշելոնում: Մրանով կարելի է բացատրել այն փաստը, որ ԼՂԻՄ-ի ՉԿԿ-ին փաստացի թույլ չտվեցին աշխատել նույնիսկ մինչև 1989թ. ավարտը, և նույն տարվա նոյեմբերի 28-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց «ԼՂԻՄ-ում իրավիճակը նորմալացնելու միջոցառումների մասին», համաձայն որի ՉԿԿ-ն ցրվում էր, մարզի վրա վերականգնվում էր Ադրբեջանի իրավասությունը՝ Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտրոնի 2-րդ քարտուղարի գլխավորությամբ (Վ.Պոլյանիչկո) ԼՂԻՄ-ում իրավիճակը կարգավորելու համար այսպես կոչված Հանրապետական կազմկոմիտե ստեղծելու տեսքով: Ենչտ է, այս որոշմամբ ԼՂԻՄ մարզային խորհրդի և գործկոմի, նաև մարզկոմի գործունեությունը վերականգնվում էր: Սակայն Կարծիք է, որ մարզի փաստացի բռնազավթման պայմաններում (մտցվել էին ԽՍՀՄ-ի ԼԳԿ-ի ներքին զորքերը, խորհրդային Ադրբեջանի ԼԳԿ-ի համապատասխան ստորաբաժանումները, քանի որ բոլորին պարզ էր, որ առանց ուժային բաղադրամասի կիրառման Ադրբեջանի իշխանությունը ԼՂԻՄ-ի վրա դժվար կլինի վերականգնել, առավել ևս ԼՂԻՄ-ի ՉԿԿ-ի կիսանկախ գոյությունից հետո) Արցախի իշխանության տեղական մարմինները չէին կարող արդյունավետ գործել, և անբեղ իշխանությունը գտնվում էր մարզկոմի՝ նշանակվում է Ադրբեջանի ձեռքում: Եվ այդ պահից կարելի է սկսել արցախյան խնդրում տեղեկատվական-քարոզչական ասպեկտի ծավալման առաջին փուլի 2-րդ ենթաշրջանի հաշվարկը:

Պժքխտարար, այն բնորոշվում է արդեն հայկական կողմի համար որպես երկակի իր իմաստով ու արդյունքներով: ԽՍՀՄ-ի կիսապաշտոնական շրջանակներում Արցախյան Հարցի իսկության հայկական մեկնաբանությունը գործնականում չըջափակվում էր: Մինչևայս ժամանակ «դեմոկրատների»՝ մասնավորապես «տարածաշրջանային խմբերից» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պառլամենտների շրջանում նախկինի պես հաջողվում էր մատուցել Արցախում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների հայկական տարբերակը: Այդուհանդերձ չարժե գերագնահատել կամ քերականահատել նշված ժամանակաշրջանը: Այդ ժամանակ շատ բան աշխատեց ինքնագնաց ռեժիմով: Հակամարտող կողմերի տեղեկատվական-քարոզչական ջանքերի ակտիվությունը, «հասանելիությունը» երբեմն ամեննկի կախված էր Բաքվի, Ստեփանակերտի և Երևանի նախաձեռնություններից ու ձեռնարկվող քայլերի մասշտաբներից կամ մակարդակից: Դեր խաղացին բոլորովին այլ գործոններ՝ որքանով են պատրաստ ընկալել հայկական կամ ադրբեջանական քարոզչությունը նրանք, ու՝ դրանք ուղղված էին:

Ի դեպ, գրեթե նույն բանն է նկատվում և հիմա, երբ արդեն գրեթե ողջ համաշխարհային հանրությունը, այսպես քե այնպես, տեղյակ է, քե իրենից ինչ է ներկայացնում դարաբաղ-ադրբեջանական հակամարտությունը, և ինչ են ուզում հակամարտող կողմերը: Չնայած արդեն կարծես քե չկա ամբողջապես և հիմնովին փոխանված չձգտող ԽՍՀՄ-ի «տոտալիտար ռեժիմը», այլ շուրջբոլորը «դեմոկրատներ են»: Չարժե հայերի, ինչու չէ նաև ադրբեջանցիների, անհաջողությունների արմատները (հակամարտության զարգացման տարբեր փուլերում) կապել միայն այն բանի հետ, քե ով որքան ջանքեր և ֆինանսներ է ծախսել, ինչպիսի արտասահմանյան շրջանակներ է ներառել և այլ: «ԱՄՆ-ն բոլոր միջոցներով խորհրդային Միությունում խթանեց ազգայնական տրամադրություններ և վճռականորեն պաշտպանեց նախկին սովետական հանրապետությունների կողմից իրացվող ազգային ինքնորոշման «սուրբ իրավունքը», բայց նույնքան վճռականորեն էլ հանդես եկան հակադիր կողմից, երբ ԽՍՀՄ-ը արդեն փլուզված էր, ու խոսքը գնում էր Աբխազիայի և Լեռնային Ղարաբաղի մասին» (Կ. Բրուտենց «Պարս Ամերիկականային», «Ազատ միտք», N5, 1998թ., էջ 35): Այս արտահայտության մեջ դրված է այն բանի ըմբռնման գլխավոր ալգորիթմը, որը կատարվել և շարունակվում է կատարվել միմյանց բացառող տեղեկատվական-քարոզչական միջոցների բախման ոլորտում՝ հակամարտության կարգավորման շուրջ իրենց հայտնի դիրքերի հիմնավորման ապահովման համար, որոնք ձեռնարկվում են Հայաստան-Արցախ տանդեմով, նաև Ադրբեջանի կողմից: Այնպես որ լրիվ բնական է, որ Արցախի պետական-ազգային ինքնորոշման համար պայքարի հետագա փուլերում հակամարտության հայկական կողմերը բախվեցին «անըմբռնողության պատրի», և նրանց տեղեկատվական-քարոզչական ջանքերը չբերեցին հարկ եղած արդյունք Արմատորում, առավել ևս Ռուսաստանում և ԱՊՀ այլ երկրներում:

Հետևաբար, այս ասպեկտում ավելի կարևոր էր, և շարունակում է այդպիսին մնալ, ոչ քե արտասովետական քաղաքական պահանջների քարոզչական ապահովման բնույթին համապատասխան տեղեկատվության բանակը և որակը, այլ այն, քե միջազգային ասպարեզում ինչպիսի «լսարան» է և որքան դյուրըմբռնող հակամարտող կողմերի տվյալ ջանքերի նկատմամբ տվյալ կոնկրետ ժամանակաշրջանում: Այս պնդու-

մը, իհարկե, չի նշանակում, որ եթե դուք տեսնում եք ձեր ջանքերի պայարդուցությունը և նույնիսկ անօգտակարությունը, ապա չարժեք դրանք շարունակել: Մեր կարծիքով, հենց այսպես վարվեցին Հայաստանի իշխանությունները՝ սկսելով մոտավորապես 1996թ. վերջից, չհաշված նաև ԼՂՀ-ի իշխանությունները: Ընդհակառակը, պետք է եռապատկել ջանքերը և տասնապատկել տեղեկատվական-քարոզչական կանաչադաշտի քանակական հոսքերը, քանի որ, ինչպես ասվում է, ջուր մաշեցնում է քարը: Այժմ, օրինակի, դժվար է ստույգ որոշել, թե վերջնական արդյունքում ինչը դեր խաղաց՝ գերտերությունների կողմից հետխորհրդային տարածքներում ազգային-պաշտպանական շարժումներին աջակցելուց հրամարվելու մեջ, միայն այն, որ նախկին խորհրդային հարապետությունների հետագա մասնատումները «ծվենների» չէին մտնում գերտերությունների հետաքրքրությունների շրջանակի մեջ, թե օրեօր կրկնվող նույնաբանական քարոզչությունը (ասենք Ադրբեջանի և Վրաստանի), որ միջազգային քաղաքականության «բարձրագույն հասարակության» մայրաքաղաքներում սկսեցին ավելի հաճախ ամերկակրկիտ ուշադրություն դարձնել այն բանին, թե ինչ է կատարվում Անդրկովկասի հակամարտության գոտիներում: Եվ սրանից հետո միայն տեղի ունեցավ նրանց ազգային հետաքրքրությունների վերահաշվարկը:

Իհարկե, այս ենթադրությունը չի վերաբերվում Ռուսաստանին: Այս երկիրը անդրկովկասյան հակամարտությունների վերաբերյալ, այդ թվում և դարաբաղ-ադրբեջանականի դեպքում, օբյեկտիվորեն ձևավորել է երկակի վերաբերմունք, որը կարելի է հեշտ բացատրել. մի կողմից Մոսկվային պետք չէին Բաքվի և Թբիլիսիի կողմից մշտական շանտաժները և սպառնալիքները ռազմավարական իմաստով ԱՆՏՕ-ի կամ ընդհանրապես Արևմտադեղին կողմը «չեղվելու» վերաբերյալ, մյուս կողմից Անդրկովկասում կոնֆլիկտային վիճակի պահպանումը սպառնում էր Հյուսիսային Կովկասի ինքնավարությունների անվտանգությանը և կայունությանը: Բացի դա, Վրաստանի և Ադրբեջանի տարածքները օգտագործվել և օգտագործվում են որպես ցատկահարթակ Հյուսիսային Կովկասում դիվերսիոն-պատակ-տիչ գործողությունների ծավալման համար: Այդ պատճառով Ռուսաստանի համար եղել է մտնում է ձեռնտու ուղղակի մասնակցել անդրկովկասյան հակամարտությունների կարգավորման գործընթացներին, իբր բացառնակ անչառ դատավոր, և միևնույն ժամանակ հասնել Ադրբեջանի և Վրաստանի ցանկացած թուլացմանը: Այստեղից բխում է նաև Մոսկվայի «ամենակերությունը» հակամարտող կողմերի քարոզչության և հակա-քարոզչության նկատմամբ դյուրըրկակալության հարցում: Մասնավորապես, դա ավելի պարզ հաստատվում է հենց արցախյան հիմնախնդրի նկատմամբ Ռուսաստանի մոտեցումներում:

Մենք նախընտրեցինք հենց սկզբում շոշափել հարցն այն մասին, թե որքան գործում են հանդիսացել և հանդիսանում Անդրկովկասի երկու հյակական պետությունների տեղեկատվական-քարոզչական իրականացող ջանքերը ուղղված Արցախի անկախության միջազգային ծանաչմանը, և ինչու ցանկացած տեղեկատվական-քարոզչական գործողություն որպես համաշխարհային ասպարեզում իրենց պահանջների քաղաքական և այլ հիմնավորումների ապահովում, չեն կարող լինել կարճաժամանակ: Ավելի, նույնիսկ իրենց ինչ-որ նպատակին հասնելու դեպքում, թեկուզև միջինում ծրագրերի, անհրաժեշտ է ոչ միայն շարունակել, այլև ավելացնել միջազգային հասարակական կարծիքի քարոզչական «մշակումների» ընթացքը:

Մեզ համար որպես օրինակ կարող է ծառայել հրեաների Հոլոքոստի մահադեպը, չնայած նրան, որ աշխարհում այն բոլորի կողմից այնքան է ընդունված, որ նույնիսկ հավերժացված է ՄԱԿ-ի և այլ միջազգային արգելիկ կազմակերպությունների մակարդակով, որոնք խիստ և մանրագծին հետևողականությամբ հսկում են, որպեսզի որևէ մեկը նվազագույն չափով կեստործի տակ չընի աշխարհի հրեաների պնդումները, միևնույն է իրենք՝ հրեաները և նրանց պետությունը՝ Իսրայելը, եղել և մնում են համաշխարհային հասարակական կարծիքի մշակման շարունակության համար ամենաեռանդուն մարտիկները և ավելի շատ հենց իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս Հոլոքոստի այս կամ այն ժխտման հետ կապված ամենահնարավոր միջազգային «լուսններին»: Ավելին, նրանք սուր քննադատության են ենթարկում այն պետությունների և օրենսդրման անձանց, որոնք թույլ են տալիս իրենց տարակուսանքների հրապարակային արտահայտումը և այլ: Եվ սա տեղի է ունենում որովհետև «Հոլոքոստի մասին տեսության» հեղինակները քաջ գիտակցում են, որ բավական է ինչ-որ անձնան բանով թույլ տալ «Հոլոքոստի գոհերի իշխատակը հարզող» միջոցառումների մանրամասների պահպանման գործառույթների խախտում, արվական է թեկուզ ինչ-որ մեկին «թույլ տալ» կասկածել, որպեսզի մեկ-երկու տարի հետո թեկուզ տասնամյակներ, գործընթացը կարող է մեծ ուժ ձեռք բերել և հանգեցնել հրեաների և Իսրայելի համար անդառնալի հետևանքների:

Այս ամենը միայն ընդգծում է, թե որքան սխալ մարտավարություն են ընտրել Հայաստանի և ԼՂՀ-ի իշխանությունները 1996թ. վերջից, ինչպես հակամարտության տեղեկատվական-քարոզչական ասպեկտի նկատմամբ իրենց վերաբերմունքի ծրագրում, այնպես էլ Արցախյան Հիմնահարցի նկատմամբ ընդհարապես: Օրինակ՝ նույնիսկ, երբ Երևանից ու Ստեփանակերտից տեղեկատվությունը բարեխաճորեն ընդունվում և ընկալվում էր Արևմուտքում, Ռուսաստանում, հայ քաղաքա-կան գործիչներից և դիվանագետներից ոչ ոք նույնիսկ չհամարակալվեց նույնացնել Արցախը աշխարհի հայության համար **ազգային սրբության** կենտ: Վերջին հաշվով կանանա-տիպ հրապարակային հայտարարություններ միջազգային քաղաքական ասպարեզում երկու հայկական պետությունների պաշտոնատար դեմքերից և ոչ ոք չի արել: Համեմատե՛ք՝ հարավսլավա-սերբական դեմոկրատ և իրավապաշտպան Կուկա Դրաշկովիչի՝ հեռուստատեսությամբ արված հայտարարությունը, ուր նա, պատասխանելով արևմտյան թրթալիցների այն հարցին, թե ձեզ՝ որպես սերբի համար ինչ է իրենց ներկայացնում Կուտվոն, կոչտ և վճռական հայտարարեց. «Դա սերբական Երուսաղեմն է»: Այսինքն՝ ազգային սրբավայր, միևնույն ժամանակ ողջ ազգի համար անփոխարինելի կրոնական, հոգևոր նշանակություն կրող: Եվ ով գիտե, հնարավոր է, որ հենց այս միտքը սերբերին փրկեց այն բանից, որպեսզի Արևմուտքը սկսի Մետոխիայի և Կոտլովի (Կոստեյ) երկրամասերի բռնազավթման և բռնակցման գործընթացը դեռ 90-ականների սկզբին, երբ մասնավորապես Հարավսլավիայից «անջատում էին» տարածքը տարածքի հետևից:

Այստեղ կարելի է շատ բան հերքել, շատ բան կասկածի տակ դնել և այլն: Հնարավոր է, օրինակի, և այնպիսի կարծիք, իբր թե հենց այսպիսի համեմատությունները բերեցին Կոստեյի նկատմամբ սերբական սովորե- լություն վերջնական տխուր արդյունքի, որովհետև աշխարհի հրեաները նախամեխանդորեն են վերաբերվում այն ամենին, որում կա թեկուզ

հեռավոր ակնարկ ինչ-որ հրեական «սրբազան կովերի» նմանության հետ կապված: Իսկ երուսաղեմը հրեաների այսպիսի սովորական տեղեկատվական-քարոզչական «սրբազան կովերից» մեկն է: Դրաշուկվիչի համարձակության վրա զայրաման էլ հենց ընդեց նրան, որ «Ամերիկայի հրեաները» որոշեցին նախապատվությունը տալ ԱՄՆ-ի այբանական համայնքի լոբբինգին, և ահա արդյունքը՝ Կոստենի վարանացիներին «ուլյատրված է» օտար հողում տեղեցնել իրենց պետությունը: Իհարկե, միանշանակ մեթոդ նման կարծիքը նույնպես չարժե. աշխարհում բոլորին հայտնի է, թե ինչքան մեծ է Միացյալ Նահանգների հրեական համայնքի ազդեցությունը իրենց երկրի քաղաքականության վրա: Այնուամենայնիվ, չարժե նաև գերազանցատեղ այս ազդեցությունը, այդ թվում նաև Վաշինգտոնի քաղաքական կողմնորոշման վրա եվրոպայում և Անդրկովկասում արդի միջբնիկական հակամարտությունների նկատմամբ: Համեմատության համար, ինչքան էլ ջանքեր ձեռնարկեցին ԱՄՆ-ի և Իսրայելի հրեաները, այդ թվում նաև Իրանի նկատմամբ «հակամիջուկային» նախազգուշական հարվածներ հասցնելու «անհրաժեշտության» հիմնավորմամբ՝ տեղեկատվական-քարոզչական քանքների երկարատև միտինգն ապահովման գործում, բայց և այնպես ոչ՝ Ամերիկայի իշխանությունները, ոչ էլ ամբողջ Արևմուտքը չկարողացան և չեն կարող հաշվի չնետել այն բանի հետ, որ օբյեկտիվորեն այսօր աշխարհաքաղաքական սցենարում այսպիսի զարգացումները իրենց ընդհանրապես ձեռնուռն չէ, քանի որ իր հետևից քարշ կտա վատ կամխորդված արդյունքների երկար ու վտանգավոր շրջան: Եվ այս դեպքում, կարելի է ասել, արդյունքը նույնպես ակնհայտ է՝ անցել է նվազույնը 20-25 տարի Իսրայելի և աշխարհի հրեաների կողմից իսլամական Իրանի դեմ պատերազմի «անհրաժեշտության» զարգացարի մշակման սկզբից, բայց այդպիսի պատերազմ այդպես էլ չկայացավ:

Ուստի ավելի տրամաբանական է ենթադրել, որ 90-ականների սկզբին հենց հարավսլավա-սերբական քաղաքական մտքի վերաբերմունքը Կոստենի տարածքի «աստվածացման» գործին նկատմամբ, որոշ ժամանակ փրկեց այս երկրամասը և իր բնակչությանը արևմտյան հատուկ կենտրոնների փորձարկումներից: Եվ եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա մենք իրավունք ունենք հարցնել, թե ինչու Արցախի դեպքում չի հնչել նմանատիպ կամ համանման լոզունգ Երևանի կամ գոնե Ստեփանակերտի կողմից: Մենք իզուր չէ, որ խոսում ենք Ստեփանակերտի՝ որպես ԼՂՀ-ի անկախության համար տեղեկատվական-քարոզչական ապահովման քաղաքական պայքարի ինքնուրույն մասնակից: Չէ որ հենց 90-ականներին, թեկուզ կիսանկախության կամ խոսակցությունների մակարդակով, սակայն գործնականում ողջ հայ հասարակությունը (ապա նաև համապատասխան միջազգային շրջանակները) հստակ գիտակցում էր, որ կամ հարցեր, որոնց շուրջ Արցախի և Հայաստանի իշխանությունների միջև կոնսենսուսը կամ դժվար է կամ այն ամեննին էլ գոյություն չունի: Միջոցների սղությունը (ԼՂՀ-ի բյուջեի ֆինանսական ուղղակի կախվածությունը Երևանի ֆինանսական հատկացումներից) իհարկե կարող էր քացասական դեր խաղալ Ստեփանակերտի ինքնուրույնության ձևավորման վրա այս «խաղաղաբարակում»: Այնուամենայնիվ, այնուհեղ, ուր «լուսն» կամ ստիպված էր «լռել» Հայաստանը, մի բանով ավելի էր անսահմանափակ տարածությունը քաղվում հենց ԼՂՀ-ի տեղեկատվական-քարոզչական «առաջխաղացման» համար: Բայց Ստեփանակերտը հիմնականում օգտվում էր այս

տարածությունից միայն ակտիվ ռազմական գործողությունների ժամանակ և գրեթե այնք չէր ընկնում միջազգային-իրավական մակարդակներում:

Այս իմաստով նույնիսկ այժմ դեռ այնքան էլ ուշ չէ զբաղվել «Արցախը սրբությունների շարքը» դասել, որպես հատուկ սրբազան տարածք աշխարհի ողջ հայության համար: Կարիք չկա համեմատել մեր լեռնային տարածաշրջանը ինչ-որ երուսաղեմի կամ Սիոն լեռան հետ: Բավական է, որպեսզի համաշխարհային ՁԱՄ-ների տեղեկատվական դաշտում շրջաճանվեց այն բանաձևերը, որոնցից պարզ կլինի, որ հայ ազգի համար Արցախը եղել է, կա և միշտ կլինի «սրբազան երկիր», «ավետազ երկիր», «ազգային սրբություն», «հողտեր զուրան», «ռազմական փառքի արդյուն» և այլն: Համուն արդարության նկատմբ, որ ներիսկական ասպարեզում 90-ական թթ. սկզբին համեստ փորձեր ձեռնարկվել են, երբ տարբեր ՁԱՄ-ներում տարածվում էր տեղեկատվություն այն մասին, որ Ամարաս եկեղեցական համալիրում թաղված է Գրիգոր Լուսավորչի թուղ՝ Գրիգորիս արքեպիսկոպոսը, որը զբաղվել է Պատմական Հայաստանի այս հատվածում քրիստոնեության տարածմամբ: Դժբախտաբար, հետազայում այս ազդակը խապար մարեց, ենթադրում ենք, որ ոչ առանց Հայաստանի իշխանությունների և Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն հոգևորականության միջամտության և քեյաղաքի: Թեպետ քացառված չէ, որ այս նախաձեռնությունը անլսելի դարձավ և այս պատճառով, որ դրա հեղինակները հասկացան իրենց ջանքերի ապարդյունությունը և չտեսան ԼՂՀ-ի և Հայաստանի քաղաքականության տեղեկատվաքարոզչական ասպեկտի համար պատասխանատու պետական մարմինների և կառույցների կողմից համապատասխան գործողություններ:

Քարոզչության և տեղեկատվության գործելակերպում այսպիսի գեներունենալու պայմաններում, արդեն չէին նշանակություն կունենալ այն, թե Արցախը ինքնորոշվում է և անկախության և ձգտում այն պատճառով, որ ձգտում է ժողովրդավարության և ուզում է ազատվել հակաժողովրդավարական Արդեշանի իշխանությունից, թե արցախահայությունը ցանկանում է վերականգնել Սայր Հայաստանին միանալու իր պատմական իրավունքները: Այսինքն, այն դեպքում, երբ կոնյուկտուրային քաղաքական վարակները կարծես մեթոդաբանությունը և տերմինաբանությունը կենդանի ազգի՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանը քաղաքացիական հասարակություն ձևավորելու պոթենցիալ գաղափարը, ապա դրան ներդաշնակորեն կավելանային միանգամից երկու՝ ոչ պակաս եական և հիմնական գաղափար-գործունենոր՝ 1) խորհրդային տոտալիտար վարչակարգի կողմից, հակառակ ժողովրդի կամքի, և այժմ վերազանգեման խիստ կարիք ունեցող տոնաբանական պատմական իրավունքը, 2) Արցախի տարածքը, որպես հայերի ազգային սրբություն, ուղղակի էլ կարող գտնվել ինչ-որ մեկի վարչա-տարածքային կազմի և ենթակայության ներքո՝ բացի Հայաստանից: Այլընտրանքային և միակ հնարավոր փոխզիջումը՝ դա Արցախը որպես ինքնավար տարածք դուրս որևէ պետության սահմաններից: Եվ որպես լրացուցիչ օժանդակ գործունե և փաստարկ՝ հայկական էթնոսի պահպանվող ժողովրդագրական առավելությունը Արցախի մյուս էթնոսների նկատմամբ...

Արցախյան հիմնահարցի տեղեկատվական-քարոզչական ասպեկտի զարգացման առաջին փուլը անդրվածքով տարօրինակ իրավիճակում է: Մի կողմից, ենթմիութենական ապարեզում հայկական կողմերն այլևս չէին օգտվում «հանրամատչելիությունից», մյուս կողմից՝ արդեշանական

կողմը դեռ չէր կողմնորոշվում, թե պետք է արդյոք իր ջանքերի տեղեկատվական-քարոզչական ապահովումը Արցախը պահելու համար: Արտաքին աշխարհում էլ, ըստ էության, ԽՍՀՄ-ի մոտալուստ վախճանի կանխավայելման մեջ հիմնական արևմտյան «դերակատարները» կարծես պակասեցնում էին իրենց օգնության շրջանառությունը ևսրիորդային Միության ներսում կենտրոնախույս ուժերի նկատմամբ: Լիամասշտաբ պատերազմի սկզբի և համապատասխանաբար զինված հակամարտության ու անորոշ Արցախյան Դիմախորհի խաղաղ կարգավորման միջնորդության միջազգային ջանքերի կիրառմամբ էլ սկսվում է **2-րդ փուլը**, որը կարելի է սահմանանել **1992-97թթ.** ժամանակաշրջանը: Այս փուլի ավարտը ընտրված է պայմանականորեն, կարելի է նշանակել և՛ 1996, և՛ 1998 թվականները:

2-րդ փուլը նույնպես հայկական կողմերի համար անզավ փոփոխական հաջողություններով, շատ կարծառու գործող զաղափարա-տեղեկատվական և քարոզչական հաջողություններով: Եվ մեղքը ամբողջությամբ ընկնում է Գայաստանի, մասամբ նաև ԼՂՀ-ի իշխանությունների վրա: Եթե խոսել բացառապես պատերազմի տարիների մասին, ապա հայկական կողմերից եղել են հաջողված մշակումներ, որոնք գործնականորեն առանց ստուգման ընդունվում էին վերջնական սպառողների՝ համաշխարհային տարբեր ՁԼՄ-ների, փորձագետների, դիտորդների և այլոց կողմից: Եվ այսպիսի հաջողության պատճառը և գլխավոր պայմանը եղել է հենց այն, որ ոչ՝ Գայաստանին, ոչ՝ ԼՂՀ-ին պետք չէր «մտածել» ինչ-որ բացառիկ բան. հայկառաջնորդը ժամանակ առ ժամանակ ինքն էր տրամադրում առիթներ ու հիմնավորումներ, որպեսզի տեղի ունեցող իրադարձությունների հենց հայկական տարբերակներն ընկալվեն որպես հիմնական՝ հակամարտության գոտում իրավիճակը գնահատելու ժամանակ:

Օրինակ, հնտորեն կիրառվել են (կարևորը, ժամանակին) տեղեկություններ արդրեջանցիների կողմից կիրառված մասսայական ունջացման գնեքի օգտագործման մասին՝ Արցախի և Գայաստանի սահմանամերձ խաղաղ գյուղերի և քաղաքների վրա համազարկային կրակի ՔՄ-21 «Գրադի» կիրառման, ռմբակոծությունների, հրետանային և հրթիռային կրակա-հերքերի տեսքով: Պաշտպանությունից պատերազմներ վարելու փաստը նաև այն մտքին է ուղղորդել, որ ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ուժերի (հետագայում՝ Պաշտպանության Բանակի) հակահարձակողական գործողությունները որակվել են որպես բշնամու **«կրակակետերի ճնշում»**: Գայաստանյան հայկական կողմերին միջազգային տեղեկատվական միջոցներին համոզել իրենց իրավացիության մեջ հեշտ էր. այդ տարիներին տարբեր ՁԼՄ-ների հազարավոր թղթակիցներ ԱՊՀ, Մերձասիայային և Արևմուտքի երկրներից եղել են ռազմաճակատի գծում երկու կողմերից էլ: Գայկական տեղեկատվական- քարոզչական հոսքի ճշմարտացիությունը, ստույգ լինելը եղել են համաշխարհային տեղեկատվական դաշտում քարոզչական պատերազմի շարունակության հաջողության գլխավոր երաշխիքները: Գայաստանին և ԼՂՀ-ին պետք չէր ոչինչ մտածել, պետք չէր տալ ցանկալիք որակների փոխարեն: Եվ այսպես եղավ ընդհուպ մինչև 1994թ. հունիսի 12-ին զինադադարի մասին համաձայնագրի կնքումը:

Սակայն պատերազմի ընթացքում եղավ մի միջադեպ, որը հարթեցնում էր կողմը փորձեց «շրջանառել» այսպես կոչված տաք առերերով՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խոջալու գյուղի ազատագրման գործողություն: 1992-96թթ. որոշակի իրադարձությունները, որոնք բերեցին այս բնակա-

վայրի արդրեջանական բնակչության մի մասի զանգվածային կորստի, մինչև հիմա բննարկումների և վեճերի առարկա են: Եթե 1992-94 թթ. արդրեջանական քարոզչության հավազդեցությունը երբեմն զսնվում էր հենց Բաբելոն՝ հիշենք օրինակ Արդրեջանի նախկին նախագահ Այազ Մուսախյուրդի՝ չեխ թղթակից Դաննա Մազադկային տված հարցազրույցը (1992թ.), որտեղ նա հստակ մատնանշեց Արդրեջանի ազգային ճակատի սարդիչ դերը, որն այդ ժամանակ պայքարում էր Ա.Մուսախյուրդի դեմ Բաբելոն իշխանության համար, ապա ավելի ուշ էրը 1993թ. իշխանության գլուխ եկած Դեյրար Ալիևը արդեն չէր կասկածում Արդրեջանում իր դիրքերի անստանալուց, սկսվեց հստակ և նպատակասլաց ուրվագծվել արդրեջանցիների ռազմավարական գիծը՝ «խոջալուի ցեղասպանություն»: Անկեղծ աասծ, երկու հայկական պետությունների՝ այս սպասումալիքը կատեցնելու փորձերը կրել և կրում են թույլ, քիչ համոզիչ և պատասխական քարոզչական բնույթ, կարծես «ծեղելի հետ»: Ավելի հաճախ հայկական կողմերի հակընդդեմ ելույթները ձևակերպվում են հիշողությունների տեսքով՝ ծառայությունից հեռացած կամ դեռ ծառայող ռազմական գործիչ, լրագրողական ռեպլիկի և այլ ոճով: Կոնկրետ Գայաստանի և ԼՂՀ-ի պետական ապարատները այս հարցում գործնականում չեն երևում: Եթե համեմատենք քարոզչական ջանքերի փոխադարձ բախումների հոսքը «խոջալուի ցեղասպանության» շուրջ, ապա հնարավոր չէ չնկատել հայկական կողմերի պարզ և ցավալի հետ մնալը: Դամեմատենք՝ 90-ական թթ. արդրեջանցիները բավարարվում էին մամուլում իրապարկումներով և պաշտոնական հայտարարություններով, այդ թվում նաև կարգավորման գործընթացի սահմաններում: Այժմ նրանք (Թուրքիայի հետ միասին) գնում են այնպիսի ոչ սովորական քայլերի ճանապարհով, ինչպիսին է «խոջալուի ցեղասպանության թանգարանի», «խոջալուի ցեղասպանության անկումների» քաջունը հրեական Գոլոթոստի տարբեր թանգարաններում և այլ: Արժե արդյոք ասել, թե որքան վնասակար է Գայաստանի և ԼՂՀ-ի կողմից եական հակազդեցության չհանդիպող այսպիսի ազխացիոն-քարոզչական հարձակումը երկու հայկական պետությունների միջազգային վարկա-միջի և շահերի համար:

Եվ մա այն դեպքում, որ երևանի և Ստեփանակերտի կողմից կարելի էր ողջ ուժով (ընդ որում, ինչպես միշտ, պետք չէր ոչինչ հորինել) պտտեցնել հայկական քարոզչության թափանիքը՝ այն մասին, որ հենց Արդրեջանի գործողությունները, ի սկզբանե, հակամարտության զարգացման նախապատերազմական շրջանում և հենց պատերազմի ընթացքում պետական ակադրակով կրում էին ցեղասպանության քաղաքականության իրակա-նացման բնույթ: Լիովին ավերված և հայաստանում բնակավայրերի միայն մեկ ցուցակը կզբաղեցներ մեկ թերթից ավելի, ոչ միայն ԼՂՀ-ի այլև Գայաստանի տարածքում՝ Մարտաղան (Մարդակերտի շրջան), Խրամորթը, Ակրուլաի (Ասկերանի շրջան), Բերդաժորը, Քարին Տակը (Շուշի շրջան), Շահումյանի շրջանի թուր բնակավայրերը... Արժեվաշենը, Գայաստանի բնակավայրերը, որոնք ենթարկվում էին «Գրադների» զնդախուժումներին: Պետք է նկատել, որ մասսայական ունջացման գնեքի կիրառումը քաղաքացիական օրյնկտների և խաղաղ բնակչության նկատմամբ, նույնպես ընդունվում է որպես ցեղասպանություն, ինչպես օրինակ Ստրաղան Գոլաշենի վարչակարգի կողմից կիրառված բիմուկան գնեքը իրաքյան բրուս-բնակ Գայաթա քաղաքի նկատմամբ: Վերջապես, և՛ Գայաստանի, և՛ ԼՂՀ-ի ցամաքային շրջափակումը: Սակայն հնարավոր է արդյոք ավելից հիշել,

որպեսզի ԳՀԿ-ի վարչակարգը և նաև Հայաստանի հետագա իշխանական կադրերը ակտիվորեն օգտագործեին այս, իսկապես անսպառ ռեսուրսը կամխելու, ծայրահեղ դեպքում, համապատասխան հարված տալու արդրեջանական տեղեկատվական-քարոզչական ջանքերին: Պրա փոխարեն ծածուկ կերպով, այդ թվում և Հայաստանի իշխանությունների կողմից վերահսկվող ՀԼՄ-ների միջոցով (90-ական թթ.) արմատավորվում էր այն կարծիքը, թե իբր արդրեջանցիներն են «ներքին օգտագործման համար» գնում այդպիսի՝ արտաքուստ մեծաղորդը քայլերով և, իրականում, իբր, աշխարհում ոչ ոք չի վստահում Բաքվից ելնող տեղեկատվությանը: Իսկ մեզ՝ որպես «հաղորդների», իբր թե, հարիր չէ պատասխանել արդրեջանական կողմին նույն ձևով...

Այսպիսի կարծիքները հիմար ղյուլեանտության արդյունք են, որոնք ցանակացած պատերազմում հանգեցնում են տեղեկատվական-քարոզչական գործողի նշանակության թերազմահատման, և որոնք ծառայում են պաշտոնական դիվանագիտական ջանքերի ամրապնդման համար և հարազատ են նրանց, որոնք նորագույն տեղեկատվական-քարոզչական պատաստների տեսքով փորձում էին խեղաթյուրել հայկական, ինչու չէ նաև արցախյան, հասարակության կոլեկտիվ մտածողությունը և դեմ առաջին նախագահ Տեր-Պետրոսյանի: Բավական է հիշել, թե ինչպես 1997թ. ձմռանը՝ պատերազմի թեժ պահին, այս գործիչը ապշեցրեց նույնիսկ շատ քան տեսած պացիֆիստներին հիմար (մեծ հաշվով, իրականությունը դավաճանող, կապիտուլյացիոն-պարտվողական) թեզերով, ինչպիսիք են «Հայաստանին պետք չեն զինված ուժեր», և «մեր ուժը մեր թուլության մեջ է», և շատ քան պարզ կլինի: Միևնույն կատեգորիայից է նրա հայտարարությունը նաև այն մասին, որ պատմական հիշողությունը, ազգային շահերը և այլն, բոլորը «կեղծ կատեգորիաներ են»: Տարօրինակ է, թե ինչ է իրեն թույլ տվել այն մարդը, որը ոչ միայն զվաճվորում էր հայոց պետությունը, այլև ռազմաճակատում ակտիվ ռազմական գործողությունների ժամանակ հանդիսանում էր զվաճվոր հրամանատարը: Եվ՝ ռազմական գործողությունների տեղեկատվական-քարոզչական ապահովման, և՛ նմանատիպ «թեզերի» դիվանագիտության տեսակետից, ինչպես նաև արհամարհական վերաբերմունքը «խոջուրի ցեղասպանության» արդրեջանական հեղուրանքի նկատմամբ, համընդհանուր են ոչ այլ ինչ, քան Հայաստանի իշխանությունների կողմից էական օժանդակություն իրենց արդրեջանիցի հակառակորդներին: Սկզբունքորեն, այս գործողությունը (իմացավոր կարող է լինել նաև անգործությունը) լիովին համեմատելի է հայրենիքի դավաճանության հետ: Արժե արդյոք ասել, որ նախագահի այսպիսի զաղափարական մխտողական հանցավոր սխալների պայմաններում Հայաստանի ողջ պետական ապարատը փաստորեն պարապլուրի էր մատնվել տեղեկատվական-քարոզչական իմաստով, համեմայն դեպ «Խոջաուրի ցեղասպանության» մասին արդրեջանցիների կեղծ թեզի նկատմամբ հարկ եղած հակազդեցության կազմակերպման հարցում, ինչպես նաև Հայաստանի ու ԼԳԴ-ի խաղաղ հայ քնակչության նկատմամբ արդրեջանական զարեսիվ տրամադրություններ ունեցող զինվորական խմբերի մարդատյաց դաժան ցեղասպանության քնույթի գործողությունների մասին միջազգային հասարակական կարծիքին օպերատիվ տվյալներ տրամադրելու ուղղությամբ:

Յշնամուտ հանձնված Արծվաշեն գյուղի օրինակի վրա բացատրենք նաև այն, թե ինչպես չպետք էր և չպետք է գործել, նաև այն, թե ինչպես է

հնարավոր նույնիսկ հիմա անհավաղ արդիականացնել, օրինակ, Արդրեջանի կողմից իրականացված ռազմական հանցագործությունների թեման: Լվկաղ գաղտնիք չէ, որ դեռևս 90-ական թվականներին ինչպիսի մեծ վնաս տվեցին ԳՀԿ վարչախմբի և անձամբ ԳՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հակազգային ջանքերը, ընդ որում մասնավորապես 1996-97 թթ., որը հայտնի է այսպես կոչված «կարգավորման փուլային ծրագրի»՝ «մասսայականացման» մեջ, այն նախատեսում էր Արցախի պաշտոնական ճանաչումը որպես Արդրեջանի բաղկացուցիչ մաս: Այստեղ բավական է հիշել Լ. Տեր-Պետրոսյանի դիմումը «Պատերազմ, թե խաղաղություն» հոդվածի տեսքով, որը համարվում է տեղեկատվական-քարոզչական ոլորտում ազգային դավաճանության օրինակ: Նույն իրավիճակն է Արծվաշեն գյուղի դեպքում՝ ոչ պակաս ակնառու օրինակի հիշելու համար, թե ինչն էր հատկապես հակազգային նախկին իշխող վարչակարգում, այդ թվում նաև տեղեկատվական-քարոզչական պայքարի մշակման գործում: Չէ որ Արծվաշենը ամբողջ մեկ տարվա հերոսական պաշտպանությունից հետո համեմվեց արդրեջանցիներին մի գիշերվա մեջ՝ 1992թ. օգոստոսի 8-ին:

Ըստ էության, Արծվաշենի քնակչության վտարման գործում Արդրեջանի ցուցաբերած աջակցությունից միայն մեկ տարի հետո բացահայտվեցին մանրամասնությունները: 1992թ. օգոստոսի 8-ին մոտ 12:00 Արծվաշենը լքեց զինվորականներով վերջին մեքենան: Եվ միայն 16:00 հարրեջանցիները մտան գյուղ, 13 մարդու զերի վերցրեցին, որոնցից 6-ին անտրազայում իշխանությունները փոխանակեցին, իսկ մնացած 7-ի ճակատագիրը մինչև հիմա հայտնի չէ: Երբ 1993 թ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում հանդիպման ժամանակ ծնունդով Արծվաշենից սակադեմիկոս Սարգիս Մուսախյանը Լ. Տեր-Պետրոսյանին հարցրեց, թե ինչու է համեմվել Արծվաշենը, Երկրի նախկին ղեկավարը պատասխանեց. «Մենք տվեցինք 5000 հա և վերցրեցինք 720»: Այս առիթով մեքենանը «Արծվաշեն» հայրենակցական միության պատվավոր նախագահ Արամայիս Սահակյանի խոսքը. «Նյարդայանցող, շուկայական տրամաբանություն, անընդունելի պատերազմի համար՝ ծեղ Արծվաշենը, մեզ՝ Քյարքան: Դա միևնույն է, ինչ փոխել արծիվը մոծակի հետ: Ըստ երևույթին, իշխանությունները որոշեցին չգրադվել և ազատվել այս զխացավանքից: Եվ սա այն դեպքում, երբ նախօրյակին հայտարարել էին, որ Արծվաշենը չի համեմվելու»:

Կան նաև այլ ապացույցներ պատերազմի այս միջադեպի «տարօրինակության» մասին, երբ որոշվեց Արծվաշենի ճակատագիրը: Այդ դեպքերի ակնառուտե Աղավարո Երիցյանը, որը երկար տարիներ եղել է Արծվաշենի գյուղատիրոջ քարտուղար, ակնառուտե է եղել, որ 1992թ. օգոստոսի 6-ին երեկոյան մոտ ժամը 9-ին հայ աշխարհագրախմբիներին հաջողվեց վերցնել թշնամու ամենակարևոր նշանակետերից մեկը և կես կմ առաջ շարժվել: Օգոստոսի 7-ի գիշերը բարենպաստ իրավիճակ տեղծվեց ավելի քան 20 շրջակա արդրեջանական գյուղերը թշնամու ռազմական կազմավորումներից մաքրելու համար: Սակայն հենց Հայաստանի իշխանությունները կանգնեցրին առաջխաղացումը: Նույն Արամայիս Սահակյանը «Ազգ» թերթին 1995թ. օգոստոսի 8-ին տված հարցազրույցում վկայում է. «Մեր իշխանությունները ներկայացում խաղաղից գյուղի համեմման հետ՝ իբր Հարկողացան դիմագրավել: Նմանտիպ Սարգիս Մուսախյանը սարքեցին նաև Ըսահունյանի ու Գետաշենի շրջանին: Այսպես ոչնչացվեց «արծիվների կառուցած» Արծվաշենը: Մեցնում են տարիներ, քայց հանրա-

պետության ղեկավարությունը այդպես էլ առաջ չի բաշում զավթված կրծքաշենի, Շահումյանի, Գետաշենի, որը Գարդմանի շրջանի վերադարձման պահանջը, զոնե ի պատասխան թուրք-ազերիների այն լլտի հայտարարություններին, որոնցում պահանջում են վերադարձնել «զավթված» տարածքները և հայերին կոչում են «ազերտներ»:

Այս տողերում, ի ղեպ, պարունակվում է նաև օրինակելի շեղումը, որում արժեք և արժեք այսօր անց կացնել Դայաստանի, նաև ԼՂԴՀ-ի հակա-քարոզչությունը, երե հաշվի առնել, որ Շահումյանը և Գետաշենը համարվում են Անդրկովկասի հայկական երկրորդ անկախ պետության կազմի մեջ մտնող տարածքներ: Պետք է նաև անջատել ցուցաբերել հակաքարոզչության ծավալման և կազմակերպման գործում և այն փաստ օգտագործել, որ 2006 թ. ամառվանից կրծքաշենի գյուղխորհրդի նախագահ Մամիկոն Խեչոյանի նախաձեռնությամբ 560 արծավաշենցիների հայքը՝ նյութական փոխհատուցման պահանջով, իրենց կորցրած գույքի համար, գտնվում է եվրոպական դատարանում: Եվ հենց պետությունը պետք է պաշտպան կանգնի և ներկայացնի իր քաղաքացիների իրավունքները միջազգային դաշտում, միևնույն ժամանակ դատական ատյաններում, միայն մեկ պարզաբանությամբ. հասնել այն բանին, որ Ադրբեջանը խոստովանի իր ռազմական հանցագործությունը կրծքաշենի և արծավաշենցիների նկատմամբ, որպեսզի ընդգծվի այդ ժամանակվա իշխանությունների բացառական ղեկը 1992 թ. օգոստոսին գյուղի հանձնման ժամանակ:

Դժբախտաբար, Դայաստանի հետագա իշխանությունները բավական անփութորեն էին վերաբերվում պետական բարձր մակարդակով իրականացվող օպերատիվ և արդյունավետ քարոզչության և հակաքարոզչության գործունի: Այսօր այս ամենը Ադրբեջանին տալիս է չտեսնված հնարավորություններ, քանի որ 1991-2008 թթ., ինչպես ասվում է, քիչ ջրեր չեն հոսել: Եվ հիմա հազիվ թե ինչ-որ մեկը եվրոպայում հիշի, առավել ևս պատրաստ լինի ուշադրություն դարձնել, ասենք, Արևմուտքի բոլոր հակահայկական տրամադրված շրջանակների մոտ ֆուրոր և խառնաշփոթ առաջացրած անզլիական պառլամենտի Լորդերի Պալատի փոխխոսնակ կոմսուեի Քեթոլայն Քոքսի այցելությունները, իր և իր կողմնակիցների ելույթները ՉԼՄ-ներով և այլն, և այլն: Արցախյան հիմնախնդրի շուրջ տեղեկատվական-քարոզչական պատերազմի ներկա փուլում հայկական երկու կողմերը զիջում են միանշանակ, ահա և պատճառը, ինչու հենց հատկապես վերջին 5-6 տարիներին Ադրբեջանին հաջողվում է ավելի հաճախ ստանալ այս, կամ այն արդրեջանամետ փաստաթուղթը միջազգային տիրույթներում և կատայցներում: Եվ չնայած, իհարկե, հայերի ազգային շահերին ղեմ ընդունված բոլոր «թրքերը», որոնք չեն անցել ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնի, ԵԱԿ-ի, ԵԱԳԿ Միևնակի կոնֆերանսի, ԵԱԳԿ Միևնակի խմբի, վերջապես ԵԱԳԿ Միևնակի խմբի եռահամաձայնագրիների գրչի տակով, չեն կարող իրավական ուժ ունենալ Դայաստանի և ԼՂԴՀ-ի համար, այդուհանդերձ, պետք է ընդունել, որ 1995-97 թթ. Դայաստանի ԴԳԸ-ական իշխանությունների կողմից ներդրած պասիվությունը արցախյան հարցի շուրջ միջազգային դաշտում պատշաճ տեղեկատվական-քարոզչական կամպանիայի իրականացման գործում, պետք է խստորեն քննադատվի և մի կողմ նետվի որպես պարտավորականության նախանշան:

Աս, ի վերջո, ինչպես հայտնի է, ընդունվեց գործող նախագահ Սերժ Արաբայանի կողմից բոլորովին վերջերս՝ 2008թ. հուլիսի 3-ին ԴԳ Ազգային անվտանգության ծառայության ապայական կորպուսի անձնակազմի հետ

